# ՆՇԽԱՐՆԵՐ ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՆՇԽԱՐՆԵՐ ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ

Ժողովեց, կազմեց և ծանոթագրեց
ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ—1991

ԳՄԴ 84.Հ
Ն 833

*Խմբագիր՝ բանաս. գիտ. թեկն.* Ա. Ս. ՂԱԶԻՅԱՆ

Ն 833 Նշխարներ Արցախի բանահյուսության /*կազմող Լ. Հ. Հարությունյան*/ *Երևանի պետ. համալս.—Եր.: Երևանի համալս. հրատ., 1991.—400 էջ:*

Ժողովածուն արցախահայոց հարուստ ու բազմաժանր բանահյուսության մի փունջ է: Նրանում ներկայացված են հեքիաթների, ավանդությունների, զրույցների նմուշներ, առած-ասացվածքների, դարձվածքների, անեծք-օրհնանքների, բարեմաղթությունների շարքեր: Առանձին բաժին են կազմում ազգագրական նյութերը, որոնք վերաբերում են արցախահայերի սովորություններին, ծիսական երգերին, ժողովրդական խաղերին ու պարերին:

Ն $\frac{4702080105}{704\ (02)-91}$ 53—90 ԳՄԴ 84.Հ

ISBN 5—8084—0118—6

ОБРАЗЦЫ ФОЛЬКЛОРА АРЦАХА
(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван—1991

© Կազմելու, առաջաբանի և ծանոթագրությունների համար, 1991

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն ժողովածուն չի սահմանափակվում բանահյուսական-ազգագրական նշանակությամբ, այն ներկայացնում է երկրամասում ապրող բնիկ ժողովրդի սոցիալ-քաղաքական վիճակը անհիշելի ժամանակներից առ այսօր, նրա խոհերը, զգացումները, ազգային միասնության երազանքը, խաղաղ և ազատ ապրելու ձգտումները: Ընթերցողն այստեղ կծանոթանա իր մաքրամաքուր ակունքներին, իր նախնիների անցած դարձդարձիկ ճանապարհին, ավանդական գեղեցիկ, հիացմունքի արժանի սովորությունների ու ավանդույթների նախօրինակներին: Պատմական դժնդակ բախտի բերումով հայոց Միջնաշխարհից, ողջ Աղվանից աշխարհից, դաշտային Ղարաբաղի տարբեր մասերից մազապուրծ փրկված հայ բեկորները միահյուսվեցին Լեռնային Ղարաբաղի բնիկներին, բնականաբար, իրենց սովորությունների, կենցաղի, բառ ու բանի՝ մեզ համար սրբազնագույն նշխարներ գումարելով տեղաբնիկ հարուստ բանահյուսությանը: Ժողովածուի արժեքը նաև այս խտացումով է պայմանավորված:

Ժողովրդական հին բանահյուսությունը ոսկեբև հավքերի մի առագաթռիչ երամի է նման, որ գալիս է մարդկային կյանքի խորին խորքերից և անողորմ ժամանակ-քամու բերանին զնում է անդարձ: Դաժան ու կենսաքաղ ոռկաններից հալածական քանի կախարդական ոսկեփետուր է կորցրել նա, քանի անգամ դարձել բևակոտոր՝ իր հողմածեծ ճանապարհի արյունոտ թրնչուկներում: Ինչ էլ որ պոկես թռչող ժամանակի բերանից, թեկուզ մի փետուրիկ, չնչին թվացող մի աղվամազ, լինելու է միակ ու թանկագին, մեր ազգ ու տակի հիշատակի պես սիրելի:

Այս ժողովածուն նման մտայնության արգասիք է:

Ղարաբաղյան ավանդություններն ու զրույցները խտացված իմաստություններ են, արհավիրքների բովով անցած կենսափորձ, իրական հող ունեցող մարգարեություններ, պատմության բոլոր շերտերն ամփոփող, մեր ժողովրդի բազմանյութ մտածողության հավաստի փաստարկներ, որ դարեր շարունակ ուղեկցել են մեզ, մնացել հարազատ, որպես համազգային նվիրական ավանդների դրսևորումներ՝ արցախյան ինքնության կնիքով: Կասկած չի կարող լինել, որ դրանք ուսանելի են ներկա ու գալիք ապրողների համար:

Հայոց մեծերն են մեր բանահյուսության գլխավոր հերոսները, իրական և առասպելական անուններ՝ վաղուց հիշատակ դարձած ապրելավայրերով և զգայուն, ժամանակի զարկերակը իր չափ ու կշռույթի մեջ առած փիլիսոփա անհատը: Ո՞վ գիտե. մարդկային պատմության քանի հազարամյակի ծածկույթով է բարուրված բանահյուսական այս կտորը.

Արաքանե, Արաքանե,
Օժ տո բալաս թևեր անե,
Վեսկե հինի մազին տնի,
Խաչքուռ չինի ռաշին տնի,
Արև տեռնա, արև անե,
Արաքանե, Արաքանե:

Սա պատմական խոր արմատներ ունեցող մի ժողովրդի հին ավանդույթի պատկառող նմուշ է: Ո՞վ է Արաքանեն և ի՞նչ կապ ունի փոքրիկ աղջկա մազերի զարդ-հորինվածքի, խաչքուռի և արևի հետ: Բանահյուսական ոսկե հինվածքների որքան պատառիկներ, խորախորհուրդ ու անվերծանելի նշխարներ կան նախնիներից մեզ հասած ասք ու բանքի, խոսք ու զրույցի մեջ:

Մարդկային հոգսը իր հոգուն ծանրացնող ժողովուրդը միայն կարող է այսպիսի տողեր հորինել և ի պահ թողնել սերունդներին.

Շնորհակալ ըմ քզանա, ստուծ,
Մարթ ըս ըստեղծալ,
Շնորհակալ ըմ քզանա, ստուծ,
Վարթ ըս ըստեղծալ:
Բա̈լի թա̈նրը չի ըլա̈լ,
Մեխք չըմ տենում քզարա՝
Փոշ ու դա̈րդ ըս ըստեղծալ:

Պա նո՞ւնց շնորհակալ
Ընիմ fզանա, վեր
Ճանչ քս քատեղծալ:

Բնության n՞r orենքով և ի՞նչ իրավունքով մարդ ու նանն ի-րար կողքի են դրվել: Եվ ղարաբաղցին ուզում է սրբագրել աստ-ծու սխալը: «Հի՞նչ կընի, աստուծ, վեր բշխարfես նանչերը կըլ-լիս մին օղտը շինիս»:

*Ժամանակի ընթացքում աշխարհի չարն ու վատը չի պակա-սում:* Չարը բազմանում, «պծզնում» է նաննի պես, սև թխպի նման «օնում» (կալնում) աշխարհը, և իր բարձունքին արժանի մարդը մնում է ապշահար ստեղծված անել վիճակի համար.

Առաշ քս fյընում՝ fթեղ ըն թխում,
Դբետ քս fյընում՝ դրանեղ ըն թխում,
Հու վեր հինչfան օժ օնե՝ հախռում ա:

Անողոf է աշխարհը ու կաշկանդիչ՝ նրա օrենքները: Ոչինչ, որ «Քրիստոսս խաչը հային ա պաժին ընգալ»: Պիտի կրի այդ խաչը սրբավայել արժանապատվությամբ, պայծառ պահելով իր ար-դար կովին, հողին ու աշխատանքին, չկոrցնելով իր նախնա-կան անաղարտությունը:

Մարթն էն ա, վեր խեղճը կենքան պահում ա:
**Մարթն էն ա, վեր աշխարfս ավաղ պահում ա:**
Մարթն էն ա, վեր fամակ եշում ա, պայց fամակ չի ըղնում:

Ղարաբաղցին իր պապենական հողի վրա (և որտեղ էլ եղել է) ապրել է բազմաբովանդակ, խելոք ու լայնաշունչ կյանքով: Նրա ապրելակերպը զարմանալի և ուսանելի է եղել իր հարևան-ների և տերերի համար, անգամ իր նանապարհներով անցնող օտարականին էլ զարմանալու, հիանալու և սովորելու բան է ու-նեցել: Նա թողել է հարուստ ու բարի ավանդույթներ, սերունդ-ներին է կտակել իր հոգու լույսը՝ աշխարհից ոչինչ չակնկալե-լով: Բայց ի դժբախտություն սերունդների, առավել շատ գե-րեզմանաքարեր է թողել իր ծաղկառատ հողի վրա: Եղել է ճյուղակոտոր, բզկտված, «սերտը կես տեռած» մնացել է բազում տանջալից դարեր, չկորցնելով իր հունը, հավատարիմ մնալով նախնիների ավանդույթներին, առաջնորդվելով այս աշխարհա-շեն սկզբունքով.

Ժառանգ թողե,
Կամար կապե,

Մին կյիր կյրի,
Մին ծառ տնգե,
Հավատդ էլ դայիմ փռնե:

Այս հավատամքով էլ նա գոյատևել է ջրհեղեղից առայսօր:

Ղարաբաղյան ամբողջ բանահյուսության միջով անցնում է որդան կարմրի մի երակ, դա հայ ժողովրդի ազատասիրությունն է, իր ազգային իրավունքների, արժանապատվության, ազատ գոյության համար մաքառումը, որը իր գոյավիճակի թելադրանքով ամենուր ընդունել է ազգային կեցվածք ու բնավորություն:

«Մարթ ըշխարքես լöւսը տանը պտրհանավն ա տեսնում»:

Ինչպիսի՜ նեղվածություն նրա ազատաբաղձ հոգու համար: Ո՞ւր է ազատությունը: Նա շղթայված է ճահճոտ ձորում և տըմարդի տիրոջ հարկադրանքով ինքն է ամրացնում իր շղթաները: Բայց նրա հայացքը բարձր սարին է: Եվ ի սկզբանե ծառ ու ծաղկին, ոսկեկտուց և ոսկեփետուր հավքին ընկերացած ադամորդին չի կարողանում տանել այն իրողությունը, երբ աստվածստեղծ մարդը «Կյուլին հնետ օտում ա, տեռնը հնետ կյոռում»:

Աննճարին է ծուռ աշխարհում շիտակ ապրելը: «Կարել չըս դöւզ քյընիս, վեր հղեն ծըրմոռ ա»: Եվ, չնայած, «դöւզը դöւզումն ա մնամ», բայց ղարաբաղցին հանգիստ խղճով չի նստել անարդարության հետ դեմդեմի: «Հարöւր տարեկան էլ ընիմ, ծոռ փաղը չալիգ չըմ շինիլ»:

Ինչպիսի ծանր պայմաններում էլ լինի, թեկուզ հարյուր տարեկան ծեր, չի հենվի ծուռ գավազանին:

Ամեն անհաջողություն, ձախորդություն, պատուհաս ու պատիժ կարելի է տանել (մարդ հենց դրա համար էլ ստեղծվել է), միայն թե երկնային լինի, ո՛չ երկրային: Միայն թե խորթությունը մորից գա, ո՛չ աշխարհից: Ավազակաբարո մարդիկ ոչ միայն ինչքն են խլում, գրպանդ հատում, կինդ գողանում, ...այլև չարախնդում են քո ողբերգության վրա, ամենօրյա հացիդ լեղի են կաթեցնում: Ղարաբաղցին տեսածից ապշահար, երեխայական միամտությամբ ասում է. «Պա կյուղանողը փախչիլ չի՞»: «Պա ուրիշին սուփրան օտողը քուշտանալ չի՞»: «Պա ուրիշին կնեգը կյուղանողը հմանչիլ չի՞...»:

Երանի նրան, ով տանջվում է աշխատանքի մեջ, սակայն իր խաղաղ կյանքի հետ է: «Ներակ նրա, հու վեր ինքն ա քռտնըն-

խում, խռանեխցնում չըն», «Ներակ նրա, հուրու խռնեխեն աղու չըն խառնում, խեզ խմըցնում»։

Հողը սրբություն է, սուրբ մասունք, պատվական նախնիներից ավանդված նշխար։ «Վեղը չըշարե»,— սա է ավանդվում սերունդներին։ Այս լեռնաշխարհում ապրող մարդը երբեք չի հաշտվել հողի կորստյան հետ և այն վիճակին, երբ իր հովիտները, իր Միլն ու Մուղանն է կորցրել ու ապավինել միայն լեռներին։

Առանց չոլ սարն ի՞նչ կանին,
Պա առանց սար չոլն ի՞նչ կանին,
Առանց վերթի հանրն ի՞նչ կանին...

Ժողովրդական սգերգի հանգ ու չափով ստեղծված այս տաղը արտահայտում է հայրենական սրբությունները կորցրած բընակչության ողբերգությունը։

Զարմանալի չէ, որ իր բազում իշխողներից ղարաբաղցին առանձնացնում է մեկին և հիմնականում նրա հետ է կապում իր բոլոր կորուստները։ Մի տաղի մեջ ակնարկելով իր պատմական մեծ առաքելությունը և մարդկությանը նվիրաբերած իր բարի ծառայությունը, ասում է.

Նախշալ ըմ սարեր,
Նախշալ ըմ չոլեր,
Մին ծերխես ալաք,
Մնումը՝ հոռեխ... [1]

Սակայն իր երկրի տերը չի սարկանում և ոչ մի բռնակալի, միասնական բռունցքի կոչ է անում համազգայիններին։ Աշխարհում ոչ մի ուժ չկա, որ կարողանա հայից խլել իր ոգին՝ սրտին հավիտենապես դաջված հայկականությունը։ Դժբախտության մեջ էլ մենք հայ ենք մնում, հավատարիմ մեր նախատագրին։

Հայ ընք,
Վայ ընք,
Ըստծու թայ ընք։

Ճիշտ է, սևավոր ենք, բայց հայավոր ենք, մենք մորից թևավոր ենք ծնվել։ Եվ բանահյուսության հերոսը կոչ է անում չըմեռնել մինչև մեռնելը և հավաքական ուժով ելնել թշնամու դեմ՝ առանց հապաղելու։

Դարդոտ Հանես, բախտեդ աչկը խռռ բրա,
Եռանաս ուշ, հինչ վեր անիս՝ սոր բրա,
Զոռդ շատ ա, հավաք բրա, տռն բրա...

Հայրենական հողի վրա է վերընձյուղում ազգը, ծաղկում նրա

քանքարը: Նրան տիրելը բոլոր իշխողների անհագ ցանկությունն է եղել: Կորցնել այն, նշանակում է կորցնել արյամբ ձեռք բերված ինքնությունը, դարերում իր լռումն ստացած լուսնային դեմքը, կորցնել տաղը, խաղը, երգն ու պարը, բանքն ու լեզուն: Ժողովրդի խոսքը իր դարավոր փորձ ու տառապանքից է ծնվում: Հողի կորուստը, վերջապես, ստրկության մատնվել է նշանակում: Տարբերություն չկա, թե ո՞վ է ստրկացնողը, ի՞նչ հավատի ու գույնի: «Մանր է լյուծը,— ասվում է զրույցի մեջ,— օգնում ա պեխե ընի, օգնում ա՝ կաղնե, օգնում ա՝ տկողնե: Թխե, մարթ աստծո, հիշտեղ վեր լյուծն ա, ընդեղ էլ՝ նպատը»:

Էշը դիմում է աստվածներին՝ մեկին երկրպագելու խնդրանքով: Նրան մերժում են, չեն ուզում սատար լինել մեկին, որի արհեստը աշխարհի բեռը թեթևացնելն է: Կայծակ-աստվածն է մընում, որին հարկադրաբար դիմում է նա: Կայծակը զարկում է, կտրում էշի ագին և նրան զրկում միակ գեղեցկությունից:

Չար ու անկարեկից է աշխարհը: Ուժեղը ոչ միայն զրկում, այլև ծանակում է տկարին, խնդում անգթորեն:

Բայց հայը հավատավոր է: Միևնույն է, բնության մեջ կան բարի ուժեր, կա առավոտ, արև, կան աստղեր ու ծաղիկներ... Հավատից էլ ծնվում է հույսը: Հայի համար հույսը իրական է, գրեթե շոշափելի: Նա հույսը գավազան դարձրած գնում է իր փշոտ ու անվերջանալի ճանապարհը: Ընդվզում է, արհամարհում չար ուժերին, նրանց պարզելով իր արարչական հանճարը: Հաճախ իր բախտն է սգում իր արյան ու ավերակների մեջ, տանջվելով, տառապելով, փեռեկտված հոգով... Բայց միշտ էլ իր էության խորքում փայելով «հարության հույսը»:

«Հային հերցրեն.— Հի՞նչավ ըս ապրում: Ասից՝— Հույսավ»:

«Հույսը հավատավուրեն խափիլ չի»:

Այսպես՝ դարեդար: Եվ հույսը նրա հոգում երազներ է ծնել, բարի, գեղեցիկ, արդար երազներ: Խաղաղություն է երազել հայը:

«Հարթնն ու հասկը կուռնըփոնո՞ւկ...»:

Թող ներանց գնան, հարսը՝ մանկան, հասկը՝ հատիկի սրբազան ծանրությամբ: «Նաղաշը բիժին եր կալած» արածի արևի պայծառ բարության մեջ՝ խաղաղ, ապահով, անվտանգ: Խաղաղություն նախնյաց հողի վրա:

Խաղաղ կյանքի կարևոր պահերին նա իր ստեղծածը համադրել է աստծու ստեղծածին և նկատել, որ ստեղծելու գոր-

ծում նրանք հավասար են: Ինքն էլ գեղեցկություն, բարիք ու ժպիտ է արարում մարդկանց, աշխարհի համար: Ղարաբաղցին պաշտում է աստծուն որպես իր երկվորյակի, իր շնորհակցի, միշտ էլ օրհնակ ունենալով նրան, նրա մեջ փնտրելով լավին ու կատարյալին: Նա երբեք աստծուն անհրական չի համարել: Բնության մեջ ամեն զորություն առավել զորությամբ է նման մարդուն: Աստված էլ տառապանքով է անցնում իր ուղին, ինչպես մարդը: Մի օր մռայլ է, մի օր՝ ուրախ, մի օր էլ՝ ցավի միջից ժպտում է անցավ: Նրա համար էլ երազային է մանկությունը: «Աստծուն ըսեցեն.—խե՞ ուրախ ըս: Ասից.—խխոթունս մեննս ընգավ»: «Աստծուն ըսեցեն.— խե՞ տխուր ըս: Ասից.— խխոթունս մեննս ընգավ»:

Նա հասարակ ու պարզ է, ինչպես ինքը, նրա հետ կարելի է հանաք անել, խաղալ, խռովել, պատժել... «Աստուծ, մեզ լավ պահե, թա կարում չըս, վեր եկ մեր կոշտը, մունք քեզ ճըպորու մաշու նման պահինք»:

Նա միշտ մարդկանց կողքին է, առօրյա հոգսերի ընկերը: Պատահական չէ այս զրույցը: Մարդը խնդրում է աստծուն իր պատկերն ուղարկել, և նա ուղարկում է խաղողի վազը՝ «պլըխելունք, մշտակա ու մշտագոյ»:

«Հանց վախտ ա ընում, մարթ ասում ա. — Օծս եխնիս բըղար, եր հնցնի աստծու նկատան պշի, մին խալաթ տի, կյի:

Հանց վախտ էլ ընում ա, ասում ըս. — Եր հնցընիմ աստծու անգունը հյո՞րիմ կյամ»:

Բայց աստված ոչ միայն «պլըխելունք ա», այլև՝ սոսկալի անարդարության ունակ, չար ու դաժան, չարի խորհրդանիշ: Այդ է պատճառը, որ նա երկյուղել է աստծուց: Ղարաբաղի մեծ երգիծաբանը «աստվածավարի» բառի տակ հասկացել է բնության ամենաչար ուժերի անարդարացի խաղը: Ղարաբաղցին իր զայրույթի ժամին ծառացել է աստծո դեմ, հրկիզել նրա «տունն ու տեղը»: Չի վարանել նախախնամության և մարդու կողմից սահմանված անարդար օրենքներն ու արարքները բացահայտելու և դնելու կշեռքի նժարին՝ ի տես ամենքի, ի հակակշիռ բարեխոստում գաղափարախոսությունների:

Բայց միևնույն է, հայ աշխատավորը աստծո անվան հետ էր կապում մարդկային բարօրության հույսը և պատեհ առիթով աղաչում էր, որ մեղքանա ու սատար լինի նրանց, ովքեր նեղ օրում են: Նա աստծո գաղափարի մեջ է դրել նաև ղեկավարի, ա-

ռաջնորդի, զորավորի հանդեպ ունեցած իր իդեալը: Նրա չգոյության մեջ էլ նա տեսել է իր դարավոր երազանքների, հավատի փլուզումը: «Աստուծ հիշքան կենթան ա ըլըլ, մունք մոնեիս չընք ըլըլ, էս մին բշխարքաս սաղ-սալամաթ քյնիիս ընք ըլըլ էն մին աշխարքը: Մեռնելը մհենգ ա: Մինչև մեռնելը սոտրնեն ճաքում ա»:

Ղարաբաղցին միայն սատծո հետ չէր «ընկերական», այլև բնության հզոր և իրական բոլոր ուժերի՝ արևի, լուսնի, գիշերվա, ծովի...

Հնձվորը սառը ջրով լի կուլան առավոտյան դրել էր ծառի ստվերում, ինքը անցել գործի: Դեպի կիզակետ է բարձրանում արևը, և կուլան ընկնում է պլպլան արևի տակ: Ջուրը տաքանում է: Հնձվորը փորձում ու չի խմում, հայացքը դարձնում է դեպի արևը. «Իմ տեղ վեր տու ընիս, կլակի՞ս...»:

Լուսինը չարանենի աղջնակ է եղել, չարչարել է մորը, երբ նա խմոր էր հունցում: Համբերությունը հատած մայրը խմորոտ ձեռքով ապտակում է աղջկան: Նա խռովում ու թռչում է երկինք: Հիմա էլ խմորոտ ու այրոտ է նրա դեմքը և կարող եք նայել ու տեսնել, թե ինչպես է ամպի տակից կարոտով նայում իր մորը:

Վիճում են հնձվորն ու արևը. ո՞վ ավելի շուտ կզարթնի: Երբ զարթնում է արևը քնից, տեսնում է մարդը «մին փանջաք հընձած, շուքումը կռնած»:

Ղարաբաղյան հեքիաթների մեջ հետաքրքիր կերպավորում ունի նաև վիշապը: Մի անգամ չար ու չարակամ, այլ դեպքում՝ բարի ու անհիշաչար: Այս երկվությունը հարկավ, կապվում է տարբեր ժամանակաշրջաններում վիշապի նկատմամբ ունեցած պաշտամունքային մտայնության հետ: Առասպելական վիշապի մեջ էլ հասարակ մահկանացուի սիրտ է բաբախում: Նա ոչ թե մտացածին չէ, այլ խիստ իրական է և լողը (ընթերցողը) խրդնում է նրան: Որոշ հեքիաթներում էլ երկնքից ընկած երեք խնձորներից մեկը տրվում է թշվառ ու ողորմելի օշափին: Առհասարակ ղարաբաղյան հրաշապատում հեքիաթների չարը մարմնավորող հերոսները «մաքուր» չար ու կենսակույ չեն. նրանց էլ են կիզում մարդկային հոգսերը: Սա հեքիաթը ստեղծող ժողովրդի անթաքույց մարդասիրության արտահայտությունն է:

Մերժելով գայլի և մյուս գազանների գիշատչային հատկանիշները, բանահյուսության հեղինակը ընդունում է իր և նրանց՝

բնության համաստաղոր ծնունդներ լինելը և հրավիրում է նաշի․

— Ա՛րշ ախպեր, կյո՛ւլ ախպեր, եկ միևնեղ հաց ուտինք:

Այս հայեցակետից մարդը և գայլը բնության նկատմամբ վերում նախասահմանված նույն իրավունքով են ծնվել, ինչպես երկվորյակ քույրեր:

Դժբախտությունն այն է, որ մարդը իր նմանների մեջ է ցանկանում գայլավարի ապրել:

Դժվար է որոշել հայ (մասնավորապես պատմական Հայաստանի Արևելյան Կողմանց) երաժշտության, երգի և պարի, հինգեցունց սզո երգերի ոգեղեն ընդգրկվածության և նրանց թողած լայնածավալ ազդեցության սահմանները: Համոզված եմ, որ համաշխարհային երաժշտության պատմությունը այդ կապակցությամբ դեռ իր լիահնչյուն խոսքը կասի: Նրանք կիսեցին իրենց ստեղծող ժողովրդին բաժին ընկած վիշտն ու դառնությունը, սփովեցին ամենից առաջ հարևան ժողովուրդների մեջ և... ապրեցին: Ինչպիսի անուններով թաքցված լինեն նրանք, թեկուզ օտար երաժշտաշղարշով յոթկեղևված, խոսում են մեր սրտի ու արյան հետ, մրմնջում են ուրիշներին անհաղորդ՝ հայկական ցավ ու կարոտով:

Տարեց բանասացները պատմում են, թե ինչպես են «Յալի» պարել «Նահատակ» կոչվող վանքի ընդարձակ տափարակում: Վանքը գտնվում է Կզզլա գյուղի մոտ, նույնանուն սարի բարձրադիր հարթության վրա:

Արևագալից առաջ մորթվում են նախօրոք զոհելու բերված կենդանիները: Երբ սկսում է հոսել զոհերի արյունը, ծայր է առնում մասսայական պարը: Նրան ծնունդ են տալիս տարեց մարդիկ՝ շարժումներով ու հայացքներով դեպի արևելք: Նրանց շարունակում են երկսեռ երիտասարդները՝ առանձին շարքերով: Տղաները բաժանվում են զույգ խմբերի, պարում զուգահեռ, հաճախ խառնվելով իրար: Պարելու ժամանակ պարող տղաների հակառակ խմբերն իրարից գոտի ու կապա են հանում, ասիպում էին «նշանածների անունները տալ»: Խառնվում են աղջիկ ու տղա, արևագալի հետ պարը տաքանում է, իր մեջ ընդգրկելով բոլորին («Յալի փոնել»): Հասակավոր տղամարդիկ ու կանայք դուրս են գալիս շուրջարից և զբաղվում տոնական սուփրայի պատրաստությամբ: Աղջիկները շարունակում են իրենց նազա-

նի պարերը, ալիքվում են, ալեկոծվում, վելեւում ու կախավում՝ փոթորկվող տղաների խմբերի առաջ:

Ճաշից հետո ծայր են առնում մարզական մրցությունները, կոխը, «խաղկապուկները» և այս ամենից անպակաս «ճինչեխը» (ճոճ):

Այս արարողությունը կոչվել է «ուրքան յալի» (ուրքան—առավոտյան, առավոտան): Հետազայում, «Յալին» սկզբնապես ծիսական (արևապաշտական) պարերից վերածվել է առօրյա աշխարհիկ պարերի և ստացել բազմաթիվ տարբերակիչ անուններ: Ճիշտ կլինի ասել, որ հայ ժողովրդական համարյա բոլոր պարերը ունեցել են մի մայր, և դա եղել է «Յալին»: Հայտնի է, որ Արցախ աշխարհում և Գողթնում «Յալին» ունեցել է մի քանի տասնյակի հասնող տարատեսակներ: Այս տեսանկյունից «Յալին» հայ ազգային պարերի համահավաք անունն է (հայկական է նաև բառը. յալի—ալի-ալիք): Ղարաբաղի բարբառում այն գործածության բազմաքանակ ոլորտներ ունի): Պարող ժողովուրդը արևազալն ընդունում էր զոռում-զոչյունով և մարտականորեն՝ պատրաստ հալածելու չար ուժերին, որոնք կարող էին արգելակել արևածնունդը: Այս պահին պարն ընդունել է նոր տեմպ և կոչվել է «Քոչարի»: «Յալի» արարողությանը նախորդել է «Կանչ» (գանչ) նվագը («Սահարի»): Պարն ուղեկցվում էր զուռնա-դհոլի նվագակցությամբ: Զուռնայի նվագը չարը խափանում է, բարին է բերում: Արևի ծնունդն արգելակող սատանաները և՛ զուռնայի զիլ ձայնից էին վախենում, և՛ արևի աստղերից: Ասում էին բանասացները:

Դեռևս շատ վաղուց, գուցե ավելի վաղ, քան մենք ենք պատկերացնում, կապերտը (կարպետ) ամրապես մտել էր հայ կենցաղի մեջ: Սկզբից էլ կապերտը հարուստ էր գույներով ու նախշերով: Ոչ նոր ժամանակյա մի հանելուկի մեջ գարունը համեմատվում է հայկական գորգի (կապերտի) հետ շեշտվում նրա գեղագիտական մեծ նշանակությունը մարդու համար:

Վաղինակը տափը հինից,
Կնճկյարմուր գյաբա շինից,
Աշկեղ դըռման, սոտեղ դըռման:

Կապերտով զարդարում էին տան հատակն ու պատերը, պատշգամբն ու մղակը, փռում էին ներքնակի տակ, ծածկում անկողինը: Բայց կապերտի ծառայությունը դրանով չէր սահմանափակվում: Նրա նուրբ գործվածքներից պատրաստում էին ար-

տանազուտներ, կենցաղային անհրաժեշտության այլ առարկաներ: Նախապես որոշակի սահման չկար կապերտի և գորգի միջև վերջերս, Կիրովաբադից, Նուխուց, Ադրբեջանի գորգագործներ տեսք ու որակ ստանալու և գործածության ոլորտների ընդլայնման հետ: Ղարաբաղում այն ստացել է կապա անունը: Բարքառի օրինաչափությամբ՝ խուլ հնչյունները ձայնեղանալով ընդունել են ներկայիս ԳՅԱԲԱ ձևը: Հենց սկզբից կապան (կապերտի հետ միասին) դարձել է աղջկական օժիտի անբաժանելի մասը. հայ գեղջկուհին նրա մեջ է դրել իր երազանքներն ու մտքի թռիչքները, երևակայության սլացքը, պաշտամունքն ու հավատը, ճաշակն ու անսպառ սերը մարդու և բնության նկատմամբ: Կենցաղային ծաղկանկար գորգատեսակներից մեկը կոչվեց «Վրթավուր»: Այս նախշազեղ գորգատեսակը խորհրդանըշում էր անմեղություն ու կենսալիություն և հայ աղջիկները իրենց օժիտի հետ այն տանում էին ամուսնական տուն: Ավելի ուշ, հարսանեկան գորգերը կոճկրետանալով, ժամանակի պահանջով ստացան նոր բովանդակություն և կոչվեցին «Շնավուր»: Այս տեսակի մեջ ընդգծվում էր ամուսնացող զույգերի հավատարմությունը հայ ընտանեկան ավանդույթներին:

Գորգադաշտը հիմնականում տրամադրվում էր վազքի պատրաստ երբեք գեղազարդ մատաղ ձիերին ու երբեք հավատարիմ ձեռնասուն շներին: Ձիերից երկուսը խորհրդանշում են հարս ու փեսային, երրորդը (իր գույնով ու հանդերձանքով տարբեր), որ երկուսի միջնորդն է կազմում, իմաստավորում է խաչեղբորը: Խաչեղբայրը այն կենտրոնական օղակն է, որ ամրակայում է ամուսնացած զույգի սերը և նրանց կապում ավանդական կենսաձևին:

Շները, նորաստեղծ ընտանիքի համար այնքան կարևոր, հավատարմության խորհրդանիշներ են:

Վիշապագորգը Ղարաբաղում ուներ պահպանիչ նշանակություն: Նա կոչված էր չարից ու պատուհասից հեռու պահելու ընտանիքին և ունեցվածքը:

Հայկական գորգանախշերը իրական, պատմական, ծիսական պատկերներ ու խորհրդանշաններ էին: Դարեր շարունակ ընդօրինակվելիս նրանցից շատերը խեղվել-ձևափոխվել, կորցրել են իրենց նախկին պատկերը և վերածվել սոսկ զարդանախշի: Ավանդական սովորությամբ գորգերի «բրենակները» (օրինակները) հոգատարությամբ պահվում էին որդոց-որդի: Նրանք չէին

վաճառվում: Սակայն տարաբախտ ժամանակներում անհագուրդ և չտես թշնամիների կողմից ավարի ենթարկվեցին նաև գորգերը: Իսկ Հայրենական պատերազմի շրջանում և նրանից հետո մինչև վերջերս Կիրովաբադից, Նուխուց, Ադրբեջանի գորգագործական այլ շրջաններից, պարբերաբար, շահագրգռված մարդիկ, խմբերով շրջում էին հայ գյուղերը և յուրաքանչյուր հին քրքրված գորգի կամ գորգակտորի փոխարեն ամբողջական թանկարժեք գորգեր էին տալիս և դրանով շահագրգռում հին ու արժեքավոր գորգերի վաճառքը: Այսպես չքացան Ղարաբաղում առատորեն սփռված, գրեթե ամեն հայ ընտանիքում գոյություն ունեցող հին «ըրենակները»:

Ղարաբաղցին բոլոր գյուղերում, գյուղերի բոլոր թաղերում աղբյուր է կառուցել (այն էլ ի՜նչ աղբյուր): Եթե բնական պատահառով կորել, խորտակվել, կտրվել, չորացել է աղբյուրը և այլևս հնարավորություն չի ունեցել վերականգնելու, գյուղն է տեղափոխվել: Կյանքը ջրի հետևից գնացել է, ներդաշնակվել ջրին: Աշխարհաշեն հայ գյուղացին ամեն հանդում, այգիների, վարելահողերի, արոտավայրերի տեսանելի կողմերում, մեծ ու փոքր ճանապարհների կողերին աղբյուր է կառուցել, աղբյուրի մոտ հավերժականաց ծառ է տնկել՝ թթենի, տնջրի, կաղնի, ընկուզենի, թքեռնի, սղուզի... շինել է «հրապարակ», «քեֆի սեղան» և «հաց է կերել», խնջույքի նստել այդ ծառերի տակ: Եկող-գնացողին, ծանոթ-անծանոթին նստեցրել է «վերին թարեքին» ու նրա պատվին գինու նոր կարաս է բացել:

Աստծու պարգև ջրին արժանավայել հագուստ է հագցրել, քանդակել է, գրել, վիմագարդել, որ առինքնող լինի և ակնահաճո: Աղբյուրին հուն է փորել, հոր է բացել, որ հավերժ լինի նրա կարկաչը: Ակ է շինել, քարակերտ գեղաշեն ու գլգլան ակ, որ մարդիկ անապական ու թարմ ջուր խմեն: Հղկել է մարմարն ու որձաքարը ու վրան գրել.—

Պարզիր, աղբյուր իմ սառնորակ,
Անցորդներին զով արա...

Մեծ ակի կողքին փոքրն է դրել, ավելի գետնահարթ, որ երեխան ու ուլը, գառն ու դողդոջ ծերունին կարողանան վայելել առանց «նեղության»:

Ակի առաջ հովտ (գուռ) ու նավ է շինել, հաճախ հինգ-տասը մետր երկարություն ունեցող նավ, որ անասունները, թռչունները ջուր խմելիս իրար չհրմշտեն: Նավից ոչ հեռու ծառեր է

անկել, որ միջօրեին, ջրվելուց հետո անասունները նրանց տակ նստեն ու հանգստանան՝ մինչև «արևի կոտրվելը»: Տեղական դեղնակարմիր կավից թունգի է պատրաստել, ջուր անցկացրել, որ ջրասակավ, տոշոր հողերը ջրարբի դառնան, այնտեղով անցնողը պապակ չմնա...

Չնայած համատարած ավերման տարիներին հին աղբյուրներից շատ քիչ բան է մնացել, այժմ էլ Ղարաբաղի բոլոր գյուղերում հնավանդ ու գեղաշեն աղբյուրներ կան: Մինչև վերջերս տարեց մարդիկ հիացմունքով էին խոսում Պարտավ քաղաքի հարասնակնյա աղբյուրի մասին և այն մասին, որ յուրաքանչյուր ակ իր բարեշեն նավն ուներ: Ժողովրդի հիշողության մեջ թարմ է նաև Նուխի քաղաքից ոչ հեռու Թազաքյանդ գյուղի մի հանդում գտնվող յոթակնյա աղբյուրը՝ կողքին բարձրացված ինը մետրանի հղկված որձաքարե սյունով, որ կոչվում էր «Վարդանի քար»: Ասում են հայոց Մեծն Սպարապետին հղված տողեր կան սյան փոշեծածկ նախատին:

Ղարաբաղյան բանահյուսության մեջ մարդու, հացի և ջրի դաշնության մասին բազում վկայություններ կան: Իսկ որքան անուններ կան ցանուցիր, հնախոս ու քաղցրախոս աղբրանուններ, դաջված սարերին, ձորերին, հանդերին...

Բավականին մեծ է Ղարաբաղի բարբառի տարածքը: Այն ընդգրկել էր պատմական Հայաստանի մի հսկայածավալ մասը՝ օջախ ունենալով Աղվանից թագավորական աշխարհը: Մայր լեզվի հետ լինելով մշտական շփման պայմաններում և վերընձյուղվելով ու զորանալով նրանից, միաժամանակ իր մեջ ներառել է ժողովրդական տարբեր խոսվածքների ընդհանուր բառապաշարը: Խոսվածքներ, որ իրար էին խաչվում երկրամասի աշխարհագրական արդյունավետ դիրքի ընձեռած բազմակողմանի հնարավորություններով ու նպաստավորությամբ: Ղարաբաղի բարբառի արմատը ծագումնաբանորեն այնքան է հին, որքան իրեն ծնող մայրը՝ հին հայերենը: Նրա բառ ու բանի ակունքը խորն է, հեռավոր, ինչպես մարդկային առաջին թրթովանքները՝ պարզ, բնաձայնային: Ղարաբաղի բարբառը ծովածավալ հարստություն ունի: Չնայած նա տեղատվություն է ապրել, կորցրել տերիտորիալ թանկագին միասնությունը, բայց մնացել է դեռևս իր մաքուր ակունքի մոտ, մնացել միակ անկողոպտելին՝ իր լեզվական առեղծվածներով, հնդեվրոպական նախալեզվի բառագանձերով:

Ղարաբաղի բարբառը պետք է դիտել ոչ թե որպես բարբառ,

այլ ընդհանուր լեզվի համաժողովրդական մի տարբերակ՝ իրեն բնորոշ լեզվամտածողությամբ ու հարուստ բառապաշարով: Նախամեսրոպյան լեզվի շատ բառեր, դուրս մնալով դասական մատենագրությունից և չունենալով գործածության ոլորտ՝ մոռացվել են և մի զգալի մասով ակունքային անաղարտությամբ պահպանվել Ղարաբաղի բարբառում:

Ժողովածուի նպատակն է նաև բանասիրական ասպարեզ հանել Ղարաբաղի բարբառի հազվագյուտ բառեր, արտահայտություններ, որոնք արժանի են համահայկական ճանաչման ու հետաքրքիր են իրենց ոճական, կառուցվածքային վաղեմության առումներով:

Աղունաղաց
ալլաշուն
առք
ատոմ անել
արօղի (արանօղի)
բանդի
բեռն
բողոմն
բուկ
բրբթո
գեառ
գիդի
գորտնուկ
դեռի
դեռիկ
դողի
եխնել
եղկ
եռե խելք
Երգի (Հարգա)
զարդա
զարուր
զոզակ
զռավար անել
էյն
թերմա
թիմարել
թոր (սաղմ)
թորել-թափել, կաթեցնել
թորթոր-փափուկ
թևան-թևավոր
իմացք
լուսիլ
լպստան
լպրտան
լպրտոկ
խալդի
խարակ
խեղդելահազ
խինդեղն
խոսքասեր
խոնակ
խցկան
ծակուկ
ծառաշարժ- վաղ գարնանային քամի
ծծախոով
ծծուկ
ծոմախեղդ
կաթուկ
կակուշ
կապա-գորգ
կապան-գորգագործ
կեռան
կնեխաշ
կիցք
կնկասեր
կողկից
կոտորակ
կրմզուկ
համն
հասան - հասնող, չափահաս
հատրա
հարսուկեսուր անել
հեր (տեղանքի)
հերաթաթ
հի
հոծի
հն
հնթ
ձուկան
ղոոթն
ճեպուռ
ճմոռ - ճմռթված
ճոնդ
ճտամայր
մաղ ընիլ - պարել
մաշկաձու
մեծուքանուկ
միլ - տարածում
միջի
միջավար
մլմլո
մղակ
մռավ
մորաքոր
մոխրաթառ
մուղան
յալ
«Յալի»
յոթը պորտ

| | | |
|---|---|---|
| շեղուն | ռոք | ցավքուն |
| շեջաքար | սիրան - սիրավոր | ուխարել |
| շրախուռ | սլ"ւկն | ուսակ |
| շուշակ | սոյն | փխեխ |
| ոտաշոր | սորան | փշփշիկ (փշիկ) |
| պառակ | սկսվենի | փոկ (կաշվաթել) |
| պարանել | սուլուլ | քաղավ կյալ |
| պզտաթան | վայիս | քից (օղի) |
| պտտան | վեկնել (պարսավել) | քոլասայր |
| ջեջա | վժժոկ | քրշա (սահման) |
| ջեջօղի | վինավ | քոռ (չարաճճի) |
| ջուվար | տ"խ | քոնթավ կյալ |
| ջուրնիկ | տոնդ | օնջ և այլն: |

Ղարաբաղցին սիրում է իր բարբառը: Ամբողջ կյանքում նրանով խոսում, նրանով խորհում է: Եվ եթե բարբառում է այլ լեզուներով, ապա՝ իր լեզվի բույրն ու համը նրանց խառնելով: Չոր ու անկենդան են թվում մյուս լեզուները և նեղլիկ՝ նրանց հնարավորության սահմանները: «Մեր լո̈ւզուն շողոլ կաղնե ա. օզո̈ւմ ըս համնը չինի, օզո̈ւմ ըս՝ մա̈սան: Մեր պառը երգինքան ա կաթալ»: Նա այսպիսի կարծիք ունի իր լեզվի մասին:

Ղարաբաղցին հնուց ի վեր աչքի էր ընկնում ամուր հիմք ունեցող բարոյականությամբ ու կայուն սովորություններով: Կանոնարկված էին հասարակական կյանքի բոլոր բնագավառները: Փորձենք ուրվագծել այն մի քանի բնորոշ կողմերով: Ղարաբաղյան բարոյականության հիմքում միշտ էլ եղել են հայ ընտանեկան հարաբերությունները՝ իրենց սովորույթային անխախտելի նորմերով: «ԱՇԿԸ ՏԵՍԱԾՆ Ա ՍԻՐՈՒՄ»:

Մի՞թե սա չէ այն անկյունաքարերից մեկը, որ երկար դարեր պահպանել է հայ ընտանիքի կայունությունը: Սերն ինքն իրեն կգա: Կգա մանկան ճիչերով, հարսի ամոթխածությամբ, բարեկամությամբ, ամուսնական մահճի նկատմամբ պարտականության չգրված օրենքով:

«Վեչ փիս ախճիգ տեսե, վեչ՝ լա̈վ կնեգ»:

«Վեչ անվա̈լ ախճիգ տեսե, վեչ՝ ղաշանգ հարսնը»:

Սխա՞լ է այս փիլիսոփայությունը... Բայց բարոյական է և նրա օգտին են վկայությունները: Մի տան մեջ ամուսնությամբ օղակված ջահել աղջիկն ու տղան ինչո՞ւ իրար չպետք է սիրեն, երբ կա երդում, որ մահվան չափ ծանր է այն դրժելը, կամ համատեղ կենակցությունը երաշխավորող արարողություններ...

«Շտա՜նը կեոքանը տակեն ա ընում»: — Սերը կծլարձակի տևական կենակցության ջերմոցում: Սերը չի ուշանա, եթե նրանից չձերբազատվի պարկեշտությունը: «Թեկուզ մարթ ու կին, էլի մարթը կնգանան բդի հմանչի, կնեգը՝ մարթան»: «Մեր Օսաննեն ննետ էնքան օր ու քշեր ըմ ըրալ, քուր-ախպեր ընք տեռալ»:

Որքա՞ն հարազատություն, երկնային ջերմություն կա ընտանեկան հարաբերություններում: Բայց ղարաբաղցին չի քարոզում սիրո մեջ հաշտվողականության անպարկեշտ գաղափարը: Սիրո «միակ աստվածն» «աստվածներին» է հովանավորում, ընտրյալներին: Դա սոսկ ցանկություն է, իսկ իրականում...

Իրականում մեկին սիրում են, մի ուրիշին առնում: Բայց իդեալական, հավերժական սիրո գաղափարը և նրան ուղղված ձգտումը կենդանի է մարդկանց մեջ:

«Տարեն մե հետ մին հավք ա կյամ, մին ծառու վեր կյամ, ասում.

— Լա՜վը՝ փիսին, փիսը՝ լա՜վեն: Լա՜վը փիսին, փիսը՝ լա՜վեն:

Տասը տարանը մին էլ էդ նույն հավքը կյամ ա ծառեն վեր կյամ, ասում.

— Լա՜վը՝ լա՜վեն, փիսը՝ փիսին: Լա՜վը՝ լա՜վեն, փիսը՝ փիսին»:

Քչերին է հաջողվում գտնել իրենց երազի տիպարին՝ ոսկեզանգուր պատանուն կամ ոսկեծամիկ աղջկան, բայց ամուսնանում են բոլորը: Այդպես է աշխարհի կարգը: Այնուամենայնիվ, սիրածի հետ միայն պետք է ամուսնանալ: Շրջապատում ամենագեղեցիկը մարդու կինը պետք է լինի: «Ղաշա՜նգներեն մաչին ամենաղաշա՜նգը, սերուններեն մաչին ամենասերունը կնեգը բդի ընի: Նա, վեր ամեն օր ըռաշիդ շոռ ա կյամ, քգնհետ օր ու քշեր անում»:

Դեռևս հազարամյակների հեռվից, մարդու մեջ զանազանվել է երկու գեղեցկություն՝ ներքին (հոգեկան) և արտաքին (պատկերային): Երկրորդը փայլ է, խաբուսիկ: Եթե չկա առաջինը, նա արագ անէանում է և հակառակ զզացողությունը պատճառում մարդուն: «Ղշնգոթո՜ւնը սարու ծյուն ա, սարը բդի ղաշա՜նգ: Համ էլ՝ ղաշա՜նգն ասում ա՝ ինձ հոնանցե եշի»:

Ամուսնական հարցի լուծումը ամենադժվարն է կյանքում, որին պետք է մոտենալ ամենայն լրջությամբ և հասուն տարիքում: Եթե ամուսնացող կնոջ հասակը ամուսնության գործում վճռական չի եղել (նրան կարող են ամուսնացնել նաև մատաղ

տարիքում), ապա տղամարդը բոլորած պետք է լինի իր քսանհինգ տարին: «Կնեգ բրա, քնեէք բրա»:

Այս լուրջ, ճակատագրական դաշինքի մեջ չպետք է սողոսկեն պատահականությունները: «Մուկունը տոոոնեն (թռչուն է) տեսնում ա, յրան սիրահարվում: Քյընում ա կոխքը կտրում, թա՝ եկ ես ու տու ուրուր ննետ պսակվինք: Տոոոնն ասում ա՝ լավ կընի: Մուկունը լոք ա տամ, տոոոնեն նեստա պաչում, փախչում: Տըոոնը կյըմրում ա, փեսացվեն նետան թռչում: Մուկունն էլ վազ ա տամ, նի մննում իրան պունը: Խեղճ տոոոնը տես ա եշում, տեն ա եշում, ճարուր ծակ-ծուկ կա, ինքը վերա՞վը նի մննե: Ճարը կտրած պունին կշտեն նստում ա, ծերքերը խաչ անում, սպասում: Էնքան ա եշում, մինչև ումեղը կտրում ա: Ասում ա՝ իմ դանգլա խելքս, ամեն պաչու կնավատա՞ն, վեր ես նվըտացե»:

Այս փիլիսոփայությունն է այն ամուր հենասյուններից մեկը, որի վրա կանգուն է մնացել հայ ընտանեկան բարոյականությունը: Հայկական սովորությունները չէին արգելում պատանիների և աղջիկների համատեղ խաղերը, տոնախմբությունները, մրցումները և այլն: Սրանք տալիս էին մոտիկից շփվելու և իրար ճանաչելու ռեալ հնարավորություն, որ մեծ դեր էր խաղում ամուսնական ընտրության մեջ:

Մի զրույցի մեջ կինը մեղադրվում է այն բանի համար, որ երազում տղամարդուն ներկայացել է թեթևաբարո կողմերով: «Վեր իմ ըրազումս տի ըս, քու ըրազումդ հո՞ւց կընիս»,—ասում է ամուսինը:

Համեստությունը, առաքինությունը այն թևերն են, որ կնոջը պետք է պահեն ավանդական բարձրության վրա:

«ԸՆԴԵՂ ՄՏՔԱՎ ՔՅԸՆԻԼՆ ԷԼ Ա ՀԱՄՈԹ»: «էդ խոսքը մըտքումը ասելն էլ ա համոթ»: Սա մարդկային բարոյականության ամենավսեմ դրսևորումներից է: Ամուսնական սուրբ մահիճը պղծողները պատժվել են չարաչար: Մարդկային կենդանի խիղճը անզոր է զսպվել ժողովրդական վճռի առաջ՝ այդ պարագայում: Կնոջ ամեն թերություն կարելի է տանել, չի կարելի ներել նրա անհավատարմությունը:

Ամուսնական զործում ԺԱՌԱՆԳԱԿԱՆՈՒԹՅԱՆ հաշվառումը մարդկային գույին վերաբերող՝ դարաբաղյան հոգևոր ժառանգության ամենահետաքրքիր կողմերից է: ՕԽՏԸ ԹՈՐՏԸ: Գնում էին հետ՝ մինչև յոթերորդ սերունդ, քրքրում էին տոհմածառը,

որից հետո միայն հանգում ամուսնական ընտրության: «ԱՍԼԸ
ՀՈ».— Ցեղի (ազգի, գերդաստանի) ժառանգական հատկանիշնե-
րը չեն կորչում, այլ հարատևում են սերունդների մեջ: Սա է հը-
նից մեզ հասած այս արտահայտության իմաստը:

Ղարաբաղցի տղամարդու բարոյական նկարագրից դուրս է
եղել խմել-հարբելը, վախկոտությունը, սուտասանությունը, խոս-
քադրժությունը, ծուլությունը, անհյուրընկալությունը, նամար-
դությունը (նամարդություն են համարվել հրացանով մարդ սպա-
նելը, դավերը. «Թվանգը նամարդոթուն քցից մարթկանց մա-
շը»), անգթությունը, խեղճին, անզորին, անօգնականին չպաշտ-
պանելը, որբին հենարան չկանգնելը, մարդկանց ներկայությամբ
հայհոյելը, ուրիշների ներկայությամբ կնոջը գուրգուրելը, սխալը
երկրորդ անգամ կրկնելը, ստորաքարշությունն ու քծնանքը, խո-
րամանկությունը...

«Ղարաբաղցուն ըսեցեն. ամենատժերը հի՞նչն ա, վեր կա-
ռում չըս տանիս, ասից. ինձ ըշտեղ տնիյը: Արտես նստե՝ մրո-
քըս քանդի, շիրեփավ աշկես եղը քաշի, բայց ինձ ըշտեղ մի
տընի, հազար տարե էշ ըմ պահալ»:

ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.— «Չկար մի տեղ, որ սեղանին միա-
ժամանակ չդնեին գառան, ուլի, խոզի, հորթի և հավի միս, մեծ
քանակությամբ ցորենի և գարու հացի հետ»: Այսպես է գրել
հայերի հյուրասիրության մասին Քսենոֆոնը մեր թվարկությու-
նից առաջ չորրորդ դարում: Նկարագրված շռայլ հյուրասիրու-
թյան սովորույթը երկրամասում պահպանվել է առայսօր: Եվ,
սակայն, պետք է նշել, որ ղարաբաղյան հյուրասիրությունը հե-
ռու էր սոսկական կերուխումից, առավել՝ հաշվենկատությունից,
այն ամենից առաջ արարողություն էր, որից անպակաս էին երգն
ու պարը, ասմունքն ու նվագը, «հանգեր անելը» հնարամտու-
թյունն ու զվարճախոսությունը... Հյուրասիրությունն ուներ իր
մշակված կարգը, դեպի հյուրը հարգանքի ու մեծարանքի հա-
կումով: Հյուրասիրության առողջ ու մարդասիրությամբ առլե-
ցուն սովորությունը իր վեհությամբ ետ չէր մնում ինքնատիպ ու
ինքնաննար հայ ճարտարապետությունից, միջնադարյան ման-
րանկարչությունից ու խաչարվեստից:

«ՀՈՒՐ ԸՄ ՄԻՆ ԹԻՔԱ ՀԱՑ ՏՎԱԼ»: Հյուրասիրությունը ըստ
ղարաբաղցու «աստվածահաճո և մարդահաճո» է, և մարդկային
համակեցության անբաժանելի տարրերից մեկն է: Եթե մարդ
ինչ-որ պատահարից ու պատուհասից ազատվել է ժամանակին

ու հաջողությամբ, ապա դա վերագրվել է հյուրասիրությանը, օտարին, կարիքավորին «մի կտոր հաց տալուն»:

Մարդը տխրության, ուրախության պահերին, խաղաղ ու անհանգիստ ժամանակներին, պետք է իր ժողովրդի հետ լինի: Այդ կապի սերտացման արդյունք է «ժողովուրդին հաց տալը»: «Մին թիքա մինակ կեր, մինը՝ ժողովուրթին ճհետ»:

Տարբեր առիթներով հասարակ ժողովրդի համար տոնախմբություններ, հացկերույթներ սարքելը «սեղան ու տոնը պեց» ղարաբաղցու նկարագրի ամենահատկանշական գծերից է: Նման պահերին մարդիկ աչքի էին ընկնում շռայլությամբ, հոսում էր հին գինին, թանկագին ուտեստներով լցվում սեղանները: «Աստված հաց տվողին հացը բոլբոլ ա անում»: «Հու վեր ժողովուրթան հաց խնայից, նրա խուխան էլ սատուծ կխնայի»:

Բացի ծիսական, կենցաղային սովորություններից (տխրության և ուրախության հետ կապված սովորություններ, որոնք ուղեկցվում էին հացկերույթներով), հայերը տարբեր առիթներ էին որոնում «ժողովրթին հաց տալու համար»:

Երկրամասի հայերի շռայլ մարդասիրության մասին է հավաստում երկու եղբոր զրույցը: Երկու եղբայր են եղել, մեկն աշխատել է առավոտից իրիկուն, երկնել է, սեղծել, ամբարել ամենայն բերք ու բարիք, իսկ մյուսը գրել է աշխարհով մեկ, եղբոր կուտակած բարիքը բաշխելով մարդկանց: Երկու եղբայրները ղարաբաղցու հպարտ էության երկու կողմերն են:

Խորհրդային խոշորագույն ֆիզիոլոգ Բոգոմոլցն ասել է, որ պետք է ուտեստի սեղանից հեռանալ քաղցի թեթևակի զգացումով: Ղարաբաղում, ո՞վ գիտե, որ հազարամյակից, առաջնորդվում էին այս իմաստնություններով: «Վեր մարթին աչքը հացեն յրան ընի, հիվանդանալ չի», «Հանց բրա, վեր ուտեիս պեճիդ համը պրանումդ կորչի վուչ», «Վեր մին պենան շատ կերեր, կճհամե», «Ամեն հաց ուտեիս՝ փորումդ թափուր տեղ պահե», «Մարթին փորը փեյնանվարան չի, հունչու ածիս՝ տանե» և այլն, և այլն: Ամեն բարիքի և առանձնապես հացի նկատմամբ պաշտամունք ունեցող աշխատավորը ունեցել է քաղցրությամբ վայելելու իր սկզբունքներն ու կանոնները: Այնպես ուտել, որ «իրեսը պրճնան հիմանչի ուչ»:

Բանահյուսական-ազգագրական վկայություններ մեջ ուրվագծվում է ստեղծող ժողովրդի հավաքական կերպարը: Եվ մենք տեսնում ենք նրան, մեր ժողովրդին՝ իմաստուն, նուրբ զգացո-

դությամբ, հումորով, աշխատանքի նկատմամբ պաշտամունքի հասնող սիրով: Ղարաբաղցու հմայքը առաջին հերթին նրա ազնվության, սկզբունքայնության, երեխայական պարզամտության և դյուրամատչելիության մեջ է: Նրա համար անհաղթահարելի դժվարություն չկա: Նա սիրում է օրենքը, կարգն ու սովորությունը և ենթարկվում է նրանց դարձյալ երեխայի պարզամտությամբ: Յուրաքանչյուր տոհմիկ ղարաբաղցի աստվածային կայծ ունի իր մեջ, բանաստեղծական փխրուն հոգի: Նա սիրում է իր երկիրը և համառ է իր սիրո մեջ, ինչպես սպարտացին հին Հունաստանում և կատալոնացին Իսպանիայում:

Եթե ես նկարիչ լինեի, ապա որպես ղարաբաղյան պարզ հոգու արտահայտություն, մի լեռան ծաղիկ կնկարեի: Մի բուրավետ ու երկչոտ ծաղիկ՝ պատմության մշուշից եկող հայ մարդու աչքերով: Ղարաբաղցին իր երեքհազարամյա կյանքում ունեցել է վսեմ մի իղձ՝ ապրել արևի հայացքի տակ ազատ, տիեզերական ներդաշնակության մեջ՝ ազգերի և բնության, հոգու և աշխարհի: Ապրել մայր ժողովրդի հետ գիրկընդխառն, ժողովրդի և ղեկավար մարմնի փոխըմբռնման ու հարգանքի պայմաններում: «Պուղուն հարցրեն, թա,— էդքան պեները հո̈ւնց ըս հնարալ, ասից.— Իմ դլվումըս Մելիք Շահնազարեն նման տղամարդ ա ըլա̈լ»:

Քրտինքը մարգարիտ կդառնա, եթե չի ոտնահարվում մարդկային խիղճն ու արդարությունը: Սարկավագ իմաստունն ասում է՝ մի հանգցրու մարդու հոգու աստվածային կայծերը: Ինչ մնում է ազգային ու մարդկային արժանապատվությանը, ապա դա իր էությունն է, հոգու գերտարրը: Նա լի է մարդկության առաջընթացի մեջ իր՝ ղարաբաղյան ավանդը ներդնելու ազնիվ ցանկությամբ: Նրա հոգին ամենածայրահեղ մտորումներում անգամ անկեղծ է: Եթե հնարավորություն ունենար, աշխարհի մեծ ու փոքր հոգսերը իր ուսերին կառներ, իր տառապած, բայց դեռևս չնկած ուսերին:

Ահա նրա մի հավատամքը: «Ես սիրում եմ քեզ, իմ այլազգի բարեկամ: Դու բարձր ես, դու աստված ես, պատիվ արա վայելիր իմ սեղանից, ամենից փափուկ տեղն է քեզ վայել, ամենից կարմիր խնձորն է քոնը, եթե կտրեմ քո խոսքը, ապա միայն մեղրով ու շաքարով: Իսկ ես՝ քո ստրուկը, քո սպասավորը... Եվ եթե ես ինձ քո ստրուկն եմ համարում, ապա դու, հարգելի բարեկամ, չհամարձակվես ինձ ստրուկի տեղ դնել: Իմ գեղեցիկ

մատաղ քույրը պատրաստ է սպասավորելու քեզ, բայց հանկարծ դու նրան հարս չհամարես, թե չէ... Երկինքը վկա...»:

Բարձր պատիվ տալը իր ընկեր մարդուն (ոչ տիրակալին) բարձրապատիվ մարդուն է վայել:

Ամենամանրախնդիր գործում էլ ղարաբաղցին մնում է իր մարդկային կոչման բարձրության վրա և ամեն ինչ անում է ՏՂԱՄԱՐԴԱՎԱՐԻ: «Մարթին անա մրթավետ բղի կյա» և «Խընդեղնեն տակռեն էլ թթենու պատվաստը չի ընդունի»:

Նա իր պաշտելի ազգային հերոսի նման ապրել է իր հողի սիրով, հաճախ կրակն ու ոսկին շփոթելով իրար հետ: Երբեմն էլ, երբ դաժան է վարվել թշնամին, իր հոյակապ աղբրից խմել ու թքել է ակին, կորցրել է չափը, չափը շպրտել է ու...

Այսպես՝ մեր այսօրվան է հասել ղարաբաղցին, հույսը նեցուկ ունենալով, անխաթար հավատով, արևային խաղաղ բարությունն ու պայծառությունը չկորցրած տղամարդու հավատով դեռ սպասում է իր ազգային ձգտումների իրականացմանը:

ԼԵՎՈՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ԱՐՁԱԿ

## ՀԵՔԻԱԹՆԵՐ

### 1. ԾԻԼԿԱՆԸ

Ընում ա, չընում, իրեֆ ախպեր ըն ընում, ախպորցը մինը ասըլ, էրկուսը բդասըլ: Ուրան հնարին եշած էս ասըլ ախպորը անումը տնում ըն Ծիլկան: Ծիլկանը խելուֆ ա ընո̈ւմ, լոֆ տըվող փոնող, սաղանու փափուն կյեցած, համ էլ սրտու փոշ տուս օնող:

Մին օր իրեֆ ախպերը խուսկրնեն մին ըն անում, վեր ֆյնին ուշափեն հանդան խոտ հարին, պիրին: Դրյըզնեն յոր ըն օնում նի մննում տափը: Հոնանցե օշափը տեսնում ա, սկսում նղնղալը. «Արա, հե՞յ, ա շան տղեֆ, տուֆ ֆանե կլխանե յըֆ, վեր կյամ ըֆ էտ արտը հարում, հայա հավֆը ուրան թեավը, օխծը ուրան պորտավը բստըղեֆավ անց չի կացալ»:

Օրավ առաջ Ծիլկանը ախպորցը կտըրցըրած ա ընում, վեր վեչ մինը ուշափեն պատասխանը տա վուչ ուրա̈ն անայը կըմանե:

Օշափը վեր սահանց տեսնում ա, ուրխանում ա. «Սահանֆ լհա վեննուֆ-ծեռուֆ եկալ ըն ընզալ խտեսս, ըրգո̈նվա նաշս կա ու կա: Սհանցա մնին ռուզյու կօտիմ, էրկունեն էլ՝ ֆշերս»:

Հըրցընում ա, թա.—Հո՞ւ ա ծզանա անկըրթևուր, վեր կյրիլ-կարթիլը գյուղում չի:

Ծիլկանն ասո՛ւմ ա.—Ես ըմ: Յա ես, յա մատաղ տավարը, համ վեննան տեպեզ, համ կըլխան:

Օշափն ասում ա. — Դե վեր տի յա, կա մին թոխտը տամ, տար էսինչ-էսինչ տեղը, ֆաշի տոնավը նի մուտ տափեն տակը, մեր տոնը ընդեղ ա, տո իմ մօր, եկ:

Միլկանը ճղենճի պեց ա անում կարթում. «Վեր էս տղան կյա, փոնե մորթե, իփի, ճանցու վեր կյամ, օտիմ»:

Միլկանը թոխտը ճրղոտում ա, օրիշ թխտու յրա ճորը կյրում. «Ա մար, Ալա եզնը մորթե, իփի, ճնզերունքս յար ըմ օնում կյամ, ճանցու օտինք»:

Ուշափեն մարը Ալա եզնը կմորթե, իփի, ճզըրե, տղեն եշի:

Օշափը էրկու ախպորցը ճճետ կյամ ա տոն, տեսնում Միլկանը առոք-փառոք ճստած, ղզղանեն դում ա տամ: Օշափը մաննը կծում ա, մորը յրա կզնըվում.—Պա քեզ տի յըմ սաս՞լ, վեր տի յըս բրալ:

— Այան մատաղ, ճունշու կյրալ ըս, ընդի յըմ բրալ: Հունշու ըլալ ա, ըլալ ա, սուս անինք, տեսնանք ճինչ ա տեռնում:

Օշափը մորն ասում ա, վեր ուրուզյունը ճաճանց կլխըտակերը ճւրուր կոխկե տընի, կլխընեrեն էլ մին կարպետ քցի, քշերը եր ա կննական կտորե, ճանցու շիլ շըղնե:

Լոխ քոն ըն ընում, Միլկանը քոն շընում, ուշափեն ըսածնեն սկանում ա, եշում, վեր քննիլու մարթ չի մնամ, ծիլ ա տամ եր կենում, ուշափեն օխտը քուր ա ընում, կարպետը քցում ա ճաճանց կլխրներավը, ախպորցը եր կցընում, փախնում ըն:

Օշափը եր ա կենում, կրպետեն տակե կլխընեն կըտորում, կարպետը քաշում, տեսնում ուրան քվերքը:

Հղենճի էրկու ախպերքը քենեք ըն անում, թա ճունց անին, վեր ճւրանց խելունք ախպորը կյեղած պաճին ուշ, թաքավերեն իմաց տան, վեր ըշխարքես ամենախելունքը ուրանց պիծի ախպերն ա: Տղատ եր ըն կենում, քյընում թուշին թաքավերեն կոշտը: Մեծ ախպերն ասում ա.—Թաքավերն ապրած կենա, էն ա օշափը մին վեսկե թաս օնե, վեր ճալա ըշխարքումս տի պեն ըլըված, տի պեն տեսված չի: Էտ ամանը քու տանտ ա սզական, ուշափեն եխտոտ տանը սզական չի:

Թաքավերն ասում ա՝ պա ճու կպիրի, ճու չի պիրիլ, սաճանք ասում ըն՝ վեշ մինը կարել չի, մինակ մեր Միլկան ախպերը կըպիրի:

Միլկանը քյնում ա, շորերը փոխում, մին շաքու էլ յոր օնում, մին կապ ճոթ-կտոր էլ, մին մկըրատ էլ, շլակում տանում ուշափեն տռանը վեր օնում: Տեսնում՝ մարը տռանը ճստած: Ասում ա. — Ա մար, ես շուրըկարե յըմ, օշափ ախպերը ղարկալ ա, վեր երկանքդ ու լենքդ շափիմ, ճանցու քզ էտե մին լավ շոր կարիմ, էս ա զետեզ ա կյամ: Վախիս ուշ, պեն շըմ ինք ունենա–

կան, էն տրանում օշափի ախպերը մին նվարան զկեռ ա տվալ, տարալ ըմ խոխեքս կյրունքիան րրալ:

էս վեր սկանում ա, պառավն ուրխանում ա, ըշխարքավս մին տեռնում, նիբանց տեսնա նոր շոր չի կյեցալ, խըլըղեն ծնգըլերն էն ա կախ: Ծոք կառրն էլ վեր տեսնում ա, ծլոլը նղե յա ընում:

— Դարզի ախպեր, մին քեքկալ էլ կշինիս, պռավալ ըմ: Դարզի ախպեր, մին յալլեխ էլ կկարիս, ծլոլս քյընում ա: Դարզի ախպեր, մին կյոտե էլ կկարիս, փորս թուլացալ ա...

Միլկանն ասում ա, լոխ կարքեն-սարքեն կրըլական ա, նալա մին ծերք էլ էյսվա նետե:

Միլկանը շաթուն յոր ա օնում, բոյը չփշըփորում, կնզանն ասում.

— Այա, ծառնըյեր վեննը կաց, մաշկաղ ղուզվի, կյոտող շափսը օնիմ:

Պառավը ծառնըյեր վենն ա կենում, Միլկանը մին քանե նետ շաթուն փորավը ծառեն ննետ պատ ա տամ, քմակեն կապում, նի մննում տռնը, վեսկե թասը յոր օնում, կնզանն էլ ասում՝ տի կաց, տանիմ շորղ կարիմ պիրիմ:

Վեսկե ամանը պուրում ա տամ թաքավերեն:

Ախպերքը նորն ըն քյընում, թա. — Թաքավերն ալրած կենա, էնա ուշափեն մին վեսկե պնալի օնե, վեր նամ ամեն սանդող պենում ա, նամ էլ ընղի սերուն պեն վեշ աշկավ ա տեսած, վեշ ընգունավ սկացած:

Թաքավերն ասում ա՝ պա նու կպիրի, նու չի պիրիլ, ախպերքն ասում ըն՝ մեր Միլկան ախպերը կպիրի:

էլնա Միլկանեն ղարկում ըն:

Մեր ազնավուրը քյնում ա տեսնում ուշափեն մարը պռաված, փոփ տեռած մին կնեզ, ըշկերեն լուսը թուլացած, ընգունենեն ծանղր, մին փաղ եր կալած տափերն ա թակում, ննետն էլ նայնայ անում: Աշկեն մինն էլ ըսկի տըսնայիս շընում: էն քոռ աշկեն կոխքավը քյընում ա, նի մընում տռնը, պնալին յոր օնում, տուս կյամ, նի մննում կյումը, ընդըղեն թեքը տուս տամ, ածում ղզղանեն մաշը, տուս կյամ կոքկեռ փախնում:

Օշափը նի յա մննում, թա. — Ա մար, բստըղեքաս մրթավետ ա կյամ:

Մարն ասում ա. — Խեղն ընիմ ես, էս ա մին փութ սաղունն յրանումս, էս ընգյունավն ըմ լմլամում, էն ընգյունավն ըմ լըմ-

լամում, հանցու քոնս տանե վուչ, քշեր-ցիրեկ էլ փաղավը տափերը վեր թկեյիս, հու վա կյամ բատեղ:

Օշափը գյուղում ա թա մարը նաշ ա իփալ, ղզղանը յոր ա օնում, տնում բռաշին օտում, համ էլ ասում՝ իմ մար պռավալ ա, մենենգ նաշը անհամ ա իփում:

Ծիլկանը վեսկե պնալին տանում ա տամ թաքավերեն:

Էրկու ախպերը էլ հա քյընում ըն թաքավերեն կոշտը, թա՝ պա ասել չըս օշափը մին հրեղան ծի օնե, տոխ-խմիս թմաշա անիս, ինքն էլ հանց ա սև թուխպա տուս եկած կծըկրակ ընի:

Պա հո՞ւ կպիրի, հո՞ւ չի պիրիլ:

Մեր Ծիլկան ախպերը կպիրի:

Ծիլկան ասե սարեն ծաղեզ, մին քեշա յոր կօնե, քյընի նի մննե ուշափեն կյումը: Ծիլկանեն բախտան կյումումը շատ քաքոռ թուփ ըրած ա ընում, վեր ծին խրխնշամ ա, նի յա մննում քքոտեն մաշը: Օշափը խրխնչոցեն յրա հսնում ա, տես ու տեն շոռ կյամ, մարդ չի քթենում, քքոտվետումն էլ մրթավետը կարում չի հոկե, ետ ա տեռնում քյընում: Ծիլկանը կապը ետ ա անում, քեշան կպոտում ծիյին կնըղըկներեն տական, հանցու ծեն շանե, կյուման տուս ա օնում, եր ընում, հայդա: Օշափը տեսնում ա հետան ծեն տամ. — Ա շան տղա, Ալա եզնանս կլոխը կերեր, վեսկե թաս տարեր, մծըսերուն պնալիս տարեր, ինձ թրեք ուտուցըրեր, մենենգ էլ ծիս ըս տանո՞ւմ:

Ծիլկանեն ասում ա. — Տու վըս մնացալ, մե հետ էլ քեզ ըմ տննական:

Ծին տանում ա տամ թաքավերեն և խոսկ տամ, վեր ուշափեն էլ ա պրլական:

Մին օր Ծիլկանը հրղոտած շորեր ա կյենում, պառավ մարթու թեղ-մրոք շինում, կացենը կոխում կյոտեն, քյընում ուշափեն ծմակը: Օշափը հոնանցե տեսնում ա ծեն տամ. — Տու հո՞ւ վըս, ա շան տղա, քանե կլոխ օնիս, վեր եկալ ըս ծմակս կտրում ըս. հալա հավքը ուրան թևավը, օխծը ուրան պոռտավը էս սմթերքավը անց չի կացալ:

Ծիլկանը լուզուն փոխած ասում ա. — Օշափ ախպեր, վեր գյիդաս, տու էլ կկյաս, խեր պենու հետե յա:

Օշափը մոտանում ա, Ծիլկանեն ասում ա. — Պա ասել չըս, էն շան տղա Ծիլկանը մեռալ ա, ղարկալ ըն վեր մին ղուքի շինիմ:

Վեր սկանում ա. օշափը մին կացեն ա յոր օնում, կոծ ա-

նում: Վեր կործը պրծընում ըն, Միկկանն ասում ա. — Օշափ ախպեր, առե յա առ, յա Միկկանը, մին բոյու վըf, նի մուտ մաշը, բալի յա էրկան ա, յա կարն, հանցու ժամանակեն յա ըրկընցընինf, յա կրնըցընինf:

Օշափը նի մննելն ըբաթ, Միկկանը յշիգին ոեխը մեխում ա, շլակում: Հղեննի էս խեղն օշափը հիշfան խնթրում ա, Միկկանը պեց չի թողում, տանում ա թաfավերեն տանն ըռաշին վեր տնում:

Թաfավերը կյամ ա թա. — Միկկան, վերթի, տու համ հնարավ ըս, համ խելունf, համ էլ թամահ չօնիս, ամեն խթա էլ ծիլ ըս տամ պրծընում: Ես էլ պռավալ ըմ, եկ իմ նախշուն ախճիգս fեզ տամ, տեռ էս երգիրիս թաfավեր: Օշափ ախպերն էլ ընի fու ախպորցան մինը, իրեfան մինտեղ fեզ ծառային, թախտդ հաստատդ պահին:

Հանց բեղար խելունf խոսկը խելունf կործ տեռնար, բատծու կյիրավը դաստի կղարվար, խելունfը միշտ թաfավեր տեռնար: Օխտը օր, օխտը fշեր հրսանեf ըն անում, fեփ անում, ուրխանում: Միկկան հըսնում ա ուրան մուրազին, տուf էլ հըսնիf ծեր մուրազին: Ցըրգինfեան էլ իրեf խնձոր ա վեր ըղնում, մինը էս fաթը ըսողեն, մինը սկըռողեն, մինն էլ ամեն հինչը կուրցրած խեղն օշափ ըխպորեն:

## 2. ՊԻՃ ԱՊԵՐԸ

Ընում ա չըռնում մին մարթ, սա էլ ըռնում ա մին կնեգ: Սահանf էն ըն ըռնում մին կտոր տան ըպրեխս, նեղութունու մաշի, fյուքթոթունը նստըրնեռան ծլծfայիս: Մարթը համ ծուլ ա ըռնում, համ անպեն, համ էլ վխլըկոտ: Էնfան ա ըռնում վխլըկոտ, վեր ռուզունը առանց կնեգը կարում չի թա տոռնը տուս կյա, թա մին fթոլ կյուզի:

Մին բատխալուս ռուզուն մարթ ու կնեգ տուս ըն կյամ, մարթն ասում ա. — Ա կնեգ, էս հինչ լավ fարվան կտրեյի fըշեր ա, սերտս օզում ա վեր fյըրնիմ Մեծ հըըցեն fարվաններեն լոխ կտըրիմ պիրիմ տոնը լցնիմ, բոլ ա, հերիf ա, հիշfան հըըցես ցաfյ ըս fցալ:

— Քարվան կտրող կոնդդ մոշավ անիմ, էդ fաշալ կոնդդ,

լուզվում փարզյար ըս, մին լուզու վա, էտ էլ վեր ընի վուչ, քաշ–քշեղակ յրա կտա, քեզ տանե: Ճելլ ըրա, ճելլ ըրա կործդ պրծեր, քյընի տեղդ վեր ընգեր, քզանա քարվան կտրող չընիլ, հիբը օղտը թռչի երգինքն ընի, էշը եր ընի փալաքյանը, ընդի էլ տու քարվան կկտըրիս:

Նի յըն մննում տոնը քոն նը̈մ: Քշերը քախծր ըրըզնե յա կյամ էս մարթիս: Հունցու վեր մին զըրկլոխ մարթ եր կցընե, ասե. «Կօզի անումդ Պիծի, էս ըշխարքումս քզանա պին մարթ չկա, խե՞ կնզանդ անզուն ըս օնում: Հինչ անիք, վեր համ անպեն ըս, համ վխլըկոտ, վխլըկոտու տարե յա, լոխ քզ նըման վխլըկոտ ըն, քու պնոթունդ էլ նհանցա իվիլ: Եր կաց քյընի, ստեղ խաթիրը կոտրում՛ էր: Հինչ հըղըցավ քյընիս, կնընչկյարմուր ա կըպլական, հունչու ծերքդ մեկնիս, քունն ա ընծական: Քյնողը տերտակ կյամ չի»:

Պիծին տեղան լոք ա տամ եր կենում, տանան տուս կյամ, իսկի կնզանն էլ ասում չի: Շատ ա քյընում, թա խըեզ, տա ինքը կգիդա, տեսնում ա հղեցը մին ծիու հաքյի վեր ընգած, ասում ա՝ էս լհա լավ ա, վեր ընգածը յոր կօնին, արազս հանցա պարին կդըրեխս: Մին պատառ էլ վեր քյընում ա, մին կորու նոտ ա վեննավն ըղնում, էդ էլ ա յոր օնում, տնում փեշկումը: Ծմակավը քյընիյիս մին ըրծեվու ծու էլ ա տեսնում, էդ էլ ա քըցում փեշկը: Օրը մթնում ա, ինքը քյնիյիս, մտքումն ասում ա. «Սօր իրեք ռուզի եկու, պա քոն ինիլի տեղս խե՞ կյամ չի»:

Եշում ա տեսնում՝ ծմակումը մին ծոխ ա եր ընում, ասում ա՝ կօզի շատ ընիմ նղացած, լաղ անիմ ըղնիմ ծուխեն կոշտը: Հսնում ա տեսնում՝ օխտը աժդահա օշափ կրակեն դրաղեն մես ըն խուրավում: Էլ յան տալի յոն չկա: Վեր ուշուփներեն տեսնում ա, վննըծերքը սկսում ա տղտողելը, մին ներմ ա կյամ ըղնում էս մարթին ջանը: Մտքումն ասում ա՝ Պիծի, բախտդ քզննետ ա, վախում՛ էր, քյընի:

Էս ուշուփնեն էլ ծերքավ ըն անում, թա՝ ա պիծի մարթ, եկ, նմընչիլան–քշվիլան հնցալ ա:

Սահանք հրցըփորձ ըն անում, թա հունց ա պտահալ, վեր պիծի մարթը ընգալ ա ըստեղ:

Պիծին շանան տուղտուղցընելավ մին կերպ զինքը հվաքում ա, թա. — Լհա ընդի, եկալ ըմ տեսնամ հունց ըք, հինչ ըք, հունց ըք նստում, հունց ըք եր կենում:

Մեծ օշափն ասում ա. — Լավ ըս բրալ, օխտը չընինք, օթն ընինք, մին տեղ կապրինք:

Շատ ըն կենում, թա խրեզ, մին օր էլ ուշուփնեն մսլըճաթ ըն անում, վեր «պիծի մարթին» վերչը տան: Տեղերը վեր ըն ֆցում, ֆոն ըն նում. օխծը կծածեն ֆոն ա կյամ, վեր Պինուն ըշկերեն ֆոն չի կյամ: Հարրենեն պահում ա, վեր լոխ ֆոն ըն ընում, հանդարդ եր ա կենում տռնան մին մեծ ֆյեթուկ պուռում անում ուռան տեղումը, յորղանը ֆցում յռան, ինքը նի մննում պռնախը:

Քշերվա կեսին մեծ օշափը զուրթնանում ա, դույող անում մնըցածներեն, թա՝ օնըը պերեք էս պիծի մարթին կարքը ֆըցինք: Սա վեր սկանում ա, էն պնուխտակումը լղեն նաքում ա: Ուշուփնեն թո՛մփ հա թո՛մփ, վեր ըն թակում էս մարթին տեղեն: Վեր շատ վեր թկեցեն, տեղումը էլ հալ չմնաց, մեծ օշափն ասից՝ բոլ ա, սա ուռան փայը եր ա կալալ, նի մտեք տղրնետ, ֆոն ըլիք:

Պիծին եշից մինչև սահանք ֆունավ ննցեն, հանդարդ եր կացավ, յորղանը ետ քաշից, տեսավ ֆեթուկը տեղեն մաշին այլեր տեռած: Սրփից տեն ածից, նի մտավ տեղը: Հիշտեղ ըք տեսալ, վեր փոքր վախավ լիզը մարթը ֆոն նի: Տի էլ Պինին. ֆշերն ըսպընելավ մին կերպ լուսըցըրավ: Ուշուփնեն զուրթնացեն, Պինին էլ յուրղանեն տակյան կլոխը տուս կալավ: Ուշուփնեն տեղնուտեղը ցըմըֆվեցեն, ուռուռ ըրեսե յշեցեն, մնացեն մաթ մնացած: Կունի մարթն ասից. — էս ֆշեր շատ ծանդր ֆշեր ար, էս անդար լվենը թուղեցեն ուշ թա մին ջլավ ֆոն նիմ:

Էս վեր սկացեն, ուշուփնեն մնացեն ըրըխնեն պեց: Մեծ օշափը Պինուն անա թաքուն ասից.—էս շա՛ն տղան վեր մեր օնեն լու վա ասում, սանում հնար շատ կա:

— Դե, լավ ա, կունի ապեր, եր կաց հաց օտինք:

Ամեն մին հաց ուշուփնեն մին թֆյա յըն շունում: Կունի ապերը մին հացեն ծերքեն տանշվում ա. ծղծղամ ա, ծղծղամ ա, պրծնում չի, մնացալ ա ծերքեն պտըհաս ընգած:

Հացա ետ մեծ օշափն ասից. — Ոտելիք ըմ եշո՞ւմ, մին զաղ չըս, տմընալիղ ըմ եշո՞ւմ՝ մնամ ում ըրմացած: Եկեք ըստեղ մին ֆանե փորցեր անինք, տեսնանք մեր պիծի ապերը հունց ա:

Ասելն ըրաթ լոխ ուշուփնեն եր կացեն, մեծ օշափն ասից՝ ֆար ընք հոփ տլական, նո՜ւր կըրցընինք:

Ամեզը մին քար եր կալին, հոփ տվեն, նո̈ւր կթըցըրեն: Էս վեր տեսավ, կուծի ապորը լղեն նուր կտըրից. մտածից, մտածից, մին անգյուն քաշվից, ծուցան դուզղունեն ծուն տոս կալավ, տրավ մին քարու նհետ, հոփ տվավ, ծվեն մաշը մննըրղըթերավը ճըլըպըզտ ըրավ: Ուշուփնեն գյղացեն թա մննըրղըթերեն նո̈ւրը քարան ա տոս կյամ, ուրուր ըրեսե յշեցեն, մեծ օշափն ասից. — Ապրիս, արժանքեղ եշած շատ լավ հոփ տվեր: Վեր տի յա, օրիշ պեն ընք ըննական, ամեզը մին մազ ընք պուք տլական մզանա, տեսնանք հո̈ւր մազ ա հաստ:

Լոխ տոս ըն օնում, էս մարթը մտածում ա, հինչ անե, հունց անե, բուրդան մենն ա ըղնում ծյին հաքյին, փեշկան տոս ա օնում, ուշափեն քթեն տեմ օնում: Սահանք մնամ ըն էշ կտրած. Մեծ օշափն ասում ա՝ վեր տի յա տեռալ, եկեք կուռուռկըրներաս ամեզը մին վիշիլ տոս օնինք, տեսնանք հուրն ա մեծ: Կուծի ապոր մենն ա ըղնում հըղըցեն քթա̈ծ կորուն նոտը, լհա տոս կալավ տրավ ուշափեն բռաշին, ուշուփնեն լոխ դըբետ կանեն:

— Կունի մարթը ամեն հինչում մեզ եխնում ա:

Մեծ օշափը մաշումը կզնըվում ա, լոք տամ էն ընգյունին վեննը կենում թա. — Մհենգ էլ քար ընք թող ըննական բդի երգինքը, տեսնանք հուրն ա եռե վեր ըղնում:

Ասից ինքը թող ըրավ, մնացած ուշուփնեն էլ՝ հետան:

Կունի ապերը քարը թող ընեխս տեսավ, վեր ընգեխս տեսավ ուշ: Տժեր տեղու տեմ ընգավ, մտածից, մտածից, դաստի նընարը քթավ:

— Մեծ ախպեր, — ասից, — մհետե էլ ա ըլալ տի մին պեն, մին քար ըմ եր կալալ յրան ըրալ, քեցալ ա երգինքը տրքտրըքռտալ, ղողըռացալ ա, կծըկածի ըրալ, ըրիքնակը տեղան շիլ ա ընգալ, պատառ ա մնացալ, թա յրգինքին տոնը պարան կյա, մին թահրավ ըստղան-ընղըրղան ուրուր ըմ քցալ, կպկպռալ, պարան չի եկալ:

Էս վեր սկանում ա, մեծ օշափը ղաշանք ա անում. — Քու հար ապրե, տի պեն չանիս, երգինքը մեր կլխեն պարան տաս, մեզ թողիս տակեն:

Պատառ վեր անց ա կենում, ուշուփներեն մինն ասում ա՝ քշերս իրիլի փադ շօնինք. մեծն էլ ասից՝ շաթվեքը եր կալիք, քեցեք ծմական փադ ըրեք, պերեք: Պիծի ապորն էլ ասից՝ տու քյընում'էր:

Ապերն ասից՝ չէ, քյինիլ բդիմ:

Անց ըն կենում քյընում:

Ծմակումը ուշուփնեն ամեզը մին ծառ պուք տվեն, վեր չլակին պիրին, ապերն էլ քյընից չարթվեն կյեփը քցից մին ծառու նեղնը, պատ տվավ, մին նոնդն էլ մին օրիշ ծառա կապից, թա՝ էս սաղ ծմակը չլակել բդիմ, տանիմ քերծումը վեր քցիմ, ամեն անգամ կծը–միծի, կծը–միծի, տի փադ տանել չընիլ:

Ասից պրծավ, ծմակեն տակեն չոքից, վեր չլակե: Ուշուփնեն յրա տեռեն.

— Քու հար լուս տեռնա, քզ ըրա ծլլա, ծերք քաշի մզանա, ըլա̈ծ–չըլա̈ծ մին ծմակ օնինք, էն էլ պուք ըս տամ, տանիս ընդեղ վեր քցի՞ս. ախպեր, քու փադդ հարկավեր չի, հդեն ընգեր մզ նըհետ քյընինք, յա օզում ըս չլըկներես նստե:

Ապերը եր ա ընում մին ուշափու օսեն նստում, շվշվցընելավ կյամ տոն: Ծմակումը հունչու ըլալ ա, ուշուփնեն տասն էլ յրան ըն տնում, մեծ ուշափեն պատմում: Մեծ օշափն էլ ասում ա՝ մունք նիշքան ընք ըլալ բախտավեր, վեր թաղեցալ չըք, թա չէ՝ կմընինք առանց կյուզարան:

Ճարը կտրած մեծ օշափն ասում ա. — Կունի ապեր, պա իսկի քու խոխեքդ մեննդ չըն ըղնո՞ւմ, բալի ծեր տանը կնեգը սերո՞ւն չի...

— Մեզ ննետ ապրելը լա՞վ ա, պա ծեզ թողիմ քյընի՞մ. էս ա փսպըրլական ըմ, տանավ–տեղավ կյան ըստեղ, ծեր մաշին կործս աչ ա քյընում:

Ուշուփներեն մինն էլ ասից. — Պիծի ապեր, քու խոխե՞քդ էլ ըն քեզ նման:

Ապերն ասից. — Ես հինչ ըմ նահանց քշտեն... Էն առաչի վախտը պիծի տղաս կզնըվալ ա, շորերը հանալ, թող ըրալ իրիքնական տվալ էրալ, մնացալ տկլոր, չդըրհադի, պողան էլ վեր ա տեռալ կլոխս էրալ, մնացալ ըմ քաշալ:

Մեծ օշափը թա. — Պա նամարդ ընինք մունք, խոխեքդ տկլոր, մունք ըստեղ օտում ընք խմում, քեփ անում: Պեր մին կարաս վեսկե, մին ուշափու շելակ տամ, տու էլ յրան նստե, քյնի խոցդ կոշտը, լո̈ւսը ծլլա քա հոր յրա, էլ վեչ տու բդի մեզ օշդ հյո̈րե, վեչ էլ խոխեքդ: Մունք էլ թող էս ծմակեն մաշին մզ էտե ապրինք, հո̈ւր ընք հինչ անում, յա մին վնաս տամ:

Տի էլ անում ըն: Հղեննի քյնիյիս օշափն ասում ա. — Պին ապեր, էդքան հնըրնե օնիս, համա թիթևս է, թափ չօնիս:

— Թափ շատ օնիմ, պայց քզ երա չըմ քցում:

— Դե մին թափդ ընձ երա քցի, տեսնամ հիշքան ըս ծանդր:

Պին ապերը ծուցան բիզը տո̈ւս ա օնում, կոխում ուշափեն խզատակը:

— Պա՛ պա՛ պա՛, Կուճի ապեր, թափդ եր կալ, խզատակս կոտրից:

Ապերը բիզը տուս ա օնում, ետ տընում ծուցումը:

Հղեննի, ուշափեն հրըթաբեն նստած, Պիծի ապերը մտածում ա. «Պա վեր էս օշափը կյա մեր տոնը, ասե՝ տո̈ւզ նըմ, հաց օտե, պա նանա ետը մունք հինչ կօտինք, մին հնար բդիմ քթենալ:

Վեր հսնում ըն տանը բանդը, պերած վեսկեն ու տես-տենը վեր օնում, Պիծի ապերը ծեն ա տամ. «Ա կնեգ, ա կնեգ, եկալ ըմ, մին նելլի ուշուփկոտեն պեր ըստեղ, էս օշափը կոտիմ պեց թողիմ»:

Օշափ ասե՝ սարեն ծաղեզ, կոտելին անումը վեր սկանում ա, օշը հլո̈րում ա, լոք-լոք ընելավ փախնում բդի ծմակը: Վազ տալավ քյնիյիս, շենին դերը պտահում ա. — Էդ թո՞րն ըս փախնում, օշափ ախպեր, խալխն էլ քզանա յըն փախնում:

— Պա ասել չըս, Պիծի ապերը ուշուփկոտեն տուս կալավ թա ընձ կոտե, թուղեցե փախե:

Դերը ծծաղում ա ասում. — Ա խեղճ, ետ տեռ, գյուղում ըմ վեր պեն ըս պերալ, ետ տեռ վարձդ ինք կալ, Պիծի ապերը օշափ կոտող ա՞: Էդ պինը քեզ խափալ ա, մին ծտու մչանք արժանք չօնե, համ վխլըկոտ ա, համ սուտասի:

Օշափն ասում ա. — Դե ինձ քզանա կապե, հանցու վեր թողիս ուչ փախնիմ:

Դերը ուշափեն ո̈ւրան անա կապում ա, կյոտուն քշկըռում, ըրկոքան մինտեղ քյընում ըն Ապորը տոնը:

Ապերը վեր ուշափեն տեսնում ա, ծեն ա տամ. — Ախնի, ա կնեգ, պա ըսեցե վուչ թա՝ ուշուփկոտեն տո Մարդուն, պիրի, էս ուշափեն կոտինք, պեց թողինք:

Օշափն ըսկանալն ըրաք, լոխ մնան քցո̈ւմ ա, սկսում հիշքան օժ օնե փախնիլը, դերն էլ կյոտան կապած դնգըլ-դնգըլ ընելավ, էս քարեն թխելավ, էն ծառեն թխելավ քաշ ա ընում: Էս օշափը վազ տալավ քյնում ա, մեծ ուշափեն պատմում, հարուրն էլ յրա ըվըլցըրած, Պիծի ապերն էլ ո̈ւրան կնգանն ա պատմում.



3—777

— Ա կնեգ տեսե՞ր, վեր ֆեցե ֆա̈րվանը կտրեցե պերե, օրաս ետ անպենին հվատա, պնըվուրեն հվատաս ուշ: Պնոթունը վեր կա, ամեն հինչ ա, ետե-ճելլի աշխարֆս ունճական ա:

## 3. ԼՎՈԹՈՒՆԸ ԿՈՐՉԻԼ ՉԻ

Ըլալ ա, չըլալ, երևի ըլա՛լ ա, վեր ասում ըն, վեր ըլած չընի՝ կասի՞ն, մին հայ առուտուրական ա ըռնում, ո̈ւրան մաղար-գյուղար տղեն ննետ մինտեղ ըպրեխս: Էդ մարթը օրեն յրա պըռավում ա, ֆանե ֆյըրնում ա, օծը պկասում ա, վեններրը թալանում, ծույներրը ծալվում, շեբեթը օխտը օր ա, տասնօխտը հետ էլ հվըրնդանում: Մին օր տղեն ծեն ա տամ կոշտը, տասը մանեթ տամ, ասում, վեր ֆյըրնի բազար ընդըղան ո̈ւրան սրտըգուլիֆը ինֆ օնե:

Էս տղան հղեն ա ըղնում, բզարեն հղեն էլ հնգիստարանեն տակավն ա անց կենում: Եշում ա տեսնում հնգիստին էրկու մարթ ամեզը մին փադ եր կալած, մին պենու վեր ըն թակում: Մտֆումն ասում ա՝ մուտանամ, ֆուցե ֆյումազու պեն կա: Մուտանում ա, տեսնում՝ մին մեյդու վըն թակում: Հրցընում ա, թա՝ խե յըն տի անում: Էս մարթիֆը բաղասխանում ըն, թա՝ պա ասել չըս, էս մարթը մինչև մեռնելը հենգ մանեթ մնին ա ըլալ պրտական, հենգը՝ մնին: «Մեռալ ա, մեր պարտֆն էլ մնացալ ա, տա հետե ամեն օր կյալ բդինֆ թակինֆ, վեր տրանավ ընի, մեր սրտրնեն հվանա»:

Էս տղեն լավ չի թվամ. պա մեռածեն կթակի՞ն, մտածում ա, զուցե հանց մեռալ ա, պարտֆը կրեցալ չի տա, մահը հո̈՞ւր անա յա հրցընում: Լավ ա, ծերֆեն տասը մանեթ կա, հենգը մնին տա, հենգն էլ՝ մնին, մեյդին պարտֆա ըզադե, հանցու էլ չրշարին ուշ, մեխֆ ա:

Տի էլ անում ա, ծերֆերը թող-թող ըննելավ կյամ տոն: Հարը տեսնում ա, հրցընում, թա՝ խե՞ տերտակ ըս եկալ: Տղան պատմում ա կյրզմնուցեն պտահածը: Հարն ասում ա. — Լավ ըս ըրալ, կա տասը մանեթ էլ տամ, նորմնան ֆյըրնի, սրտեղ օզածը ինֆ կալ, ֆուցե վեր ֆու ումեդտ ըղնե, ուզլական չըս, թա փողան խարջիս:

Քյըրնում ա ինֆ օնում, կյամ: Վեր կյամ ա, հարը ծեն ա տամ

կաշտը, ծերքան փռնում, ասում. — Ես մեռնում ըմ, քա հոր ու-
շաղեն ծոխը եր կանիս, օխտը խուխավ հացու նստիս:

Տանում ա նհաշ տամ ծախու ապրանքը վերն ա, հինչ կյի-
նավ բդի ծախե:

— Ընձանա եսը մին ծառա կփռնիս, հանց կանիս, քզանա վեշ սերուն ընի, վեշ էլ՝ բոյավ: Մն էլ բազար քյնիյիս, ծոռ հղեն կթողիս, կարն հղըցավը քյնիս:

Հոր մռնելանը եսը տղան տանում ա ապրանք ծախե, համ էլ ծառա փռնե: Տեսնում ա, մին բոյավ-բուսաթավ շիմշատ տղա յա կյամ և խնթրում ա, վեր ïուրան ծառա յոր օնե: Տղան հեռե յա շոռ տամ, քանե վեր հոր խոսկերը մննան ընգած շընում: Թարսու մնան հուրու ասում ա, վզավ շօնում, էս տղան էլ շուխ-կու մնան հետան շոռ ա տամ: Տեսնում ա էլ օրիշ նար չկա, անց ա կենում մին անգյուն, մին պատու տակե վեննը կենում, ա-սում. «Ներող ընիս, ա հո̈ր, ասածդ կարում չըմ անիմ»:

Էս բոյավ տղեն յոր օնում, ինք կալած ապրանքը պեռնում ծիերեն, հղե ըղնում: Ըստեղ ծառան տեռնը ասում ա. — Հինչ կըննի, վեր էս ծոռ հղըցավը քյընինք:

Հորը խոսկը մենն ա ըղնում, ասում ա. — Չէ, խե դուզը հինչ ա՞:

Ծառան խոսկը պրանում ա. — Վախել մ՚էր, խոսկես ան-գուն կալ, կօզի ես ծառա, տու տար, հունշու ընի, ինձ ընի:

Էս մարթն օզում չի նոր հնգերեն սրտեն նի կյա, կողմ ա քաշվում, ասում. «Ա հար, ներող ընիս, վեր լսածդ յան ըմ տամ»:

Հղե յըն ընում, խուտուր հղըցավը քյընում: Քյընում ըն, քյը-նում, շատն ու խրեզը աստուծ կգյիդա, մն էլ հղե քյընողը, վեր նղեն կես ա տեռնում, ծառան ասում ա. — Հի՞նչ կընի, վեր համ պատառ հաց ուտինք, համ էլ վաստակ ընք, զինքընես հվաքինք:

Հաց ուտելանը եսը ծառան ասում ա. — Հերթավ քոն ը-նինք:

Ըստեղ տեռնը սերտը քեն ա ըղնում, ըղնում ա քնընքու տակ. «Չընի թա էս տղես մետքը ծոռ ա»: Հինչ էլ ընի, քոն բդի ընի:

Լնա վեր կլոխը տնում ա պերցին՝ դաստի ըղնում ա քունեն աշխարը: Ծառան պցըրանում ա մին ծառ, պահակութուն անում: Մն էլ ա տեսնում՝ մին պեն բդի տարը կյամ ա: Տու մի ասիլ հի՞նչ, օխտը կլխանե օշափ ա, կլխըներն խուտերեն մաշավը, տեռնը անավ պտըպատ ըն անում: Լոք ա տամ ծառան վեր

կյամ, թխում օխտը կլոխն էլ կտրում, տեռնը քշտեն վեր ածում:

Տարը քնոտեղա եր ա կենում, տեսնում շատ ամբրված ա:

Ծառան ասում ա. — Մին չորքկուսիդ եշի:

Տարը աշկ ածում, ուշափեն կլխնեն տեսնում, քենը սրտան ճռանում ա, էն մեռքը կյամ, վեր փռնած ծառան շատ հավաղտարիմ մարթ ա:

Հղե յըն ընում, հղեն քյընողենն ա, համ էլ՝ էրկան հղըցան փորցանքը պակաս չընիլ: Եշում ըն տեսնում՝ մին փալաքյան ա քյընում տափեն տակը: Ծառան ասում ա. — Հինչ կընի, վեր տուք պատառ ըստեղ նստիք, ես նի մննիմ էս տոնը, կյամ: Շատ չըմ յտննական:

Տու ասել մե՝ էս տոնը ուշափեն տոնն ա: Նի յա մննում թա չէ, ուշափեն մարը եր ա կենում, թա. — Էս տո՞ւ վըս իմ խոցս կտրալ, եշում ըմ, եշում, կյամ չըն, տու քանե կլխանե յըս...

Հա՜լա խոսկը պրծընելու, տղան ղաման հլորում ա, մորն էլ սպանում: Դաստի մին տոռն ա պենվում, մին լուսընաք, լուսընվեններ ախնիզ ա տուս կյամ, շռավանքը տամ ընդըղեքավ: Տղան իսկույն շանթում ա ըխնըկանը, յոր օնում տուս կյամ: Տարը վեր ըխնըկանը տեսնում ա, օզում ա թա խելքը կլխան ընի, կլոխը շոռ ա տամ, վեննանը յրա կարում չի վեննը կենա:

Ծառան տեսնում ա, տեռնը նհետ հինչ ա կղարվում, ասում ա. — Էս նախշուն ըստխըշռավանք ախնիզը ես ծեր տանը հարթն ըմ պերալ, ծռեն փեշակն էլ էն ա, վեր ո՜ւրան պրունեն լավ ծռայի:

Էրկուսը իրեք ըն տեռնում, հղե ընո՜ւմ տոն: Շատ ըն քյընում, խրեզ ըն քյընում, հղեն կրնանում ա, տոնը մուտանում, մն էլ տեսեր, ըհը՛, էս ըն տանը:

Տարն ասում ա. — Դե մհենզ խոսքը ինձ ա հսնում: Նըստիք հաց օտիք, հովանանք, համ էլ պատմե տեսնամ՝ տու հու վըս-հինչ ըս, վեր համ մահա ըզըղեցեր, համ էլ ընձետե սերուն ախնիզ քթիր:

Տղան ասում ա. — Հալա մին պեն կա անիմ, եռնան: Մին ժեմավ ախնիզն ինձ տո, նհետը կործ օնիմ:

Պարունեն աշկերը չռում ա: Պա նշանածը մին ժեմավ հունց տա էս սերուն տղեն: Տի պեն ըլված ա՞:

Ծառան ասում ա. — Սերտդ հանգիստ պահե, հունցու յոր օնիմ, ընդի էլ քեզ ըմ տլական:

Ճարը կտըրած, համ էլ բռմընալան՝ տարը համաձայնում ա:

Մառան նի յա մննում ըխնըկանը տոնը, տեսնում մին օխծ խեղն ըխնկանը փորավը պատ եկած, կլոխն էլ տրած սրտեն: Ղաման տուս օնելն ու օխծին կլոխը կտրելը մին ա տեռնում: Ախնիգն ասում ա. — Տանավ պրծնում չըս, էն ա սպանած օխծին նոտերը փորումս:

Տղան վններան փռնում ա, ըխնըկանը կլխըվեր օնում, նոտերը պրա̈նավը վեր ըն տեռնում: Ճուտերեն էլ ա սպանում: Ախնիգը ավելի յա սիրունանում. շափաղը ըղնում ա տոնը, առատուրականեն չորք անգյունեն օնում, փլըստրատե տամ ըշկերեն: Էս նի՞նչ պեն ա, աստուծ: Տարը դաստի տոռնը պեց անում, մննում ըխնկանը տոնը, մնամ իրեսնըյեր հյըլ-մայիլ կտըրած, կտորած օխծերն էլ ըխնկանը վններեն քշտեն վեր տեռած: Օշը հյորում ա, վեր տղեն շնորհակալութուն անե, տեսնում ա մարթ պեն չկա, հիշքան ծեն ա տամ, հեյ անող չկա, հիշքան շոռ ա կյամ, վեչ մին տեղ ըրվամ չի: Էս հի՞նչ հնարք ա, աստուծ:

Ըստեղ գիտկան պառավը ղաթն ա ըղնում, մին պեն հրցընում. — Հո՞ւվար էն շենքավ-շնորքավ մարթը, վեր էտքան լվո̈թունը ըրավ, համ էլ անկո տեռավ կորավ:

Քաթս վեր լավ ընիք անգուն կալած, կգյիդաք, վեր էդ մարթը էն համին մեյդն ա ըլալ, եկալ ա լվո̈թունը տեղ տա: Մարթին ըրած մին վաղութունը, մին լվո̈թունը աշխարքումս կորչում չի: Լա̈վ ըն ասալ՝ լվո̈թունն ըրա քցի ծովը, ծուկունը վեր գյիդա վուչ, աստուծ կգյիդա:

## 4. ՍՈՒՄԲԱԹՆ ՈՒ ԹԱՓԵՂԸ

Ժուկավ ժամանակավ Արմավիր քաղաքումը մին թաքավեր ար կեննում: Էս թաքավերեն ժառանգ չընո̈ւմ: Ուրերան մին օր թաքավերեն խլունքնեն հվաքվում ըն, զրուցի նստում:

— Թաքավերն ապրած կենա, ժառանգ չօնիս, վեր քզանա ետը մեր երգիրին տրոթուն անե, եր կեննանք տու̈ս կյանք Ըռասխեն փեշկը, ղաշանք անինք, փեշկան պաշինք, քուցե մեր հոգսը քաշի:

Քյըննում ըն տեսնում Ըռախսեն յրա կննչկյարմուր կապած, կոխկե շամբան էլ մին խիու սո̈ս ա կյամ: Մուտանում ըն տես-

նում մին պրզակնը ախպöւր, ըխպրին կոխկեն մին ծառ, ծառեն տակեն մին պերուր:

— Աստուծ էս պերուրը մզ էտե յա ղարկալ:

Թաֆավերը ակնեն նրöն խուխեն ըրեսավն ա տամ, յոր օ-նում պöւրöւմ պալատը: Թաֆուհին շատ ա ուրխանում, ըշխար-ֆավս մին ա տեռնում:

Մին օր վեր կենում ա, խոխան թափ ա տամ, թաֆուհին ե-շում ա տեսնում ուրեկանը տրեկեն տեռած: Ցոր ըն օնում տա-նում եխծե, կնֆում: Դերը տեսնում ա, վեր օրեն եշած շատ թա-փավ ա, խուխեն անումը տնöւմ ա Թափեղ:

Խալխեն խոխեֆը վեր տարավ ըն մծանում, Թափեղը օրավ ա մծանում:

Մին օր թաֆուհին ֆյընում ա Ըրասխեն փեշկը պաշում, պը-ռըղնոտում.

— Աստուծ, ֆու տված խուխեդ ախպեր ղարկե, վեր ըշխար-ֆումս öւրöւր դալու անին, մինակ չմնան:

Քշերը արազ ա ըրվամ թաֆուհուն աչկեն: Մինեն ասում ա՝ վեր Թփեղեն ախպեր ղարկիմ, ֆու ըրևեդ յրա յըմ ղրկլական: Թաֆուհին ասում ա՝ հնչ ա ըննöւկան, իմ արևս բախշում ըմ իմ խոգս:

Ինքը ամեսը վեր պլöրվում ա, թաֆուհին ըզադվում ա, մին ղաշöնգ տղա յա պուրում, անումը տնում ըն Սոմբաթ: Համին օրը թաֆուհին մեռնում ա:

Էրկու ախպերը մինտեղ մծանում ըն, öւրöւր կոխկե էրկու չնարու նման բոյ ֆաշում: Մին օր էլ նա մծըխլունֆնեն նվաֆվում ըն. — Թաֆավերն ապրած կենա, առանց թաֆուհի ամալ չի կյալ, մտածե, տես հինչ ըս անում:

Կալմաշ ըն անում, վեր փսակվե:

Թաֆավերը անզուն ա օնում, մին ջահիլ խելունֆ ըխճկան հետ փսակվում ա: Մինչև փսակվելը խոցը ղարկում ա ղրիբո-թուն, վեր թաֆուհին տեսնա վուչ:

Օր ա անց կենում, տարե յա անց կենում, թաֆավերը ավիլի յա հիլըվերում:

Մին օր էլ թաֆուհին նի յա մննում թաֆավերեն կոշտը, թա տու իմ մարթս ընիլավ ընծանա պենս կյեղում, էն ա ֆեզ էրկու տղա օնիս, փսպարե կյան տեսնամ, նամ էլ մինտեղ կենանֆ:

Տղեֆ հինչ տղեֆ, ամեն մինը մին թափավ տնչըրե: Կյամ ըն կռանում թաֆուհուն ծերֆը պաչում, հացու նստում: Հացա ետ

թաքուհին Սմբաթեն ասում ա. — Տու թաքավորեն նենա քյընի խաս-բաղը շոռ եկ, ես Թափեղեն նենտ կործ օնիմ:

Թաքուհին մինակ ա մնամ Թափեղեն նենտ, յշիլավ հուշտաճում չի: Ասում ա.

— Թափեղ, ես քզ էտե յըմ եկալ, վեշ քա թաքավորենե:

— Այ թաքուհի, անասելին ասում' էր, չէ վե՞ր տու ըմ ծըռ-ճողն ըս:

— Չէ, ես ու տու բդի փախկվինք, ես ընիմ թաքուհի, տու էլ՝ թաքավեր:

Թափեղը տոռնը յրան ա կյամ, պալատան տուս կյամ, քյը-նում քաղաքեն զարգյարին կոշտը: Թող Թափեղը քյընի, մունք խաբար տանք թաքուհուց:

Նա մազերը պուք ա տամ, շորերը ճրղոտում, սկըսում ճղճը-ղայը:

Թաքավերը կյամ ա. — Էդ նի՞նչ պեն ա, թաքուհի:

Թաքուհին լաց ընիլավ ասում ա. — Տու էլ շընիս, քու տը-ղեքդ էլ: Թափեղն օզալ ա կլոխն ինձ նետ մին անե, ես օզալ չըմ, ճաստ ինձ էս օրն ա քցալ, տուս եկալ:

Թաքավերը ծեն ա տամ դահիճներեն, ճրամման տամ՝ ճիշտեղ վերե Թափեղեն քթնեան, կլոխը կտրին: Թող թաքավերը բռի մտածե, մունք խաբար տանք Թափեղեն անա:

Թափեղը զրգյարին ճրամման ա տամ, ուրան ճետե մին ճանց գյուրզ շինին, վեր իրեք կյումաշու քաշավ ընի: Զարգյարն ա-սում ա. — Թափեղ, էդքան արկաթը ինձ ճշտղա՞ յա:

Թափեղը արկաթ ա քթենում, պուրում զրգյարին տամ, զարգ-յարն էլ շունում ա: Թափեղը գյուրզը յոր ա օնում, քյընում ա-խուռը, մին ճախշուն քյոնլան ծի տուս օնում, քղաքան փախ-նում:

Հղեն ուրան աննանանչ, ինքը՝ ճըրցեն, ճու վա գյուղում, թա ճիշքան ա քյընում, մն էլ տեսնում ա առաշը ծով ա, քշտեն էլ մին նավ վեննը կացած: Մոտանում ա խնթըռում. — Հի՞նչ տամ, վեր ինձ ու իմ ծիյիս անց կցընիս ծովեն էն անգյունը:

Նավավարն ասում ա. — Էրկու վեսկե յըս տլական:

Թափեղը տուս ա օնում իրեք վեսկե տամ: Նստում ըն նավը, ճնցընում էն ափը: Թափեղը վեր պատտռ քյընում ա, առաշն ա կյամ իրեք ճղե. մինը աշ ա քյընում, մինը՝ ծախ, մինն էլ՝ դուզ: Թափեղը պտաճած մարթան ճրցընում ա, թա՝ իրեքան վե՞րավը քյընի:

Մարթն ասում ա. — Աշավը փորցանքը շատ ա, ծեխը էրկան ա, անփորցանք, մաշի հղըցավը քյընողը էլ ետ չի կյամ:

Թափեղը մաշտեղավն ա քյընում:

Էրկու օր ա քյընում, հենց օր ա քյընում, էդ ասած կգյիդա, մին օր էլ հսնում ա մին փլփլայիս ըխպըրու: Միյան վեր ա կյամ, ծին պեց թողում՝ ըրածե, ինքը յափունչին քցում կլխեն, քոն նո̈ւմ: Թող Թափեղը ըստեղ քոն նի, մունք խաբար տանք, թա էս հնդերեն տարը հու վա: Պենան տուս ա կյամ, վեր տա քառասուն ավազակներենն ա ընում: Ավազակապետը հռնանցե տեսնում ա, վեր նրին մին ղրլթու վա ըրվամ: Ասում ա. — Քեցեք, հու վեր ընի, վնըրծերքը կպուտեցեք, պերեք: Էդ քանե՞ կլխանե յա, վեր ներխատրեց զործ ա փռնալ, եկալ ա, ըխպըրին քշտեն քոն ըլալ, քանե վեր օխծն ո̈ւրան պորտավը, ղուշն ո̈ւրան թևավը ըստեղ վեննը չըն տրալ:

Ավազակներան էրկունը մոտանում ըն, տեսնում՝ մին անտես-աննանանչ ջահիլ յափնչուն մաշին մուշ-մուշ քոն ըլած: Եշում ըն տեսնում, կոխկեն մին գյուրզ, էրկու հոգավ կարում չըն պցրցնին, ետ ըն տեռնում, կյամ ո̈ւրանց օթևանը:

— Մեր կլխավերն ապրած կենա, պարանցածը մին ազղուն երիտասարթ ա, կոխկեն էլ մին գյուրզ, վեր էրկու հոգավ կրեցենք ուչ պցրցնինք:

Ավազակապետը վեր սկանում ա ինքն էլ ա երգյուղ անում, ասում ա. — Քեցեք կոխկեն նստեցեք մինչև զո̈ւրթնանա: Չընի թա քոնը խնզարիք, հա՛... Վեր զո̈ւրթնացավ, ղոնաղ պերեք ըստեղ:

Եշում ըն մինչև զո̈ւրթնանում ա:

— Հի՞նչ ա պտահիալ, չինի կռև ըք եկալ:

— Չէ, ավազակապետը քեզ ծեն ա տվալ ո̈ւրան կոշտը:

Ծին թամքում ըն, տամ Թափեղեն: Թափեղը գյուրզը յոր ա օնում, նստում ծին, քյընում մծավուրեն կոշտը:

— Հո՞ւ վըս, հշտ՞ղա յըս կյամ, հունչո՞ւ հետե յըս եկալ:

Թափեղը կլխավը հնցածը պատմում ա:

Ավազակապետն ասում ա. — Վեր տի յա, տու կնիս մեր մըծավուրը, մունք էլ քեզ անգուն օնող:

Թափեղը հրցընում ա. — Տուք ըստեղ հինչա՞վ ըք ապրում:

— Եկող-քյընողու թլանում ընք, ապրում:

Թափեղն ասում ա. — Ես ծզ նըհետ էն վախտը կհնգրա-

նամ, վեր պենվուր մարթկանց ծերք չտաք: Սկանամ, թա մարթ ըք սպանալ, կլխրնեդ կկտրիմ:

Ավազակնեն համաձայնում ըն: Էդ օրվանից թաքավերեն տըղա Թափեղը տեռնում ա ավազակապետ: Թող Թափեղը ըստեղ ավազակ տեռնա, մունք խաբար տանք Սմբաթեն անա:

Ամես, տարե յա անց կենում, Սմբաթը տեսնում ա վեր Թափեղը կա վուչ, մուտանում ա թաքավերեն. — Թաքավերն ապրած կենա, ես կարել չըմ պալատումը հանգիստ մնամ, քանե իմ ախպեր Թափեղը կա վուչ:

Թաքավերը կարում չի համոզե, վեր Սմբաթը մնա: Թաքավերն ասում ա. — Դե լա̈վ, վեր կարում չըս կենաս, քյընի, համա վեսկե շատ եր կա̈լ, հարկավեր ա կյլական: Քյընի, աստուծ քզ նըհետ:

Սմբաթը հինչքան հարկավեր ա վեսկե յա յոր օնում, նի մննում կյումը, մին ղաշա̈նգ էլ ծի տո̈ւս օնում, քյընում էն հղը-ցավը, վերավը Թափեղը քյեցալա: Էրկու օր ա քյընում, իրեքն ա քյընում, զուր տեղան ըրկընցընինք ուչ, վերչը հսնում ա էն հա̈մին ծովեն, վերին Թափեղն ա հսալ: Վենն ա կենում քնենեք ասում. «Աստուծ, հիշքան ըմ քյամբախտ, սերած ախպերս կուրցըրե, պալատան տուս եկե, մհենգ էլ մին թա̈հրը չկա, թա անց կենամ ծովեն էն անգյունը»:

Էս խոսկեն յրա տեսնում ա էն ընգյունան մին նավ ա կյամ: Սմբաթը ուրխանում ա: Էնքան նման ըն ընում ո̈ւրո̈ւր Թափեղն ու Սմբաթը, վեր նավավարը գյոպում ա, թա սա էլհա Թափեղն ա, մուտանում ա ասում. — Ես քեզ տարե ծովեն էն անգյունը, մն էլ հո՞ւցն եկեր ըստեղ:

Սմբաթը դա̈տի կլոխ ա ըղնում, վեր Թափեղեն ո̈ւրան նըհետ չիլ ա քցում, մտքումն ասում ա. «Ուրեմս հղեն չիլ չըմ քյընում, լավ ա ինձ էլ տընիմ Թափեղեն տեղը»: Նավավարեն ասում ա. — Հի՞նչ տամ, անց կցընիս էն անգյունը:

Նավավարն ասում ա. — Պա նոր չի քյեցե՛ր, խե՞ տի նեյլի մննադ քցալ ըս, էն անքամ իրեք վեսկե չըս տվա՞լ:

Սմբաթը տուս ա օնում չորս վեսկե տամ, անց կենում ծովեն էն անգյունը: Տեսնում ա իրեք հղե. մինը՝ աչ, մինը՝ ծեխ, մինն էլ մաշտեղավն ա քյընում: Պտահած մարթին ասում ա. — Ախպեր, ես էն վխտեն վե՞ր հղըցավ ըմ քյեցալ:

— Շատ ըս մննադ քցող: Մաշակ հղըցավն ըս քյեցալ:

Սմբաթը նի յա մննում հղեն: Շատ ա քյընում, խրեգյ ա, քյը-

նում, աստուծ կգյիդա, ուրերան մին օր էլ հսնում ա մին ըխպը-րու: Էդ էն ախպուրն ա, ճիշտեղ Թափեղը ճուր ա խմալ, քու-նավ ննցալ: Սմբաթն ասում ա. «Իմ ախպեր էս ըխպրան ճուր խմած կընի, թող ես էլ խմիմ, իմ ախպոր կարոտը էս ճրան առնիմ»:

Միյան վեր ա կյամ, ծին օրիգ տամ, ըխպրան մին լավ կուշ-տրպնդի ճուր խմում, յափնչին կլխեն քցում, ըխպրին փեշկեն քոն նում:

Էդ համին վախտը Թափեղը երեսունօթ ավազակու նհետ էն ա ընոմ վերս ընեիս, եշում ըն տեսնում՝ ըխպրին քշտեն, յա-փընչու մաշի մին ջահիլ քոն ըլած: Սահանք մտածում ըն վեր սպանին, թաքավրական շորերն էլ յոր օնին, վեսկեն էկ: Թափե-ղը հինչ կգյիդա, թա մունք մարթ ընք սպանալ: Էս մտկեն՝ Թա-փեղը էրկու ավազակու նհետ ծմական տոււ ա կյամ, Սմբաթեն տեսնալն ու ճնանչիլը մին ա ընում: Ասում ա. — Սրան տարեք *մեր կարանը, էս ա կյամ ըմ:*

Կռանումը Սմբաթեն հրցընում ա. — Ա ջահիլ, հո՞ւ վըս, ճիշտե՞ղ ըս քյընում:

Սմբաթը լոխ պատմում ա:

Թափեղն ասում ա. — Վեր քու ախպեր ըստեղ ընի, կճնան-չի՞ս:

— Պա հի՞նչ կանիմ:

Ավազակներեն վրըվուրդ անում, կարում չի ճնանչի: Թափե-ղը ավազակեն շորերը հանում ա, Սմբաթը դուստի ախպորը կոլուքն ա ըղնում:

Էրկու ախպերքը մալհաթ ըն անում, ավազակներեն վերշը տան, քյընին մին օտար երգիր, մինտեղ ապրին: Տի էլ անում ըն: Քառասուն ավազակներեն սպանում ըն, նահանց ըլած-չլա-ծը քյասիբ-քյուսուբու պժենում, ուրանք էլ հըղե ըղնում: Տես-նանք էդ հղեն ուրանց ճիշտեղ ա տանում:

Մին օր ըն քյընում, իրեք օր ըն քյընում, մին օր էլ տուս ըն կյամ մին անծանոթ քաղաք: Մին քյուշավ անց կնայիս, մին տան ակուշկավ ընգած Սմբաթը մին կյեղեցկուհի ախճիգ ա տեսնում, ուշըհան ընում, ծիյան կախ ընում: Սմբաթը ետ ա ե-շում տեսնում՝ ախպերը ծերքա ընգած: Պըրցընում ա, եշում տեսնում—մին չըլսված-չտեսնված ախճիգ պտրհանավն ընգած:

— Ախպերը ղնա ըստի օրվա հետե յա, մտածում՛ էր, հունց օգում ա ընի, նա քզ էտե պըրլական ըմ:

Ծիենը քշում ըն քաղաքա տուս կյամ: Թափեղը մին քաշլիկ տան քուաշի վենն ա կենում, ծեն տամ, մին պառավ կնեգ ա տուս կյամ:

— Նանե, նամփորթ մարթիկ ընք, տանդ տեղ տո, մին քշեր կենանք:

— Վերթի, ղոնաղը ըստծուն ա, համա վեչ քոն նիլի տեղ օնիմ, վեչ ուտելի պեն:

Թափեղը մին հափուռ վեսկե յա տուս օնում, տամ պռավեն:

— Նի մտեք, պա խե՞ վենն ըք կացալ, էն ա համ տեղ օնիմ, համ ուտելի պեն:

Հաց ուտելանը ետը Թափեղն ասում ա. — Նանե, ծեր քաղաքեն մաշտեղե մեծ տոնը հի՞ւրն ա:

Պառավն ասում ա, վեր ուրանց թաքավերենն ա:

— Թաքավերը հի՞նչ խոխեք օնե:

— Մին խլքրհան ընիլի ախճիգ օնե, էն էլ նշանած: Ջորեղ թաքավերեն տղեն հրթնացուն ա:

— Նանե, վկարես իմա տանես էդ ըխնըրկանը կոշտը:

Պառավն ասում ա, վեր ինքը կարել չի նրղոտած շուրերավ քյրնի թաքավերեն ըխնըրկանը կոշտը:

Թափեղը էրկու հափուռ վեսկե յա տամ, վեր լավ շորեր ինք օնե, կյենա-ղշընգյանա, եռնան քյրնի:

Պառավը նոր շորերը կյենում ա, մազերը սանդրում, իրեսը կաթնավ լվանում, տեռնում լպզոած դանա: Մին հանց վնեամ ան ա կյենում, հունցու ըլքաստրակը վեննանը տակյան փախնի: Ջուքված-զարթարված, առոք-փառոք նի յա մննում պալատը, քյընում թուշին թաքավերեն ախճիգ Շուշանիգին կոշտը:

— Շուշանիգ, աստուծ նռաքյի քեզ, իմ ջանս քեզ մատաղ, սաղ քաղաքեն ըխնկորանցը շնորք ըս ավրցրալ, մհենգ հերթը իմ մղարես ա եկալ, հո՞ւնց անինք հինչ նշանվալ ըս, հի՞նչ կնի, վեր մին էրկու պեն էլ իմ գյուղարիս ավրցնիս, ըստծու էլ լա՛վ կթվա, սկնողու էլ:

Շուշանիգը ըղուրմավ ախճիգ ա ընում, ուրան էլ ա լավ թըրվամ պռավեն շենքուշնորքը, քախծը լուզուն, ասում ա. — Հինչ կնի, առե քյընի ախճիգդ պեր:

Պառավը կյամ ա տոն, Թափեղեն ղաշանգ շորեր կյեց տամ, ըրեսեն քող քցում, տանում Շուշանիգին կոշտը:

Շուշանիգը հունչու ասում ա, Թափեղը դաստի կաղարում ա, Շուշանիգը հունչու ավրցնում ա, Թափեղի դաստի չանքթում ա:

Դե ախրը, թախավերու տղա, թախավերու պալատում մեծացած, խելուն, շնորհավ: Վեր մթնում ա, հոն նիլի վախտը կյամ ա, Շուշանիգն ասում ա.

— Պոավեն ախնիգ, տեղ շինի հոն նինի:

Թափեղը էրկու տեղ ա հցում: Շուշանիգն ասում ա.

— Տու լավ ախնիգ ըս, ես հզանա նանզ ըմ անում, մինտեղ ընհ հոն ընական, էղ խե՞ էրկու տեղ ըս վեր հցալ:

— Թախավերեն ախնիգն ապրած կենա, ես մին աննար պըռավու ախնիգ, ինձ սազիլ չի հզ նըննա հոն նիմ:

— Տու նանց ըս նմնչիլիս: Հալա առաչի հշերն ա, կնըմանչիս, հոն չըս ընիլ: Սոր հեզ ներում ըմ, մինչև էհուծ կսրտըվանվիս, մինտեղ հոն կնինհ:

Էհսի օրը Շուշանիգը սաիրում ա, վեր մինտեղ հոն նին: Թափեղը նինչհան չեմուշում ա անում, տեռնում չի. պա նի՞նչ անե, նո՞ւնց անե, վերչը ոռոշում ա նունցու վեր կա, ընդի էլ պատմե: «Պա րստի, րստի. էն օրեն հեզ տեսնող օշը տանող իմ ախպեր Սմբաթն ա ըլալ, ուրան նեստ էլ ախնիգ ա տեռալ, եկալ ըստեղ»:

Շուշանիգը վեր էսհանը սկանում ա, ծույնանը թխում ա.

— Վեզդ կոտրե, նելլի ըսիր, ինձ տկլոր տանիր ուշ:

— Վեչինչ, Շուշանիգ, տու մեր նարսն ըս, նմնչիլի էլ տեղ չոնիս, մնենզ սսե տեսնամ՝ նի՞նչ անինհ, նո՞ւնց անինհ:

— Թափեղ ախպեր, հու նննարդ ու շնորհդ ինձ սաիրում ա, վեր իմ սրտենս առանց կյեղելի հեզ պատմիմ: Ես Ձորեղ թախավերեն տղեն նրթնացուն ըմ: Դոզն ասած ես մեծ սեր չօնիմ ըդի իմ նշանածս, իմ նար վխելան ա տամ: Վեչ մին թախավեր կարել չի նա եխնե: Վեր կարե էլ, մնենզ արուն թփելի գյրավա չի: Տղան էն ա, վեր առանց արուն կարե եխնե: Ես մինակ մին ննար ըմ գյոտում, հեզ ասիմ, իմ գյըդըցածնեն յրա մինն էլ տու կվլցընիս: Ձորեղ թախավերը տղեն նեստ օխտը օր օխտը հշեր նռսանեհ ա ընակպան: Էհսի օրը թախավերեն անա խնըրլական ըմ, վեր բոչ տա, հյընիմ իմոր կյրըզմանեն տեսուրուն, տու վել նանզիստարանումը ինձ կեչիս: Իմ շորերս կկյենաս, նունցու բաղձ նարընը-Շուշանիգ, կհյընիս Ձորեղ թախավերեն երգիրը, ես էլ հու շուրերավդ Սմբաթեն ննեստ կհյընիմ պոավեն տոնը: Քասասուն օր սպսլական ըմ հեզ. թա եկեր՝ եկեր, թա եկեր ուշ, Սըմբաթեն ննեստ հյընընական ըմ, նիշտեղ ինհը հյընի: Գյոտում ըմ,

թա քուտղորթունդ, իմ օրհնանք ըս, մն էլ ըստծու աչք մին պեն կանին:

Տի էլ անում ըն:

Էրկու օրանը ետը հրսանեքը սկսում ա: Հարթնը փսեն անա հրցընում ա, վեր քյընի մորը կյրեզմանը տեսնա, բալի էլ կարում չի, ղարիբորթուն ա քյընում: Փեսան հմաձայնում ա: Թաքավերեն ախնիգ Աղավնուն էլ տնում ըն հարթնանը նհետ: Հարթն ու տալ քյընում ըն կյրզմանոցը, վեր մուտանում ըն, Շուշանիգն ասում ա. — Աղավնի, տու ըստեղ սպասե, օգում ըմ իմոր նհետ մինակ ընիմ: Վեննանս յրա ետ ըմ տեռնում:

Շուշանիգը քյընում ա, Թափեղեն նհետ շորերը փոխում, ինքը Սմբաթեն նհետ անց կենում քյընում պռավեն տոնը: Թափեղն էլ կնճկյարմուր շուրերում, Աղավնուն նհետ կյամ ա Ձորեղ թաքավերեն երգիրը:

Հալա հրթննքեն առաչին օրը, վեր թաքավերեն անա հրցընում ըն, թա՝ մինչև հրսանեքը պրծնելը հո՞ւ բդի քոն նի հարըթնանը նհետ, թաքավերն ասում ա՝ Աղավնին:

Վեր Աղավնին ու Շուշանիգը մինակ ըն մնամ, Աղավնին ասում ա.

— Շուշանիգ, իմ ախպեր էնքան կյըշըկյրող, տու էդքան սերուն, էդ հո՞ւնց տեռավ, վեր եկեր իմ ախպոր: Հանց բեդար, մզանա մինը տղա ընար, մինն ախնիգ, նոխտս էլ սերուն, öւրöւր ուրինք, öւրöւր նհետ պսկվինք:

— Դե հինչ անինք, վեր նոխտս էլ ախնիգ ընք: Աղավնի, բöւրդան մետկս մին պեն եկու. եկ չոքինք, ըստծու խնթրինք, ղաչանք-պղատանք անինք, քուցե աստուծ մեզ սկանա, մինենումնիս տղա չինի:

Շամը վառում ըն, չոքում աղոթք անում:

— Վայ, Աղավնի, ես հանց ըմ պծի-պիծի փուխվեխս: Աղավնի, ուրխաց, տղա յըմ տեռնում:

Սկսում ըն նոխտը մինտեղ խնթրիլ, վեր Շուշանիգը տղա տեռնա:

Շուշանիգ-Թափեղն ասում ա. — Աղավնի, աստուծ մեր սրտենը կղարալ ա: Մեզ հարկավեր ա ըստղաս փախնիլ: Ես ծեր ծիանուցեն տեղը գյուղում չըմ, եր կաց, էրկու ծի տուս կալ, զենքուզրահ պեր, հղե ընինք քյընինք, մեզ ընդեղ սպասող կա:

Տի էլ անում ըն:

Վեր պալատան մին խիլլա հռանում ըն, ծիենուցան վեր ըն

կյամ, նստում մին ըխպրու կռխկե, նոր խմում, Թափեղը կլոխը տնում ա Աղավնուն ծույնանը քոն ընում, մինչև լուսը ծաքյիլը: Աղավնին ասում ա.

— Նուշանիզ, վեր թաքավերը զյիդա մեր փախնիլը, մարթիք ա ղրկլական, կյլակյան ըն մեզ քթենան, ինձ տանին պալատը, քեզ էլ սպանին:

Նուշանիզն ասում ա. — Քեզ վեչ մին վխատեղ չօնիս, Աղավնի, տղա տեռած ախնըրկանը վեչ մինը կարել չի եխնե: Հինչքան էլ մարթ կյա, ես լուխնին բաղասխանը տլական ըմ: Ես փախնում չըմ, վեր ասին ուչ թա՝ կյըղըրկյող եկյալ ա, կյըղըրկյող քյեցալ:

Թափեղը նորն ա քոն ընում: Աղավնին եշում ա, տեսնում հնձանցե մարթիք ըն կյամ, թոզը երգիրն ու երգինքը ուրուր խառնած: Օզում չի Նուշանիզին եր կցըել: Մտածում ա. «Թող առաչ ինձ սպանին, ես Նուշանիզին սպանվելը տեսնամ ուչ»:

Օշը երգինք ա օնում, աղոթում, վեր աստուծ ուրան ըստօզածը կըտարե:

Սկսում ա լաց ընիլը: Ըրտասունքան մին կաթ ըղնում ա Թափեղեն ըրեսեն: Սա դաստինա զուրթնանում ա:

— Հի՞նչ ա ըլա՞լ, աղունիկս:

— Հանե մարթասպաննենեն կյամ ըն, քեզ սպննական ըն, ինձ էլ տանին:

Թափեղը ղաման տուս ա օնում. — Իմ ծերքաս մրթսպան չի պրծընել:

Տանանք տասը հոգի ըն ընում: Թափեղը մե նետ թխելումը օթեն կլոխը կտրում ա, էրկուսեն էլ կոքնեն տուս տամ, նկըտներեն շարում, ասում.

— Քեցեք ծեզ ղրկողեն ըշկըլուանք, համ էլ ըսեցեք՝ մարթին քախծր ապրելն ա վայիլ:

Թող սանանք քյըընին պալատ, թաքավերեն խաբար տանին, մունք տեսնանք, Թափեղը հինչ ա անում: Թափեղը Աղավնուն յոր ա օնում հղեն ըղնում, քշերվա կեսին էլ հսնում պռավեն տոնը, Սմբաթեն ու Նուշանիզին կոշտը: Հի՞նչ սեր, հի՞նչ ուրախութուն: Ոտքանա Սմբաթը ճեյլի զուրթնանում ա, տուս կյամ՝ հինչ տեսնում: Տեսնում ա սաղ սարերը, հանդերը լոխ ստտակած, հիշտեղ եշում ա սիպտակ, հունցու հզեր կնեզ պմբակու քույենե անին, վեր տնին: Կյամ ա Թափեղեն եր կցնում.

— Ախպեր, էս ի՞նչ էրգիր ա, տարուն էս շախս ծյուն ա է-կալ, լոխ ծածկալ:

Թափեղը դաստի կլոխ ա ըղնում.

— Ախպեր, էդ ծյուն չի, էդ Ձորեղ թաքավերեն զորքն ա, ուրենց վեր թողած: Էս սհաթս էդ ծյունը հլըցննական ըմ:

Թափեղը գյուրզը յոր ա օնում, ծին եր ընում, թափիգ տամ, հսնում Շուշանիգին հորը պալատը, կլոխ տամ, ասում. — Թա-քավերն ապրած կենա, քու ախնիգդ իմ ախպոր նշանածն ա, Ձո-րեղ թաքավերեն ախնիգն էլ՝ իմ:

Թափեղը ըստեղ լոխ պատմում ա, հունչու վեր կլխավը անց ա կացալ:

— Վա՜յ իմ էրգիր, վա՜յ իմ կլոխ,— թաքավերը բաղրյար ա տեռնում,— Ձորեղ թաքավերը կյլական ա մեր վերշը տա:

Թաքավերեն ռանգը տեռնում ա պատռու ծեփ:

— Թաքավերն ապրած կենա, Ձորեղ թաքավերեն բաղաս-խանը ես ըմ տլական:

Թափեղեն էս խոսկեն յրա Ձորեղ թաքավերեն սուրհանդակ-նեն նի յըն մննում.

— Թաքավերն ապրած կենա, քու ախնիգդ հարսնը մնալին տեղ, Ձորեղ թաքավերեն ախնիգ Աղավնուն էլ նհետը եր ա կա-լալ պերալ քու էրգիրդ: Ձորեղ թաքավերը հրաման ա տվալ, վեր Շուշանիգին ու Աղավնուն յա ետ տանին ընդեղ, յա թա չէ՝ սաղ քաղաքը կրակ ա տլական:

Թափեղը տեղան լոք ա տամ, մնին բեղը պուք տամ, մնին էլ անգուճը, համ էլ ասում. — Քեցեք ծեր թաքավերեն ըսեցեք, վեր զորեղան զորեղ էլ կա, զորեղան զորեղը Թափեղն ա: Ըսե-ցեք հիշքան օժ օնե հվաքե, էս ա կյամ ըմ:

Թափեղը գյուրզը յոր ա օնում, ծին նստում, ընգում ուքոցը ղաթը: Սկսում ա կտորելը: Մին էլ էն ընգյունան մին պառավ մարթ ա մոտանում:

— Կուռնանդ օժեն մատաղ, տի միշտ ջահիլ մնաս, տի միշտ թափավ կենաս: Աստված օժդ մզ էտե յա տվալ, խե մեզ կտո-րում ըս: Էս խեղն ժղովուրթը քեզ ի՞նչ ա ըրալ, թշնամիդ թա-քավերն ա, զոր օնիս՝ քյրնի նրա նհետ կոխ կաց:

Թափեղը ներողություն ա խնթրում, հրցընում թաքավերեն տեղը:

— Հանե, էն սիպտակ պերուրը:

Թափեղը ծին քշում ա բդի ընդեղ: Ուքեն ըռաշին վենն ա կե-նում ծեն տամ.

— Թաքավէրն ապրած կենա, եկալ ըմ, ուքան տուս եկ, կոռ կօզիս, կոռ կանիմ, լուզվակոխ կօզիս, լուզվակոխ կանիմ:

Թաքավէրը տուս ա կյամ, տեսնում հի՞նչ, աղամարթ մե ասել, մին քէրծ ասե: Մոթին* քէրծը քեզ օրինակ: Գյուրզը ծէրքեն լիա մին ծեռ: Թաքավէրն ու öւրան տղան չորս վենը մին տեղ ըն տնöւմ, սկըսում տղաողելը:

Թափեղն ասում ա. — Թաքավէրն ապրած կենա: Քու հըրթնացուդ մհենգ իմ հարթնըս ա, քու ախնիզդ էլ ըստծու կամքավը իմ նշանածս ա: Սանա ետը գյուղում ըմ թա կովապեն չկա: Իսկ թա կոռ օզիս, տու վել, քու տղադ էլ օգուտ չըք անել:

Թաքավէրն ասում ա. — Ա ջահիլ, հարթնըս էլ քեզ, ախնիզս էլ, մինումինակ մեր կլխըննեն մեզ բախշիս:

Թափեղը Ձորեղ թաքավէրեն մն էլ öւրան տղեն պöւրöւմ ա Շուշանիգին հորը պալատը, լուխնին öւրöւր ննետ նշտըցնում, օխտը օր, օխտը քշեր հըսանեք անում, պնդըցնում, վեր մինչև öւրանց գյանքեն վերչը էրկու թաքավէրնեն öւրöւր ննետ կոռ չանին:

Շուշանիգին հարն ասում ա. — Ես արթեն պռավալ ըմ, տըղա էլ չօնիմ: Եկ տու տեռ համ փեսա, համ տղա, իմ երգիրս էլ կառավարե:

— Թաքավէրն ապրած կենա, մունք էլ ընք մին թաքավէրու ժառանգ, քյընիլ ըղինք տեսնանք մեր թաքավէրը հինչ հալի յա:

Թաքավէրեն սրտավն ու խոսկավը Թափեղն ու Սմբաթը, Շուշանիգն ու Աղավնին ծիենը նստում ըն, հըղե ընում բդի öւրանց երգիրը: Շատ ըն քյընում թա խըրեգ, վերչը տեղ ըն հըսնում: Պալատ հսած ուչ, սահանք ծիյան վեր ըն կյամ, Թափեղն ասում ա. — Սմբաթ ախպեր, ըստեղ մեր դազյան վեր թողինք, հըրցըփորց անինք տեսնանք հինչ կա, հինչ չկա, մունք էլ թաքավէրու ժառանգ ընք, մեր առաչը մարթ տուս կկյա, մունք էլ կքյընինք:

Ասածը ըրած ա տեռնում:

Թափեղն ասում ա. — Ախպեր, տուք մնացեք ըստեղ, ես քաղաքեն նի կյամ, ետ տեռնամ:

Թափեղը քյընում ա քաղաքը, նի մննում մին նաշարան, ըն-դեղ, հիշտեղ միշտ ինքը հաց ուտեիս ա ըլալ: Նստում ա թա հաց ուտե, տեսնում ա մին օզող նի մտավ: Էս նաշարանեն տարը մին

* Մոթ — հանդավայր Աշանի մերձակայքում (ծ. խ.):

վեսկե յա տնում հափռումը, օզողը յոր ա օնում, լաց ընում, տուս կյամ ֆյընում: Թափեղը մտածում ա. «էս հինչ ակահ մարթ ա, վեսկեն յոր ա օնում հերիֆ չի, հալա բրտասունՖ էլ ա թափում»:

Ճաշարանեն տեռնը անա հրցընում ա. — Հո՞ւ վա էդ մարթը:

— Կարել չըմ ասիմ: Վեր մեր թաֆավերը գյիդա վեր ասալ ըմ, ֆու կլոխդ էլ կկտրե, իմն էլ:

— Պատմե էդ մարթին մասին, թա վախ օնիս: Ես վեչ թաֆավերան ըմ վախում, վեչ էլ ուրիշան: Քու կլխեդ տեղն էլ գյուդող չկա:

Մարթը վխեյան ֆաթ ա անում:

— էս օզողս մեր երգիրին թաֆավերն ա: էրկու տղա օնե, մըծին անումը Թափեղ, մեչինն էլ՝ Սմբաթ: Թաֆուհին մեեռե շատավ ա տվալ Թափեղեն, էն էլ կլոխ ա եր կալալ, երգիրան տուս եկալ: Սմբաթն էլ հալալ ծծկեր ա ընում, տեսնում ա վեր ախպերը ետ չի կյամ, տուս ա կյամ, հետան ֆյընում: Տղոցը ֆմակեն թաֆուհին ու վեզիրը խուսկուրֆնեն մին բրած, մեր պարի թաֆավերեն թախտան ֆցում ըն, փսակվում, վեզիրը տեռնում ա թաֆավեր: Մհենզ էս ախֆաղը մեր իսկական թաֆավերն ա, կյամ ա ըստեղ բրտասունՖ վեր ածում ֆյընում:

Թափեղը էս զրուցը վեր սկանում ա, ետ ա տեռնում օրան, Սմբաթեն պատմում, էյսի ուրթանան էլնա կյամ համին հաշարանը: Նստում ա, եշում մինչև թաֆավերը կյա: Վեր կյամ ա, Թափեղը ծեն ա տամ ňուրան կոշտը, մինտեղ հաց ըն ոտում: Պըծնելանը ետը Թափեղը հրցընում ա. — Պատմե տեսնամ տու հի՞նչ մարթ ըս, վեր համ փայ ըս հվաֆում, համ լաց ընում:

— Վերթի, ածեր ա պատմելը, մին մուխրոխծ թաֆավեր օնինֆ, վեր սկանա, վեր իմ դարդս ուրիշի պատմալ ըմ, ինձ էլ վայ, լողեն էլ վայ:

Տղան վեր շատ հոփ ա տամ, հարը վխեյան պատմում ա:

— էս հաշարանը մեծ հղըցու յռան ա, ֆյընող-կյըվող ըստեղ ա նի մննում, ես էլ ուզողու շուրերավ ամեն օր նի յըմ մննում ըստեղ, վեր մին խաբար գյիդամ տղորանցս անա: Մեռնիմ ուշ տղորանցս տեսնամ, դăրդս պատմիմ, հուֆյիս փշիմ: Ես ու տըղեֆս մին խնձողա յընՖ դաղվալ:

Թափեղը թաֆավերեն յոր ա օնում, տանում մին լավ լղըցնում, թազä շորեր կյեց տամ, ňուրան ննետ տանում դագյան:



4—777

Սմբաթեն գյողլ ա կցընում, ինքն էլ ավազակու շուրերայ ա ը-նում, թաքավերեն հրցընում ա, թա վեր տղեքը ըստեղ ընին կենանչի՞:

— Պա քու տոնդ աստված շինի, էդ էլ խոսկ ա, վեր ասում ըս, պա հի՞նչ կանիմ, վեր ենանչիլ չըմ:

Թափեղը Սմբաթեն պնդում ա, թաքավերը դժնտի կոլավն ա ըղնում: Աստ էլ ինքն ա շորերը փոխում, թաքավերը էնմի-նան էսմնին կոլն ա կյամ, ուրխանում, լնց ընում նորը ծծա-ղում, լնանում, ըշխարքավս մին տեռնում: Հարթներն էլ կյամ ըն թաքավերեն կոլուքն ըղնում, լոխ միհտեղ ուրխանում ըն, օ-րան տեռնում ա եղպորու քսակ:

Թափեղը շորերը փոխում ա, գյուրզը յոր օնում, եր ընում ծին, նոր քյընում քաղաք: Նոր թաքավերեն իմաց ըն տամ, վեր Թափեղը օրիշ հիլում ա կյամ պալատ: Թաքավերն ու թաքուհին չոր վենեն միհտեղ տրած տղտողում ըն, մին թնհրավ ուրանց քցում չարդախը: Մինչև Թափեղը կպրցրանա, նահանք չրդախան ուրանց քցում ըն տակը:

Թաքավերը հրթներեն ու տղորանցը եներ պցրանում ա պա-լատ, օխտը օր, օխտը քշեր հրսանեք ըն անում, ծփածենը հըս-նում ա երգիհք: Թափեղն էլ էնքան պարի տղա յա ընում, վեր թաքավորթունը տամ ա ուրան ախպորը:

Տահանք հսեն ուրանց մուրազին, տուք էլ հսնիք ծեր մուրա-զին:

Երգինքան էլ իրեք խնձոր վեր ընգավ. մինը քաթը ըսողեն, մինն ըսկնողեն, մինն էլ էն պարի Թափեղեն:

## 5. ԽՈՐԹԸ

Ընում ա չըննում, մին ջահիլ տղա. աշկը պեց անում խորթ մարը կլխանը երը: Նհա վեր լուսը ծաքյում ա, մարը յրան ա պրծըընում, մին թքյա հաց տնում ծերքեն, ղարկում հանդը մինչև րուգյուն: Վեչ կած խորագ ա տեսնում, վեչ կած խոսկ, վեչ տաք չիգյար: Հարն էլ դրիբորթուն ա քյընում, անչախ տարեն մե հետ, էրկու հետ ա կյամ: Խոխան մնամ ա էն կնգանը ծերքեն նատտի տայիս: Չար կնեգ-ամլիգ խոխա: Ճարը կտրած քյընում ա հան-

գին կաց ընում, մինչև նարը կյամ ա, աշկերը սրփում ա, շա-ղն̈նfը կոլ տամ, ասում.

— Ա նար, տուս կալ ինձ էս տանան, տար մին պենու, մին կյործու տիր, անիմ, ինձ պանիմ:

Հարը տանում ա մին դ̈ըմուրչու կօշտ: Էս դ̈ըմուրչին էլ տոռ ա կյամ դ̈ըմա չունող: Սա ծերfեն էլ չի մին օր տեսնում: Դ̈ըմուրչին շատ պնըցընում ա, շատ կզնըվում, շատ թակում, խրեզ նաց տամ: Վեր խոխան ուֆ ա անում, դ̈ըման տուս ա օնում, աշկեն բռաչին նլ̈որ-նլ̈որ անում:

Ճարը կտրած մին օր տուս ա կյամ տղադ, ըղնում մեծ նղեն, մտfումն ասում. «Տուս կյամ նռանամ, բ̈ըլի լավ մարթու կպը-տանիմ»:

Քյըրնում ա: Առաչն ա տուս կյամ մին խչըմեյիf նղե: Հղըցեն կոխկեն մին սիպտակ մրfավուր մարթ նստած:

— Պարի օր, պապե: Մին լավ նղե նհաշ տո, մին լավ նղը-ցավ fյըրնիմ, մին լավ մարթու ջնիմ, խեղճ տամ, խեղճ ստա-նամ, սեր տամ, սեր ստանամ, մին կտոր նացու տրանամ:

Մրfավուրն ասում ա. — Հղըցեն լավ ու փիս չկա, նունցու fյըրնիս՝ մին ա:

Էս խոխան շմտfը-շմետfը մին նղե յա յոր օնում fյըրնում: Հղըցեն ղրաղան մին կերած-խմած մարթ ա տ̈ուս կյամ՝ բեղերը սղըլիլավ:

— Հիշտե՞ղ ըս fյըրնում, ա ջանիլ:

— Պարի օր, պապե, ինձ մին լավ նղե նհաշ տո,

Մին լավ նղըցավ fյըրնիմ,

Մին լավ մարթու ջնիմ,

Խեղճ տամ, խեղճ ստանամ,

Սեր տամ, սեր ստանամ,

Մին նոթ նացու տրանամ:

— Էտ լավ մարթը լ̈նա ես ըմ, նետաս ընգեր, եկ:

Տղան նետան ա ըղնում, fյըրնում: Մին տան բռաչի վենն ըն կենում: Էս մարթին տոնն ա: Հիշ տեղ եշում ըս, չորս անգյունը լոխ վսկոfնե յա: Էս խուխեն բախտեն էս մարթն էլ ղասաբ ա տուս կյամ:

Դ̈ըմուրչուն անումը տո, ղսաբենը տա մ'էր, էս էլ նանա յա փիս տ̈ուս կյամ: Ամեն օր մորթ ա անում: Տղան բդի fյոմագ ա-նե տավարը կպոտե, վեզը նլորե վեր fցի, նեստա մաշկե, մ̈ուչ-տարի ծեն տա, խեղճ խուխեն սերտն էլ տմանո՚մ չի, ամեն

տվարու նհետ լաց ա ընում, ամենին նհետ ինֆն էլ ա պռանչում: Էյզաննան անգուններումը բղբղոց ա, խոխոոց: Ղսաբեն էլ վեչն ըեր չի:

«Չէ, սա իմ մարթս չի, սանա էլ ջամբուր ընիմ»: Ասում ա, ուռթանա ժմըժենֆեն ըտղադ հռանում, փռնում մին մեծ հողե: Մին մանզիլ անց կնալանը եռը, մին մարթ ա ջհում:

— Հո՞ւ վըս, հշտղացե՞ յըս, հիշտե՞ղ ըս ֆյընում:

— Պարլüս պապե, ինձ մին լավ հողե նհաշ տո,
Մին լավ հղըցավ ֆյընիմ,
Մին լավ մարթու ջհիմ,
Խեղն տամ, խեղն ստանամ,
Սեր տամ, սեր ստանամ,
Բոյ տամ մծանամ,
Մին նոթ հացու տրանամ:

— Էտ մարթը ես ըմ, հետաս ընգեր, եկ:

Քյընում ըն, տեմ ըղնում մին սարու, ֆշանում մին ծöր, մին պöլöր պöւթնավ պատ տամ, մին ֆրընեղֆավ նի մննում տափեն տակը: Մին մեծ տփառոն, մաշը լիգյը շորեր, մուտնեֆ, վսկեղան, ըրծթեղան:

— Հասե իմ տոնս: Ցիրեկը ըստեղ կննական ընֆ, ֆշերը ֆյընինֆ կյրզմնոտան նուրաթաղ մեռալ տուս օնինֆ, շորերը հանինֆ, ցիրեկը տանինֆ ծախինֆ:

Սկանալն ու ֆրընեղֆավը տուս կյալ, ծլկելը մին ա տեռնում: Մեռալ տուս օնողան կլոխ եր կալած փախնում ա, զինֆը ֆթենում մին խուտուր հղըցու յրա, հղըցեն նհետ շոռ տամ, ըղնում մին ծմակ: Եշում ա, տեսնում ըռաշին մին պառավ կնեգ:

— Նանե, այ իմ լավ նանե, հüւր ֆշտե լաց ընիմ, վեր աշխարֆս խորթ մոր ծերֆե յա, յարաս հüւր նհաշ տամ, վեր աշխարֆս ղüմա շնողու ծերֆե յա, ինձ հո՞ւ մեխկը կկյա, վեր աշխարֆս ղսաբու ծերֆե յա, կլոխս հիշտեղ մահու տամ, վեր աշխարֆս մեռալ տուս օնողու ծերֆե յա:

Էս պառավ տատեն մհետանց կննչկյարմուր ա տեռնում, տեռնում մին նաֆյած խնձոր:

Տափեն տական մին ծեն ա եր ընում, ասում ա՝ եկ իմ շուֆումս ապրե:

Էս ըլված պեն ա: Մինն ասում ա՝ խոխան հալա շոռ ա կյամ: Մինն էլ ասում ա՝ էն ա ծմակեն խնձորուն տակեն: Թա հար ա խնձորեն ա, թա մար ա՝ խնձորեն ա:

## 6. ԱՀՄԱԴԸ

Մին հարուստու իրեf վերթի յա ընում: Ըոշինակը վեր ը-նում ա, անումը տնում ըն Անմադ, մաշնակը վեր ծնվում ա, ա-նումը տնում ըն Անմադ, պիծինն էլ ա տղա ընում, էլնա անումը տնում ըն Անմադ:

Ըհմդնեն մծանում ըն, ծոռան fյընում ըն սարը, հարն էլ պռավում ա, սարան fշանում ա ծոռը: Հորը օրը վեր ժմըժեն-fում ա, ծեն ա տամ Ըհմդներեն, պարիկամներեն՝ ասում. «Հա-րըստոթունս տալ Անմադին, տալ Անմադին, մին Անմադին տալ ուշ»: Ասում ա, հոfին տամ:

Հորը տղվըրելանը եսը ժառանգնեն, պարիկամնեն հվաfվում ըն, կարում չըն գյիդան, թա իրեf տղենան վեր անումը կտրվածն ա, վեր ժառանգորթուն չօնե: Որոշ ըն անում, վեր խոխեfը իրե-fան էլ fյընին Սարկյավաf իմաստունեն կոշտը, դիվանը կտրե:

Հղեննի մին հլևուր ա պտահում: Էս մարթը հնգրանում ա տահանց:

Հլևուրն ասում ա. — Մզանա առաջ էս հղըցավը մին օղտ ա անց կացալ: Վննահետը ննաշ ա տամ, վեր օղտը մին ըշկանե յա ըլալ, պեռնն էլ բահմազ ա ըլալ:

Մին հովուր հնցած՝ զարը բռած մին մարթ ա կյամ, հալա խուսելու, հլևուրն ասում ա. — Հունց ըրվամ ա, օղտու վըս չոռ կյամ:

— Հա, հա, պա չանս fե մատաղ, բալի տեսա՞լ ըս:

— Օղտեն մին աշկը fո՞ռ ա:

— Էտա վեր կա, հիշտե՞ղ ըս տեսալ:

— Բա՞fմա՞զ ա ըլալ պեռնած:

— Պա էտ ա ե, պա էտ ա ե:

— Քու օղտը հղըցան տոնս ա եկալ, նի մտալ մին նեղլեզ կածան: Ծեխե անգյունավը հլովե, կծանավը fյընի, fթննական ըս:

Ոպտատարը կլոլվում ա բդի կածանը:

Մեծ ախպեր Անմադը էսfանը վեր տեսնում ա, ուրխացած հըրվուրեն ասում ա. մունf լհա fեզ ընf չոռ կյամ: Սկսում ա ոսան դարդը թիլ-թիլ հըրվուրեն պատմում, հետան ըղնում:

Իմաստունը իրեf ախպորցը տանում ա ոսան տոնը, ամեն մնին մին օթաղ ա տամ, մին սպասավեր, ասում. — Թաfա-

վերու մնան ըպրեցեք, դվանը օխտնչի օրը կտրլական ըմ, դար-կիմ ծեր պկըսթունեն:

Իմաստունը նի յա մննում ո̈ւրան օթևանը, նստում քննեն ա-նում, ամա կարում չի քթենա, թա էս վեր Ահմադն ա, վեր հոր կողմիցը պատեժված ա, պադեվա ընգած: Օրն-օրեն սերտը նղա-նում ա, նղըվերվում, անդոխտն ըղնում, օրը-օրեն մաշվում, հալվում:

Էս իմաստունեն մին մաղար ախնիգ ա ընում՝ ըմասկավ, գիտկան, խելքավ նռաքյած: Նի յա մննում հորը օթաղը, տես-նում, վեր հարը մին մեծ դա̈րդ օնե:

— Ա հար, դա̈րդդ պատմե, բալի ախնիգդ դա̈րման ընի:

Հա̈րը քաթ ա անում: Ախնիգն ասում ա.

— Թո̈ւլ տո, էս դադաստանը ախնիգդ կտրե:

Վեր կյամ ա օխտեն ուրթանան, ախնիգը զուքվում-զրթար-վում ա, առանց էն էլ ղաշանգ ա ընո̈ւմ, մեծ Ահմադին ծեն տամ ո̈ւրան կոշտը.

— Էս քշեր ինձ նհետ ըս քոն նա̈կան, իմ հա̈ր գյդըլական չի:

— Ես քու վեննանդ թոզին ըմ արժան, ըվիլին ես արժան չըմ: Ես քու հոր ղոնաղն ըմ, սերուն ախնիգ, քա հոր աղուհացը իմ աշկերս խե՞ օզում ըս վեր քուռըցընե: Ծառա յըմ քեզ, ինձանա անհնարինը պահանջում էր:

Ախնիգը մեծ Ահմադին հղե յա տնո̈ւմ, պծինին կանչում և հա̈մին խնթիրը տնում նրա ըռաչին: Պիծինն ասում ա. — Տու ինձ մին պեժակ նուր ըս տվալ, նուր տվող ակնեն մաչին թքել չըն:

Ասում ա, սրտըննեղված տանան տո̈ւս կյամ:

Ախնիգը, մաչնակ, Ահմադին ա կանչում, էլհա նույն հաչևը տնո̈ւմ ըռաչին:

Մաչնակը քրքամ ա, ծլոլը վեր ածում, վազ տամ բդի ախ-նիգը:

— Շնթոնե տեղդ, անհամոթ: Քու հա̈ր քեզ սրի յիս չըլալ հենց տրա հետե: Քու հա̈ր քեզ զրկալ ա հենց տրա հետե: Քու պնո̈ւթունավդ տու քու ախպորց նման չըս, քու հա̈ր ուրան անա պտկըված չի քեզ հաչև ըրալ, պին ա հաչև ըրալ, և օզալ ա վեր տու տանան տո̈ւս կյաս: Հա̈մին խորհուրթը ես էլ ըմ տամ: Քյը-նի հնգըրաց քեզ նմններեն նհետ, բալի խելքդ կյա...

Էրկու ախպերը օրախ-օրախ քյընում ըն ո̈ւրանց բունգյը,

öւրանգ տանտան յրա: Մաչնակ Անմաղն էլ գիդում չըն, թա նիշտեղ ա ֆյընում:

## 7. ՄՐԹԸԿՆԵԳ՝ ՃՈԽՏՆ ԷԼ ՄԻՆ ԽԵԼՔՈՒ

Մին մարթ փողը պöւրöւմ ա տամ կնգանը, թա՝ դöւլքանդումը կապե, տիր սնդողեն մաշին, աշունֆս կավ ըմ ինֆ ունենական:

— Ա մարթ, հանց ֆու հեր, ֆու մեր ապրե, ես չալ կվան հազ ըմ անում, հանց ըրա՝ չալ կավ ինֆ օնիս:

Աշունֆը կյամ ա, մարթն ասում ա՝ մին ֆյընիմ սորաղ անիմ, տեսնամ կվեն կյինը յրգինֆումն ա, թա՝ տափեն յրա:

Բզարեն յխումը մին ըրկնատոր մարթ ա ջնում:

— Պարի օր:

— Պարի օր:

— Պա ըստի, ըստի, ինձ մին կավ ա հաչաք: Էն ա փողը սիպտակ դöւլքանդումը կապած տրած սնդողումը, կնեզս ա տըրալ, համ էլ ասալ ա՝ ա հայ, ես չալ կվա ըշխարֆես մչանֆ հազ կանիմ, հանց ըրա խաթրավս ֆյընիս:

Սահանֆ ըստեղ սովդա ընեիս, մին մարթ սկանում ա, վազ տամ էս մարթին կնգանը կոշտը: Սահանֆ էլ պայման ըն տընում, վեր էյսը էս համին ժեմեն ծախողը կավը պիրի, մուշտարին էլ՝ փույը:

Մարթը օրախ-օրախ, մին խաղ էլ եր կալած, ֆթեն տակեն մոմալավ կյամ ա տոն:

— Արա, պա էդ հո՞ր ա չալ կավը, մին ծծերան փոնիմ, փըշհափըշ ֆթիմ:

— Ա կնեգ, կավը հալա էֆուծ էս ժամեն ըն պըրլական: Մին չալ կավ, պոզերը կեռ-կեռ, կործը չըմըխած, ծծերը վեր թողած:

— Պա էն մարթը մհենգ փույը տարավ: Եկու ասից՝ մարթդ ասալ ա էն սիպտակ դöւլքանդումը ֆշկըռած փույը սնդողան տուս օնե, հանցու տամ չալ կավը պիրիմ, առանց փոլ տարը տամ չի: Ես էլ ֆեզե տուս կալի, ավեր öւրան, տարավ:

— Ախնի... հի՞նչ մարթ:

— Պա տու չը՞ս դարկալ: Նա հինչ գյիդաց, թա սիպտակ դöւլքանդումը ֆշկռած ա:

— Կանոխ ֆյընի՞ց:

— Չէ, նոր ֆյընից, վեր վազ աված ընի, անշախ հսած կնի Վսկախաչ։

— Խոր-խուրանա պել հանողը, ախնի, մին ծին կյուման տուս կալ, ֆյընիմ շոռ կյամ, տեսնամ ֆեզ նման էլ կա պել կնեզ, թա մինակ տու վըս։

Ծին եր ա ընում ֆյընում, տեսնում հըղցավը մին մարթ ա ֆյընում։

— Պարի օր, ա հայ, պա ըստ-ըստի մարթ չըս տեսա՞լ, սիպտակ դըոլըթանդումը պտատած փողը ծերֆեն։

— Տեսալ ըմ, նոր ֆյընից։ Վեր տի ծիավ ֆյնիլի ընիս, նա Արախսը անց կկենա, վենեավ շատ չիրլուր ֆյընում ար։ Թա օզում ըս, ծիդ էս ծառան կապե, հետան վազ տո, թալի հընխս։

Էս մարթը ծին ծառան կապում ա, կարն կտրում մեծ հըղցեն յրա։ Սա էլ ծին եր ա ընում, հայդա։

Էս մարթը շատ ա շոռ կյամ, խրեզ ա շոռ կյամ, վեր նղանում ա, ետ ա տեռնում տոն։ Հղեննի եշում ա տեսնում՝ վեչ ծին կա, վեչ էն մարթը։ Խեղնը ֆոռուփեշման ետ ա կյամ, կնեզն էլ էն ա ընում հղեն պհեխս։

— Ադա, ա մարթ, ծի յըս տարալ, պա ծիդ հո՞ր ա։

— Աստուծ ծին դարկալ ա փուլեն կոշտը, ինձ էլ ֆու կոշտդ։

## 8. ԴԱՉԸ

Ընում ա չընում մին պառավ մարթ, մին կնեզ։ Տանանց շատ հեյվան-տավար ա ընում, հավ-նավ ա ընում՝ մին լիզյը կյում, մին լիզյը թառ։

Մե հետ մին ռուզյուն, տվըրվեննեն, թա մեր ըշխարֆես վեր ընզյունան, աստուծ կզիդա, էրկու մարթ ըն կյամ սանանց տանը ֆշտեն վեննը կենում։

— Պարի ռուզյուն։

— Աստծու պարին։

— Ճանապարու մարթիֆ ընֆ, կարե՞լ չըֆ մեզ ղոնաղ յոր օնիֆ, էս ֆշեր ծեր տանը ըսծու ուղուրմավ ֆոն նինֆ, էլհա ատթանա եր կենանֆ, մեր պենեն կենանֆ։

Աստծու կարֆավ մարթն ասում ա. — Աշկես յրա տեղ օնիֆ, պարի մարթին պանելը պարի կործ ա, թա լա՜վ կարինֆ ուչ,

վաղ լիս կպահինք, թա գյաղա պհանե չըք՝ համեցեք:
Նի յըն մննում տոնը:
— Ախնի, մին տանը ըլյած–չլյած պեր տիր սուփրեն, էրկու պերց էլ պեր տիր կուռնուտակերեն, հըղե եկածը համ տոզնը կընի, համ վենն ըլյած:
Կնեգը քյըննում ա էն լիզյը–լկլկայիս տանան մին սողան մաչան կես անում, մին կուտուր հացը էրկու նոթ անում, տնում տահանց բռաչին: Մարթը գյուղում ա, թա տանը ըլյած–չլյածը տա յա վեր կա, սուս ա անում:
Ղնուղենեն ամեզյը էրկու պրընպատառ հըլլըղորում ըն, կոլ տամ, «չեն կենաք» ասում, քյըննում ռւրանց հետե քցած տեղումը պարանց ըղնում: Ախեր սահանց քոնը տանում չի, կօզի ղոնաղ չան տղեն խոսք չի հսնում, սահանք օրիչ պեն ըն մտածում: Տհանցա մեծն ասում ա. — Աղաթ–օրենք ա, վեր էնքան հվերան մնին վեզը կտրին ուչ ռւրանց ղունաղեն հարկին:
Էն մինն էլ ասում ա. — Հարաբեղ, իփած հավու վետ ա կյամ, հիշտեղ վերե էն ա էս ութաղումը իփած հավ կա:
Ասելն ու տոնը ատակ անելը մին ա տեռնում: Ըհը՛, մեծ տախտեն տակեն էս ա մին ըզղան կա, ռեխը ղփլած, բոխչաբն էլ կլխեն տրյած: Պեց ըն անում տեսնում՝ մաչին մին իփած ղազ: Ղազ, հի՞նչ ղազ, մին տրեկանը թմըմելու տոխ, ռանգն էլ խաշած Քրիստոսա ռանգը: Ծոռերնեն կյենում ըն, անց կենում տաշտան օխտը հաց տոս օնում, ղազը մաչին պտատում, տընում ռւրանց խուրչինումը, ռւրանց քյոհնա տրխըննեն ղազեն տեղ տնում ըզղանումը, սուս–փուս տոս կյամ, հացեն մին կուտուրը տամ չանը սուսավ անում, հանդյորղ անց կենում քյըննում:
Ութանա քշերավ կնեգյը եր ա կենում, քեփը ծխծուն խութումը, ասում ա.
— Էս էրկու մարթին հըղե տնիմ, կորչին, օչաղը նի կցընիմ, ղազը թըխծըննիմ, մերունց էլ եր կցընիմ, նստինք ուտինք: Ղոնաղը հինչ ա գյուղում, թա մեր տանը իփած ղազ կա՞, թա ղազը նահանց աչի թաթուկն ա անց կացալ, թաղիմ ղնուղներեն կլոխը, ես իփած, ես կերած:
Նի յա մննում ղնուղներեն տոնը, վո՛յ նանե, ղոնաղ չկա, կռանում ա տախտեն տակը, ըզղանեն ռեխը պեց անում, վո՛յ նանե, ղազեն տեղ մին նոխտ փկուհան ըլած, փոլ եկած տրեխ ըզղանեն մաչին տորզած:
— Ա մարթ, ա մարթ, մին եկ ըստեղ: Քաշկու–հնարքու պեն

ա, պա էս աղաք-օrենf ա՞: Անումը ինձ նի չի կյաս, յոխ fու ըrարի յա: Պահած, պաշտած ղնուղնեդ եr ըն կացալ, ընդետանս, իփած ղազը ղզղանան տո̈ւս կալալ, տեղը տrխու լանթեr տrալ, ընդետանս, ուrանf ըտակվալ:

Մարթն ասում ա. — էս fեզ խrեզ ա, իփած ղազը հո՞r ըս կյեղում ղունաղան, հո՞r էդ fյալագը կլոխդ կյա: Քեզ խլունfու տեղ տrա̈ծ, ո̈ւrո̈ւշու էլ պել ըս գյուղում: Մհենգ իփած ղազը տու վըս է՜, էն տաrածը չի: Վեr ամեգը մին թfյա մունf ուտինf, մինն էլ ղոնաղն օտաr, փիս կընա՞r, ղազեն մնան իփվի փիս կնեգյը:

## 9. ՀՈՒ ՎԵՐ ՄԻՆ ՏԱ՝ ՕԽՏԸ ԿՍՏԱՆԱ

Մին ախfադ մարթ ա ընո̈ւմ. կործը շատ, տոնը լիգյը fյոլփար, համ էլ հա̈զ չանում ժամ fյնիլա: Մին հպարապ օr եr ա կենում fյնում եխծե, տեսնում՝ դեrն ասում ա. «Տեr ողորմեա, տեr ողորմեա, հու վեr մեr դեrին մին կտա, օխտը կստանա»:

Ախfադը կյամ ա տոն, էյսը մն էլ ա fյնում, տեսնում էլ նա դեrը հա̈մինն ա ասում. «Հու վեr մեr դեrին մին կտա, մնին օխտը կստանա»:

Ետ ա տեոնում կյամ տոն, կնգանը թա. — Ա կնեգ, էս ա էrկու օr ա fյնում ըմ ժամը, դեrը լավ զrուց ասում, ասում ա՝ հու վեr մին պեն տա դեrին, նա տեղակ օխտը ստննական ա: Հասե, էս սհաթս, մեr կավը տանում ըմ տամ դեrին, դեrը սոտ չասել, օխտը ինձ ա տլական:

Ասում ա, կավը fշում տանում, տեսնում դեrը եխծուն տոռանը վեննը: Դեrն ասում ա. — Ա խեղն-ախfադ, էդ կավը հո՞r ըս պեrալ:

— Մունf պոլոrս ըստծու փառfին ծառա յընf: Աստուծ մեզ հունչու ասում ա, fու պrա̈նավդ ա ասում: Կաrո՞ղ ա fու պեrանդ սոտ ասե:

— Չէ, ա վեrթի, չէ: Աստուծ ինձ ա ասում, ես էլ ծեզ ըմ ասում:

— Ասում ըս՝ հու վեr դեrին մին տա, օխտն էլ ո̈ւrան ըն տլական, ես էլ հվըռեվուr հայ frիստոնյա, պեrալ ըմ իմ մինս fեզ տամ:

Դերը տեսնում ա վեր էս մարթին ծայլը պակաս ա, նհաշ ա տամ հղեն, թա. — Տար իմ տվըրածես առաջն ըրա, աստուծ շնորքդ տի միշտ շատ պահե:

Ախքադը կավը տամ ա տվրածեն, ետ տեռնում կյամ տոն:

Կեսօրեն դերին տվըրենեն կետում ըն, նքյվրենեն պցրցըրած, վեչ սար ըն եշում, վեչ ծօ̈ր: Ըոըշքաշին էլ ըխքադեն կավն անում, դերին օխտը կվերեն յոր օնում պօ̈ւրօ̈ւմ օ̈ւրանց տոոնը: Ախքադը տեսնում ա ուրխանում. «Պա ես աստծու դիվանեն մատաղ»: Խչըհանում ա իրեսը, տվրեներեն ապուր տամ, նի անում կյումը: — Ա կնեգ, վեր դերը օրաս ետ էլ ղորթ չասե, էս լհա բոլ ա, մինը եր ա կա̈լա̈լ, օխտը ղարկալ:

Տվարածը շոռ ա կյամ, շոռ, հարց ու փորց ընելավ կյամ ըխքադեն տոոնը. — Դե, դերին կվերը տո:

Ախքադն ասում ա. — Էդ դերին տվածն ա, դերը խոսք ա տվալ, աստուծ էլ ղարկալ ա:

Տվարածը քյնում ա, դերն ա կյամ: Ախքադը պենդ վենն ա կենում, թա. — Չէ, վեր չէ: Տու ասալ ըս, աստուծ էլ տվալ ա: Աստծու տվածը դերը կարել չի ինք օնե, նիշտեղ օզում ըս՝ քյընի կյենզյատ ըրա, իմ իրեսս նա վեննանը տակը:

Դերը քյընում ա վարթաբեդին կյենզյատ անում, ախքադն էլ հետան:

Վարթաբեդն ասում ա. — Քեցեք ծեր տները, ուրթանա ծգանա հու վեր նեյլի կկյա եխծեն, կվերը նանն ա, կտամ օ̈ւրան կըտանե:

Ախքադը մտքումն ասում ա. «Պա հո՛, ես հիշքան նեյլի կյամ, կկարի՞մ դերին անա նեյլի կյամ, եխծուն իրավունքը ծերքեն, աշարը ծերքեն: Լավ ա, քյինիմ վուչ տոն, քշերս մնամ եխծուն պատեն տակեն, վեր կլօ̈ւսանա, նի կմննիմ եխծուն բա̈նդը, ընդեղ եշիմ վարթաբեդին»:

Էդ վա̈րումը մին կնեգ ա կյամ վարթաբեդին կոշտը, մին սերուն կնեգ:

Աղքադը մտքումն ասում ա՝ պա հո՛, վարթաբեդը սա պեց թողողը չի:

Վարթաբեդը տոն քյնիյիս ա ընօ̈ւմ, կնգանն ասում ա.

— Հի՞նչ ա պտահալ, սերուն կնեգ:

Կնեգն ասում ա. — Դերը ախնիգս փսակում չի, ասում ա՝ ջհաս ա:

Վարթաբեդն ասում ա. — Մհենք դերն էն ա հալա եխծումը,

էդ կործը մինակն ա յոր օնում: Կկարի՞ս ֆշերավ, ուռքանա ծաֆյը պտրռելին կյաս եխծեն, ընդեղ կործդ կկտրիմ:

Կնեգն էլ, վարթաբեդն էլ սերավ-սլիբիլավ կֆյնին տոն, ախֆադն էլ պատեն տակեն կկենա, մինչև վեր դերը տուս կկյա եխծան, նանա ետը լոֆ կտա պատեն լուսըծակավը նի մննե եխծեն, ընդեղ տապր անե, եշի վարթաբեդին կյալին: Քոնն էլ ըշկերան մուտանալ չի:

Ժմըժենֆեն, հալա լուսն ու մթենը նուկվելու, վնածեն ա կյամ: Ըհը՛, վարթաբեդն ու կնեգը եկեն: Ախֆադը ֆաշվում ա խոռանը: Ըստեղ վարթաբեդն ու կնեգը *ո̈ւրանց* պարի կործը տեսնում ըն: Կնեգը վեր ֆյնում ա, ա̈ստ էլ դերն ա կյամ: Վարթաբեդն ասում ա. — Ըխֆադեն հերն անիծած, կվերը ֆուռն ըն, տվըրածեն դարկե կյա, ո̈ւրուն անե:

Էդ վո̈րումը ախֆադը խուռանան լոֆ ա տամ տուս կյամ, թա. — Վարթաբեդն ապրած կենա, ես դերին անա նելլի յըմ եկալ, էդ էն ժամեն ա ըլալ, վեր էն ըս ըլա̈լ հասն ու ջհասը նուկեխս: Ուզեցալ չըմ խնգարիմ:

Վարթաբեդը օշը հլո̈րում ա բդի ախֆադը, ասում. — Դերին հերն անիծած, կվերը ֆուռն ըն, լոխ ըստծու ծառա յընֆ, աստուծ տվալ ա, վեր տանիս խոխեֆդ պահիս:

Ախֆադը կյամ ա կնգանն ասում. — Ա կնեգ, վեր հետան ֆյընում ըս, դերին սոտ խոսֆն էլ ա ղուրթում, կվերը մերն ըն, դե ապրե ապրինֆ:

## 10. ՓԱՀՄԱՎ ՎԱՐԹԱԲԵԴԸ

Ձորս հրևան կնանեֆ ըն ընում, ո̈ւրո̈ւր ֆյոմագ ընելավ, սերավ-սո̈ւմբաթավ թուրնեն հաց թխեխս: Տահանց մնին ջբումը մին վեսկե տսանուց ա ըն̈ում, տափը ծակում ա, նի մննում: Հու կընի եր կալած, հու շընիլ եր կալած, կնանուցը վեչ մինը վզավ չօնում: Կուրստատարն ասում ա. եղ չի թա հալի, երգինֆ չի հմբարցվալ, ծզանա մինը եր ա կալալ, հալալ-զուլալ իմ փողս ինձ տվեֆ, վեչ ես ծզանա նղանամ, վեչ էլ տուֆ անեծֆ յոր օնիֆ, ըստծու աշկեն փիս թվաֆ:

Հիշֆան ղաչանֆ ա անում, վեչ մին պեն էլ տեռնում չի, վեչ մինը վզա̈վ չօնում, հո՞ւ վզավ կօնե: Ճարը կտրած էս կնեգը

ֆյնում ա շենքին վարթաբեդին կոշտը, ասում ա. բառի յա ըլալ, բառի յա ըլալ: Վարթաբեդը փաճմավ ա ընում, ասում ա. «Ըրխը-յին ֆյնի ծեր տոնը, ես կյուղանողը ֆըննական ըմ, փողն ինֆ օնիմ, ֆեզ տամ: Մինակ մին պեն ըմ խնթրում ֆզանա: էս ռուգ-յու մին մհանա փռնե, էն կնանուցը նվաֆե ծեր տոնը, նանա ե-տը ֆեզ կոռծ չօնիս»:

էս կնեգը ուրխացած ֆյընում ա տոն, հրևան կնանուցը ծեն տամ. «Ախճի, եկեֆ մեր տոնը, մչի յա, պատառ պեմըակ օնիմ ֆծըծելի»:

Կնանեֆը նվաֆվում ըն: Վարթաբեդը մին ամաև մոֆ թանակ ա տնում չըումը, մին վերցակ էլ փռնում, հղե ընում: Վեր տես-նում ա լոխ նվաֆվալ ըն, ասում ա. — Գյուղում ըֆ հի՞շ կա. էս կնգանը փուլը կորալ ա, ես ծզանա վեչ մնին կարել չըմ ասիմ՝ տու վըս կյուղացալ, յա աշկանդ երը օնֆ կա: Համա պեռած վերցակս իմաստուն ա, հունչու ես կարում չըմ, ինֆը կարում ա անե:

Կնանեֆը ուրուր ըրեսե եշում ըն, մնամ ըրմացած, ննեցա մինն էլ մտֆումը ծծաղում ա: Մարթն ասում ա. — Անըմը ըր-մանաֆ ուչ, հերթավ կյլական ըֆ ծրֆրնեդ ֆսիֆ վրցակեն մաշ-կը: Հու վեր եր կալած ընի, ծերֆը վրցակեն մաշկեն նի կյալն ը-թաթ, վերցակը կնչլական ա, նանա ետը էլ ուրանալի տեղ չօնե: Ես լուսը հնգըցնում ում, տուֆ էլ հերթավ վեննը կացեֆ, մինչև ֆանը հմըըրեցեֆ, նանա ետը մին-մին մտացեֆ, ծրֆրնեդ ֆսեցեֆ վրցակեն մաշկը:

Վեր լուսը հանգում ա, էս մարթը թանակը նլլը-նելլի ֆսում ա վրցակեն մաշկը լպատում:

էն իրեֆան էրկուսը կյամ ըն ծրֆրնեն ֆսում, անց կենում, փուլը եր կալած կնեգն ասում ա. «Ատա սա կլոխը թաղիմ, վեր ղորթ ընի, ֆյընիմ ծերֆս նի տամ, էս անդարն էլ կանչի, հո՞ւնց կանիմ»:

Մտածում ա, կյամ անց կենում, ծերֆը ֆսում չի վրցակեն մաշկը:

Վեր ամեն ինչ պրծնում ա, էս մարթն ասում ա. — Պա հո, էս հի՞նչ ա պտահալ: Յա վերցակս դնգլացալ ա, յա էլ կյողը *վրցակես ոշվաթ ա տվալ աշկերը ֆուռուցրալ*: Մին լուսը նի կցրեֆ, տեսնամ հինչ ա ըլալ:

Վեր լուսը նի յըն կցընում, վարթաբեդն ասում ա. — Լոխ ը՞ֆ ծրֆրնետ ֆսալ վրցակեն մաշկը:

Իրեքան էլ կլխավ ըն անում:

— Դե մին լոխ ծրքրնետ ինձ նճաշ ավեք:

Եշում ա տեսնում էրկու կնգանը ծերքը թնակոտ ա, մենինը՝ չէ:

— Ախեր ասում ըմ, վեր իմ վերցակս նամարդոթուն անել չի:

Մաքուր ծրքատեռնը փեշկան փոնում ա, ասում. — Էս կըն-գանը փողը տու վըս եր կալալ, վխեցալ ըս ծերքդ վրցակեն մաշ-կավը տանիս, վերցակը կանչի, էլ յան տալի տեղ չօնիս, ըթուտեղ տար քյընի, եր կալած տասանուց վեսկեն պեր տո էս կնգանը:

## 11. ՀՓՈՒՏԿԵՍ

Մին մարթ ա ըննում՝ օրումս, մին կնեգ ա ըննում՝ օրումս: Էս մարթին ու կնգանը մին ըղըրտրի խեյք չըննում: Մե հետ կնեգը մարթին ղարկում ա բազար, ղզղան ինք օնել: Մարթը բզարան ղզղանն ինք օնում, խտտում պուրում:

Կնեգը հրցընում ա, թա. — Ղզղանեն մաշը հիշքա՞ն աղ ընք ըծըլական խորագ ըփիյիս:

Մարթն ասում ա. — Սև անիմ մեննս, ղզղան ծխողեն անա հրցըրալ ը՞մ, վեր քեզ ասիմ:

Կնեգն ասում ա. — Դե վեննանդ յրա ետ տեռ, հշտղա վերե էն մարթին քթիր, նեստա հրցըրու:

Մարթը քյընում ա ո՞ւրան բախտան ղզղան ծխողեն քթենում:

— Ա ղզղան ծախող ախպեր, — ասում ա, — պա ղզղանը տը-վեր, ըսկի ըսեցեր ուշ թա ղզղանեն մաշը կնեգս հիշքա՞ն աղ քցի:

Ծախողը տեսնում ա, վեր էս մարթին կլխումը ծեթու կաթ չը-կա, ասում ա. — Հփուտկես:

Էս մարթին մննան ըղնող ա նո՞ւմ, տրա հետե էլ հփուտկես, հփուտկես ըննելավ հղե յա ըղնում: Հղեննի պտահում ա մին վար ընողու: Վար ընողեն համ կլոխ ա տամ, համ էլ ասում՝ հփուտ-կես: Սա էլ էն ա ըննում սերմը քցիյիս, գիդում ա թա ասում ա՝ հիշքան վարիս, եր կալածդ հփուտկես ընի, փռնում ա նապկե նպատավ մին լա՛վ թակում, համ էլ խրատում. «Վեր քյընին տի պենու պտահին, կասին՝ մինը հզեր տեռնա»:

Էս մարթը հփուտկեսը մննան քցած, «մինը հզեր տեռնա» ը-

սելավ հղեն ֆյնաում ա, տեսնում հըրցեն ղրաղեն մին չոքան նըս-տած ֆթև ա անում: Քշտավը անց ա կենում, համ ասում. — Մի-նը հզեր տեռնա: Զոքանը եր ա կենում, ֆթևը թողած, սկսում նա թակելը. — Շան տղա, տու ինձ հունչու տեղ ըս տնում, էն ըմ ես տահանց ծերֆեն նեղու եկած, տու օրհնում ըս, վեր շտանա՞:

— Պա հի՞նչ ասիմ, ա ես ֆե մատաղ,— աղերս անում մար-թը:

Զոքանը տեսնում ա, վեր խեղճուկրակեն մինն ա, ասում ա.
— Վեր տի պենու պտահին, կասին՝ աստված տրա դմըզլեղը կտրցընե:

Լոխ մննան ֆցած էս խեղճը վերջին խոսֆը անկյիր ըրած ֆյընում ա: Հղեննի եշում ա տեսնում մին մեռալ ըն պո̈ւրո̈ւմ, մուտանում ա թա. — Աստված տրա դմըզլեղը կտրցընե:

Մեռած մարթին պարիկամ-ազգական յրան ըն տեռնում մին լավ դնգըսում, պո̈ւրթը կյզում, ֆցում հղեն: — Դե ֆյընի, համ էլ՝ վեր տի պենու պտահիս, կասիս՝ էտ ընի, էլ վեչ ընի:

Էս ծեխ մարթը վերջին ասածն էրկուվելավ ֆյընում ա: Տու մե ասել, ըռաշան մին հրսանեֆ ա կյամ՝ պարավ-խերավ—ծափավ-ծծաղավ: Էս հրթննֆատերնն էլ օխտը ախճիգ ա ընո̈ւմ, հալա̈ ըրչինակն ա ընում փսըկվեխս: Սա մուտանում ա կլոխ-տամ, համ էլ ասում՝ էտ ընի, էլ վեչ ընի:

Օխտը ըխնըկատարը ո̈ւրան ուրխացած-խմած պարիկամնե-րավը յրան ըն տեռնում թակում-ծո̈ւծո̈ւն անում, համ էլ խրա-տում. «Վեր ֆյընին տի պենու պտահին, պար կկյան, ուռռա կա-նին, կշվշվան, փափաղը երգինֆ կֆըցին, լոֆ-լոֆ կանին»:

Էս մարթը լոխ մննան ֆցա̈ծ, ուռռա ընելավ, փափաղը եր-գինֆ ֆցիլավ, հղեն ֆյընում ա: Ըռաշան շորֆ ծիանե մին փուր-գոն ա տո̈ւս կյամ: Էս խեղճ Ապելա կյառնը ուռռա յա անում, փափաղը երգինֆ ֆցում, շվշվցընում, պար կյամ, ծիենը խրտը-նում ըն, ծառս ընում, փրգոնը լիգյը սախսի յա ընում, պարան-տամ, լոխ կուտրատում: Փրգոնչին շլլեղեն ռեխն ա ֆցո̈ւմ, պո̈ւրթ տամ պեմբակ կյզում, համ էլ խրատում. «Վեր տի պենու պտա-հին, մին հափուռ խոտ կնեպոհին, փշում-փշում ընելավ խոտը ծիյին, յա եզնանը ֆթեն տեմ օնին»:

Էս մարթը բախտը եր կալած ֆյընում ա, համ էլ փշում-փշում անում: Էս վա̈ռումը մին վերսկան ֆոլեն տակեն պարանց ընգած, վերսին գյրավան պհեյխս ա ընո̈ւմ, լհա էն ա օզո̈ւմ ա

թա կոռւկը քաշի, էս խեղճ-մարդիմազարը մռտանում ա փշում-փշում ընելայ, խոտն էլ վրսկաննն քթեն տեմ օնում:

Վերսկանը վերսը թողած, կզնըված, փրփրած եր ա կեեում վեր թակում կլխեն, նամ էլ խրատում. «Վեր տի մին պենու պըտանին, թաքուն, կորկեռ, սուս-փուս կնըռանան»:

Էս մարթը կորկեռ, սուս-փուս նղեն քյընում ա, րղնում մին վխճարու սուրու: Վխճրատարը եշում ա տեսնում՝ մինը քշըքաշ, թաքուն վխճարեն մաշավը քյընում ա:

«Պա-նա՛: Կա-շկա սա լնա իմ վխճարես կյողն ա»: Մնակը յոր օնում, շանեն րղնում: Էս կյիրը կոռած մարթը մին կեռպ շուբանեն մնական պրծնում ա, ռւռան քցում տոն: Նի յա մննում թա չէ, ըստեղ էլ կնեգն ա պոկն օնում. — Ա մարթ, ախրը, նիշքան աղ ընք քցըլական էս ղզղանեն մաշը:

— Ախնի, նարռւր պեն ըն ասալ, քանե մինը մննես պանիմ, էս ըմ տավար տեռած:

Ըստեղ էլ կնեգն ա օծը եխնածն անում: Մինչև մննեք էլ մարթ ու կնեգ կարում չըն էն ղզղանումը խոռազ իփին էն զնար աղեն ղռրդան, նունցու ինք ըն կալալ, ղզղանը էն ա ընդի կնա-յիս:

## 12. ՄԱՐԸ

Ընում ա շընում, պա նինչ անում, վեր ընում չի, մին մինակ կնեգ ա ընում: Սա ղարիբբունում տղա յա ընում, եշում ա վեր կյա: Մին օր էլ էս կնեգը նիվանդանում ա:

Մին քշեր էլ մանն ա կյամ, թա. — Հազըր մինակ ըս, եկալ ըմ քեզ տանիմ:

Էս կնեգն ասում ա. — Տու մերն ըս, մունք՝ քունը, նիբը ընի ռւրռւր ննետ ընք: Մին պեն ըմ քզանա խնըրում. պատառ տմաց, տղաս էն ա ղարիբբունում, կյա տեսնամ, նանա եռը նունչու օզիս կանիս:

Էս խոսքան մանը ետ ա տեռնում, ասում ա. — Լա՛վ, թող տղաղ կյա, տես, եռնան կկյամ: Բալի ղորքը տու վըս:

Մին խիլլա վախտ անց ա կենում, տղան կյամ ա, մարը տեսնում ա, պաշում ա քուշտանում:

Մանը կյամ ա, թա. — Դե վախտն ա, եկալ ըմ:

Մարն ասում ա. — Նամճրդրթուն մ'էր անել, թող տղաս փակիմ, ճարթնը տեսնամ, եռնան: Ցանի ճինչ կնի:

Մանը էլնա մորը ննետ ճռճռ ա ըղնում: Էս կնեգը տղան փակում ա, լավ ճռսանեֆ անում:

Մանը եխան պեց չի թողում, ճրթննֆանը եոր կյամ ա. — Էլ խռւսելի տեղ չօնիս, եկալ ըմ, տեռտակ ֆյննական չըմ:

Կնեգը տեսնում ա, վեր մանը ճունչու օզալ ա տվալ ա, սեռտ ա անում ասում. —Գյուղում ըս ճի՞նչ կա, շատ ըս տմացալ, կաց թոռն էլ տեսնամ, ըստծու էլ լավ կըրվա: Հուր ըմ ճինչ անում:

Մանը սուս ա անում, եռ տեռնում:

Մին օր մանը տանանց տռնավը անց կնայիս, տեսնում ա էդ կնեգը թոռնանը պար ա ածում, ճամ էլ ասում. «Հիր կնի նուր կպիրիս, ես խմիմ: Ես ասիմ ասառւծ էլ սկանա»:

Մանը սկացածը ունգուներ ա անում. — Հը, ա պառավ, մնենգ ճի՞նչ կասիս, թոռն էլ տեսեր: Եկ տանիմ ֆու ճիմնական տռնդ:

Պառավն ասում ա. — Շատեն տմճցալ ըս խրեգին՝ ո՞ւչ: Հի՞նչ ա մնացալ, թող թոռնս նուր պիրի խմիմ՝ եռնան:

Մանը եշում ա, թոռնը մծանում ա, ննռւր ա պուրում, պառավը խմում ա:

Մանը կզնըված կյամ ա, ասում. — Բոլ ա, ճերիֆ ա ճիշֆան ներվալ ըս, եկալ ըմ ֆեզ տանիմ, էլ խոսիս ուչ:

Պառավը ճամ ճզըրվում ա, վեր մանեն ննետ ֆյրնի, ճամ էլ բլբլամ.

— Մուրազս անզադար մնաց, ստեռնս մնաց ստռումս, ճացս կուտուր տեռած ըմ ֆյրնում, ասառւծ, լավ անգուն կալ:

## 13. ՊՈՉԸ

Մին մարթու օխտը տղա յա ըննում: Ոխտեֆան էլ մծանում ըն, ճորը տորֆավը տնատար տեռնում, շենան ճռանում, ճռանց ճետե ապրում, սկի մննըենեն չըղնում թա ճռւր օնին, թա օնին ուչ: Մարթիս կնեգն էլ մեռնում ա, ինֆը մնամ ա կոճին տակեն մինակ, ղուղու կնչիյիս: Հինչ անե, ճինչ չանե, ճար չի ֆթեննում էտ տռուբունան տուս կյալի: Մոնըլական ա, թաղող չի ըննական,



5—777

անդար–ընդերու մռային աստուծ էլ չի տրոթուն անում, շոն–կյուլ քաշ ա տալական: էս մարթը դարդը հըրըվանեն պատմում ա: Հրեվանը խեյունք ա ընում, ասում ա՝ սնն քցի, վեր մին պոլիգ վեսկե օնիս, խոխեքդ կյլական ըն քզ ըրա ծեք տան: Սոտ խոսկը նեյլի յա երըմիշ ընում: Պուլիգին վեսկեն թևեր ա անում թըռչում, Յանդուն ճանչին մնան նի մննում, խոցը ընգուննումը տըզզամ: Մին էրկու ամսանը ետը խոխեքը լոխ հվաքվում ըն: Տենումը սկըսում ըն խոսելը. պա ասել չըս էս մարթը խիլլա վեսկե օնե, դիմիշ չըրալ օտե, պահալ ա խոցը հետե:

Խոխեքը ամեն մինը ո̈ւրան հետե հորը կյոք ա տամ, վեր քաշի ո̈ւրան անգյունը, տանե ո̈ւրան տոնը: Ժողնգնեն մտածում ըն, վեր սօր–էքուծ հարը մոնըլական ա, հու վեր կյենըթան վախտը կարից հորը խաթիրը քթենա, նա էլ կործը կտանե, վեսկեն նրա յա մննական: Հարը կլոխ ա ըղնում, պենը հինչումն ա, ասում ա. — Չէ, ա բլենե, ես իմ ուշաղաս տոււ կյվողը չըմ, ես ըստեղ էլ մոնըլական ըմ, մեյդս թող մեր հանդին քշեղակն օտե:

Տղեքն ասում ըն. — Ղորթ ա՞, վեր մին պոլիգ վեսկե օնիս:

Հարը մաննը կծում ա, ասում. — Հա, ընիլը օնիմ, համա ձեզ չըմ տալական: Վեր մեռնիմ, հրևանս տեղը ծեզ ըսըլական ա, մոնելանս ետը հունչու կանիք՝ կանիք, տերը ծզ նըհետ:

Խոխեքը վեսկուն շիրան կոքըրներեն տակեն, էլ հռանում չըն, մնամ ըն հորը քշտեն:

Շատ չի քաշում, հարը մեռնում ա, խոխեքը ըստծու կարքավ հոր տանում ըն թաղում, օխնը–քռասունքն էլ անում, քյըռնում հըրըվանեն կոշտը, խնթիր անում, վեր վեսկուն տեղն ասե, հանցու տարուն՝ հորը յրա քար քցին, մնացածն էլ, աղաթ ա, ո̈ւրանց մաշին փայ անին:

Հրևանն ասում ա՝ էն ա կյումեն պտրհանեն տակեն մին մեծ սալքար կա, նրա տակեն:

Խոխեքը ըրըխ–օրախ, ամեզը մին թե, մին թոխուր ըն յոր օնում, քյըռնում սալը պուք տամ, տեսնում աստվածանից տակեն պոլիգ: Խոցը սրտրնեն փուրըրներումը ծլընգ–ծլընգ թխում ա, վըննըրնեն էլ տկըրներեն ճինչեխ ա ածում: Պոլիգը տոււ ըն օնում, ռեխը պեց անում, տեսնում մաշին մին տվարու պոզ, պոզին մաշին էլ մին թոխտ՝ յրան մեծ–մեծ տռերավ կյըրած. «Հու վեր տղու, հարթնու ումեդ ըղնե, էս պոզը նրա աշկը»:

## 14. ՎԵՂԸ ԾԱՏ ՉԻՉԱԻԵ

Ըռազումս մին պառավ ինձ զուրթնուցնում ա:

— Պարի մարթ, ինի՞նչ տունկա յըս:

— Ղյամա:

— Վե՞ր տանա:

— Աշանա:

— Անո՞ւմդ:

— Թավադ:

— Հինչա՞նց:

— Ծինդունց:

— Քանե՞ տրեկան ըս:

— Ութասուն:

— Լավ ըս անց կացալ: Տեսնում ըմ ըշկապեց, ընգած-տնիս եկած մարթ ըս, ամեն ինինչին հասու: Քզանա մին պեն ըմ հոցըն-նական:

— Հրաման քեզ:

— Աշխարքես ամենաքախծրը ինինչն ա՞:

— Հացն ա:

— Հացը ըշտըղա յա՞:

— Վեղան ա:

— Ծուրը ըշտըղա յա՞:

— Վեղան ա:

— Աղը ըշտըղա յա՞:

— Վեղան ա:

— Այ դորմա քա հոր, դորմա իմ հոր: Ուրեմս՝ քախծրը վեղն ա: Կասկածավե՞ր չըս հու: Ծատ լավ, շատ պարի: Էս լիս ըշ-խարքումս, տափեն տակեն, ըրեսեն, ծովումը, յրզինքումը ինինչ-քան շունչ-հոգի կա՝ ինինչա՞վ ըն կենդան:

— Վեղավը:

— Այ օրհնվիս տու: Տեսնում ըմ մեռուն մարթ ըս, ափսոս, քեզ էրկու մետր վեղ ըմ պըրտականն, հանցու ետ-ետ անիս, նի մննիս մաշը: Համա մինչև էրկու մետրեն ըրեսեն վեղը տեն ա-նելը, վեղեն չըշարե: Վեղեն հիշքան շատ չըշարիս, էնքան վեղը քխծրանում ա, վեղեն քախծրն էլ տամ ա պըրանետ: Ըստի ա-սիմ տու էլ աշկդ ծակ չի պահիս, ըշտահետ էլ քացախ չանիս: Մատ շատ տնգե, համա չիլ չըդնիս քրիստոսա տունգը պուք տաս, քամուն պերած սերմը տնգիս: Հաքյիդ վեղումդ խոր վեր

թողե, վեր տական-կլխան փշող քամեն կարե վուշ թա Ղյամա դիք տակոեն պուք տա: *Մեննդ պահե, քու դո̈ւշմանդ քու աչկդ ա,* վեղումդ թմահեն ծառը տնգիս ուչ: Զաշմիշ կընիս, սադանան փորումդ ճոտեր կանե, հացդ պատան չի կենալ, սորփը մատադդ ընթունել չի, կաթնըդ կշաղե, գյիդալ չըս, թա Մեծ Նըրտական ա՞, թա Պիծի Նըրտական, ըստուծանա յա՞, թա ներքե բո̈նդա՞ն, խաչան ա՞, թա կյրին մաշա՞ն...

Ես էլ կյամ ում Վսկըխաչան,
Աստուծ խոսից սրտեղ-մաշան:
Ասից Թավադ Շինդիյանը:
Սոնգս՝ կյող Աշան, իմ հոր անումը Բալասան,
Աշկըս լո̈ւսի, լո̈ւզուս ասուն,
Յաշս տասսավ պակաս, քանց իննասուն:

## ՋՐՈՒՅՑՆԵՐ, ԱՌԱԿՆԵՐ, ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 15. ԱՌԱՋ ՎԵՆՆԱՆԴ ՏԱԿԵ ՏԱՓԸ ՃՆԱՆՉԻ

Մուշըճավը կատց-կատց երֆ ըսելավ էն ա ընում մոշեն ֆոլեն տակեն ֆթոթ ընեխս: Աղվեսն էլ մտֆեն դոնն ընգած, ինֆը ուրան անավ ճյիլ-մայիլ կտրած, մին կյիր էլ կոստակեն, օշը բղի երգինֆն բրած էն ա ընում ֆյընիյիս: էլ ծառեն կոխկե վերը տեսնում չի, ճանկարծ ըղնում ա մաշը:

Մկըծեռնը տեսնում ա, ծծաղում ուշըճան ընում:

— Վերումը ճի՞նչ կործ օնիս, ա ֆամե ննետ տվող:

— Սարկյավաֆյ իմաստունն ասալ ար. յրգինֆին ատխերը ճաշև բրա, ես էլ ճաշև ի անում: Մին կորած աթխ կար՝ ինձ շատ չրշարից, վեննանս տակեն էլ յշեցե վուչ: Ծառեն ախպեր, մուճֆ մին ցեղա յըճֆ, պարղավեր ըճֆ ուրուր ֆյումագ ընինֆ, ծերֆդ տո պցըրանամ:

— Ես կարել չըմ ֆեզ նման ճիմարեն լվոթուն անիմ: Ընձանա ֆեզ ամանաք. առաշ վեննանդ տակե վեղը ճնանչի, ետնան յրգինֆին ատխերը ճաշև բրա:

### 16. ԸՍԵԴ ԾԵՆ ՉԻ ՏԵՌՆԱԼ

Մին վերցակ, մին շոն ըխպրանում ըն, մսյըճաք անում, վեր ֆյընին ծմակը: Քյնում ըն: Մինչև ճսնում ըն, մթնում ա: Ծոնը ֆոլեն տակեն պրանվում ա, վերցակն էլ ծառեն թառ ա ընում: Վեր լուսը մոտանում ա, վերցակը կանչում ա: Աղվեսը ֆունա յոֆ ա տամ եր կենում.

— Ջան, ծենիդ մատաղ: էս ա ընձ էտե մին լոս լուսացավ:

Սա̈սին յրա վազ ա տամ կյամ, տեսնում վերցակը ծառեն յրա:

— Պարի լուս, վերցակ ախպեր, հի՞նչ քամե յա քեզ պերալ մեր հանդերը:

— Ըստեղ մին շեն ընք շննական:

— էդ հինչ լավ պեն ըս մտածալ, վեր եկ, մսլըհաթ անինք:

— Հատե իմ դայի քոլեն տակեն դնջանում ա, մինչև ես վեր կկյամ, ո̈ւրան ննետ մսլըհաթ ըրա:

Աղվեսը քոլեն յրան ա պրծընում, քոլը՝ ըղվեսին: Աղվեսը ննղամ ա, մի կերպ տո̈ւս պրծընում, փախնում:

— Աղվես, թո՞րն ըս փախնում, սպասե, վեր ըմ կյամ:

— Քեզ վեր տի դայի օնիս, հարուր տարե ըստեղ շեն չի տեռնալ:

## 17. ՄԱՐԹՆ ՈՒ ՎԱԳՐԸ

Կատուն տերնը հետան քյընում ա ծմակը: Վագրը տուս ա կյամ, ասում. — Տու մեր ազգանս, խե՞ տի պիծի յըս մնացալ:

Կատուն մաննավ ննաշ ա տամ մարթին:

Մարթը էն ա ընում փադ ճղելիս: Վագրը հլո̈րվում ա բդի մարթը, ասում.

— Տու էդ հի՞նչ ըս արալ էն աժդահա վագրեն կլխեն, վեր կատու վա տեռալ:

Մարթն ասում ա. — Ծերքերդ տիր փադին ղաթումը, ասիմ:

*Վագրը ծերքերը անում ա փադին ղաթումը, մարթը կացենը* տուս ա օնում: Փադը վեր սկսում ա մններեն հոփ տալը, մարթն էլ սկսում ա կացնավը թակելը:

Վագրը վայվրուդ ա անում, խղճացած բդի կատուն եշում.

— Տու հալա փիլ ըս, վեր տի էլ ամացալ ըս:

## 18. ԱՄԵՆ ՊԱՋՈՒ ԿՀԸՎԱՏԱ՞Ն

Մե հետ մուկունը տոռոնեն տեսնում ա, յրան սիրահարվում Քյընում ա կոխկը կտըրում, թա. — Եկ էս տու ո̈ւրուր ննետ փը-սակվինք:

Տոռոնն ասում ա. — Լափ լավ կընի:

Մուկունը լոֆ ա տամ, տոռռենեն անա մե նետ պաշում, փախ-նում:

Տոռռնը կյրմրում ա, փսըցուվեն հետան թռշում, մուկունեն էլ վազ տալավ ֆյընում ա նի մնում ööւրան պööւնը: Խեղճ տոռռնը տես ա եշում, տեն ա եշում, հարուր ծակ-ծուկ կա, ենհանցավ ինֆը նիմննող ա՞: Ճարը կտրած պööւնին ֆշտեն նստում ա, թևե-րը խաչ անում, սպասում: Եշում ա, եշում, մինչև ումեդը կտրում ա: Ասում ա. «Իմ դանգլա խելֆս, ամեն պաշու կնըվատա՞ն, վեր ես հվըտացե»:

## 19. ՄԻՆ ՊԻՇԻ ՀԱՓՈՒՌ

Մարթը էն ա ընում գելաս ֆղեխս: Արշը կյամ ա, թա. — Մարթ ախպեր, թöլ տո, գելաս ուտիմ:

Մարթն ասում ա. — Իմ հափռավս մին կեր:

Արշը անգուն չի օնում, ööւրան հափռավը մին ա ուտում, սկը-սում ցռելը:

Աղվեսը կյամ ա, թա տղավ անց կենա, մարթը համեցեֆ ա անում. — Աղվես ախպեր, եկ գելաս կեր:

Աղվեսն ասում ա. — Վեր գելասը լավ ընի, արշը ծառեն տակեն հպարապ կենալ չի:

Ջուր չըն ասում. «Թոթը հիփռհափուռ կեր, գելասը՝ մին հա-փուռ»:

## 20. ԼՈՒԾԸ

Լööւծը տնում ըն մին ղաշանգ ըշեռու վզի, հապկե հպատավ էլ մաշկեն թխում, վեր խամը վարե: Աշեռը խամ ա ընում, օժն էլ՝ պակաս, շովռենա ըղնում:

— Հիշֆան ա ծանդր էս լööւծը, մարթ արարած. էս հինչա՞ յա շինած:

— Կաղնա յա:

— Տու իմ խոսֆես անգուն կöլ, վեր ասոած էլ ֆու խոսֆեդ անգուն օնե, կաղնե լööւծը ծանդր ա, փոխե օրիշ լööւծ տիր:

Մարթը անգուն ա օնում, կաղնեն փոխում ա, պեխե լööւծ տնում ըշեռեն վզին:

էլիա աչեոր չովոեն ա ըղնում, օծը պատում չի: Մն էլ ա խնըրում, վեր լոծը փոխե, պեխեն էլա կաղնու մնան ծանըր:

— Ասում ըն ակոզնեն թիթև ա ընում, նիշ կընի յանի, լոծը ակոզնե անիս:

Մարթը էլի յա անգուն օնում, ակոզնե լոծ ա անոմ ըշեոեն վզին:

Աշեոր քռանննքում ա, ոռան անա առւ կյամ, կարում չի ծըռավը քյընի:

— Լոծը ծանըր ա, օզում ա պեխե ընի, օզում ա՝ կաղնե: Թխե, մարթ սատծո, նիշտեղ վեր լուծն ա, ընդեղ էլ նպատը:

## 21. ԽԶՆԸ

Խեղն Աղամա վերթին տես ա նլորվում, տեն ա նլորվում, էս քարն ա յոր օնում, էն վեղն ա քանդում, աչ ա եշում, ծեխ ա եշում, ավեր ա եշում, տեր ա եշում, պոպաոում ա քատծու ըոաչին, ծերք մեկնող չընում: Ճարը կտրած քատծու ծռեն վենն ա կենում, նավք ընի, կյեզան ընի, նու վեր կյամ ա, նոցընում ա.

— Վեննը կացեք, ա շունչ-շնչավերնե, նո՞ւ կկարե ինձ դայու ընի, նու կկարե ինձ դայաղ ընի, կործես կուփե աա, լուծննզեր ընի:

Վեշ մինը անգուն չօնում, լոխ խեղն նլըվուռեն թողնում ըն քյընում:

Մինակ մինը կյամ ա մոտանում, սաում. — Ես, ես...

Հլեվուռը ոռան ես ննզերեն անումը տնում ա եզ:

Մարթը ուրխացած խոստում ա եզնանը վեզը, ըշկեռան պաշում, կոխկեն վեննը կենում: Մին ըրկընանգուն տավար էլ ա մոտանում, խեղն-խեղն եշում ա մարթին ըշկերեն, սաում.

— էշ, էշ...

Այսինքը՝ ես, ես:

Մարթը նվատում չի էշին լոզվեն: Էշը լաց ա ընում, ծենը պեց թողում, զռում: Օզում ա սաե. խե՞ եզնանը նվատում ըս, ինձ նվատում չըս:

Էդ օրվանից մարթը նոխտեն էրկու անգյուն եր կպած կոև ա տամ վեղեն, քարեն ննետ: Եզնանը յզնախպեր ա սաում, էշին էլ՝ էշ ախպեր:

## 22. ԿԱՔԱՎԸ

Կֆավեն ասում ըն. — Խե երֆ ըս ասում, չէ՞ վեր տանավ դույուղ ըս անում վրսկններեն, մահլո̈ւմ ըս անում ֆու ֆոլեղ տեղը:

Կաֆավը ըստի յա բաղասխանում. — Ես երֆ ըմ ասում, սկընողեն նեղ սերտը լնըցնիմ: Ես երֆը հո՞ւնց չասիմ, վեր էն ա սրտումս երֆ կա: Մարթին միրը վերսկան կընի, հարուրը վեր–կան չընիլ: Վեր օզում ըս գյիդաս, շատը վրսկններեն հետե յա՞ ասում:

## 23. ԿԾԱՔԱՐԸ

Կածֆարեն հրցընում ըն. — Հո՞ր ա լո̈ւսդ: Մաշդ կրակավ լիգյը, բաշիր չըս անում թա ֆշերնեն լուս տաս: Տեսնում չը՞ս ըղաֆարը, սաղ օրը փիլըստրատե յա տամ:

Կածֆարն ասում ա. — Մեխկը ընձանում չի: Մեխկը մարթին անում ա:

Մարթն ասից. — Հի՞նչ անիմ:

— Ինձ մինակ թողում էր, ինձ չրչարե, թողում էր կածը մաշիս հանգյի:

Սարկյավաֆ իմաստունն ասից. «Ըստծու կրակը մարթիս մաշին ա, տո̈ւրո̈ւր բղիս տալ, վեր հանգյի վուչ»:

## 24. ՎԵ՞Ր ԱՐՏԱՎԱԶ

Մարը կուրցընում ա մինունար բլեն: Ամեն օր ֆշերավ եր ա կեննում ֆյընում մղարեն կյրըզմանեն կոանում, ըրտասունֆ թափում, ըստի մինչև րո̈ւգյու:

Մին օր շատ–շատ ա լաց ընում, լոխ մննան ըղնում ա, ո̈ւ–րան էլ ա մննան ֆցում, վեր օշը հլո̈րում ա, տեսնում ա՝ մթնըֆըշեր:

Կնեգը վախում ա, մեռած վերթուն ա ծեն տամ: Մարը վեր նեղ օրում ընի, հո̈՝ւր ծեն կտա:

— Արտավազ, Արտավազ, Արտավազ...

Մնել ա տեսնում հանգիստարանեն խորան սո̈ւսեր ա կյամ.

— Վե՞ր Արտավազ, ըստեղ մունք շատ ընք, թաքավեր Արտավազան մինչև տվարած Արտավազը:

Մարը էլ վախում չի, խուխեն հնգերունքը լոխ էն ըն հüրան չորք ընգյունին: Շատունքեն մաշին վախել չըն:

## 25. ՀԻ՞ՆՉ ՀՎԱՏՈՒ ՎԸՍ

Սեյսուպան մին դեր ա ընում, քյընում ա տեսնում՝ եխծուն խաչեն քաշը ծրտած: Մաքրում ա, մին կյեվաթ կյինի տնում խաչեն քշտեն: Քաշը կյամ ա խմում, հարփում, վեր ըղնում: Դերը քաշեն քշտեն էնքան կենում ա, վեր հäրփած քաշը զինքը հիվաքում ա. մաննավը կտուցեն թխում ա, ասում.

— Թա հայ քրիստոնյա ըս, խե՞ խաչեն յրա ծրտում ըս, թա թորք ըս, խե՞ կյինի յըս խմում:

## 25. ՀՈՒ ՎԵՐ ԱՆԵ՝ ՏՈՒ ՕՏԻՍ

Էրկու մարթ ծմակավը քյընիյիս ըն ընում վերսի: Ծրավում ըն, շոռ ըն կյամ մին ախպյուր ա ջհնում, էրկու ախնիգ էլ էն ըն ընում ըխպրին ղրաղեն նստած, էրկու ըմանում ամեգը հüրանց հետե մուշըփիրթուշ ուտեխս: Վրսկննեն ասում ըն.

— Սերուն ըխնըկերք, հüր տվեք մեզ:

Ըխնըկուրանցան մինը կյեվաթը մուշըթաթախ, եխտուտ հըրüվ լցնում ա, տամ ղարիբ տղըմրթունցան մնին: Էն մինն էլ թüմուզ ամանը լվանում ա, հրüվ լցնում, ողող տամ, նորը լըցնում, տամ էն մարթին:

Ղարիբ մարթն ասում ա. — Տու անիս, տու օտիս.—թամուզ ըվընողեն:

Էն մնին էլ ասում ա. — Հու վեր անե՝ տու օտիս:

## 27. ՄԱՐԹԻՆ ԱՇԿԸ ՄԻՆԱԿ ՎԵՂԸ ԿՔՈՒՇՏԸՑՆԵ

Ասում ըն մարթին աշկը վեչ մին պենա քուշտանալ չի:

Մե հետ մին մարթ մեռնում ա, աշկերը հիշքան անում ըն, կարում չըն կապին:

վեր անում ըն վեղումը, ինքը-ինքը կապվում ըն: Մին օր տա յրա խոսք ա վեր կյամ, մին ընչատար մարթ ասում ա. — Հինչ աշկ օզում ըք ավեք, ես դժստի կքուշտըցնիմ:

Պոււռում ըն մին մռայլու աշք տուս օնում, տամ էդ մարթին: Սա տանում ա կշռքեն մին ընգյունին էդ աշկը անում, մին ընգյունին էլ ուրան սաղ նըստոթունը, էնա աշկը ծանըր ա ընում: Հունցու անում ա, աշկը տեղան եր չի կենում: Մին օրիշ մարթ ա կյամ, թա՝ վեսկավ-ըրծաթավ կարել չըս մարթին աշկը քուշ-տըցնիս: Էս խելունք մարթը պոււռում ա մի նափուռ վեղ անում կշռքեն էն ընգյունին, աշկը դժստի պցըրանում ա:

Ժողովուրթը իմաստուն ա, ասում ա՝ մարթին աշկը մինակ վե-ղը կքուշտըցնէ:

## 28. ՔՐԻՍՏՈՍԸ ԸՍՏԻ ԱՍԻՑ

Քրիստոսը փախավ եկավ Հայացտուն: Ըսեցեն՝ պա տու նըրեցէ չը՞ս:

Ասից. — Հիշտեղ վարթաքեղ կա, էն իմ երգիրս ա, նու վեր ինձ անգուն օնէ, էն էլ իմ վերթիս ա:

## 29. ԿԱՏՈՒՆ

Կատուն վեր տոււզն ա ընում, էշու քուռակու նման ըռաշկիդ թավիլ ա տամ. վեր լիուլի յա ըննում, շան նման պպզում ա, վեր նիվանդ ա ըննում կյառնու նման մա յա անում, վեր կյղըթուն ըռած ա ըննում, ըղվեսու նման սիլի-բիլի յա անում, նաքյին նա-ռուր նետ վեններդ ա քսում, վեր քեզ վնաս տալի յա ըննում, վագրու նման ժնգռնում ա, վեր մուկուն փռնած-կերած ա ը-ննում, նստում ա արքայավայել, առյուծու նման ըռաշի վենները ոււռուր ա փթաթում, աշկերը նոփ օնում, յանի՝ ես ըմ վեր կամ:

## 30. ՄԱՐԹԸ՝ ԲԽՈՒՎԱԾ

Աստված մարթին տամ ա մին ընչոտած ժնչիլ: Ասում ա՝ նանց թմզգրու, վեր փստրատէ տա: Եվ խեղճ մարթը ոււրան ամ-

բողն գյանքումը էդ ընշոտած ժնջիլը թմզցընում ա: Լնա վեր թմզցնում ա պրծընում, աստված նրանավ վեններըը բխովում ա:

Սարկյավաք իմաստունն ասից՝ մարթը öւրան գյանքը տի յա անց կցընում:

## 31. ԱՍՏԾՈՒ ԿՈՐԾԸ

— Ա տվարած, քուցե գյիդաս, աստուծ կա՞:

— Հա, էն ա կա:

— Պա խե՞ րվամ չի:

— Էն ա ծմակումը:

— Պա ծմակումը նի՞նչ ա անում:

— Մüրդըրվան ա շüւնում, նանցու մինը եր ընի, մինը վեր կյա:

## 32. ՔՅՍԻԲԻՆ ԱՇԿԱՎԸ ԵՇԻ

Թաքավերը մին ուստա յա ծեն տամ, ասում. — Տանս ակուշկան փոխե, նանց նիլի քցի, վեր նիշտեղ եշիմ՝ կննչկյարմուր ըրվա, ըշխարքես ըռնգնեն յրա փլըստրատե տա:

Սարկյավաք իմաստունը ղաթն ընգավ ասից.— Թաքավերն ապրած կենա, տու ըշխարքես էդ ակուշկավը մ’էր եշիլ, տու ըշխարքես, նանե՞, էն մանը ծերքեն մարթին ըշկերավը եշի:

## 33. ՀՈՒՐՈՒ ԽՆՁՈՐ ԸՄ ՏՎԱԼ, ՀՈ՛ ԱՆԵ

Մանկալը öւրան էրկու նոտաղներեն öւրöւր անա թաքուն առանձին-առանձին խնձոր ա տվալ, ասալ՝ մինակ քեզ ըմ տամ, վախտեն նո կանիս:

Վարեն վախտը մանկալը նըլընելի ասալ ա. — Հöւրöւ խնձոր ըմ տվալ, նո՛ անե:

Ըրկոքան նո՛ վըն բրալ:

## 34. ԱՌԱՋ ԸՐԱ, ԵՏՆԱՆ ԱՍԵ

Կնեգն ասում ա. — Եր կենամ մին վելա մանիմ, մին քոլա թակիմ, Ջալաղըգը (կովի անուն) տանիմ կապիմ:

Կյողը սկանում ա, ասում. — Մինչև էս կնեգը մին վելա մանե, մին քոլա թակե, ես եր կենամ Ջալաղըգը սարավն անց կցընիմ:

Առակս ասում ա՝ կործը վախտեն թղի անիս, համ էլ անել բդիս, ետնան ասիս:

## 35. ՓԻՍԸ՝ ԼԱՎԻՆ, ԼԱՎԸ՝ ՓԻՍԻՆ

Տարեն մե ճետ մին ճավք ա կյամ, մին ծառու վեր կյամ, ասում. — Փիսը՝ լա̈վին, լա̈վը՝ փիսին, փիսը՝ լա̈վին, լա̈վը՝ փիսին:

Օխտը տարանը մին էդ ճա̈միճ ճավքը կյամ ա ծառեն վեր կյամ, ասում. — Լա̈վը՝ լա̈վին, փիսը՝ փիսին, լա̈վը՝ լա̈վին, փիսը՝ փիսին:

## 36. ԲԱԴԱՐԱՔՈՒՄԸ

— Հո՞ւնց ըս:
— Էնքան լավ ընք, վեր մնենգ մեռնողը մուճք չընք:

## 37. ՎԵՐՋՆ ԸՆԻ ՊԱՐԻ

Մին մարթ էն ա ընում վար ընծիս: Մին մրքավուր մարթ կյամ ա մոտանում. — Ամեն մարթ յա էս կլխան ա ընում բախտավեր, յա՝ էն: Տու վե՞րն ըս օզում:

Վարվուրքն ասում ա. — Էն կլխան հու մեռած, հու՝ սաղ, թա աստուծ ըս, հինչ տալի յըս՝ մնենգ տռ:

Սա առոք-փառոք ապրում ա, հրուստանում, վեչ ժռնգներեն հոքսն ա քաշում, վեչ էյսի օրվա: Պառավ տարուն մնամ ա մինակ, վեչ մին քյոմագ չընում, վեչ մինը հովեն հսնում չի, չուրացած պռուշեն նուր չի տնում:

Մարթը տնֆամ ա. — Հայ-ճարայ, սխալվալ ըմ, աստուծ, իմ իրեսս ֆու վեննանդ տակը, ջաճիլ վախտը կերած-խմածս մճենգ ֆթըծկերավս վեր ըծեցե: Այ մարթիֆ, սկացեֆ, ջաճիլ վախտը մարթ ճուճցու ընի, կապրե, էն կլխան բդիս բախտավեր, մարթին ախրը խեր ընի, վերշը՝ պարի:

## 38. ԱՄԵԳԸ ՈՒՐԱՆՑԻՆ ԸՆ ԾԻՔ ՏԱՄ

Շոնը կօզի տեռնը օխտը տղա ընի, ամեն մինը մին թիֆա ճաց տա:

Հավը կօզի տեռնը տոնը վերան ընի, ճանցու մաշին ֆթոթ անե:

Կատուն կօզի տանը լոխ ճիվանդ ընին, ճանցու փայը շատ ընի:

## 39. ԾՄԵՐՈՒԿԸ

Հարը վերթուն ասում ա. — Քյընի բազար, մին ճանց պեն պեր, վեր ճամ մուճֆ օտինֆ, ճամ ճավերը, ճամ էշը:

Տղան ֆյընում ա ծմերուկ պöւրöւմ: Քշևը էշին, կորեզը՝ ճվերեն, մաշն էլ öւրանց:

## 40. ԼՈՒՍՆՆԳՅԱՆ

Լöւսննգյան մին սերուն ախճիգ ա ընում, մարը խմոր ճուճցեխս, պլոթուն ա անում: Մարը եր ա կենում խմուրթաթախ ծերֆավը սիլլա տամ: Ղաշöնգը խռովկան կընի: Լöւսննգյան խռավում ա, ֆյընում երգինֆը: Փուշմանում ա: Փուշմանում ա, էլ կարում չի ետ տեռնա: Խռովկանը միշտ կփուշմանե:

Մինչև մճենգ էլ öւրան մորը մննան ֆցում չի, յրգինֆան միշտ ծկըծöւկի յա անում:

## 41. ՏՈՆԴ ՔԱՆԴՎԻ, ՊՐՏՔԱՏԱՐ

Մին ախֆադ մարթ ա ընում, ֆյընում ա ճրևան ճրուստեն անա ցորեն պարտֆ անում, վեր պիրի վարե, ամեոնը ճենձի, տո-

նը պահե: Վարում ա, ցանում, խեղճին արտը կարկուտը կյամ ա տանում: Պրոֆատարն էլ կյամ ա, բզըռ անում, պարտքեն տեղակ տոնն ինք օնում, խոխեքը թողում դհւզումը: Մարթը դա՛րդան թռչուն ա տեռնում, ամեն տեղ թռչում, ամեն տեղ խնթըրում, ղաչանք անում, վեր մարթիք պարտք չանին: Երքն էլ ըստի յա ավարտում.

— Թա մա՞րթ ըս, խե՞ պարտք ըս: Տոնդ քանդվի, պրոֆատար...

## 42. ԷՇԻՆ ԱՍՏՈՒԾ ՁՕՆԵ

Էշին հավատ չիլա՛լ, վեր ըստծու կոշտ քյեցալ ա, ընթունալ չի: Ճարը կտրած քյեցալ ա կծակեն կոշտը: Կածա՛կն էլ թխալ ա հաքյին կտրալ:

## 43. ԼԾԵՆ

Աունատես պունուրիկ մի թռչուն, մինչև քուրը չուստ օզիլը, հալա տափերը ծյուն կոխած, տուս ա կյամ, երգ ասում՝ էս ծառեն յրա, էն ծառեն յրա:

— Լծե, լծե, լծե...

Պատմում ըն վեր մին օր Պունուրիկը պտահում ա մին ջանիլ տղու:

— Էս պայծառ օրը խե՞ տի թուխպած ըս, ա ջանիլ տղա:

— Մեծ ախպերս ինձ տանան տուս ա քցա՛լ:

— Իսկի պեն չի տվա՞լ:

— Մին հոխտ եզն ա տվալ, մնել չոլեն տռնը: Գյուղում չըմ, թա հունց անիմ: Վեչ սերմ ա տվալ, վեչ էլ վար-ցան ընելի վախտն ըմ գյուղում:

— Դա՛րդ մե անել: Ես քու սրմացուդ կպիրիմ, իմ կտուցավս մին-մին կանիմ, չոլեն տանը ծեղեն տակեն թափի կանիմ, վեր կյռնանե վրելի վախտը կկյա, ես կկյամ քեզ կասիմ:

Փեդրվարի վերջին, վեր կյրունքվարեն վախտը կյամ ա, Պունուրիկը եր ա ընում ծառը ծեն տամ. — Լծե, լծե, լծե...

Տղան լծում ա, քյընում վար:

## 44. ԾԵՏ ՓՈՆԱԾԵՆ ՑԱՎԸ

Մին ամլիզ խոխա մին ծետ ա փոնում: Սաղանան տոա ա կյամ առաշը, ասում.

— Վեր պեց թողիս՝ ֆու մար ա մոնըլական, վեր պահիս՝ ֆու հար ա մոնըլական:

Խոխան լաց ա ընում, մնամ ա էրկու ցավեն ղաքումը, գիդում չի թա հինչ անե: Մնամ ա՝ ծետ փոնածեն ցավեն եկած:

## 45. ՄԱՐԸ

Մին կնեգ պողնոտում ա. — Իմ իրեսս ֆու վեննանդ տակը, աստուծ, ինձ էրկու խոխա բախշի, էրկու ծեծ օնիմ, օտին մծանան:

Աստուծ ասից. — Կտամ էն պայմանավ, վեր խոխեֆը էս աշխարֆը կյան, տու էն աշխարֆը ֆյընիս:

Կնեգն ասից. — Հինչ կընի: Համա, աստուծ, խոցս թողիս ոչ ծծըխռաված:

Մարը մեռնում ա: Տանում ըն վեղեն թափշուր անում: Ժամանակավ մորը ծծերան էրկու տոնգ ա տոււ կյամ. մինը՝ թութեն, մինն էլ՝ թուզին: Մորը կաթնը թոթ ու թոզ ա տեռնում, խոխեֆը օտում ըն մծանում:

## 46. ԱՎԴՈՒՌ

Մորագետը ծառեխի հոծ անտառից դուրս է գալիս Ավդուռի դաշտակը, որ անվանվում է նաև Մուղակ: Սա Մուղան ընդարձակ դաշտավայրի հարյուրավոր մուղակներից մեկն է, որով դաշտը կապվում է անտառային Ղարաբաղին: Հնում բոլոր մուղակներով գետակներ էր հորդում, շենացնում նրանց ափերին կառուցված գյուղերը: Բոլոր մուղակները անուններ ունեին: Այս մուղակը կոչվում էր ԱՎԴՈՒՌ, որ նաև նույնանուն գետակի երկու ափերին սփռված մեծաշեն գյուղի անունն էր: Ասում են, այս գետակի ափերին, արևշատ ու հովասուն լայնասփյուռ դաշտակում էին լողանում անտառային ու դաշտային խայտաբղետ ու թյուրանուն թռչունները: Նրանց մեջ էր նաև այն ոսկեփետուր

թռչունը, որի բմբուլները վերմեր էին բուժում, բացում փակված աչքերը:

Թռչնավայրը նուշեց իր անունը՝ ՀԱՎԴՈԻԹԻՆ:

## 47. ԱՆԹԱՌԱՄԵՆ ՁՐՈՒՅԸ

Ծաղկանց աշխարն էլ ա չար: Անթառամեն բիզ-բիզ ըրեն, ճանղին տեղ չավեն, ըսեցեն՝ վեռդ փիս ա, տոնգդ էլ չառ ա: Քու ղարղաղ մարթիկ կյամ ըն մեզ կոխ տամ: Կյենզատ ըրեն. կծուզնն ար, կածուկն ար, կաքնուկն ար...

Խեղճ անթառամը մին օր ճանղան տռա եկու, ասից՝ ա բախտ, տու ուղուրմավ ընիս, իմ փայ ստտուծ ըս տու ըս:

Մին անթառամ fեցավ եր ելավ Կամբուր fարեն կտոռը, ըն- դեղ վեռը վեր բոդից, տժրճամբուր ապրուստ ըրավ. — Ծոն տեսնամ, կյուլ տեսնամ, մինակ թա ծղզներեն մայան տեսնամ ոչ: Մնըցածեն fամեն տարավ գրև տվավ, ճամա կարից ոչ վեչ վեռը կտրցնե, վեչ ռանգը փոխե: Էլնա անթառամը մնաց ան- թառամ: Պա բաս:

## 48. ՀԼԵՎՈՒՐԸ

— Քու ճա՛ր տեղի անտեղի տանը գործերեն խառնվում ա, ինձ էլ խանգարում: Յա տանան տո՛ս fցի, յա տար fցի շիրա- տոնը ինձ կզնվցնե ոչ,— բողոfում է կինը ամուսնուն:

Տղան սափրված ճորը տանում է կողfի շիրատոնը և խիստ զգուշացնում, որ չխառնվի տան գործերին:

Օրը զալիս է մթնում, բայց դեռ էշը ճանղից տուն չի եկել: Իսկ մարդ ու կին ամեն ինչ մոռացած ուրախնում-ծիծաղում են: Ի՞նչ անի. տան գործերին խառնվել չի կարելի: Ճարը կտրած ալևորը սկսում է էշի պես զռալ: Տղան լսում, ճասկանում է ճոր զռոցի իմաստը.

— Ախնի, էշը ճանղան եկա՞լ ա:

— Չէ, եկալ չի:

— Դե fյնի շոռ եկ fթիր:

## 49. ՁԿԵՌ

Մարդ, կենդանի և թռչուն ճաշակում են անտառի բոլոր պըտուղները: Մնում է զկեռը ծառին: Տխրում, լաց է լինում: Ցուրտ է, ձմռի է փչում, բայց պտուղները դեռ իր շալակին են, նըստած են ծառ-ծառ, շուտով ձյունն էլ վրան կնստի և ճյուղակոտոր կլինի: Ի՞նչ անի: Անտառից պոկվում է մի կերպ, դուրս գալիս մացառուտ, որ տեսանելի լինի մարդկանց ու կենդանիներին և որքան ուժ ունի կանչում է.

— Եկ ինձ կեր, ինձ կեր, ինձ կեր...

Այնքան է կանչում, որ նվաղում է ու նրա բերանում «ինձ»-ը դառնում է մի թշվառ զ.

— Զկեր, զկեր, զկեր, զկեր...

Անունը մնում է զկեռ:

## 50. ԱՐԵՎՔՈՒՐԻԿ

Մին պիծի ախճիգ ճվճդանում ա, տուս կյամ ծերքավ անում.

— Արև, արև, ճիվանդ րմ, եկ ինձ ճետ խաղ րրա:

Արևն ասում ա. — Պիծի ախճիգ, ես շատ կործ ունիմ, կարում չըմ կյամ, իմ պիծի քվեր ղարկում րմ, ճնետր խաղ րրա, լվըննական րս:

Արևը մին ծաղեգ ա ղարկում՝ տեղեն, տղնածամ:

Ախճիգը էլ թողում չի քյըճի, ճնետր խաղ ա անում, լվանում: Ծաղեգն էլ ճւրանց ճանդին փսնում ա, ախճիգն ու ծաղեգը ամեն օր ճւրճւր ճնետ խաղ րն անում, ճւրճւր սիրում:

Ծաղկեն անումը մնամ ա Արևքուրիկ:

## 51. ՊԻԾԻ ԱՄԵՌՆԸ

Մին եթիմ ախպեր ու քուր րն րնում: Ախպերը քյըռնում ա Մեծ Նճատակը*, չոքում, ղաչանք անում. — Ա Մեծ Նճատակ, լմվ վարալ րմ, լմվ ցանալ րմ, փսալ ա, ճսկըկալալ, տղնըծամալ:

* Արցախյան բանահյուսության մեջ Մեծ Նհատակը կամ Մեծ Մաման Անանիտ աստվածուհին է, իսկ Պիծի Նհատակը կամ Պիծի Մաման՝ Աստղիկ աստվածուհին:

Վեր բղի հնձիմ, թոռը նի յա կյ՛ալյ՛ալ: Արև տո հնձիմ, կալ անիմ, տանիմ տոն:

Մեծ Նհատակն ասում ա. — Աստված՝ ընողանց պարտական ա: Ես քեզ մին մեծ ամեոն ըմ տամ, վեր ռուզիդ հնձիս, թակիս, տանիս տոն:

Ախպեր ու քուր հոնձն անում ըն, կալը թակում, տներր ցորնավ լցնում: Վեր պրծընում ըն, թոռը նի ա օնում: Ախպերն ասում ա. —Պա խաղուն հունց կանինք: Ես հմանչում ըմ մնել Մեծ Նհրտակեն իրեսը տուս կյամ, քույրիկ, մհենգ էլ տու քյրնի:

Քույրիկը վնըրպեպեգ քյրնում ա Մեծ Նհատակը, շոքում ղաշանք անում, վեր ամեոնը ըրկնցընե, արև ղարկե, խաղուղը քաղին:

Մեծ Նհատակն ասում ա. — Եր կաց, քյրնի ղաշանքդ Պիծի Նհրտակեն ըրա:

Ախնիզը օշը հյորում ա բղի Պիծի Նհատակը:

— Մեծ Մաման արև ա տվալ, խորթնը թակալ ընք պերալ տոն, թոռը նի յա կյ՛ալյ՛ալ, խաղուն մնացալ ա բաղումը: Պիծի Մամա, ես խաղու շատ ըմ սիրում, մին պիծի ամեոն էլ տու տո, խաղուն քաղինք, պիրինք տոն քցինք:

Պիծի Նհատակը ըխնկանը խոսկը կոտրում չի, մին պիծի ամեոն ա տամ*:

## 52. ԾԾՄԱՐԱ ՔԱՐ

Ոսխտատեղի, որ գտնվում էր հին Ավդուռի (այժմ՝ Ավդալ) անտառամերձ շրջակայքում, մի քարաշատ բլրի վրա: Զբեր կանայք այստեղ էին դիմավորում արևազալը՝ ոտաբոբիկ, շոքած զավակ աղերսում:

Զպեր հարթնը վնըրտեպեգ, մին ծաղկած շլոռու ճեղնը ծերքեն, մնել մին կոլա ճուր տանում ա Ծծմարա քարը: Իմ տատ ասար. կօզի անումը քար ա, քար չի ըլալ, քարա շինած մին ծծըպլիթ կնեգ ա ըլալ, խոխան էլ խտտեն:

Քյրնողը շլոռուն ճեղնը տրալ ա ծծմարեն տոշին, կուլեն ճուրը ածալ ջանեն, հանց բրալ, վեր շլոռուն ճեղնն էլ թրջի: Էրկու հափուռը ծծերեն տակավն ա կալյ՛ալ, մինչև կաթալ ա հափուռը

---

* Արցախում հոկտեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 25-ը ընկած ժամանակը կոչվում է «պիծի ամեռնը», որին ասվում է նաև՝ «բախշած ամեռնը»:

ղցալ, եր ա կալալ պատառ խմալ, պատառ էլ պեց րալ, տո՛-
չավը տվալ, երգ ըսելավ fեցալ տոն*:

Մինչև ռուգյու հաց չի կերալ: Պատառ ածեգ ա կերալ, մնել մեղրավ fաշած ճղպուրամաչ: Վեր մթնալ ա մարթին ննետ fոն ա ըլյա՛լ:

## 53. ՇԼԼՈՒՎԵՆ ՏԻՋԵՐԸ

Էն ա Շլլուվա կոխկեն, Խրամորթա ճղցներեն թուշավը մին քելուկ մեծ ու պիծի թումբեր կան: Ասում ըն Շարան Շլլուվա (Խրամորթա) փեսա յա ըլյա՛լ: Մհետե ղոնաղ ա եկալ հանորը տոնը, օխտը ղզղան կուրկուտ կերալ, fյեցալ Շլլուվեն fմակեն, ըրըսկման տեղ, օխտը տեղ տիզ տրալ: Վեր արևը տուս ա եկալ, ռուրան ըրածան հմանչալ ա, կոռացալ, կոչ եկալ, տեռալ Կրկառեն ղրաղեն Շլլուվեն Պառակը:

## 54. ՋՋՄՕՋԱԽ

Վանf Լաչինի շրջանի Մինfյանդ (հնում՝ Ագարակու գետ կամ Ագարակաշեն գյուղ) գյուղի մոտ, բարձր սարի վրա: Նրա մոտով հոսում է Զաբուխ (Սարբուխ) գետակը և խառնվում Հագարլու (Աղավնո, Հագարակու, Հագարու) գետին: Վանfը եղել է չբեր կանանց աղոթատեղի: Այստեղ կինը պարտավոր էր խոստովանել իր չբերության մանրամասները: Այդ են վկայում նաև ժողովրդական լեզվում դեռևս կենսունակ «Քյրնի Ջջմօջախ, թաfուն դա՛րդերդ fաթ ըրա», «fյրնի Ջջմօջախ դա՛րդա մզվի» արտահայտությունները:

## 55. «ԸՐԱՆԱ ՀԱՐԹՆԸ» (ԿԱՊԱՐ)

Տափաստանային եզակի բույսերից է, օգտաշատ կիրառություն ունենալու պատճառով՝ սիրված Ղարաբաղի հայերի կողմից: Օգտագործվում է որպես կեր (հիմա էլ թթու են դնում մատղաշ ցողունները, դեռևս չբացված ծաղկեկոկոններն ու սերմապարկերը), որպես վառելիf, որպես մարզագետնային (բան-

* Ասացողը երգը չի հիշում

չարանոցային) միջնացանկեր ստեղծելու միակ միջոց, տափաստանում որպես դեղաբույս՝ ոսկրակրճիկային, արտային (ծաղիկներբ) հիվանդությունների, ստամոքսաաղիքային խոցերի բուժման համար:

Տաղկած ժամանակ հիանալի գեղեցկության գետնատարած, բայց կոտ ու ամբողջական թփաբույս է, կարծես մարդու ձեռքով փնչված, կապի տնկած («փնչած կապար»): Անվանում են նաև «Ըրանեն հարթնը» («Չոլեն հարթնը»):

Մատղաշ շիվերը թթու դնելուց առաջ 7—10 օր պահում են արևի տակ, 2—3 անգամ ջրափոխելով՝ դառնությունը ջրին փոխանցվելու համար:

## 56. ՇՈՒՆԴՈՒՆՑ ՔԱՇԿԸ

Ըրըվfառա fրըհանfերը Շունդունցն ա ըլյալ: Թափավերն էլ ուրան պալատը Շունդունց fառավն ա ըլալ շնիյիս: Շենին համ երե անգյունն ա ըլյալ ուրանցը, համ ներfե անգյունը: Շենին զիմնենեն Շունդունf ըն ըլյալ պհեիս:

Մեր մծերեն անա սկացած զրուց կա, ասում ա. «Քաշկը Շունդունց անա ամյալ եկած ա: Շինդին մեծ ախպերն ա ըլալ, fաշկը՝ պիծինը: Շինդին շինալ ա, fաշկը fանդալ ա: Մհետե Շինդին կզնըվալ ա fաշկեն թխալ, fաշկը նի յա մտալ Շունդուն փորը: Շունդունf ասում ըն՝ մեր փորումը սաղանա չկա, տուս ա եկալ, ժողովուրթն էլ ասում ա՝ տուս չի եկալ: Ամա հանց ա տուս եկած չընի»:

## 57. ԽՍԱՅԻ ՏԱՆՁ

Այս տանձը դրախտից երկիր է բերել Խսայի մարգարեն ու նվիրել մարդկանց՝ երկրայիններին: Աղամի հետնորդները տանձը կոչել են պարզևողի անունով՝ Խսայի տանձ:

Ղարաբաղի մի շարf վայրերում ինչպես պտուղը, այնպես էլ տունկը կոչվում է մալանչեճի՝ բամբակի (մալանչի) պես ներմակ ու փափուկ պտղամիս ունենալու պատճառով:

Համարվում է ամենից լավ տանձը իր համով ու բուրավետությամբ:

## 58. ԽՈՍՐՈՎԵՆՆ ԽՆՁՈՐ

4-րդ դարի առաջին կեսի հայոց թագավոր Խոսրով Կոտակի անունից: Ըստ ավանդության թագավորի հրամանով անտառներ ու պարտեզներ են գցվել, պատվաստվել են վայրի պտղատու ծառերը:

Դվին քաղաքի հիմնադիրը նաև հիմնադրել է զանգվածային այգեստաններ այնտեղ, ուր դարավոր անապատ է եղել: Ծառեղներ (ծառուտներ) ու այգիներ են տնկվել Հայաստանի տարբեր մասերում, նաև Մեծ ու Մուղան դաշտավայրերի հանձնուտներում ու քարաստաններում, ապառաժների վրա, Քուռ-Արաքսի մոռուտներում: Երկարանիգ ջրանցքներով ջուրը հասցվել է խամ ու խոպան հողերը, ոռոգվել ծառաստանները: Պտղատու նոր ծառատեսակներից շատերը բնականաբար կոչվել են բնասեր թագավորի անունով՝ խոսրովենի (թագավորական) խնձոր, տանձ, թութ, սալոր, ծիրան, խաղող, նուռ և այլն:

Շատերն են հիշում, որ հնում «Խոսրովա ծռեխ» կամ «Խոսրովա ծմակ» էր կոչվում Աղջաբեդի, Բահրամ թափա, Սահաթլու, Եվլախ, Լաչի, Ուջար, Քյուրդամիր և ուրիշ մեծաթիվ բնակավայրեր շրջապատող տարածությունները: Ադըլեցի Գիրիշ Առստամյանը, Լևոն Տեր-Գրիգորյանը, աշանեցի Աթանես Ավագյանը հավաստում են, որ հնում յուրաքանչյուր գյուղական (և քաղաքային) ծխի համար պարտադիր է եղել պտղատու և խաղողի այգիներ, վարդաստաններ, անտառներ ունենալը, հեռավոր վայրերից ջրատարներով (թունգի) ջուր բերելը, և նրանց մի մասի ջրարքի դարձնելը, 30—40 մեղվաբնտանիք պահելը և այլն:

Այս ամենը նրանք լսել են իրենց նախնիներից:

## 59. ՄԵՂՐԱՃԱՆՃԸ

Ասում ըն ըշխարքումս ուրուր նման պեն չկա: էն ա կա: Մղրանանչն ու հայը մին տապակ ըն: Ուրուր նման: Էրկուսն էլ մեղր ըն շունում, իսկի նեստա մաննը չըն լուզում: Համա մին պենավ նոկվում ըն: Հայը ուրան մախաթը կուրցրալ ա: Ճանչը հալա պահում ա: Մեղր շունողը կծելը գիդալ չի՞:

## 60. ՇԱՏԸ՝ ՇՏԱՏԵՐՆԸ

Էն ա մին ղուշ կա, ամեն կյուռունքու տաղերգ ա ասում. «Շատը՝ շտատեռնը, շատը՝ շտատեռնը, ըղքադեն հարն օտե էշին հաքյին»:

## 61. ԳՅՈՒԼՈՒՄ ՂԱՐՂՈՒ ՏՆԳՈՂ

Հրիշտրակը քյնում ա տեսնում մին բելուկ խոխեք լղընախս, մինն էլ քոռ՝ հովտեն ղրաղեն նստած:

— Տեր, խնթրում ըմ մին հովուր իրավունքդ ինձ տաս:

— Տվե:

Հրիշտրակը քոռ խուխեն աչկերը լավացնում ա:

Խուխեն աչկերը պենվալն ըբաթ, մին ղարղու ա պուկ տամ, պտոկը բզում, տանում նռումը տնգում, հանցու լղանող խոցը մշկրնեն ծակե:

— Գափրիել, տեսե՞ր, աստուծ սարեն եչում ա, ծյունը տընում:

— **Մեղա քեզ, տեր:**

## 62. ՀՈՒՐ ԾՈՒՑ ՆԻ ՄՆՆԻՄ

Մե հետ Մեծ իշխանն ու ո̈ւրան կնեգը Հովդեն քշտավը քյընիյիս, մին ղուշ վլելին ըռաշան փախնում ա, կյամ նի մննում իշխանեն կնգանը ծուցը:

Կնեգն ասում ա. «Է, ա ղաշա̈նգ ղուշ, վելելը յրա պրծավ, տո̈ւ նի մտեր իմ ծուցս, ինձ ղուզղունն ա յրա պրծալ, պա ես նո̈ւր ծուց նի մննիմ»:

## 63. ՀՈՒՆԻՆ

Հո̈ւնին նելլի ծաղկում ա, արչն էլ կյամ ա տակեն նստում: Գյուդում ա, թա վեր նելլի յա ծաղկալ, նելլի էլ բար ա տըլական:

Մարթը տեսնում ա, խեղնն ա կյամ, արչին ծեռքան փռնում ա, տանում գյուլլասուն տակեն նստըցնում: Գիլասն էլ թա̈գա

հսած ա ընո̈ւմ, արշը յրան ա պրծնում օտում, խարաք տեռնում:
Հո̈ւնն ընդղան ասում ա.
— էլհա կյալ բդիս իմ կոշտս, ֆու դա̈րմանդ ես ըմ:

## 64. ԸԼԲՍՏՐԸԿԱԽՈՏ

Փափուկ, փափուկ, տմացկան սարու խոտ, վեր ըլբաստրակը տրեխ ա անում, կյենում: Համ էվոկ ա շո̈ւնո̈ւմ ո̈ւրան տոնը սըրփում, թնջուկավն էլ աշկերը սղալում ա: Ըլբաստրակը միշտ էն ա ընո̈ւմ էդ խոտեն մաշին նստած:

## 65. ԴԱԴԻ

Ասում ըն Դադին Հային ամենատորճաչ ախպերն ա ըլալ, վեչ դա̈րդ ա ըլալ, վեչ դեյդ: Արըզ ա ըլալ, պար ա եկալ, երֆ ասալ, սաղ օրն էլ էն ա ըլալ ֆեփու մաշի: Վեր հացն ու կյինին պկասալ ա, ախպորցը թողալ ա, ֆյեցալ ո̈ւրո̈ւշու տոռնը: Մինչև մհենգ էլ էն ա ո̈ւրո̈ւշու տռան, ո̈ւրո̈ւշու ծերֆու յշիյիս: Ըմանում չի թա կյա: Տա հետե էլ խաղ, երֆ ըսեխս հայերը միշտ Դադուն ըն տամ, թա. — Հեյ Դադի՛, հիշտե՞ղ ըս, հե՜յ Դադի...

## ԱՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ՄԵԶ ՀԱՍԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 66. ԱՆԱՀԻՏ

Հացվա կլեռան տեն, Ըրվալուք սառան մոտե մին վանք ա ըլյալ, անումը Անահիտ: Վանքը էն ա ըլյալ Ըրքանուն տափումը: Կոխկե հղըցեն էլ ըսեխս ըն ըլյալ Ըրքանուն հղե: Հացվա Անահիտին ըխպռան կնանեքը կուժավ նուր ըն ըլյալ տանեխս, վանքեն քարերը լվընայիս, հանցու թոռ կյա: Առաշտ տարեն վեր վանքեն քարերը լղըցրալ ըն, թոռ ա եկալ:

### 67. ԹԱՔԱՎԵՐԵՆ ՊԱԼԱՏԸ

Տումի գյուղի հարավային կողմում կա «Տանմոտա» կոչվող մի բլուր, ուր եղել է թաքավորական պալատ: Բլրամոտ աղբյուրն էլ անվանվում է «Թաքավերեն ախպյուր»: Կան շենքերի փլատակներ, խեղված գերեզմանաքարեր:

### 68. ՂԱԼՔԱՐ

Տումու շրջակա սարերից մեկը կոչվում է Ղալքար (Բերդաքար): Ասում են այդ սարից ստորերկրյա ճանապարհ էր իջնում Տումի: Տումից մինչև սարի գագաթը փողորակով (թունգի) ջուր են տարել, ինչպե՞ս, հայտնի չէ:

Ստորերկրյա թաքստոցը դարեր շարունակ հին ամրոցի բընակիչներին պաշտպանել է թշնամիներից:

## 69. ՔԵՖԱՁՈՐ
(Տումի գյուղի մերձակայքում)

Մի գեղահրաշ հովիտ է, որ գտնվում է Իքակ գետակի ափին, Կռափ քարաբլրի հայացքի առաջ: Այնտեղ կա հանքային բուժիչ աղբյուր: Ինչպես անունն է հուշում, հովիտը բնակիչների ուրախության վայրն էր, հիվանդների հույսն ու ապավենը:



Եկեղեցու դռան ճակատանախշ (17-րդ դ.)

## 70. ԻՐԵՔ ԾԱՌ (ԿՈՒՅՐԱԽՊՅՈՒՐ)

Դրանք երեք հսկա ճյուղատարած ընկուզենիներ են, որ երկինք են միտել խաչմաչ գյուղի դիմաց: Ծառերն աճել ու զորացել են Վերին աղբյուրի ջրերով: Հիմա աղբյուրը չկա, մնացել է անունը՝ Կույրախպյուր:

Պատմում են, որ գյուղ կար աղբյուրի կողքին, որտեղ մի սիրուն աղջիկ էր ապրում: Մի անգամ աղջիկը կուժն առած ջրի է գնում, իսկ տղան սպասում դարձին: Ջուր-վիշապը կլանում է շտապող աղջկան: Սիրատոչոր տղան փնտրում է և միայն դիակն է գտնում խայտացող ջրերի վրա:

«Չորանաս, աղբյուր, կուրանաս, աղբյուր»,— մղկտացել է երիտասարդը:

Տղայի անեծքից չորացել-կուրացել է աղբյուրը։
Ցամաքած աղբյուրից երեք ծառ է զորացել։

## 71. ՔՈՒՉԱԿԱՎ ԼՑՎԱԾ

Ղզղալա գյուղում մի թթայգի կա՝ Քուչակի բաղ, մի ակնաղբյուր կա՝ Քուչակի աղբյուր, մի մառուռ է եղել Քուչակ անունով։

Ասում են աղբյուրի մոտ մի սիրուն խաչքար կա թաղված, որ մի ժամանակ կանգնած է եղել մառուռի առաջ։

## 72. ՓԼԵԿ
(Ղզղալա գյուղի մերձակայքում)

Օխտը եխծե յա րլյա՛լ, Մեծ շաշավը յոխ փոլ ա եկալ, ընգալ վեղեն տակը։ Մնացալ ա մինակ մինը՝ Սիկունց եխծեն, էն էլ դուշմաններն րն քանդալ։

## 73. ՎԵՐ ԵԿԱԾ (ՔԳՔԱՏԵՂ)
(Աշան գյուղի մերձակայքում)

Առաշվա Աշանը Սարփընուցա ճովղումնա րլյա՛լ, մեծեգի Դուզարտերեն տեղը։ Ընդղավ քյեցած Քարաճարթավը, Ծյորոտավը, Վսկըխաշավը, մինչև Ցեց քարը մեծ քաղաք ա րլյա՛լ։ Մեծ շաշավը տները պարան ա եկալ, ժղովուրթը քոշալ ա ըստեղ-ընդեղ, մին փարան էլ խութին բռաշին շեն րն շինալ։ Վեր շաշեն րլյա՛լ ա, շենին կյետն էլ տափեն տակեն ա մնացալ։

## 74. ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ, ՊԻԾԻ ՆԱՀԱՏԱԿ*

Էրկու քուր րն րնում. մեծը Մեծ Նահատակն ա շինում, պի-

---

* Ըստ ավանդության Նահատակ կոչվող վանքերը իրոք Անահիտական տաճարներն են (ծ. բ.)։

ծինը՝ Պիծի Նահատակը: Սահանք öւրանց հորը շատ ըն ընում արիյիս: Իլխան վեր կյամ ա, փիս մարթիք շատ ըն ընում, հորը չրչարում ըն: Էրկու քուրը կննչկյարմուր ըն տեռնում, յրգինքան կախ ընում: Հարը կննչկյրմուրան փոնում ա, եր ընում երգինք:

## 75. ԹՈՒԹԻՆ ԱԽՊՅՈՒՐ

Թութին մին սվըկյարի նախշուն ախնիգ ա ընում, լավ երգ ասող, լավ պար կյվող: Թուքմաննեն հիշտեղ նրան սպանում ըն, ընդըղան մին պրզանյուր ախպյուր ա տուս կյամ, անումը տնում ըն Թութուն ախպյուր:

Վելելնեն Թութուն մեյդը յոր ըն օնում, սոքպար ընելավ տանում Ցղնախութ, էն պեցիր տեղը թաղում: Ընդղան էլա մին ախպյուր տուս կյամ: Անումը տնում ըն Թութուն ախպյուր: Հիշքան ղաշանգ ղուշեր կան Թութուն ըխպրին ակնան ըն տուս կյամ, հանցյու վեր öւրան երքերն ասին, öւրան պարերը կյան, սրտենը սեղ տան:



**Եկեղեցու խոյակ. Պիծի Նահատակ, Բերդաշեն (12-րդ դ.)**



Եկեղեցու խոյակ. Պիծի Նահատակ, Բերդաշեն (12-րդ դ.)

## 76. ԱՂՋԱԲԵԴԻ

Էրկու հայ ախպեր ըն ըլալ Աղաջանն ու Հարաբեդը: Նահանց ընուման էլ շենին անումը տեռալ ա Աղջաբեդի: Նահանք դü-

մուրչեf ըն ըլալ: Մինչև մինեւնգ էլ fշերը նանանց fուրան կածեր ա ընում երգինfը:

## 77. ՔԱՐԱԽՊՅՈՒՐ (ԱՂԲՈՒԼԱՂ)

Հնում կոչվել է Աղվան։ Կառուցված է եղել հիմնականում տեղական սպիտակ fարից։ Այստեղով է անցել Պարտավ-Ամարաս մեծ ճանապարհը։ Վանքի սրբատաշ fարերի մի մասը օգտագործվել է եմիշճան գյուղում տներ կառուցելիս։ Վանքի ձորում կա մշտակարկաչ աղբյուր, որի մոտ եղել է իջևանատուն։

## 78. ՂԱՅԱՄ

Ըստ սասցողներ Աթանես Ավագյանի, Մովսես Սևիկյանի, Ծուքյուր Խաչատրյանի և այլոց, Աշանի բնակիչները սերում են Գեղամա տոհմից։ Գեղամա տիրույթը Արցախի Միջնաշխարհն էր, Մեծիրանքի մի մասը (Մեծ Հարամի), իսկ նրա հովոց տեղին Արցախի բարձրանիստ լեռնաշխարհն էր։

«Մունf Ղյամա ցեղան ընf բհամ եկալ: Ղայամն ու Ղազին ախպերf ըն ըլա̈լ, Ղայամը՝ մեծը, Ղազին՝ պիծինը: Մեծ դերն ասար՝ առաջ շնթկենն լոխ բրկը-երկու վրն ըլալ՝ Ջոլու Աշան, Սարու Աշան, Արանու Ավդուռ, Սարու Ավդուռ, Ներfե շեն, երե շեն, Ղուզե ճարտար, Գյունե ճարտար։ Համին շենին ժղովուրթը ամեռնը սարեն շենումը կենար, ծմեռնը՝ չոլումը՝ Ըրասխեն յա Քյուռեն դրաղեն։ Համա թամամ fոչին ուչ, ամեն տանա մարթ մնար, տարվա ամեն վախտ շընթկներումը մարթ ընար: Առե վանfերն էլ ա ըլալ տի։ Շենը չոլումն ընար, վանfը՝ սարումը։ Վանfը միշտ պեշիր տեղ ընար, համ էլ շենան հեռե։ Հանե Ըմարսա fաղաfը, էնա ըլալ Ըլըրքայի, ամա վանfը fանե վերստ տեր ա ըլալ»:

## 79. ՄՌԱՎԱ ԿԼԽԵՆ

Վաչական թաfավերը վեր մեռալ ա, տարալ ըն Մռավա սարեն կլխեն թաղալ:

Ամեն տարե ն... խոխերը պցրընայիս ըն ըլալ Մռավը,



Սափոր վիշապանախշով. Բերդաշեն



Վիշապ. Աշան

կյրզմանան էրկու ճափուռ վեղ fամուն տայիս: Ասըմ ըն, ճäրը մինչև մեռնելը տի յա ըլալ թափշուր ըրած:

## 80. ԲԼԱԿԵՆ ԾՈՐԸ

Ծորեն ղրաղեն, Նհըտակա վանfեն հղեցը յրան մին կննչկյարմուր եխծե յա ըլալ, տուսի պտերեն ըստծու պատկերը fաշած, մաչկուսի պատերն էլ վսկըճրած, ըրծթճրած: Ըշկըճանիչ ա ըլալ: Եխծեն վէր fանդալ ըն, ծöրեն անումը մնացալ ա Բլակեն ծորը:

## 81. ՈԽՎՏԱՐԱՆ

Ուվտարանը սորփին կյրին խաթրու վըն շինալ: Սավեգը սորփ մարթ ա ըլäլ, սորփին կյիրն էլ Կրիfոր Լöւսըվերեչը öւրան ա տվալ: Շնըրթունը շինäլ ա, կյիրը տրալ մաչին: Ժողովուրթը նի յա մտալ ղոթալ, պենն էլ օնգատն ա ընգալ:

## 82. ԱՆԱՀՏԱԿ

Հացի գյուղը եղել է Աղվանից աշխարհի կաթողիկոսի ամառանոցներից մեկը: Հացու գերեզմանոցում են թաղված Աղվանից կաթողիկոսները: Հացու մեծատարած անտառները որպես որսատեղի են ծառայել նաև Պարտավի թագավորների համար: Գյուղից ներքև, ձորաբերանին, կա մի աղբյուր, նրա դիմացի բլրին եղել է վանք, որից մի խաչքար գլորվել-ընկել է աղբյուրի մոտ: Վանքը, աղբյուրը, ձորը, անտառը Անահիտի անունն են կրում: Ըստ մի ավանդության, Անահիտը այն նախրապանի աղջիկն է, որին Վաչագան թագավորը Պարտավ հարս է տարել:

## 83. ՔԱՐԵ ԴԱԳԱՂՆԵՐ

Գիշում գտնվել են տասնյակ փոքր ու մեծ քարե դագաղներ, որոնց մի մասը հիմա գտնվում է գյուղի խոզաբուծական ֆերմայում, մյուս մասն էլ մասնավոր տներում:

## 84. ԱՄԱՐԱՍ-ՔԱՂԱՔ

Մեծ, հարուստ քաղաք ա ըլալ, տարեն պուլուր ամեոնք մաշին խաղ ընեիս: Տա հետե էլ Ամարաս ըն ասալ: Ամարասա ըխնըկերքը սերուն ըն ըլալ, անումը մինչև Ղարս քյեցած: Լոխ փըթալ ըն, կյուղացալ ըն տարալ: Հին խոսկ ա. «Ամարասա տոխը տարեն էրկու հետ նոտեր կանե»:

Ամա Ուշաղա ըխնկերքը Ամարասա ըխնըկուրանցան նախշուն ըն ըլալ: Տա հետե ասալըն. «Հիշտեղ քյընիս օշաղը սերուն»:

Իմ սկեսուր պատմար, մարը Ըմըրասա յա ըլալ:

## 85. ԱՄԱՐԱՍ-ՎԱՆՔ

Ըստծու օծը վանքեն տված ա: Հու վեր խնթիրք ա անում, կնգանը փորումը ախճիգը տղա յա շöւնöւմ, տղան՝ ախճիգ: Հայերն ըն հնարալ, հանցու թորքերը վանքը քանդին ուշ: Տի էլ տեռալ ա:

## 86. ՀԵՐՇԵՆ

Մինչև աշանցիների վերաբնակվելը այստեղ փոքրիկ գյուղ կար:

«Վեր ըշընեցեք Ղուզարտերան քոշալ ըն, շնըտեղու շատ շոռ ըն եկալ, եկավ ըստղես հավան կացալ: Վեր շենը շöւնöւմ ըն, շենին մաշտեղան Դաստա ապոռն ու öւռան ազկեն վեղ ըն տամ: Թäզա շենումը եխծե շնիլի պադեվն էլ ըն տամ Դստանց ազգեն: Շենին աշի ընգյունին Ղազունք ըն տոն շöւնöւմ, ծեխե ընգյունին՝ Ղայամանք, ներքե ընգյունին՝ Պռավանք ու Շöւնդունք:

## 87. ԱՇԱՆ

Հին ու նշանավոր բնակավայրերից է: Գյուղը երեք անգամ բնափոխ է եղել, չլքելով իր բնաշխարհը: Ունեցել է Վակախաչ, Պղնձիխաչ, սուրբ Ստեփաննոս, Խութին սարփ, Ավետարան, Աստվածածին, Ղուզարտերեն եխծե սրբավայրերը, Ըշանաբերդ, Մահասրո, Մոթ, Յղնախութ, Սղնախ, Հաշու բերդերը, շուրջ քառասուն հազար հեկտար հողատարածություն (անտառներ, արոտավայրեր, վարելահողեր), արհեստանոցներ, հալոցներ, սրանոցներ, ջրաղացներ, գեղեցիկ լեռներ ու բլրաշարեր, բնական աղբյուրներ: Աշանի ձորը Եղնախութ սարից ձգվում էր մինչև Երգայի նահանգը: Նրա հողատարածությունները Մուշկապատի սարափեշերից հասնում էին մինչև Աղդամի մատույցները (այդ մասին կոնկրետ վկայություններ կան մեզ հասած չափածո ստեղծագործությունների մեջ):

Բնիկ ազգերն են. Ղյամանց, Ղազունց, Պռավանց, Դստäնց, Շöւնդունց և այլն:

## 88. ՍԼՈՒԿՆԱՄԱՎ

(Թաղավարդի անտառամերձ մի վայր, ճահճուտ)

Այստեղ բժշկվելու էին գալիս բոռոտները, քոս ու քոռ ունեցողները: Ճահճուտը առատ է տզրուկներով: Մարմնի հիվանդ մասը մերկացնելով՝ հիվանդը ընկղմում է ջրի մեջ: Անմիջապես

ագռավները վրա են թափվում և ծծում կեղտոտ արյունը: Հիվանդը կազդուրվում է:

## 89. ԱՎԵՐԱԿ ՊՈՐԹ

Գտնվում է Մեծառանքի (Մեծ Հառամի) կենտրոնական մասում: Բերդից հեռու չեն Եռամասունքը՝ արհեստական երեք բլուրները: Մեծ իշխանը կենդանացրել է հին բնակավայրը: Հայերը Արաքսի ջուրը բերել, հասցրել են այստեղ: Այստեղ միախառնվել են երեք գետերի՝ Արաքսի, Քոի, Կարկառի ջրերը: Նրանց գրկախառնումից ծաղկել է Մեծառանքը:

«Մեծ իխշանը քաղաքումը քառասուն եխծե յա ըլըլ շինած: Տնանցա մնին անումը Չլըպեղեգ եխծե յա ըլըլ: Ըսկացալ ըմ, թա սաղ պատերը նախշած ա ըլըլ: Ամեն տեղա եխծուն հետն նախշած քար ըն տարալ: Ղզլլան էլ ըն տարալ»:



Խաչքար (10-րդ դ.)

## 90. ՀՈՎԴԵՆ ՏԱԿԸ

էրկան քարեն տափումը, Հովդեն տակեն Մեծ իշխանը էրկան քարեն ըրկընթունավը պալատ ա ըլալ շինած: Վեր մուսուլմաննեն կյամ ըն Քարեն հարթը կրակ տամ, իշխանը կնգանը, խոցը նհետ Դաշթփա փախնում ա, կյամ էրկան քարեն պալատը:

Ետնան էն էլ ա ծրան տեռնում:

## 91. ՇԵԳՅԱՆՑ ԱԶԳ

Բազմաթիվ ասացողներ, վկայակոչելով հինավուրց զրույցները, հավաստում են, որ հայերը ըստ իրենց մաշկի գույնի բաժանվում էին Շեկյանների և Սևորդիների: Սևորդիներն ապրում



Գոնչա իշխանուհու կնիք-մատանին (13-րդ դ.)

էին դաշտային արևախանձ շըրջաններում, հիմնականում Միլ ու Մուղան դաշտավայրերում, կասպիական ավազուտներում:

Շեկյանների բնակատեղին, Կարդաշեն—Նուխի—Ջաֆարալա տարածքն էր Շաքի/Շեկի կենտրոնով: Սրանք ճերմակամաշկ, շիկամորուս, խաժակն ու զանգրահեր հսկայացեղ մարդիկ էին: Չկարողանալով դիմադարձ կանգնել օրավուր զորացող թշնամուն, հնաշխարհիկ հայացեղը պանդխտում է աշխարհի տարբեր կողմեր, մասամբ էլ խառնվում Ղարաբաղի լեռնային գյուղերի բնակիչներին:

# ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 92. ԴՐՂԱՆՑ ԱՌՍՏԱՄԵՆ ՔՅԼԳՆԵՐԱՆ ՄԻՆԸ

Քյալա̈գ կյալը սվուրութք ա ըլալ: Անտես-աննանաչ մարթին էլ ըն քյալա̈գ եկալ, մոտե ճնգերեն էլ: Քյալա̈գ կյվողեն քեփին վեչ մինը նի չի եկալ, սիրալ ըն, ներալ ըն, ծծա̈ղալ ըն, քյեփ ըն ըրալ: Քյալա̈գը մեր ըպրուստան անպակաս ա ըլալ:

Ես կպատմիմ Դրղանց Առստամեն քյլգներան մինը: Առստամը մեր խոցը ճարն ա ըլալ: Կտրվե նա, ճունցու կտրվալ ա:

Առստամը շատ քյալա̈գչի յա ըռնում, քյալագը Դրղանց տըված ա:

Դբրուզյուն ար, կյրեկի, որը կռնալ ար ծվերեն յրա: Քաշկա ծորեն ընգյունան, խուտուր ճղըցավը, շենին վեխնարը կյամ ար, անցկենում Մեծ Ճնըմաչավը: Մին սև ղոչ, զինքը շղճըրելավ, ճնրսըգ լխլխայիս ամակը աչուծեխ շպրտուտելավ անց ար կենում:

— Արա, ճո՞ւրն ա էս ա̈պամաթը:

— Սիմոնանց Աթանեսինն ա:

— Հու վեր կարե քյուճ-քյալա̈գ անե, էս վեխնարը մորթել տա, մունք էլ նեստա մին թքյա օտինք, ես նա տղամարթ կա̈սիմ,— ճորթուր կարթից Դերունց Դավութը:

— Առստամը մեռալ չի, ճելլի էտ մսան կոտիք, ամա ծըպուտնեղ եր չանիք: Հու վեր սանա ետը էս վխնարան խոսե, աղի մուկուն օտե, վխնարեն ամակը ո̈ւրան կնզանը քմական կախ ընի, Քուչակա ախպյուրը քյընիյիս ծեխե անգյունը Ալի խութա թիխե, աչինը՝ Ենծուն խութին: Հասե, ասում ըմ, էքուծ վխնարեն կեսը խրվլական ընք, ըստի ճնգերավ օտինք, էն մին կեսն էլ կյլական ա մեր տռնը՝ էյսվա ճետե:

Որը պենդ մթնում ա, մարթիք ցրև ըն կյամ, քյընում ամեգը

ուրանց տները, մին քոռ թոխպ էլ կյամ ա յրգինքին աշկերն օ-նում, սև խավարը նստում ա շենքին յրա: Առստամենն ըշկերեն քոն չի կյամ: Առաջին վերցակը վեր կանչում ա, մին մեծ ղար-ղու վա յոր օնում, մաշը թմզցընում, մաշավը մե հետ փչում, տեսնում վեր լավ ա, կռուտակեն տնում, հայղա, բղի Սիմոնանց Արանեսին տոնը: Տանը պատեն տակեն վենն ա կենում՝ տես-նում էն ա լուսածակը կսըհար, Արանեսն էլ պտրհանեն բռաշին խմփցնում ա: Հանդարղ ղարղուն մտակում ա բղի Արանեսին անզունը, քշըքաշ ու քախծր ծենավ խոսում:

— Արանես, Արանես, վախիս ուչ, վեր զուրթնանաս, էլ աշկերդ պեց չանիս: Ես Հիսուս–Քրիստոսն ըմ, քու պարիտ ըմ օզում: էն ա մին սև վեխճար օնիս, էքուծ Դրղանց Առստամեն ծեր տռանը մորթել կտաս, կեսը ղարկիս ուրանց տոնը, կեսն էլ ինքը հուրու ասե, ծեր տնըհվեն ննետ մինտեղ խրամած կանիք օտիք, փառք տաք Քրիստոսեն, հանցու խոխեքդ եթիմ չմնան: Հանց բրա անիս հա՞, թաշէ խոխեքդ եթիմ կմնան: Արա, սկա՞-ցալ ըս, թա նորն ասիմ:

Արանեսը բաղրյար տեռած ասում ա՝ սկացալ ըմ:

Առստամը հանդարղ քաշում ա ղարղուն, անցկենում քյընում:

Առստամենը քյընիլանը եսը Արանեսը սերուն զ֊ուրթնանում ա, աշկերը հըլըղորում, եր կենում, շորերը դնըղեհա կյենում, կնզանն էլ եր կցնում, հունչու վեր բրազի տեսալ ա պատմում: Կնեգը մումը նի յա կցընում. «Վո՞յ, իմ իրեսս քու վեննանեղ տա-կը, ա Հիսուս Քրիստոս: Աղա, մին վեխճարը հի՞նչ ա, լուսա-նալն ըբաք, քյընի էն մարթին պեր, մորթել տո, Առստամը պա-րի մարթ ա: Լուսը ծըլա սորվա ուռքունեն յրա»:

Առստամը զյուղում ա, վեր ուռքանա քշերավ Արանեսը հե-տան կյըլական ա, հեյլի եր ա կենում, ծին թամքում, տռանը կա-պում, յանի՝ օրիշ տեղ ա քյննական: էդ վա՜րումը Արանեսը կյամ ա: Տեն ա տամ Առստամեն, կնեգը տուս ա կյամ:

— Ախնի, տու չըս հարկավեր, Առստամն ա հարկավեր, ա-սե մին տուս կյա:

Առստամը տո՜ւս ա կյամ:

— Պարի լուս, Արանես, կօզի հըըցու յրան ընիմ, եկ մին-մին կյեվաք արաղ խմինք, լուսն օրհնինք, էլհա հունչու կասիս, կասիս:

— Շնուրհակալ ըմ, Առստամ, վեննես դըքառաշ չըմ տննական,

համ էլ հի՞նչ հղե, հի՞նչ պեն. սօր մեր տնըցե յըս, հա̈չաթ-մշութդ հվաքե, քյընձական ընք մորթ անինք:

— Արա հի՞նչ ա պտահալ:

— Քշերես սատոծ թափշուր ա ըրալ, վեր տու կյաս մեր սև վեխնարը մորթիս, մատաղ անիս, հանցու խոխեքս եթիմ չմնան:

Քյընում ըն: Առստամը վեխնարը մորթում ա, Աթանեսը կե-սը տամ ա հըրվանեն, վեր տանե Առստամեն տոնը:

— Արա, Աթանես, քզ էտե հի՞նչ ըմ ըրալ, վեր ինձ լվոթուն ըս անում, վխնարեն հինչին ըմ սեռ:

— Սուս ըրա, հալա̈ էս մին կեսն էլ հունչու ասիս, ընդի յընք ըննական:

Իրավունքն Առստամենն ա: Ծեն ա տամ շենին օտող-խմող տղորանցը, ըրգյվա շնըմաշին մարթունցը, օտում ըն-խմում, ըրխոթունը տեղ տամ: Առստամը կյեվաթը յոր ա օնում, հուն-ցու ըլալ ա ընդի էլ պատմում: Լոխ ծծըղոտում ըն, Աթանեսն էլ նահանց ննետ:

## 93. ՀԵՆԳ ՀՆԳԵՐ

Հենգ հնգեր ըն ընում. մինը քոռ, մինը քառ, մինը տկլոր, մի-նը կաղլեգ, մինն էլ քաչալ: Էն ըն ընում հղե քյընիյիս: Հղեննի քոռն ասում ա.

— Հոնանցե մին ղըլթու վա ըրվամ:

Քառն ասում ա.

— Ղորթ ա, սուս ըրեք, սա̈ս ա կյամ:

Տկլորն ասում ա.

— Կյլական ըն մեզ պլոկին:

Կաղլեգն ասում ա.

— Էկեք փախնինք:

Քաչալն էլ ասում ա.

— Վեր տի խոսում ըք է, մազերս բիզ-բիզ վենն ա կենում:

## 94. ՔՈՒ ԴԱՐԴԴ ԸՍ ՔԱՇՈՒՄ

Հար ու վերթի՝ էն ըն ընում թնըխարավ ուտեիս: Վերթին ա-սում ա.

— Ապա, հանց բեղար, ծվեն մինը մին ծմրուկու մշանք ը-
նար:

— Հա շան տղա, էլնա ոխեղ դա̈րդն ըս քաշում, է, նավեն վեռեն դա̈րդը քաշում չըս:

## 95. ԷՍ ՀՂԸՑԱՎԸ ՉԻ ԿՅԱՍ

Մին շուլըցե մարթ էն ա ընում քյընիյիս Ծիծեռնավանք: Մին շենավ անցկէնայիս մին կնեգ վենն ա անում.

— Ա դարիբ մարթ, հանց ըս հեռե տեղա կյախս, հեռե տեղ էլ քյնիյիս, եկ մին սառաքան արաղ խմե, էլ հա հղեղ քյընի:

Էս կնգանը ընում ա մին ղզղան իփած լոքի, մին ղզղան իփած կրտոփի, օխտը հաց: Մարթը նստում ա լոխ թմփըցնում, եր կենում վենը կենում:

Կնեգն ասում ա.

— Ախպեր, ասե տեսնամ՝ հի՞շտեղ ըս քյընում:

— Քյընում ըմ Ծիծեռնավանք մատաղ անիմ, շտանիս պենավա:

— Հանց ապրիս, ա հայ, եռ տոնայիս էս հղըցավը չի կյաս, թա չէ խոխեքս կմնան տո̈ւզնը:

## 96. ՄՌԱՏԱՆԸ

Մարդիրոսը, խմած լո̈ւլ տեռած, կյամ ա մռատոնը: Սառաքանը յոր ա օնում. — Ամենափիս օրը ըստի ընի:

— Մարդիրոս դայի, սու ըրա, մռատոն ա, Կրիքոր դային մեռալ ա:

— Կրիքոր դային մեռալ չի, մունք ընք մեռալ, նա քեցալ ա ո̈րան տոնը, մունք ընք եթիմ, մունք չօնինք տոն: Համ էլ, Կրիքորեն տղա, ես վեր ըստըղավ անց ըմ կացալ, Կրիքորը առանց արաղ ինձ պեց չի թողալ, ասալ ա՝ եկ մին սառաքան արաղ խմե: Տու վէլ ընիս ընդի, ես էլ նեղուբուն քաշիմ, կյամ արաղ խմիմ:

## 97. ՄՀԽ ՊՏԸՀԼԱԿԱՆ Ա՞

Մին ծմռնվա օր Հանեսը մթընմթեն էր ա կենում ֆյընում վէր-սի:

Հրևանն ասում ա.

— Հիշտե՞ղ ես ֆյընում:

— Քյընում ըմ վէրսի:

— Պա խե՞ թվանգ չըս էր կա՛լա՛լ:

— Մնե պեն ա պտնիլակա՞ն:

## 98. ԷՆ ՄԻՆՆ ԷԼ՝ ՄՐԹԸՎԱՐԻ

Թունին ֆյընում ա տեսնում՝ մին մարթ էրկու նվարան խա-ղու վա ծախում: Ասում ա. — էրկու մանեթ տամ, թող ստիմ ֆուշտանամ:

Տարը համաձայնում ա:

Թունին նիթը յոր ա օնում, տնում պրանումը, ֆաշում, ներնը տեն ֆգում: Ծախողը մուտանում ա.

— էդ հո՞ւնց ըս ուտում, մրթըվարի կէր:

Թունին ասում ա.

— էն մին նվարանն էլ մրթըվարի կստիմ:

## 99. ՊԱ ԽՍ ԿՅՐԱՓԱՐ ԳՅՈՒՂՈ՞ՒՄ ԸՄ

Ռուսը կյամ ա ղարաբաղցե պռավեն, թա.

— Կա՛կ ձելա, բաբուշկա:

Պառավն ասում ա. — Այանը մատաղ, պա ես կյրափար գյուղո՞ւմ ըմ:

## 100. ԽՈԶԸ ՀԻ՞ՆՉ ԿԱՆԵ

Հրևանը հրըվանեն կնգանն ասում ա.

— Ծեր խոզը եկալ ա մեր նրին կոլան պարան տվալ:

— Օզում ըս, մեր խոզը կյա ծեր նրին կոլան լցնե՞:

## 101. ՀԹԸՅԱԹԱՎ Ա

Մատին տղնըցավան ըղնում ա: Ասում ըն.

— Տանաս նոր մին վիչիլ կնի, տանք ուրան օտխ, սղանա:

— Խասունց Սաքին նըքըյաքավ ա, քեցեք նա կոչտը:

## 102. ՊԱ ՔՈՒ ԸՐԱԶՈ՞ՒՄԴ

Մին մարթ ըրազումը տեսնում ա կնեզը ուրուշու ննետ սիլի-բիլի յա անում: Զուրքնանում ա, կնգանն էլ զուրթնուցընում, սկսում վեր թակելը:

— Ծան քած, վեր իմ ըրազումս տի յըս անում, պա քու ըրազումդ նի՞նչ կանիս:

## 103. ԽՄԱԾ-ՀԱՐՓԱԾԸ

Մինաաը նարփած տոն կյախս, տեսնում ա խոզը նըղըցեն ղը-րաղեն ցեխումը պարանց ընգած խոխոցնեիս:

— Հարեղ, տու վը՞ս, նղանաս ուչ, նետադ չոռ ըմ եկալ, քթալ չըմ:

Տմանցան էշը զռռալավ կյամ ա:

— Հանես, նղղաս ուչ, նիչքան չրըչուղ ըմ ըրալ, քեզ էլ չըմ քթալ:

Կտրան վերցակը լոք ա տամ ըռաչին կանչում՝ ծուղրուղո՛ւ:

— Ուստա Յական, էն ըս տու էլ խմած:

## 104. ՏԵՍՆԱՍ ՀԻ՞ՆՉ ԴԱՐԴ ՕՆԵ

Խասա այան ըղավուր-մրքավուր մին չանիլ ա տեսնում, ծույ-նանը թխում.

— Պաշշ, տեսնաս նի՞նչ դարդ օնե, վեր իրեսը վեր չի ա-նում:

## 105. ՏՈՒ ՊՈՒԸՇԻՍ ՏԻՐ

Կրիֆորը մծացալ ա, ծերֆերը տղտո̈ղում ա, կյինուն լիգյը ամանը մինչև պերանը տանելը տակեն պեն չի մնամ:

— Բալա ջան,— տղեն ա ասում,— տու ամանը լցեր, պոըշիս ղրաղեն տիր, նանա եռը ֆեզ կործ չօնիս:

## 106. ԷՐԿՈՒ ՔԱՌ

Քառը ֆառեն պտահում ա.

— Ախպեր, համամ ը՞ս ֆյընում:

— Չէ, համամ ըմ ֆյընում:

— Հա՛, գյդացե թա համամ ըս ֆյընում:

## 107. ՄԻՆ ՏԵՂ ԿԿԱՆՉԻ

Թո̈ւնին մին շենում ղոնաղ ա ըղնում: Տնատարը մին չկամ մարթ ա ընում, ասում ա. — Թո̈ւնի, տու վրցըկանչին եր կկենաս, հանցու կարիս սրինավ տեղ հսնիս:

Թո̈ւնին կլոխ ա ըղնում, վեր տնատարը մտադիր չի ուտթըննեն հացը տա:

Քշերը ֆոն չընում: Քշերը կսիլու եր ա կենում, տնատեռնը կնդլակ մին վերցակ ա ընո̈ւմ, փոնում տնում խուրջինումը, տանան տո̈ւս կյամ:

Տնատարը զո̈ւրթնանում ա.

— Տնաշին, կաց վերցակը կանչի, եռնան եր կաց, ըլի:

— Վեչինչ, վերցակը հղեննի էլ կկանչի:

## 108. ՄՈՒՏԱՆԱԼԴ ՀԻ՞ՆՉ Ա

Մատին ու Պատին, մինը ծո̈րեն էն ընգյունան, մինը էս ընգյունան, ո̈ւրո̈ւր էն չի մնամ վեր ասին ուչ:

Մատին տսնալավ վեր Պատին պո̈ւլերը կոխ ա տամ, պծըպիծի մուտանում ա:

— Արա, Մատի, էդ լՆա խոսեյը՝ խոսել, պա մուտանայդ նի՞նչ ա:

## 109. ՀՆՏԴԱ՞ ՔԹԽՆԱՄ

«Նանե,— Բաֆվա թոռնն ա կյրում,— մին նալալ կթնակեր ֆթիր, ամեռնս կյամ փասկվիմ»:

«Նանը ֆե մատաղ, մնենգ նալալ կթնակեր կա՞, լոխ սգուշոնի մալակո կերած ըն»:

## 110. ԽՏ ՉԻ ՄՆԱՄ

Կյափին ու Ափին լուսըծլլոցեն ֆյընում ըն նոնձ:

Վեր մին խիլլա անց ա կենում, Կյափին ծեն ա տամ.

— Արա, ֆանե՞ խորթն ըս ննձալ:

— Տասան ինն ը պակաս: Տու ֆանե՞նն ըս ննձալ:

— Վեր ինն էլ ննձիմ՝ տասը:

— Քզանա ետ մնողեն նանը ծախիմ:

## 111. ԽՈՍԿԵՆ ՏԱԿԵՆ ՉԻ ՄՆԱՄ

Ղևին էն ա ընում ծմակեն ղուրուղը նրեյիս:

Հնդապանը կյամ ա թա. — Ղևի, ֆանե ետե չի, էշդ ծալի տիր ֆյնդիրին յրա, ֆյընի տոն:

— Դե լավ, լավ, նալա լուսը պեցվալ չի, գյոլը յոր ըս օնում, ֆարեն կյամ:

## 112. ԽՍ ԿԴՅԻԴԱՄ

Խաքարը նսնում ա Ափուն, թա կնգանդ Վրարակը տարալ ա:

Ափին սկըսում ա նուրնըեր շոռ կյալը:

— Ա տնաշին, նուրնըվեր ֆյընի, նուրնըե՞ր ըս ֆյընում:

— Ես իմ կնգանս խասյաթը գյուղում ըմ, տանն էլ ա տի, ամեն հինչին հակառակ ա fյընում:

## 113. ՃՐԱՔԸ ՄԵԽԿ ՋՕՆԵ

Դեր Մուfըյելը մին թանրավ տաոկապ ընեյավ ժամումը ավետարանը կրթիյիս ա ընում: Ճյլը-նեյլի շիլ ա ըղնում, կմկմամ, հազում, նղնղամ դրըցուվեն յրա. — էդ ճրաfը կարfեն պահե: Տառերը պրանումը հղլուղուրեյավ պատառ էլ ա կարթում, էլ հա դրըցուվեն յրա պրծընում.

— Ասում չըմ՝ էդ ճրաfը կարfեն պահե:

— Աղեր, վեր մին տիզ էլ ճի կցընիմ fշտեղ պահիմ, էլ հա տի յըս կրթըլական, ճրաfը մեխկ չօնե:

## 114. ՄԻՆ ՕՐՈՒՄԸ ԿՃՆՋԻՄ

Պցիրան մարթ ա կյամ շենը, Պենին fյընում ա կոշտը, խնթրում, վեր պարեխոսե, ուրան մին դինջ կործ տան:

Ոտյոնան եկածը հրցընում ա. — Կյրիլ-ննջիլը գյուղո՞ւմ ըս:

Պենին ասում ա. — Կյրիլու ճնեռ կործ չօնիմ, ամա մեր կոլխոզումը հիշfան թոխտ կա, մին օրումը կննջիմ:

## 115. ՊԱ ԿԱՍԻ՞Ն

Խոսf-խոսfու վա կյամ մին մարթ մնին վեխճար ա ասում: Սա fյընում ա Կափրիբեզին կոշտը կյենգյատ. թա. — Ըստի, ըստի, էս մարթը ճնախ տեղան ինձ վեխճար ա ասալ:

Կափրիբեզն ասում ա. — Արա, հմանչում չը՞ս, պա ըստի կյառնը մարթին վեխճար կասի՞ն:

## 116. ՏԻ ԱՊՐԱՆՔԸ ԿՏԱԽԻ՞Ն

Հցեցե Ալխասենեն մին թամբալ, մաշկան բոշ ծի յա ընում: Օզում ա ծախե, կլխան ռադ անե, կյին տվող չընում: Քյընում ա

դալալ Սվաղեն խնթրում, վեր ֆյոմազ անե, ծին ծախել տա: Սավաղը բզարումը մին թարիփ ա սկսում, ընգուններղ վեչ սկսանա: Վեր շատ թարիփ ա անում, Ալիսանը մոտանում ա.

— Սավաղ, էլ ծին ծախում չըմ, պա տի թարիփիլու ապրանքը կծախի՞ն:

## 117. ԱՍՏՈԻԾ ՔՑՈՄԱԶ ՉԱՆԻԼ

— Հե՛ Ավաֆ,— ճրևանեն ա ծեն տամ,— եկ ֆյոմազ րրա, էշին ճակներրը ֆցինֆ յրա:

Ակուփեն խոսկեն յրա Ավաֆը կյամ ա, ճակեն մինը յոր օնում տնում էշին: էն մին ճակն էլ Ակուփն ա պցրցընում, տնում էշին, ճամ էլ օշը կլխեր օնում. — Աստուծ, տու ինձ ֆյոմազ անիս:

Ավաֆը ճակը վեր ա ֆցում.

— Վեր ֆյոմազ օնիս, էլ ինձ ճոր ը՞ս պնըխափան րրալ:

## 118. ԽՏՆԱՆ ԿՏԱՍ

— Ղավանղ, մին տասը մանեթ փող կտա՞ս:

— Չէ, Կարապեղ, ըլածս լոխ ճենզ մանեթ ա:

— Վեչինչ, էղ ճենզը տո, ճենզն էլ ճիթը կընի՝ էն չախը կըտաս, ընիլ չի կմնաս պարտֆ:

## 119. ՄԿՐԱՏԱԿ

Մարթ ու կնեզ մինտեղ ֆյընում ըն ճոնձ: Կնեզը շատ կոխկինա յա ընում. էս մարթը վեչ մին պեն կարում չի կնզանը յրա ճախ անե: Կեսօրեն, րրևեն տրըֆտրըֆուտեիս վախտը, նստում ըն տանձին շուֆումը, վեր դնչանան:

— Տաֆեն թանըը–յոն չօնե,— ասում ա մարթը:

— Աղըբին էլ տաֆ չի, սանա սարին օր չընիլ,— ասում ա կնեզը, եր կենում, րրևեն տակեն նստում:

— Դե վեր սարին ա, տեղ կաց:

կնեգը եշում ա եշում, տեսնում ա՝ մարթը մնա՞լ չի քցում, ասում ա.

— Օրը մթնից, եր կաց մկրատդ եր կալ, քյըռնի արտը հնձի:

— Ա կնեգ, մկրատը վե՞րն ա, արտը չինավ ըն հնձում: Պա քա հոր դվանը վայ տամ:

— Շաշին մինը շաշ, մինչև մնենգ գյուղում չը՞ս, վեր արտը մկրատավ ըն հնձում:

Մարթն ասում ա՝ չինավ, կնեգն ասում ա՝ մկրատավ, ուրուր չլավ կռծում ըն մինչև մթնելը:

Բուզյունը կյետեն ղրաղավը քյըռնիյիս, կնեգը հիրսան ննետ ակըռնում ա ըղնում կյետը:

— Ախնի, էտ ըս խղտվիյիս, մնենգ ըռի՝ վզավ կալ, արտը չինա՞վ ըն հնձում, թա մկրատավ:

— Մկըր... մըկըր... կնեգը խեխտվում ա՝ էրկու մատները մկըրտ-մկրատ ընելավ:

## 120. ՀԱՑԸՆՆԱԿԱՆ ԸՄ ՇՈՒՇԻ

— Մին կյեղ խոխա ըմ ըլալ, իմ հար ծառեխա մին աղվես ա փռնալ, քառասուն հոտ հետան վազ-վազ ընեյիս:

— Էդ հինչ ա՞, իմ հա՞ր էլ էն տարեն բուստանումը մին թաղ խյար ա վարալ, ըրկնացալ ա է՞, հսալ Շոշ*:

— Խյարեն թաղը էդքան ըրկնանալ չի:

— Տու ըղվեսին հոտերեն թիվը խըգյցըրու, թա չէ խյարեն թաղեն պտուկը հսցընենական ըմ Շուշի ղալա:

## 121. ՏԵՍ ԸՆՔ ԿՆՆԱԿԱՆ

— Ա կնեգ, կյարի հաց շատ ընք օտում, մին խըեգ էլ էն ցորնեն ըյլերան քցի, հացը պյծըռնանա:

— Օզում ըմ հացը պատառ տեն կենա:

— Ախեր վեր հացը տեն կենա, մունք էլ տես ընք կննական:

—————

* Ծուշիքենղ գյուղի բնիկ հայերեն անվանումը:

## 122. ՏԱՔՈՒԹՅՈՒՆՈՒՄԸ ԽՈՍՈՒՄ Ա

Արշակը հվնդանում ա: Մին իրեք-չորս հնգեր կյամ ըն զիրավ հնցըրնում: Վեր մին մäնգիլ զրուց ըն անում, Արշակը կլոխը պցրցնում ա.

— Ախնի, տեսա-տենա պեր, արաղն էլ պեր, էս մարթիքը մարթը մին ստաքան արաղ խմին:

— Ասում ըմ՝ հվատում չըն, հասե ըստի յա, ամեն օր տաքությունումը խոսում ա:

## 123. ԾԻՆ ՔՐՏՆՆՔԱԾ Ա

— Էն օրեն իրեք գող տանձ ըմ տվալ, ծիյին թամքեն հետե մին քեշա ինք կäլäլ: Փողեն պենն ա տժեր, փողն էլ վեր ճանգս ընգավ, ա կնեգ, մին ղաշäնգ, ճակատը ղաշխա ծի ըմ ինք ուննական: Ծին կպիրիմ, եր ընիմ, քյընիմ հանդը կյամ, աղուեն էլ կտանիմ ճղըցներումը աղիմ, պիրիմ:

— Լհա վեր ըյլերեն պեռնը վեր օնիս, ես էլ ծին եր կընիմ, քյընիմ իմ հäրանց տոնը, զիրավ հնցընիմ կյամ:

— Շան տղու քած, ծին քրտննքած, եր ըս ըննական քյընիս քու հäրանց տոնը՞:

## 124. ԱՆՈՒՄՍ ՅԱԿԱՆ Ա

Յականը էշին նստած հանդը քյընիյիս ա ընում: Հանկարծ անումը մննան քցում ա, սկըսում ա մտքումը շոռ կյալը. «Պուղուս ա՞՝ չէ, Հարութ ա՞՝ չէ, Սաքան ա՞՝ չէ, Դավութ ա՞՝ չէ...»:

Հիշքան շոռ ա կյամ, կարում չի քթենա: Ինքը öւրան ննետ կռև տալավ քյընում ա: «Անումդ հինչ ա՞, ա հայ, պա բալի մինը հրցընում ա, ջողուբը հինչ ը՞ս տլական: Ասել չի, թա էս մարթը դոնգի յա: Պա դոնգի ըլած ուչ, հինչ ը՞ս»:

Էս քնընքումը հղըցեն էն ընգյունան öւրանց շնացե մին տղա յա տուս կյամ :

— Պարի լուս, Յական դայի:

— Պա ղորմա քա հոր, արա էդ հշտղա քթի՞ր: Հա, Յական ա, անումս Յական ա:

## 125. ՄԻՆ Ա

— Հաթամ, ինձ մին լվոթուն բրա: Եկ քյուխեն քշտեն վկայութուն տո, վեր Պուղուսը ինձ մին ճակ ցորեն ա պարտք, տամ չի:

— Հի՞նչ կընի,— ճամաձայնում ա Հաթամը:

— Հասե, իմ վկաս Հաթամն ա, Պուղուսը ինձանա մին ճակ ցորեն ա ինք կալըն, ուրացալ:

— Մինասը ղորթ ա ասում, Պուղուսը Մինասեն մին ճակ կյարի յա պարտք:

— Կյարի չի, ցորեն ա:

— Մեե վեր սոտ ըմ ասում՝ կյարի ըլած, ցորեն ըլած, մին չի՞:

## 126. ՔՈԻ ԸՍԱՑԱԿ Ա ԸՆՆԱԿԱՆ

Խլղանանց Մուքին շենին մեծ ճղըցեն կոխկեն պիծի տղեն ճետե մին տոն ար շըննում: Հըրցավը անց կենող մին մարթ տեսնում ա, վեր Մուքին ղյդին չի շըննում:

— Ապեր, էդ խե՞ տան ճիմումը խուրդա քարեր ըս տնում, պցիրումը՝ մեծ-մեծ:

— Անցվեր ախպեր, պիծի տղաս մին ճանց ախնիզ ա օզում, վեր կյա, տոնը փրըրվեր ա տննձկան, էլնա խուրդան ընգլական ա կյոխը, մեծ-մեծը՝ տակը:

## 127. ԿՀՈԻՎԱՆԱ-ԿՇԱՏԱՆԱ

Սվեզանց Հանեսը դոլմա յա ըննում ուտեխս:

Հարթնն ասում ա.

— Ապա, դուլմեն մածուն ըվլցընի՞մ:

— Հինչ կընի, ճամ կնուվանա, ճամ կշըտանա:

## 128. ԱՆՑ ԿԱՑ

Արևը յրգինքան կրակ ա վերածում: Հնձվերը ճլնի ծառեն տակեն նստած մծնըփիրթուշ ա ոտում: Հշադա-ճիշտեղ մին վեն–

ներն էրկան մորեխ յոf ա տամ րղնում փրթուշին ամանը: Հըն-ձողը, նղացած-վստակած մարթ, էլ շրշարվում չի տուս օնե, մածնեն ննետ տվեր անում fյընում ա:

Կոլ տայիս մորեխը պկեն տեմ ա րղնում․

— Վեններդ տեմ շտաս, անց րս կննակտն, անց կաց:

## 129. ԻՍԿԻ ՀԻՆՋ

Վաճառականը էրկու շվալ լամբու շուշա նոռուն պեռնած Շուշվա կյախս ա ընում շենը: Տմանցան մին զոռքա շոքան ա տուս կյամ, կոմքալ մնակը օսեն տրոծ: վեր մուտանում ա, մը-նակավ մե ննտ նոռուն պեռնանը ածծում ա․

— Հինչ ը՞ս ծախում:

— Վեր մն էլ թխիս, իսկի նինչ:

## 130. ՀԱՆԵՍԸ ՓԱԼԱՆԴՈԻՋ Ա՞

Հնեսին սեռտը արաղ ուզիյիս ընում, բրըղածեն ածում, տանն էլ ընում չի: Ընգունեն ա նսնում, վեր Ավազյումը լավ թթու ա-րաղ օնե: Տուս ա կյամ շնամաշը, տեսնում Ավազյումը նստած զռուց ընեխս:

— Խոսկդ շfյարավ ըմ կտրում, Ավազյում, տանը բիզ կընի՞:

— Օնիմ, Հանես:

— Պա նո՞ւնց անինf, վեր մին օրավ ինձ տաս:

Եր ըն կենում fյընում:

— Հանես, եf մին սաաfան արաղ խմէ, էլնա բիզը կտանիս:

Հանեսը էրկու սաաfան արաղ ա խմում, նացա-մացա ածում կլխեն, պերանը փեշկավը սրփում, եր կենում սուսուփուս տուս կյամ:

— Այ տա, պա բի՞զը:

— Հեր օրննած, Հանեսը փալանդուզ ա՞:

## 131. ՔՈՆ ԻԼ

Օրվա մին օր ժլատ շնացուն դոնաղ ա կյամ ննոն պարիկա-մերան մինը: Խեղնը եշում ա, եշում, տանը նացեն անումը ավող

դենում: Սա օգնում ա հաստատ գյդա հաց տլակա՞ն ըն, թա՝ չէ:
— Ա ֆուր, վեր հաց օտինֆ պրծնինֆ, հիշտե՞ղ ընֆ ֆոն ըն-նական:

— Մունֆ հաց ընֆ կերալ պրծալ, տու հիշտեղ օգնում ըս ֆոն իլ:

## 132. ՀԻ՞ՆՉ ԸՄ ՕՉԱԼ

— Դավնդ, ճխեվույդ ինձ տո, կյումը ւսրփիմ ֆեզ տամ:
— Այ Առուշան, այ Առուշան: Ամեն օր՝ Դավնդ, կացեճդ տո, Դավնդ, ցակատդ տո, Դավնդ, էս մինը տո, Դավնդ, էն մինը տո. տնաշին, ճխեվույը հի՞նչ ա, վեր ֆյընում չըս հանդան կտրում, պնտրում, հալա մին ուրիշի էլ տու տամ: Մին օր վեր ֆյընիմ, տասը կկտրիմ պիրիմ:
— Դավնդ, այ Դավնդ, ես ֆզանա խելֆ ուզեցե՞, թա ճխեվուլ:

## 133. ՄԻՆԸ՝ ՍՕՐ, ՄԻՆԸ՝ ԷՖՈԻԾ

Մարթ ու կնեզ հուճշու անում ըն, անում չըն, հարթնանը կարում չըն պնըցընին: Մին օր էլ եր ըն կենում, յանի ֆի, նուրը ֆյընիլի հետե ուրուր ճնետ կռև ըն անում:
— Ա կնեզ, կոժն ինձ տո, ես ըմ ֆյընճնական ճնուրը:
— Թողել չըմ, տեղդ ծանդր նստե, խե ես հինչ ը՞մ:
— Ա կնեզ, ննզ ըմ անում ննուրը ֆյընիլա, դաշանֆ ըմ անում...
— Չէ, վեր չէ, խե ես մեռած ըմ, վեր տու ֆյընիս ննուրը:
Հարթնը մաշ ա ըղնում.
— Կռև չանիֆ, մինը սօր ֆյընի, մինը էֆուծ:

## 134. ՔՅԸՆՈՒՄ ԸՄ ՓՈԻՏՐՈԼ ԽԱԴ ԱՆԻՄ

— Ա կնեզ, վեր մեռնիմ, հի՞շ կանիս:
— Աղա, հո՞ր ըս մեռնում:
— Չէ, ասե, վեր մեռնիմ, հի՞շ կանիս:

— Թըզա շորերդ կյեց կոտամ, թըզա վենըրմաներդ կյեց կը-տամ, մին լավ էլ լաց կընիմ, տանիմ վեղեն թափշուր անիմ, էլ նինչ բդի անիմ:

Մին օր մարթը սստմեռուկի յա տամ: Կնեգը պըւրըւմ ա թըզա վենամանը կյեց տամ, թըզա շորերը կյեց տամ, մն էլ փուշմանում: Վենամանը հանում ա, շորերը հանում ա, թողում հալավն ու փոխանը:

Հնգիստին նանապարեն կնեգը սոբ ա ասում, սուֆյումը ծեն տամ.

— Պա տու մին քանե հետ քյեցալ ի՞ր էդ հըրցավը, ադա, էդ նիշտեղ ը՞ս քյընում:

— Քյընում ըմ ստադիոն, փուտբոլ խաղ անիմ:

## 135. ԵՍ ԾԵՐ ԽՈՍՔԱՆ ՏՈԽՍ ՉԸՄ ԿՅԱԼ

Կնեգը մոնելանը եոր մարթը սկըսում ա հրթներեն վեռան կնմթելը: Հարթներն ըւրանց մարթունցը կյենզատ ըն անում:

Մեծ տղան մե հետ հորը ծեն ա տամ ըւրան կոշտը.

— Ա հըր, մծացալ ըս, օրաս ետ ֆեզ փսակվելը փոնել չի, իրեֆ հարթն օնիս, սերտդ օզած վախտը վորներան կնըմթե:

— Հա, ֆե մատադ, պա ես ծեր խոսֆան տոււ կկյա՞մ:

## 136. ԷՇ ԻՆՔ ՕՆՈՂԵՆ ՔՅԱԼԱԳԸ

— Էշը ծախում ըս՝ ֆու կործդ ա, պա էդ դաշընգ փալանն ու լոխտան խե՞ էշին նհետ ծախում ըս:

— Ա կնեգ, էշը կհըլ ա, վեր հաֆուստ-կապուստը շընի, ինֆ օնող շընիլ: Ասում ըմ ֆուցե ըրծաթե լուխտեն թաման ըրեն:

Էշը առաշն ա անում, ըղնում խոնաշինա բազարը:

— Էշդ նի՞նչ ածի,— հարցնում ա մինը:

— Վեր տասը մանեթ տաս, լըւզուս էրկու շըմ անել, լոխ-տան կտնիմ ծերֆեդ:

— Տվե:

— Ծերֆդ տո:

Անծանոթը էշը ինք ա օնում, օշը հլո̈ռում բդի տոն:

«Չէ, էս էշին պահել չընիլ, շատ ա կհա̈լ»:

Էշը թողում ա մին ծառու տակե, լո̈խտան ու փալանը շլակում, վազ տամ տոն, մին ղաշև եր կալած կյամ: Մտքումն ասում ա. «էս հցեցեն վեր ինձ խափալ ա, ես էլ խնուշինակեցե յըմ, ո̈ւրան ըմ խփըլական»:

Ղաշևը յոր օնում, էշին մազերը հակառակ թուշավը սանդրում, մազերը բիզ-բիզ վեննը կցընում, յալն ու օնքերը քնձռոնում, մին փադի բիզ շո̈ւնո̈ւմ, առաշն անում: Տանում ա տեսնում ծախողը հալա էն ա էշու շոռ կյախս: Ջինքը հվաքում ա, փափաղը պրտըտռւս տնո̈ւմ, մաշկան կոռանում, բռաշին վեննը կենում:

— Պարի օր, ա հայ:

— Աստուծեն պարին:

— Հանց ըս էշ ըս ինք ուննական:

— Հանց ըմ:

— Քյոհլան էշ ա, կյինը տասնհենգ մանեթ, խոսքս պրանիս ուչ, եր կալ քյընի, խերն ըս տանում:

Մո̈ւշտարին էշին վորկլխեն եշում ա, հավան կենում, փողք տամ, յոր օնում քյընում: Էշը տո̈ւզն ա ընում, քանե շենան մուտանում ա, էնքան վենները թափ ա քցում: Վերշապես էշ ու ըշտատար հսնում ըն շենը:

— Ա մարթ, էշը ծխեցե՞ր:

— Էն էլ հունց:

— Էշ ինք կալի՞ր:

— Էն էլ հունց:

— Թյդըերիշ ա՞:

— Երիշը, ղորթ ա, ծանդր ա, համա ըրվամ ա, վեր շատ խելունք էշ ա:

— Հինչի՞ն յրա գյդացեր:

— Քանե շենը մուտացավ, էնքան երիշը թռդըցրուց, իսկ վեր նի մտավ շենը, թուշին եկու մեր տո̈ռնը, նի մտավ կյումը, քեցավ ո̈ւրան ըխուռեն յրա զոռաց:

Կնեգը մաննը կծում ա, քյընում նի մննում կյումը:

— Աղա, էս մեր էշն ա, պա փալանն ու լո̈խտան հո՞ր ա:

Քու հանողն ու պո̈ւռողը խառ-խուռանա:

## 137. ԻՆՁ ԹՈՂԱԼ Ա, ԴԵՐԻՆ ԵՐ ԿԸՑՐԱԼ

Կնեգը մարթին միշտ ֆյալագ կյախս ա ընում: Մին օր դերը կյամ ա տահանց տանը ֆշերը կենում: Մարթն ասում ա.

— Ա կնեգ, ինձ ֆշերավ եր կկցնիս, մինչև դերը եր կենալը ֆյննական ըմ մին կործ կա, պրծնիմ կյամ:

Կնեգը մինչև մարթին կործի ֆյընիլը ֆշերը եր ա կենում դերին շորերը տնöւմ մարթին ֆշտեն, մարթին շորերն էլ՝ դերին ֆշտեն:

Մարթը մթընմթեն եր ա կենում, դերին շորերը կյենում, տուս կյամ:

Առաշին պտահած մարթը ասում ա. — Օրհնյա, դեր:

Մարթն öւրան տնդըղում ա, թա.

— Էս կնգանը եշի է, ես ասալ ըմ ինձ եր կկցընիս, դերին ա եր կցըրալ:

## 138. ԿԹՆԸԿՈՐԵԿ

Ջահիլ հնձվերը էն ա ընում կորկեն արտը հնձիյխս: Ծշում ա տեսնում՝ մին սերուն հարթնը զամբöվը ծերֆեն արտեն մաշավը կյամ ա:

— Ա նախշուն հարթնը, էդ հի՞նչ ըս տանում:

— Կաթն ըմ տանում:

— Յանի հի՞նչ կընի, վեր ես մուտանամ, տու հոանաս ուչ, մեր կորկեն արտումը մին հովուր կենաս:

— Վեր տու մուտանաս, ես հոանամ ուչ, հինչ ա՞ ըննöկան:

— Կթնըկորեկ:

## 139. ՊՌԱՏԱՎԸ ՔԱԽԾՐ Ա

Մին դերասան մին շենում թատրոն տալանը եսը ֆյընում ա öւրան հեռե ազգականեն տոնը, վեր ֆոն նի: Տրավում ա: Ծշում ա տեսնում՝ տանը օրիշ ճրöման չկա, մինակ պոուշը կոտրած մին փարչ ա: Կնգանը ծլոլը ֆյընիյխս ա ընöւմ, էս մարթն էլ խոկող: Մտածում ա, վեր պառավը սաղ ընգյունավը կընի խմեխս, իեֆը

յնր ա օնում, պրատավը խմում: Մն էլ մտածում ա. «Մին նրցը-նիմ, բալի լնա պատավն էլ ա պրատավը խմալ»:

— Նանե, պրատավը նիշխա՞ն ա խախծր, իրեխ նետ խմեցե, էլ նա խուշտացե վուչ:

— Հա, ճանը մատաղ, պրատավը խախծր ա, ես էլ ըմ միշտ պրատավը խմում:

## 140. ԸՍՏԱՐԵ ՀԻ՞ՆՉ ԸՍ ԸՍԼԱԿԱՆ

— Հարեղ, եկ ծիս ինխ կալ: Հոնե ասալ ըս խավքառ ա, ըստարե նի՞նչ ըս ըսլականն:

## 141. ՆՍՏԸՑՆՆԱԿԱՆ Ա

Սրըցեն չոլըցուն տոնը ղոնաղ ա կյամ: Չոլըցեն մեծ կյեվաթը էրկու նետ լցնում ա, տամ ղունաղեն: Ղոնաղը խմում ա: Իրեխընչինն էլ ա ածում:

Ղոնաղն ասում ա. — Խնամե, խմածս եա ա կյամ, էս մինն օղում չըմ խմիմ:

— Էս մինն էլ խմե, նստըցննական ա:

*Սրըցեն խմում ա, նղե ընում տոն:*

Հղեննի, մին արխու կլխավ ննցրնեիս, թոմփ, արխումը նըստում ա: Ասում ա. — Էսա նստըցրուց:

## 142. ՄԵՐԸ ՊԵՐ

— Ախնի, Հուռում, մին խյընի Վնեսին կացենը պեր, փաղը կտրիմ:

Կնեգը խյընում ա տերտակ կյամ:

— Տվավ ո՞ւչ: Քյընի Պառոնը պեր:

Հուռումը էլ նա տերտակ ա կյամ:

— Էն էլ չի տվա՞վ: Տանանց ժլատ ներն անիծած: Քյընի մերը պեր:

## 143. ՊԱ ՏՈՒ ՏՈՆ ԿՏԵՌՆԱ՞Ս

Ախպերը fյընում ա fվերը տոնը ղոնաղ: Քուրը էծու պաներ ա վեր տնում, թխծրած հաց:

Ախպերն ասում ա. — Ա fուր, վեր ամեն ղունաղու բռաշի էծու պաներ վեր տնիս, թխցրած հաց, պա տու տոն կտեռնա՞ս:

## 144. ՋԱՐԱՅՆ Ա ՏԱՇԱԼ

Կյեշանը մին միլ ա ընում պերած տռանը վեր fցած, վեր աշունfը, բաղա ետ կոճին կոտրած կյերանը փոխե: Եշում ա տեսնում՝ փաղը բստըղաս-ընդըղան տըշտշոռած, ձզամա fցած, փուչըցրած:

— Ալիշան, ամեն օր բստեղ խաղ ըս անում, տեսա՞լ չըս էս փաղը ձու վա տաշալ:

— Գյուղում չըմ, հանց ըմ Ջարայն ա տաշալ:

— Էս հի՞նչ ղաշանգ տաշալ ա, շշա՛, շշա՛, շշա՛: Փա՛ն, փա՛ն, փա՛ն:

— Ջարայը կկարե՞ տի տաշի, ես ըմ տաշալ:

## 145. ԻՆՔՆ ԷԼ ՉԻ ԿԼՈԽ ԸՆԳԼԱԿԱՆ

Խղուղեն բաղեն պանակը մին կյող ա փոնում, վենները կըպոտում, բաղումը վեր fցում, ինfը վազ տալավ կյամ նախագեն կոշտը:

— Նախագա, մին կյող ըմ փոնալ:

— Պա հի՞նչ ըս ըրալ:

— Վեններըը կպոտալ ըմ, բաղումը վեր fցալ:

— Սերfերը կապա՞լ չըս:

— Չէ:

— Պա fու տոնը չհնվի, վեննեըը ետ չըննակա՞ն, փախնի:

— Մեր շնացե յա, ես վեր կլոխ չըմ ընզալ, ինքն էլ չի կլոխ ընգլական:

## 146. ՎԵՉ ԿՈՌԱ, ՎԵՉ ՃՈՌԱ

Շատ հըղէ fյընիլա վստակած մին հայ նստում ա մին արխու դրաղէ, չնթան տուս օնում կնզանը տրած պարիպասը՝ շոռն ու դոլման, սկսում ուտելը:

Ուտելիս դուլմեն մինը թուլ ա ընում ըղնում արխը: Էս տնուզ-նը մարթը դնստի ծերfը արխումը շոռ ա ածում, ծերfն ընգած փափուկ պենը կոխում պերանը, կոլ տամ: Ծզանա հինչ կյեղիմ, արխան տուս կալածը կյերթնուկ ա ընում, պկումը սկսում ա կոռալը: Էն էլ ասում ա.

— Դոլմա ըս, թա դոլմա չըս, կնեգս տրնլ ա ուտըլական ըմ, վեչ կոռա, վեչ ճոռա:

## 147. ՌՈՒՍԵՐԵՆ ԽՈՍԵԼԸ

Մին մարթ կորած էծին շոռ կյախս ա ընում: Անյակ անգյու-նան մին շեգ մարթ ա տուս կյամ. մտfումն ասում ա. «Սա հանց ա ռուս ընի, պա ռուսերեն հո՞ւնց հրցընիմ, թա մեր էծը տե-սա՞լ չըս»:

Ծերfերը խչըմելիf տնում ա, պոզեր շինում, տնում կլխեն: Տեսնում ա, վեր պեն չի տուս կյամ, էծու նման կռանում ա, չorf վննանե տեռնում, սկսում էծու նման մկըկալը. բը-ա՜-ա, բը-ա՜-ա...

Անցվորը կլոխ ա ըղնում, վեր սա էծու վա շոռ կյամ:

— Էդ հինչ ա, էծո՞ւ վըս շոռ կյամ:

— Հայ ը՞ս, պա սսէ ե, մչանf ռուսավուր խուսեցէ, frտը-նոնfս պատից:

## 148. ՍԱ ԷԾ ՉԻ

Հճրին օզում ա էծը ծախէ, Կճրին էլ օզում ա էծ ինf օնէ: Սահանf ուռուր պտահում ըն:

— Հարաբեդ, էծդ կտա՞ս:

— Հի՞նչ էծ: Ես էծ չօնիմ, իմը կյումաշակավ ա: Կոrծը հաս՝ էս փիշը, ծծերը հաս՝ էս դուրբան: Հո՞ւ վա ասալ, թա էծ

ա, Հարաբեդը էծ կպանե՞: Կամուրջավն էլ անց կնայիս ախս ուշ քա՝ «նե–նա», կասիս՝ «նո–նա»:

## 149. ԱՐՏՍ ԱՌԱՋԻՆՆ Ա

— Տաքն ընգալ ա, ա կնեգ, մին քյընիմ կտվատեն արտավն նեցընիմ կյամ:

Քյընում ա էշում, ետ տեռնում:

— Հը, ա մարթ, կտվատեն արտը նունց ա՞:

— Թա կյնազոխան ծեթ տուս կյալի ընի, իմը առաջինն ա:

## 150. ԺՈՂՈՎ Ա՞, ԹԱ ԹԱՏՐՈՆ

Մին գյուղացի մարթ քյընում ա Բա̈քի, պարիկամն էլ յոր օնում տանում թատրոն: Թատրոնը սկսվում ա կոլխոզու ժղովավ: Սա կլոխը տնում ա նստրանեն քա̈րքին. — Խնամե, սա ժողով ա, վեր թատրոնը սկսվե, կզո̈ւրթընցնիս:

## 151. ՀԱՐՈՒՍՏՆ ՈՒ ԱԽՔԱՏԸ

Հարուստը պտանում ա ըխքաղեն, վենն անում. — Ա խեղճ, այ ապելա կյանքը, բոլա տի խեղճ կենաս: Եկ ընձեռե մին քանե օր ծրի պեն ըրա, ես քեզ սվրցընիմ, թա նունց հրուստանաս:

— Չէ, առաջ սվրցրու, ետնան պեն կանիմ, հալա օխտը օր էլ իվիլ կանիմ:

Հարուստը սկսում ա.

— Թա տեսնաս մին խեղճ պողնած մարթու ծերքե մին կարքեն պեն կա, կլխեն տո, խլի: Թա տեսնաս կարում չըս ծերքան ինք օնիս, քշերը ծպպըցրու: Թա տեսնաս քեզ վնաս մին գործ կա, վերթիդ էլ ընի նեռե շոռ տո, անիս ուշ: Թա տեսնաս պարտքեղ տարը խեղճ մարթ ա, ուրաց, էլ տամ'էր: Թա տեսնաս...

— Բոլ ա, սվրեցե: Դե մենեք տու ինձ անգուն կալ: Իմ նա̈ր ասալ ա, նիշտեղ խեղճը կուրցրած մարթ տեսնաս, քտուծանա

օժ ճվաբե, կլխեն իրեf նետ բամփե: Հանց բամփե, աշկերը կծըկրակ անե, fամակը՝ շորվա, վեններն էլ ճինչեխ ածե: Դե մնենք ումաց, ա խեղն, ա ապելա կյառնը:

Վեր ածծում ա, ճարուստը ծվըկախած ճավու նման ճկըռում ա:

## 152. ՀԵՐԻՔՆԱԶ ՀԱՍԻՆ

Էն ըն ընում ըրգյոնվա ճացը ուտեխ: Հերfինազ ճնսին ե-շում ա տեսնում, ճեռուստացույցումը էրկու մարթ ուրուր ննետ խոսում ըն:

— Աղա, Կրիfոր, խե՞ էն մարթունցը ասում չըս, կյան ճաց ոտին, ճամոթ չի՞: Ասե, ըլի, կկյան՝ կկյան, կյալ չըն՝ կյալ չըն: Բոլի յնա տուզն ըն, ճլըր-ճեյլի սոփրեն եշում ըն:

— Այա, ճաճանf մեզ տեսնում չըն:

— Լավ ա, սուս ըրա, յանի խե՞ տեսնում չըն, չանիլ մար-թիf ըն, ըշկրենեն սաղ, վննրենեն սաղ: Խեշլամ մտfումդ կա վուշ ծեն տաս, ճանց ըս լնա fա ճոր ժառանգը չընիխ:

## 153. ՋԱՆԻ ԱՅԱՆ

Հարթնը ննուրը կծըցնում ա, փոխմուրթը տնում կոխկեն, վեր սկեսուրը կլոխը լվանա:

— Այա, էն ա լոխ ճազըր, տու կլոխդ կլըվանաս, ես fյընում ըմ կործի:

— Հա, այան մատաղ:

Էդ վախտը, վեց տրեկան թոռնը՝ Շողերը, նի ա մննում տո-նը, ճեռուստացույցը պեց անում, տեսնում ուրան ճետաfրfիր պեն չկա, թողում ա տուս կյամ, fյընում բոնդը խաղ անում:

Ջանին եշում ա տեսնում, շոrս-ճենք մարթ զրուց ըն անում: Հիշfան եշում ա թա պըծընին fյընին, ինfը կլոխը լվանա, տա-ճանf պըծընում չըն:

Խեղնը մնամ ա անլվա:

Կեսօրեն ճարթնը կյամ ա:

— Այա, խե կլոխդ լվացալ չը՞ս ճալա:

— Այան մատաղ, fաշվալ ըմ: Էն մարդիմազարը եկալ ա

տիլիվիզին պեց բրալ, էն մարթունցը նի բրալ մեր տոնը: Պա համոթ չի՞, նահանց ֆշտեն հունց կլոխ լվանամ:

## 154. ԹԱ ՄԵՌՆՈՂԸ ՏՈՒ ՎԸՍ, ԽՈՍԵ

Թալանին հիվանդանում ա, մաշվում թիլ տեռնում, տեսնում ա, վեր հոֆոց-հանգուցելոց ա տռնըլական, ծեն ա տամ մեծ տըղեն, վիսյաթ անում.

— Ա վերթի, ես մեռնում ըմ, տանը մեծը տու վըս մնամ, լոխ մհենգ ֆու ծերֆետ ըն յշըլական, լավ կկենաս: Էն պատեն թոթխարը կշինիս, մին պիծի օթաղ էլ կոխկեն կվըլցնիս:

— Անումը տի պեն չկա,— ղաթն ա ըղնում կնեգը,— էս սհաթես մունֆ տոն շնիլի հա՞լ չօնինֆ:

— Ա վերթի, տու իեն անգուն կալ: Պիծի ախպորդ նելլի կփսակիս...

— Անումը տի պեն չկա, էս սհաթես տղա փսըկելի թա՞նը չօնինֆ:

— Ա վերթի, տու իեն անգուն կալ: Էն ղաշխա կավը վեր չպեր տուս կյա, կխարշիս, պահիս ուչ...

— Անումը տի պեն չկա, ընդի կավը ծախել չըն:

— Ախնի, դե թա մեռնողը տու վը՞ս, եկ տու խոսե, ես սուս անիմ, թա մեռնողը ես ըմ, պա տու սուս բրա, ըլի՜:

## 155. ԹԱՔ ՄԱՉԻՆ ՉԸՆԻՍ

— Ա դեր, մեռալը հանգիստարանը տնեիս յշիգին ֆմական ֆյընիլն ա լավ, աշա՞ն, թա ծեխան:

— Ա վերթի, հիշտեղ ընիս լա՞վ ա, մինակ թա յշիգին մաշին չընիս:

## 156. ԿԱՏԱԿՈՒՄ Է ԴՁԴԼԵՑԵ ԽԼԴԱՆԱՆՑ ԿՈՒՔԻՆ

Դեր-Կրիֆոռանց Հաննեսը շատ էրկան մարթ ա ընում, Խլդանանց Կուֆին էլ շատ կարճ մարթ ա ընում: Մին ցորտ օր Ծմեռումը պատահում ըն:

Հանեսն ասում ա. — Ա Կուք, պա ես մրսում ըմ, առւ մըր-սում չը՞ս:

— Էդ պեցիր տեղը նի՞նչ օնիս վեր մրսիս, քշաց, ինձ նման քաշավը քյընի:

## 157. ՄԱՄԱՆ ԸՄ ՕԶՈՒՄ

Կուքուն կնեգը էրկու չերքավ քյընում ա Բաքու:

Խոխան ասում ա. — Պապա, մաման ըմ օզում:

— Գյուղում ըս քա ես օզում չը՞մ, իմ լիա պռուշս նաքում ա:

## 158. ԱՆՈՒՄԵԴ ՀԻ՞ՆՉ ԱՅԻԹ ՏՐԻՐ

Կուքուն տղա Տիկրան Գրիգորյանը Բաքվա կյամ ա չենը լեկցա կարթի: Ուայոնենն մեծը էր ա կենում ռուզյունը պեց ա-նում.

— Դոցենտ Գրիգորյանը ձեզ համար կկարդա դասախոսու-թյուն միջազգային թեմայով:

Ժողովը պրծնելանը եոր Տիկրանը կյամ ա տոն, հարն ա-սում ա.

— Անզունդ տես պահե: Պա ես դեր ըմ ծեն տվայ, խարշ-բուրշ ըմ բրայ, դաշմնզ անում ըմ տրայ: Իմ տրած ընումես նի՞նչ չափի օնե, վեր փոխեցեր Դոցենտ տրիր:

## 159. ՊԱ ՀԵՏԱՆ ՀՍԱԼ Ը՞Ն

1941 թվին Տիկրանը վիրավորված կովան կյամ ա տոն:

Մարն ասում ա.

— Տիկրան, հու վեր կովան եկայ ա՝ մեղայ ա պերայ, քեզ էդ մեղալան տվայ չը՞ն:

Կուքին ասում ա. — Ըրխեն նետան հսալ ըն՞, վեր տան:

## 160. ԺԼԱՏԸ

Ավդոտեցի Տզգանենց կնեգը էն ա ընում չայ խմեիս: Նրա չքմրեն կտորը տնում ա պրմնումը, խաբարը կյամ ա, վեր ուրանց խոտեն տիզը կրակ ա ընգալ: Կնեգը չմֆարը պրմնումը վազ ա տամ: Մարթը վենն ա կցընում.

— Ախճի, չաֆարը պրանադ տուս կալ, եդնան ֆյընի: Մինչև կֆյընիս-կկյաս, չաֆարը պրմնումդ կճալի:

## 161. ԳՅՈՒԳՈՒՄ ՉԵՄ

Վարժաբեդը ճիշֆան ստիբում ա, Նեսին խոսում չի:

— Նեսի, էս ի՞նչ տառ ա:

— Բելա գյուղում չըմ:

Տասա ետ ճնգերունֆը իրեսնըեր խոսում ըն.

— Նեսի, ա-ն ճնցալ ընf, տու վել գյուղում ըս, էնֆան ստիբում ա խե՞ չըս ասում:

— Մեր վարժաբեդին խայաթը գյուղում ըմ, վեր մինն ասիմ, ըսլական ա մինն էլ ասե:

## 162. ԼՈԽ ՄԻՆ Ա

— Նեսի, էս ճի՞նչ տառ ա:

— Բ-յա:

— Ա մեռած, պա սա Ա չի՞:

— Մին ա ըլի:

## 163. ՏԱՆԱ ԻՎԻԼ ԸՆԻԼ ՉԻ

Ապել վարժաբեդը չերտվա օրերը խոցը սվրցնում ա: Մին օր էլ սվրցրածը Գեսունց Բազրաթեն անա ճրցընում ա: Բազրաթը եր ա կենում ճլլընելլի, ճլլընելլի ասում. «ըրկուշերեթ, ըրըֆշերեթ, չրուֆշերեթ, ճնգըշերեթ, վցըշերեթ, ոխտըշերեթ, ութըշերեթ, ինընըշերեթ...»

Ապել վարժաբեդը մի կերպ վենն ա անում.

— Բոլ ա, տանա իվիլ ընիլ չի:

## 164. ԴԱՅՈՒՆ ԱՆՈՒՄ ՁՕՆԵ՞

Ցականը ոուրան անումը կարում չի մետը պահե, ճլլը-ճելլի մննան ըղնում ա: «Քյրնիմ իմ քվեր տոնը, օխտը խոխա օնե, կտեսնան, անումս կտան, մեննս կըղնե»:

Քվերը տռանը էշան վեր ա կյամ, խոխեքը զիրավ ըն տեռնում.

— Դային եկալ ա, դային եկալ ա...

— Ծան տղեք, դային անում չօնե՞:

## 165. ՊԱ ԿԱՏՈՒՆ ՀՈՐ Ա՞

Օսեփը էրկու կիլո մես ա առնում, պերում տոն:

— Թեանեն ախնիզ, կեսօրեն ինձ ննետ մարթ ա կյլական, դոլմա կշինիս՝ կօտինք:

Կեսօրեն ննզերը եր կալած կյամ ա, տեսնում՝ ղզղան չկա կրակեն, վեչ դոլմա կա իփած, վեչ շորվա:

— Պա քեզ նի՞նչ ըմ ասալ:

— Ես նի՞նչ անիմ: Տու մեսը պերեր, կատուն էլ քաշից կերավ:

— Կշեռքն էլ ա՞ կատուն քաշալ կերալ:

— Կշեռքը նո՞ւնց կօտե:

— Դե պեր ըստեղ:

Կնեզը կշեռքը ոուրան քրերավը պոուրում ա:

— Պա կատուն նո՞ր ա:

— Էն ա թախտեն տակեն մրափած:

Օսեփը կատուն փռնում ա տնում կշռքեն մին թային, էն մին թային էլ էրկու կիլովանուց քարն ա տնում: Կատուն կշռում ա, դուզ էրկու կիլո:

— Էս էրկու կիլո մեսը, պա կատուն նո՞ր ա: Իսկ թա էս կատուն ա, պա մեսը նո՞ր ա:

## 166. ՄԵԾ-ՄԵԾ ՆԻ ԿԱԼ

Հցեցե Վանեսը թոռնանը ղարկում ա.

— Բալա ջան, ըսկի թայդի չըղնիս, վազ տալավ ֆյընի ֆու ղöրփոր կոշտը, վազ տալավ եկ: էն ա ֆու ղöրփեր բաղումը նը-րöւվեր կտրեխս, ասե, ապերն ասալ ա՝ տու վել չի թայդի ըղ-նիս, թյին ռեխը մեծ-մեծ նի կալ, նլլը-նելլի թող ըրա:

## 167. ԽԵ՞ ԼԱՑ ԸՍ ԸՆՈԻՄ

Հրուտղա նստում ըն, վեր շփոթ օտին:

Հäրն ասում ա.

— Ա վերթի, համը կալ. համ մին թֆյա իվիլ կոտիս, համ էլ ինձ կասիս՝ հավ՞ ա թա կած:

Վերթին համն օնում ա, տեսնում՝ կած, խափում ա թա՝ հավ ա:

Հäրը մին մեծ ֆթöլ նի յա օնում, տնում պրանումը, տես-նում՝ կրակ: էլ կարում չի պրäնան վեր ածե, ընդի էլ կուլ ա տամ, ըշկերեն նրերը հղե յա ընում:

— Պապա, խե՞ լäց ըս ընöւմ:

— Քեզ մնան վերթին մեռած հաշև ըրե, լաց ըլի:

## 168. ՀԱՆՑ Ա ՀԱՄԸ ՓՈԻԽԵԻՍ

Պատվականը հներանց տանան մին սուրհե թունդ ֆացախ տնեխս ա ընöւմ:

— Պելուն տղա, հանց ըս լավ պեն տնեի՞ս:

— Կյինի յա:

— Ինձ տո, պատառ խմիմ:

Մինասը կլխեն ա ֆաշում:

Պատվականը տեսնում ա վեր տակեն պեն չի թուղլական, ծերֆան խլում ա:

Պատվականը վեր մին հարöւր շֆըռ հռանում ա, Մինասը հե-տան ծեն ա տամ.

— Պելուն տղա, էդ կյինուն համը հանց ա փուխեխս, թա տե-ղը կա, խարշի:

## 169. ԷՇՍ ՆԱՍԱԶ Ա

Արöւնը էշը առաշն ա անում, fյընում պահեստ, սիսեռնը ստանալ:

— Իմ ուrականես հինչfա՞ն սիսեռն ա հսնում:

— Ութասուն կիլո:

— Հանց բստուծանա մխթարիս, ես ութասունը տանիմ, տու իցցունը կյrի, էշս նասազ ա, վախում ըմ Դեrունց ծörավը անց չկենա:

## 170. ՄԻՆ ԻՓԻԼԻ ԷԼ...

— Ա կնեգ, հսած, փոփ տեռած տանձ տեսած ը՞ս, ծառեն լափ եrե ճղնան կախ ըլած: Ես էլ ըմ ընդի, տու էլ:

— Ըսելիդ ասե:

— Ասում ըմ ամեզը չorf fսան տարե ապrալ ընf: Խուտուr հղըցավ էլ կրնինf fեցած, դեղան հղըցավ էլ կրնինf fեցած, շատն էլ դöւզ կրնինf fեցած:

Մահեն անը վեr մարթին սեrտն ա ըղնում, սեrտը կկղում ա: Օզում ըմ վզավ օնիս, ա կնեգ, թա մին պեrցու կյալանը ետը, fանե հետե յըս հղեդ ծռալ, fանե հետե յա խաշը առանց դեr նöւrդ ընգալ:

— Մեղա, տեr:

— Էն հինչ վեr աստուծ ա գյուդում, ասե մունf էլ գյիդանf: Սrտումդ վեr պեն տարեr, աստուծ հօfուդ չաrշաrանf կտա: Սեrտդ թամöւզ fյընի ըստծու վեննը, հանցու վեղեն տակեն թիրև ընիս:

— Ա կնեգ, ծեrfդ տիr սrտեդ, բդի եrգինfը եշի, սrտենդ ասե, պեն չի կյեղիս, հա:

— Դե առաշ տու ասե,— կնեգը սrտըրվանվում ա:

— Ա կնեգ, fզանա հինչ կյեղիմ, fանե հետ վեննս սլկըհալ ա, էն ա կյումեն պտrհանումը մին fյոհնա փաrշ կա, մաշը մին պիծի fաr ըմ fցալ, գյդացալ ըմ ըստծու դադաստանեն orը: Քյընի fու ծեrfավդ տöւս տռ, հաշև ըrա, եկ ինձ ասե:

Կնեգը լոf ա տամ փաrշը պöւröւմ.

— Մին, էrկու, իrեf... 12:

— Լնա էս ա՞:

— Հա, ես իմ հոքին: Մին օր աստծու ըռաշին հուքյի ըմ տլական:

— Ա մարթ, կարել չըմ մեխկս ինձ ննետ տանիմ կյրեզման: Քյըզանա կյըղեցե, ըստուծանա հունց կյեղիմ: էն ա ներքե տա-նը մին կոծկած կարաս կա, քանե հետ անգյալ ըմ ըրալ, մաչը մին լոբի ըմ քցա̈լ:

Մարթը լոք ա տամ, տռու տամ պուրում.

— Մին, էրկու, իրեք... 8:

— Լհա էս ա՞:

— Հա, իմ հոքին: Մնել քզանա հինչ կյեղիմ, ա մարթ, առնե քզանա կյըղեցե, ըստուծանա հունց անիմ: Տանա մին ըփիլի տվալ ըմ Եխսունց Մաքթաղեն, ըրփըրվերի կնեգ ա, իփա̈լ ա, տը-վալ խոցը: Հա, մն էլ քզանա հի՞նչ կյեղիմ, ըստծու մին օր հուքյի յըմ տլական: Տանա մին ըփիլի իմ հա̈րանց ըմ տվալ, նեղ օրում ըն ըլալ, իփալ ըն կերալ: էն տարեն վեր ընդի շատ լոբի եր կալինք, ա մարթ, հիշո՞ւմ ըս, նա սերմն էլ ա տանա:

Ասում ըն էս վերշին խոսկան առաջ մարթն էն ա ըլալ խոըմ-փըցընեիս:

## 171. ԲՈՍՏԱՆՍ ՃՐԻՄ

— Խե՞ բեյքեփ ըս:

— Տան տղես թոռը կտրում չի, թա բոստանս ճրիմ:

## 172. ԽԵ՞ ՋՈՂՈՒՔՍ ՏԱՄ ՉԸՍ

Մակիշը միշտ դերին պտըհեյիս ասում ար.

— Օրհնյա դեր, ա դեր:

Դերն էլ ասում ար.

— Աստված օրհնի:

Մե հետ Մակիշը կյամ ա դերին պտահում, թա.

— Աստված օրհնի:

Դերը մնամ ա շվարած: Մակիշն ասում ա.

— Խե՞ ջողուքս տամ չըս, բա̈նդ ու բարադ կապալ ըմ, հա՞:

## 173. ԹՔԻ, ՆՈՐԸ ՓՌՆԻ

Հաքերf մե հետ հենգ–վեց խոխա եր ըն ընում փոշնի ծառը, վեր փռեշն օտին: Տհանցա մինը ծառան վեր ա ըղնում, վեննը տուս fցում: Մնացած խոխեfը վազ ըն տամ խուխեն հորը–մորը դույուղ անում: Խուխեն տնըցեf, պարիկամնեն, ազգականնեն կզնըված կյամ ըն, թա ծառը պուf տան: Մինը պցըրանում ա երե ճղնան կախ ընում, մնացածն էլ ուrուr վեննա կախ ըն ը- նում, հայ–հայ անում, վեr ծառը պուf տան: Պեցիr ճղնան կախ ըլած մարթը նղանում ա: Ասում ա.

— Վայ, ծեrfս սլկըհում ա:

Ուրան անա կախ ըլած մարթն ասում ա. — Արա, մունf էն ընf պենդ փռնած, տու ծեrfդ պեց թողե, թfե, նորը փռնե:

## 174. ԱՆՀԱՄ ԽՈՍՔ

Մելիf Շահնազարը Պլըպուղուն ասում ա.

— Թա կարիս մին անհամ խոսկ ասիս, վեr ես ասիմ ան- համ ա, ծիս fեզ կտամ:

Օրեր ըն անց կենում: Հունվարեն մին փսնգյու fշեr, վրցըկ- կանշա ետ, fամեն պտուտն առ տամ, օզում ար թա տները կլոլ- ածե Կրկժանա ծոrը:

Պուղին եր ա կենում շորերը կյենում, fյընում Մելիf Շահ- նազարեն տռնան ծեն տամ.

— Հե՛ Մելիf Շահնազար, հե՛ Մելիf Շահնազար, արա մին տուս եկ:

Մելիfը fնըթաթախ, մտըկհլաված տռնը պեց ա անում:

— Տու հու վը՞ս, հինչ ա՞ պտահալ:

— Քու ախպեr թուբöգ ածելը գյուղում ա՞:

— Չէ:

— Իմ ախպեr էլ չի գյուղում:

## 175. ԽՍ ԷԼ ԸՄ ՏԱ ՀԵՏԵ ԾԾԱՂՈՒՄ

Մելիf Շահնազարը Պուղուն եշում ա fահ–fահ ծծüղում:

Պուղին էլ ավելի պեցիr ա ծծüղում:

— Պուղի, ինչա՞վ ըս ծծադում:

— Պա տու ինչա՞վ ըս ծծադում:

— Ես լավ կերալ ըմ, լավ խմալ, ֆեփս ֆյուֆացալ ա, ծծադում ըմ: Ծծադում ըմ, ֆանե վեր ես մելիֆ եմ, տու՝ ծառա:

— Ես էլ ըմ տա հետե ծծադում, վեր ես ծառա յըմ, տու՝ մելիֆ:

## 176. ԱՍՏՎԱԾԱՎԱՐԻ՞, ԹԱ՞ ՄԱՐԹԱՎԱՐԻ

Մելիֆ-Շահնազարեն հորը բաղարաֆյավը կյինի ածողը Պուղին ա ընում:

— Մելիֆ, արեղ ապրած կենա, կյինին աստվածավարի՞ ածիմ, թա՝ մարթավարի:

Պուղուն խոսկեն յրա Մելիֆը շատ մտածում ա, ասում՝ աստվածավարի:

Պուղին կյինուն սուրհեն յոր ա օնում ածում՝ մնին՝ շատ, մնին՝ խրեզ, մնին էլ ըսկի ածում չի:

Մելիֆը կզնըրվում ա.

— Մեռնիս ուշ տու, Պուղի, էդ հի՞նչ ըս անում:

— Տու ըսեցեր աստվածավարի ածե:

— Պուղի, աստվածավարին վերն ա՞:

— Աստվածավարին էն ա է, վեր աստուծ մնին կլոխնըրվեր ա ածում, մնին էլ վեչ մին պեն չի տամ: Մնին փայը խրեզ ա ընում, մնին էլ նանա խրեզ, մինը ինձ մնան ֆյասիր ա ընում, մինը՝ ֆեզ նման հարուստ:

— Ըսկացե: Կյըվթնեն մըթըվարի ածե:

## 177. ՏԵՂ-ՏԵՂ ՇՆՈՐՀԱՎՈՐ ԸՆԻ

Մելիֆ-Շահնազարը եշում ա տեսնում՝ Պուղուն շալվարը քյանզա չիթավ տեղ-տեղ կըկատած: Մազաղ ա անում.

— Պուղի, շալվարդ տեղ-տեղ շնուրհավոր ընի:

— Օրումաշ ապրիս:

## 178. ՏՈՒ ԽԵԼՔ ՈՒՆԻ՞Ր

— Հո՞ւնց տեռավ, Մեյիք, վեր փողը ավեր նուխըրցուն հերիք չի, հալա քյոհլան ծիդ էլ ավեր անըկերտեցուն:
— Պուղի, խելքս կուրցրալ ըմ:
Պուղին պեցիր ծծաղում ա.
— Ես էլ յրկե մին քաակ վեսկե յըմ կուրցըրալ:
— Տու վեսկե ունի՞ր, վեր կուրցընիս:
— Պա տու խելք ունի՞ր, վեր կուրցընիս:

## 179. ԸՍՏՈՒ ՃՆԱՆՉՈՒՄ ԸՄ

Պուղուն մին քավքառ առաքուր ծի յա ընում, հյաքումը վեր ա ըղնում սատկում: Պուղին ախ-վիշ ա անում: Մեյիքը մուտանում ա. — Դարդ մ'էր անել, Պուղի, սատուծ քեզ ավելի լավ ծի յա տըլական:
— Էդ քու ըսելիս սատուծդ քաան մենըքա պակաս ինձ ծի չի տըլական:

## 180. ՑՈՒՑԱԿԵՆ ԱՌԱՋԻՆԸ

Մեյիք-Շահնազարը կարքաղրում ա, վեր Պուղին Շուշի քաղաքեն հիմարներեն ցուցակը անե, տա իրան: Պուղին հիմարներեն ցուցակեն առաջինը Մեյիքին անումն ա կյըրում:
— Պուղի, էս հինչ ը՞ս ըրալ: Ես էլ ըմ հիմա՞ր:
— Մեյիքը ապրած կենա, մեր քաղաքումը քզանա հիմար մարթ չկա:
— Ինե՞...
— Հիշո՞ւմ ըս, իրեք տարե առաջ իրեք հարիւր մանեթ պարտք ավեր նուխըրցե վանառականեն:
— Ետա՞վ:
— Պա նուխըրցե վանառականեն պարտք կտա՞ն:
— Պըրյական ա:
— Վեր պիրի, սատ էլ քու անումդ ննջըլական ըմ, իրանը կյըրիմ:

## 181. ՊՈՒՂՈՒՆ ՃԱԹԸ

Մեյիքն ու Պուղին ֆյընում ըն վերսի: Մին ըխպրու ղրաղե նստում ըն վեր հաց օտին: Մեյիքը ուրան բուխնան ծյունու նը-ման սիպտակ հաց ա տուս օնում, տնում սուփրեն: Պուղին էլ մին չոր սև ճաթ ա տուս օնում, տնում կոխկեն:

— Տեսնում ը՞ս, Պուղի, իմ ուտեխս հացս հունց ա, քունը՝ հունց:

Էդ խոսկեն յրա մոտե ֆոլան մին ըլըստրակ ա տուս կյամ: Պուղին չոր ճաթը յոր ա օնում, հետան պրծընում: Տեսնում ա կարում չի հանե, ճաթը յրան ա անում, ըլըստրակեն կլխան ա կենում, սպանում:

Պուղին ըլըստրակեն ընգուններան փռնած պտտում ա:

— Տեսնո՞ւմ ըս, Մեյիք, ես հունց հաց ըմ օտում, տու՝ հունց: Իմ հացս կօզի ճաթ, ղյրաքալ ա, համ հաց ա, համ՝ թվանգ:

## 182. ԽՍ ԷԼ ՔՅԸՆԻՄ

Պուղին մին կյրեկի ֆշերավ եր ա կենում, մետքն ա կյամ, վեր Մեյիքին ֆյալազ կյա:

Շուշվա մեյդանումը վենն ա կենում, սոտ տեղան ծեն տամ.

— Ա ժղովուրթ, լոխ անգուն կալիֆ, սօր Մեյիք-Շահնազարեն տանը մեծ ճաշկերութուն կա: Մեյիքը խնթրալ ա, վեր լոխ ֆյը-նիֆ:

Պատառ վեր անց ա կենում, Պուղին եշում ա, տեսնում մեծ-պիծի շարան-շարան ֆյընում ըն Մեյիքին տոնը.

— Մհե քուցե ղո՞րթ ա, ես էլ ֆյընիմ:

## 183. ԽՏՆԱՆ ՏԼԱԿԱՆ ՁԸՍ

Մեյիքին մարը մեռնում ա:

— Պուղի, քեզ հենց գրվանքա եղ կտամ, թաք կյաս ուշ բաղարաքյավը խտուրու-մտուրու խոսիս:

— Հինչ կընի:

Բաղարաքին թանձր վախտը Պուղին մին թազի յա փռնում, կշեռքը քցում թազուն անավ, ֆյընում Մեյիքին տոնը:

— Հենգ գրվանքա եղս տո: Քեզ լավ ըմ ճնանչում, վեր բադարաքը պրծնե, տու ինձ եղ տվողը չըս:

## 184. ՄԱ՞ՐԹՆ Ա ՇԱՏ, ԿՆԵԳԸ

Մին հպարապ օր Մելիքը Պուղուն հրցընում ա.

— Ա Պուղ, ըշխարքես մարթը կընի շատ, թա՝ կնեգը:

— Կնեգը:

— Հի՞նչ գյըդացեր:

— Կնանեքը լհա կնանեք, մարթ կա կնգանա բեթար ա, նահանց էլ ըմ հաշւ անում:

— Բա̈յլի ընձ էլ ը՞ս հաշւ անում կնանուցը շարգյումը:

— Մելիքն ապրած կենա, քզ նմաններեն վեչ կնանուցը շարքումն ըմ հաշւ անում, վեչ տղըմարթունցը:

## 185. ՊՈՒՂՈՒՆ ՕԽՏԸ ՊԵՌՆԸ ՅՈՐԵՆԸ

Մին սավ տարե ա, ծյու-ծմեռնը: Խեղն Պուղուն խոխեքը պեն չկա թա ուտին: Պուղին ճարահատյալ քյընում ա Մելիք-Շահնազարեն վեննը:

— Մելի՛ք, ճար չօնիմ, մին էրկու հակ ցորեն տո, տանիմ քյուլփաթս կյրունքհան անիմ:

— Է՞դ ա լհա օզածդ:

Մելիքը ղալամը յոր ա օնում մին թոխտ կյրում:

— Հասե էս թոխտը տանում ըս տամ Սարուշենա քյուխեն: Նա ինձ օխտը ծիապեռնը ցորեն ա պարտք, կպիրիս խոխեքդ բոլ-բոլ կոտին:

Պուղին մեկել օրեն խոխան չի, վեր մելիքին հվատա, հղեննի պեց ա անում նամակը կարթում: «Սարուշենա քյուխեն. օխտը ծի ծյունավ պեռնում ըս, տամ իմ խոնարհ ծառա Պուղուն: Թա չէ՝ փալանդ վեր կօնիմ»:

Պուղին նամակը ծալում ա տնում ծուցումը, ետ տեռնում: Ծմեռը անց ա կենում, կյարունքը անց ա կենում: Օգոստոսա մին տաք օր Պուղին նամակը յոր ա օնում, քյընում Սարուշենա քյուխեն կոշտը, նամակը տամ ուրան:

— Պուղի՛, երգինքը կրակ վեր բծեխ, ես օխտը ծիապեռնը ծյունը նի՞նչ տեղա տամ:

— Վեչինչ, ծյունը կա ոչ՝ ցորեն տո, ես էլ կպարքխոսիմ Մելիքը քեզ տուս չի քցիլ, էլնա կ․մնաս քյոխա:

Պայմանը տի էլ կապում ըն:

Ըրևանցուկեն Պուղին մին քարվանավ նի ա մննում Ավետարանոց: Մելիքը եշում ա զարմանում: Պուղին մին սիպտակ ծի նստած, բեղեն տակեն խաղ ըսելավ, օխտը ծի էլ ցորնավ պեռնած տոն ա կյամ:

— Պուղի՛, էս նի՞նչ խաբար ա:

— Արևդ ապրած կենա, Մելիք: Հնցած ծմեռնը մին զուլում ծմեռն ար, նղցկնեն էլ կապված-քշկռված, Սարուշենա քյուխեն կյրած նամակդ կրեցալ չըմ տանիմ տեղաց անիմ: Սորե մեննս ա ընզալ, բաեցե քյրնիմ օխտը պեռնը ցորենը պիրիմ, մունայրթունը լավ պեն չի:

## 186. ՔԹԵԴ ՀԱԼԸ ՀԱԼ ՉԻ

Մելիք-Շահնազարեն նարը մեռնում ա: Մելիքը ծեն ա տամ Պուղուն.

— Պուղի, սատկած կտրե պնըթունդ, սաղ օրը քթավս թաղլեթ ըս անում, իմ նոր բաղարաքավը քթաս խոսիս ուչ: Իրեք մանեթ կտամ:

Պուղին իրեք մանեթը ինք ա օնում, խոսք տամ, վեր խոսե ուչ:

Վեր բաղարաքը սկսում ա, Պուղին իրեք մանեթը տուս ա օնում, Մելիքին տեմ օնում. — Մելիք, իրեք մանեթդ եր կալ, կարել չըմ սուս անիմ, քթեդ նալը նալ չի:

## 187. ԴԶԴԱՆԸ

Պլըպուղուն աչքը էն ա ընում Մելիք-Շահնազարեն ղզղանեն: Մին կիրեկի ծեն ա տամ, ղզղանը յոր օնում, վեր մաչին փըլավ իփի: Պուրում ա էրկու օր պանում, մին պիծի ղզղան էլ նըննտը տանում տամ Մելիք-Շահնազարեն:

— Պուղի, էս պիծինը նի՞նչ ա:

— Մելիք, պա ասել չըս, ղզղանդ ծնալ ա:

Մեյիֆը սուս ա անում, նոխտ ղզղանը յոր օնում: Մին չեր-թանը ետը համին ղզղանը Պուղին մին էլ ա օզում: Մեյիֆը մը-տածում ա. «Ղզղանը տամ, բալի մին էլ ա ծննական»:

Մին ամես անց ա կենում՝ Պուղին ղզղանը պուրում չի:

— Պուղի, ա պել մեռած, պա ղզղանը խե՞ պուրում չըս:

— Մեյիֆ, պա ասել չըս, ղզղանը ստակալ ա:

— Ա Պուղի, պա ղզղանը կստակե՞:

— Էդ հունց ա, ծնելին հվատում ըս, ստըկելին հվատում չըս:

## 188. ՏՈՒ ՔՅՈՒՌՆ ԸՆԳԵՐ, ԽՄ՝ ԱՐԱԽՍԸ

Մրթըկնեզ կռև ըն անում:

Կնեզն ասում ա.

— Քյըննական ըմ ըղնիմ Քյուռը, ֆզանա պըծընիմ:

Մարթն էլ ասում ա.

— Ես էլ ֆյըննական ըմ ըղնիմ Արախսը, էլ հա կյլական ընֆ ո̈ւրո̈ւր նհետ ըղնինֆ:

## 189. ԱՓՍՈՍ Ա ՔՅՈՒՌԵՆ ԾՈՒԿՈՒՆԸ

Մրթըկնեզ միշտ կռն ըն անում:

Մին օր կնեզն ասում ա.

— Քյըննական ըմ ինձ ֆցիմ Քյուռը, ֆեզ խայտառակ անիմ:

Մարթն ասու՞ ա.

— Գե՛, դե՛. մին թֆյա հալալ ծո̈ւկուն ընֆ ուտում, ֆյընում ա ըն էլ մուրտառե:

## 190. ՄԵՀՏԻՇԵՆՈՒՄ

Մարը ըխնկանն ասում ա.

— Մածունը մերալ ը՞ս:

— Հա, մերալ ըմ:

— Պա հի՞նչավ ըս պտատալ:

— Ապրը շըվարավը:

— Պա եխտոտ չի ըլա՞լ:

— Չէ, հըլըղորալ ըմ, եռնան:

## 191. ՎԵՉ ՇՆԱՑԵ ՅԱ, ՎԵՉ ՔԱՂԱՔԱՑԵ

Մին մարթ նի յա մննում մին շեն։ Մին ճլևուր էլ էն ա ըռնում շնըմաշումը նստած։ Էս անտես-աննանաշ մարթին եշում ա, ինքը ուրան ասում. «Սա շնացե՞ կընի, թա քաղաքեցե՞։ Էսա քյըռնում ա ըխպրան նուր խմե, թա պերանը փեշկավը սրփից, ուրեմն շնացե յա, թա չուքան յալլեխ տուս կալավ սրփից, գյիդա վեր *քաղաքեցե յա»։*

Աննանաշ մարթը չոքում ա ըխպրին կոխկեն, էրկան նուր խմում։ Լնա ընդի չոքած փափաղը վեր օնում, պրանավը մե նետ աշ քաշում, մե նետ՝ ձեխ։

Հլևուրն ասում ա. «Սա վեշ քաղաքացե տեռավ, վեշ շնացե»։

## 192. ԴՐՂԱՆՑ ԱՇՈՏԵՆ ՔՑԱԼԱԳԸ

**Ղզըլեցե Աշոտն** ու սխպտակշնացե դնգյըրաշի Տիկրանը սեռավ ննզերունք ըն ըլալ, մինտեղ նաց ուտեխ, նամ էլ ուրուր միշտ թուփ կյախ, ուրուր քյալյնգ կյախ։ Մե նետ Աշոտը ռուզյունը մթընմթեն կյամ ա Տիկրանենց տոնը։ Եշում ա տեսնում՝ կնեգը լվաց ըրած, տռանը քուղավը կախ ըրած։ Տնղըղում ա. լվացան մին լավ ճլըվփոխան յոր օնում, ծուցան թոխտը տուս օնում, կարքեն-սարքեն պտատում, տնում կռուտակեն, նի մըննում տոնը։ «Այ պարի ռուզյու», «Աստծու պարին»։ Ուրուր կըլվըկոլ ըն ընում։

— Աշոտ, էս ա քանե վախտ ա ըրվացալ չըս, դե պատմե տեսնամ։

— Տիկրան, նի՞նչ ասիմ, լավ ըմ։ Նոր ըմ Բաքվա եկալ։ Մին ճլըվփոխան մեր Գոնարիկին նետե յըմ ինք կալալ, մինը՝ իմոր, մինն էլ՝ Շափաղաթեն։ Օրիշ պեն կրեցալ չըմ պիրիմ, խնթըրում ըմ նղանաք ուշ։

— *Էդ նի՞նչ ննղուքուն ա վեր քաշալ ըս, խե տու օրի՞շ ըս,* վեր խլաքավ-բրաքավ նի մննիս տոնս։ Ախնի, տանը նինչ կլեղած-պտատած պեն օնիս տուս կալ պեր. մեր Աշոտը քզ էտե խալաթ ա պերալ։

Կնեգը աննարմար ա զգում ղունաղեն քշտեն պտատածը պեց անե, ընդի էլ տնում ա տախտեն, ինքը նացու պաղրաստուքուն տեսնում։

Աշոտն ու Տիկրանը լավ ստում ըն խմում: Աշոտը եր ա կենում «Պարի ֆշեր» ասում, ծիծ եր ընում, ֆյընում:

Վեր մին ֆանե րոպե անց ա կենում, Տիկրանենն խելքը պարզում ա:

— Ախճի, Շափաղար, ախեր ճիշֆան մտածում ըմ, ղզղլեցե Դրղանց Աստամեն տղա Աշոտը, սիպտակշնացե Տիկրանեն կընգանը ճետե խալար չի պիրիլ, մին էն պտատածը պեց րրա:

Կնեգը պռւռում ա պեց անում:

Մարթն ասում ա.

— Մաշալլա մարիփաթեդ, Աշոտ տղա, ճանց ըս ղորթ ասած ընիս:

— Աղա, էս իմ ճըրվփոխանս ա, էսա ճալա նամ-նամ, ֆուղան ա եր կալալ...

## 193. ՄԵՂՔ Ա ԿՆԵԳ ԱՍԵԼԸ

Աշանեցե 80-ամյա Ղզարանց Հակոբջանն ասալ ա.

— Ա ժողովուրթ, մեր Օսանննեն ճետ էնֆան որուֆշեր ըմ ըրալ, ֆուր-ախպեր ընֆ տեռալ, մեղֆ ա կնեգ ասելը:

## 194. ՀԻ՞ՆՉ ԿԸՆԻ

— Շափաղտոր, ախճիգդ անակին կյեշ ա, մինչև մին ծի, մին կավ, մին կալ չտաս, տղես ճետե օզողը չըմ:

— Հինչ կընի, կտամ: Քյուռեն նրան ճի՞նչ կպկասե:

Երբ ճամաձայնության են գալիս, Շափաղտորն ասում է.— Կլխես մատաղ ընիս, ես էդֆանը տվե, մին տես տուֆ ճիշֆան բղիֆ տալ, վեր տանա ըլածեն օզող ընի:

## 195. ԴԱՐԴՍ ՕՂՏԴ ՉԻ

Մին մարթ օղտը կուրցընում ա, շոռ կյախս մին ախճիգ ա պտաճում:

— Բալա, ջանեդ մատաղ, օղտը չըս տեսա՞լ:

Ախճիգն ասում ա. — Մեր շենան էրկու տղա ինձ օզում ըն...

— Օղտ ըմ ասում է, օղտ:

— Մինը մեր շենան ա, մինն էլ իմ դայու տղան ա:

— Ախնի, տղա չըմ ասում, օղտ ըմ ասում: Օղտը չը՞ս տեսալ:

— Ես օզում ըմ շնացուս ֆյրնիմ, թանրին եշած՝ մեր դայուն տղեն ըն տլական: Ես էլ օզում չեմ:

— Ախնի, լավ չը՞ս սկանում, օղտը, օղտը:

— Քյուլս վեռետ, ամեն մարթու դարդ իւրան նետե օղտ ա:

## 196. ԿԼՈԻԼԻՐ, ՄԻՆ ՕՂՏԸ ՇԻՆԻՐ

Ըլըվերդուց Անդունը իննասուն տրեկան մեծ մարթ ա ըլնում, նյաթումը նստած: Ճանչերը կյամ ըն յրա տեռնում, չըրչարում: Անդունն ասում ա.

— Ախ, աստուծ, յանի վեր ըշխարքես ճանչերը լոխ կլուլիր, մին օղտը շինիր, նի՞նչ կնար:

## 197. ԻՐԵՔ ՊԵՆ

Մին ղարաբաղցու նըցրին. նի՞նչն ա էրկան բպրելիդ պատնառը: Ասից.

— Օթը, թոթը, թիյին կոթը:

## 198. ՊԱՏՄՈՂԸ ՍՈՒՍ Ա ԱՆՈՒՄ

— Ճղացեն կոխկեն մին նավլու պուն ա ըլնում, մաչին՝ նավեր: Մե նետ աղվեսը կյամ ա թա կյուղանա, ճանկարծ նվերեն տարը իրեսնըեր ա ըլնում՝ փադը ծերֆեն: Աղվեսը վխելան լոֆ ա տամ, պտրնանավը ըղնում նեղացը:

Պատմողը ըստեղ սուս ա անում:

Լսողնեն ասում ըն.

— Եռնան, պա նի՞նչ տեռավ աղվեսը:

Պատմողն ասում ա.

— Դե նի՞նչ ըղի տեռնա, աղվեսը նղացպան չի տռնըլակտն, տնա ա կյլական փախնի, ըլի:

## 199. ՂՋՂԼԵՑԵ ՂՋԱՐԱՆՑ ՀԱՆԵՍԸ

Հանեսը վխեխս ա ընöւմ, թա վrաrած Կոկառավն անց կենա: Ծերfերը սրտեն խաչ ա անում, կոխկեն վեննը կենում: Էդ տrութունումը էrկու կնեզ ըն կյամ, խնթrում, վեr ամեն մինը էrկու մանեթ փող կտա, մինումինակ թա ծrfrներան փոնե, անցկցնե կյետեն էն մին անգյունը:

Հանեսը սrտըվանվում ա, ասում ա. «Էս լնա լավ տեռավ: Նի կմննիմ էrկու կնզանը ղաթը, ինձ կտանին տուս օնին ընղեղ, չnru մանեթ էլ փող ինf կօնիմ»:

Վզäվ օնում: Կնանուցը ծերըrներան փոնում ա, նի մննում նöւrը: Կյետեն մաչտեղավը fյնիյխս, կյետը լափու վա տամ, կընանուցը մնին fչում տանում: Էն մին կնեզը ղաչանf անում.

— Հանես, ջանս fե մատաղ, վազ տռ փոնե:

Հանեսն ասում ա.

— Սուս ըrա, թող fչի, էrկու մանեթը ճինչ ա, վեr նա ճետե նեղութուն fաչիմ:

## 200. ՄԵՏՔԴ ԽԱՅԻՆ Ա

— Կնզանդ փorեն ճղուպուr կոտrիմ:

— Թա մետfդ խային չի, էrկու fաr եr կյäլ, մինը ռակեն տիr, մինը՝ կլխեն, ճղուպուrդ կոտrե:

## 201. ՎԵՐՑԱԿԸ ՀԻՆՉՈՒ ՀԵՏԵ ՅԱ ԿԱՆՉՈՒՄ

— Արա, Մաղաf, բäլի գյիդաս, վեrցակը fչեrը ճինչու ճետե յա կանչում:

— Պա fու տռնը չինվի, գյուղո՞ւմ չըս խե: Կանչում ա, վեr ճավեrը fունավ չի ճնցրնին, ծառան վեr ըղնին:

## 202. ԱՆՈՒՄԴ ՀԻ՞ՆՉ Ա

Մին մաrթ մին մաrթու պտաճում ա, ասում ա.

— Անումդ ճինչ ա՞:

էս մա՛րթը պատառ ուժեր ա ընո̈ւմ խուսեխս, կմկմամ ա.

— Մըս... մըս... մըս... Մոսես ա: Պա... պա... քուճը հի՞նչ ա:

— Իմն էլ ա Մոսես, ամա էդքան էրկան չի:

## 203. ՏԱԽՏԵՂ ՉԸՔ ՕՏՈ՞ԻՄ

Մին ղարաբաղցե ըղնում ա մին թիփլիզեցու տոն ղոնաղ: Եշում ա տեսնում՝ սուփրեն տախտեղ չկա, ասում ա.

— Տուք տախտեղ չըք օտո՞ւմ:

— Չէ:

— Խեղճ: Պա հո՞ւնց ըք յոլա քյընում:

## 204. ՓԱԼԱՆԴՈՒԶ ԿՈՒՔԱՆԸ

Փալանդուզ Կուքանը սարքերը յոր օնում, Սզնեքա քյընում Ննգիչան, մին տան բա̈նդ ընո̈ւմ: Տանը մարթը ուռթանան էր ա կենում քյընում հանդը, Կուքանը մնամ ա մինակ, ո̈ւրան կործեն ննետ: Տանը իրեք հարթն ա ընում, մին սկեսուր, մին սո̈ւրո̈ւ խոխեք, բուխարիգին կրակեն էլ մին մեծ ղզղան: Կուքանը աշկեն տակավը եշում ա, տեսնում մեծ հարթնը եկու, ղզղանեն ղափաղը եր կալավ, մին հափուռ աղ ածից, խառնից քյընից: Մին հովուր վեր անց ա կենում, մաշնակ հարթնն ա կյամ, ղզղանեն տակը տամ, մին հափուռ աղ քցում, խառնում քյընում: Պատառ վեր կենում ա, պիծի հարթնն ա կյամ, ղզղանեն ռեխը պեց անում, մին հափուռ աղ քցում, խառնում, քյընում: Կլխավն էլ սկեսուրն ա կյամ, ղզղանեն տակեն մին չոփ տընում, մին հափուռ աղ ածում, շիրեփավ խառնում քյընում:

Կուքանը ղրաղե աշկը հոփ օնում. «Պա-հա, սահանք ո̈ւրո̈ւր անա խռավ ըն»: Եր ա կենում մին հափուռ աղ էլ ինքը ածում, հաչա̈փթ-մչո̈ւթը հվաքում քոչում:

## 205. ՇՈՒՇՎԱ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

— Կարծես Շուշի ըս քյընում:

— Կարծես:

— Կարծես կյինի քս տանում:
— Կարծես:
— Կարծես լավ կյինի ա:
— Կարծես:
— Կարծես նեստա մին լավ խմըլական ընf:
— Էդ մեկը չկարծես:

## 206. ՎԵՆՆԵՐԴ ՏԵՄ ՉՏԱՍ

Արեք կրակ ար վեր ածում, հնձողն էլ մուխրտանձին շուfումը փրթուշ ար օտում: Մորեխը լոf ա տամ ընգնում փրթուշին ամանը: Հնձողը լպստում ա տեն fցում: Պատառ շընցած՝ մին էլ ա նի ըղնում: Հնձողը մին էլ ա լպստում տեն fցում: Երրորդ անfամ վեր ըղնում ա, հնձողը փադի fթոլը տակավն ա տամ փրթուշին նհետ կոլ տամ:

— *Վեննէրդ տեմ չտաս, իմ կողfս fունան հատտ ա, կոլ ըմ տըլական:*

## 207. ՔՈՒ ՄՈՐ ՏՐԽՆԵՆ ԿՅՈՒԴԱՆՈՂՆ Ա

Մե հետ մին կոխկենող ա կյամ խերխանա շնըմաչին վեննըր կենում, թա.

— Հու կկարե տուս կյա առաչս, փոնիմ նըրմզի անիմ:

Կոփիե ըն տամ խալղուն fցում էն հեյվանենն առաչը: Խալղին խեղն-խեղն բռաչին վենն ա կենում, էն էլ թխում ա, բիզ-բիզ ա անում, կփըկոփե ա անում: Ընդղան մինն ասում ա. — Խալղի, *հինչ պենե քս, էդ fու մոր տրխնեն* կյուղանողն ա, է:

Սկանալն ըրաթ խալղին փանըլեանենն փոնում ա հըլըղորում, մին նոխտ տրեխ շունում, թող անում fցում մարթունցը վեննէրեն տակը:

## 208. ԱՆՑ Ա ԿՆՆԱԿԱՆ ՔՅԸՆԻ

Ողորմածհոfի Պլը Պուղուն էշը մտնում ա Մեյիf-Ծանենազարեն արտը:

— Մելիք, գիդում ըմ, շար մարթ ըս, քզանում պնըլական չըս, սան տեսնամ, նինչ ըս ընձական:

— Հինչ ըմ ընձական, կիրեկի օրը էշդ տնձական ըմ շնամաշը, տամ ժըղըվուրթեն դիվանն անե՝ էշիդ նաքյին կտրին, պեց թողին:

Իմաստուն Պուղին բստեղ ծիծաղում ա:

— Հի՞նչավ ըս ծիծաղում:

— Էդ լավ ա: Էշս վեր տանիս շնամաշը, ժղովուրթ ըն, թուփ ըն տոնըլական, մինն ըսըլական ա՝ պերեք նաքյին տական կըտրինք, էն մինն էլ՝ մաշան կտրինք, մինն էլ՝ պոկան կտրինք, կոլ ըն ընձական, ուրուր բոեխ կրծկործին: էշս էլ քու խելքեդ չի, մինչև նանգը-նունգը, նղե ա ընգլական կյա ուրան կյումը:

## 209. ԷՍ ԷԼ Ա ՇԱՏ

Աբրամը Թևոսեն նրևանն ա: Մին ուրթանա Աբրամը Թևոսեն ղոնաղ ա ծեն տամ: Թևոսը մին պիծի նափուռ նուր ա բրեսավը տամ, թա տուս կյա, կնեգն ասում ա.

— Իրեսդ խե՞ սերուն չըս լվանում:

Թևոսն ասում ա. — Աբրամեն նալա էս էլ ա շատ·

## 210. ԳՈՐԾԸ ՀՈ՞ՒՆՑ Ա ՔՅԸՆՈՒՄ

Պելանց շենին բրիգադիրը իրեք նոքու ղարկում ա խաղողաբաղը, վեր նենակներ տնգոտին: Նրանցա մինը բդի փոքր կըտրե, մյուսը նենակը տնի կտրած փոսումը, էն մինն էլ՝ վեղավ անե: էքսի օրը նենակ տնողը քյընում չի: Օրվա վերչին բրիգադիրը պտանում ա.

— Հը, գործը հո՞ւնց ա քյընում:

— Լափ լավ ա քյընում,— ասում ա փոս կտրողը,— դուզ ա, նենակը տնողը եկալ չի, ամա մունք մեր գործը բրալ ընք: Ես փոսը կտրալ ըմ, Հաբեդն էլ վեղավ ա բրալ:

## 211. ՏՈՆԸ ՊԱՐԱՆ Ա ԿՅԱՄ

Այլերեն շվալն էն ա ընում տրած տանը սըունին տակեն: Ջառին քյընում ա թա մին կից նեստա յոր օնե, շաղաղ անե:

Մերխանը մինը սրունին էս անգյունավն ա մեկնում, մինը՝ էն անգյունավը, կիցխում: Սրունը մնամ ա կիցխած ծերխերեն մաշտեղը: Ճարը կտրած հարայ ա տամ: Սաղ շենը հվախվում ա: Պա հո՞ւնց անին: Որոշ ըն անում՝ կացենը յոր օնին սրունը կտրին: Խեղն Ջառուն մին սրունանե տռնը կլխրներեն պարան ա կյամ:

## 212. ՎԵՆՆԱՎ ՔՅԸՆԻՄ

Պելանց շենան մին մարթ ըղնում ա Բախու՝ էրկու լիգյը շվալ էլ շլակեն:

— Կնեգս ասալ ա՝ պոեզդավ կխյընիս, պա պոեզդը վե՞րն ա:

Մին ժուլիկ սկանում ա, մոտանում.

— Հաւե պոեզդը,— ցույց է տալիս ռելսերը,— մին վենեղ տնում ըս էս մին ըրկաթեն, մինն էլ՝ էն մին ըրկաթեն, դինջումդ խյընում:

Խեղն մարթը մին վեննը տնում ա էս մին ըրկաթեն, մինն էլ՝ էն մին ըրկաթեն, էրկու շվալն էլ շլակեն, շխըռ-շխըռ քնելավ խյընում: Պատառ վեր խյընում ա, ասում ա. — Ա սա պոեզդը վեր խյընի, վեր կյամ, վեննավ խյընիմ:

# ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԱՀԱՐԻ, ԿԱՆՉ կամ ԱՐԵՎԱԿԱՆՉ.— Հատուկ արարողությամբ, երգով ու պարով մորթում էին հարսանիքի արջառը («մսացուկը»): Մորթում էին վաղ առավոտյան, արևագալից առաջ: «Սահարի» եղանակով էին զոհում բոլոր մատաղացուները: Զոհի արյան մեջ թաթախում էին նոր կողպեք ու բանալի, կողպում, որպեսզի չարի ճանապարհը փակվի:

ԱՂԱՉՈՒՐ.— Աղաչրով լողացնում էին փոքր երեխաներին, նորածիններին՝ մարմինն ամրապնդելու նպատակով: Աղաչրով լոգանք էին ընդունում նաև տարեցները, իբր դա զերծ է պահում մաշկային հիվանդություններից: Աղի բրնոցներ էին դնում թարախոտ վերքին:

ԱՎԵՏՉՅԱ.— Տալիս էին բոլոր բարի լուր բերողներին:

Ասում են մի մեծաթիվ ավազակախմբի գլխովին ջախջախելու, Ավդուռօջախ հին եկեղեցու հարստությունը Մաթեգա (Մաթիկ) վանքը անվնաս տեղափոխելու բարի լուրն առնելով, Վերին Ավդուռ գյուղի բնակիչ հարյուրամյա կույր Մկրտումը, տևական խրախճանքների համար, հաղթանակով եկած երիտասարդներին նվիրել է հինգ արջառ և հարյուր ոչխար:

ԱՆԱՍՆԱԹԱՂՈՒՄ.— Լավ եզան (գոմշաեզան), կովի (գոմշակովի) եղջյուրները կախում էին տան ճակատամասից, եզը սատկելուց մարմինը թաղում էին կալի մոտ (կալի գերեզմանոց): Պահում էին նաև վզի (յալ, ալի) և պոչի (ագի) մազերը, դնում էին քսակի մեջ, իրենով կապում, թաղում հողում, իբր նրա հետ թաղում էին նաև չարը:

Սատկած սիրելի անասունի հետ թաղում էին նաև այն զարդարանքները, որ կենդանության ժամանակ տվել էին իր վատակի համար:

ԿՈՐԻԶՈՎ ՏԱԼ (կուրեզավ տալ).— Հարսանիքներում, տոնա-

կյան հանդեսներին, թատերական, զուսանական ներկայացումների ժամանակ չորացրած հոն (հոււն), դամբուլ և առանձնապես կորիզ էին նետում չսիրած մարդկանց. վատ նվագողին, վատ պարողին, դերը վատ խաղացող դերասանին, կարգը, սովորույթը խախտողին:

Եվ հակառակը: Իր շնորհիվ, առատաձեռնությամբ, վեհանձնությամբ աչքի ընկածներին, որպես հարգանքի, պատվի նշան, թանկարժեք նվերներ, ուտելիք էին ուղարկում՝ հատուկ փաթեթների մեջ: Հաճախ ուղարկում էին խմիչքներ՝ լավ գինի, մեղրաջուր և այլն: Հարգվողը պարտավոր է, որպես փոխհարգանքի արտահայտություն, բոլորի ներկայությամբ ճաշակել, խմել, ընդունել ուղարկվածը:

ԽՆՁՈՐ ՏԱԼԸ.— Տղաները, սիրած աղջիկներին, առաջին հանդիպումին կարմիր խնձոր էին տալիս: Վերցնելը փոխադարձ սիրո իմաստ ուներ: Աղջիկները սիրած տղաներին ձեռագործ գեղեցիկ թաշկինակներ էին նվիրում, հարազատները (ծնողները)՝ ձեռագործ գուլպա, ժապավեն, գոտի և այլն: Տարվա որ եղանակին ուզում է լինի, տղան, սիրած աղջկան կամ ծաղկեփունջ պետք է նվիրի, կամ կարմիր խնձոր: Եթե անհնարին է հանդիպումը, կարմիր խնձորը կամ ծաղկեփունջը, համատարիմ մարդու միջոցով ուղարկվում էր: Հարսանիքներին, ուրախ հանդեսներին, որպես հրավերի նշան, ուղարկում էին կարմիր խընձոր:

ՍՈՒՐԲ ԹՎԵՐ.— Իրեքը, չորքը (չորեքը), օխտը, քառասունը, հարուրը սուրբ թվեր են:

ՊԱՏՐՈՆ.— Փեսայի հայրը: Ըստ ընդունված կարգի, փեսայի հայրը հարսի առաջին հովանավորն էր ու խնամակալը: Պատրոնը միշտ ուշադրության կենտրոնում է հարսի, ինչպես և հարսը՝ պատրոնի: Առաջին նվերները պատրոնն է տալիս հարսին, իսկ հարսը հլու-հնազանդ ու նրանից անխոս ծառայում է նրան: Երբ առաջին անգամ հարսը լվանում է պատրոնի ոտքերը, նրանից նվեր է ստանում: Առաջին խոսելուց՝ նվեր է ստանում (առանձնապես՝ երբ ասում է «պապա» կամ «հայրիկ»): Հարսը չպիտի համարձակվի լիաբերան խոսել պատրոնի հետ. նա միշտ պարկեշտ է, չափավոր: Նրա իրավունքից դուրս է բարձրագոչ ծիծաղել, նրա ներկայությամբ գուրգուրել, համբուրել անզամ երեխային, ինտիմ հարաբերությունների մեջ մտնել ամուսնու հետ, ջուր խմել, ուտել, բղավել, կուրծք տալ երեխային,

երկար մնալ պատրոնի մոտ, նստել առանց իրավունքի, ի ցույց դնել օրորոցը:

ԳՈՐԳԱՄԱՔՐՈՒՄ.— Հնում, որպես կանոն, տանտիկիններր գորգանախշերը պայծառեցնում էին քացախով: Գորգը փռում էին արևի տակ և քացախաջրի լուծույթով շփում, մաքրում գորգապատերը:

ՀՅՈՒՐԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ.— Հայերի հինավուրց սովորությունն է: Մի ավանդությամբ՝ ասված ինքն էլ չի կարողացել խուսափել հայերի հյուրասիրությունից: Հյուրընկալվել է հայերին ու մնացել «բերանը բաց»: Այդ օրվանից անհյուրընկալ ու մենակյաց ասված նախանձում է հայերին:

Մի կտոր հացը, մի գունդ սոխը, մի բաժակ օղին, մի թաս գինին, տան եղած-չեղածից միշտապես սեղանի վրա էին, քանի որ կարող էին հանկարծակի հյուրեր հայտնվել («Դռնաղն ստանձունն է», «Դռնաղը հմաշկում կրնի, ուտրցրնել բդիս», «Դունադեն անա խնայիլ չըն, տան ըլած-չլածը կտրնին դունադեն բռաչին», «Յա տնվզնը մարթին հաց տված, յա քա հոր յրա քար քըցած»):

Ընտանիքը ճաշելիս միշտ ավել բաժակ ու ափսե էին դնում սեղանին՝ հանկարծահաս հյուրի համար: Ոչ միայն տանը, օջախում, այլև՝ այգում, դաշտում, կալում, ճանապարհորդելիս իշխում էր նույն հաստատուն օրենքը:

ՀՅՈՒՐ ԿԱՆՉԵԼԸ.— Յուրաքանչյուր տուն պարտավոր էր հանախակի հյուր կանչել գյուղի (բնակավայրի) պատվավոր մարդկանց, բարեկամներին, ազգայիններին, բարեկամներին, հարազատներին, ազգի, թաղի մեծերին, ազգում, թաղում հայտնված նորեկներին և այլն: Նման դեպքերում ճաշասեղանի վրա պետք է լինի ամեն ինչ. «Քաշին պներան մինչև սոյնին եղը»: Պետք է լինի ընտանի և վայրի թռչունների մսից պատրաստված տարբեր կերակուրներ, և իհարկե, խորոված, ընտանի, վայրի կենդանիների մսերից պատրաստված բազմահամեմ ճաշատեսակներ, ձկնեղեն, խնեցու նոր հարած յուղ ու թան, հին գինի, օղիներ՝ բոստ ճաշակի, աղանդեր, տարբեր պտուղներ, բանջարեղեն, կանաչի և այլն:

Վերջում հյուրերին հրամցնում են անուշաբույր հյութեր ու մեղրաջուր:

Հյուրին մենակ չեն կանչում:

ՏՈՆԸ ՏՈՆ ՉԻ ԿԱՄ ՍՈՒՓՐԱՆ ՀՎԱՔԵԼ.— Յուրաքանչյուր ըն-

ռանիք պատրաստ պետք է լինի բնդունելու ճանապարհորդին, տան դուռը ծեծողին, պատահական անցվորին և բավարարելու նրանց պահանջները, հյուրասիրելու սառը ջրով, կաթով, մածունով, թանով, ողելից և զովացուցիչ ըմպելիքներով...

Բաց սեղան չունեցող տանտիրոջը կոչել են՝ ՉԿԱՄ, ընտանիքը արհամարհվել է համայնքի կողմից և տուն (օջախ) չի հաշվվել:

ՍՈՒՓՐԱՆ ՀՎԱՔԵԼ.— Այս դարձվածքը ունեցել է անհյուրընկալ լինել, մարդահաշվից դուրս գալ, մահանալ, տունը ավերվել, ժողովրդից կտրվել իմաստները:

Սեյդիշեցիները անհյուրընկալ են: Ասում են. եթե կեսգիշերին էլ անծանոթը հասնում է Սեյդիշեն, նրան խորհուրդ են տալիս շարունակել ճանապարհը. «Օր կա, եր ընցեր»:

ԱԽՊԵՐԱՆԱԼ.— «Հըմրին հացան կծել».— Երկու ընկերներ ախպերանալուց առաջ կծելով մի հաց էին ուտում: «Ուրուր պըռանում թքել»:

«Մազ թաղել».— Յուրաքանչյուրն իր ունքից մի մազ է պոկում, որ միասին դնում են ու թաղում հողի մեջ: Այս արարողություններից հետո մինչև իրենց կյանքի վերջը ախպերացած մարդիկ իրար հավատարիմ են մնում:

«էՍ ՀԱՑԸ ԻՆՁ ՔՈՒՈՒԸՑՆԽ».— Երդում հացով: Ձեռքը դնում էին հացին՝ երդվում և անպայման կատարում էին խոստումը: «էս հացը ինձ քոռըցնե, թա անիմ ուչ», «Թա սու ասիմ՝ էս հացը ընձարա վեչ քթենվա» և այլն:

ՀԱՑ ԸՐԱՏԵՆ ՏՈՆԸ.— Վեր չենը դռնաղ ա եկալ, տըրկացալ ըն, հու վեր էտ օրը հաց թխած ա ըլնի, դարկալ ըն ճահանց տոնը: («Թաժա հացը դուհաղեննա»):

ՄՂՐՃԸՐԱՎ ՀԱՑ.— Տնական օրերի համար պատրաստում էին տարբեր թխվածքներ. բիշի, գաթա, կընահունց և այլն: Թխվածքները հունցում էին նռան հյութով, կաթով և մեղրաջրով:

«ԳԱՆՉՈՎ».— Առավոտ վաղ, գյուղի ամենալավ զուռնաչին բարձրանում էր դիմացի բլուրը, «Գանչ» էր նվագում և մարդկանց ուղևորում աշխատանքի: Գյուղացիները «Գանչով» հանդից գալիս էին, «Գանչով» հաշում, «Գանչով» հավաքվում ժողովի և այլն: Ժողովուրդը գիտեր, թե «Գանչի» այս կամ այն մասը կամ տարբերակը ինչի է հրավիրում: «Գանչը» «Յալի» պարեղանակի նախանվագն էր: Հարսանիքի օրը «Գանչի» փոխա-

րեն նվագում էին «Յալիի» պարեղանակներից մեկը (նրա մեջ մտնում էր ավելի քան հիսուն պարեղանակ):

ՀԱՄԵՑԵՔ ԱՆԵԼ.— ա. Հարսանիքներին և ուրախ հանդեսներին, պատվավոր մարդկանց, հյուրերին արժանավորապես հրավիրում էին, խոնարհաբար խնդրելով ներկայանալ: Նրան բերում էին ձեռքը գոտկատեղից բարձր բռնած «Կլխրներես (կլխես) յրա տեղ օնիս», «Տոնը քունն ա, տարը տու վըս, տոնը փրսըվեր տիր, հունցու քեփդ տամ ա, ընդի վրա» և այլ արտահայտություններով: Իսկ երբ արժանավորն ինքն է գալիս, նրան դիմավորում են տան մուտքի մոտ, հանդիսավորապես բաց են անում դարբասները, ձեռքից բռնած բերում նստեցնում էին հյուրասեղանի «գլխին», հատուկ գահավորակի վրա (թախտին) և փափուկ բարձը դնում կռնատակին: Մուտքից հաճախ հրավիրելու են ուղարկում նաև դեռահաս՝ 8—15 տարեկան փոքրերին:

բ. Հարսանիքներին, ուրախ ծիսակատարությունների ժամանակ պարի էին հրավիրում պատվավոր մարդկանց, աղջիկը՝ սիրած տղային, տղան՝ աղջկան, իրար հրավիրում էին թշնամի անձինք, պարելով հաշտվում, իրարից խռով մարդիկ և այլն:

«Համեցեք անելը» միաժամանակ առանձնահատուկ պար է՝ պար աղերսող *շարժումներով* ու *բովանդակությամբ*: Աղջիկը կամ տղան կարող են «Համեցեք» պարել միայնակ՝ արտահայտելով իրենց սերն ու կարոտը, համակրանքը, անգամ հակակրանքը (ժողովրդի մեջ տարածված հայտնի կարծիքին դեմ գնալու համար): Այս պարագայում, պարողը որպես արարողության ավարտ, պարում է իր սիրածի հետ՝ ուրախ ու անձնվեր:

«ԽՌԱՎԸ ՀԱՇՏՎԻ».— Հարսանիքների ժամանակ, ուրախ հանդեսներին, երբ առանձնապես սաստիկ մութ է, գիշերը, մի քանի րոպե հանգցնում են լամպերը՝ առանց վաղորոք զգուշացնելու: Մինչ այդ, խռով ու պապակ սիրահարները մերձենում էին իրար և լույսերը հանգցնելուց համբուրվում էին իրար հետ: Ուշացած «հաշտվողները» ծիծաղի պատճառ են դառնում լույսը վառվելուց հետո: Որպես կանոն, «հաշտությունը» պետք է կայանար մինչև լույսերը նորից վառվելը:

«ՅԱԼԻ».— Սկզբնապես արևագալի հետ կապված ծիսական պար էր, որ դարեր շարունակ ուղեկցել է հայ ժողովրդին և միշտ էլ համարվել է լավագույն ու հոգեհարազատ պարեղանակը հայ աղջիկների և տղաների համար:

Սակայն «Յալին» մի պարեղանակ չէ, այլ հնում ստեղծված

բոլոր պարերի ամբողջությունը, որ հետագա դարերում հղկվելամբողջացել է, դարձել հարսանեկան, հերոսական պարերի յուրահատուկ մի գանձանակ՝ իր մեջ ներառնելով մեր ժողովրդի ստեղծած հնավանդ պարային հարստությունը:

Մեր հին լեզվում յալին համանիշ էր պար (պապար) հասկացողությանը:

Հնում, սատկածներին զոհ մատուցելու ժամանակ, ժողովուրդը «յալի» է պարել մինչև զոհի արյունահամ լինելը և պարով աղերսել է ծագող արեգակին, որ զոհն ընդունելի լինի: (Տե՛ս «Կալա եա» և «Գանչով» բաժինները):

ՊԱՊԱՐԿԱՆՁԻ.— Պարի հրավեր.— Գարնան տոներին, ծաղկահաղեսներին, հարսանիքի ժամանակ, տղաների կամ աղջիկների խումբը, նվագակցության տակ երգով ու պարով կանչում է մյուս խմբին՝ «Յալի» պարելու: Պապար կանչել կարող է նաև անհատը: Կանչվող խումբը (կամ անհատը) պարտավոր էր ընդունել հրավերը: Պապար է կանչվում այնքան ժամանակ, մինչև որ համալրվում են խմբերը, պարի մեջ են մտնում բոլոր պատանիներն ու աղջիկները:

ՃԻՆՋԵՂ ԱԾԵԼ.— Ճոճախաղ: ՃՈՃ—ճինչեղ.— Բարձրաբերձ ծառի ամրակազմ և հորիզոնադիրք ճյուղին ամրացված երկտակ պարան, որով ճոճախաղում են:

Երբ խաղացողը հասնում է ճոճաքոչիքի բարձրակետին, մահակով (ճիպոտով) խփում են նրա ոտներին, ասելով՝ «Նշընածեղ անումը տո»: Եվ նա պարտավոր էր տալ: Իսկ երբ համառում էր, ավելի ուժգին էին խփում, մինչև հասնում էին նպատակին: Այսպես, բոլորին «փորձության» ենթարկելուց հետո ընդգրկում էին շարունակվող արարողությունների մեջ:

Ճոճվողը լրիվ անունն ասելու փոխարեն կարող է արտաբերել անվան միայն առաջին հնչյունը՝ սիրածի անվան գուշակությունը թողնելով լսողներին:

ՆՈՐ ՏԱՐԻ.— Վեր տարեն փիս ա ընում, տարվա վերջին օրը հանդավարը ուփում ըն, տարեն ընեծում, փսորեն ճհետ տեն fցում, ասում. «Քյընիս՝ վեչ կյաս»: Օտում ըն-խմում, հղե տընում, մին fող յոր օնում, հղեն կապում, fշկըռում, վեր կարե վուչ եա կյա:

Վեր հընցած տարեն լավ ա ընում, տարուն կլխեն օտում ընխմում, սուփրան հվաfում չըն մինչև նոր տարեն կյալը: Հնցնեիս տարեն պատվավ, շախավ-շուխավ հղե ըն տնում: Բիշուն,

կթնըհունցեն կեսը հին տարումն ըն օտում, կեսը՝ նոր տարումը: Հին տարվա կյենացը խմում ըն, աղերում, վեր եռնայինը նորեն էլ քյուհնին աշկավը եշի: Ասում ըն. «Շենքդ-շնորհքդ թüզա տարումն ընի», «Նոր տարե, թա պակաս ըս ըննական, փոխ կալ», «Քյընի հին տարե, եկ անկյին տարե», «Վեշ մին հռանեք տեղան շիլ շըղնե» և այլն:

Ա տարե, հաղաղ ընիս, | Չարը պրանա,
Վեսկավ շաղաղ ընիս, | Չբերը բրանա,
Կնճկյրմուրավ լուսվիս, | Կյող վենը ծկըթե,
Բարավ ճնուփվիս: | Կյող աշկը չուրանա:

**ԿԱԼԱ ԵՏ.**— Հանդիսավոր արարողությունների մեծ մասը ղարաբաղցին անում է կալա ետ: Տորքը՝ կալա ետ, կնոնքը՝ կալա ետ, հռանեքը՝ կալա ետ: Տարվա ալյուրը աղում են՝ կալա ետ. «Թüզա հացան օտինք, ծմռնեն տեմ կենանք»:

Հնում հայտնի «Կալպարին» «Յալի» պարի տարբերակներից էր, ասվում էր նաև՝ «Պապարկալի», պարում էին կալը վերջացնելուց: Պարը մասսայական էր, քանի որ պարում էին իրար հարևան բոլոր կալվորները:

**ԲՈՒՆԳԸ ՇՆՈՐՀԱՎՈՐ ԱՆԵԼ.**— Նոր տուն կառուցելու ժամանակ բարեկամները, հարևանները հերթով հացով (նաշով) ապահովում են կառուցողներին: «Բոխեմա յըն շüնում»: Հացատըվությանը մասնակցում են նաև ուրիշ գյուղերում ապրող մերձավորները: Տուն կառուցելու առաջին օրը նրանք բոլորը ներկա են լինում և «բüնգը շնորհավոր են անում»: Ոմանք փող կամ թանկարժեք իրեր են դնում տան հիմքում: Տերտերը օրհնում է: Օրհնում են նաև տարեց մարդիկ ու կանայք. «Լուսը ծլլա քզ արա», «Ծոխը միշտ երգինք ընի», «Մաշին օխտը խուփավ հացու նըստին» և այլն:

Առաջին անկյունաքարին են դնում բոխչաներից մեկը, հաց են կտրում, օղի և գինի խմում: Բարեկամները ջվալներով ալյուր, կով, երինջ, ոչխար էին նվիրում տուն կառուցողին. «Շինութունը շենավ կշինին», «Մինակ քարը պատան չի կենալ»: Մինչև տան ավարտը բարեկամները պարտավոր էին օգնել տուն կառուցողներին. «Տնըը թոթխար չըն թողել», «Տանը յրա էրկան կմըտածին, նելլի շինին»:

Կինը, որ երեխա չէր ունենում, ասում են՝ չպերք ա: Տղամարդուն, որ երեխա չի լինում, ասում են՝ անպտուղ ա: Ամլո-

Կարար, զավակ չունեցող ծնողների մոտ երեխաներից չէին խո-ւում: Երբ անզավակ ծնողը գալիս է մեկի տունը, երեխաները թողնում են իրենց խաղն ու զբաղմունքը և փակվում սենյակում: Դժվար աշխատանքներում երեխաները պարտավոր էին օգնել անզավակներին:

ԱՂՆԱՂԱՋ ԱՆԵԼ.— Աղունաղաց անել.— Նոր բերքի համտեսը: Առաջին կասանն անելուց հետո, հենց կալից դուրս մոտ 10—15 կգ ցորեն էին ուղարկում ջրաղաց, աղում, հաց թխում և բերում համտեսի: Այս արարողությունն է աղնաղաց անելը: Համտեսը տեղի էր ունենում հանդիսավոր պայմաններում, «օտել-խմելավ, պարավ, երգավ»: Այդ նպատակով կալակողերին հորված գինու կարասներն էին բացում, անասուն էին զոհում և օրհնում էին առաջին հացը՝ գյոմբան, որ հաճախ թխվում էր ջրաղացում:

ՓԱՐՇ ԱՆԵԼ.— Վեր մծավոր ա ըըլալ կյալիս, հղեն գյբավ փարշ ընեխս ըն ըլալ: Խրիմյան Հայրիկը վեր եկալ ա, ըշընեցեք Նորշենա մինչև Աշան հղեն գյբավ փարշ ըն բրալ (շուրջ շորս կմ): Խրիմյան Հայրիկը ըշընեցունց օրհնալ ա. «Աստուծ ծեր բոլոր սերունդներեն հղեն փարշ անե»:

Այս սովորության հետ է կապված Ամարաս վանքը տանող հին ճանապարհի անունը՝ «Սահակա հղե»: Ասում են, այս ճանապարհով են Սահակն ու Մեսրոպը եկել Ամարաս՝ ուսուցչական դպրոց հիմնելու համար:

Փարշ են անում նաև տունը (հատակը, պատերը):

ՍԱՆԴ ԹԱԿԵԼ.— Հնում, մինչև կալին անցնելը, հացահատիկը պատինից (պանույն) հանում էին ծեծով՝ ծեծելու միջոցով: Արարողությանը մասնակցում էր ամբողջ գերդաստանը: Տալապատին շրջանաձև նստում էին և կողքներին դարսված խրձերը (որանը) քարե հսկայական սանդերի վրա փայտով ծեծում: Հետագայում այս նույն գործողությունը կատարվում էր չոր տափարակի վրա, առանց սանդի: Վայրը կոչվում էր կալ կամ կալատեղ:

ԿԱԼԱՍ ԱՆԵԼ.— Բազմությամբ փայտով ծեծում կամ ոտքերով տրորում էին հասկը: Ավելի ուշ՝ այս աշխատանքը կատարվում էր անասունների (եզան) օգնությամբ: Այս գործողությունը կոչվում էր կալաս անել, որին հետևում էր պանը քամուն տալը, որով էլ հատիկը առանձնանում էր:

ՄՋԻ ԱՆԵԼ.— Գյուղատնտեսական կամ կենցաղային ծանր

ու մեծաքանակ գործերը կատարում էին կոլեկտիվ կերպով, փոխօգնությամբ, որ կոչվում էր մչի անել: Փոխադարձ օգնությամբ կատարվում էին բուրդ գզելու, բամբակ քաղելու, քծծելու, այգեկութի, վարի, ցանքի աշխատանքները:

ՁՈՒԱՎԱՐ.—Որևէ գործ ավարտելուց հետո հայ արհեստավորը, հողագործը խորհել են նաև բարձր ճաշակի և գեղեցկության մասին: Երբեք չի մոռացվել, որ արված գործը պետք է նաև գեղեցիկ լինի, հանույք պատճառի տեսնողներին, բոլոր մարդկանց, բնությանը և աստծուն: Աշխատանքի հանդեպ ունեցած այս գեղագիտական կուլտուրան կոչվել է զռավար անել: Այս նույն իմաստն ունեն նաև նխշրնգյար (նախշանկար) անել, զռանախշ տալ, աշկու պիրիլ, զարիլ, դշրնգագործ անել և այլ արտահայտություններ:

«Աստուծ տեր ա դաշմնգը սիրում, մարթը՝ ավեր». «Անվայլ ծառեն դուշն էլ չի թառ րնում». «Ըրած գործեդ հոնանցե եշի». «Ըրած գործեդ ուրուշու աշկավ եշի». «Մարթին տեն քցիյիս քարն էլ բդի դաշանգ». «Մարթին ամեն հինշը սերուն բդի, կընեգը լհա սերուն բդի, սերուն բդի». «Գործը ըրա, կողքան եշի, վեր քեզ տուր չի կյա, ուրիշին էլ չի տուր կյալ» և այլ ասացվածքներ խոսում են վերը շարադրվածի օգտին:

ՆԱԽՇԱՄ ՃԳԱՏ.— Նախշում էին ձեռնափայտը, պուրթընըպատը, յղընպատը, դնգլբաշուն կոպալենեն, դմին կոթը, բիշինախշին և այլն:

Հայկական գեղանախշեր էին փորագրում դեռևս թարմ շիվերի վրա և վերցնում որպես ձեռնափայտ, հաակապես երիտասարդները: Հաճախ նվիրում էին աղջիկներին, ընդունելը փոխադարձ սիրո նշան էր:

ՑԳԸՃԳԱՏ.— Կեղևահան արված ողորկ շիվ, վերնամասը նախշած: Խնոցին հարելու ընթացքում յուղանպատը մտցնում էին խնոցու փորանցքով՝ որոշելու հարվածքի վիճակը: Երբ փայտիկը յուղոտված է լինում, ուրեմն ժամանակն է յուղը թանից առանձնացնելու:

ԽՁԿԱՆ, ԱՄԱՆ ՆԱԽՇԻԼ.— Նախշում էին նաև պտուղները. տանձը, խնձորը, նուռը, սեխը, ձմերուկը, սերկևիլը, վարունգը և այլն:

Ամառ ժամանակ վարունգը, խնձորը, տանձը և այլն գեղեցիկ կտրում էին, կորիզը նախշում և դարձնում կուլայի կամ կոժի ձևի: Խնձորը ատամնաձև նախշում էին, բաժանում երկու մա-

սի, նորից միացնում այնպես, որ կարվածքը չի երևում: Պտուղ-ների միջուկը հանում էին, դարձնում բաժակներ, նախշազարդում և նրանով թան, ջուր, գինի խմում: Ձմերուկի և սեխի կեղևները նախշում էին և նրանցից պատրաստում տարբեր խաղալիքներ (սայլ, վրան):

ՃՃՈՒՓԵԼ.— Արու ոչխարի, գառան, ձիու, եզան, կովի, ուղտի վիզը զարդարում էին գույնզգույն մետաքսաթելի վարդանըրման փնջիկներով (ճուճուփ), որ նրանք ավելի գեղեցիկ երևան: Մոտավորապես նման զարդեր (ծոպեր) էին գործում նաև երաժըշտական գործիքները, վարագույրները, սփռոցները, տոպրակները, պայուսակները, ձիերի երեսակալները, արծաթե, ոսկե թամբերը գեղեցկացնելու համար: Կոչվում է նաև պուժուժ (բոժոժ):

ՅԱԼԸ ԽՈԶԻԼ.— Մեկ տարեկան քուռակի վզի մազը խուզում էին, ճակատամազերից ճուճուփներ էին կախում, պոչը կտրում կամ հանգուցում: Ձիու վզից կախում էին նաև զանգուլակներ, որ հաճելի ձայներ էին հանում վազքի ժամանակ:

ԽՆՈՑԻ ՀԱՐԵԼ.— Խնոցին դնում էին փափուկ ներքնակի վրա և հարում: Հարողը փոքր երեխային նստեցնում էր իր ուսերին և հարելու շարժման ընթացքին ներդաշնակ երգում.

**Խնեցե հրեցե,**
**Եղը ես ստիմ,**
**Թանը՝ (տալիս է երեխայի անունը):**

Երեխան միամտաբար կրկնում էր:

ՀՈՒ ՎԵՐ ՅՓԼԱՂՈՒ ՊՈՒՆ ՏՈՒՍ ՏԱ՝ ԿՔՈՒԹԱՆԱ. — Չնայած բուն համարվում էր կեղտոտ թռչուն, բայց Ղարաբաղում պաշտամունք կար նրա նկատմամբ: Ինչպես հայտնի է, բուն անխնա ոչնչացնում է մկներին: Երևի գյուղատնտեսությանը նրա օգտակարությունն է պատճառը, որ բունն ավերողներին նման սպառնալիք է ուղղվում:

ՄԱԶԵՐԸ ԼՎԱՆԱԼԸ.— Հնում կանայք մազերը լվանում էին յուսնահողով և մոխրաջրով: Մազերը ներկելու համար օգտագործում էին ձվի հարած դեղնուցը, սոխի հյութը, կաղաղի, խինդեղի հասուն պտուղների թանձր եփուկը: Գույն տալուց հետո օծում էին կտավատի ձեթով: Եփուկին բուրմունք տալու համար խառնում էին ծորթրինի և անթառամի ջուր:

ԲԱԴԱ ՏԱԼ, ԲԱԴԱ ՇԻՆԵԼ.— Պատանդ տալ. իմաստն է՝ գե-

ռության տալ, ընդմիշտ կորցնել: Սովորական բան է եղել ա-
ռանձնապես՝ քաքար-մոնղոլական, պարսկական տիրապետու-
թյունների ժամանակ, հարկահանության ընթացքում: Հարկա-
հանները վերցնում էին երեխային և որպես պատանդ՝ պահում
մինչև հարկ վճարելը: Շատ հաճախ հարկը վճարելուց հետո էլ
պատանդը չէր վերադարձվում:

ՔԱՐԱՊՐԱՆՈՒԿ ԱՆԵԼ.— Ճանապարհների եզրերին, գյուղի
մուտքերի մոտ, փողոցներում, վաղօրոք փորակոտակներ, փա-
ռաշեղչեր, փորե բլուրներ էին սարքում՝ սպասվող թշնամուն փա-
ռահարելու համար:

Քարապրանուկի էին ենթարկվում նաև անհավատները, հա-
վատուրացները, դավաճանները, անբարոյական կանայք ու աղ-
ջիկները (տղամարդկանց սպանում էին զենքով), ազգային սո-
վորությունները դիտավորյալ խախտողները:

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ.— Առավոտյան մարդիկ վեր էին կենում արե-
վածագի հետ և հանդիպելուց իրար «բարի լույս» էին մաղթում:
Պատասխանը լինում էր. «Աստծո բարին», «Լույսը բարի», «Բա-
րին լուսո հետ»:

Իսկ անեցիները (գերդաստանի մարդիկ) իրար բարի լույս
էին մաղթում լվացվելուց հետո:

ՏԻԶ ՏՆԻԼ, ՄՈԼ ԱՆԵԼ.— Ձմռանը անասուններին կերակրե-
լու համար հարդ ու պանով մարագն էին լցնում, իսկ չորացրած
խոտը դիզում էին դրսում: Հատուկ պատրաստված փայտե կա-
ռույցի վրա դիզված խոտը կոչվում էր չրդխատիզ, գետնին դիզ-
վածը՝ տիփատիզ: Երկու դեզերի կենտրոնում էլ, հենց սկզբից,
տնկում էին մի ֆանի մետրանոց փայտ՝ տզափաղ (դիզափայտ),
և նրա շուրջը հյուսում խոտը («Տիզ տնիլ»):

Փայտը պաշտպանում է դեզը փլվելուց: Մարտ-ապրիլ ա-
միսներին կանաչ խոտի հետ նաև չոր խոտ էին ուտեցնում անա-
սուններին՝ որովայնային հիվանդություններից զերծ պահելու հա-
մար: Այդ շրջանը անվանվում է «լպզտան»: Ապրիլ ամսվա վեր-
ջին և մայիսի սկզբին, երբ անցնում է լպզտանը և չոր խոտը
այլևս պետք չի լինում, դեզախոտի անձրևահար, փտած մնա-
ցորդները անձրևից հետո կուտակում էին պտղատու ծառերի
տակ և ծխում՝ որպես ընդունված պայքարի միջոց պտղատու ծա-
ռերի վնասատուների դեմ («Մոլ անել»):

ՄՈԼ արմատով ինչպես հայ հին լեզվում, այնպես էլ ժամա-
նակակից հայերենում գործածական են ոչ քիչ թվով բառեր:

ԿԱԼ համալիրը ունեւ նեւոեյալ կառուցվածքը.

ա. Ընդարձակ կալատեղը (կլատեղ)՝ խուրձը կալսելու համար.

բ. Մարագը, որի մուտքի ճակատակ կողմի մղակով (տոմնածակ) միանում է կալատեղին.

գ. Զվցտան. կալատեղի կողակառույց տուն՝ հանգստանալու, ճաշելու համար։ Յուրահատուկ մառան։

դ. Գոմ՝ կամ գոմատեղ։

Կալը ունենում է նաև ջուրարան, փոքրիկ բանջարանոց, պըտղատու այգի, արոտավայր՝ երկու-երեք լաքի չափով։

ՕՁ.— Օխծու նման թռնում ա։

Օխծու նման աշկեղ մաշին թռնում ա, էլ կարում չըս թա պենաս։

Երկու թռողներից՝ ուղտից ու արջից հետո՝ երրորդը առընչվում է օձին։

Հայտնի է, որ օձերից կոբրան է, որ թույնը թռում է հակառակորդի աչքերի մեջ։ Վերոհիշյալ արտահայտությունները վըկայում են, որ Ղարաբաղի հին բնակիչները ծանոթ են եղել թըռնող օձի տեսակներին, որոնք այժմ բացակայում են մեր բնությունից։ Ենթադրվում է, որ հնում կոբրայատիպ օձեր կարող էին բնակվել Արցախի շոգ դաշտավայրերում։

Ուշափու նման թռնում ա։

Իմ անեծքս հանցա օխծու թռենք, ծեփու նման նեստա յա կենում։

ՕՐՀՆԸՎԻԼ.—

— Այանե։
— Աշանե։
— Եկալ ըմ օրհնիս։
— Աստված քեզ օրհնի։

Այան համբուրում է օրհնվողի ճակատը, բռնում է ձեռքը և օրհնում։

Կամ՝

— Ապա։
— Ասե, ապան մատաղ։
— Ինձ օրհնի։
— Քեզ աստված օրհնի։

Օրհնանքը լինում է ընդհանուր և կոնկրետ՝ կապված կատարվելիք գործողությունների, հարկադրական ճանապարհոր-

դության և այլնի հետ: Օրհնվում էին ամուսնացող զույգերը, հողի կանայք, հիվանդները, բոլորը: Օրհնիլը եզրափակվում էր հակիրճ բարեմաղթություններով. «Ճանապարհ պարի ընի», «Կեսկավ հնուփկիֆ», «Լիանաս-բուլանաս», «Վեղ յոր օնիս, վեսկե տեռնա», «Ջարուր չընիս», «Բլբուլ տեռնաս» և այլն:

ՀՐԿԾՎԵ.— Տան զավակները ամուսնանալուց հետո բաժանվում էին հայրական տնից և իրարից, կազմում էին առանձին ընտանիքներ, որոնք տարիների ընթացքում հյուղավորվում էին, հեռանում իրարից: Բաժանվողները ստանում էին իրենց բաժինները: Սակայն տան (ազգի, ցեղի) նահապետի ընտրությամբ ամենից լավ ծառը կամ այգին մնում էր որպես բոլորի սեփականությունը և կոչվում էր «հրկշվե»: Այգին (կամ ծառը) քաղում էին ազգովի՝ մեծով, փոքրով: Հարսները ներկայանում էին օրորոցներով, հոնք էին գցում այգու ծառերից... Ազգի յուրաքանչյուր ընտանիք բերում էր իր բոխճան, ցույց էր տալիս իր «շընորհքը», բերում էին գառ, հավ, գինի՝ մեծ խնջույքի համար և ստեղծվում էր յուրահատուկ մի տոնախմբություն: «Հրկշվե» ծառի (այգու) բերքը հաճախ բաժանվում էր տասնյակ ընտանիքների և գյուղերի միջև (կարևորը քանակը չէր): Որքան թվաշատ են հրակաշները, այնքան աշխույժ ու հետաքրքիր էր անցնում սիրո և բարեկամության արարողությունը: Այդ օրը խռով ազգակիցները հաշտվում էին, միևնույն գյուղից պտուղ էին կրտրում, բաժակ-բաժակի են խփում և խմում համերաշխության ու հավերժ միասնության կենացը («Սեր ընինք, փոնչ ընինք», «Ազգ ընինք, կից ընինք, ցեղ ընինք, մինտեղ ընինք», «Աստված մեր թմահան կտրե՝ սերության յրա տնի»):

Տոնախմբությունը վերջանում էր ստակից զրույցով, զվարճախոսություններով, խաղով, երգ ու պարով:

Ծառի (այգու) չորանալու հետ վերջանում էր նաև այս սովորությունը:

ԾԱՌ-ՕԺԻՏ (ԾՈԸՊԵԺԻՆՔ).— Ամուսնացող աղջկան օժիտ էին տալիս տան եղած ինչքից: Պարտադիր ցանկի մեջ էր կահկարասին՝ աղամանից մինչև կարաս, գդալ, շերեփ, 2—3 ձեռք վերմակ-ներքնակ, փորգ, կապերտ, նափռաշ, խուրջին, հայքա, գառ, երինջ և այլն: Ընդունված էր նաև ծառ կամ այգի տալը, որի նպատակը նորակազմ ընտանիքին կապելն էր պապենական օջախին: Ծառ-օժիտը պարտադիր էր, առանձնապես, եթե ա-

մուննացողը գնում էր հեռավոր գյուղ և մղոններով հեռանում հայրական օջախից:

Սովորությունն ապահովում էր ընտանիքների (նյուղերի) բարեկամությունը: Այգեկութը վերածվում էր արարողության: Բացում էին այգու (ծառի տակ) թաղված գինու կարասը, հորթ կամ գառ էին մորթում, կանչում էին ընկեր, հարևան ու բարեկամ և սկսվում էր խնջույքը՝ ուրախ ու տևական:

Տերտերն օրհնում էր ծառը, տան նահապետը նրան մաղթում էր երկարակեցություն և հավերժություն՝ պապենական երդի: Աղջիկը հերանց տուն նվերներ էր բերում:

ՔԹՈՒՓՈԽ ԱՆԵԼ.— Հավատարմության, սերության երաշխիք ուներ իր հիմքում: Տան կրտսեր անդամները ուտում էին մի ընդհանուր ամանից և փոխանակում էին գդալները: Այս սովորությունը ընդունված էր նաև հովիվ ընկերների միջև: Քթփոխ անողները պարտավոր էին օգնել իրար, հարեհաս, հոգեկից, հավատարիմ ու նվիրված լինել մեկմեկու:

ՓՐԹԿՅՆԵԼ.— Հանդվոր ընկերները մանծնեբրդուշ էին ուտում (ոչ միայն) մեծ փայտե ամանի (կյուշ) մեջ՝ բոլորված նրա շուրջը: Նրանցից յուրաքանչյուրը ջանում էր ծիծաղեցնել մյուսին՝ զվարճախոսությամբ, ծամածռություններով, սրամտությամբ և այլն: Փրթկացնողը այլևս չէր շարունակում ուտելը և շարքից դուրս էր մնում: Այդ կարգով շարունակվում էր: Համախ ընկերովի պատրաստված բրդուշը բաժին էր ընկնում մեկին: Իսկ երբ բոլորն էին ծիծաղում (փրթկացնում), նույն պայմանով սկսում էին նորից:

«ՏԱՓԸ ԿՈՏՐԱԼ Ա».— Երբ երեխան ընկնում է, նրան «մեղադրում» են գետինը «կոտրելու» համար: «Տափը կոտրալ ըս»: Երեխան թողնում է լացը, ճնում գետինը, և որպես իր կատարած «հանցանքի» երաշխիք, չի շարունակում լացը: Հետո. «Ոչինչ, կմեծանաս, կմոռանաս» (ցավը), կամ. «Մծննական ըս, սուս ըրա» («Խոխան վեր ընգելավ-եր կնալավ ա մծանում»):

***

Ուրախ հանդեսների ժամանակ յուրաքանչյուր երիտասարդ ընտրում է իր ընկերը կամ ընկերախումբը և նրանք ամբողջ արարողությունն անց են կացնում միասին. պարում են, երգում, զվարճանում: Պատանիներից յուրաքանչյուրը ընտրում է նաև իր

սիրած (համակրելի) աղջկան և պարի է հրավիրում, սեղանի բարիքից առանձին բաժին է ուղարկում նրան: Երիտասարդը պարտավոր է հսկել իր սիրածին, ապահովել անվտանգությունը արարողության ընթացքում, միշտ «աչքը վրան պահել»:

ԾԻ-ԾԻ ԱՆԵԼ (ծի—ճիտ բառի բարեհունչ ձևն է).— Տատը, մայրը կամ հարազատներից մեկը, նստում է սենյակի ծայրում, տարածում ձեռքերը և դիմում երեխային.—Եկ, ճի-ճի անինք:

Երեխան գնում է (տանում են) սենյակի մյուս ծայրը կամ կանգնում որոշ հեռավորության վրա:

— Ծի-ճի, ճի-ճի, ճի-ճի...

Երեխան վազում է ընկնում նրա գիրկը:

Արվում է փոքրիկին ման գալ սովորեցնելու, քայլերը կայունացնելու նպատակով: Աշխույժ, հաճելի վարժանք է:

ՄԱԿԱՌ.— Մակառների խումբը բաղկացած է լինում 25—50 հոգուց (թվաքանակը պայմանավորված է հանգամանքներով, իրադրությամբ, հեռավորությամբ): Մակառները սովորաբար լինում են 20—30 տարեկան ջահել տղաներ: «Հրսանեքը մակառն ա անց կցընում»: Նրանք պարտավոր են երգել, պարել, պարեցնել, «ծաղկացնել», ուրախ անցկացնել հարսանիքը: Նրանց հիմնական պարտականությունն է անփորձանք անցկացնել արարողությունը, վտանգից զերծ պահել հարսին ու փեսային:

Հնում մակառների կարիքը ավելի շատ էր զգացվում, քանի որ հաճախ առկա էր լինում հարսը առևանգելու վտանգը:

Մակառները հարսապաշտպան երիտասարդներ են՝ կորովի և հավատարիմ ամուսնացող ընկերոջը: Հարսանիքի ողջ ընթացքում (3 օր, մի շաբաթ), հարս ու փեսան գտնվում են նրանց շրջափակի մեջ՝ առանձնապես պարելու ժամանակ: Արարողության հետ կապված բոլոր իրավունքները գտնվում էին մակառների ձեռքին: Մակառախումբը ընտրում էր իր մեծավորին, որ կոչվում է մակառբաշի («կլխավեր»): Իր հերթին մակառբաշին ընտրում է պարի, երգի, ծափի ղեկավարներ, որը հետամտում էր հարսանիքը ուրախ ու կանոնավոր անցկացնելու նպատակ: Առանց մակառի հարսանիք չի լինում:

ԿԱՐԱՍ-ԹՈՆԻՐ.— Հաց թխելու նպատակով պատրաստում էին հատուկ կարասներ, որոնց արտաքին պատերը (ուռուցիկ մակերեսը) ծածկում էին աղյուսով (քարփուն): Կարաս-թոնիրները ամրացնում էին գետնին, ներքևի սրավուն մասը մտցնում էին հողի մեջ:

Ցախով (փայտով) լցնում էին կարասը և վառում այնքան, մինչև շիկնում էին դրսի պատերը: Հացը թխում էին սովորական կարգով, դրսի պատերի վրա: Կարաս-թոնիրներն առավելապես օգտագործում էին բնակատեղիներից դուրս. սարում, բերդ-ամրություններում, վանքերում, կալերում և այլն:

Պատրաստի կարաս-թոնիրներ պահում էին հեռու հանդամասերում:

ԹԱՂՈՒՄ.— 1. Հնում ամբողջական հսկա քարը փորում էին, դարձնում դագաղ և մահացածին դնում նրա մեջ ու թաղում հողում (ըստ երևույթին ոչ բոլոր մեռածներին էին նման պատվի արժանացնում): Նման դագաղներ գտնվել են Գիշի, Ղզղալա, Աշան գյուղերին մերձ հանդամասերում:

2. Հատտաբետ քարերից պատրաստում էին մարդաձև մարմիններ՝ բաղկացած երեք հատվածներից (գլուխ, իրան, ոտքեր) և թաղում մահացածի փոխարեն: Հանգուցյալի մարմինը հրկիզում էին: Այս մասին պատմել է բերդաշենցի հարյուրամյա Գրիշա Առստամյանը (Դողանց) 1968 թվականին: Մի քանի տարի անց նման գերեզմանոց գտնվել է Աշանի Ծոպալա կոչվող տեղամասում, մի բլրակի վրա: Քարարձաններին հետ գտնվել են նաև քարակերտ պաշտամունքային արձանիկներ՝ նույնպես ոչ ամբողջական քարից պատրաստված:

3. Մահացածներին թաղում էին նաև կարասների մեջ, ուր դնում էին նաև կենցաղային ու պաշտամունքային առարկաներ: Կարասային թաղումը շատ տարածված է եղել և համեմատաբար մոտ ժամանակներում: Գերեզմանոցային կարասներ գտնվել են Ղարաբաղի շատ տարածքներում:

***

ՄԱՔՐԱԿԵՆՑԱՂ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.—

Կարում ըս (կարո՞ղ ես) իրեք նոռնը կեր՝ վեր վեշ հատիկ թողիս, վեշ հատիկ վեր քցիս:

Կարում ըս կղաղավը օխտը ճղուպուր կեր՝ ծերքերդ ղողե վուշ:

Կարում ըս մին սատքան արաղ խմե՝ դյնսաի սաե՝ օխտը:

Կարում ըս շան նուռենն տտեպը ծամե՝ պերանդ թըրմոշկում'էր:

Կարում ըս կծոխուրը կեր՝ կծըխըրում'էր:

Կարում ըս մին ըփիլի պրինձ հնդրե՝ մաչին փսոր չմնա:

Կարում ըս կյումաշեն «հո»-ն տառ-տառ ասե (բառ, որ չի գրվում):

Թքում ըմ. կարում ըս մինչև թրքենքս չուրանալը քյըրնի կալը՝ եկ:

Կարում ըս մժմահուն մաչին «Յալի» պար եկ:

Կարում ըս թոթ կեր քուշտաց՝ ծերքերդ öւրուր անա չկենա:

Կարում ըս մոշ կեր՝ պռուշնեդ ղողե վուչ:

Ծափ տամ՝ աշկդ ճպում'էր:

Կարում ըս մին հափուռ կորեկն ու մին հափուռ կտավատը öւրուր նհետ խառնե՝ մն էլ ջոկե:

Աշկերդ հոփ կալ, չամենչը տնիմ պրանումդ՝ գյիդա թա հինչու չամենչ ա:

***

ԺԱՄԱՆՑՆԵՐ.— Հանդեսներին, տոների ժամանակ, ճաշից հետո, որպես հետաքրքիր ժամանց, հանելուկներ, խնդիրներ, շուտասելուկներ էին առաջարկում, խաղեր առաջադրում: Օրինակներ.

1. — Տես, տես:

— Հի՞նչ տես:

— Ըստրղաս, ըստրղաս մին քյաքլիգ ծետ ըմ տեսնում հաքյին տեղնե, կարո՞ւմ ըս, քթիր:

2. Կարում ըս հավաս գյիդա:

3. Կարում ըս գյիդա. հի՞նչ ըմ մտածում:

4. Մտքումս կոչիմ, ինձ քթիր:

5. Գյողլը կենամ, ինձ քթիր:

6. Փախնիմ՝ ինձ փռնե:

7. Հöւնչու անիմ՝ կարում ըս ըրա:

8. Մթնավլ կարում ըս քյըրնի, հանգիստարանան մին քար պեր:

9. Ես մտածիմ՝ տու ասե:

10. Կարում ըս համ լաց իլ, համ ծծաղե:

11. Մին երք ասե, վեր ես գիդամ ուչ:

12. Մին տաղ ասե, վեր ես գիդամ ուչ:

13. Կյեղած շնորքդ նհաշ տո:

14. Ես քու հիվադ պար կյամ, դու՝ իմ:

15. Կարում ըս էսիինչին հանգերն րրա:
16. Կարում ըս գիդա՝ հնւր հանգեր ըմ անում:
17. Կարում ըս մին fաթ հնարե՝ ասե:
18. Մին սոտ ասե, վեր ասիմ՝ սոտ ա:
19. Կարում ըս կիfավու նման կfավե, վլեյու մնան վլեյե, ծիու նման խրխնչա:

***

ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔԱՅԻՆ ԽՐԱՏՆԵՐ.—
ա. Կարկոտ կյախս fսկարենfը վննեռավ կլխըեր ըն անում, վեր կարկոտը կտրե:
բ. Խնձողեն ննւր ածե, վեր արազ չտեսնաս:
գ. Հնւրու տան նշանած ախճիգ ա ըլալ, կրակեն կլխավը fմըկառաչ լոf տայիս ըն ըլնլ:
դ. Կրակեն կլխավը լոf չըն տալ:
ե. Կրակավը խաղ չըն անեյ: Վեր կրակավը խաղ անին. 1. Քշերը փիս-փիս ըրըզնե կտեսնան. 2. Քշերը տեղաշորումը կկյուզին:
զ. Կրակեն վեր չըն թակեյ: Կրակը մեխկ ա:
է. Մոխրվեյ.— Հնում մահացածին լողացնում էին և մոխրով օծում ողջ մարմինը:

1. Ղզղանեն տակը լպստողեն հրթնեfավը թոռ կկյա:
2. Ամանդ մաfուր կեր, վեր նշանածդ սերուն կյա:
3. Էրած հացը թող մ'էր անեյ, կեր վեր կյուլա վախիս ուչ:
4. Խոխան նրան ըն (ծովան, ըխպրան) տուս օնում:
5. Կյերթնուկ սպանողեն ծերfեն կյերթնուկ վեր կկյա:
6. Շատ եր կալած ծառեն տակեն ծնւ վըն անում, վեր աչկ չի նի կյա:
7. Գայլի սիրտ ու թոfեր էին ուտեցնում այն երեխաներին, որոնք վախկոտություն կամ տկարություն էին դրսևորում:
8. Նապաստակի տաf արյուն էին խմեցնում հոգով և մարմանով տկար երեխաներին, հոգեկան հիվանդներին:
9. Ագռավի կռռոցը, կաչաղակի կչկչոցը ուրախ կամ տխուր լուրի նշան էր: Քաշը վեր «ղա» յա անում, տնատերը տուս ա կյամ, ասում. «Այ fաշ, խեր ը՞ս թա՝ շա՞ռ: Թա խեր ըս՝ տեղդ փոխե, թա շառ ըս՝ թռչի fյընի»:

Վեr տեղը փոխում ա, ասում ըն՝ խեr ա. վեr թռչում ա fյընում, ասում ըն՝ fաշը սվիrես ա, շատ խաբար ա պեrալ, իrես չօնե ասե:

10. Թոfախտով ճիվանդներին և սrտանեղ մարդ'յանց խմեցնում էին էշի նում կաթ, ուտեցնում էին մկան, շան և ոզնու միս:

11. Հղըցումը վեr կյուզիս, աշկեդ պուզտի կփըսնե:

12. Հու վեr պլոթուն անե, թա̈զա վննամանը կծակե:

13. Հացեն պատառը թողել չըն տափեն,
Կպաշին, տնին նկատեն:

14. Երբ երեխան զկռտում է, ասում են. «Դերին fթա̈լը կյուղացալ ըս»:

15. Եթե ծիծեռնակը մեկի տան օնոrfում բույն է հյուսում, ուrեմն այդ տան հաrազատը օտաrությունից գալու է:

16. Գայլը եթե nrևէ մեկի տան առաջ ոռնում է, բախտավոrվելու է:

17. Հու վեr ürան ամանը թմզցընե, լավ տղա յա անըլական, հու վեr եխտուտ օտե, fեթը միշտ եխտուտ ա ընձակյան:

18. Կյույը վեr շենին սմթեrfումը սrտըկուտուr կյատոց, ճավան փսննական ա:

19. Կյեն ծառը վեr կrակեն fցիս, կաrկոտ կկյա:

20. Խոսողեն խոսfը կտrել չըն:
Ջոտայիս էշին անզունեն թխել չըն:

21. Էrկու ürnւr նետ խուտողեն ղաքավը անց չըն կենալ:

22. Ուrիշին զrուցին խառնըվել չըն,
Կոտrած fթա̈լու ճման ըղնել չըն ղաթը:

23. Ճնըմաշումը վենեը կացած մաrդունցը մաշավը անց չըն կենալ, շոռ կտան կողfավը fյընին:

# ՀԱՆԳԱԽԱՂԵՐ

Հանգախաղի մասնակիցները (մեկ-մեկ կամ խմբերով) իրար առաջարկում էին բառեր, բառակապակցություններ ու նախադասություններ և հակառակորդները պատասխանում էին՝ ստեղծելով հանգախաղ: Պատասխանները հաճախ դուրս էին գալիս բառախաղերի սահմաններից և ներկայանում որպես ամբողջական կարճ բանաստեղծություններ՝ որոշակի տեսքով ու բովանդակությամբ:

Հանգախաղին մասնակցող ամբողջ խմբի մեջ կարող է միայն մեկը իր վրա վերցնել առաջարկողի (խաղը վարողի) պարտականությունը: Մյուսները, ըստ իրենց կարողության, սրամիտ հանգեր էին կառուցում: Խաղի հիմնական նպատակը առաջարկվածին գեղեցիկ ու սահուն հանգեր հորինելն է՝ որքան հընարավոր է արագ և զավեշտական:

Հանգախաղերը ծավալվում էին նաև երկու հարևան գյուղերի պատանիների և աղջիկների միջև, որոնք, այդ նպատակով, հավաքվում էին սահմանագլխին: Օրինակ, Աշան, Ղզղալա (Բերդաշեն) և Եմիշճան (Իմիրճան) գյուղերի երիտասարդների հավաքատեղին Բլեն աղբյուրն էր: Հանգախաղերին մասնակցում էին նաև տարեցները: Մի ժամանակ բոլոր ղարաբաղցիները հանգախոսներ էին: Ընդունված կարգով՝ խոսքը հանգավորվում էր տոնական օրերին, հարսանիքների, խնջույքների, առօրյա խոսակցության, անգամ տխրության պահերին: Փաստեր կան, որ հանգախաղերը մտային մարզանքի ժամեր էին նաև դպրոցներում՝ Մեսրոպի ժամանակներից սկսած և դրան ի նպաստ կային ձեռնարկներ, որոնց մեջ ընդգրկված էին նաև խաղերգեր, շուտասելուկներ, հանելուկներ և այլն:

Տոնախմբությունների և թաղային հավաքների ընթացքում հանգախաղեր էին տեղի ունենում աղջիկների և տղաների միջև:

Պարզ է, որ նման դեպքերում խաղն ստանում էր առավել սիրային բովանդակություն՝ ընդունելով խոսքի այլաբանական ձևեր:

1. — Ասե՛* Ննգի:
— Ննգի:
— Հացը թընգի,
Խոխան ոտե,
Վեռը պընդի:
— Քշտաս կորի:

2. — Կլոլե.
— Ծերքաս փըռնե ճըլորե,
Ծոն տեռ՝ եխաս քըլոլե:

3. — Տանձի.
— Կոխըդ տակեն խնձըմանձի:

4. — Ճղպորե.
— Էշը կեր, թափանը քորե:

5. — Այանե.
— Աջանե:

6. — Մըտետ ա՞.
— Հափռումըդ կտետ ա:

7. — Սիրեկ.
— Քեզ սիրիմ քշեր-ցիրեկ:

8. — Գիշի.
— Մուկները շիշի:

9. — Ճլորե.
— *Ճըղնաս փռնե՝* ճլորե:

10. — Կացեն.
— Ես տու նստինք մղըրհացեն:

11. — Հմանչի.
— Հանդերը կնանչի:

12. — Ճաթտաքուրի.
— Քշտաս կորի:

13. — Հաց.
— Պատառ կաց,
Պապեն կյա՝ վեռան կաց:

14. — Ջավեն.
— Թոխսը տընիմ ծեր հավեն:

15. — Ցըղպատառ.
— Գյուղու պատառ:

16. — Հաչիմ, հաչիմ.
— Թևադ քաշիմ,
Թոշադ պաչիմ:

17. — Կյուղ.
— Վեռը թուղ:

18. — Էծ.
— Վեռը պեց:

19. — Ջկեռ.
— Ես պիրիմ, տու կեր:

20. — Բիշի.
— Ես ոտիմ, տու եշի:

21. — Մնեշակ.
— Ըխճըկան փեշակ:

22. — Մանաս.
— Տակես տըմանաս:

23. — Պրինձ.
— Ես քեզ սիրիմ, տու՝ ինձ:

24. — Սամեթ.
— Նեստա կենամ ծամեդ:

* Այսուհետև «սաե» սկիզբը առաջարկվող բառի հետ չի կրկնվելու:

25. — Հիբի՞.
— Ինձ տաս քու բիբի։

26. — Կուտանա.
— Հրասանեք քյընինք մին տանա։

27. — Ավանես.
— Կավ-կավ անես,
Քոլեն տակեն ճոտեր կանես,
Մինը փըռնիմ՝ վայ-վայ կանես։

28. — Ճաննազար.
— Փեշկըդ լցնիմ, տար բազար։

29. — Մեր սարերը կանանչ ա.
— Աշկերըս ճոփ՝ ծամեդ վետը ճանանչ ա։

30. — Մրտես ա.
— Փայըս էս ա,
Օտիմ, էս ա,
Ձոտիմ՝ էս ա։

31. — Ձղըրճաղի.
— Վենները փաղի։

32. — Կտուրթակե.
— Կըտոր թակե,
Կեր տրաքե։

33. — *Օխտը.*
— Կեր մեր չանը կոխկը։

34. — Բիժի.
— Հինչ ասալ ըմ՝ ճիշի։

35. — Նուռնե.
— Ծերքաս փըռնե,
Տոշիս կըռնե։

36. — Արտո.
— *Ճալվարըս մար տո։*

37. — Տըշտըճաց.
— Քըշտես կաց։

38. — Դանա.
— Ես ու տու տուս կյանք մին տանա։

39. — Հունի.
— Քեզ նմանը ճո՞վ ունի։

40. — Վեց.
— Խզըտակեղ կյամ՝ տրխընեղ կյեց։

41. — Թուզի.
— Աշկերդ չորեքկուսի,
Մազերըս լուսի։

42. — Կղարծե.
— *Ես ու տու քյընինք պը*ղարճե։

43. — Պեխե.
— Աշկըդ աչկես մեխե։

44. — Օթ.
— Կեր մին ամաn թոթ։

45. — Էրկու.
— Ջվալը եր կալ, քյընի կորկու։

46. — Ծի.
— Վեռանը կըծի։

47. — Տասը.
— Կեր մեր էշին պարի-պասը։

48. — Վոսիմ.
— Ծուցումըդ խոսիմ։

49. — Պուքյի.
— Կարում ըս պուկի։

# ՉԱՓԱԾՈ

## ՏԱՂԻԿՆԵՐ, ԽԱՂԻԿՆԵՐ

### ԱՇԱՆ, ԱՇԱՆ

1

Աշան, Աշան,
Քրքաշան...
Ավդուտը նռնու հրևան,
Պրթաշենը կուտնու հրևան,
Մուշկապատը ծորու հրևան,
Կղարծեն սռնու հրևան,
Հացեն՝ հացու հրևան:

2

Մինչ յայգոց,
Մինչ ի Հոծ,
Մինչ ի Ծարս Մեռելոց:
Լեր զօրավիգ,
Տէր, ի նեղութեան՝
Զսուրբ Ստեփաննոս,
ԶԱղու, զԱշու, զԻմիքնան:

### ՀՄԱՅԱԳԻՐ ՆՄՈՒՇՆԵՐ

3

Չարկամեն չար աշկը
Չար փոշ նի մննէ:

4

Տանն ու տեղեն
Մեղրեն ու եղեն,
Եզնանն ու կըվեն,
Կյառնանն ու վխնարեն,
Ճորուն ու ծիյին,
Էծին ու հոլին,
Կյումաշին ու գյըդակեն,
Էշին ու քուռակեն,
Վարեն ու հնձին,
Կաթեն ու փնջին,
Կալին ու կոտեն,
Հացեն ու կըրկուտեն,
Ըրկանքեն ու սրբնուցեն,
Թխտըմորեն ու հունցեն,
Ջուռնեն ու դըվալեն,
Տաշտին ու չըվալեն,
Ըլածին-չըլածին,
Հասեն-չհասեն:

5
Տանն ու տեղեն,
Մեղրեն ու եղեն,
Լծկանեն ու կթանեն,
Թանեն ու թցանեն,
Թըզին ու կցանեն,
Բյազին ու fըթանեն,
Քոլեն ու ծըմակեն,
Վըխճարեն տըմակեն:

6
Տանն ու տեղեն,
Մեղրեն ու եղեն,
Հավեն ու ճավեն,
Ըխպըրին ու ծավեն,
Ճանն ու կատվեն,
Վըստանեն ու բուստանեն,
Բըզին ու թըլին,
Ըսեղեն ու ղըսնեղեն,
Մեր պապե Հրբեղեն,
Գյըբին ու կըրպետեն,
Բաղեն ու բըխճին,
Արfին ու տուրfին,
Հարթներըս ըխտունուfվին:
Աստված պաշտի
Հնոցը, fթոցը,
Մեր ճըրթներեն ու ըրխոցը:

## ԽՆԵՑԵ

7
Խնեցե, խնեցե,
Սոր ճարվածfը
Հրեցե,
Եղը թանան
Ճուկեցե:

Եղը բալաս կոլ կանե,
Տատեն թանան շոռ կանե,
Պապեն կոտե ճանդ fյընի,
Ճմաթն էլ շանը բոլ կանե:

Խնեցե, խնեցե,
Սոր ճարվածfը ճրեցե,
Հինշեր, ճինշեր
Ճնեցե:

8
Կալին խոտր ճարալ ըմ,
Սամնը նորը fարալ ըմ
Դե fշի, fշի տղտղա,
Մի ախճիգ փոնե ճղճղա:

Կալը թըմուզ ճրըլ ըմ,
Խորթնը մաշին շարալ ըմ,
Դե fշի, fշի, ա տղա,
Նհախ տեղան ճղճղա:

Հարթնանը շորը կարալ ըմ,
Վեսկեն յրա շարալ ըմ,
Աշկս էն ա էն կլխան
Հրըկաշիս ըխճըկան:
Դե fշի, fշի տղտղա,
Մի ախճիգ փոնե ճղճղա:

## ՓԱԼԱՆԴՈՒԶ ԿՈՒՔԱՆԵՆ ԵՐՔԸ

9
Մարթ օնիս՝ լավ կնեգ իլ,

Հարթն օնիս՝
Լավ սկեսուր իլ,
Հրեան ըս՝ լավ հրեան իլ:
Հունչու կաս,
Պապ ըս թա տատե,
Քու փայ յորղանըդ
Ղաշանգ պտատե:
Լավան վնաս չկա,
Վեր լվըթուն անիս,
Էս ջանը թաղիս,
Քու վերջի օրեղ
Տու էլ լավ կընիս:
Սաղանեն անգունը խուլ.
Է-հեյ, ա չար մարթ,
Հարթն ը՞ս թա զեմքուչ,
Ղարր քանդիս ուչ:

10
Աղե, արկանք,
Մաղե, արկանք,
Դարդըս ծով ա՝
Քաղե, արկանք:

11
Նախշալ ըմ սարեր,
Նախշալ ըմ չոլեր,
Մին ծերքես ալաթ,
Մնումը՝ հորենք...
Պա մհենք հո՞ր ենք:

Ցորեն ըմ հնձալ,
Սամեթ ըմ կյընձալ,
Քարեր ըմ տաշալ,
Արխեր ըմ քաշալ...

12
Այան մատաղ քու ջանեղ,
Էդ լեն ու պեց ճկատեղ,
Դո՛րդ չտեսնաս, մծանաս,
Վարք ու տուրքիս տըրանաս:

Այան մատաղ քու ջանեղ,
Քղցըրլո՛ւզու պըրանեղ,
Մեր աղոթքը ըստծու տաս,
Մեր դո՛րդերը քամուն տաս:

Այան մատաղ քու ջանեղ,
Ճապկեճպատ բդանեղ,
Դուշմանին աշկը վխծըցընիս,
Տանը լո՛ւսը ճուխտըցընիս:

13
Պապար, պապար, իմ բալա,
Ծաղկած կապար, իմ բալա,
Վեսկե լալա, իմ բալա:
Շաքալ կյործիմ ու քոշիկ,
Թագիկ տնիմ կոկոշիդ,

Հոպ-հա ծածառ, իմ բալա,
Հոպ-հա պապար, իմ բալա:

14

Նախշուն, նախշուն, իմ բալաս,
Նախշած աշուն, իմ բալաս,
Հոփալ-թոփալ, իմ բալաս,
Լիզը մոթալ, իմ բալաս,
Հրեյի հսնող, իմ բալաս,
Ճելլի փսնող, իմ բալաս:

15

Պապար, պապար, իմ բալաս,
Մի փոնչ կապար, իմ բալաս,
Ափաթ-ափաք, իմ բալաս,
Մոշու նաբաթ, իմ բալաս,
Բոստան ու կյինձ, իմ բալաս,
Պարկ ի պրինձ, իմ բալաս:

16

Պար կանե, պապար կանե,
Ջալ կյառնը մատաղ կանե,
Մորթեն էլ փափաղ կանե,
Ռանգ-ռուշտը շափաղ կանե,
Դրռ-հա, դրռ-հա, տմբըլա,
Ծափ տո պար եկ, ֆեփ բրա:

17

Պապար, պապար, պար անինֆ,
Բöլֆի դöրդիս նար անինֆ,
Պար կյանֆ, ֆշերը լուս անինֆ,
Դöրդերը տանան տöւս անինֆ,
Դրռ-հա, դրռ-հա, տմբըլա,
Ծափ տո պար եկ, ֆեփ բրա:

18

Ճակատդ պաշիմ, խելունֆ ընիս,
Աշկերըդ պաշիմ՝ բաբայ անիս,
Քեթըդ պաշիմ՝ պլկանուդ շընիս,
Թոշերըդ պաշիմ՝ կամբուր ընիս,

Պերանըդ պաշիմ՝ ըշունցատու չընիս,
Մազերըդ պաշիմ՝ կեռ-կըռանաս,
Ջանադ պաշիմ՝ մրճավուր տեռնաս:

19

Կուկուն մամե,
Կուկուն միմի,
Աշերը օնե
Բաքայ անե:

Ծիծիկը մամե,
Փափունը հանե,
Հալավը հանե,
Ցիցիկ անե:

Պեցիկը նիտի,
Վեր բուքուն կյա վուշ
Վեռը կիծի:
Անիկը կապե,
Վեր բուքուն կյա վուշ
Բաքայը տանե:

20

Այիբ բեն,
Տախտեն դփեմ,
Օխտը հացը
Մենետ կըխպեմ,
Պենեն ժամեն
Փախնիմ-կորշիմ,
Հացեն ժամեն
Կյամ խլըշիմ:

21

Ցորեն հաց՝
Մաշկաս կաց,
Կորեկ հաց՝
Փորաս կաց,
Կյարի հաց՝
Վեռաս կաց:

22

Ըլալ ա-շըլալ մին պել մոզի,
Եկալ ա այուն կլոխը խոզի,
Ուրանց Շուղերեն օզի,
Տընի տեպեգ պոզին,
Տանե տա Պլոզին:
Պլոզ, Պլոզ, պըտըտնու,
Քա ուզեցեր՝ աշկըդ լուս:

23

Ուեխը լակ-լակ,
Տրեխը ծակ-ծակ,
Կլոխը թակ-թակ:

24

Քաշալ, ֆաշալ, ֆարտաշի,
Քաշալն օտե շան կաշի,
Օխտը բրբա հուն պերեֆ,
Մեր Քըշալեն տուն պերեֆ:

25

Թըթըրմաղե, թըթըրմաղե,
Քու մար ասում ա ճելլի մաղե:

26

Քռակեն, քռակեն,
Ծուկլուկու տամ չխըրակեն,
Թա իմ դայու հավան չըս,
Եկ մեր էշին քուռակեն:

27

Շելլի, Շելլի, շլլըվեցե,
Աղնաղազ ըրե՝ քլլըվեցե,
Կյինի տըվեն՝ մոլուրվեցե,
Քերծեն տակեն պոլուրվեցե:

28

Փեսա, փեսա փստըցընիմ,
Մին կուտուր հացավ քուշտըցընիմ,
Տռա̈նը տակեն նստըցընիմ,
Հարթնը տանան փխնըցընիմ:

29

Քեցե Շաքի
Ընգե Բաքի:
Շաքին հի՞նչ ա
Կըտրած հա̈քի:
Հանց ետ տեռե՝
Կացե վուչ թա
Օրը ծաքի:
Ընձ էտե հի՞նչ.
Տըղաս Բաքի,
Մարթ ըս՝ Շաքի,
Թող դուշմանիս
Սերտը ճաքի:

30

— Հիշտե՞ղ ըս քյընում:
— Նախնըրվան:
— Հինչո՞ւ վըս քյընում:

— Ընենրկան:
— Հիշտե՞ղ ըս ֆյրնում:
— Շաֆի:
— Հինչո՞ւ վըս ֆյրնում:
— Կարաֆի:

31

Վեր մարտ ամեսը տուս ա կյամ,
Պառավն ասում ա՝
Մարդըս նընցավ,
Դա՛րդըս նընցավ,
Հոլըս ու էծըս
Կյարունֆ նըսավ:
Մարտն ախց՝ նի՞նչ...
Քեցավ օխտը օր աբրելան փոխ կալավ,
Պռավեն էծերը կտորից:
Պառավն ախց՝ «Աստուծ, տեսե՞ր,
Եկեր ինձ նըհետ նվըսըրեցեր»:

32

«Յալի» պար կյան, դնչանան,
Տասը նոֆի մին տանա:
Քսան նոֆի մին տանա՝
Պար կյա, չանը դնչանա:
Չանա, չանա, չան-չանա՝
Պար կյա, չանը դնչանա:
Համեցեֆ անելն ընձանա:

33

Դնգըլ, դնգըլ ման արի,
Գիշերներըտուն արի,
Դնգըլ սարերի տակին
Յարըս է արևը նաֆին:

Դնգըլ, դնգըլ ման արի,
Հիշտեղ ֆյըննիս՝ տուն արի,
Դնգըլ սարերի տակին
Յարըս է՝ իմ սերը նազին:

34

Յարըս նանդին ֆաղ կանե,
Քաղեն մաչին խաղ կանե,
Յարիս թաժա նայց տանիմ,
Քլլած սերտը պեց անիմ:

Տարեն վեսկե տարե յա,
Մեր աղերն էլ պարի յա,
Քու նոր ղարկե կյա մեր տոն՝
Նշընվելու տարե յա:

35

Կալ ու բաղըս աշխարում,
Ըռնոտ խաղըս աշխարում,
Ծոխ ու դաղըս աշխարում,
Ամենազոր իմ աստված,
Ինչ՞ըս մընաց աշխարում:

36

Ըշկըխփուկ ա, ըշկըխփուկ,
Վեր անինf կոնըփոնուկ,
Հիշfան fյընինf, ճռանանf,
Էս ըշխարfան վըռանանf,
Դա՜րդ դա՜րդու տանf թեթևանանf,
Բալfա՜ն դա՜րդը մոռանանf:

37

Ես մին սար,
Տու մին սար,
Հըրևան ըս՝ յարաս տար:

Ես մին սար,
Տու մին սար,
Բոյավ չընինf ըրվասար:

38

Ասին, չասին՝
Աստուծ մեծ ա.
Համ կարող ա,
Համ տանող ա,
Համ ներող ա:

39

Այ ախպեր,
Հայ ախպեր,
Վայ ախպեր,
Տժեր օրեն
Թայ ախպեր:

40

Հայու աղ,
Հայու մաղ,
Հայու ճաց
Թունան կաց:

41

Հյավուր ընf,
Սվավուր ընf,
Թվավուր ընf:

Հայ ընf,
Վայ ընf,
Ըստծու թայ ընf:

42

Ճոկում չըն լավը վաղան,
Ձորը՝ թացան,
Ճարը՝ ճացան,
Երգիրըս ա առուփախան,
Հայ վաթան, ջան վաթան:

43

Հինչ կա վեր,
Թող կնեգըդ կյեշ ընի,
Հինչ կա վեր,
Թող ուլախըդ էշ ընի,
Սեղանըդ սատոր ընի,
Տանըդ էլ կտոր ընի,
Կարքըդ էլ խուտուր ընի,
Թաք նացըդ կուտուր չընի:

44

Սարես նստալ ըս,
Ծո՛րըս լցալ ըս՝
Սև թուխպու նման:
Պա նի՞ք ըս քոշում՝
Սև թուխպու նման:

45

Հեյ ըրա, նեյ ըրա
Դանան կյա,
Ծընանը մեկնե
Կուտանան կյա:

46

Ավար, ավար,
Այ ախնիգ,
Ղաշխա տավար,
Այ ախնիգ:

47

Սըրեռեն խոտ ա կյամ,
Մարալ ըս մոտ ա կյամ,
Նշընածես ծըմեռան
Ծըղըգներու վետ ու կյամ:

48

Ցաքին ասից.
— Այ նրամեռ,
Խե յըս տեռալ
Ճղնըկուտուր,
Կըրկուտաքակ,
Կտուրաքակ:

Կաղնեն ասից.
— Իմ չափից տո՛ւս
Լո՛ւս ըրիլան
Ես տեռալ ըմ
Ճղնըկուտուր,
Կըրկուտաքակ,
Կտուրաքակ:

49

Կոռեկըդ վարե,
Խեղնըդ ըմքարե,
Թողիս ուշ դուշմանըդ
Կոքընեդ նմքարե:

50

Ղարաբաղցին եմ՝ Բաղաց դալեցի,
Սարըծուն ըմ պարտք՝ կյանքով տալեցի,
Խաղեր կապեցի, խոսքեր շարեցի,
Որ կենաց նեղով ողորմի ասիք:

51

Վարքըս էրալ ըն, տեղը փոշ ցանալ,
Հազար տարվա տանըս ավեր ըն ըրալ,
Ըռըքսունքաս՝ Քուռ-Արախսն ա վրարալ,

Թարթառը, Կարկառը ֆրըֆար ըն ըլա̈լ,
Պլոկված ըմ, մամային ըմ, հի՞նչ անիմ:

Ըրիֆնակը իմ դա̈րդաս ա խրավվալ:
Խեղճ լուսննգան լա̈ց ա ըլա̈լ, մլարվալ,
Դայաղ չօնիմ, լայաղ չօնիմ ըշխարում,
Աստուծ անզոռ, բանդան անզոռ,
Ես էլ մի խեղճ ռանչպար ըմ, հի՞նչ անիմ:

Կծկծամ ա Մուղան հասու աշկերը,
Վննատակ ա նա սև-սերուն վարսերը,
Սրտես նման սև ա բախտեն աստխերը,
Իմ դուշման ըս համ օժավ ա, համ նաշար,
Առոե աստծուն հավասար ըմ, հի՞նչ անիմ:

Դարդոտ Հանես, բախտեդ աշկը ֆոռ ըրա,
Ետանաս ուչ, հինչ վեր անիս՝ սօր ըրա,
Ջոռդ շատ ա, հավաֆ ըրա, տոն ըրա,
Թշնամուն թոխկան ֆաշի, մշկանոռ ըրա,
Ասիս ուչ թա՝ ես յասար ըմ, հի՞նչ անիմ:

# ԲԱՆԱՁԵՎԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

## ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

Ա լո՜ւզո՜ւ, սուս բրա, թա չէ Շուշի կfյրնիս:
Ախնրկանը վեr պծոց թակիս վուչ, մծոց ծոյնրդ կթակիս:
Ախնիգ կյա, նեյլի կյա (Ասում է կինը՝ երկունքի ժամանակ):
Ախնիգը կառեյու ծմեռուկ ա:
Ախնիգը մոռը կյոռկան ա ընո՜ւմ:
Ախնիգը պեr, պեժինfը նզըռե:
Ախնիգը վեrս ա, տղան՝ վեrսկան:
Ախնկանը վեr եռե փըրկեցեr, խուխեն կաթնը կառեցեr:
Ախպեrն ախպորը մեռնելն օզիլ չի, փիս ապrելը կօզի:
Ակնան խմում ա, ախպրին թfում:
Անեն տառեն նի՞նչ րս ըլալ, թա մանեն տառեն նինչ ընիս:
Աղեն ա կյնծին, մաղեն ա պրնծին:
Աղն էլ ա ծեrը, մաղն էլ:
Աղվեսին չնաղը նաfյին կընի:
Աղվեսին անումն ա եr ըլած, ամա ըշխարfես տոնը fանդողը կյուլն ա:
Աղունը նղացումը չըն չուրըցընում:
Ամանը թամո՜ւզ կոռին:
Ամեզը իրանցեն մառող:
Ամենաթիթեն էլ ա խոսկը, ամենածանդրն էլ:
Ամենաիժանը թանգն ա:
Ամենալավ տաշը fառն ա յոր օնում:
Ամենաfաղցըր բառը նափոեղ մաչին ա փսնում:
Ամենաfաղցըր մարթին fռռնանfն ա:

Ամեն դöնում կյետը կյերան չի պիրիլ։
Ամեն դöնում պապը ֆյաթա չի ուտել։
Ամեն թող բրած ֆառու հետա վազ չըն տալ։
Ամեն խմորա ֆյաթա չի թխվում։
Ամեն ծենու անգուն չըն օնել։
Ամեն համեցեֆ ընողու հետան չըն ըղնել։
Ամեն հավֆ öւրäն պöւնöւմն ա թառ ընöւմ։
Ամեն հաց ուտեիս փորեդ կեսը տերտակ եր կաց։
Ամեն հինչին թäզäն, հնգերեն՝ ֆյռնան։
Ամեն հինչ սվրովի յա։
Ամեն հինչ օրեն կըեշի, որը վեչ մին պենու եշիլ չը։
Ամեն հյնուր իմաստուն չի։
Ամեն մարքու բրած öւրան առաշը կկյա։
Ամեն մարքու հալավ öւրան ջանան մոտե ա։
Ամեն մարքու հետե öւրան վեղն ա ֆախծր։
Ամեն մարքու հնար չի, վեր քիշի ուտեիս մարքու համեցեֆ անե։
Ամեն մարքու մին դärդ կընի։
Ամեն մարքու մին ուրխընլատեղ կընի։
Ամեն մարթ öւրան խաշն ա ֆաշում։
Ամեն մարթ öւրան կաքեն յրա յա ծիֆ տամ։
Ամեն մարթ öւրան հետե մաղար ա։
Ամեն մարթ öւրան հետե մարթ ա։
Ամեն մարթ öւրան սանդն ա թակում։
Ամեն մարքու ֆշտե սրտամաշ չըն պենալ։
Ամեն շենա մին պել պերեֆ, խանծֆա՝ հու վեր պտահե։
Ամեն պեն դöւզ ասվել չի, ամա ամեն պենին դöւզը կընի։
Ամեն սիպտակ ծյուն չի։
Ամեն վեղում վարթ չի փսնել։
Ամեն ցավ öւրան ճարն օնե։
Ամեն ուռթանա öւրուզյուն օնե, ամեն ուրուզյուն՝ ուռթանա։
Ամեն փաղա մասան չի տեռնալ։
Ամեն փլըստրատե տվող վեսկե չի։
Ամեն ֆյլիդ էլ աշառ օնե։
Ամեռնը բրա, ծմեռնը կեր։
Ամեռնը շուֆան ա հäզ անում, ծմեռնը՝ ուշաղան։
Այլերդ ըգյորա թոզ բրա։
Այլերը ճեղացն ա անում, ղլմըղալը՝ շանշախը։
Անաստված տեղը կաց, անդայաղ տեղը՝ կենում՛էր։

Անբութա տեղը կաց, անարխա տեղը կենում էր:
Անգունը նա հետե չի մծանում, զի շատ պեն ա սկանում:
Անդուր կյանը կյուղ կոտե:
Անեծքը նեյլի յա տեղ հսնում, քանց աղոթքը:
Անեկ հացը կըփքե:
Անե Հուրին, ծաղկե Փöւրին:
Անիս-անիս՝ կյետեն նստիս այլեր մաղիս:
Անծենը ծվվամ ա՝ մազաղու հետե:
Անհաշև խարջողեն հաշևը պրտքատարը կպահե:
Անղոնաղ տոնը ավերակ տոն ա:
Անճարը կերավ պենջարը:
Անմրոք քյընից մրոքու հետա՝ բեղերն էլ կուրցըրուց:
Անշոն շեն ա տեսալ, առանց փադ շոռ ա կյամ:
Անողը պրծավ, չանողը՝ ոչ:
Անպենը կիրեկի պեն կանե:
Անպենին միշտ փուրացավ կընի:
Անջախ-անջախ Հեղինան ծի եր ըլավ:
Անտես լավեն թարիփ չըն անել:
Անումը կա, ըմանումը չկա:
Անումը հրսանեք ա, վեր սերտ չընաքե:
Անումը պծոց ըն յոր օնում:
Անումը փարսանգ ա՝ մարթին ճիտան կախ:
Անփոշ վարթ կընի, անփոշ մարթ չընիլ:
Անփոշ վարթ կնարվե, անփոշ սերտ՝ նարվել չի:
Աշխադած հացն ա հալալ:
Աշխադանքա ավիլ օտելը հարամ ա:
Աշխադանքեն կյինը գյուղողը մարթինն էլ կգյիդա:
Աշխադանքեն շատ ու խրեգ չի ընիլ:
Աշխադող ադեն հետե փիս կործ չի ընիլ:
Աշխարքես ըլածը աշխարքեսա մնամ:
Աշխարքես ամենաղöւզ քաթը «Քաշ Նազարն» ա:
Աշխարքես ամենաղöւզը օղտեն վեզն ա, մնացածը՝ նանա ծոռ ա:
Աշխարքես ամենալավ մարթը քյասիբն ա:
Աշխարք ընք եկալ, վեր մեր խաչը քաշինք:
Աշխարքես կործը հունցու փոնիս՝ öմöլ կկյա:
Աշխարքը շոռ ա եկալ, դրախտը öւրան վեղումը քթալ:
Աշխարքս ընելավ-թուղելավ ա կենթան:
Աշխարքս կործն ա շինալ:

— Աշխարքս հի՞բ կլավանա:
— Հիբը կորեն վազ տա փոնե, աղվեսը խափի վուշ, օղտեն մաշկը դո̈ւզի, քշեղակը քրքզա վուշ, կյուլը՝ ծիծաղե:
Աշխարքս մա̈րդըրվան ա. մինը վեր ա ընցնում, մինը՝ եր:
Աշխարքս պարզ ար, հունցու կյապուտ երգինքը, թվանգը նամա̈րդութունը քցից ըշխարքես մաչը:
Աշխարքումս էրկու պեն կա վեր մեռնում չի՝ մինը լվո̈թունն ա, մինը փսոթունը:
Աշկա հեռե՝ սրտա հեռե:
Աշկդ տո̈ւս կալ, քցի հանդավարըդ:
Աշկեն սիրած ղաշանգ կընի:
Աշկը՝ չոր, սերտը՝ ծոռ:
Աշկը տեսածան ա վախում:
Աշկս հանե՝ հացա ետ:
Աշուղը ո̈ւրան տեսածը կպատմե:
Աչավը տամ ա, ծեխավը յոր օնում:
Աչը ծեխեն հետե անել չի:
Աչի կուռնանը կործը ծեխենը կարել չի անե:
Աչ ծերքը ծեխեն ախպեր ա:
Ապրանքեն տարը, վերթուն՝ հա̈րը:
Ապրել կա արծաթ ա, ապրել կա՝ արկաթ ա:
Ապրելն ա տժեր, մեռնելը հեշտ ա:
Ապրելումը խազա̈զն ու թնըխարավը ախպերք ըն:
Առանց զուռնըդավալ հրսանեք չընի:
Առանց ժողովուրթ վեչ բաղարաք կընի, վեչ՝ հրսանեք:
Առանց լանգառ կարել չըս փահլևան ընիս:
Առանց նար դարդ չընիլ:
Առանց չեն եղեն հի՞նչ անե, առանց եղե չենը հի՞նչ անե:
Առանց վնընկյոխ քյըլըփաչա չընիլ:
Առաչ ըս քյընում՝ քթեդ ըն թըխում, դըետ ըս քյընում՝ դըանեդ ըն թըխում:
Առաչ օտինք, ետնան խոսինք:
Առյուծը ճա̈նճ չի փոնել:
Առյուծը քոն ըլա̈ծ էլ՝ ննչողի յա:
Ասելը հեշտ ա, անելն ա տըժեր:
Ասեղեն կլխեն զյմփուլավ թխել չըն:
Ասողեն էլ սկանող բիդի:
Ասողն ըսողեն, պո̈ւրթը կյըզողեն:

Աստծու անա մեծը էլնա աստուծ ա:
Աստծու ըռաշին ծունկ չոքե, ամա կործեն հետըմը կաց:
Աստծունը աստծուն տո, թաքավերենը` թաքավերեն:
Աստծու պահած կյառնը կյուլ օտել չի:
Աստծու պարտքը վեչ մին մարթ կարել չի տա, բդի ջանաս:
Աստծու տված ցավը բանդան ա տանում:
Աստծու տված փայան իվիլ օտվել չի:
Աստծու քանդած տոնը կնեգը շինում ա, կնգանը քանդած տո-
нը աստուծ կարում չի շինի:
Աստուծ բիդիս, վեր կարիս ըածու սերտը գյիդաս:
Աստուծ էշ ա ստեղծում, մարթը` մաշին:
Աստուծ լա̈վեն նհետ ա առատուր անում:
Աստուծ կա, պայց զորու չի:
Աստուծ համ տամ ա, համ տանում:
Աստուծ հո̈ւրու շատ ա տամ, նանա շատ ա օզո̈ւմ:
Աստուծ մարթին ռուզի յա տամ, հետան եշում:
Աստուծ մընին եղում ա, մընին` դաղում:
Աստուծ մին տեղա կարում ա, մին տեղա տամ:
Աստուծ վեր մընին օզի փո̈ւրթուն անե, խելքը կլխան տուս կօնե:
Աստուծ վեր տա, չորս ընգյունան կըտա:
Աստուծ վեր տըվավ, էլ չափը հրցընել չի:
Աստուծ վեր տըվավ, կլոխն ի վեր վեր կածե:
Աստուծ վեր քզանա խռավե, հույսըդ վեղեն յրա տիր:
Ասում ըմ` ասում'էր թա էշը քած ա, ասում ըս` քոռակն էլ ա քած:
Ասում ըմ` լո̈ւզուս ա ցավում, սուս ըմ անում` սերտըս ա ցավում:
Ա սև եզնը, պեռնըդ տանում չըս, տանում չըս, պա փալանդ խե՞
տանում չըս:
Ավիլ թիքան փոր չի ծակել:
Արաղ կա` ղոնաղ կա:
Արաղ` տղամարթու վարաղ:
Արթար խոսքը մեռնել չի:
Արթար մարթին փորը կոշտ չընի, փորը կոշտ մարթը արթար
չընի:
Արթար չափե, արթար կտրե:
Արծիվը ճանճ չի փռնել:
Արջը խաղվավն ըլավ, տանձը մննան քցից:
Արջը ո̈ւրան ահան կկյոռռա:
Արջը օխտը երք ա գյուդում, օխտն էլ տանձու մասին:

Արտեն աշկը հնձվերեն յրա կընի:
Արևեն տված հախը կորած չի:
Արևը համ խուփեն ա հարկավեր, համ՝ հլըվուրեն:

Բաբը բաբեն ա պտահում:
Բաղը պահե, բարը կեր:
Բաղ ըս տամ, գիլա չի տամ:
Բարաքյալլան տոն կքանդի:
Բարը ծառան ա ճնանչվում, ծառն էլ՝ բարան:
Բդուրղան ծին թաք քու տակեդ չի բդուրմիշ ընի:
Բիժի, վեր տու եկեր, քուրուն ըստեղ չա՞ր:
Բհոն տոն կքանդի:
Բուղազեն խնայիլ չըն, փորեն կըխնային:
Բուստանան վեր կյըղըրթուն անին, բոստանչուն փայը կթողին:

Գյանքը հիշքան առաչ քյընի, էլ հա էն ա ծöրումը:
Գյողլը կացած օղտ չընիլ:

Դärղը ծիծաղելավ կպըկասե, պարտքը՝ տալավ:
Դärզուն ըսեցեն՝ քոչի, ասեղը թևքը կոխից:
Դե, եկ ցորենը կյարան ճոկե:
Դերը մրոք չօնար, խոսքը՝ հնցավ ոչ:
Դերին ըսեցեն. — Խեր ընի, հիշտեղ ը՞ս քյընում: Ասից. — Ինձ
հետե խեր ա, ամա մարթու տոն ա քանդվալ:
Դերն ասից՝ ըրածս անիք ուչ, ասածս ըրեք:
Դլläքեն հետե քաշալը յա մեռած, յա սաղ:
Դրախտը վեր ընթունե վուչ, դժոխքը լհա ղաչանք կանե:
Դöւզ խոսողեն ծին թամքած բեղի, դöւզը ասե, ճստե փախնի:
Դöւզ խոսող մարթը խանեն կլոխ չի տալ:
Դöւզ խոսքան հմանչիլ չըն:
Դöւզ խոսքը գյափումը կասին:
Դöւզ խոսքը կծո վա ընöւմ:
Դöւզ խոսքը ամեն մարթ կարել չի կուլ տա:
Դöւզ խոսքը կյին չօնե:
Դöւզ խոսքը ղմու ճման պկումը տնգըրվում ա:
Դöւզ խոսքը պատան չի կենալ:
Դöւզ խոսքը ըսողեն յա խոխա կասին, յա՝ կյիժ:
Դöւզ խոսքը տեղ չի հսնում:
Դöւզ խոսքը քյոֆնանում չի:

Դո՛ւզ խուսելըս փափաղըս ծոռ ա մնամ:
Դո՛ւզն ասե՝ կլխեդ պտատանը ճզըրե:
Դո՛ւշմանը տանա կրնի:

Եզնը եր ըն կցնում, տական դանա օզո՛ւմ:
Եթիմը թոֆի կրնի:
Եթիմ խոխան հիշֆաճ անում ա, էլ հա կըրծեն կեսը էֆսն ա ըղնում:
Եթիմն ասալ ա՝ ես կապրիմ, աստված թա՝ ես հիշտեղ ընիմ, վեր տու ապրիս:
Եխտուտ փոխմուրթը տանը կլըվանան:
Եկավ սավը, պահից կավը:
Եղուտ մաննը լո՛ւզ կտան:
Ես ասում ըմ՝ աղը վետալ ա, տու ասում ըս՝ վեղն էլ ա վետալ:
Ես զանձ ըմ ասում, տու՝ տանձ:
Ես կոև ըմ հնձում, տու կոև ըս սերմում:
Ես պաֆ՝ չատեյան, տու պաֆ՝ ստեյան.
Ես պեն ըմ ասում, տու պեմբակ ըս սկանում:
Երանի նա, հու վեր կորած վերթի չօնե:
Երֆը զա՛նգ ա, ուրիշի սրտում ա ծեն հանում:

Ձերթունը ֆոն ըլա՛ծին փայը կօտե:
Ձոավար ընելի հետե՝ մարթին վարը դո՛ւզ բեդի:
Ձունաս փչըլական չըմ, թա ֆու էշդ խրտնում ա:

Էլհա էն կյուշը, էլհա էն փրթո՛ւշը:
Էլհա լավ ա վաղեն լա՛վ ասիս, ֆան լավեն՝ վադ:
Էլհա շատը շտատեոնը, խրեզը խրըզատեոնը:
Էծը վխնարեն ասում ա՝ խե վեոդ պեց ա: Վեխնարը թա՝ ֆունը ամեն օր պեց ա ընում, ես հո՞ւնց ըմ անում:
Էծու ննետ առատուր չըն անել:
Էն մեռալը շոն տանե, վեր յրա պոչեր չի ֆանդին:
Էն շանը մատաղ, վեր համ կկծե, համ կըղղալի::
Էն վաղ ար, վեր էշը կաղ ար:
Էշան վեր ըղնողը կմեռնե:
Էշան ֆյամբախտ պեն չկա. մին հա՛ր օնե՝ էշ, մին մար օնե՝ էշ:
Էշը գյիդա՞ց մոշը հինչ ա:
Էշը էշին ֆշտեն կապիս, յա ֆոյը կըրվերե, յա՝ խասյաթը:

Էշը ըխպրհարեն թավիլ ա տվալ, մոխերը զիրավ տվալ:
Էշը բռաշիս, շելակը շլակես:
Էշը կորրե, տանգը՝ վուչ:
Էշը ճանգ չի տվավ, փալանը քլուլեցեն:
*Էշը մատաղ չըն անում, էշակյինն ըն մատաղ անում:*
Էշը վեր Երուսաղեմ էլ քյըշի, էլհա անումը ուրան յրա յա:
Էշը վեր էշ ա, մե հետ ա ցեխումը մնամ:
*Էշը* քլուլելին տեղ, փալանն ըն քլոլում:
Էշին եշում ըն, կապուկը կապում:
Էշին զարգացածը մին տեղ ընիլ չի:
Էշին ըսեցեն՝ աշկդ լուս, քոռակ ա ըլալ. ասից՝ տանավ պեռնս թթվանում չի:
Էշին ըսեցեն՝ հրթննքա ծեն ըն տամ. ասից՝ յա ճուրն ա պակաս, յա՝ փաղը:
Էշ ընիլը վեշինչ, թաք ըշոթուն չանե:
Էշ իմաստունը մին տեղ ընիլ չի:
Էշին կյրեզմանը վերշիվերշո կյուլին փորն ա, վխնարենը՝ դաբեն դուքյանը:
Էշին մնեշակ տվեն, թա վետ օնե, *հախուից կերավ:*
Էշին յրա կզնըվում ա, փալանը թակում:
Էշին պեռնը վեր ծռե վուչ, քարը ղարիբոթուն չի քաշիլ:
Էշին վեռեն օղ ա կախ տամ:
Էշին վեր քցեցեն, ծիին նլեցեն:
Էշին փախածը փռնըվել չի:
Էշն անե էշն օտե, պա ըշատարը հի՞նչ կօտե:
Էշն անե, էշն օտե:
Էշու հաքյվու նման վեշ ըրկնանում ա, վեշ կրճանում:
Էս ըշխարքես կեսը թայդի ըղնել ա, կեսը՝ թայդի չըղնել:
Էս աշկը էն աշկեն տեղ լուս չի տամ:
Էս պերքը, էս էլ քշերքը:
Էս քարանը վեշ մռու տապան ա, վեշ սաղու փոխան:
Էրկու անգուն, մին պերան:
Էրկու ժուլիկին անա շնըկոտեգ կընի:
Էրկու լսե, մին խոսե:
Էրկու *ծերք անել,* մին կլոխ թակել:
Էրկու հարուստ կռև ըրեն, մին քյըսիբու քյամանչա կոտրեցեն:
Էրկու ներակ մնին տալ չըն:
Էրկունը իրեք տեռնալ:

Էրկունը վեր մին տեռեն, մինը՝ հեշ:
Էրկու վըխնարավ սո̈ւրու չընիլ:
Էրկու տվարեն կլոխը մին ղզղանում իփվիլ չի:
Էրկու փահլևան մին քյնդիրու յրա կարել չըն խաղ անին:
Էքսվա կործեն յրա ծյուն կկյա:
Էքսվա քոշը բըուզյունն ըն քշում:

Ըլա̈ծեն կյին չընիլ, չըլա̈ծեն կընի:
Ըմռնվա կյողը ծմեռնը կասե:
Ըմռնվա քարն էլ ծմեռնը կկըդում ա (ոտվում ա)
Ըմռնվա օրը տարե կքուշարցնե:
Ընդեղ քյընի, հիշտեղ տու հարկավեր ըս:
Ընողեն աստուծ էլ ա պարտական:
*Ընցած օրեն օր չի հանել:*
Ըշկըրծկոթո̈ւնը ըղանո̈ւր ա, հիշքան խմիս, էնքան կծրավիս:
Ըսեցեն. — Ա. ծառ, խե՞ հղըցեն ղրաղեն ըս փսնում: Ասից.
— Վեր հղեն ավադ անիմ:
Ըսեցեն. — Աղբյուր, խե՞ հղեցը ղրաղեն ըս տուս կյամ: Ասից.
— Քյրնող-կյվողու նո̈ւր տալու հետե:
Ըրբան նոռալին տեղ, արաբաշին ա նոռամ:
Ըրած լվո̈թունը ըրեսավը չըն կյալ:
Ըրած ցեխեն մին քթո̈լ նո̈ւրն էլ ա բոլ:
Ըրփըրվերի կնգանը փեշկը նի կացած ա:

Թա առանց պահել հեյվան ընի, հանդերը լիգյը կընի:
Թազա հավեր ըն տո̈ւս եկալ, ըրկաթե ծվեն ըն ածում:
Թազան վեր կյավ ուշ, քյոհնան հիշվիլ չի:
Թազին էլ ա շոն:
Թաթերը թաթման քցած կատուն կարել չի մուկուն փռնե:
Թամբա̈լ ախնիզը վարար նո̈ւր չի սիրիլ:
Թանգ ու իժան մին կյին ա:
Թա վեր չըս տրալ, հո̈ր ըս յոր օնում:
Թա̈րիփան կոշ բըղիս կյալ, վեշ թա ծքվիլ:
Թա փալանս ընձար ա յա, կլոխս փոխիս, փոխիս ուշ՝ հա̈մին հաշնն ա:
Թաքուն մռնողեն էլ ըն ժըղըվուրթավ թաղում:
Թա օգո̈ւմ ըս կյիդաս աշխարքս հունց ա, մռնողան հըրցըրու:
Թա օգո̈ւմ ըս կործդ առաջ քյընի, տու քյընի կործեն հետան, թա օգո̈ւմ չըս, ո̈ւրուշու դարկե:

Թա օգնում ըս չնրվաշի ապրիս, մրթրվաշի մեռնիս, փաակվե, թա
օգնումս մրթրվաշի ապրիս, չնրվաշի մեռնիս՝ փաակվում'էր:
Թիժ կրակը ճելլի յա էրում—վեր ճնցընում:
Թողել չըն կածանը ծյուն կոխե:
Թող ըրած fարեն ճետան վազ չըն տալ:
Թող փորս կոշտ ընի, ճետաս տուզնը ծեն տան:
Թոշան կտրում ըն, պրանեն տեմ օնում:
Թորը վեր թոռ ա, ամեն մարթու թռշում չի:
Թոռ թակե պեզնեգը, արև էրի պեզնեգը:
Թորfն ասում ա՝ ճայիճ եռե խելfը իմը բիդար:
Թվանզը մոտե յրա յըս անում, ճեռե տրաfում ա:
Թվանզը մոտե տրաfում ա, ճեռե մարթ ըսպանում:
Թուլ ընգող fարը մամուռ օնել չի:
Թունդ fացախը կարաս ա ճfըցնում:
Թուրունը ճաց թխից, տնդեզինը պրծեցավ:
Թևերը կfավեն ճետե պեռնը չի:
Թսամ էր, մոլ շանիմ:

Ժամանակը կյող ա:
Ժաման ես ըմ կյամ, «օրհնյա դերը» տու վըս ասում:
Ժամեն տռանը լոխ «ա կնեգ, վայ ա»:
Ժլատեն ըսեցեն՝ տոռնը պեց, կըրճար ըրավ,
Կյողեն ըսեցեն պտրճանավը եշի, ծկրծուկի ըրավ:
Ժղովուրթը ծոռ պեն չ'անել,
Ժղովուրթը ծոռ պեն չ'ասել:
Ժղովուրթան տուս կյվողեն յա վեզը կկոտրե, յա՝ պոզը:
Ժղովուրթեն անեծfը աշկ էլ կfուռըցնե:
Ժղովուրթեն անեծfը տափը չըղնել:
Ժղովուրթեն աշկը շողալ ա:
Ժղովուրթեն մենածը աստուծ կդուզըցնե:
Ժղովուրթեն ննետ ապրե, ժղովուրթեն ննետ մեռեր:
Ժղովուրթեն պերանը կարել չըս կապիս:
Ժղովուրթեն պցրցրածը աստուծ էլ չի կարել վեր fըցի:

Իժան մսան fախծը շորվա չ'ընիլ:
Իժան մսումը թնըխաշու չընիլ:
Իլածավը պտըպտտ ա անում, չլածավը՝ յան տամ:
Իմ ապրանfս ճո՞ւ կյուղանա, ճո՞ւ. Հարարեդին տղա Գոզին,
էն էլ մին պիծի մնակավ:

Իմաստուն վերթին ճորն անա կճրցնե,
իմաստուն ճարը վերթուն մրթատեղ կտնի:
Իմ գյիդալս էշին վեռեն ա լո̈ւս տամ:
Իմ դո̈ւշմանիս դո̈ւշմանը իմ պարիկամս ա:
Ինսանեն պենը գյիդվալ չի:
Ինքը մարթ չի, մարթու էլ ճավան չի կենում:
Իվիլ թամանը տոն կքանդի:
Իվիլ թիքան փոր չի ծակել:
Իրավունքը ճրուստենն ա:
Իրեսեն թքեցեն, ասից՝ թոռ ա կյամ:
Իրեսեն թքեցեն, ասից՝ թոռա շա՞տ ա:
Իրեսը իրեսան կճըմանչի:
Իրես ըս տամ, աստառ էլ ա օգո̈ւմ:
Իրեսն էլ պրանան ա ճմանչում:
Իրես պաճե՝ իրես կեր, սեր պաճե՝ սեր կեր:
Իրիզունը ալաթ ա անում, ուռթանան կյութան էլ չի տեռնում:

Լամբը ո̈ւրան տակեն իշեղ չի տալ:
Լա̈վ ա անիս ուշ, ճինչ փիս անիս:
Լա̈վ ա անճախ ըշխադիս, ճինչ ճպարապ կենաս:
Լա̈վ ա առանց ճաց ընիս, ճինչ՝ պարտք:
Լա̈վ ա ըստծու շուխկեն կլոխ տաս, քան խանեն կլխեն:
Լա̈վ ա էշու մես օտիս, ճինչ անճանաչ ղսաբու խնդիրք անիս:
Լա̈վ ա կնգանը աշկը ճանիս, քան լեշակը:
Լա̈վ ա ճարո̈ւր օր պո̈րթումը կենաս, քան մին սոտ ուրթումն օտիս:
Լա̈վ ա մարթին աշկը տուս կյա, ճինչ անումը:
Լա̈վ ա մարթին փորը տո̈ւզն ընի, կլոխը դինջ:
Լա̈վ ա նեղութուն քաշիս՝ պարզիրես մնաս, քանց շանտղոթուն անիս, անպատեվ տեռնաս:
Լավ ա շլակիմ, ճինչ չու ասիմ:
Լավ ա տու ընիս ճիվանդ, ճինչ տանը ճիվանդ ընի:
Լավ ա փայ ճվաքիս, ճինչ ճարփիս:
Լավ է ամուսնանալ, քան թե ջեռնուլ:
Լավ ըշխադե, ջանդ էլ պաճե:
Լավ խոսքեն տարը կմեռնե, խոսքը կմնա:
Լալ խոսքը թևեր կանե, թռչի:
Լավ խոսքը ճրեղեն ղուշ ա:

Լավ խոսքը վարթու փոնչ ա:
Լավ խոսքն ու տեղեն բրարմունքը հինչ ասիս աժին:
Լավ ծին բրբսկապան չի ումանալ:
Լավ ծին կյարին կվլցրնե, փիսը՝ թակը:
Լավ ծին նույին տակեն էլ ա ենանչվում:
Լավ կենացը էրկու հետ ըն խմում:
Լավ կործ բրա, լավ քոն իլ:
Լավ մարթը իցուն տարանը մին ա ծնվում, լավ թաքավերը՝ հազարանը մին յա ծնվում ա, յա՝ չէ:
Լավ մարթը քարեն ծերք տա, վեսկե կտեռնա:
Լավ պենը կուրչիլանը ետն ա մղափունը կյամ:
Լավ փիս էլ ա ընում, փիս լավ էլ:
Լավան վնաս չկա:
Լավաշը շոնն էլ ա ուտում, պանեըր մաչին պտատելը չի գյուտում:
Լացին սուրը կտրվե:
Լացու հնգեր ընիս, հացու հնգեր չընիս:
Լաց կա՝ սերտ ա հվլցընում:
Լեն օրում ըս, ծերքդ մեկնե բղի քու մար, նեղ օրում ըս՝ էլհա քու մար:
Լիզյը թվնգին տրքուցան մին մարթ ա վախում, տրտնկան՝ օխտը:
Լի օրավ հպարապ շոռ չըն կյալ:
Լլեզին լուզուն մարը կգյիդա:
Լլեզին լուզուն լալեզը կգյիդա:
Լշակերը կտուցան ա ըրվամ:
Լոխ Իրանան ըն կյամ, ախպերը՝ Բղանան:
Լոխ մնին մաչին ընիլ չի:
Լոխ սուտ ա, ծմեռնը ղորթ:
Լչառեն տասը լեշակ կըռնի:
Լվրթունավը ղուշման չըն ծերք պիրիլ, նախանձ ծերք կպյիրին:
Լոք տո ծովան ընգեր սարը,
ասսուծ ա քու հվասարը:
Լուզվեն ղաղը լավանալ չի:
Լոզուն՝ կապ, սերտը՝ պեց:
Լուզուն համ տոն կշինի, համ տոն կքանդի:
Լուզուն մինն ա, անգուճը՝ էրկունը, մե հետ խոսե, էրկու հետ լսե:
Լուզուն վեսկեռ չօնե, հունցու օզում ըս՝ հյուրում ըս:

Լուսն էլ օնե շոխքը:
Լուսն ու մթենը մին հղըցավ ըն կյամ:
Խալխեն աշկեն շերանը տեսնում ա, ուրան աշկեն կյերանը տեսնում չի:
Խալխեն աշկը քեզ լուս չի տալ:
Խալխը ուրան չի հավան, ինքն էլ՝ ուրիշի:
Խաղեն վերշը կոև կտեռնա:
Խաղում խաղվեն յշիլավ ա սվանում:
Խաղում վեր հաավ, ծմեռուկը՝ հեշ:
Խաշար շվալավ այլեր չըն պիրիլ:
Խաչավ յոր ա օնում, խչըմանավ վեր տնում:
Խաչը տեռնը զորավոր կանե:
Խաչն էլ ա քունը, զորութունն էլ:
Խելունք դուշմանը կես պարիկամ ա:
Խելունք տղան հորը ըլածավը պարծենալ չի:
Խելքը դարդ ա:
Խելքը հաաակումը չընիլ, կլխումը կընի:
Խելքը տարումը չընում, սարումն ա ընում:
Խեղճդ տնիլ բդիս կործեն մաշին, վեր կործ տեռնա:
Խեղճին խեղճ ասողը շատ կընի, ծերք մեկնողը՝ խրեզ:
Խեղճ քյփուտեն վեռը պեց չընի:
Խեղճ քյփուտեն հացը կուտուր չտեռնա:
Խեղճը հվատեն կեսն ա:
Խինդեղնը հիշքան բեշարիս, մնեշակ չի տեռնալ:
Խմել-պահելը տղըմրթոթուն ա, խմել-հարփիլը համոթ պեն ա:
Խնամե-խնամե,
շատ ասիս կնհամե:
Խնձորավ կոև չընիլ:
Խոխան լաց ըլավ, թա՝ փայըս խրեզ ա, քաշը յրա տվավ տարավ:
Խոխան հինչու տեսնա՝ էն կսըվերե:
Խոխան մորավ կընի եթիմ, հորավ եթիմ չընիլ:
Խոխան վեր ընգելավ—եր կնալավ կմըծանա:
Խոխան մին եղու նման կհալվի, մին վարթու նման կպենվա:
Խոխան ջանաս ա, ախպերս՝ բղանաս:
Խոխան ուրխընալավ ա մծանում:
Խոզը միշտ ցեխ կքթենա:
Խոսում ըս՝ վայ ա, խոսում չըս՝ վայ ա:

Խոսքան էրկան պեն չկա:
Խոսքավ՝ արծիվ, կործավ՝ կորե:
Խոսքավ օձ բրա, կռև մ'էր անել:
Խոսքեն էք ու վերց կընի:
Խոսքեն հետան վազ չըն տալ:
Խոսքեն քամակը խոսքեն բռաշան կըրվա:
Խոսքերքը վեր տըրնիս ճղացեն քարեն տակեն, մին կար ծեթ չի-
տուս կյալ:
Խոսքը բդի խելքավ պժենիս, վեսկավ քշըռիս:
Խոսքը թվավուր կընի:
Խոսքը իփի, ետնան տուս քցի:
Խոսքը խոսք ա պո̈ւրո̈ւմ:
Խոսքը կործան ա տուս կյամ, կործը՝ խոսքան,
թա խոսքը կործ չի, իսկի խոսք էլ չի:
Խոսքը կործավ ա խոսք:
Խոսքը մեղր ա, կործը՝ տախտեղ:
Խոսքը սկըննողենն ա:
Խոսքը տեղեն կասին:
Խոսքը քյանդիր ա, վեր փռնիս՝ կրկընանա:
Խոսքը օրիշ կասե, կործը օրիշ կանե:
Խոսքն ու կործը մին բդին, տերտակ խոսքեն կյին չըիդի:
Խոսքն ու սերտը մին բդին:
Խոսքը կոլա, սերտը ախպյուր, էրկուսը կնի՞ն մին քոլա:
Խորագ իփողնեն վեր շատ ընին, խորագը նալի կմնա:
Խրավածը հանց օտել բդիս, վեր փորավդ կուխկանաղը փռնիս:
Խրեզ կործն էլ ա շատ կործ չինում:
Խրեզ վարե, հիշտ շվարե:
Խուխեն իրես չըն տալ:
Խուրազան կերենք ուշ, ծուխան ըշկրնես քոտացավ:

Ծամե, վեր հիշտ կոլ տաս:
Ծառան ծռատակը հիշտ ա բրվամ:
Ծառը՝ բարավ ա, մարթը՝ աշխադանքավ:
Ծառը կտրալ ըս, էլ հո՞ր ըս ասում, թա՝ ծտերը հո՞ր ըն:
Ծառը վեր շատ յոր օնե, ճեղնը կքշանա:
Ծառը վեր շղարում ըն՝ շեշման ա վեր ըղնում:
Ծեծաղը վերսկանն ա, ցավը՝ կյեզանը:

Մեծաղը՝ տես, մահը՝ տեն,
    ծերքդ՝ պեն, հա պեն:
Մետը հի՞նչ ա, թա ծտըխաշուն հի՞նչ ընի:
Մեր կոտրած ծերքը թող ծեր թևքումը մնա:
Մերքեն մանները դո̈ւզ ըն, վե՞ր աշխարքս դո̈ւզ ընի:
Մերք մկնողեն ծերքան փռնե, վեր նամարդ չասին:
Մերքը չհասած տեղը ծերք չըն մեկնել:
Միան վեր եկու, ծին մննան քցից:
Միավուրը վննըվուրեն հղըցհնզեր չի:
Մին մինչև ստակելը կրածե:
Մին շլլեղավ չըն քշիլ, ծին կյարավ կքշին:
Միվիլը գյուղում չի, մկրատը ծերքն ա օնում:
Մմակը առանց կյեզան չընիլ:
Միին եշում ըն, նալը թխում:
Միին եշում ըն՝ կյարին քցում:
Միին քոսը կյարին կողցնե:
Միք տան եզնենքը, տռոտին ըշըռոտենքը:
Մյուն ա կյամ, վեր վեննը մրսե՞:
Մյունան սիպտակ պեն չկա, բայց վննըտակու կորշում ա:
Մյունավ ըրած եխտը պեց կընի:
Մյունավ լցած հանդը, եռնան ծաղկավ կլցնե:
Մյունն էլ ա սիպտակ, բայց վեր յրան կյուզում ըս՝ տղնում ա:
Մնեն վախտը քանե մուտանա, կավը աղատավ կպռանչի:
Մնողը վերքուն փիսը օզիլ չի:
Մոռ ըշխարքումը շիտակ ապրելը աժեր ա:
Մոռ խոսքեն ումբուր չընիլ:
Մոռ նստե, դո̈ւզ խոսե:
Մոռ վեզը կտրել բըղիս:
Մոռ փաղին վեր մաշկդ տեմ ըրեր՝ մաշկդ կծըռե:
Մոռ մաշկը դո̈ւզ փադը կդո̈ւզըցնե:
Մովը քթո̈լավ տըռտակել չի:
Մովը քյընի՝ կցմաքե:
Մովն ասից. վեր ես հեռ կյամ, հեռե կաց ինձանա.
    իսկ թա տու հեռ կյաս՝ մուտա̈ց ինձանա:
Մովն ըղնողը օխծին հաքյվան էլ ա փռնում:
Մռերեն քմակեն ծմակն ըրվամ չի:
Մո̈ւլին փորը կործ ընեխս կցավե:
Մո̈ւլն էլ ա ծո̈ւլացալ:

Ծո̈ւկունը հիբը փռնիս՝ թա̈զա յա:
Ծո̈ւկունը ո̈ւրան ճո̈ւրը քթավ:
Ծո̈ւկուն ուտողեն քամակը միշտ ճրո̈ւմը բդի:
Ծո̈ւվակյող՝ ծիակյող:
Ծո̈ւվումը վեր ճոտ ա ընո̈ւմ՝ ծվվամ ա:

Կաթնեն նհետ նի մտածը հո̈ւքվին նհետ տուս կկյա:
Կաթուկը վեր վեր ըղնե, ծառեն տակը կղնե:
Կալխոզը ծառեն տակեն ա, կլխեն նհետ պեն չօնե:
Կաղլեգ էշին քոռ նալբա̈նդ քթին:
Կապդ էրկան պահե, լո̈ւզուդ՝ կարճ:
Կավը կաթնն ըզյորա կպռանչի:
Կավը ստկելանը ետը միշտ կթնատու կընի:
Կավս յղե ընի, հենց ամես ետե ծնե:
Կատվեն վազ տալը մինչև մարաքը կընի:
Կատուն աղա̈ծ ա օտում:
Կատուն ո̈ւրա̈ն փորեն հետե յա մուկուն փռնում:
Կարել չըս դո̈ւզ քյընիս, վեր հղեն ծռըմռռ ա:
Կեղը յրեն ա փռնում:
Կեղծավրոթունը կես թաքավրոթուն ա:
Կենն էլ չորին հվուրավը էրվում ա:
Կեռեքը կտրածն ա ծամում:
Կեսատ պատը ցորտ կտանե:
Կետն ըղնողը ճղնընեղնը կվազի:
Կետը փիս պենը յոր չի օնել, թող կանե, քցի դրաղ:
Կեր եղեղեն, պեր հրեղեն (ճղի կնոջը):
Կլոխն ասից. — Ա վեննը, չնուրհակալ ը՞ս, վեր քեզ Շուշի չըմ ղարկում:
Կլոխը պեց չի թողիս, հաքյին էլ ըս պեց թուղլական:
Կլխըպեցին հղեն փափաղչուն տռնավը կընի:
Կծողեն քմակեն վեննը կաց, քացի տվողեն՝ ըռաչին:
Կկողան մին տո̈ւս կկյա, պենդան՝ էրկու:
Կյալին էլ քյընիլ կընի:
Կյարին կյարի յա օտում, ցորենը՝ ցորեն:
Կյարի օտող ծին վերչումը կյարի կրող կտեռնա:
Կյարմո̈ւր խնձորեն մաչը փոշ կընի:
Կյարմո̈ւր խնձորեն քարավ կտան:
Կյարունքը վարե, ամեռնը հնձի,

ծմեռնը նստե կյնձի:
Կյետը յա կտանե, յա կպիրի:
Կյինին ըրեսեն համոթը տուս կօնե:
Կյինին մարթին սպանել չի, շան օր կքցի:
Կյինին մհնավ—շհնավ կխմին:
Կյինուն նհետ կոխ չըն կենալ:
Կյինուն վեր ասիս փիս ա՝ կյուղ կտեռնա քեզ օտե:
Կյինուն փարշեն վեռը պեց մ'էր անել, թա չէ, ինքն էլ քու վեռդ պեց կանե:
Կյողն ասից՝ հöւրու օնե, իմն ա:
Կյողը եկու՝ վայ մինատար, կյուղը եկու՝ վայ մինատար:
Կյողը կյամ ա՝ բալա լայ-լայ, կյուղը կյամ ա՝ բալա լայ-լայ:
Կյողը, կյուղը, տարը հրակաշ ըն, հու վեր ռաշիդ քնի, էն էլ կտանե:
Կյողը մթնու շոռ կկյա:
Կյութանն ա գյուղում ժնշիլը հունց ա ծիք տամ:
Կյուղը թոխպ օրը կծծաղե:
Կյուղը մթեն քշեր կօզի:
Կյուղին աշկերը բղվեսին ուստա յըն շինալ:
Կյուղին նհետ օտում ա, տեռնը նհետ ոռնում:
Կյուղին վեզը նա հետե յա հաստ, վեր öւրան պեները öւրան ծեր-քավն ա փոնում:
Կյողոթունը սել ա, վեր փոնըրվիս ուչ:
Կնեգդ կյեշ բդի, ոպախդ էշ բդի, տոնդ էլ կտոր բդի:
Կնեգը ըրտըսունքավ կեխնե:
Կնեգը իփիլավ-թփելավ ա կնեգ:
Կնեգը հցապեն բդի:
Կնեգը մարթինը չի, ախնիզն ա հորենը:
Կնեգը վեր լավ ընի, ըտծու էլ կընի:
Կնեգ ըրա, քնենք ըրա:
Կնեգս պին ա, հացերը խրդըխուրդա յա թխում, ես էլ էրկունն օտում ըմ, մինը հաշև անում:
Կնգանենը մարթն ա, կոժը:
Կնգանը աշկը լացու հետե յա ստեղծվալ:
Կնգանը պստեր մարթը կպահե:
Կնգանը վեր թակիս ուչ՝ կգյիդա թա ըրփըվերիյա:
Կնեգը վեր öւրան մարթան քաշվից ուչ, ուրիշան քաշվիլ չի, քաշվիլ չի:

Կօզի ծո̈ւկունը կլխան ա վերթնում, պայց հա̈քյվան ըն քյիրում:

Կօզի վխճարան շատ ըն կտորվում, էլհա վխճարեն սո̈ւրու կը-
նի, շանը ընիլ չի:

Կոժն էլ ըն դերին կլխեն կոտրում, կոլան էլ:

Կոլան ճրին հղեցը կկոտրե:

Կոխտանջ տեղը խոտ չի փսնել:

Կոշտը հինչ ա գյուղում, թա ըղքաղեն փորը դոռամ ա:

Կոշտը տո̈ւզնին ամանը խուրդա նի կփրթի:

Կոշտ պո̈ւրթը ախնիգս կյզի, կակողը՝ հարթնս, կոշտը պո̈ւրթը
հարթնս մանե, կակողը՝ ախնիգս:

Կոշտ օտել-տրաքելը կյումաշին կսազի:

Կոտեգը շանը փորեն տակեն ա գո̈ղլը կենում:

Կորած տնակեն կոթը վեսկե կընի:

Կորավ ապրանք, կորավ հուքի:

Կորեկն էլ՝ ո̈ւրան ըգյորա:

Կործ անողը խրեգ կխոսե:

Կործ անող մարթին կործը պրծնել չի:

Կործեն նհետ՝ դո̈ւզ կործ անելը սվերե:

Կործը ամեն հինչին եխնում ա:

Կործը գիդողան բաղրյար ա ընում:

Կործը ընողանա վախում:

Կործը ընողեն պարտական ա:

Կործ ընելան վեչ մինը մեռալ չի:

Կործ ընելավ չըն հրուստանում, կեռքան կտրելան ըն հրուստա-
նում:

Կործ ընողեն հետե ամենածանդր կործը անկործ կենալն ա:

Կործը սերն ա անում:

Կործ ըրա, վեր շտա̈հավ հաց օտիս:

Կործդ պրծեր, ետնան լղվոթուն ըրա:

Կորուն յա մաշկեն քցած, յա հո̈ւքին հանած:

Կռև անելը չի տղըմրթոթուն, եխնելն ա տղըմրթոթուն:

Կռվումը շամենչ չըն պժենում:

Կտրից ցիլս, կտրից թիլս:

Կրակեն ոխան պրծնումնը չընիլ:

Կրակը առանց ծոխ չընում:

Կրակը էրած տեղն ա էրում:

Կրկուտաթակ թութան արաղ չի տուս կյալ,
շախկա տված թութան ըրկուտակ տուս կկյա:

Կրչկրչող ճավը ածան կըճի:
Կուժեն բռաշին կոլա էլ ա կոտրում:
Կուկուն անե, ճիճին տանե:
Կֆավեն ճոտը ճավեն տակեն կենալ չի:

Հազար խոսողը Ղազար չի տեռնալ:
Հազար սոտը մին ղորթ չաժի:
Հալալ մազը կտրել չի, ճարամ կյերանը կկտրե:
Հալավը լաշան մոտե յա ընում:
Հըմին էշն ա, փալանն ա փոխվալ:
Համ ճավեն ա փչում, համ՝ կածին:
Համ օժավ ա, համ՝ ճաշար:
*Հայան խելունքը ճայը կըճի:*
Հայացտունը մին ղաշանգ ախնիգ ար, թոռերը փխնըցրեն:
Հայը ճային պարիկամ կըճի:
Հայը մինչև ճղաճա վուչ՝ եռ չի տեռնալ:
Հայը մինչև ճղաճա վուչ՝ ճստել չի:
Հայը մղրաճըճջ ա, խարտը կուրցրած:
Հային թմզոթունը, թոռեն փյադա ֆյինիլը:
Հային ճրցրեն. — Հի՞նչավ ըս ապրում, ասից՝ ումեդավ:
Հային պենը պրծնել չի:
Հայ-ճայս ֆեցալ ա, մնացալ ա վայ-վայս:
Հայում՝ տվարած, թոռում՝ տվարած:
Հանըֆին վերչը չանաֆ կըճի:
Հանդին խոսֆը տոն չըն պիրիլ:
Հանդին կտրե, վեր կալումը թող չանե:
Հանց ա մոլլա՝ խոզու մսու յշիյիս:
Հանց բեղար աշխարֆս չնողենն ըճըր, վեչ թա ֆնդողենը:
Հանց բղար ղորթը ծառ ըճար, լոխ տնգստին:
Հանց բռա, ուտեխս պենիդ ճամը պրըճումդ կոռչի վուչ:
Հանց խոսֆ կա, ֆառն էլ կնֆցնե:
Հանց վախտ ա ընում, կաղը սաղան առաջ ա ֆյընում:
Հանց վախտ ա ընում, սաղը ճֆածեն բռաշին ա կոտրում:
Հանց վախտ կըճի, մեծը պիծինին ճետան կֆյըճի:
Հաշան շոնը խածան չըճիլ:
Հաշի, ճաշի, եռ մաշի:
Հաստ ու պերակ մին կյին ա, վայ պերակի մնողեն:
Հավատը սարը տեղան տըւրըւր կտա:

Հավեն ճրին ճուրն էլ ա խորագ:
Հավեն վերը վեր թոխսը կյա, ծվենը տակը կանին:
Հավքը՝ թևավը, մարթը՝ խելքավը:
Հատեգը վերան բդի, վերթին փորան բդի:
Հարամը եկու, հալալը տարավ:
Հարգե՝ հարգվե:
Հարգս՝ հարգավորաց, պատեվս՝ արժանավորաց:
Հարը շլոր կերավ, աղեն կեռեքը առնից:
Հարը անգալ ա, վերթին մծըցալ, կյողը եկալ ա տար տու եկալ:
Հարթնանը վեռավը փսեն լվորուն ա անում:
Հարթնը պլորուն բրավ, սկեսվերը քեթը դղեցեն:
Հարթնը փեսան կտանե, շաքաշը՝ ածողը,
մկառեն լհա մին վըքեց պար կյալ կմնա:
Հարուրը կուրցնողը մինավը ուֆ չանել:
Հարուր ճղպորան հենգը փոշ կընի:
Հարուր տարե կյղորուն ըրե, հարամ թքյա չկերե:
Հարուր արեկան էլ ընիմ, ծոռ փաղը չալիգ չըմ շինիլ:
Հարուստը թագա շոր կեցավ, ըսեցեն՝ շնըհավուր ընի, աղքաղը կեցավ, ըսեցեն՝ հիշտը՞ղա յա:
Հարուստը ջուրեն ա թխում, քյասիքը՝ ծույնանը:
Հարուստը քյասիր կընի:
Հարուստը օխծը կերավ, ըսեցեն՝ ճար ա, քյասիրը կերավ, ըսեցեն՝ տունգն ա:
Հարուստն էլ ասից՝ հուրու օնե՝ ի.ն ա, կյուղն՝ էլ:
Հարփող մարթան հեռե շոռ տռ:
Հենգ մտածե, մե հետ խոսե:
Հացեն կտրածը թորը կտրել չի:
Հացեն հարկը չգիդողը տոն չի տեռնալ:
Հացը դուշմանին տոռնը կտանե:
Հացը՝ ծույնանը, աշկը՝ կնգանը:
Հացը կոխ տվողեն սատուծ ա կոխ տամ:
Հացը հաց ա, հացեն լավ ու փիս չընիլ:
Հացը մաշկեն քցիլը մեխք ա, հացը ըրեսեն կպանին:
Հացը մարթին փորումը մնալ չի, բայց հաց տվողեն անումը կմնա:
Հացը շտահավ ըն օտում, կործը սերավ ըն անում:
Հացը սուրփ ա:
Հացը՝ սուլթան, ճուրը՝ վեզիր, մնացածը՝ զզիր–մզիր:

Հացը վեր նամա̈րդորուն անե, կավը տոնը կպահե:
Հաց ուտեիս կծո տախտեղ կօտին, կծո խոսք չըն ասել:
Հացը՝ ուտողեն:
Հացը քեզ ճնանչիլ կտա:
Հացը քրտնոնքն ա սիրում:
Հացու վրմ տնում՝ հսնում ա, պենու վրմ տնում՝ կորչում ա:
Հեռե ընիլը թավ չի, թաք մտեն ընի:
Հեռե շոռ եկու, մոտե քթա̈վ:
Հերթը մեզ հսավ, ճղացեն ցիցը կոտրից:
Հիլին տեսնում չի, բրվըցնում ա:
Հինչավ հվընդացալ ըս, նանավ էլ սղաց:
Հինչա փռնիս կկրճանա, խոսքա փռնիս՝ կըրկնանա:
Հինչ հավա ածիս՝ պար կկյա:
Հինչ մըսմըսցրած մինտեղա տուս ասե՝ Մոսես:
Հինչու ընիլի ընի, բննական ա:
Հինչու վարիս, էն կհնձիս:
Հինչու վեր վետ կյա, աղավ կանին:
Հինչու վեր քեզ ըն տամ, հա̈յբաթ մհետե եր ըն կալալ:
Հինչու տվեր՝ քունն ա, հինչու պահալ ըս՝ քունը չի:
Հինչու օնիս՝ կուրցըրու, պատեղ տեղը պահե:
Հիշտեղ մինն օտե, մինը եշի, ընդեղ կռև կընի:
Հիշտեղ՝ սեր, ընդեղ՝ կեր:
Հիշտեղ տրալ ըս, ընդղան էլ եր կա̈լ:
Հիշտեղ օ̈րան ա ըլալ, օ̈րան, Գեոկը լհա օ̈րան:
Հիշքան աշկը պցրա̈նա, օնքան կարել չի պցրանա:
Հիշքան ըրբան փիս ընի, էնքան ճրո հա ճրոը շատ կընի:
Հիշքան մտածիս՝ հարուր կապեկը մին մանեթ ա:
Հիշքան պեռնդ ծանդր ընի, էնքան հղեղ ճելլի կքյընիս:
Հիշքան պկասե, ըշխարքաս մազ չի պկասել:
Հիշքան վերը խոր կտրիս, էնքան ճո̈ւրը իրես կընգե:
Հիվանդը չի հիվանդ ընիլ, հիվանդատարը կընի հիվանդ:
Հիվանդոթունը հիշտ նի յա մննում, տժեր տուս կյամ:
Հղեն մինն ա, ցավը՝ հազարը:
Հղե քյընողը հղցա տուս չի կյալ:
Հղըցավը քյընողը նղանալ չի:
Հղըցավը քյընողը պտըպատ շըղնել:
Հալալ ա՝ քզ էտե, էրալ ա՝ քզ էտե:
Հյվանեն մինը վեր սատկե վուշ, էն մինը խնդըկել չի:

Հնգերեն, մն էլ ծիին, մե հետ ըն փորցում:
Հնդրողը հնդրվացֆավ կըղնե:
Հնգածը կորած ա:
Հշտըղավ հաց թուլ տաս՝ նուր տուս կկյա:
Հոլը (ուլը) նվռանեն տակեն կենալ չի:
Հո-հա՞ կա սար ա տանում, հո-հա կա ֆցում ա ծո՜րը:
Հո-հա՞ն դայլը եզնանը չանն ա:
Հոնձ անդղը սամավ էլ հոնձ կանե:
Հորածը ետ չի կյալ, կորածը՝ կկյա:
Հոր խանեն ֆշտեն փլավ օտիմ, հոր բեղս եղուտ տեռնա:
Հոր կտրե՝ խոր կտրե:
Հպարապ օրը տարե յա:
Հռնանցե ամեն հինչ հիշտ ա թվամ:
Հրևանդ վեր ննշում ա, ֆու նենշդ էլ ա վեր կոխում:
Հրըվանեն վեխնարը կյուղը տարավ, հրևանը սյղացավ:
Հրթննֆա ետ՝ նղարա:
Հրթնոթունը սև վեղան սվերե:
Հրկըշվե մատաղն էլ ա հարամ:
Հրսանեֆ ֆյընիմ, հինչ տոն տանիմ,
սաղունձ ծամիմ՝ հինչ կոլ տանիմ:
Հրցնելը համոթ չի, չգիդալն ա համոթ:
Հրուստեն վերցակն էլա թոխս կյամ, նստեր անում:
Հույսավ ապրել չընիլ:
Հույսը հվըտըվուրեն խափիլ չի:
Հույսը ուտելան լավ ա:
Հույսը ֆար տեռած կյիր ա, մին օր կրթվլական ա:
Հունցու բռնում ա, ընդի չի թռռ կյամ:
Հունցու օգնում ընֆ, ընդի չընֆ ապրում, հունցու կարում ընֆ՝ ընդի ընֆ ապրում:
Հու վա գյուղում հո՞ւր դա՞րդ:
Հու վեր ամեռնը անե վուշ, ծմեռնը օտել չի:
Հու վեր ասից՝ հո՞ւր նհետ ըմ, նա թողե, հու վեր ասից՝ հու վա հնձ նհետ, նա նհետ հնգռոթուն ըրա:
Հու վեր ասում ա՝ մաննս խյար ա, աղը յոր ա օնում, վազ տամ:
Հու վեր էրկան ա ծամում, նա էրկան ա ապրում:
Հու վեր խոսում ա, սարի յա տո՞ւս կյամ:
Հու վեր կարթի՝ էն էլ մարթ ա:
Հու վեր կատու չի պահում, մուկուն ա պահում:

Հու վեր կործ չանում, դնչրնալին համր հի՞նչ ա գյուղում:
Հու վեր չուստ՝ փորը կուշտ:
Հու վեր պնրհացա ճուշտացավ, գիդա վեր ջանումը ճամե կա:
Հու վեր սկանում ա, էն էլ կտեսնա:
Հու վեր փափուկ պերց ա տնում տակեն՝ յրան նստում ա:
Հու վեր ճամուն հակառակ թքում ա՝ ուրան րեսավն ա տամ:
Հուրու րրքա նստիմ, նա երգն ասիմ:
Հուրու խելք րն տամ՝ ճյարրորունն էլ ննեռը:
Հուրու կլոխ տափ ա, ջանը սափ ա:
Հուրու հաց րնի հարկավեր՝ նա րյլերու հոճս կանե:
Հուրու հանչ օնե՝ մաննը կլուզի:
Հուրու օնե՝ կկյենա, հուրու օնե վուշ՝ կեշի:

Պանչրդեն վեր դայաղ րնի, կյուղ կկոխե:
Պաշանգ անպենը տանը մնաց, անվալ պնրվուրեն հետան գյուղլա ճցեցեն:
Պաշանգ րեսեն փրթուշ չրն օտում:
Պաշանգն ասում ա՝ ինձ հոնանցե եշի:
Պաշանգ պատած թրեճ չի նեստա կենալ:
Պարիրը ուրիշին վեղումը միհակ րռտասուճ կթողե:
Պարիր շոնը հաճյին շճրռմաշումը կպահե:
Պեյնը մսան տուս չօնվել:
Պոնաղը տոն նի մննեիս կյան ա, տուս կյիս՝ աշուղ:
Պոնաղ մարթին խոսճ չի հսնում:
Պունաղեն լուզուն կարն կրնի:
Պունաղեն կերածը սստուծ ա տամ:
Պոնաղն րստծունն ա:
Պոնաղ շան տղան ուրան ղնուղվաշի կպահե:
Պոնաղը վեր էճսը ճյեցավ ուշ, տեռնում ա դոնդաղ:

Ճանչն ածում ա, ճիճին տանում:
Ճանչս կոռած, աշկդ՝ օտած:
Ճաշը լավ ա, վեր ծեր տանն էլ րնի, մեր տանն էլ:
Ճեյլի եր կեննոդն ու եռե կյվողը ռուզավ կրղնին:
Ճեղացը հոնե աղունն ա աղում:
Ճիճին նի-նի րնելավ ա մեռնում, թթումաղեն՝ թրթռալավ, մարթը՝ տնչվիլավ:
Ճիճին մին երճ ա գիդում, էն էլ ամեն օր ասում ա:
Ճկրտակիրը ննչրվիլ չի:

Ճկրտմաչին եշի, դուզն ասե:
Ճղսպուրը պատան չի կենալ:
Ճղսպուրը ֆշրվանա տոս կյամ:
Ճղացեն ծոռը նուրը կդուզրցնե:
Ճշմարիղը շպերֆ ա:
Ճոնդը ծերֆան պեց չըն թողել:
Ճուռուն ընզունեներեն մեծ ու պիծի չկա:
Ճուռուն պինիրը վեր տուս կյա, առաչ ուրան վեռեն նի կկյա:
Ճպատդ ֆոլադ կտրե:
Ճռաֆվի շոռ եկե, անճռազ ֆթի:
Ճռին սանը ծառավը կսկանա:
Ճռումը նստում ա, ցմաֆումը լղանում:
Ճուրը հունցու ֆյընում ա, ննետը ֆյընիլ բդիս:
Ճուռ ընի, նեղաց պեն կանե:
Ճուրը վեր մին տեղ շատ կաղնում ա՝ վետում ա:
Ճուրը ուրան հղեն ֆթենում ա:
Ճուրը ուրան տեղավը կֆյնի:
Ճուրը էն տղան ա, վեր ուրան հղեն ինքն ա շինում:
Ճուռ խմեխս խնզարել չըն. մարթ ընի, թա սարթ:
Ճուրը վազ տալավ կետեն կհսնե:

Մազաղ, մազաղ, հիշտե՞ղ ըս ֆյընում:
— Ֆյընում ըմ մազաղ անիմ:
Մազնեն փոխը մածուն չըն տալ:
Մածունը կատուն կերավ, թակը՝ խոխան:
Մածունն էլ ա փչում, եռնան օտում:
Մահան ու շարան փախչիլ չկա:
Մահը լավեն ա սիրում:
Մահը հանց օղտ ա՝ լուխնու առան չոֆում ա:
Մաշտեղ օտող, տուս շոռ կյվող:
Մատտաքը կորկու չըն տնիլ:
Մարդ կա լուզվեն տակռեն սրտեն ծալումն ա, յուզու կա՝ տակոե շօնե:
Մարթին կյիրը վեր կոռշում ա, աստուծ էլ ա նեստա խռավոֆ:
Մարը մեռած սաղանան ուրան անա հեռե յա շոռ տամ:
Մարը վեր տակռավը եր ընի, ախնիզը տըրտալ շոռ կկյա:
Մարթ–դյուղ:

Մարթը ընգունան կպռավե, նեյվանը՝ դռնաղան:
Մարթը կքթենամ, խոխան էլ կպիրիմ, պա ախպերը ճշտղա՞
քթենամ:
Մարթը մարթին վեր սիրից, աշխարքը բարավ կլցնե:
Մարթը մեռավ, քարը մնաց:
Մարթ ընիլի հետե մին հարստութըն բոլ չի:
Մարթը ըշխարքես յուսը ո̈ւրան տանը պտրհանան ա տեսնում:
Մարթը վեղան փափուկ ա, քարան պենդ:
Մարթը վեր սուս անե, քարը կխոսե:
Մարթը քյընից, դա̈րդն էլ ննետը քյընից:
Մարթը մեռնում ա, դա̈րդը ո̈ւրան տեղն ա փոխում:
Մարթը ո̈ւրան դալուն քարեն ա տեմ անում:
Մարթին այիբը բրեսավը չըն կյալ:
Մարթին անա կյախս վետն էլ բդի պարի:
Մարթին անա մրթավետ բդի կյա:
Մարթին աշխադանքավ ըն ճնա̈նչում, տորքավ:
Մարթին ապրանքը ո̈ւրան նման կընի:
Մարթին գիդայիս կործը պարզ, ըմըռնորան օր ա:
Մարթին ըսեցեն՝ հշտըրղա՞ցե յըս, ասից՝ կնգանս հրգըրու:
Մարթին կոշտը մարթ կքյընի, մարթը մարթավ ա մարթ:
Մարթին մեծը ջնըյանան ա:
Մարթին չոռավ չըն ճնանչիլ:
Մարթին վեռը տո̈ւս ար տեռալ, մինն ասից՝ կտրիմ, տանիմ տամ
մեր շանը:
Մարթին վեր թարիփ անիս, պոզերը տո̈ւս կանե:
Մարթին փափաղը կնեգը պեցուր կպահե:
Մարթին փորը փյնըրնվարան չի, վեր հինչու ածիս՝ տանե:
Մարթին քմակեն փիս խոսել չըն:
Մարթիս գյանքը կյուրունքու ծյուն ա:
Մարթիս մահավը աշխարքս վըրշանում չի:
Մարթ լո̈ւզվավ ա թալակ ըղնում:
Մարթ կա դերին ա սիրում, մարթ կա՝ դըրըկնգանը:
Մարթ կա լո̈ւզո̈ւն ա պրտող, մարթ կա՝ սերտը:
Մարթ կա կարթում ա՝ մարթ տեռնում, մարթ կա կարթում ա՝ էշ
տեռնում:
Մարթ կա օսի, մարթ կա՝ մոզի, մարթ էլ կա՝ քաշալ կլոխ կխոզի:
Մարթ հինչու անե՝ ո̈ւրան կանե:
Մարթ հինչու անում ա՝ ասածու փառքեն հետե:

Մարթ ճակատը պեց բդի տուս կյա շնամաշը:
Մարթն էն ա, վեր խեղճը կենքան պահում ա, մարթն էն ա, վեր աշխարքս ավադ պահում ա:
Մարթ ու կնգա վեղը մին տեղա յա եր կալած:
Մարթ ո̈ւրան աշկը քոռ չօզիլ:
Մարթ ո̈ւրան կործեն աշուղը բդի:
Մարթ ո̈ւրան շուխկան իվիլ կարել չի լոք տա:
Մարթ փիս օրեն կտրմանա, լավ օրեն ամանալ չի:
Մարթ քանե մծանա, քանե սնդերքան վեր կածե:
Մարթ քեցավ թա կախ ընի, ըսեցեն՝ չարթուն եր կալ, մին կապուկ չոփ պեր:
Մեծ աշկը փսոր կըղնե:
Մեծեն խոսքեն վեր անգուն օնիս, վեննդ քարեն նի չի կյալ:
Մեծեն կյոք տո, բարը կեր:
Մեծեն ղադիրը գիդա, վեր մծանաս. վեր գիդաս ուշ՝ վեշ մծանաս, փոշ մծանաս:
Մեծեն ղադիրը գիդա, վեր քու ղադիրդ էլ գիդան:
Մեծեն մին աշկը քոռ բդի, մին անգունը՝ քառ:
Մեծ նո̈ւրը մեծ արխավ կքյընի:
Մեծ-մեծ խուսելավ փլավ չի իփվում, եղ ու պրինձ բդի:
Մեծու ասած, պծինու բրած:
Մեծ օղտեն մեծ էլ յարա կընի:
Մե հետ՝ ճանանչ, էրկու հետ՝ պարիկամ:
Մեղր ծախողը մանները կլո̈ւզի:
Մեղքն էլ ա ավըրովի:
Մեռնելը աղո̈թ բդո̈ր, պռավելը՝ վուշ:
Մեռնո՞ւմ ըս, մե հետ փուհ ըրա:
Մեռնում ըս, մեռնում ըս, էլ խոխցընելդ հի՞նչ ա:
Մեսն առանց վեսկեռ չընիլ:
Մես օտող դուշեն կոոցը կեռ կընի:
Մեր տանը կենում ա, մեր հացն օտում, ուրիշի տռան հաչում:
Մթեն տեղը քար չըն քցիլ:
Մինակ թա խորթը աշխարքը չընի:
Մինակ ծերքը ծափ չի տալ:
Մինակ օխծան վախե, վեր դույուղ չանում, եռնան կծում:
Մին անում էրկու չըն անել:
Մին աշկը մնին տեղ իշեղ չի տալ:
Մին ճղացեն վեռն ա լո̈ւզ տամ, մին՝ ճղըցպանեն:

Մինը մե հետ գիդի-գիդի ընելավ մին կյանն ա քթալ, նանա եար միշտ գիդի-գիդի յա անում:
Մինը մշանք եշում ա՝ աշկն ա տնւս կյամ, մինն էլ մշանք օտում ա՝ փորն ա տուս կյամ:
Մինը շինումա, մինը՝ քանդում:
Մինը պերան օնե՝ հաց չօնե, մինն էլ հաց օնե՝ պերան չօնե:
Մին թըխկավ ծառ չի պարան կյալ:
Մին թ՜յան մինակ կեր, մինը ժղըվուրթեն նհետ:
Մին խելքը ամեռնը-ծմեռնը հի՞նչ անե:
Մին ծերքավ տամ ա, էն մինավը կյուղանում:
Մին ծերքավ քշկոռ չըս եա անել:
Մին ծերքը վեռեն ա տնում, մինը՝ կլխեն, շոռ կյամ:
Մին կա հազար աժի, հազար կա՝ մին չաժի:
Մին մուկունը օխտը կարաս կմուրտառե:
Մին շոն վեր ուռթընանց քլուլվում ա, ընդի էլ սաղ օրը քլուլվելավ քյընում ա:
Մին շուքավեր ճղպոռու տակե հարուր մարթ շուքընհան կըսիհն:
Մինչև աչեռը եզնը կտեռնա, տարը խոզ կտեռնա:
Մինչև խելունքը մտածելը, կյիժը կետն անց ա կենում:
Մինչև խոխան լաց չընի, մարը ծեծ չի տալ:
Մինչև նի մննելը տուս կյալին մասին մտածե:
Մինչև շոն տեռնալը տես հիշքան ա հազալ:
Մինչև քոռակը էշ տեռնալը փալանը մղմողն օտում ա:
Մինչև օխծին հաքին կոխիս ուշ, քեզ կծել չի:
Մին պատառ պեմբակ ունի, էն էլ մուռ ոխե քյընից:
Մին սթունը տոն չի պահել:
Մին վխճարան էրկու մորթե չըս հանել:
Մին տաս՝ էրկու կոզի:
Մին տարե՝ հրթնոթուն, օխտը տարե՝ կյլոթուն:
Մին տարում էրկու կյարունք չընի:
Մին ցավը մարթ չսպանել:
Մին փոր հացավ վեշ հարուստ ըս, վեշ քյասիբ:
Մին փոր հացը մին վերը խափան կանե:
Մին քար էլ ես տնիմ խալխեն պատեն:
Մին քար ըս թող անում, գյոլը պրտողում ա:
Մին օրվա թաքավորություն էլ ա թաքավորութուն:
Մկրատն էլ ա ուրանը, կտորն էլ, հունցու օզում ա՝ կտրում ա:
Մղրնանչին մին կծելը հարուր ընդի ճանչ աժի:

Մնթնեղ քեցալ ա, կպկնեղ ա մնացալ:
Մնին հայ-հայն ա, մնին՝ վայ-վայը:
Մնին ծոխը վեր կարե վուշ, մնինը եր շընիլ:
Մնին եղում ըն, մնին՝ պաղում:
Մշկապատ կյղոքուն քյընողը ուրան հալալ աշխատղանքն ա օտում:
Մոզի, տու ըրածե քզ էտե, ես էլ հպոտիմ՝ քզ էտե:
Մոտե էշը կյուլն օտել չի:
Մորը եշի, ախնիզն օզի:
Մորը թղեխս սաղանան վեննը կոտրում ա:
Մորը պեժինը ըխնըկանը կյոտկումը կընի:
Մոր սուքյումը սաղանան ուրան անա փախշում ա:
Մշանք փրթուշ բղխս օտել, վեր փորղ կլխաղ պցրանա (քթեղ նի կյա):
Մշանք օտել բղխս, վեր փորեղ յրա պարանց ընզխս, վեններղ տափան կտրե:
Մոլնեն զիղում ըն, թա սաղերը հալվա ուտեխս ըն ընում:
Մոնողեն հետան քյընում չըն (մեռնում չըն):
Մոնողեն ցավ կընի, երանի՜ դարղ չընի:
Մոնողեն քմակեն փիխս խոսել չըն:
Մրթըմաշի մարթս ընի, հազար թուման պարտքս ընի:
Մրոք կա՝ եխծե, մրոք կա՝ էշու հաքյի:
Մրքեն հետան քեցալ ա, բեղերը կուրցըրալ:
Մորը աշկեն վերթին մծանալ չի:
Մուկնեն հոտն էլ չվալ կծակե:
Մուկունն ասում ա՝ կատվան օժավ պեն չկա:
Մուհալ մ'էր անել, քթեղ կփսնե (առաշղ կկյա):
Մուհ-մուհը տոն կքանղի:
Մուշհավեն ըսեցեն՝ խե՞ սև ըս կեցալ. ասից՝ մինակ էղ չի, դարղան խանանղա էլ ըմ տեռալ:
Մուշհավեն ըսեցեն՝ խե՞ մարթա հեռե յըս շոռ տամ. ասից՝ մարթին ըրարմունքն ա ուրան անա հորցնում:

Յարան սղանում ա, դաղն ա մնամ:
Յա փուլ բղի, յա՝ օժ, թա չէ կորած ըս:
Յզնըհավաք անիմ, պարիկամս ննանշիմ:
Յղե ըս՝ ծնե, սուրե ըս՝ ծնե:
Յոր օնելը հիշտ ա, տալն ա ւոժեր:

Յրգինիին կյրածը երգիրը կարել չի վեր անե:
Յրգիրումս տվովի պեն չկա, լոխ սվրովի յա:
Յրկե կերածը սօր օֆութ չի:
Յումբրուղեն վեր ամացալ քս, ֆացուն էլ քս ամննակյան:

Նամուսը վննատակ չըն տալ:
Նամուսը ավեն շանը՝ կերավ ուշ:
Նա տուս ըրած կյումը հեյվան չի նի մննել:
Նեղ օրեն հարզակ օր էլ կընի:
Ներակ ընղուր կընի, պտուղը պարի կընի:
Ներակ ընղուր կընի, հուրան գյուլլան հուրան նի չի կյալ:
Ներակ ընղուր կընի՝ հուրան ըրածը հուրան առաշը կկյա:
Ներակ մեզ, վե մեր մեծերը Անին ա, Մատին, Պատին:
Ներակ նա, հու վեր մե հետ ծնվում ա, մե հետ մեռնում:
Ներակ նա, հուրու մռնեխս ղորմի ըն տամ:
Ներակ նա, վեր տերութունումը անդար չընիլ:
Ներիլը հիշտ ա, մննան ֆցիլն ա աժեր:
Նի փըրթածը տուս կտաս:
Նհետ ըլած տառանը պենվալ էլ կա:
Նոթե շոնը տեռնը կկծե:
Նոթե փորը կղողռա:
Նոռնը կեր՝ ճղըվերվիս ուշ, ճղըվերվալ քս՝ նոռնը կեր:
Նոռնը ըրևեն բալան ա, արևն էլ հային բալան ա:
Նոռնն ասից՝ ֆշևս փոշ չի:

Ծանը վեր շահ ա, առանց ճոֆյար կարել չի ապրե:
Ծահեն խալաթ տալավ կարել չըս եխնիս, կլխեն բամփել բդիս:
Ծանան կոտեգ կընի:
Ծանան շատ տրեխ կյուղանող չկա, էլհա պեպեգ ա մնամ:
Ծանը զոռավ վերսի չըն տանել:
Ծանը էրկու անում չընիլ:
Ծանը հրգրեն, թա. «Մին օրումը ֆանե" ֆար ա ֆեզ նի կյամ»:
Ասից. «Մարդիմազարը պտըհելին նհետ ա»:
Ծանը վեր դալու ընի, կյուլ կկոխե:
Ծանը վեր ֆառավ շտաս, հաշիլ չի:
Ծանն ըոլխեն եշի, կերած տրխեն:
Ծան տղեն հացը հիշտեղ վարիս՝ փսնում ա:
Ծաչին թխում ա, խնձղկորթեն օտում:

Շառը պերալ ա սրո̈ւնան կապալ, թա՝ աստուծ, շառը հեռե տանե:
Շատ գյուղող աղվեսը էրկու վեննավ ա թալակ ընգնում:
Շատ ընողեն հիշտե՞ղ ա ըլա̈լ բախտ:
Շառը խրըգյան ա կույանում:
Շատ ըպրելավ չըն սվերում, շատ տսնալավ ըն սվերում:
*Շատ ըս գիդում, խրեզ խոսե:*
Շատ խոսողը շատ կսխալվի:
Շատ մեղր-մեղր ըսելավ պերանդ քղցրանալ չի:
Շատն էլ շատ ցավ ա:
Շեշմա տակռուն շեշմա շոշ կընի:
Շնըշեն շոռ եկե, մեր շենան լավ շեն չկա:
Շիլը քոռան լավ ա:
Շլոր ուտողեն կեռեքը կառնե:
Շղոմքուր կյառնը օխտը մար կծծե:
Շնանանչը օխծին ասից. «Տու դո̈ւշմանիս աշկեն ըրվա, ես՝ կըծիմ, սերտը նքլական ա»:
Շնա̈ցուն ապրուստը տվըրածան հրցրու:
Շներր հաշին, քա̈րվանը քոշի:
*Շողոմ լո̈ւզվավ օխծը պո̈ւնան տուս կօնիս:*
Շոնը թկելավ կստակե:
Շոնը կերածը կքաքե:
Շոնը կուտկոց մա̈նկյո̈ւմ կանե:
Շոնը հշիլյան տհանիլ չի:
Շոնը հիվանդ ընիլա̈ն խոտ կրածե:
Շոն ընիս, կյուղ ընիս, քրվանեն (տանը) պիծինը չընիս:
Շոնը շանա, էրկուան էլ մին տանա:
Շոնը շնըրթո̈ւնավ կստակե:
Շոն ըս ըլա̈լ, վեր վսկեռավ էլ յոլա քյընիս:
Շոնը վեննը չի տարավ, բայց վեննը տանան կտրից:
Շոնը տեռնան ա կտաղում:
Շոնը տո̈ւզնըթուան կկյուղանա:
Շոնը ո̈ւրան կոտեզը հարամ չի հաշե անել:
Շոնը ո̈ւրան հա̈քյին կտրողան կվախե:
Շոնը քյնում ա, հա̈քին՝ հաց:
Շոնն ու շեմքը՝ հարթն ու սկեսուր:
Շոռ կյալ-քթընալան չի, աստուծ տալան ա:
Շոռ կյըվող կյուղը տո̈ւզնը կենալ չի:

Ճոբերն ածիս կրակեն, մրճեղնը չի եր ընիլ:
Ճտանեեն աշկը փոռր չըն ֆցիլ:
Ճունը եկալ ա, շփոթը ֆշալ:
Ճուշըցեն ուրան էշան թարիփ կանե, փիս տղամարթը՝ կնգանան:
Ճուշվա շոնն էլ ա ասում՝ Ճուշին շեն:
Ճոշի կյուղ, Ճոշի պերթ, սուկին՝ շլոր, թափանը՝ ներթ:

Ձալ շանան չալ թուլա կընի:
Ձալ օխծ տեսածը չալ չաթվան կվախե:
Ձարեն նետան պարին կընի:
Ձարը պարի կընի:
Ձարն էն ա, նու վեր չարու վա շոռ կյամ:
Ձգիդալը նամոթ չի, չհրցնելն ա նամոթ:
Ձըշխադողը աշխադանֆեն կյինը գիդալ չի:
Ձինը ժանգ ստում չի:
Ձլմծեն իրեսը ցոռտ ա ընում:

Պա խղնըմտանֆավ մարթը մարթ ա՞:
Պա ծու չածիս, վեռղ ծռտոտ ընի՞:
Պամիդորեն նամ սուրթան ա նուքար, նամ վերչինը:
Պառավը գիտկան չընում, կլոխը եկած ա ընում:
Պարի խոսֆը լավ ա, պարի կործեն ըստծու աշկն էլ ա յրան:
Պարիկամեն պլոկել չըն:
Պարիկամթունումը արունղ տռ, սերղ տամ'էր:
Պարիկամներեն մաշին նազ ու բազն իվիլ ա:
Պարիկամ ֆթենալը տժեր ա, կուրցնելը՝ նիշտ:
Պարիկըմոթունը իրեֆ խնձոր ա, վեր մինը կես ըրեր, բեյվեշ ա տեռնում, էն մինը մե նետ էս անգյունն ա ննցընում, մե նետ՝ էն անգյունը:

Պարիկըմոթունը ֆշռովի չի:
Պարի կործումը շառ խոսել չըն:
Պարի պտուղը պարի ծառան կընի:
Պարի օրը միշտ ըլմծեն ննետ ա:
Պարտֆը յու վա տեռնում նի մննում, օղտ ա տեռնում, տուս չի կյամ, տռնղ ֆանդում:
Պարտֆը ծանդր ֆար ա, նիշֆան նեյլի տաս, էնֆան էլ նեյլի յըս թըվանում:
Պարտֆը կրակե նալավ ա, չանղ էռում ա:

Պարտք մծանում ա, ծնդրանում, թիվ ընգնում, ընգնում խղճեդ յրա:
Պարտքը տալավ կպկասե:
Պելը հիմանչիլ չի, պելեն տարը կհիմանչի:
Պելը չըրմա կտա, խելունքը՝ ոչվաթ:
Պել խուխեն վերչը խելունք կընի:
Պելին հիչքան գյափ-գյուփ անե, հրաանեքը սերուն հրթնացուն վալը կքցի:
Պել Հուռին մին վելա յա մանալ:
Պեխկը հիչքան սեյրագ ընի, էնքան մեծ-մեծ կընի:
Պենը ըսելումը չի, պենը ընելումն ա:
Պենը պեն ննաչ կտա:
Պեն կա, վեր անել բդխս՝ գիդաս, պեն էլ կա, վեր գիդալ բդխս՝ անխս:
Պեռնած էշը ցեխան տոս կկյա, հöրքած մարթը՝ կարել չի:
Պերանն էրածը մազնեն էլ ա փչում:
Պեցիր սարումը վեր թվանգ տաքից, օխտը տարե ծենը ծöռումը կդմբդմբա:
Պեց վեռավը մազաղ կանին:
Պիծինը մորը ծույնին ա ցավ տամ, մեծը՝ սրտեն:
Պինն էլ նուան կնոնքն ա օգնում:
Պղենձը վեր ընգավ, կոտրից ուչ, սöսը öսմանն ըլöվ:
Պմբկծախուն աչկեն չալ չոնը փիս կթվա:
Պնöվուրն ասում՝ անիմ-տոիմ, անպենը՝ տոիմ-անիմ:
Պրöնաղ տուս եկած խոսքը քունը չի:
Պողը քյթուկան կմնա:
Պողվատը կկոտրե, ամա ծալվիլ չի:
Պորտ-պորտ բրա, օխտը պորտը պտըռե:
Պուվեն բրածն աչխադանք ա, կերածը՝ կորած:
Պտըհողեն ըրեսեն վեր ծծöղում էլ չըս, մոոզ էլ եչում'էր:
Պտուկը վեր տրին, վեր ըն կուխլական:
Պտուղը ծառան հեռե չի ըղնել:
Պրտքատարը կօզի պրտականը էրկան ապրե, պրտականն էլ կօզի պրտքատարը ճելլի մեռնե:
Պöրթը տրöլ ա՝ պեմբակ ա կյզում:

Ջգյրանա, չիգյարին ղադիրը գիդա:
Ջհիլին օժը, մեծեն խրատը՝ միհատեղ սարեր չոռ կտան:

Ռեխը լակ-լակ, կլոխը՝ թակ-թակ, տրեխը՝ ծակ-ծակ։
Ռեխը լեն՝ փոխկը՛ նոթռած։
Ռեխը չվալ չի, վեր կապած պահիս։

Սաղանան հո̈՞ւր ննետ չի գյափ անում։
Սաղանան ո̈ւրան ո̈ւշունց տալ չի տալ։
Սաղանան ո̈ւրան փոնել չի տալ։
Սաղ ջանը պնրհացումն ա։
Սաղ վախտը՝ խռեւոս, կաղ վախտը՝ կռեւոս։
Սառած օխծը ո̈ւրան թխծնողեն կկծե։
Սառնանը կյրում ա, ըրևեն տեմ օնում։
Սավա նոտը ծո̈ւ ածող կընի։
Սավա նոտը յա քաշ կտանե, յա՝ չաղալ։
Սարեն եշում ա, ծյունը տնո̈ւմ։
Սարեն ըսեցեն՝ ծոռ ա, վեզը ծոից։
Սարերն ըրուտալին տեղ՝ ծո̈րերն ըն ըրոտում։
Սարը կարել չըս շկալումը կյեղիս։
Սարսաղ ջահիլը սարսաղ էլ ահիլ կը՛նի։
Սար տսնայիս՝ էծ ա տեռնում, նո̈ւր տսնայիս՝ ծո̈ւկուն։
Սար քյընի՝ կաքավ տես, արտ վարե՝ սալամնը տես։
Սելին պերածը սելը կտանե։
Սեհրագ արտը դագարլու կընի։
Սերը սերունը կոտե։
Սերը սիրեմնավ ըն կապում։
Սերմը վեղումը կենալ չի։
Սերմը ո̈ւրան վեղը քցի։
Սերտդ վեր ծափ չտա, ծերքեն ծափը տերտակ ա, մարթին սերտը բդի ծափ տա։
Սերտը աշկան լո̈վ ա տեսնում։
Սերտը պեց մարթը զրուց ընելավ ա մեռնում։
Սերտ օնիս՝ բախտ չօնիս։
Սեր օնիս՝ խառնե վեղեն։
Սխտոր կեր՝ հուշդ տեղը կենա։
Սկացած խոսքեն սոտը ընիլ չի, շղվըցրածը կընի։
Սկեսուրը ընգունենն մինը քառ կպահե։
Սողան չըմ կերալ, էլհա սերտս էրում ա։
Սոտը լավ ա երմիշ ընո̈ւմ, հինչ դորթը։
Սոտը խուսելավ ապրում ա, դո̈ւզը լլկվելավ՝ մեռնում։

Սոտ ըսողեն շհադը միշտ քշտեն կընի:
Սոտն ու կեղծավորութինը վեր թաքավեր տեռեն, տժեր վեր կըղնին:
Սորփը պերեք պաշիմ:
Սրընուցեն պղոսիգն էլ ա պռոկ ըլա̈լ:
Սրտան տուս եկած խոսքն ա սըրտ նի մննում:
Սրտավ քարեն էլ քյընիս, քարն էլ կկնանչի:
Սրտեղ նստիմ, մրոքդ քանդիմ:
Սուղանեն էրկու անում չընիլ:
Սուտեն կրկատան չընիլ:
Սուտեն հազար վէճեր կընի, պայց կարել չի սարը եր ընի:
Սուտեն վենները կարճ կընի:
Սուտեն վենները էրկան կարել չի վազ տա:
Սո̈ւրթան վէր պեց թուղեցեր, վերշն էլ ըս պեց թուղլական:
Սու՛րն է, նստել չըս՝ տուզը եր կենալ:
Սևեն սև սաև, սիպտակեն՝ սիպտակ:
Սև էծը սև օր կծնե:
Սևն ու սիպտակը հմամանը եռը մա̈նիլում կտեռնա:
Սոր բաղումն ընք, էքուց՝ վեղումը:
Սոր վեղ չօնիս, էքուց՝ հաց չօնիս:

Վազ տվող էշին թխել չըն:
Վախե էն շանան, վեր թաքուն ա կծում:
Վառին սաղ ընի՝ էշը կյուլ օտե՞:
Վաստակ եզնը ըշկերան կըրվա:
Վարդ վեր դո̈ւզ չընի, ծերքդ պեն չի փռնել:
Վարթը թաղեն յրա չի կենալ, խոսքը՝ մարթին սրտումը:
Վարթը տակռան ա կյրմռում:
Վարթ քղեիս՝ ծերքդ փոշը կծակե:
Վարըս՝ վարեդ ավազ, խարակս էլ իվիլ:
Վեթեսը տրին գյիբին յրա, թո̈վ ընգավ, ընգավ տափը:
Վեխնարը կյառնը ննանչում ա:
Վեխնարը մինչև հարուրը տեռնալը՝ մորթեն հազարը կտեռնա:
Վեխնարն օտում ըն, տեռնը ննետ կոև անում:
Վելեյն ո̈ւրան վերսը սրեռումն ա փռնում:
Վեղան քախծր պեն չկա:
Վեղավր ո̈ւրթումնը կեր:
Վեղդ կյուղացեն, լո̈ւզոտ կյուղացեն:

Վեղը կյանքն ա, վեղը մարթն ա:
Վեղը մարն ա, արևը՝ հարը, քրտնոնքն ա տարը:
Վեղը մնին հազար կտա (վեղը մինը հզեր կանե):
Վեղն ասից՝ ինձ կուրցրեր, քեզ կուրցրեր:
Վեղն ասից. «Համ պահում ըմ, համ թաղում, ես էլ ըստի մար ըմ»:
Վեղն ասում ա՝ տու ինձ պահե, ես՝ քեզ:
Վենն ըլած տվարեն մին կուծի հո–հան էլ բոլ ա:
Վեչ աղ ընիս, վեր քեզ լöւզ տան, վեչ աղու ընիս, վեր քզանա փախճին:
Վեչ աղումն ա, վեչ մաղումը:
Վեչ արտը վարողն ա տարը, վեչ էլ կալսողը, օտողն ա տարը:
Վեչ բզարեն տերեն ա հավան, վեչ տվերեն:
Վեչ ըլüծավը ուրխաց, վեչ չըլüծավը տխրվե:
Վեչ ըմռնըվա ցուրտեն հվատա, վեչ ծմռնըվա բրեվեն:
Վեչ յավավն ա ուրխընալի, վեչ փիսավը՝ տխրվելի:
Վեչ ծöւ օնե, վեչ՝ եղ, քթըվուրու վա չոռ կյամ:
Վեչ կհüլ ախնից տեսե, վեչ քյոհլան հարթնը:
Վեչ հակումն ա, վեչ հուկումը:
Վեչ հիմարեն կործ տռ, վեչ էլ ննետը կործ ըրա:
Վեչ մեծ կործ կընի, վեչ՝ պիծի, մեծը նխչընգյարն ա:
Վեչ մինը öւրան թանեն թթռ չասել:
Վեչ ճöւր, վեչ արև, վեղեն ուղուրմդ խառնե:
Վեչ ուզողեն ետ տռ տռնան, վեչ աչուղը՝ չնըմաչան:
Վեչ öւրöւշու հավու ծռռ եշի, վեչ՝ ծավու:
Վեչ քշերավ եր կենողն ա տռժում, վեչ նելլի փսակվողը:
Վեռան կտրում ըն՝ ոխեն տեմ օնում:
Վեսկե կացենն էլ ա ծմակ քյընում:
Վեսկեն վեսկե խոսքեն հանել չի:
Վեսկեն փեյնումն էլ ընի, էլհա վեսկե յա:
Վեսկուն öւրան անումը բոլ չի, էն էլ բդի öւրան ծանդր պահի:
Վեր ամեն մարթ öւրան ըրածն օտե, ըշխարքես կեսը կկտռրվին:
Վեր ասողը սուս էլ անե, դöւզ խոսքը սուս չընճնական:
Վեր գիդի թա ընդեղ վեր ի ընգլական, մին գյարթա կքցի:
Վեր դանան մորը առաչն ըղնե, կյուլ կտանե:
Վեր էրկու հոգի խոսում ըն, կոտրած քթöլու նման ղաթը չըղնիս:
Վեր ընգածեն կոխ չըն տալ, ծերքան կփռնին՝ եր կցընին:

Վեր թայդի կործ ընի, էլնա թայդի չըղնիս, բայց դե՝ կիրեկի էլ չանիս:
Վեր կլխեդ տեղ չկա, տակեդ էլ նստել չըմ:
Վերթի, քա հոր պեռնը եր կալ, վեր հոքուդ պեռնը ծանդր չընի:
Վերթին վեր հափռումը փլավ անե, մորն ուտըցնե, էլնա կարել չի ըա̈մագին տական տո̈ւս կյա:
Վերին անա պաշիմ, խուլեր կփսնե ջանեն:
Վեր կյենզատն անին, ըստուծեվուր կանին:
Վեր հավը ղազու նման քյընի, վեններըը կկուտրատե:
Վեր հըրվանեդ էրկու կավ ընի, քեզ էլ մին աման չուրաթան կը-նի:
Վեր ղզղանումը շորվա չկա, հո՞ր ըս շիրեփը ինձ տամ:
Վեր ղորթը ծառ ընի, ես հզերը կտնգիմ:
Վեր մարթ ո̈ւրան եշի վուչ, աստուծ էլ չի եշիլ:
Վեր մին պենան շատ կերեր, համը-լա̈զաթը կկորչի:
Վեր մին տեղ կրակ չընի, ծոխ չի պցրանալ:
Վեր մղրճանչերը լոխ մեղր տան, աշխարքս մեղրավ կլցնե:
Վեր մուկունը ընի վուչ, խեչանը կատու չի պանել:
Վեր յշիլավ սվրելան ընի, մեր շները մնե ղասաբ ին տեռալ:
Վերսին գյրըվումը յրա կանին:
Վեր տանան կեռ տվող չընի, տո̈ւսումը վեր չըն ըղնել:
Վեր տան վեր բա̈հմազ ընի, էն տանը մրչեմնը կընի:
Վեր տափը պնդանում ա, եզնը եզնան նղանում ա:
Վեր տրաքուցը կտրում ա, ամեն լո̈ւզու տրաքուց ա տեռնում:
Վեր տված չընիս, տալ չըն:
Վեր ըրո̈ւշին ծաղկած ծառավն ուրխացեր, քունավն էլ բախտա-վեր կընիս:
Վեր ըրո̈ւշին սիրիս, քեզ էլ կսիրին:
Վեր քու մղղարդ գիդաս, ուրիշինն էլ ըս գիդըլական:
Վեր օղտեն չուքըցընիս ուշ, կարել չըս պեռնիս:
Վերց էշին քոռակ չընիլ:
Վըրսկանեն լո̈ւզուն կցավե, ծո̈ւկհանեն՝ աչի կոռնը:
Վըդին շասած դո̈ւզ խոսքը անվա̈դա վըցակու կանչ ա:
Վխըլըկոտը տասը հետ ա մեռնում, անվախը՝ մե հետ:
Վխճարեն ըսեցեն. «Մեսդ խե՞ մարթին ըս տամ»: Ասից.
«Կաքնը ամեն օր տվողը մին օր էլ մեսը կտա»:
Վխճարեն սո̈ւրուն ետ տեռավ, կաղլեցն առաշ ընգավ:
Վխճարեն ամական ստում չի, թա՝ վեռան մոտե յա:

Վխողեն տղա չընում:
Վնասեն կեսան ետ տեռնալը օքութ ա:
Վրցակեն մին կյեվաթ կյինի ավեն, քեցավ թա ըղվեսին խեղդի:

Տալավ (պժընելավ) ծովն էլ կվրչանա:
Տակե քարը վեր կլոխն ա ըլալ, մար ու քուր չկա:
Տակը լիգյը, կլոխը լիգյը:
Տանան տուս եկ, չենան տուս մ'էր կյալ:
Տանել ճո̈ւրը, ծարավ ետ պիրիլ:
Տանն առո̈ւծ ա, տո̈ւսումը՝ կատու:
Տանը զա̈ռը կնեգն ա, սեղաները՝ կյինին:
Տանը ղոնաղը չըս ճնանչում, արտումը՝ ճո̈րեն:
Տանը պենը խուխեն անա կգիղան:
Տանը վերցակ ա, տո̈ւսումը՝ հավ:
Տանձը՝ ինձ, խնձորը՝ ինձ, սլկըվուլու էլ ա շտա̈հաս տամ:
Տանձը վեր հսավ, ծառեն կենալ չի:
Տանձին հսածը չաղալը կօտե:
Տանձ, տանձ, ընգեր պերանս, էն էլ կոթը կլխըեր:
Տանչանքը, չրչարմանքը հացեն ճհետ ա:
Տան-տռա̈ն՝ աչի կուռնան:
Տասը հետե խաչան պաշալ ըմ՝ վեչ մին պեն, մե հետ քշտեն
 տռեցե՝ ինձ խայտառակ ըրավ:
Տարեն վեր թռույին ընի, արաղը թերհատ խմե:
Տարը մեռալը ճնանչից:
Տարը տրածեն ա փեշման, կյուլը՝ մնըցածեն:
Տափեն թքում ըս՝ երգինքն ա ընո̈ւմ:
Տափեն չտըրմա̈նող օխծը ճելլի յա կծում:
Տեղդ վեր նղանա, էլհա քեզ դո̈ւզ խոսքը կպահե:
Տեղեն ասած խոսքը վեսկու կյին օնե:
Տեղս փուխեցե, բախտս հիշտեղ փոխիմ:
Տենակն ո̈ւրան կոթը կարել չի տաշի:
Տեպեգ վեննը փոշ կընի:
Տեսալ չի պատան, տեսնում ա ճկատան:
Տերմանը չի քունը, տրմնանուցն էլ չի՞ քունը:
Տերտակ ըրբան կնռնռա:
Տերտակ խոսքը քամեն կտանե:
Տերտակ չվալը վեննը չի կենալ:
Տերտակ քթո̈լը պերան չըն տանել:

Տ'եր ըս թքում՝ օնք ա, տվեր ըս թքում՝ մրոք ա:
Տժեր գործա առաչ՝ զինքդ հվաքե:
Տկլորը պլուկվելա վախել չի:
Տկլորը սելա վախել չի:
Տղամարթը խոսքեն տարը կընի:
Տղամարթը կլոխն ա, կնեգը՝ փեշկը: Տանը խնձորը փեշկավն ըն սրփո̈ւմ:
Տղամարթը վեր խմիչքում տեմ չկենա, վեչ մին պենում տեմ չի կենալ:
Տղամարթը ցավն էլ ա տղըմարթվաշի ընթունում, մահն էլ:
Տղան էն ա՝ համ խմե, համ պահե (տեմ կենա):
Տղան տան սթո̈ւնն ա, ախճիգը՝ նխշընգյարը:
Տղըմարթին աշկը կործա վախել չի:
Տղըմարթին ապրանքը աշկեն բռաշին բդի:
Տղըմրթոթունը ջանումը չընո̈ւմ, ջգյարումն ա ընո̈ւմ:
Տղըմրթոթունը օժեն հախտում ա:
Տնըտարեն տոնան ըն ճնանչում:
Տոնդ շինի, բրուշինը քանդիս ուչ:
Տոնդ պիծի պահե, սերտդ՝ հո̈րզակ:
Տոնդ վեր տվեր, կնեգդ էլ կտաս:
Տոնը մաշան կմծանա:
Տոնը պարան ա կյամ, ժաժքը վեղեն մաշին ա ընո̈ւմ:
Տոնը սրփողը էվուլն ա:
Տոնը քարավ ըն շինում, տոնը քարավ ըն քարավ տամ:
Տոնն արքայություն ա:
Տոն շինինք, վեր շեն կենանք:
Տոռնը չի թակիս, քու տոռնդ էլ կթակին:
Տո՝ վախել մ'էր, օզի՝ հմանչիլ մ'էր:
Տո̈ւզնը կյուլին ըսեցեն՝ մշանք կերալ ա, կարում չի թե լենջավը եր հնցնե:
Տո̈ւզնը մարթին պերանը բղովել չի:
Տո̈ւզն ըս՝ մարթու մաշ քյընի, տկլոր ըս՝ տան մաշ:
Տո̈ւզնը տոնըտո̈ռնը շոռ եկու հմանչից ուշ, կործ ընելան հման-չից:
Տո̈ւզնոթունը կյողութունեն մարն ա:
**Տու ինձ սիրի կորկու մշանք, ես քեզ սիրիմ ցորնու մշանք:**
Տու շրեփե, ես ըրեփիմ:
Տո̈ւսինը ծյունն ա, մաշկուսինը՝ արաղը:

Տու վեր ժղըվուրթեն սրտավն ընիս, ժղովուրթն էլ քու սրտավդ ա ըննա̈կան:
Տու տըզզ ըրա, ես մեղր անիմ:
Տու տիր, տու եր կալ:
Տու ինձ թխեցեր ուշ, ես էլ վեր շընգե:

Ցամաք կետան ծո̈ւկուն չըս փռնել:
Ցավեն ծնղրոթունը ցվատարը կգիդա:
Ցավը վեր աստուծ ա ղարկում, դա̈րդ ընելի տեղ չօնիս:
Ցեխան թա̈մուզ տուս կյվողն ա թաքավերը:
Ցեխումը կաց, թա̈մուզ կաց:
Ցորենը նհաշ ա տամ, կյարին ծախում:
Ցորեն հացը պոզեր կանե, հարե:
Ցորեն հաց չօնիս, ցորեն լո̈ւզու էլ չօնի՞ս:

Ուզիլավ կարել չըս տոն պահիս:
Ուզողեն աշկը տալավ կհանին:
Ուզողեն աշկը տվողեն ջուբեն կընի:
Ուզուղեն մին իրեսն ա սև, չտըվողեն՝ էրկու:
Ումեղը խոխա յա, յա կմըծանա, յա՝ չէ:
Ուտելին անումը տամ ըս՝ ըսկանում ա, ընելին անումը տամ ըս՝ քռանում ա:
Ուրան թիքին յրա չի հաշում:
Ուրան հետե քոն ա ընում, ո̈ւրուշու հետե արազ տեսնում:
Ուրգյոնեն կերածը կորած ա:
Ուրիշին այիրավը ծծաղել չըն:
Ուրիշին կվեն յշողեն հացը ցամաք կմնա:
Ուրիշին հացը ուրիշին փորումը կենալ չի:
Ուրիշին պատառը պկում կմնա:
Ուրիշին քռանոնքը մարսել չի:
Ուրուշու ծի եր ընողը նեյլի վեր կկյա:
Ուրուշու հետե նրաք ա տեռնում, ո̈ւրաե հետե նըրքկալի էլ չի տեռնում:
Ուրուշու հետե դոնգի, ո̈ւրան հետե խելունք:
Ուրուշու հետե վեր կորողը ինքը կղնե մաշը:
Ուրուշու շներավ վերսի չըն քյընել:
Ուրուշու սոոլե քու հացդ օտիս ուշ:
Ուրուշու փուլավ ինք կալած շալվարը կարն կընի:
Ուրուշու քռանոնքը ամեն մարթ կարել չի օտե:

Ուրուգյունը ալաթ ըս անում, ուռթանան կյութան էլ չի տեռ-նում:

Փալանը էշին հետե ծանդրուցք չի:
Փախչիլ-պրծնելն էլ ա տղըմրթոթուն:
Փայ ընողեն փայ չըղնել:
Փառաշ կյառնանը հետան կյուղ չի հսնել:
Փափաղը տղըմարթին պատեվն ա:
Փափաղչուն աշկը փափաղ կարել տալավ կհւանին:
Փեյնը նղե՝ տո, փեյնը նղե՝ եր կալ:
Փեշակը մարթին հետե մին կուտուր հաց ա՝ տրա̈ծ կուռնըտա-կեն:
Փթած փադը մեխ չի պահել:
Փիղն ասից. օխտը տարանը մին ըմ ծնում, ամա փիղ ըմ ծնում:
Փիս ախպերը հարո̈ւր հնգերա լա̈վ ա:
Փիսանը ետը լավն ա:
Փիս խոսքը հացա ետ կասին:
Փիս մարթը պարիկենթանեն էլ ա փիս:
Փիս չի, գիդում ըս թա լավ ա:
Փիս տարեն նոխտ կընի:
Փիս տարուն ումբուրը կարն կընի:
Փլավը՝ ուտողեն, խոսքը՝ լսողեն:
Փլավ-փլավ, կլխեն էլ մին հավ,
մինչև օտիս ուշ, ասիս ուշ՝ լավ:
Փոխը օխտը տոն ա պահալ:
Փոխ կալած հացեն բրաքա̈ չընիլ:
Փողեն ըռաշին համ սարը կլոխ կտա, համ քարը,
միհան սար սերտը չի կլոխ տալ:
Փողը համբարք ա սիրում:
Փողը՝ փուղատեռնը:
Փոսը վեր կտրալ ըս, պա դե տոն շինի, խե՞ օզում ըս օրիշը ըն-գե մաշը:
Փորդ պատառ տո̈ւզնը բդի, աշկդ՝ բդի կոշտ:
Փորեն խափիլ չըն:
Փորեն տակավը քամե հնցնողեն հետան ախ ու վիշ չըն անել:
Փորը հացն ա քուշտըցնում:
Փորցած թանը լավ ա, հինչ անփորցիլ մածունը:
Փորցված սաղանան լավ ա, հինչ անփորց հրիշտակը:

Փոխ փչողեն խոսք չի հսնում:
Փակվելը եղ-մեղր չի, հոփ տաս՝ կոլ տաս:
Փեսան հանորը էշը կընի:
Փուլան մըթոթուն չտեսե:
Փող ըշխադելը հիշտ ա, պահելը՝ տժեր:
Փուլը փուլեն յրա կկյա:

Քաթան հարց չըն տալ:
Քած կյուլան պըծումնը չընիլ:
Քախծր խոսքը յըղմեղր ա:
Քախծր պենը ամեն օր քախծր չընիլ:
Քանե տարվա շոն ըս, խե՞ մնենգ ըս հաչում:
Քաշ ա թոշում, ասում ըն՝ քաշ ա, պեցուր ա թոշում, ասում ըն՝ քաշ ա:
Քաշեն ըսեցեն՝ կոողցդ խե՞ թոքա չըս անում. ասից՝ վեր ինձ մնար, մհե թոքա յի ըրալ, թարիփ ընողնե շատ կան:
Քաշեն հուտն էլ ուրան հետե յա քախծր:
Քաշ խոսե, վեր համեղ ընի:
Քաշալը ուրան փիփաղեն հավան կկենա:
Քառասուն ավազակ մին տկլորու կրեցեն ուշ թլանին:
Քառը սկանալ չի, կնմընցնե:
Քավթառ ծին էլ ա կյարի ստում:
Քավթառ շանը քուշի-քուշի չըն անել:
Քարեն միտը վեր կոշտ ընի, մինն էլ կակող կընի:
Քարեն պաշի՝ քարեն սեռտն էլ կպրճկե:
Քարեն պիծինը չի մծանում:
Քարը պատեն ա ընում՝ պարտքը՝ սրտեն:
Քարը վեղան ա տուս կյամ:
Քարը տեղը ծանըր կկենա:
Քթըլավ պըուռում ա, կյվաքավ տամ:
Քթըլքթըլ թուփ ընք անում, շիրըփշիրեփ տուս տամ:
Քմալի տարեն փափաղդ պենդ պահե:
Քմակեն խոսքը քամակ աժի:
Քյամբախտը նա չի, վեր քյըմըրխտոթուն շատ ա տեսալ, քյամբախտը նա յա, վեր քյըմըրխտոթունը կարում չի տանե:
Քյանդիրը ծմակավն ա օնում, մին նպատ կտրում:
Քյանդիրը կյեփավն ա անց կննական:
Քյանդիրը պերակ տեղան ա կտրում:

Քյասիբը այլեր ըրավ, ամբարն ըյլերում չըլավ:
Քյասիբը վեր գիդա վուչ թա ճրուստրննական ա, սերտը կնաքե:
Քյասիբը վեր հավ կերավ՝ յա քյասիբն ա հիվանդ, յա՝ հավը:
Քամեն ասից՝ հո՞ւ վա գիդում, թա հինչեր ըմ անում:
Քյասիբը öւրան խելքան կընի քյասիբ:
Քյասիբը փող քթավ, գիդաց ուչ թա հինչ անե (հիշտեղ տնի):
Քյնդիրին մին ճոնդան փոնե՝ մնացածը կյլական ա:
Քյըրնի հանդը՝ համ ըրա, համ կեր, համ սվերե:
Քյոմագ ըրա, վեր քեզ քյոմագ անին, պահե, վեր քեզ պահին:
Քյսիբին ախնիգը օզիլը ճիշտ ա, պահելը տժեր:
Քյսիբին աշկը կոշտ կընի:
Քյսիբին սերտը պեց կընի:
Քյսիբին սիպտակ կեռեք չբդիս նհաշ տալ:
Քյսըբոթունը վեր վեր ա կոխում, ամեն ընգյունավ ա վեր կոխում:
Քյուտ ա, գյուտա:
Քյուտեն նստել, այլեր մաղել:
Քյուռումը ծöկուն, Վարին ցամաք հաց օտե՞:
Քյուռը մöրդ ա ըլալ, մհենգ նամöրդ ա տեռալ:
Քյուռը մին վայ բալա յա ծեն տամ, մին՝ վայ մամա:
Քյուռեն դöրդը Քյուռան շատ ա (ուրանան վարար ա):
Քյուռը մեր կյուղացած կավն ա:
Քյուռը քյուռթöւն չանում:
Քշրքեն մին անգյունը մե հետ ծնղրանում ա, մե հետ թթվանում:
Քոլա-քոլա ննգերս կյա:
Քոն իլ—եր կաց, բախտ օզի:
Քռակը վեր մծանա՝ էլհա էշ ա տռնըլական:
Քոռը փռնածը պեց չի թողել:
Քո ծխողեն ինք օնողն էլ կընի քոռ:
Քոռն հինչ կօզի՝ էրկու աչկ, էն էլ՝ խլաշ-պլաշ:
Քոսոտ էծը ակնան կխմե:
Քշեղակն ասից. — Արթար ակնեն քար քցիլը ինձ խբրքզան շինից:
Քշըղակեն քարվանբաշի տնիս՝ լուխնու կկտկոտե:
Քսի-փիսին տոն կքանդի:
Քսօրա ետ մարթ ա տեռալ:
Քվթառալ ա, հալա զոռայիս:

Քրիստոսա խաչը հային ա պաժին ընգալ:
Քրիստոսը վեր հայ չընի, չըշարմունքը հայ ա (մեխկը հայ ա):
Քու եղդ քեզ ընի, իմ թանես նի չի կյաս (մոռաս ուչ):
Քոռանա էն աշկը, վեր առաչ öւրան չի տեսնա:
Քու տանդ թանը ուրիշին մեղրան լա̈վ ա:
Քուրն ասում ա՝ ախպեր օնիմ, ախպերն ասում ա՝ քուր չօնիմ:
Քյուխեն շտա̈հավլը հաց օտող:

Օրան հըղըցեն յրա յըն վեր թողում, վեր շոնը սայաղ ընի:
Օրան տնգում ըն, տոնը քանդում:
Օզած կործը քրա̈ծ կործ ա:
Օզիլը համոթ չի, չտալն ա համոթ:
Օժան վախում'էր, նմուսան վախե:
Օժը ուտելին մաչին ա:
Օլին եր կացավ, մին կոնդ կոխից:
Օլին յա տանը, յա տռանը:
Օխծը կծում ա՝ օխծանչուն կոխկն ըն քյընում:
Օխծը մաշկը կփոխե՝ պնոթունը փոխել չի:
Օխծին թխել չըն, հղեցը վեր քցիլ:
Օխտը ծöրեն կլոխը մին սեռ ա օնում:
Օխտը հուքյի, մին պուքյի:
Օխտը տարանը մին կնգանը անգուն կօնին՝ հակառակն անին:
Օխտը տարանը մին շան տարե կանե:
Օղտան էլ չըմ վխըլական, գյոզոական էլ:
Օղտեն ընգունումը դնգլբազ թկեցեն, թա՝ էս հինչ դնգդնգոց ա:
Օղտեն հրանքա ծեն տվեն, ասից. «Վեչ պար կյալի վեններ օ-
նիմ, վեչ շվշվող պռուշնե, յա Բաքու նոթու վըն դրկըլական,
յա Նախնըրվան՝ աղու»:
Օղտերը պեց ըն թողում, լվենը փռնում:
Օղտը թողած գöզոակեն հետան ըն չոռ կյամ:
Օղտը խմորը կարում չար ծամե, չուրացած հաց տրին պրա̈նու-
մը:
Օղտը հիշքան ստակած ընի, էլհա կաշին մին ըշապեռն ա:
Օղտը մոտե բրածում ա, հեռե եշում:
Օղտը շլա̈կում ա կյըղըկյող չոռ կյամ (չքըշոք):
Օղտը հայու նման ա՝ համ մեծ ա, համ պարի:
Օտելը լավ ա, քանց չօտելը:
Օրեն էքսին ումեդ չկա:

Օրը իրեք հետ սով կըրի:
Օրը պահանջավ ա, մունք՝ նահանջավ:
Օրիպար՝ հաց, կիրկամոտ՝ լվաց:

## ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ածած-քցած—1. անթերի, 2. պատրաստ:
Ակաս-մակաս, տու իր պակաս:
Ակեն-սակեն-սրակեն—ամեն ինչ տեղը տեղին արած, պատրաստ:
Անան էլ ա հնցած, մահան էլ:
Աղա՞ս ըս, թա դո̈րղաս:
Աղուզ կերած դանա:
Աղ ու հացը ծույնանը յրան ա ընձում—բարեկամությունը ստեղծվում է նեղ օրում:
Աղուն՝ աղի կասիմ, նալուն՝ նալի:
Աղու տանձ կծած—անտրամադիր, մռայլ:
Աղքադ զետեզ:
Ամեն աշկու քախծր թվալ:
Ամեն հավա պար կյվող:
Ամեն հինչ աշկեն առաշն օնել—ոչնչից չվախենալ:
Ամեն օր ո̈ւրուր տսնըլական չընք—պետք չէ վատություն անել:
Այամը ժամանակ ա տեռուլ:
Այլերը մաղել, մաղը կախ տալ:
Այ քախծր տախտեղ (Քյաթուկեցին):
Այուն վեռեն դնգդնգոցն ար պակաս:
Անգունը ծակ—ըմբռնող, հասկացող:
Անգունը կանչի...
Անգունը ծենու:
Անգունը փթելա:
Անգունս ի եր...
Անդար ընդերու:
Անեծք չար սաղանեն:
Անըսելի պեն:
Անի յա, թա չանի—չե՞ն է, թե՝ ավերակ:
Անիրես նանչ:
Անկեզ պուրթ—կոպիտ, անտաշ:

Աշկերդ կփուշանա (կմաշի)—ասում են օտար աղջկան նայողին:
Աշկերդ քե կենա...
Աշկերը արուն կալած:
Աշկերը ճեպուտ կոխած:
Աշկերը մունուկյզի վեր կոխած:
Աշկը ծակ:
Աշկը կոշտ, սերտը կոշտ:
Աշկը ճղըցու:
Աշկ կյուղանալ—փախուստ տալ:
Աշկը ճուր կարել—շատ սպասել:
Աշկը շոր (շուտ)—գող, անբարոյական:
Աշկը չորք բրած:
Աշկը ցամաք (մեռնել):
Աշկը յոր չօնել:
Աշկու լուս:
Աշկումս խուլ ա փսալ:
Աշկու փոշ:
Աշկումը աղու մզիլ:
Աշկումը մազ փսնել:
Ապելա կյառնը—խեղճ, մեղք ու կրակ:
Աջալը ծրավալ ա:
Աջի թթո օտողը քյընիլ բդի Ջջիմօջախ:
Առանց շոլ սար ընք:
Առեն պեն չկա—անուժ, անկարող:
Ասածս՝ ասած ա:
Ասածս ընգուներ օղ բրա:
Ասելը օրիշ ա, անելը օրիշ:
Ասեղ կոյ տված—տկար, անուժ:
Ասեղ քցիլի տեղ չկա:
Ասլը ճո՞ (ո՞ր ազգից է):
Ասող-խոսող—մարդամոտ:
Ասողը կանե էլ:
Ասպանետը կցնանետ տեռավ—ասում են կոպիտ վարվողին՝
քնքշության փոխարեն, գործը անարվեստ կատարողին:
Աստված, մունք ըստեղ ասում ընք, տու տեղ սկանաս:
Աստուծ ասից. — Հու վեր հացեն ղադիրը գիդում ա,
նա լավ ըմ եշում:
Աստուծ էրկու ծերքավ ա տամ:

Աստուծ ինձ տեսնա, քեզ տանե:
Աստուծը կլխան փախած:
Աստուծ հեռե տանե...
Աստուծ պարին կդարե:
Աստուծ սետ (տեղյակ) չի:
Աստուծ, տու տվալ ըս, տու էլ պահե:
Աստուծ քշերը կյամ ա, կնանուցը ընգունումը քսի-փսի անում:
Ավազանումը պպզած—խելոք, կարգապահ:
Արազ ա՞, թա ըոըկյոնի...
Արազը խբրատու վա ընո̈ւմ:
Արազս տեռալ ա ծտու կոտրած թև:
Արակը պերակ կյալ—ապրուստի մշտական աղբյուր ունենալ:
Արանու արաղ—գովական օղի:
Արժան անել, արժան համարել:
Արտը խասիլ ըղնել—առատ ձյունից քրքրվել:
Արև էրած, թոռ թակած—փորձություններով անցած:
Արևը ծեք ա տամ:
Արևը կզըմզո̈ վա անում:
Արունը պրծած Քյուռ-Քյուռ քյընիյիս:
Արո̈ւնը պրտող:
Ափաթ պեն ա:

Բո̈ղանը պերակ:
Բալղուրը դեռի:
Բախտեն աշկը փսոր քցիլ:
Բախտը նո̈ւրն ընգած:
Բախտը Քյուռն ընգած:
Բո̈նգի կերած:
Բանդ ու բարա գիդող:
Բո̈նդ ու բարան կապած:
Բաշիր չանում, թա շալվարը մար տա:
Բաստրմա կերած կատու:
Բղի ո̈ւրան թոխրող:
Բեղա վեր ընգած պրինձ:
Բլո̈կը պերակ:
Բոյիդ ըմ եշում՝ ուրխանում, խելքեդ ըմ եշում՝ պլանում:
Բողազ-հինչու տեսնաս տղտողաս:
Բուղազան խեղն:

Գյոլումը ղարղու վեր տվող—խարդախ, չարագործ:
Գյոռու թոխուր:
Գյրավան ա խոսում — որոշիչը դիպվածն է:
Գյրվանա խոսող—խոսքի առիթը բաց չթողնող:
Գյուդում չըմ նի՞ք, գիդում չըմ նո՞ւ, ...էն նի՞նչն ա, նի՞նչը...—
Հանելուկների սկիզբ:
Գգյուդում ըս թա մռամռո՞չ ա:
Գյուզամեդ ռեխը կապե:
Գյուլու նման պանել:
Գոնանամ սատռծ, գոնանամ քզանա (գրք—գոնանամ զքեն: Ազ.):
Գործը գործեն օտել:

Դա՛րդը նիտը քցած չոռ ա կյամ:
Դքանան տո՛ւս եկած:
Դքանեն յրա ետ տեռնալ:
Դեղինա խոսող—անհասցե, ոչ կոնկրետ խոսող:
Դե մաղը տար տռ տեռնը:
Դերին հալավը օրթնիլ—տերտերին հայհոյել:
Դժոխքու քեթուկ:
Դիք-դաքան—անշարժունակ, հանդուգն:
Դլվումը մարթ գյոդլը կկենա:
Դնըկալած լոքի—նիղի կին:

Ծխտռուտ յալլեխ:
Եղը կրակեն ըլլա՛յիս:
Եղը մազնան ա:
Եղը մոխերն ա տեռալ, պրծալ:
Եղ-մեղր տեռնալ:
Եղ վեր ածիս՝ կնըվաքվե—մաքուր (բնակարանի մասին):
Եղ տեռնալ, ջանավը ննցընել:
Եշած յարեն յարն անուշ:
Եռնայինան ըմ ծզալ...
Ես դաքանս նյոռողը չըմ:
Ես իմ մոր մննա՛քն էլ չըմ եր կալալ:
Ես իմ փայս կնոխե ըմ սատլ:
Ես նինչու տար ըմ:
Ես նոր, էս նոր...
Ես վեչ մաչումն ըմ, վեչ տո՛ւսումը:

Ես քեզ մատաղ, ե՛ս:
Եվլախա սկսե:
Եվլախա, վեր եկ...
Եռե օրվա հեռե:
Երգդ ասե — առանց երկարացնելու ասելիքդ ասա:
Երգդ երգված ա:
Երգինքը իմանում չի, թա ետ մաշի:
Երգինքը ծծերը վեր ա թողալ:
Երգինքը կապել (որ անձրև չգա):
Երգինքը կարում չի, թա քամակը հիվաքե:
Երգինքը կլխեն մթնել:
Երգինքը կրակ ա վեր ածում:
Երգինքը հանց ա լպզած դանա:
Երգինք պցրցնել:
Երանի էն մարթին, վեր պարի խոսք կասե, պարի խոսք կկյրի:
Երե քաղեն խնձորան:
Երինճան անում էր:
Երիշը ծանդր:
Երս-յուրդս, տռնս-տեղս քե մատաղ:

Ձռնեն տեղը չի:
Ձոր զարթու հռռան:
Ձռացալ ա կոռալ, ծմկնեն ընգալ:

Էդ կրակավը շատ ըմ էրված:
Էդ հշտըրդո՞ւ ծմերուկ ա, համը անտես:
Էդ քյոհնա երք ա:
Էլհա իրան զուռնան ա փչում:
Էծամար էծ — ծծկեր երեխային կաթից շուռ կտրող մայր:
Էն ա աշկս յրան, թա մինը ծերքաս գնանե, եր կցընե:
Էն ա կոքըվենած:
Էն ա հալա հացեն տատա ըսեիա:
Էն ա տուրուն քնդիյիս — մեռած, հողի տակ:
Էն ա քաշին սյոզին:
Էն ըմ թուրքեն կորըեն:
Էն ընք չանը կտըրեն:
Էնքան ծիծաղալ ըմ, ծեծաղն ինձանով մազաղ ա ըրալ:
Էնքան ծիծաղալ ըմ, ճղպորեն մուշտարեքը ինձարա ըն տեռալ:
Էնքան հղըցեն եշալ ըմ, սերտս տեռալ ա ծտըհինչեխ:

էշակյինան խոսել—խոսել ըստ էության:
էշա վեր ընգած—անպատիվ:
էշին զետկեն:
էշն ու կաշին քե մատաղ, փալանը եր կալ, տոն եկ:
էշ իմաստուն:
էշին չու ասել:
էշին տունդվ{ին տրնիլ—խայտառակել:
էշը իրան ըշըթունավը էդ պենն անել չի:
էշը կապել, ետ անել—ոչինչ չանել, սակայն աշխատող ձևանալ:
էշը կորած—անտրամադիր, շփոթ:
էշը մատաղ անելը հիշտ ա:
էշը վեռան մորթող:
էշ խոզող—գծուծ, ժլատ:
էշ կերած, էշ մծացած:
էշ կռող—կոպիտ, անտաշ, անկիրթ:
էշու երգիր ա:
էշու հիրշտրակ—տգեղ, այլանդակ:
էշու հրսանեք:
էշու մես կոտիմ, դսաքեն մննա̈թը յոր չըմ օնել:
էս ա յո̈ւզվես պտկեն:
էս ընկմե տղան (էս դոլի տղան)—մատնացույց է անում իր եսը:
էս ըրևեն ձյուն չի ամանալ:
էս լհա զանգ, կախ տվողը հո՞ւ վա:
էս հինչ չարք ա, էս հի՞նչ հնարք ա:
էս սեղանաս հեռե...
էսքան քոշը շատ ջվար չի ընիլ—հոգսաշատ:
էս օղտը լուխնին տռանն էլ չուքլական ա:
էվուլ կծած էշ:
էրած խնձաղ ա:
էրած չի, մրկած ա:
էրկու էշին կյարին կարել չի, թա նոթ անե:
էրկու ըխուռա օտող:
էրկու ըխուռու զռող:
էրկու ըրըսանե:
էրկու նոխտ մին կրնդ—քիչ:
էրկու մոր կաթնը կերած:

Ըլա̈ծաղ հըրվանեղ էլ տռ, վեր հոքիդ հանգիստ քնի:

Ըղֆաղու ճո̈ղ։
Ըզախուռ կյումաշ։
Ըմռնենե տանձ—տարիֆն առած։
Ընգած տո̈ւս եկած։
Ընգնել բդիս, գիդալ։
Ընզուճեդ օղ բրա։
Ընզուճնենն կալս—ճիմար, անճասկացող։
Ընգուճումք խո̈ղ փսնել—խլանալ։
Ընդեղ մտֆավ ֆյընիլն էլ ա ճամոթ։
Ընձանա էլ պարով կանիս։
Ընձանա ֆեզ ամանաք։
Ըշխարֆես ճամ տակն ա գիդում, ճամ կլոխը։
Ըշկերեն կապերը կտռռած։
Ըշկեռումը շնրկուտկնե կան—խոռամանկն է։
Ըշկրճանիչ պեն—գեղեցիկ, ուշագրավ, ճմայիչ։
Ըշկըցավան ընգած, լլկըցավան ընգած—դիտավորյալ չտեսնող, չլսող։
Ըտ էլ վեռեն կրկատան։
Ըռնու ճվասար պեն։
Ըռնու ճնգեր, ճացու ճնգեր, սրտու ճնգեր։
Ըսելիֆ ա տեռալ (արևմտ. «Ասելիֆ դարձած է»)։
Ըսեղեն ծակումն էլ ո̈ւրան պենը տեսնում ա։
Ըսեղու շոֆ—չնչին, աննշան բան։
Ըսկյրանա պո̈րթումը պլոկված։
Ըստեղ մին «և» կա...
Ըստըղան-ընդըղան թոխռող—անկապ խոսող։
Ըստի թո̈րն ընֆ ֆյընում։
Ըստծու կյրումը կյրիլի չի։
Ըստծու ղոնաղը իմ ղոնաղս ա։
Ըստծու շտա̈ճավ ճաց ստող։
Ըստծու ֆարավ մ'էր տալ։
Ըստըղես ըստուծեն ճվատալ չըմ, ֆեցալ ըմ ղարիբ ըստծու էլ ղաշանֆ բրալ։
Ըստուծեն ծաղեգը յրան—անարատ։
Ըրածդ ճինչու նման ա։
Ըրած-կոռած։
Ըրածը Քյուռն ընգած։
Ըրակեն լավ վախտը։



15—777

Ըրակեն ննետ:
Ըրբա վեր ընգած ծմերուկ:
Ըրեսեն ասող:
Ըրեսեն եշվում չի—տգեղ, այլանդակ:
Ըրեսեն ճրա̈վը—մաքուր, անարատ:
Ըրեսեն ճո̈ւրը վեր ելած:
Ըրեսեն մին անգյունը զնդան շինիլ, մինը՝ կրակ:
Ըրեսեն յրա վեր ընգած—անտեր, հիվանդ:
Ըրեսեն յղըծու անիս, կօտվե:
Ըրեսեն փլավ չընք ուտլական:
Ըրեսեն փրթուշ կօտվե:
Ըրըսկըհատը ըրըվհատ ա—երեսանց գեղեցիկ:
Ըրըվազուկն ըղնել—մայրամուտի ժամանակը:
Ըրըսլվա հաց օտող (երեխա):
Ըրկը-էրկու խոսել—գինով:
Ըրտսունքեն մինը կյամ ա, հզերը քշում:
Ըրևան-թուռավ ա (ըրըկ-արակ, թուռ-արև):
Ըրևեն գյահումը նստել—իրեն լավ զգալ:
Ըրևեն ննետ մար ա մննում, ըրևեն ննետ եր կենում:

Թաթուն բոստա՞նն ա:
Թա̈հրը յոն չկա:
Թաղած մեռալ տուս օնող:
Թամահդ քեզ կտրե:
Թան ընգած մուկուն:
Թա տու սաղանան ըս, ես էլ նրա հաքյին ըմ:
Թափած նղպորե:
Թեփռած հավ:
Թզկած պեխկ:
Թթրմաղու ումբուր:
Թթօղի, թութաման, թութե փադ, թութե տաշեղ:
Թժաթոխ հաց:
Թլակա հաց կյուղանող:
Թլակա պրծած:
Թնըխրավու չոփ:
Թողում չըս, թա իմ քոշս քշիմ, իմ մոալխս յրա վայ անիմ:
Թոշան արո̈ւն ա կաթում:
Թոշերը խնձոր:

Թող կկյա կնրրի (ծույլի պատճառաբանությունը):
Թորեն համ առաշն ա կտրում, համ քամակը:
Թոր-թվանգը կապած:
Թորքու տավար—հոգնած, բեռնահար:
Թովրհակ տոն:
Թո̈՛ւ, այ աշխարհ...
Թո̈՛ւ, ծո̈ւծո̈ւկ (ասվում է սխալվելուց հետո):
Թուխկեն տակը պենդ:
Թուզին լաշը կկղից, թուզին պտկըվից—արդեն գարուն է:
Թուրեն սոր վախտը:
Թուրնեն պատերը հանց ա ուզողու իրես—կեղտոտ:
Թուրնու մոխեր վեր անող:
Թուփեն-ծուպեն տեղը գյիդալ:
Թքել, նեստա տալ—գործը անորակ կատարել:
Թքիս տափը չի ըղնել—սաստիկ շոգ, սաստիկ ցուրտ:
Թևաթափ ըլած:

Ժըղըվուրթեն իրեսը ցոտ ա ընում:
Ժողով ընելավ տոն չըն պահել:

Իժան խաչի:
Իմ աշառս նրա յրա կյամ ա:
Իմ արաս նրա նհետ փոնում ա:
Իմ իրեսս քու վեննանդ տակը:
Իմ խմորս էլ ա խաշ ըրած—իմ բաժինն էլ վերջացած է:
Իմ մար ինձ չոլեն դո̈ւզումն ա պերալ:
Իմն ինձ ա տվալ, պրծալ:
Ինձանա (քըզանա) ջան ուզիիս:
Ինձ քցեցեր անտակ ծուվեն տակը:
Ինքը իրան էշն ա քշում:
Ինքը մին, չելակը հզեր:
Ինք ունելում լա̈վ ա, տալում քոռ (ինք ունելում լա̈վ ըմ, տալում
իրես չօնիմ):
Իրան թողած փողեն ա թա̈րիփ անում:
Իրան կնիպին շոք անող:
Իրան կյալին ուզի չընք, մինն էլ շլա̈կալ ա պերալ:
Իրանց չինավը, իրանց ըրշըկապավը:
Իրեսեն նո̈ւրը վեր կյալ—ամաչել:
Իրեսը կյումաշու կաշի—անամոթ:

Իրեսը կյումաշու օս—կեղտոտ:
Իրեսը հանց ա մղրնրա̈վ, կթննրա̈վ ըրած, հացան թաթախ անիս, օտիս:
Իրեսը հանց ա ցորեն հաց:
Իրեսը հավ կտկոտած—պռկմնա, ծաղկատար:
Իրեսը մղմող կերած:
Իրեսը յրան—անխառն, անարատ:
Իրեսը պարզ խոսում էլ ա:
Իրեսը պենդ:
Իրեսը պտատել, օզիլ:
Իրեսը պո̈ւրթըրնրավ լվացած—աներես, պնդաճակատ:
Իրեսկըհան նիլի, տկըհան ծիլի:
Իրեսը ցորտ—հանդուգն, անթաքույց:
Իփած-թխած—պատրաստ:
Իփը-ծիփը կտրած—աղքատ:
Իփը պակաս—ա) անեփ, բ) անփորձ:
Իփող-թափող—լավ տանտիրուհի:
Իփված մարթ (իփված-տո̈ւսպերված):

Լալեգ քլլան:
Լակ ծո̈ւ—(լակ ծո̈ւ վա տեռնոմ, ըրեսադ կենում):
Լա̈ցավ հանած, պերած:
Լեշը ծանդր—ծանրաշարժ:
Լղար կաժի—վտիտ, նիհար:
Լղար կաժի, օխծը մաժի—մարմնով տկար, բայց անվախ, քաջ:
Լոխ պրծավ, մնաց հորը գյոռը:
Լպզտած դանա:
Լպզտանու ըլա̈ծ (նույն իմաստն ունեն՝ կանանչ խոտու ըլա̈ծ, իրան ումեղն ընգած դարձվածքները):
Լպշիգ օտող—անկարգ, անկիրթ:
Լո̈ւզվավ Ստամբուլը յոր ա օնում:
Լո̈ւզվավ փահլևան ա, կործավ՝ տմբրված Ճադի:
Լո̈ւզոտ մտքենդ չի ասում, մտքենդ ասե:
Լո̈ւզոտ չընի, քաշ-քշեղակ յրա կտա տանե:
Լո̈ւզուն կտրած—սաստիկ վախեցած:
Լուզուն պրա̈նումը, ծակը ծակեն, մին դլիբու:
Լո̈ւզուն վարալ ա, աշկերը ցանալ—խոսքով և գրով արած:
Լո̈ւզուն շփոթ էրած:

Լո̆ւզուն փալթանգ:
Լո̆ւզուս զորում չի թա պատմիմ (ասիմ)—«Եվ ոչ լեզուն իմ զո-րե պատմել»:
Լո̆ւթ, մամային, նովտեն տակեն պլոկված:
Լուխնին պրնններումը շաքար տնող:
Լուխնին սրտան խոսող:
Լո̆ւ մորթել:
Լուսը ըրեսան կթեխս:
Լուսը ճկատեն, ճխշընգյարը վեննանը տակեն: Ասում են փար-թամության մեջ ապրող գեղեցկուհուն:
Լու տեռնալ, պատան կենալ:

Խակը վեր անել :
Խաղը պռավալ ա:
Խաղուն աշկ ա ընգալ (արդեն հասունացել է):
Խաղուն ծծա̈ղում ա:
Խաշավ, մտաղավ ինք կալած:
Խե զկեռ ա՞, փափուկ հաց ա՞, հոփ տաս, կոլ տաս:
Խելքա մոտե:
Խելքան ճասագ, կլխան ճասագ:
Խեղճ քյըփուտեն վարը ծռե վուչ:
Խենը պակաս:
Խերը մաշան վեր ածել:
Խեր պենումը շառ խոսել չըն:
Խմիչքա մոտե:
Խմողն ասում ա. — Ամանը մաքրութուն ա սիրում: Կյըվաթեն տակեն թողել չըն, վեններ կանե թռչի, պոզեր կանե քեզ հա-րե:
Խմորը շատ նո̈ւր յոր կոնե (էս խմորը):
Խնեցու չոփ—նիհար:
Խնձողու հուր ածող—նախանձ, չարակն:
Խնձորը մաշկան տռ, վեր վեր չընկավ, փսըկելի վախտն ա (աղ-ջըկան):
Խոխեքը մազին ծակավը վեր ըն տեռնում:
Խոսքաներթ անցկցընել:
Խոսքավ առաչ ընգած:
Խոսքդ մեղրավ ըմ կտրում:
Խոսքդ պահե, եղըմնը յրա նստե:

Խոսքեղ մաշին շրնքու չկա (ծեթ չկա, թընխաշու չկա):
Խոսքեն վեչ առաշն ա գիդում, վեչ քամակը (խոսքեն վեչ առաշն ա մանըլում, վեչ քամակը):
Խոսքան էրկան մանգիլ չկա:
Խոսքեն տական տռւս կյալ:
Խոսքը բդար, կոեվը՝ վուչ:
Խոսքը խոսք ա պուրում:
Խոսքը խոսքու յրա յա վեր կյամ:
Խոսքը կոխ կցընող:
Խոսքը հլըռել:
Խոսքը ճկատեն փոնըցնող (ասող):
Խոսք յրան անող:
Խոռա մարթ-շըռ մարդ—անարժեք մարդ:
Խոռի մարթ—խոռաթափանց, հասկացող, նաև՝ մանռախնդիր:
Խռտնած ըլըսատրակ:
Խոսքեն տակեն մնալ:
Խուփան մինչև ծհանը:

Ծալը պակաս—անխելք:
Ծաղկած հաց (եշնած հաց)—անորակ մարդ:
Ծաղկած շլոռե—սիրուն, գեղեցկատես:
Ծաղկավը բդար քյեցած:
Ծամսը կախ—խեղճ, խելապակաս, մռախեղճ:
Ծառեն շուքավը շոռ տվող:
Ծափավ ննջող, ծափավ եր թռչող:
Ծեղպատ տալ (փոխ. ախորժակով ուտել):
Ծեն տվեք մին ղուշ կյա, ինձ օտե՝ ըստեղ ծռտե:
Ծետ.—Մունք հվերեն մարդու տվենք, նրա շամիավը ասյրում ընք:
Ծերը ռավալումը կպրծնե, խաղը պրծնել չի:
Ծեր մեխքը ծեր վեզը:
Ծերքան փոնել, երգինք հանել:
Ծերքաս փոնող չօնիմ:
Ծերքը թամըզ, վեննը թամըզ—մաքրարհետ:
Ծերքը հալալ:
Ծերքերը փդանալ—մրսել:
Ծերքերը նռւմը շոռ ածող—պարապ զբաղմունքի մարդ:
Ծերքը թիթև:
Ծերքը լավ (պարի, անող):

Մերը խնչալեն կոթեն:
Մերը կարն:
Մերը պեց—առատածեռն:
Մերը սնդերքեն տակեն—տեղը նեղ:
Մերը տաք—հարուստ, ունեոր:
Մզանում ըլնլ չի, հրըվանում տեսալ չըս, բաածու էլ սկանում չըս, մզանա հի՞նչ ըս օգում:
Միծեռնակեն թեն էլ տնում ա կրպետեն մաշին, կյործում:
Միք աված, ըրկնցրած—նիհար, երկար մարդուն:
Մմակա փախած:
Մմոնեեն յա—ծեր:
Մյունավն էլ շոռ կյա, հետքը ըրվալ չի—զգուշավոր:
Մնած էծ—լղար, տկար, նիհար:
Մոծը պերակ—քնքշամարմին:
Մոխը կարել (կարցընել):
Մոյնը կապած նառ—ուժեղ, զորեղ:
Մոռը ծուռնատար ա տեռալ—անարդարությունը բազմացել, շատացել է:
Մոռ նստինք, դուզ խոսինք:
Մոռ վեզ դուզըցնող:
Մոռ վզին շողքն էլ ա ծոռ:
Մովեն մշանք մեծ, բաոխերան իվիլ:
Մովը կմերի, մածուն շինի:
Մվվանը կոտրած:
Մուկունը կերեր, նուր խմեցեր՝ վայ քու կլոխ,
Մուկունը կերեր, կյինի խմեցեր՝ վայ ծուկնենն կլոխ:
Մուն կուրցըրած հավ:
Մուվա մազ խոզող:
Մուվենը տակն անել—ամուսնացնել:
Մուվվացած, ետ պերած:

Կալա ետ ա—արդեն ուշ է:
Կած արկաթ ը՞մ կոլ ավալ:
Կակարդը էն ա ցևքեն պտկեն—ինքնահավան, գոռոզ:
Կակող քոլ ա—հեզահամբույր:
Կաղնե խուլ—համառ, հաստակող:
Կանանչ մրտոց:
Կաշվի կշեռք—նիհար, մաշված:

Կատարը կյրմրած—գինով, խմած:
Կատուն բղերեն յղըպարան ա տվա՞լ—որտեղի՞ց նրան շռայլ ապրելակերպը:
Կատուն մաշկս չնգոռտում ա (վեր քեզ տեսնում ըմ):
Կարկառը վեռեն կապիս, վեռը թրշիլ չի:
Կարում չի թա խոնչանը կապե:
Կեռան-կեռան արտս ընի,
Հնձող-թակող մարթս ընի:
Կեռեքը ռոնոտ տեռած (ըլա̈ծ):
Կեռեքը սոր:
Կեռեք օնե ընձ արտ:
Կեռքանը եխտավը (մին պրնպատառ ճաց չըմ կերալ, էն ըմ կեռքանս եխտավը):
Կեռքավ-ծերքավ ընգելի պեն—ուտելիք:
Կեռքու տակավ անցկցնելի:
Կեսանը վերը թռտասունք:
Կես կորեկ—ոչինչ, անարժեք բան:
Կեր՝ մծաց, ծիծաղե՝ մծաց, խաղ ըրա՝ մծաց:
Կեր, վեննեռդ մտակե (շատակերի խորհուրդը):
Կլխադ ճան—մոռացիր:
Կլխանը երը վեննը կացած:
Կլխան էլ պրծենք, կլխըցավան էլ:
Կլխանը տöւս (կլխան իվիլ) պեն փոնել:
Կլխան ծերք եր կալած:
Կլխավը եկած:
Կլխավը մատաղ քյընիս:
Կլխավը տանձ կշռել:
Կլխեդ մին մազը բդի:
Կլխեն ծի քացի տված—հիմար, գիժ, աննորմալ:
Կլխեն նոր մաղել:
Կլխեն մածուն մերած:
Կլոխը թխծըրած—խմած, գինով:
Կլոխը կյալիքը գիդում չի (գիդում ա):
Կլոխը տնիլ կծանումը—կյանքը վտանգել:
Կլխեն ղուշ թառ անել:
Կլխեն չաքուչ տեռնալ:
Կլխու մնացած:
Կլոխը մին կշռքու տնիլ—անձը վտանգել:

Կլոխը պերցին տնիլ—հիվանդանալ:
Կլոխն ի վար անել:
Կլոխ չօնե ուսերեն յրա:
Կմեծանաս, կմոռանաս:
Կմըհան տեռնալ—ցրվել, հավաքական ուժից զրկվել:
Կյառնը կյուլին պահ տալ:
Կյարմուր ծին եր ըլած:
Կյեղած կյինձու նման—ուշ հայտնվող: (Գինձի սերմը հողում երկար է մնում):
Կյենզատ չըմ անում, ըլածն ըմ ասում:
Կյողը հինչ կօզի՝ մթեն քշեր:
Կյոք յոր օնող:
Կյոք տո, քարը կեր:
Կյրզմանեն ցորտ նուր անել:
Կյրողեն չնթան վեր ընզած:
Կյրումը կա ոչ (նկատեն կյրած չի):
Կյուլառնը մես:
Կյուլը ոռնալ ա—հաշողություն մեջ է:
Կյուլին աշկերը տեսած:
Կյուլու խոտ—լեշ, միս:
Կյուլու սերտ կերած—անվախ, քաջ:
Կօզի տոնս պիծի, սերտս հուրզակ ա:
Կոզնու նման կոչ ա կյամ, կյրթնուկու նման տըզում:
Կոխկը տշիլի:
Կոները հաց ա տեռալ:
Կոչ եկած, կծեզ տեռած—ծեր, ալեոր, հոզաշատ:
Կոռնը հլորող չի ընիլ:
Կոտավ ըլած:
Կորեկ կերած կյումաշ:
Կործը եղու նման քյընիլ:
Կործը լավ, հախն էլ շատ:
Կորու երիշ:
Կոացած խնձորե—վաստակած մարդ:
Կոացած, կոնդեկ տեռած:
Կոըք—կեռեք անել:
Կոտած ղազ—չաղ:
Կոքներեն հոփ տալ—համբերել:(
Կոքնեն մազ ա մանում:

Կտրած հոռ:
Կրած ճիրավ ճեղաց չի պեն անել:
Կրակե հալավ կյեցած:
Կրակեն օնիս, ուֆ չի անել:
Կրակեն օնիս, խնձոնավետ չի եր ընիլ:
Կրակը իրան ֆթըվերեն տակը ֆաշիլ:
Կրակը մզ արա վեր ըս ածալ:
Կրկուտաքակ տեռած:
Կուռըտկերեն ծմերուկ տնիլ:
Կուռները թռչանալ:
Կուռներըս վեր ա տեռալ—հոզնել է:
Կուռնըտակեն ծռւ կխաշի—չահել, ավյունով:
Կոտանա ըլա̈ծ (տեռած):
Կֆյընիս ըլի, Արիշ ըս ֆյընո՞ւմ:

Հազար խոսֆ ասողը կնաֆվե:
Հալա աշկ նպելու:
Հալալ հնգերուսֆ՝ Պողոս—Պտրուսեն նման:
Հա̈լքաթ մին տեղա լուս կծաֆյի:
Հախ տված, կոև ինֆ կալած:
Համ մին պեն չի անում, համ թֆեդ վեր ա կյամ:
Համոթը տեն...
Համ տարալ ա, համ ուրացալ:
Հայը միշտ էլ ցևֆեն պտկեն ա ըլա̈լ:
Հանգիստարանու ֆար—լոակյաց, անզգա, անհաղորդ:
Հանգիստներան օտպուսկ եկած:
Հանց ա ըղֆաղու դանա:
Հանց ա ըստուծանա մին օր կյուղացած—ուրախ:
Հանց ա ըրկանֆեն ածած, ըղացած:
Հանց ա թա̈զա հարթնը:
Հանց ա կլխավը եկած:
Հանց ա կյութանու ծիվիշ:
Հանց ա կրախմալ տված:
Հանց ա հափռու մաչ:
Հանց ա հցակեր չընի:
Հանց ա մեռած մեյդ:
Հանց ա յրու նի կյախս:

Հանց ա ճղպոռու մաչ:
Հանց ա մին fեռծ լ․նի:
Հանց ա մծացած-պծծացած—խելոf եռեխային:
Հանց ա նխշընգյար ըռի—գեղեցիկ, ուշագրավ:
Հանց ա շաչու մաչի լոf տախս պեկլա:
Հանց ա ցեցու մախաթ:
Հանց բեղար մե հետ մոնինf:
Հանց խոսf կասե՝ ծմեռնը խոտ կփսնե, ամեռնը կշուռանա:
Հանց հրփըլծկան ըմ, վեր ցեխուտ կյումաշ տեսնամ, օրննյա տեր սաիմ:
Հանց պեն ա սսում՝ իփած հավը ծծաղե—շտեսնված, շլսված:
Հանց պեն ա սսում՝ վեշ թոռ թակե, վեշ սրև էրի:
Հանց փչում ա, լհա չոխսադ կյեց, նստե:
Հաչող ա, կծող չի:
Հավան բուրի յա թխում:
Հավան ծիծաղում ա:
Հավատը շահեն կլոխ չի տալ:
Հավեն ննետ fոն ա ընում, վրցակին ննետ եր կենում—անհոգ, ազատ կյանf վարող:
Հավեն չիչ ընելի վախտն ա:
Հավու պաներ:
Հարայշու կոռնը (մահակ):
Հարթնը ոււրան հետե ա ցրև տամ, սլեսուրը ոււրան, գոհանամ սստծո:
Հարուր կապավ անց կացած:
Հարուր փարշավ նոււր խմած:
Հարուր ծուղրուղուն մին չռանուկ ա:
Հացեդ թիfան վեր ծեռfադ վեր ա ընգնում, ընգնում վերը, վեր եկ, տոււս կծլ:
Հացեն իրեսը կնանչիլ:
Հացեն ծառան վեր ընգած:
Հացեն պտառեն թfիս, տեմ օնիս՝ յոր կօնին:
Հացեն տատս սսել:
Հացը ըղովել—դժբախտության մեջ լինել:
Հացը փոf ա ընգալ, օնfը փոտ ա ընգալ:
Հացը կեռալ ա, եր ըլալ էշը:
Հացը fաղցր—հացը պակաս:
Հափոիմ՝ պրծնիս:

Հափուր հափ—ժլատ:
Հափուր պեց—առատաձեռն:
Հաքյին քանդած վերցակ:
Հեռան պերած—խորթ:
Հեռն ու թեփուր ըրվամ չի:
Հզըրու յաղի:
Հինչ կա, հինչ չկա, թաղում—թուռակում, անդում—անդաստանում:
Հինչ ղարաբաղցե յա, վեր հացա եռ իրեֆ ամաճ լըքի չի օտում:
Հինչ մանի օնիս:
Հինչ ը՞ս սարֆվալ, Արեշ չըս ֆյըճում:
Հինչ ըս ըդաննու նման լոֆ—լոֆ անում:
Հինչ վայ տամ կլխես:
Հինչու շտահաղ տամ ա, էն կեր, վեչ ուրիշի շտահավ կեր, վեչ ուրիշի պրճնավ:
Հինչու տամ ըն՝ հմփում ա:
Հի՞նչ փորացավ օնիս:
Հինչ տեղ ֆյըճի՝ կկճանչի:
Հինչֆան հաշեվ անիս, հարուր կապեկը մին մանեթ ա:
Հլըհալ անել, անգուճն անել—հանգամանորեն բացատրել, հասկացնել:
Հղըցա տուս—անբարոյական, անկարգ:
Հղըցեն էս անգյունն էլ ա ուրանը, էն անգյունն էլ:
Հմանչում ըմ սոտենս ասիմ, վախում ըմ ասիֆ՝ կեղծավեր:
Հոգիս պկավս տուս ա եկալ:
Հոգիս վեր ծերֆես ինի, պեց կթողիմ:
Հոր ասիմ, հոր թեթևանամ:
Հորը կյինը յրա տնիլ:
Հվուրումը վեննը չի կենվում:
Հցեցուն շալվարը ծույնան ա ծակում:
Հու կարող ա ասե՝ տեղդ ծոխ ա:
Հու կգիտա հուր դարդ:
Հու կկարես ասե՝ կլխանդ երը ատոռծ կա:
Հու կկարե ղեյնը մսան տուս օնե:
Հու մեռած, հու սաղ:
Հո՞ւնց ըս-հուճցալ ըմ, հալա թխալ չըմ:
Հու վեր թխծրած հացա, մն էլ պնեռա ֆուշտանա, գյիդա վեր չանումը հև կա:

Հու վեր հեշտան օծ օնե՝ հախռում ա:
Հու վեր խոսե՝ աղի մուկուն ուտե:
Հաւր ըմ մին թիֆա հաց ավալ:
Հուֆյին պերանը հվաֆել:
Հուրն էլ կհնցընեինֆ, նաւրն էլ:

Ղալամը ֆար ա ծակում:
Ղալին ֆյուլլաշը նելլի յա նի կենում:
Ղեյնը կտրող, տան յրա տնող:
Ղուլուղնեն թակած:
Ղուլուղնեն կախ:
Ղուշը կլխեն թառ ա ըրա՞լ (վիրավորական շեշտով):
Ղուշ ըմ պինըլական, չմղաֆու յրա պեց թողի՞մ:

Ճաթը ծուցումը փիշրել:
Ճակատը աշ աված կաշի:
Ճակատը թոֆի:
Ճակատը ղաշխա:
Ճակատը նմացած չի:
Ճակատը պենդ:
Ճակատը պեց:
Ճանշավ անել—պարապ, անօգուտ ժամանակ անցկացնել:
Ճարը նվարանն ըղնել:
Ճաֆած հափռտ—աշխատավոր ձեռֆ:
Ճաֆած նոռնը—ծեր, պառավ:
Ճկատեն չրշարմանֆ ա կյրած:
Ճելլի թֆանող:
Ճերմում չի, տանդում ա:
Ճիլպորտ անել. ա) գործը անորակ կատարել, բ) հարցին լրջո-
րեն չմոտենալ:
Ճխլած փրթու շ:
Ճղացա եկած—սոված:
Ճղպորավ ինֆ կալած կյառնը:
Ճղպորու մաշու նման պանել:
Ճղպորու ֆսակ—ծիծաղկոտ, աշխույժ մարդ:
Ճմռած նոռնը:
Ճնթոըմ խաշ:
Ճոթան նանգ չի տամ (ասվում է ծաղրով):
Ճոնդ ու պոճախ չօնե:

Ճոտեր չի ըննական, ծննական չի:
Ճոտու նրա̈ման—ցածրահասակ:
Ճո̈րու հաքվու նման վեչ ըրկնանում ա, վեչ կրճանում:
Ճո̈րու պին—խորամանկ, հնարագետ:
Ճրա̈ն չոր տո̈ւս կյալ:
Ճրա̈տ նեղաց:
Ճրին իրեսը տո̈ւս կյալ—հայտնվել, բացահայտվել:
Ճրին նհետ բարոթ խառնած—կռվարար:
Ճունդան փռնիս, երգինք ընիս—վարար անձրև:
Ճո̈ւրը ըղանձիլ—անմիտ, հիմար գործ կատարել:
Ճո̈ւր թակել:
Ճո̈ւրը թայդի յա քյընում—կյանքն արագ է ընթանում:
Ճո̈ւրը լղլող:
Ճո̈ւրը կակող—մարդամոտ, ցանկասեր կին:
Ճո̈ւրը պերակ:
Ճո̈ւրն էլ նզոված, նրա̈մանն էլ:
Ճո̈ւր տո, քշի:

Մազա կախ ըլած:
Մազան մինն էլ տո̈ւրո̈ւր չի եկու—«Մազ մի անգամ ոչ շարժեալ լինէր ի վարսից նորի». Ագ., էջ 104:
Մազը ըրեսեն չուրացած:
Մազը ծռած:
Մազը կակող—մեղմ բնավորությամբ:
Մազը կոշտ—բնավորությամբ չոր:
Մազը մաչան կես անել:
Մազը քաղցր:
Մազիս հմբարքավը մին:
Մազնեն իրեսը, փլավեն տակը:
Մաթը կաթում ա:
Մախմուր մազիդ մատաղ:
Մահա պրծած:
Մահավ եխնել:
Մահեն հետան շոռ կյախս:
Մահվան վեղը քշըցրեն (մահվան վեղումը տրին)—«Ի հող մահու իջուցին...»:
Մաղեն ըրեսեն մնացած:
Մաղ կապող—աներես մարդ:

Մայան բաթմիշ ընիլ (մայան կորչիլ):
Մաննդ աշկը կոխիս՝ տեսնալ չի:
Մանները վեսկե:
Մաններս մում ըմ շինալ, նի կցրալ:
Մաշկած ըլքատրակ—նիհար, վտիտ:
Մաշկած տեղան էլ ըն մաշկում:
Մաշկը Նախնըրվանա աղ պո̈ւրող ծիու մաշկ ա տեռալ:
Մաչը փոչ—խելապակաս:
Մատտաքը կորկու տնիլ:
Մարթ էլ ա վեր ընգնում մեռնում:
Մարթ էլ թաղիս, կփսնե—լավ մշակած հողին:
Մարթին առքը մարթին յրա շատ բդի:
Մարթին էշու տեղ տնողն ա էշ:
Մարթին համ դոստ կընի, համ դո̈ւշման:
Մարթին ննանչվում չի, ընգնել բդիս, գիդալ:
Մարթին սերտը բդի ծիծաղե:
Մարթու չիր—հիվանդ, տկար, նիհար:
Մառտու քամե—հեղհեղուկ բնավորության մարդ:
Մեծեն կերածը կորած ա, բրածը աշխատանք:
Մեծեն ննետ՝ մեծ, պիծիկին ննետ՝ պիծի:
Մեծ նրա̈վ էլ չըս նոկել (էդ եխտը):
Մեծ-մեծ խոսող (տրքցնող):
Մե հետ առաչն ա ննաշ տամ, մե հետ՝ քամակը—աննորմալ, խելապակաս:
Մե հետ էլ ծեր տռանը «Տաշշի գդըլ»—ժլատ, ուրիշի հաշվին ուտող:
Մեխքը ըրեսավը կյալ:
Մեռալ կյուղանող:
Մեռենք ապրելան:
Մեռնելը հեշտացալ ա:
Մեռուն մարթ ա:
Մեսս քար ըմ բրալ, վեսկեռս՝ արկաթ:
Մեսս հաց ըմ անում, վեսկեռս՝ նո̈ւր:
Մետքը ծոռ:
Մեր կաթնը շաղած ա—մեր միջև հաշտություն չի կայանա:
Մեր հացը մինտեղ թուրնան չի կենում:
Մեր Տիկրանը գիդում ա̀, թա Ամերիկա հարուստեն ջրումը հիշքան փող կա, բայց մեր տաշտան խաբա̈ր չոնե:

Մզամար դանա:
Մթիլ տեռած—հոգնած:
Մթնումը մազ մանել:
Մինակ կերած, մինակ սվերած:
Մինակ մոնելի օրս չըմ գիդում:
Մին աման ա, վեր կյումաշը մաշին նստե, պոզերն ըրվալ չի:
Մին ըմընի—թեթևակի, մակերեսորեն:
Մին աման չորվա տալ—ամուսնանալ:
Մին աշխար մեռավ (լավ մարդուն):
Մինը եթարն ա, մինը Բեթարը:
Մինը էրկու չի տեռնում:
Մին ըշկընպումը:
Մին թիֆան կեր, մինը մատաղ տո:
Մինը թողիմ, մինն ասիմ (դյորդս շատ ա, մինը թողիմ, մինն ասիմ):
Մին թոշին վեր սիլլա տաս, էն մինը տեմ կանե:
Մին խխու պատառ—միակ, միամորիկ:
Մին կյեղ խոխա, մին մանըր ըրախա:
Մին կյեղ կա ոչ:
Մին կյում հեյվան օնե, մին աման խորազ չի տեռնալ:
Մին կոֆըպտոե չօնիմ:
Մին կրակում էրված:
Մին կուտուր հացավ մին չեբեթ կենող:
Մին հալավ իվիլ կյեցած:
Մին հլավում ֆոն ըլած:
Մին հլորած ֆող չօնինֆ:
Մինն ասում չի՝ աշկանդ երը օնֆ կա:
Մին մշտըլեղ չարժի:
Մին չեթ կապեկ չարժի—ասում են անարժան մարդուն:
Մին պարկ արուն կլոխը կալած:
Մին պերան սաղունձ չի ընգալ:
Մին չան ա ասում, մին՝ չոռ:
Մին վեննը կյրզմանումը:
Մին վեռ, մին կլոխ պահելը հի՞նչ:
Մին վեսկեռ՝ մորթեն զիրավ ածած:
Մին տեղ վեղ չի վեր ածել.— ա) հաշտ չլինել, չհաշտվել մեկի հետ, բ) ֆոշաֆոշ անել, հիմնական ապրելատեղ, գործատեղ չունենալ:

Մլըշուկի անել—նազել, դանդաղելով ժամանակ կորցնել:
Մհակեն տակը տալ—դագանակով ծեծել:
Մհասիլ տեռնալ—ստիպել, պարտադրել, ձեռք չքաշել:
Մծըքյորուզ խոսել—մեծախոսել:
Մկլավետը եր ընիլ—աղքատ լինել:
Մնալ վեռը քուրեիս—դատարկ, դատարկաձեռն մնալ:
Մննա̈ք անել—խնդրել, աղաչել:
Մննան քցիլ—մոռանալ:
Մններեն յրա պար ածել—չարչարել:
Մնըմանի անել—ա. քրքրել, փնտրել, բ. հարց ու փորձ անել, գ. բծախնդրություն անել:
Մնին ըրևեն տակեն կենալ:
Մնին շուքումը կենալ—մեկի հովանու տակ ապրել:
Մշկածու վեր քցիլ—ա. երբ հավը թույլ կեղևով ձու է ածում, դեռևս չհասունացած, ժամանակից շուտ, բ. հիվանդ լինել:
Մշկահոռ տեռնալ—տանջվել, չարչարվել:
Մոլ անել—ա. կրակը ծխել, լավ վառված չլինել, բ. ծխախոտ ծխելու սովորություն ունենալ:
Մոտ թակել—ա. մերձենալ, շարունակ մեկի մոտ գնալ, բ. մերձենալ՝ ամուսնանալու նպատակով:
Մորթան տուս կյալ—ճիգեր գործադրել, ջանալ:
Մոր ծծվանքը վեր ածել—տառապել տվայտել, տանջվել:
Մջմահու̈ն մաշին պար կյալ—ա. լավ պարել իմանալ, փոխ. իր գործի վարպետը լինել:
Մսացուկը պիրիլ—հարսանքին մորթելիք տավարը բերել:
Մտըղհերթա պրծնել—փրկվել, ազատվել:
Մտքեն դոնն ընգնել—մտքերի մեջ սուզված լինել, մտասուզվել:
Մին նալեն ա թխում, մին մեխեն:
Մին տակ ա թխում, մին՝ կլո̈խ:
Մին տան ճրաք:
Մին տապակ՝ մաշան կես ըրած:
Մին տո̈ռնը վեր կապվե, մինն էլ կպենվա:
Մին ուրխընլատեղ չօնիմ:
Մին օր սաղ, մին օր կաղ:
Մկծեռնու ճո̈ւր—անարժեք բան:
Մղափո̈ւն էն հաց, վեր օտում ըս (քոռ ու փուչ ըս անում):
Մղրաճո̈ւրը պրանան վեր տռնայիս—քաղցրախոս:



16—777

Մնացալ ա մին փուճ—մահամերձ:
Մնացալ ըմ ցմքհատ ըլա̈ծ:
Մնին մին ցոռտ խոսք չի ասել:
Մննա̈թին տակն ընգնել (տական տո̈ւս կյալ):
Մշանք կյարի ընք կերալ, հու վեր թոքշ ա ասում, վենն ընք կենում:
Մշրներավը սև կատու հնցած:
Մռալու շթիլ:
Մռավա լաշը կկղել—զարուն բացվել:
Մռու արև—անզոր, չտաքացնող արև, ձմռան արև:
Մտքումը կորած (կորչիլ):
Մուկն ու կատու, շնըկատու—անհաշտ, իրար չհանդուրժող:
Մուհա̈լ ըրե՝ քթես փսավ (մուհալ մ'էր անել, քթեդ կփսնե):

Յա աղն ա պակաս, յա մաղը:
Յա էշը կստակե, յա էշատարը:
Յալն ու հաքյին խոզած ծի—զեղեցիկ, անթերի:
Յաղին տարա՞լ ա:
Յա մայիսը, յա պնունված ջահիլ ախնիզը. ծաման վետ օնիս հոգիդ երգինք ընի:
Յա տես կտրե, յա՝ տեն:
Յարա յոր օնող—ներողամիտ, տանող, ներող:
Յա քու կլոխդ, յա իմ ջուբս:
Յղալի պատառ:
Յզածո̈ւն ստում ա, քթըվերումը թքում:
Յրգինքյան կախ ըլա̈ծ—անհասանելի, թանկ:

Նա կլոխս եղուտ ա ըրալ, տու էլ մեղրուտ կանիս:
Նաղաշը բիժին եր կալա̈ծ—(կովն իր հորթի հետ)—*փխբ.*—խաղաղ, երանելի կյանք:
Նա մին անգյուն չօնե—պակասավոր է, թերի կողմեր ունի:
Նառը տափն ա կոխալ, սարը տափն ա կոխալ—ուժեղը ոտնահարում է աշխատավորի իրավունքները, հոշոտում է նրան: Ասում են մեծ արհավիրքի, կոտորածների ժամանակ:
Նենի, կուկու—քնիր, բալիկ—ասում են մեծերին՝ երեխայական վարմունք ցուցաբերելիս:
Ներխատրեց պեն փռնել (ներխը պտտել)—կարգը խախտել, անկարգություն անել:
Նի անող, տո̈ւս անող—հյուրասեր, շռայլ:

Նոթել, նեղկիլ—հանդիմանել, հայհոյել։
Նոթե հաց չըն ուտել (հանաք)։
Նոթուտ կոլա, նութըկոլա—մռայլ մարդ։
Նորը մինան սկսել։
Նոքարս աղասա—աշխարհը հիմնովին փոխվել է։
Նրա ըրեսան վեր ընգնողը քառասուն պատառ կտեռնա։
Նրա ծեծաղն էլ ա կորպատլի (քծնողին)։
Նրանա ետը արխավը շատ նո̈ւր ա քյեցալ։
Նրանա պրծումնը չկա։
Նրնջած *թոթ—ծերացած*։

Շախավ-շուխավ տանել—մեծ պատվով և ուրախությամբ հարս տանել։
Շահեն կյալ հա կյալն ա տեռալ։
Շաղած կաթնը։
Շան ամա̈զ (սօրե մին շան ամազ չըմ ըրալ)—չնչին վաստակ։
Շանը բդանան ընք՞ ամալ եկալ։
Շանը կտրեն—աղքատ, ընչազուրկ։
Շան լկաման—հայհոյասեր։
Շանը հալին—աղքատ, ընչազուրկ։
Շանը հափռավը մին—չնչին, քիչ, աննշան։
Շանը ռեխը ինձ արա (մզ արա) անել։
Շանը ռեխը քխծրցնել (մեղր քսել)—կաշառք տալ։
Շանը ռխան պատառ խլիլ—մեծ դժվարությամբ ձեռք բերել։
Շանը քթան նո̈ւր խմել—տանջվել, չարչարվել։
Շան թզնանուց—կեղտոտ բնակարան։
Շան լեփը կլխեն ածել—խայտառակել։
Շան մսա հարամ ընի։
Շան նման պլո̈րվում ա, կյուլու նման պպզում։
Շան վեսկեռ—*ամուր*։

Շառ աշկ ա նի եկալ։
Շառը, փորցանքը վեր կյա, դա̈ստի կկյա։
Շառ քաշ։

Շատեն՝ շատ, խրեգյին՝ խրեգ։
Շատ ընողեն հիբի՞ յա ըլա̈լ բախտ։

Շելակս շլո՞ր ըս տեսալ։
Շենին յրա նո̈ւր ա մաղալ։
Շները սետ չըն։

Ծնրճանչին պնանին բշտի տալ:
Ծոնը ճղած, մաշած տուս եկած—ա) խորամանկ, ճարպիկ, ճը-
նարագետ, բ) շողոքորթ, ճարմարվող:
Ծոնը շնըքունավն էղ պենն անել չի:
Ծոն կտող—անպատվաբեր գործ կատարող:
Ծորավը մին—գեր, չաղ:
Ծորա տուս եկած:
Ծորերը խտակ՝ տղնըծաղկավ քաշած:
Ծոփ-փոփ—փնթի, անբան:
Ծտանիդ լծեն տակեն պանե, ղուշդ երգինք բաշըցրու:
Ծտանեդ քացախ—«Քացախ ընդ լեզվոյ»:
Ծտունքումը էվուլ ածող:
Ծունը յրան—նոր, անարատ:
Ծուքանեմ ա եկալ:
Ծուքը պմբանկավ յոր օնել:

Ծտաց ճանապար—զուգարան:

Զաքուս պոզին տարա՞լ ա—(ինձ) ո՞ւմ ի՞նչ վնաս:
Զալ ոուսերեն:
Զախկու շխարակ:
Զանան եր կապած—խեղճ, լռակյաց:
Զանան թիթև—շատախոս:
Զանան ճպրապում չի—շատակեր:
Զարշու բազար:
Զիրուխեն պող տնող չկա:
Զոլեն դնւզումը օխտը մետր լոք ըմ տամ—առաչկում են պար-
ծենկոտին:
Զոլը ավենք, մնացենք սարեն ումուդին:
Զորաթանու ույուղ—երկարաճասակ նիճար մարդ:
Զոփավը փալազ ըն տամ, պնրցնում:
Զուրացած յորու տիրև—ասում են թերևոտն, թերևամարմին
մարդկանց:
Զուրացած ծառ—ծեր, ուժասպառ:
Զփարավ ընգած լոկ—անշարժունակ, թմրած, ծույլ:

Պաշալ ըս կոզնուն կակող տեղը:
Պապերեն, տղըճան անել—պապերին ճայնոյել:
Պառը կակող:

Գառը կոշտ:
Գատառ հաց ուտինք, պրններես ճո̈ւրը վեննը կենա:
Գատեն ղաթան չընք մունք, մեզ էլ ա մար պերալ—մենք էլ ար-
ժանապատվություն ունենք:
Գատն էլ անգուն օնե:
Գարիկամոթունք կյալավ-քյնիլավ կընի:
Գարի պտո՞ղ ա:
Գեղեն լհա մին «հայ» ա պկասում:
Գենա կյործա ընգած—հակառակ իր կամքի՝ զբաղված այլ աշ-
խատանքով:
Գենը պո̈ւրթ ա—վիճակը լավ չէ:
Գենը վեր անին, թա̈հրին կանին:
Գեռնանը տակեն տնքալ:
Գեռնը ծանդր:
Գեռնը փռնած—ճանապարհի պատրաստ:
Գերանեն պատառը ուրիշի տվող:
Գերանը կրակ տալ—մռու բիբար ուտել:
Գեց թողիս՝ կարել չի, թա ըրածե քուշտանա:
Գինվեր ճերենչ—երբ երինչը երեք տարեկանից շուտ է պտղա-
բերում:
Գկան ժնչիլ անել—ամուսնացնել:
Գկեն տակը քորել—շողոքորթել:
Գոզերը ճհաշ տալ—սպառնալ:
Գոզերը վեր ըրած—ա) անվնաս, անվտանգ, բ) տարեց, ծեր:
Գռավու խորազ—փափուկ ուտելիք:
Գռոկը վեր անել:
Գռուշնեն ցմաքած—ծարավ:
Գրա̈նան կրթնավետ կյաիս—երեխա, դեռահաս:
Գրա̈նավը հավք ա փռնում:
Գրա̈նեն մին անգյունավն ասել:
Գրա̈նեն պատառը ուրիշի տվող:
Գրա̈նումը չէ չկա:
Գրա̈նումը տաք ճուր չի պահում:
Գրա̈նումս մնանա չըմ տրալ—դեռ ոչինչ չի կերել:
Գուզավուր, ընգունավուր սոտ:
Գո̈ւլը պիծի—փոքրամարմին:
Գո̈ւրթս տո̈ւսումն ա կյզած—ճշմարտախոս, արդարը չքողարկող:

Ջանա ըլա̈ծ—հիվանդ, ուժասպառ:
Ջանեն յրա տրարվող:
Ջանես է, ջանես...—ասվում է ուրախ պահերին:
Ջանը կծուված—հիվանդ:
Ջբումը քամե յա խաղ անում:
Ջիգյար ա, հեռում ա:
Ջյրանեն դալուն եր հանել—գինը բարձրացնել:
Ջնըհեռեր կան՝ օ̈ւրանց աղավ-տխտեղավ ընեխս:

Ռադիո կոլ տված—շատախոս:
Ռանգյը յրան—գեղեցիկ, անարատ:
Ռանգյը տեռալ ա էն պատեն ծեփը:
Ռեզյան ռեխը հախավը շինած (ծխողներին):
Ռեզյան ղութու յաղի—ժլատ:
Ռեխդ մուխրհրելի յա (հայհոյող մարդուն):
Ռեխը բղի երգինքը—գինը բարձր:
Ռեխը ցա̈քիլ—կաշառել:
Ռեխ չի, չանթա յա—շատակեր է:

Սադանու քամե—տեղապտույտ քամին:
Սադանու փափուն կարող (կյեցած)—խորամանկ:
Սաղունձ տեռնալ—ընդհանուրի խոսակցության նյութ դառնալ:
Սառած նաշ—ծույլ, թմրած մարդ:
Սառնավը քյընող դանա—քայլելիս՝ զգուշավոր:
Սավա պրծած—աննազուրդ, անկշտում:
Սարան տոն կյալ—ծերանալ:
Սարա-քոլա հեռե—քաղաքացի, գյուղական աշխատանքներից հեռու:
Սա̈րը լակ—թեթևսոլիկ, տխմար:
Սարը նղած, մաշան տո̈ւս եկած—քաջառողջ, դիմացկուն:
Սեպերը պեց անել—գռեհկորեն ծիծաղել:
Սերը սերին փոնում չի:
Սերտդ էլ հի՞նչ ա օգում (Ա սերտ, էլ հի՞նչ ըս օգում):
Սերտը կես տեռած:
Սերտը կոշտ տես՝ աշկը կոշտ:
Սերտը՝ մեռած մածուն—հանգիստ մարդ:
Սերտը պողեն ընգնել—սրտակցել, կարեկցել:
Սերտը տո̈ւրո̈ւր կյալ—սրտաշարժ լինել:
Սերտը քամե տարած—դյուրազգաց, տանջահար:

Սերտը քանդիլ—մտափոխ անել:
Սերտ կյրմրցնող:
Սերտն ու տո̈ռնը պեց:
Սերտս ընգավ հռնե տեղը:
Սերտս հվաքվալ ա մուտընեն ակնը:
Սերտս սև ա կենում:
Սերուն ծառ, ըստուծեն ծաղեգը յրան:
Սիպտակ բմբուլ—ներմակ, գեղեցիկ երեխա:
Սմախեղդ տեռնալ—սոված մնալ:
Սմկած նաթ:
Սմնդուկու կարաս (տոն, պոլիկ):
Սոտը ղորթու տեղ անց ա կենում:
Սոտ ըսողեն էդ հալա̈ խրեզ ա:
Սոտ ըսողեն քշտեն սոտ ասե, մինն էլ իվիլ:
Սվուրուտկու պար («Յալլի»):
Ստակած էշու նալու շոռ կյախս:
Ստակածեն ա թակում:
Սրընուցու կյումաշ:
Սրտամաշ գիդող:
Սրտամաշը պեց անել:
Սրտան պերակ—զգայուն, կարեկից:
Սրտավը արո̈ւն քյընիլ:
Սրտեն նո̈ւր շաղ տալ—հանգստացնել:
Սրտեն պո̈րթ կշինվի:
Սրտեն կալ կթակվե:
Սրտենս էն ա լո̈ւզվես պտկեն:
Սրտեն տեղ վեր կքցվի:
Սրտու փոշ տո̈ւս օնող:
Սրփա̈ծ թոր—գեղեցիկ երիտասարդ:
Սուտավ հանած-պերած:
Սու ըս անում, վեննը պցրցնո̈ւմ ա:
Սուրը վեր ածել:
Սև թխոց կտրել—սևանալ, հասնել (խաղողին):
Սև հավը ծկլթաց—կռիվ, կոտորած:
Սև հացեն նստըցնել—դժբախտ դրության հասցնել:
Սև նո̈ւր մաղել:

Վազ տվող նո̈ւրը կյետեն կհսնե:

Վազ տվող փռնող:
Վալը յրան (նախշը յրան)·
Վախը դա՞նգ ա:
Վեզը ծոռ—կարիֆավոր:
Վեղեն հրթնոթունը—հողը, ինչպես հարսը, լավ խնամեցիր, բարիֆ կտա:
Վեղը հայինն ա, հայը՝ վեղենը (հիշտեղ էլ ֆյընիս):
Վեղը (վարը) նալի յա—անհրաժեշտ ֆանակով սերմացու չէ ցանված:
Վեղը նրա նմանը ծնալ չի:
Վեղը ֆախծր ա, ծիֆ ա տամ պո̈ւրո̈ւմ:
Վեննանը մինը առաչ տնիլ, մինը՝ դքետ—ա) կովի պատրաստվել, բ) տեղը ամուր կանգնել:
Վեննանը յրա շուրանալ—հոգսից հետզհետե մարել, հյուծվել:
Վեննան թիթև, կլխան թիթև:
Վենները գյուլքա յա կյործում—ծանր բեռան տակ է գտնվում:
Վենները չդարած—կաշկանդված:
Վեններս տակես ճինչեխ ա ածում:
Վեննը դքառաչ տնիլ—կարգը խանգարել:
Վենն ըլա̈ծ տավար:
Վեննը ծանդր—հղի:
Վեննը կաղլեգ ախնիգ բդա̈ր—վատ, անարժան տղային:
Վեննը կարճ—ուժասպակաս, կարողությունները ֆիչ:
Վեննը ղաչաղ—փախչելու, գնալու մտադրություն ունեցող:
Վեննը ղեղան:
Վեննը վեննավն ընգնեիս—ա) սոված, բ) անզոր, հիվանդ, տըկար:
Վեչ առաչինն ա, վեչ վերչինը:
Վեչ զա̈րգյար ա, վեչ դո̈ւրգա̈ր:
Վեչ էշ ա, վեչ նո̈րե. էշու նման խեղճ ա, նո̈րու նման կոխկին ա:
Վեչ իմ մար ա կարալ, վեչ ես ըմ առալ:
Վեչ ըլա̈ծ, վեչ տեսած:
Վեչ խելֆ օնե, վեչ՝ դա̈րդ:
Վեչ խոսֆավ ա ըսելի, վեչ աշկավ տսնալի, վեչ ընգունավ սկըռնալի, վեչ էլ սրտեն հասրաթը կարող ա նա հսնե:
Վեչ կաս, փուչ կաս (վեչ ընիս, փոչ ընիս):
Վեչ կուռներեն ղվաթն ա պկասալ, վեչ ըշկերեն լուսը:
Վեչ հան ա գիդում, վեչ՝ չեն:

Վեշ մին պեն ծերքան պրծնում չի, քարան փոնե՝ կկնանչի։
Վեշ շանան ըմ վախում, վեշ չուբանան։
Վեշ Սայի յա, վեշ Մուսայի։
Վեշ սրըցե ընք, վեշ՝ չուլըցե։
Վեշ վախե, վեշ վախը սրտադ քցի։
Վեշ տայիս ա քաշվում, վեշ՝ ուզիյիս։
Վեշ տանն ա փսնում, վեշ՝ տռա̈նը։
Վեշ փող օնե, վեշ պարտք։
Վեշ քուր ա, վեշ՝ քռակեն—հարազատ չէ։
Վեշ օզում ա, վեշ՝ տամ, վեշ տոռն ա պենում, վեշ տոռն ա ծածկում։
Վեռան ճղըցաքար կախ տված—ծանրաշարժ։
Վեսկե էվլավ սրփա̈ծ—մաքրամաքուր։
Վեսկեն չոփավ պրանում չի։
Վեսկեն վեսկավ վսկընրիլ։
Վեսկեռը մսում—զեր, առողջ։
Վեսկեռը տո̈ւզնը—տևական սովածություն քաշած։
Վետած նո̈ւր—վատամիտ։
Վետն ու հետը կուրցնել։
Վեր ածել, եր ածել—գրել, ցաքուցրիվ անել։
Վննըհան ընիլ—շատ ման գալուց ոտնամանները քրքրել, *փխբ.* հոգնել։
Վննըվենն ընիլ—ա) քայլել սովորել, բ) կազդուրվել, ոտքի կանգնել։
Վոըկլխան յրան ածել—տակից-գլխից խոսել։
Վոըկլոխ անել—գործը վերջացնելու վրա լինել։
Վոըշոտուն ըղնել—երերուն վիճակում լինել։
Վոըվեռ քյընիլ—հակառակ գնալ, դեպի ետ գնալ։
Վսվսոնը եր անել—ցավեցնել, ցավ պատճառել։
Վրըվո̈ւրդ անել—փնտրել, գննել, հետազոտել։
Վրքզի տալ—ցատկոտել, խաղալ։

Տական նամ յոր օնել—կասկածել, չվստահել։
Տական նի կենալ—վառվել, զայրանալ։
Տական տուս կյալ—դժվար կացությունից դուրս գալ։
Տակավը սել քյընիլ—եկամտի աղբյուր ունենալ։
Տակավն անել—ծածկել, հետքերը կորցնել։
Տակը թրշիլ—վախենալ։

Տակը կապել—կաշառել:
Տանալն ածել—ա) տան արու զավակին ամուսնացնել, բ) տան անդամների ջանքերը օջախի շենացմանն ուղղել:
Տանը ծուխը եր տանել—տունը շենացնել, հայրական տան ավանդույթները շարունակել:
Տանը ծուխը կտրցնել—հայրական տունը լքել:
Տաշշի գդըլ անել—ա) հարսանիք անել, բ) քեֆ անել, ուրախանալ:
Տաշ-տաշ անել—գրգռել, կրքեր բորբոքել:
Տապո անել—կուչ գալ, թաքնվել:
Տավարը վեռան մորթել—ներհակ գործ բռնել:
Տավար տեռնալ—հոգնել, ուժահատվել:
Տարարամ պցրցնել—աղմկել, ոչնչից աղմուկ բարձրացնել:
Տարբեր ընիլ (տարբեր օնե)—նիշտ չկշռել, տարբերություն լինել:
Տարուն հախկան քցիլ—խանգարել, վնասել մեկին:
Տափերը չնգռոտել—գետինը ճանկռոտել, աղերսագին աղաչել աստծուն:
Տափերը պուք տալ—փնտրել, որոնել, մեկ-մեկ անել:
Տանձ ըսեխս—հիվանդ:
Տարա, տարա...—հազիվ թե... (ասվում է ծաղրական տոնով):
Տարեն խոնըխառն ա, կյողը ամեն հինչին տարն ա:
Տափեն տական փսնել—հանկարծ հայտնվել:
Տափը ծակալ ա, նի մտալ—կորել է, չի գտնվում:
Տափը տեղ չի տամ, թա նստիմ:
Տաք չի, գիդում ըս, թա ցորտ ա:
Տեզ կոխած դանա:
Տեղ գիդող:
Տեղը հöրզակ—ապրուստը լավ:
Տեղը փափուկ քշրպղոճ—գիշերը չքնող երեխային:
Տենակը վսկեռեն տեմ ա ընգալ:
Տենակ թխիս, արüն չի կաթել:
Տեռած շոն:
Տեսալ ա ըրեսեն կակող յշիյիս:
Տեսածեն հվատում չի (ըշկերեն հվատում չի)—զարմանալի, չտեսնված բան:
Տերտակ կարաս:

Տերտակ մհակեն շոն չի հաչում—առանց կաշառք գործը չի հաջողվում:
Տեփը ճղած ղավալ—աշխույժ, հումորով մարդ:
Տզան մազ խոզող:
Տի մարթ չի ընիլ, վեր դո̈ւշման չընի:
Տի յա, վեր խյարը ծոռ ա փսնում:
Տկարեն խելքը յա ըլած, յա՝ չէ:
Տկռհան ըրած ծառ—ցեղը, տոհմը ոչնչացրած:
Տղան լա̈ց չի ընում, ախնիզը ճաքվում չի:
Տղըմարթին հաչա̈թը սոր բդի, ծերքը պենդ:
Տղըրնես ցուրտից:
Տմբրված գյրեգի:
Տեր աստված, տվեր տու:
Տնավեր՝ սրտավեր:
— Տոմբալանու նուբար, տոնդ խե՞ թանգ ըս ծախում:
— Մինակ տոնս չըմ ծախում, հարևանս էլ ըմ ննետը տամ:
Տոնը մին մազու վա կապալ:
Տոնը փարչ անել—տան հատակն ու պատերը գորգերով ծածկել:
Տոնգոնը եր ա ընում:
Տրմա̈նու տակավ քյընող նո̈ւր:
Տրտա̈կավ լիգյը:
Տու ասե, քամեն տանե:
Տու իմ սազանս ըս—իմ կամակատարը:
Տո̈ւ պրծած—անբարոյական:
Տու վեր աղվես ընիս, քեզ թլակավ փռնըրվել չի:
Տու քու ննգլըմըդ ածե:

Ցամաք կյետը քեզ քշի:
Ցավա, շոռա տո̈ւ չընք կյամ:
Ցավավ աշխարք ընք եկալ, ցավավ էլ կքյընինք:
Ցա̈քի փոշ—բնավորությամբ կոշտ:
Ցեխ օրու մհակ—հույս:
Ցևքան վեր ընգել—անել վիճակում լինել:

Ուրան կլխու—ինքնուրույն:
Ուրան պլիթին կյին տնող:
Ուրան տո̈ւ ըրած կնանեքն ըն:
Ուրան քոշը քշիլ:
Ուրիշի պո̈ւնըկալու յրա ծո̈ւ ածող:

Ունքրմաշան աղուն կաքում ա:
Ունքամաշըն եա չի քյընում, կարում չի, թա աչկեն մաշը պենա:

Փաղի դեզյուն:
Փաղի կյուշս կլեկե—ստիպել կատարելու անկարելին:
Փաղի շներ կշինի:
Փաղի տուտուղ:
Փաղը վեռավը կալած (նառ)—ուժեղ, հսկա:
Փախրը պեց անել:
Փաղաղը մարթին սրտան ա կենում, էլ պուք չի կյամ:
Փայը կյետը քշած:
Փայը շատ—հոգսաշատ, ցավաշատ:
Փայ հվըքելավ կպանիմ:
Փայումս կա վուշ:
Փարսանգ օնե—ֆիզիկական թերություն ունի:
Փեշկավ սրփած խնձոր:
Փեշկերքը վեսկե—աշխատասեր:
Փեշկերքն էլ ա պել:
Փեշկերքն էլ ա ռազի:
Փեյնու մաշի փսած կյարի—փարթամ:
Փլանեն մաշը վեր ածել:
Փող օնե, կացեն կտրել չի:
Փոշ ընի հաշն ու բիշին, քցովի շային ննետ խե լյմվ ա ընում—
կենցաղային հասարակ ցանկությունները անգամ չեն իրականացվում:
Փռացավդ հի՞նչ ա:
Փռավը շվան չի պատ կյամ—շաղ, գեր:
Փոըը կլխան պեցիր:
Փոըը ղաժավ լիզյը—նախանձ, չարակամ մարդ:
Փշիս՝ վեր կընզնե—անուժ, տկար:
Փսոքուն կա, լվոքուն ա տեռնում:

Քամակը տանիս, առաշը գիդալ չի:
Քամավ ընգած—գիժ:
Քամե ննետ տվող—սուտասան:
Քամեն փոխվալ ա:
Քամե տաս, կտանե—նիհար:
Քանե էշը կաշվին ա:
Քաշերը սև ըն կյննական—(ասվում է ծաղրով):

Քաշը հիշքան լղանա, յղոնեզ չի տեռնալ:
Քաշը քարեն ըս տրա̈՞լ (հարցականով):
Քաշին կատարը էրում ա—սաստիկ շոգ է:
Քաշին պոզին, էն ա քաշին պոզին—ասվում է հանաքով:
Քաշ խոսե, վե սկընողեն ընգունումը մղըրե:
Քաշ կտկոտած տանձ—ա) պեպենոտ դեմք, բ) համով, անուշ պտուղ:
Քաշկու հրսանեք:
Քաշու նման յրա տվավ տարավ:
Քաշու չնգերա վեր ընգած:
Քաչալ խաբա:
Քաչալ ղուզղուն—փորձառու:
Քաչալ փողավ ապրող—կողմնակի եկամուտ չունեցող:
Քառասուն ախպեր-օխտը ախպեր—ակնարկում է հայոց հարսանքի մականներին, որոնք հեքիաթի յոթ եղբոր պես սիրով միաբանված են:
Քարա կտրած—ամուր, քաջառողջ:
Քարան կակող հինչու հալ ա կյամ, կեր:
Քարավ մհակ կտրել—դժվար գործ կատարել:
Քարավ քարզու անել—մի կերպ հաշողեցնել:
Քարեն մեծը կլոխն ըղնել—ավերվել, քանդվել, արտակարգ բան կատարվել:
Քարե սանդ—անդրդվելի, հաստակող, անսասան մարդ:
Քարեն տակեն տնիս, կապրե:
Քարեն քացի տալով ապրում ընք:
Քարը գյոլեն կյալ:
Քարը թող ըրած ա:
Քարը թուլ տո, հետան եշի—ո՞վ իմանա, ինչ ընթացք կստանա օրը:
Քարը կապեն տեմ ըղնել:
Քարը հոփ տա, նուր կկաթե—ուժեղ, երիտասարդ:
Քարը քարեն կերավ—սոված:
Քարու կես ա—ժլատ:
Քեթը յրգինքումը—գոռոզ, չմահավան:
Քեթս վեր քյսիբու կավ ընար, մհե ցմաքալ ար:
Քյեցե տեսե կոթը տեղն ա, թաթը տեղը չի:
Քեփդ ա լավ, թա՞ հա̈լդ:
Քթե կավ—եկամտի աղբյուր:

Քթեն պտկեն վեր եկած:
Քլլած սանդող:
Քմակես նստում ա, թա բռաշաս եր կաց:
Քյառանը Քյուտա՞ն ըս բրալ:
Քյեցած, եա եկած կյարի:
Քյրնիխ հանց ա քամե:
Քյոհնա տերման քամուն տալ:
Քյոհնա կյուլ:
Քյոմուրդան մի քիչ թուխթուխենե յա:
Քյսիրին խոսքեն եշող չկա, քյասիր տոռնը պենող չկա:
Քյուխեն շտմնավը հաց օտող:
Քյստեն մկրատը:
Քյուտը մորդ ա ըլմ, խե՞ նամորդ ա տեռալ:
Քյուտը մին վայ բալա յա ծեն տամ, մին՝ վայ մամա:
Քյուտը վըրըրցընել—անարդյունք ջանքեր գործադրել:
Քյուտը փրփրալ ա, Կարկառը՝ վրարալ:
Քնձոռտ դանա (քոստտ դանա):
Քնու եսիր—քնասեր:
Քշերես բրազի, խոզերը վրազի:
Քշերը քոն չօնիմ, ցիրեկը՝ դարար:
Քշտես մուղալլախ շտաս—ինձ չես կարող խաբել:
Քոլերն էլ ա նռում:
Քոն տեղը ծարավ (հի՞նչ գիդանք, թա քոն տեղդ ծարավ ըս):
Քոն ըլմծ տեղը աշկեն մին հաց տնիլ, կապել (աշքածակին):
Քոն իլ, եր կաց, բախտ օզի:
Քոշա եա ընգած վեխնար:
Քոշին մաշին շխարակ մանել:
Քոռան շիլը լավ չի՞:
Քոռ տնմկավ մորթել—տանջել, չարչարել:
Քոռ ուզողու մնակ—անկայուն, եռեռուն վինակ:
Քոր յոր օնող—ցանկասեր, ամենքի հետ համարվող:
Քոփսը կերած կյումաշ:
Քսիրու խորազ (փիթոկ)—հեշտ ստացվող գործ:
Քրիստոսա մեխեն թխել:
Քրիստոսա տոխեր—ջանել հայ աղջիկներ:
Քրիստոսն էլ նրա նման չի ըլմլ—անարատ, մաքուր, պատվաներ:
Քրծըյեր խոսող:

Քրտնոնքս Քյոռ ա տեռալ, քյեցալ:
Քու հոր հացան կերա՞լ ըմ:
Քու հոր փա̈նյա՞ն ըմ:
Քու նոթդ օրիշ նոթա յա, քու տապակդ օրիշ տապակ ա.
Քու մար քմակեդ քեզ նման մինը պերալ ա:
Քու տարը խաղա:
Քու՝ ցիրեկվա շոռ եկած տեղերդ, ես քշերն ըմ շոռ կյամ:
Քու քյեցած հըղցավդ ես քյընիլ չըմ—հատկանշում է ատելությունը մեկի նկատմամբ:

Օթի օրփաթ:
Օժդ էլ հի՞նչ ա եխնում:
Օխծանշու թորբա—կեղտոտ, կեղտաշատ (հագուստ, իր):
Օխծին պրա̈նումը աղու կմզի:
Օխծը կծածեն քոն եկու, ինձ քոն չի եկու:
Օխծու ոխավ քաշած—հոյակապ, արվեստի գործ:
Օխծու ոխե մզիս, կտակե—սաստիկ կեղտոտ հագուստ:
Օխտը արև ա տո̈ւս եկալ—պարզկա, պայծառ օր:
Օխտը թիքին կեսը—շատ, մեծ բաժին:
Օխտը թլակա պրծած—խորամանկ, փորձառու:
Օխտը կաշի մաշկել:
Օխտը կերած, օխտը կյոտեն կապած (հանցըմ)—լիասիրտ, քըշով բավարարվող:
Օխտը կլո̈խ պեցուր:
Օխտը հարսեներ սև սիրեկը—անասունի թափանը. ակնարկում է մաքրելու, պիտանի դարձնելու դժվարությունը:
Օխտը նրա̈վ լվացած:
Օխտը մաղավ հաց կերած:
Օխտը պորտը պտռել:
Օխտը պորտոմը ընիլ (չընիլ):
Օխտը սարու, օխտը քոլու քմակե—հեռու, անհայտ վայրում:
Օխտը քըրվանե—կաղամբ:
Օխտը քոլու կլխավ լոք տալ—ակնարկվում է ջահելությունը:
Օխտը քրանե նեղաց—աշխատասեր:
Օղտեն անգունումը քոն:
Օնքերը շինալ ա բխկալու կշեռք—մռայլ, տխուր, անտրամադիր:
Օնքը փոտ ըղնել (օնքդ փոտ չի քցիս):
Օշն օնել բդի Պառակը—խռովել, արհամարհել, հետը չխոսել:

Օսը լուծ թակած։
Օտելս կյամ չի, խմելս կյամ չի, դնչոթուն չօնիմ։
Օրեկանը տրեկան տեռնալ—արագ մեծանալ։
Օրեն՝ էֆսին մöհտաչ—օրն ապրում ես հաչորդ լավ օրվա ակըն-
կալիֆով։
Օրեն հացեն կարոտ։
Օրերը կաֆավ տեռեն, թոչեցեն, ես մնացե ծöռումը—ծերանալ,
ջահելությունը կորցնել։
Օրը քտծունն ա, պա մունֆ հö°ւրն ընֆ։
Օրը լաց ա ընում—ամպոտ, անձրևոտ։
Օրը կյա, պարին ննետը։
Օրը պռավալ ա։
Օրըրնես լäվ տեղ չի մթնից։
Օրն անել, օրն օտել։
Օրն օրեն ծխելավ, օրն օրեն բադա տալäվ։
Օրս տանե, անումը տնիմ տարե։

# ՄԱՀԱՆԱԼՈՒ ԻՄԱՍՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՂ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխարքը մեզ թափշուր ըրավ, քյընից:
Աշկերը կոլ քյընից:
Աշկերը հավիտյանս հավիտենից կապից:
Աշկերը ճոփ կալավ, էլ պենալ չի...
Աստխը ծլլաց:
Աստխը հäնգից:
Աստուծ գյանքը խլից:
Աստուծ հուքյին ինք կալäվ:
Աստուծ տվածը տարավ:
Արևը խվարից (երիտասարդներին):
Գյոռբագյոռ տեռավ (վատ մարդուն):
Եր ճմբարցվից:
Էն ա հինչ քյընից:
Ըրկովննանե կյուլու փայ տեռավ (անասուններին):
Կլխըվեր քյընից (վատ մարդուն):
Կյրողեն պաժին տեռավ:
Հոքոց-հանգուցելոց տեռավ:
Հվըսարվից հարուր տարվա մոլներեն:
Հուքյին ավանդից:
Հուքյին ըստծու բախշից:
Հսավ ըռավալը:
Հոթքը փչից:
Ճռաք տեռավ, հäնգից:
Ճռաքյու նման հäնգից:
Մեզ թողից քյընից:
Մեռավ, ըշխարքաս պրծավ:
Մին հափուռ վեղեն արժան տեռավ:



17—777

Շան-կյոլու փայ տեռավ (անհայտ վայրերում մեռած մարդուն կամ կորած անասունին)։
Շունչը փչից։
Ջանան եր կպեցեն։
Թաղ ըլավ, կորավ (վատ մարդուն)։
Սաղանան ճուխյին կալավ։
Ստակից, պրծավ (վատ մարդուն)։
Վեղը խտտից։
Վեներըը մեկնից (մտակից)։
Վե՛չ տեռավ (փուչացավ)։
Տափը թումբ ըրավ։
Ումբուրը բախչից չանեյներեն։
Ուրան փայը եր կալավ, ֆյընից։
Փայը մին ճափոտ վեղն ար։
Քյեցավ էն աշխարը։
Քյեցավ երգինք։
Քյեցավ ծրուսաղեմ։
Քյեցավ ընդեղ, վեր ֆյընողը էլ ետ չի կյամ։
Քյեցավ ըստծու կոշտը։
Քյեցավ մթեն աշխարը։
Քյեցավ սաղանեն ըշկըլի՛սանք։
Քյեցավ սաղանեն ճիտը։
Քյեցավ, վեղ տեռնա։
Քյեցավ ուրան հիմնական տոնը։
Եվ եւս տեռավ։

## ԽՐԱՏ, ՍՊԱՌՆԱԼԻՔ, ԵՐԴՈՒՄ, ՅԱՆԿՈՒԹՑՈՒՆ ԵՎ ԱՅԼՆ

Աղավ ըղնիս, մին ճրա ճեռե տեղ։
Անեծքս տափը չի ըղնում։
Աշկերդ տե՛ս կօնիմ, տնիմ ճափռումդ։

Աստծու մննան ընգած, աստվածանից մոռացած:
Աստված իմ կյուրծվածքավս ինձ տա, քու կյուրծվածքավդ՝ քեզ:
Աստված ողորմա հին ու նոր գերեզմանների հանգուցյալներին:
Աստված ուղուրմը տնի մարթին սրտումը:
Աստուծ վեչ անե, վեր...
Աստուծ, քյասիբ-քյուսբա կտրիս, մեզ տաս, նահանք քյասիբ կացած սվեր ըն, տեմ կկենան, մունք կարում չընք տմահանք:
Ատակ իլ:
Արթար չափե, արթար կտրե:
Էն ըրիքնակը...
Էն Նահատակը...
Էս հի՞նչ աշխար ա, մարթ լո̈ւսն ու մթենը կարում չի ո̈ւրո̈ւր անա նոկե:
Ընգուենդ քամակը տես:
Ըստուծեն խեր խբարը քեզ:
Ըստուծեն կրակը կլխես վեր ա ածալ:
Ըրեսես ընգած, ղաչանք ըմ անում:
Ըրևեն լուսը վեչ տեսնամ, ըրևեն ծաքյին կարոտ մնամ, թա սոտ ասիմ:
Թա ինձ հվատաս, աստուծ էլ քեզ հվատա:
Թա սոտ ասիմ, ծեր (ձեր) մեխքեն տրճնամ:
Թա սոտ ասիմ, տափը թումբ անիմ:
Թիվը պար ա սիրում, ա վերթի, պար կյալը սվերե, ծափ տալը... Հանցու վեր կարիս ուչ ամեն հվավ պար կյաս՝ կարիս ամեն հվլու ննետ ծափ տաս:
Թուփումս, ծուպումս վեչ ընի...
Իմ իրեսս քու վեննանդ տակը...
Լավ ա նեղութուն քաշիս պարզիրես մնաս, քանց չանտղոթուն անիս, անպատեվ տեռնաս:
Լիթ-լղե կոլ տալ—երդվել:
Լո̈ւզուս չուրանա...
Խելքեդ աղ անիմ:
Ծաղկու նման պեցվե, բար տա, միշտ կննչկյրմուրու տակե: Կլխեն ծածկոցը կննչկյարմուր ընի:
Ծեզ լուխնին մին պտանում տնիմ, լավ մարթին տեղն էլ հրզակե, ըստծունն էլ:

Ծեծաղը բրեսեդ պանի, ցռոըվերվիս ուշ, սերող լեն պանի, եղըվերվիս ուշ:
Կածծիմ, աշկդ նառ կըղնե:
Կածծիմ, զկռնառ կկյաս:
Կածծիմ, լեմերդ փորդ անիմ:
Կածծիմ, լիրկերերդ նի անիմ:
Կածծիմ, կղնիս Հեյիխոն:
Կածծիմ, կղնիս Սինզապուր:
Կածծիմ, մկլավեռդ եր անիմ:
Կածծիմ, մշկածու վեր կfըցիս:
Կածծիմ, մռակիմ:
Կածծիմ, պլկանդ թոշավդ կղնե:
Կածծիմ, ուշընան կնիս, եր կենաս տեսնաս թոթը նսած:
Կածծիմ, fու նոր նրսանեfը մեննդ կղնե:
Կածծիմ, fամակդ կծըկրակ կանե:
Կլոխդ պեցիր պանե, սերոդ արխային:
Կլոխդ պառավն ըս եկալ:
Կկծիմ, տափեն կյամ:
Կյումաշը շոfած կենալ շի, շուfելին էլ եր կենալ կա, եղըվերվիս ուշ, մնենզ շոfալ ըս, էfուծ պցրննակռն ըս:
Կոնանամ fզանա (Ազ. «Գոնանամ զfեն»):
Կուռներդ վեր տեռնա (երեխա ծեծողին):
Հանց բեդար ըշխարfումս նավfը խաղ անար, մարթը կոռծ անար, վեշ նավեն կուփին, վեշ մարթին խնզըրին:
Հանց ըրա, մարթու վայիս շի տեռնաս:
Հանց կանիմ՝ fու նոր նրսանեfը մեննդ կղնե:
Հինշու ըրալ ըս, լոխ fեզ ուռըցննակռն ըմ:
Հոfիդ տերտակ պանի, պանեսոդ (բաժակդ) լիզյը:
Հոfուդ մեխf շանիս:
Հըրվըննոթուն կանին, բայց նըրվանան թամսն շըն անել:
Հու վեր սաղ ա, պարդավեր ա ապրե:
Հու վեր ուրիշի fռոնոնf ա օռում, մարսել շի, fըըծկերավը վեր կածե:
Հուրնու ընի՝ տա վուշ, էրի՝ իրեսը fսե:
Հուրնու ընի, տա վուշ, վեշ պնըցնե:
Ճար օնիս, կլխեդ ըրա:
Ճոթդ ննանշի:
Ճոխադ մդարե:

Մարթիս ճանապարհ էրկան ընի, չոru անգյունը՝ կանանչ։
Մեծեն պադել բru, պծինին՝ fյոմագ։
Մեծ պատառդ անգուեդ կմնա (հանց տափեն կկյամ)։
Մեռնիս ուչ, խեղն ըս։
Մեռալ չի, արթար ղուշու նման եrգինf ա թռչալ։
Մթնում ա՝ fոն իլ, լուսանում ա՝ եr կաց։
Միան տեrան ըմ օզում։
Մrմնչավ ըղնիս տու։
Նեrակ ինձ, վեr ննգեru տու վըս։
Շնorfդ էլ շատանա։
Ողormի մոնողանց, ապրին սաղեrը։
Ձorը (մինչև) Նահատակը չfըշnf fյընիմ, թա ըստեղ սուու կըցան ընի։
Պա՛, կորածդ տոն կյա։
Պա՛, fու մեռալդ շվշվա։
Պեrանդ հանց ա շան լկաման։
Պլorը պկաս կենա...
Ջանդ fո՞r ա կյամ։
Ռեխդ կrակ ըղնե։
Սադանեն անգուեը խուլ։
Սոտ ըսողեն սոտ ասել մ՚էr սվrգընել։
Սո՞րփի ութռանա։
Սrտեդ ընձարա ըղնե, լո՞ւզվեդ՝ fզարա։
Սrտեդ սrտումդ մնա։
Սrտենս fուլեrեն ըղնե, լո՞ւզվենս ընձարա։
Վախե լղարան, փախեr ճղարան։
Վարսդ կտrիմ։
Վեննանդ տակեն թոզը բդի։
Վեննս կոտrե...
Վեr fար մեծ ա, կլոխդ զիrավ եկ։
Տեսնանf հո՞ւr մար տղա կպիrի։
Տու վեr խոսում ըս, (fեզ վեr տեսնում ըմ) կյուղին մորթեն նիտս ա ըղնում, կատուն մաշկս չնգոտում ա, մrոfուrս տուս ա տամ։
Ուrթո՞ւմնանաf ընիլ (նաf–նաf ընիլ)։
Քարեն մինը տակեն տիr, մինը՝ կլխեն—գorծը փակիr, հաշտվիr։
Քեզ ախնիզ տվողեն...

Քեզ տանողեն...
Քիչ ընինք, փոնչ ընինք:
Քռացած բդի, էս պենը սկացած չըդի, քուռացած բդի, էս պենը տեսած չըիդի:
Քու գիդայիսդ ես կնոխե ըմ մննաս քցäլ:
Քու իրեսդ իմ վեննանս տակր... (բառախաղ է, փոխանակ ասելու՝ «Իմ իրեսս քու վեննանդ տակր»):
Քու հüր ապրե...
Քու հղե ընողեն... (Քեզ հարս ուղարկողին...)
Օջախդ չեն պահե, վեր ցավը տեն կենա:
Օրս (օրդ) կտրվե:
Օրվան հացեն կարոտ մնամ, թա սոտ ասիմ:

## ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐ

Աբուռը տանա անել—ունեցածով բավարարվել, փոխ. չվերցնել:
Աթաշան կտրել—քնել:
Ալեգ անել—անկարգ, վատ գործ բռնել:
Ալի-Մուսի անել—չարչարվել, դես-դեն ընկնել՝ ապրելու համար:
Ախե անել (ախե-ախե անել)—հոռանչել, փոխ.—հոգնել, ձանձրանալ:
Ախծան հնցնել—խիստ ծարավել:
Ախ-վիշ անել—հառաչել, վշտանալ, ափսոսալ:
Ախուս անել—լռեցնել (երեխային):
Ածեգ անել—ածիկ պատրաստել:
Ածեգ տեռնալ—կպչուն հատկություն ձեռք բերել, փոխ. կպչել, մարդուց ձեռք չքաշել՝ հակառակ նրա ցանկության:
Ակեն կենալ—կարգին մնալ, փոխ. մաքուր կենցաղով ապրել:
Ակը տալ—փնտրել, ստուգել:
Ակնահան անել—սայլի ակը հանել:
Ակնահան ընիլ—գործածությունից դուրս գալ:
Ակնահավաք ընիլ—կոտորվել (թռչուններին):
Աղատը եր քաղել—ցանկությունը, եռանդը կորչել:
Աղնաղազ անել—ա) տարվա ցորենից (նոր բերքից) այլուր անել՝ փորձելու համար, բ) մինչև ճաշը թեթևակի ուտել:
Աղվեսութուն անել—խորամանկել:
Աղր-բաղր յոր օնել—մեռելը պատվով, շուքով թաղել:

Աղունացը վեր ածել—ապերախտ գտնվել:
Աղու յրա քյրնիլ—ա) բնազդով գնալ, բ) արագ գնալ:
Աղու ուտեցնել—տանջել, չարչարել, դառնություն պատճառել:
Ամագյը ճöւրը տեռնալ—տքնանքը կորչել:
Ամöղ կյալ—ա) անել, մեծանալ, բ) գործը հաջողվել:
Ամբարը պեն չրղնել—տարին չբեր, անբերրի լինել:
Այիբ չընիլ—անթերի լինել:
Անգաղար խոսել—խոսել ոչ կատարյալ:
Անգյուն ընիլ—կողմնակիցներ, պաշտպաններ ունենալ:
Անգունը ծենու պահել—ուշադիր լինել դրսի ձայներին, կանչի սպասել, փոխ. անհանգիստ լինել:
Անգունը ծնել—ականջը հիվանդանալ, փոխ. հանգիստ չլինել:
Անգունը կտրել—նշան դնել, նշանել (տղային):
Անգունը հլöրել—ականջը ոլորել, փոխ. պատժել, հանդիմանել:
Անգունը տանել—շատախոսությամբ հոգնեցնել, ձանձրացնել:
Անգունը տաք պահել—շարունակ հիշեցնել:
Անգունը քոrել—խորամանկել, հեգնել:
Անգուն օնել—ա) լսել, ունկնդրել, բ) հնազանդվել, ասածը կատարել:
Անդոհն ընգնել—ընկղմվել ծանր խոհերի մեջ:
Անտակ ծվեն տակն ըղնել—ծանր խոհերի, մտածմունքների մեջ լինել:
Անում անել—գործ սկսել (բայց չանել):
Անումը բեղնամ անել—անունը խայտառակել:
Անում ընիլ—հանրահանաչ լինել:
Անումը սևացնել—վարկաբեկել (մեկին):
Աննöւր նեղաց (նրատված նեղաց):
Անհամ, անլüզüթ մարթ:
Անհամ-նալի—անհրապույր, ձանձրալի մարդ:
Անպոզ տավար—հիմար, ոգետ, անհասկացող:
Անջախ-անջախ տարանինա—վերջապես եղավ սպասված ուրախությունը:
Անվետ վարթ—անհրապույր մարդ:
Անտանգ չվալ—ասում են չար մարդուն:
Անտաշ կամնը—կոպիտ, անկիրթ:
Անկոթ տենակ:
Անկրակ պեղարն—մեղր:
Անհամ շիլանաշ—անհրապույր մարդ:

Անտենակ մորթել—տանջահար անել:
Անքենը քննած—խելոք:
Անքոն-անդարար (ընիլ):
Աշան անել—խուրձը կալում գրել՝ կալսելու համար, փոխ. իրերն անկարգորեն թափել, գրել:
Աշկա ըղնել—յաշաց ելանել, հեղինակազրկվել, արժեքազրկվել:
Աշկան աղու կաթել—շատ տխուր, անտրամադիր լինել:
Աշկա տուս մնալ—աննկատ լինել, չնկատվել:
Աշկեն բարագյումը տնիլ—կորցնել (մի բան):
Աշկեն գյուլը քաշիլ (գյուլը քաշիլ)—ծաղկաքաղ անել, ընտրել:
Աշկեն թոզ փչիլ—խաբել:
Աշկեն փիս թվալ—ատելի լինել, ատելի դառնալ:
Աշխարքս յըտըվերտի յա:
Աշխարքս իրենը—ուրախ (անսահման գոհ):
Աշխարքս քու կլխեդ մատաղ կանիմ, թա ծերքես ընի:
Աշ ըղնել—սաստիկ շոգել:
Աշկա ընգած:
Աշկա հեռե, սրտա հեռե:
Աշկան դաղած պել:
Աշկան տոպ չի կաթում:
Աշկավ աշկը չօնե, թա եշի:
Աշկդ հանա՞լ ըմ, տեղդ վարա՞լ ըմ:
Աշկեդ չոփ կտրա—գործից ուշացողին:
Աշկեն եղը քաշած ա պահում:
Աշկեն ըրվալ—ա) ծեծել, սպառնալ, բ) տեսության գնալ մեկին:
Աշկեն թքած տեն ըրած:
Աշկեն իշեղը կալած:
Աշկեն լա̈վ շըրվալ—իրեն լավ չդրսևորել:
Աշկես մինը լա̈ց, մինը ծեծաղ:
Աշկերը արուն կոխել—կատաղել, չարանալ:
Աշկերը լցնվել—զգացվել, արտասվել:
Աշկեն մոխեր փչիլ—խաբել:
Աշկերը կապել—նույնն է՝ աշկեն մոխեր փչիլ, մոլորեցնել:
Աշկերը կոլ քյընիլ—մահամերձ լինել, մահանալ:
Աշկերը հլո̈րել—զգուշացնել:
Աշկերը ճիպի-ճիպի անել—աչքերն արագ թարթել, փոխ. շփոթվել:
Աշկերը չռել—զարմանալ, ապշել:

Աշկերը պեց մնալ—ագահ լինել:
Աշկ ընկնել—հասունանալ սկսել, փոխ. հասարակության մեջ դիրք գրավել:
Աշկը թակել—աչքի մեջ ծեղ լինել, ցավել:
Աշկը խաղալ—ա) աչքի կոպերը շարժվել, բ) սնոտի սովորության համաձայն որպես բարի կամ չար բան կատարվելու նախանշան:
Աշկը հատ ընկնել—աչքը հիվանդանալ:
Աշկը հղե ընկնել—կարոտել, սպասել մեկին:
Աշկը հոփ օնել—քնել, ննջել:
Աշկը շոռ ածել—գեղեցիկ, դուրեկան կին փնտրել:
Աշկը օրիշ պեն չտեսնալ—մեկի մասին մտահոգվելով՝ մոռանալ մյուսներին:
Աշկը վեննանը տակը քցիլ—ամաչել:
Աշկը տեղան տուս կյա̈լ—ա) սաստիկ ցավել, բ) աչքը խաղալ:
Աշկը փռնել—սիրահարվել, սիրել, հավանել մեկին:
Աշկը փսոր ընկնել—փոքր ձախորդություն ունենալ:
Աշկը օտել—իր ուժին գերակշռություն տալ, ուժին վստահել:
Աշկը պեց անել—նոր-նոր հասկանալ, գիտակցել:
Աշկու առաչ օնել—նկատի ունենալ, հաշվի առնել:
Աշկու տակավ անցկցնել—հետևել, փնտրել:
Աչուքը վեչ մին պեն չկյալ:
Աչուք տալ (նույնն է՝ Աշկավ տալ)—չար աչքով նայել:
Աչքը վեչ մին պեն չտեսնալ:
Աջալը ծրավել—պատահարից չխուսափել, բախտի հովով գնալ:
Առակ տեռնալ—խայտառակվել, ծաղրի առարկա դառնալ:
Առք (ա̈րք) անել—մեկի վրա երաշխիք, վստահություն ունենալ:
Ասածը հալա̈ծ եղու տեղ ընդունել—ասածին չկասկածել, միամտությամբ հավատալ:
Ասած տեղան կտրել—ասածն անել, ասածի վրա համառել:
Ասելը քցիլ—ա) առանց ասելու՝ չհասկանալ, չանել, բ) չնորհապակաս լինել:
Աստծու աշկը յրա ընիլ—հաջողության մեջ լինել:
Աստղը ծռել—անհաջողության մատնվել:
Ատրա անել—ծեծել, ոտքի տակ տալ (հասկը):
Ատոմ անել—լցնելուց որոշ ժամանակ անց, գինու և օղու տակառների բերին՝ պակասածը լրացնել:
Արդա̈մն անել—վերընձյուղել, կազդուրվել, շաղանալ, հաջողել:

Արդու անել—ա. գարին մեծալյուր աղալ՝ որպես անասնակեր, բ. շատախոսել:

Արմունգ տալ—ծռել, արմունկած թեքվել (թեքել):

Արշա քցիլ—լույս աշխարհ բերել, ծնել, ծննդաբերել, երեխա բերել:

Արտեն գյուղը քաշիլ—հնձելու հատուկ ձև. հասկաքաղ անել, փունջ անել (առանց ծղոտի):

Արցը յրա քցիլ—ա. կողովի հիմքը հյուսել, բ. գործն սկսել, հիմնավորել:

Արուն անել—ա. մարդ սպանել, բ. հանցանք կատարել:

Արունը իփ կյալ—եռանդուն, ջահել, ավյունով լինել:

Արունը կապել—հաշտեցնել:

Արունը կլխավը տալ—սաստիկ բարկանալ, նյարդայնանալ:

Արունը տալ—զոհաբերվելու պատրաստակամություն ունենալ:

Արուն տալ—ա. արյուն կորցրած հիվանդին արյուն տալ, բ. արյուն թափել պատերազմի ժամանակ, գ. կտրել անասունների երակը՝ բուժելու նպատակով:

Արուն քցիլ—ա. մարդ սպանել, բ. մարդկանց, ազգերի, ցեղերի լարել իրար դեմ:

Արևը հանգիլ—մահանալ:

Արևը տո̈ւս կյալ—դարդերը չքանալ, վիճակը փոխվել:

Բադա տալ, բադա քյընիլ—զոհաբերել, կորցնել, կորչել:

Բախնան քաղել—ա. պտուղը հավաքել, բ. մնալ դատարկաձեռն:

Բախտեն քարավ տալ—բախտի տված հնարավորությունները չօգտագործել:

Բա̈նդ ընիլ—հանգրվանել, մի տեղ կանգ առնել, ապաստանել:

Բասխուն ըղնել—շտապել, փախչելու պատրաստվել:

Բաս մտնել—մրցել:

Բարան օնել—փակել, բանջարանոցի մուտքը ծածկել:

Բար տալ—ա. բերք տալ, պտուղ տալ, բ. սերունդ ունենալ:

Բզըր անել—ստիպել, հարկադրել:

Բդի մթենը քյընիլ—ծերանալ:

Բեհր տալ—ապրանքի գնի մի մասը վաղօրոք տալ որպես գրավական, կանխավճար տալ:

Բիզ-բիզ անել—հրահրել:

Բլբո̈ւլհան անել—պետք է լինի՝ բմբուլհան անել (թռչուններին), փոխ. ծեծել, պատառոտել, քրքրել:

Բլդըբուլդի կյալ—անհանգիստ շարժումներ անել:

Բլի-բլի անել—թոթովել:
Բլբրանդի պար ածել—շարշարել:
Բնին տոն կքանդի:
Բոլթա թակել—պարապ թափառել:
Բրբրո անել—առատության մեջ ապրել:
Բու անել—ա. բուքը փչել, սաստիկ ձմեռ լինել, բ. սոտ ասել, ծեղը գերան դարձնել:
Բուղդի կտրել—պտտվել:
Բունա անել—սկսել, հիմնավորել:
Բուսը պահել—հետևել:
Գաղտսեր անել—սիրածի հետ գաղտնի տեսակցել:
Գդըլ անել—կարճ կապել, համառոտել:
Գյազ անցկցնել—ա. կովի ստերջ մնալը, բ. ժամանակին չամուսնանալ:
Գյառ-գյառ խոսել—պարծենալ, գոռոզանալ:
Գյումանավ ասել—ասել ենթադրաբար:
Գյուլաշ տալ—աղմկել:
Դաբալըղ թխել—ծաղրել:
Դաբան անել—փախչել:
Դադ անել—գանգատվել:
Դանևան ի եր քյընիլ (դանևավը քյընիլ)—նիշտ ճանապարհով գնալ:
Դաղ-դաղ ընիլ—վշտանալ, ափսոսալ, ցավալ:
Դամաղ անել—աղքատություն ծաղրել, ունեցածով գոռոզանալ:
Դամար պրծնել—անասունների հիվանդություն. երակից արյուն հոսել:
Դանգիզը քար քցիլ—գործը խափանել:
Դան-նայ անել—մի բանի կարիք ունենալ:
Դառը պիրիլ—չարչարել:
Դավերն ընիլ—կապխեղդ լինել (լծած անասունը):
Դարդերը քամուն տալ—հոգսերը վանել:
Դարխուզ անել, պիրիլ—դժվար ճանապարհով տանել բերել:
Դբետը վեր տնիլ—նստել:
Դեռեզ ընիլ—լավ բերքի երաշխիք ունենալ:
Դլեյ-դլեյ ընելավ քյընիլ—ցավերը մտմտալով գնալ, երգելով գնալ:
Դնդենիա անել—արագացնել, շտապեցնել:

Դհնա՛ն կապել—ա. ջուրը հունից կտրել, բ. փոխ. վերևից հարցը անարդարացի լուծել, գ. ամեն ինչից զրկել:
Դնգլե տալ—ա. դնգլե խաղը խաղալ, բ. ընդհանրապես խաղալ:
Դռըդեռի խղճնել—չարչարել:
Դրդըհան ընիլ—դա՛րդը ուրիշին պատմելով թեթևանալ:
Դրյազ ածել—գերանդիով խոտ հարել:
Դուդա անել (մունթուշ անել)—խռովել (երեխային):
Դուդարն ըղնել—պահը ներկայանալ, պատեհ առիթը ներկայանալ:
Եխան ըզադել—ազատ արձակվել, պրծնել, փրկվել:
Եխան թափ տալ (հեռե կենալ)—հրաժարվել, հեռանալ:
Եխան ծերքու ընիլ—ուրիշից կախված լինել:
Եխան հվաքել—իր ցանցի մեջ գցել, չարչարել:
Եխա ճղել—մեկից բողոքավոր լինել, դժգոհ լինել:
Եխան պեց թողել—ազատ արձակվել:
Եղամնը ընիլ—ցողի սառած վիճակը՝ վաղ գարնանը ու ուշ աշնանը, փոխ. մազերը ճերմակել, ծերանալ:
Եղ փոնել—չաղանալ:
Եռու-դուքլու կորչիլ—օտարությունից ետ չգալ:
Ետ կյալ—ա. կազդուրվել (էն աշխարհից ետ գալ էս աշխարհը), բ. ամուսնաթող լինել, ետ գալ հայրական տուն:
Ետ մաշիլ—եղանակը պարզել, փոխ. տրամադրությունը բարձրանալ:
Եր-եր խաղալ—առողջ լինել, իրեն լավ զգալ:
Եր ըղնել—հանաք անել, մեկի հետ զվարճանալ:
Երմանիմ անել—ա. բռնի հողազրկել, հայրական հողը մեկից խլել՝ սեփականացնել, բ. ուրիշի տունը, ինչքը բռնագրավել:
Եր քաղել—ախորժակ գրգռել:
Զլբըզիլբա անել—պատառոտել, քրքրել:
Զընգը տալ—վերջացնել, ավարտել:
Զինքը հվաքել—ա. իրեն կարգավորել, բ. հարստանալ:
Զինքը շաղ տալ (զինքը ցրև տալ)—իրեն կորցնել:
Զինքը շղհարել—ա. ողբալ, բ. սպառնալ:
Զինքը ծուրան պահել—իրեն հավաքել, պարկեշտ պահել:
Զինքը քամուն տալ—դուրս գալ զբոսանքի:
Զիրավ ըղնել—ա. հանդիպել, պատահել մեկին, բ. անգիտակցորեն զարկվել մեկին:
Զիրավ ընիլ—զբաղվել:

Զիրավ ննցնել—տեսության գնալ, տեսակցել:

Զիրավ տալ—փաթաթվել, փաթաթել:

Զլիմ-զլիմ անել—նույնը՝ զլըրզլըրա անել:

Զնգակեն թխել—լռեցնել, ուշադրության արժանացնել:

Զոխի տալ—ա. կոխի տեսակ (նաև պար), բ. կռվել, ընդհարվել:

Զոմփաշ անել—ոսկեթելով եզրերը նախշել:

Զրըզարդարը քաշկուտ քցիլ—աներևակայելի խորամանկություն անել, փոխ. ուրախ տրամադրությունը փչացնել:

Զոռալ-կորչիլ—իր քմահաճույքին գնալ (քմահաճույքի հետևից գնալ):

Զվիր կյալ—զզվել:

Զրընգ հա զրընգ ներմել—ա. մրսելուց դողալ, ատամներն իրար զարկել, բ. վախենալ:

Զուզա տալ (զու անել)—միալար լաց լինել (երեխան):

Էծեր ընիլ—խռովկան լինել, քմահաճ լինել:

Էծ-էծ ընիլ—վախենալ:

Էյնը չքցիլ—նույնը՝ մենակ ըղնել, մոռանալ:

Էշան կյարունք հրցընել—անիմաստ հարցում անել:

Էշը ցեխան տուս օնել—դժվար հարցի լուծում, ելք գտնել:

Էշը փլանավը կոլ տալ—ա. անհետք յուրացնել, բ. ագահ, անհագուրդ լինել:

Էշը օտել ճաֆվին խռավել—մեծ գործը հաջողացնելով, վերջում ետ կանգնել:

Էշին չու ասել—վիրավորել, նեղացնել:

Էշին տունդվին տնիլ—խայտառակել, նշավակել:

Երկու վեննը մին չմչկում տնիլ—համառել:

Ըմոնացիլ անել—հնձից անմիջապես հետո կատարվող ցելը՝ խոզանավար:

Ընգունան ծիք տալ—ա. ականջից (երեխայի) ձգել՝ կատարած զանցանքի համար, բ. պատժել, հանդիմանել:

Ընգունենն ծակեն թխել—(ծաղրական) ասածը չլսել, մեկի ասածը անուշադրության մատնել:

Ընգունենն մեսն օտել—տոփված լինել՝ լսել:

Ընգուներ անել—լսել, չանել, ասածը չկատարել:

Ընգուննեն կախ տալ (կախ անել)—հեզությամբ լսել:

Ընգուննեն կապել—լսել չցանկանալ:

Ընգուններեն պեմբակը տնա օնել—լսել, անսալ:

Ընգուններումը պեմբակ տնիլ—չլսելուն տալ, չլսել:
Ընումեն եխտ քսել—անվանարկել, անունը խայտառակել:
Ըշխարքաս խռավ քյրնիլ—վիրավորված, անզոհ մեռնել:
Ըշկերավն օտել—անհագորեն ուտել:
Ըշկերեն լուսը պկասել—տեսողությունը թուլանալ:
Ըշկրհոփի տալ—ննջել:
Ըշկյունա ընիլ—ծիծաղել՝ ուշագնացության աստիճանի:
Ըռնեն մաշին ընիլ—հատկանիշը ժառանգական լինել:
Ըստուծեն կրակը կլխեն վեր ածել—խղճահարվել, խղճալ:
Ըստծու լավ թվալ—բարի գործ կատարել, բարություն անել:
Ըստուծ-քեստուծ անել—չմոռանալ կարևորը, ընդունված կարգով գնալ:
Ըրքեն չարխը ետ շռռ տալ—տարօրինակ գործ բռնել:
Ըրածը ըրեսավը կյալ—ա. արած լա̈վությունը հիշեցնել կամ՝ նրա վատ արարքը, բ. ճշմարտությունը երեսին ասել:
Ըրամակ ընգել—(երամ բառից) մարդամեջ դուրս գալ, հասունանալ:
Ըրեսս ըղնել—ա. գեղեցկությունը կորցնել, բ. ատելի դառնալ:
Ըրեսեն խչրըհանել—աստծուն օգնության կանչել:
Ըրեսեն կակող եշիլ—հայացքով փաղաքշալ, ժպտալ, բարեհամբույր լինել:
Ըրեսեն ճխըվլավ թխել (ցաքա̈վ)—խայտառակել:
Ըրեսեն մեռունը վեր կյալ—ամոթ, պատկառանք չունենալ:
Ըրեսեն փարդա չընիլ—չամաչել:
Ըրըսատեղ չընիլ—բոլորին պարտք լինել և բան խնդրելու համարձակություն, իրավունք, երես չունենալ:
Ըրըսարանք տալ—խրատել:
Ըրըսկըհատա ըղնել—ծերանալ, դեմքը կնճռոտվել:
Ըրըսկման ընիլ—թաքնվել, տեսադաշտից հեռանալ:
Ըրըսպեցուկ անել—նորահարսին տեսնելու արարողությունը:
Ըրխըյին մեռնել—նույնն է՝ նգյրնատեղ չընիլ:
Ըրմակեն անել—գործը որակով կատարել:
Ըրտասունքը ցմաքել—շատ լացել, վշտանալ:
Ըրևավը ուրթումն օտել—մեկի նկատմամբ հավատ, հարգանք ունենալ:
Թալակ սարել—որոգայթ լարել, փոխ. բանսարկություն անել:
Թակավը քցիլ (ախփավը քցիլ)—ծեծել, տփտփել:

Թամբի տալ—ա. խաղ, թամբի խաղալը, բ. չարաճճիություն անել:

Թամբը տնիլ—ձին ճանապարհի նախապատրաստել:

Թան ծամելու քցիլ—սաստիկ ծեծել:

Թառը սեմին փռնել—համերաշխ լինել:

Թառը քյուքհան անել—ա. թառի լարերը թուլացնել, բ. գործը փչացնել:

Թարթափին ըղնել—մեկի հայացքի տակ ընկնել, փոխ. ծեծվել երկյուղել մեկից:

Թերը թերին հսցնել—մի կերպ ապրել:

Թերխաշ ընիլ—մեկի հետ լիարժեք հարաբերություն չունենալ:

Թերմացք անել—ուտելիքը (չուրը) լրիվ չվայելել, մնացորդ թողնել:

Թըռռ անել—ձեռքերից բռնելով՝ երեխային օդում խաղացնել:

Թըռն խմել—մեկին (գործին) իրազեկ լինել (բացասական իմաստով), ճանաչել:

Թեփուկ քցիլ—թեփոտել:

Թեփուրը մլլցնել—զարկել, սպանել:

Թի-թի, թի-թի անել—մրսել:

Թիլը կտրել—սոված լինել:

Թիրթեփ տնիլ—թեթև ձյուն դնելը:

Թիքա անել—ճաշել:

Թոզը պլըթիլ—հասունանալ (բլիթ թզոյ):

Թոթ նստել—ոտները որոշակի ժամանակ դնել թթով լցված տակառի մեջ՝ բուժվելու նպատակով:

Թոթը ներկիլ—թութը նարնջի գույն ստանալ, շատ հասնելուց՝ դեղնել:

Թոխկան պեց թողել—շատ ուտել:

Թոխուրը տակովը կյալ—ա. վիրավորել, բ. կոպտորեն գործը փչացնել:

Թող անել—շպրտել, դեն նետել:

Թոռը նի հնցնել—մինչև ոսկորները թրջվել:

Թորեն մաշը քցիլ—բռնել, փոխ. իրեն ենթարկեցնել:

Թոքը նի մննել—սիրվել, սիրել տալ:

Թոքումը տնիլ—սիրել:

Թոքման անել—վատնել, փչացնել, քամուն տալ:

Թովռոնի տալ—թովլալ, ուրախ լինել:

Թվանք քաշիլ—հրացանով սպանել:

Թրշած շոն կրակ տալ—ամեն վատ բանի ունակ լինել:

Թուփ անել—կուտակել:

Թփնթրեքը վեր ածել—ա. փորոտիքը թափել, բ. անարգել, ըսպառնալ:

Թնաքափ անել—թռչելու ընդունակությունից զրկել, բ. հուսահատեցնել:

Ժանգ թխել—ա. ժանիք թխել, շան՝ հարձակման, կծելու նախանշան, բ. սպառնալ:

Ժժրպապա անել—ծաղրել, ծամածռություններ անել:

Ժղըվուրթեն ռեխը ընձ արա (քզ արա) անել—բամբասանքի թիրախ դառնալ:

Իլիգյը տալ—գործը վերջացնել:

Ինքը öւրան քթենալ (զինքը քթենալ)—իրեն տիրապետել:

Ինքը öւրան ոտել—նյարդայնանալ, իրեն մեղադրել:

Ինք օնել—գրբ. յինքն առնուլ, ա. առնել, վերցնել, իրենը դարձնել, բ. կաշառքով իր կողմը քաշել մեկին:

Իրան շուքան խրտնել—կասկածամիտ լինել:

Իրեսաստառ անել—տեղափոխություն կատարել:

Իրեսեն կյրիլ—ապտակել:

Իրեսեն ճöւրը վեր կյալ—ամաչել:

Իրես-ըրեսու ասել—չքողարկել, երեսին ասել:

Իրեսը խոսք կյալ—նախատվել, հանդիմանվել մեկից:

Իրեսը ծաղկել—բորբոսնել:

Իրեսկման ընիլ—ա. տեսադաշտից հեռանալ, դուրս մնալ, բ. օտարություն գնալ:

Իրեսը պեց—պարզերես:

Իրեսը պնդացնել—համարձակություն առնելով՝ որևէ խնդիրք անել, ամաչելով բան խնդրել:

Իրեսը պոլորել (պիլորել)—շաղանալ, տեսքի գալ:

Իրեսը վեր ճեպռել—նախատինք տալ:

Իրեսը քաշիլ—ընտիր մասը սեփականացնել:

Իրեսնըրեր խոսել—նախատել, խրատել:

Իրես քցիլ—պարտադրել:

Իփ ածել—եռացնել, փոխ. կոփել:

Իփ կյալ—ա. շոգել, բ. տաքություն տալ: Նույնն է՝ հեռ կյալ:

Լա, լա, լա անել—երգել, ուրախանալ:

Լալուշ անել—դեմքը, մարմինը ծամածռելով ծաղրել:

Լախ անել—դանդաղել, վեննը կախ անել:

Լաղ անել—ա. ծաղրել, բ. շտապել:
Լաղումը տալ—աղբրի ակունքը փորել (գետնատակ):
Լանգու տալ, լնգըլանգու անել—կաղալ, երկու ոտքով կաղալ:
Լանթ անել—կոպտել, ընդդիմանալ:
Լաշին նո̈ւր քցիլ—լողանալ:
Լառ ըղնել—երկտակվել, կախվել:
Լափ անել—լավաշի գունդը (խմորը) ձեռքի ափերով բացել, նըր-բացնել:
Լափ-լափ անել—(երեխային) տակը թրջել, նույնը՝ ծավ-ծավ ա-նել, լափան-ծափան անել:
Լենքն ու երկանքը մին ընիլ—գիրանալ, չաղանալ:
Լիթ-լղե կոլ տալ—երդվել:
Լղեն շուռանալ—ծառավել, տոչորել:
Լղեն պտտել—վախենալ, երկյուղել:
Լոք տալ—ցատկել:
Լպուտիզ տալ—արագ շարժվել, գործը արագ կատարել:
Լվոթունեն տական տուս կյալ—վարձանատույց լինել:
Լո̈ւզպորտ ընել—ծուլություն անել:
Լո̈ւզվակոխ անել—խոսքակովում նաղթել:
Լո̈ւզվավը քշեղակ փռնել—պարծենալ:
Լո̈ւզուն գյրավ տնիլ—խոստանալ՝ կատարել չկարողանալ, խոս-տանալ ու չկարողանալուց կրակի մեջ ընկնել:
Լո̈ւզուն խզըրտակավը տուս օնել—չարչարել, տանջել:
Լո̈ւզուն ծմծամել—կցկտուր խոսել, նշմարտությունը կիսաբե-րան ասել, շրջանցել:
Լո̈ւզուն ծրավը տանել—շիտակ խոսել:
Լո̈ւզուն կապ ընել—կարկամել:
Լո̈ւզուն պո̈ւնումը տնիլ (լո̈ւզուն ծակը կոխել)—լռեցնել, լռել:
Լո̈ւզուն տետ ծակել—լեզվանի լինել:
Լո̈ւզուն տո̈ւս օնել—ա. աղաչել, բ. ծաղրել:
Լո̈ւզուն փաթ ընել—կապվել, կմկմալ:
Լո̈ւզուն փսնել—համարձակ պատասխաններ տալ:
Լո̈ւն օղտը շինիլ—չափազանցել:
Լուսնավեղը կապել—նոր-նոր լուսանալու պահը (նորիզոնը դառ-նում է շիկանողագույն):
Լուքտանե տալ—խաղալ, անհոգ վազվզել:
Խաբս տալ—խաբել, խորամանկել:
Խակ պեն փռնել—չմտածված գործի ձեռնարկել:

Խաղ կապել—բան հորինել, սարքել, սադրել, սրտեղծագործել:
Խաղն ասել—ճշմարտությունն ասել:
Խաղ ու տաղ ասել—ուրախ լինել:
Խամհատ անել—խոպան յուրացնել:
Խաշ անել—ա. հողե ամանի մեջ թրջվեցրած խմորը (թթխմորը) լուծել տաք ջրում և խառնել մաղած ալյուրին, բ. դավ նյութել:
Խաշար չվալավ այլեր պիրիլ—զուր աշխատանք կատարել:
Խաչ քաշիլ—հրաժարվել:
Խարակն օնել—վարը լրել, գեղեցկացնել:
Խարտը տոս օնել—ա. կծելուց հետո մեղվի խայթը մարմնից հանել, բ. փոխ. անվնաս դարձնել:
Խելքա տանել—հրապուրել, զայթակղել:
Խելքը տռն անել—ժողովել: Նույնն է՝ խելքը կլխեն ջամ անել:
Խերան փախչիլ—օգուտից հրաժարվել:
Խերը մաչան վեր ածել—լավության վերջում՝ վատություն անել:
Խեր չտալ (անխեր ընիլ)—նոր գնած անասունից սպասվող օգուտը չստանալ:
Խզըկոթեն տալ—ծեծել:
Խըլթ (խըրթ) ըղնել—խանգարվել:
Խինդեղնա ճինչեխ քցիլ—ա. երեխայություն անել, բ. անմիտ, անարդյունք գործ բռնել:
Խլի-խլի անել—իրարից խլել:
Խղըլցավան ըղնել—շատ խաղալ, խաղից չկշտանալ:
Խղըվարսաղ տեռնալ—խայտառակվել:
Խմորը պլըթիլ—գնդել:
Խնչալեն քարը վեր ըղնել—նարգը, պատիվը ինչ-որ չափով կորցնել:
Խնչըմանչի անել—կիսահում խորովել (միսը):
Խոսքեն եշիլ—ասածը կատարել:
Խոսքը անց կենալ—հեղինակություն ունենալ:
Խոսքը կեմ անել, կապել—բարի խորհուրդներ տալ, համոզել, դարձի բերել:
Խոսքը կոխ կցնել—վիճել:
Խոսքը կտոր քցիլ—չկատարել, շանսալ (ընգունեեր անել), զրույցի նյութը փոխել:
Խոսքը մին անել—պայմանավորվել, համաձայնվել:

Խոսքը շուռ տալ—ասածի հակառակն ասել, խոսքի բովանդակությունը փոխել, խոսքազանց լինել:
Խոսքը պրանել—խնդիրքը մերժել, ասածը չկատարել:
Խոսքը տափը քցիլ—նույնն է՝ խոսքը կտրը քցիլ:
Խոսք-խոսքու տալ—տես՝ խոսքը մին անել:
Խոսք պեց անել—հետաքրքրող թեմայով խոսակցություն սկսել:
Խոսք վեր պիրիլ—նույնն է՝ ինչ խոսք պեց անել:
Խոսք ու զրուց տեռնալ—խոսքը աղմուկով, վինաբանությամբ վերջանալ:
Խպոպ տալ (խպոպ վարել)—տափը վարելու ձև:
Խփըխափի անել—շարունակ խաբել:
Խոիդ անել—բոժոժաորդի վերջին հախուռն կերակրումը (վերջնահասակ):
Խտետն ըղնել—անակնկալ հանդիպել, ձեռքն ընկնել:
Խտուրու-մտուրու խոսել—սխալ ու ծուռ (խոտոր) խոսել:
Խրաված օխծ ուտեցնել—տանջել, չարչարել:
Խրթըլոկ չընիլ—գաղտնապահ չլինել:
Խուփը քարեն տեմ ըղնել—դժվարության հանդիպել:
Ծածառ անել—ա. փոքր երեխայի կանգնեցնել, բ. երեխայի կանգնելը:
Ծամ-ծամ անել—ա. ծամելով զբաղվել, բ. շարունակաբար ուտել:
Ծավ-ծավ անել—չրողող անել, փոխ. տակը (անկողինը) թրջել (երեխան):
Ծենը կլոխը քցիլ—բղավել, գոռգոռալ:
Ծեռուքը կյալ—կարողանալ, գործի մեջ հմուտ լինել:
Ծետը կլխեն ծռտել—ծանակվել:
Ծերքա ըղնել—ուժասպառվել, մահանալ:
Ծերքա պրծնել—փախչել, ազատվել:
Ծերքեն եշիլ—մեկի օգնությամբ և իրավունքին ապրել:
Ծերքերը լվանալ, հեռե կենալ—հեռանալ, հարաբերությունը կտրել:
Ծերքերը ծալիլ, նստել—ոչինչ չանել:
Ծերքերը ծուցումը տնիլ—անօգնական լինել:
Ծերքերը կյուշ անել—ձեռքի ափերը կցել:
Ծերքերը սրտեն խաչիլ—խեղճ, անօգնական վինակում լինել:
Ծերքը էրկան ընիլ—կարող լինել, ունևոր լինել:
Ծերք մեկնել—օգնել, վատ վինակից հանել (մեկին):

Ծերքը մրքավն անց կցնել—երկար ապրել:
Ծերք պիրիլ—գտնել:
Ծերքը պրճենեն հսցնել—դժվար ապրել:
Ծերքը սրտավն անց կցնել—մեղքերը քավել, ապաշխարել:
Ծերք տալ—ա. բարևել, բ. շնորհավորել, գ. շահավետ լինել:
Ծերք տալ, ղրաղ կենալ—հեռանալ պարտված:
Ծերքը տեմ օնել—մուրալ, օգնություն աղերսել:
Ծերքումը ընիլ—ուժեղ լինել:
Ծերք փոնել—օգնել, օժանդակել:
Ծերք քաշիլ—ա. ստորագրել, բ. հրաժարվել, հեռանալ:
Ծեք տալ—ա. մեղրաճանճի բազմանալը, բ. բազմանալ, շատանալ:
Ծիլ տալ—ա. ծլել, բողբոջել, բ. վեր ցատկել:
Ծին պեց թողել, ծին չափ քցիլ—ջահելություն անել:
Ծին վեռան կապել—հակառակ, ներհակ գործ բռնել:
Ծլի-ծլի տալ—ցավից անհանգիստ լինել:
Ծլլըկըթը նի ըղնել—ա. աշունը գալ, բ. բան ու գործի օրերն անցնել:
Ծլոլը քյընիլ—ա. փուլնքոտ լինել, բ. ուտելու մեծ ցանկություն ունենալ:
Ծծա կտրել—երեխային մայրական կաթից կտրել:
Ծծերը յրան անել—ա. կաթ տալ, կովի կուրծքը կաթ ընկնել՝ մրըմար անելուց հետո, բ. մի գործի հանդեպ տրամադրվել:
Ծծերը պլըթիլ—հասունանալ սկսել (աղջիկը), հասունացում ապրել:
Ծկակեն տալ—խեղդվել, շնչասպառ լինել:
Ծկըծուկի անել—որևէ անցքով դրսից ներս նայել:
Ծղան անել (ծղըն-ծղան անել)—փայտը բաժանել ծեղերի, մանրատել:
Ծոխը կտրցնել—ա. ոչնչացնել, բ. հոգնեցնել, ուժասպառ անել:
Ծոխը քամուն տալ—կործանել:
Ծոռ աշկավ էշիլ—մեկի հանդեպ ծուռ մտքեր ունենալ:
Ծոըծառը վազիլ—անել վիճակի մեջ լինել, մեկի՝ մյուսի օգնությանը դիմել:
Ծուկլուկու տալ—միզել (երեխան):
Ծույնըրծափե տալ—ախ վիշ անել, ձեռքը ծնկին զարկել:
Ծունդր անիլ—խնդրել, աղաչել:
Ծöւք անել—երեխայի հետ պահմտոցի խաղալ:

Կքրպուք անել—դեպի իրեն քաշել, ուրիշից շարունակ կորզել:
Կազ տալ—ծաղրել:
Կաթան անել—հացը խորոված մսահյութով ողողել:
Կաթը կտրել—օգուտից զրկել, եկամտի աղբյուրը ցամաքել:
Կաթնը շաղել—ա. կաթի՝ իր բաղադրությունը կորցնել, բ. գործը փչանալ:
Կաթուկ տալ—ա. հասած պտուղը ծառից մեկիկ-մեկիկ ընկնելը, բ. մահանալ (ասում են ծերունուն):
Կալ անել—փոխ. միևնույն տեղում երթևեկել, ման գալ, դոփել:
Կալհաս (կալաս) անել—հնձած ցորենը ընտանիքով կալսել-ծեծելը, փոխ. ծեծել, փշրել:
Կալմաշ անել—շրջապատել, շուրջկալել:
Կակող դամարը փռնել—լեզու գտնել (մեկի հետ):
Կաղաղակը քցիլ—ամրացնել:
Կանանչ խոտան կծել—արքունքի հասնել:
Կանանչ խոտեն կրակ անել—նոր-նոր ընտանիքավորվել:
Կաշին թառ տալ—ա. *անասունը մորթել և կաշին չորացնել*, բ. ասում են երեխաներին վախեցնելու նպատակով՝ «կաշիդ թառ կտամ»:
Կաշվան տուռ կյալ—ջանքեր գործադրել, ջանալ՝ համոզել:
Կապը կլխավը քցիլ—ազատություն տալ, բաց թողնել:
Կապվել-քշկովել—անհաջողության մատնվել, խանգարվել:
Կապ տալ—ա. նշանվել մեկի հետ, ամուսնանալու խոստում տալ, բ. հագուստի, ոտնամանի որևէ տեղը կապել, կարել:
Կապ քցիլ—ա. պատ շարելու ժամանակ ռոք դնել, երկար քարերով կապ ստեղծել լայնությամբ ու երկարությամբ, բ. ամրացնել:
Կապու կյալ—ա. անասունի կապելուն սովորելը, բ. ենթարկվել, հնազանդվել:
Կատկեն թռալ—կերակուրը (հացը) կուլ տալու ժամանակ շընչափողի լեզվակին դիպչել:
Կարն կապել, էրկան թակել—ասվում է հանաքով. հանցագործությունը, զանցանքը պատժել:
Կարն կյարի հնձիլ—դժվար գործ կատարել:
Կարն կտրել—համառոտել, արագ վերջացնել:
Կարքու պիրիլ—դաստիարակել, խրատել:
Կացենը յոր օնել, տակռավը կյալ—գործը միանգամից փչացնել, խանգարել:

Կեռեքն առնել—ա. անարդարություններ, անախորժություններ շատ տեսնել, բ. ատամները հարել՝ թթու ուտելուց, գ. մեկից հիասթափվել:

Կեռեքը կտրել—իր ուժերին վստահ լինել:

Կեռեք նհաշ տալ—սպառնալ, հարձակողական դիրք բռնել:

Կեռ տալ—ա. կոխի ժամանակ ոտքը հակառակորդի ոտքին հարելով վայր գցել, բ. խաղի կանոնները խախտել, գ. փոխ. դավել, խորտակել:

Կեռքանը տակեն շիրա մնալ—ա. մի ուտելիքի համը, հյուրասիրության քաղցրությունը չմոռանալ և վերստին ցանկանալ, բ. աներեսություն անել:

Կեռքան կտրել—չափավորությամբ տնտեսել, իրեն վայելքներից զրկել ուրիշի բարեկեցությունն ապահովելու համար:

Կեսը հալիլ—ամաչել:

Կերածը կուրցնել—չնայած բարեկեցությանը՝ վտիտ լինել, հիվանդ լինել:

Կերածը մաշկավը քյքնիլ—մեծ ցավ ունենալ, օտարության մեջ հարազատ ունենալ:

Կզակեն տալ—շատախոսել:

Կիրկամոտ անել—լողանալ, մաքրվել (հայկական սովորությամբ լողանալու, մաքրվելու և լվացքի օրը շաբաթ օրն է՝ կիրկամոտը):

Կլափեն տալ—սոված-ծարավ լինել:

Կլըկասան անել—տե՛ս Կալհաս անել:

Կլընչ-կալանչ կյալ—ա. ցավից կլանչել (շունը), բ. լացել, բղավել:

Կլըպճո անել—անհասկանալի խոսել, թոթովել:

Կլըպճղրեգլի տալ—խաղալ, չարաճճիություններ անել:

Կլլանը կլխըեր անել—պարապ, անգործ պառկել:

Կլկլհան տալ—անուշ երգել, ելևէջել (կաքավի նման):

Կլխան մազ չի պկասել—առողջ, անցավ ապրել:

Կլխավը շքռել—մարդու տեղ չդնել:

Կլխավը պտըպատ անել—մեկին խորապես սիրել:

Կլխեն թխած—հիմար, խելագար:

Կլխեն հղույր կտրել—խրատել, նախատել:

Կլխեն ճուր խմել—վերջացնել, հետք չթողնել:

Կլխեն պտատանը հզրել—փախուստի նախապատրաստվել:

Կլխեն քար քցիլ—մսխել, ոչնչացնել:

Կլխրեր անել—դեպի վեր՝ սարը ճշել անասուններին։
Կլխրեր-կլխրվեր անել—ա. մեկ՝ ներքև, մեկ՝ վերև ճշել անասուններին, բ. անասուններին չարչարել։
Կլխրվեր անել—ա. ներքև ճշել անասուններին, բ. ազահաբար ուտել։
Կլխումը այրբենի կոռր չընիլ—անգրագետ լինել։
Կլխումը ճամե ընիլ (ճամե տուրուր կյալ)—տարօրինակություններ ունենալ։
Կլխու մնալ—չօգտագործվել, որպես ավելցուկ մնալ, փոխ. աղջիկը տանը մնալ, չամուսնանալ։
Կլոխը դանգ անել—շատախոսել։
Կլոխը եղել—ա. կաշառել, բ. շողոքորթությամբ համոզել, գ. խաբել։
Կլոխը թափ տալ—խաբել։
Կլոխը խոզիլ—ծաղրել, խաբել։
Կլոխը ծռել—խոնարհվել։
Կլոխը կծանալ—հիվանդանալ։
Կլոխը կուրցնել—ա. շփոթվել, հուսահատվել, բ. ամուսինը կորցնել, տան գլուխը կորցնել։
Կլոխը վարել—խաբել, մտափոխել։
Կլոխը տանել—շատախոսության չափն անցնել։
Կլոխը փոխել—ա. հինը նորով փոխել, բ. ուրիշ կնոջ հետ ամուսնանալ։
Կլոխ պիրիլ—մեծ գործ կատարել, հաջողացնել։
Կլոխ տալ—ողջունել, պատիվ տալ։
Կլոխը տալ—նվիրվել։
Կլոխ տնիլ—լսել, ունկնդրել։
Կծուզնու նման նեստա կենալ—կպչել։
Կծռւկան կծել—արբունքի հասնել։
Կմբլեչի տալ—գլուխկոնծի տալ։
Կյավ-կյավ անել—վախվխելով խոսել, դժգոհել։
Կյեզ-կյեզ ճյընիլ—լավ ուտվել (թարմ թոնրահացը)։
Կյիժ դամարը փռնել—գժություններ անել։
Կյինին կլոխն ընգնել—«գինվոյ գալ գակամբ», թեթև գինովանալ։
Կյինումը կապեկ տնիլ—ա. ընդհանուր գործին մասնակից լինել, բ. առևտրական գործարքներին մասնակցել։
Կյիրը կուրցնել—դժբախտ լինել։

Կյիրկապ անել—մի կերպ կարդալ, գիրկապով կարդալ, հեգելով կարդալ:
Կյործ անել—ա. ուտայն գործել, կարպետ, խալիչա, ջեջիմ, կըտավ գործել, բ. կյործ վարել, հողը (տափը) շրջանաձև ծըրել և միջատարածությունը ըստ տեղանքի պահանջների վարել, գ. փոխ. գեղեցիկ վարել, հողը գորգի նման գործել, փոխ. դավ նյութել, ծուղակ սարքել:
Կյոտան կախ ընիլ—պարտվել, ներում հայցել:
Կյոտեն բրախ տալ, կյոտեն թուլացնել (գոտեմարտից հետո)—գործը վերջացնել:
Կյոտեն պնդըցնել—գոտեմարտի նախապատրաստվել, փոխ. կռվի պատրաստվել:
Կյոք տալ—ոգևորել, հաճոյախոսել, հաճոյանալ:
Կյրունքհան ընիլ—ա: գարուն դուրս գալ, ձմեռը հաղթահարել, բ. դժվարությունները չեզոքացնել:
Կյուլափեն տալ—գայլի նման խժռել:
Կյուլին մորթեն հիտն ըղնել—գազազել:
Կյուղ տեռնալ, ոտել—անտանելի դառնալ, մեկի գոյությունը (ներկայությունը) չկարողանալ տանել:
Կյուրծավարու հրակաշ տեռնալ—չնչին ներդրումով մեծ գործի ընկերանալ, այդպիսի միտում, ցանկություն ունենալ:
Կյուղ ցնկնել—անձրև ժամանակ արև դուրս գալ:
Կնդըկթուկ տալ—մեկիկ-մեկիկ գալ, ոչ միասին:
Կոթ անել—այգեքաղը վերջացնել:
Կոթը բոշ անել—մեղմանալ, թուլլարել:
Կոլավն ըղնել—գրկախառնվել, ողջագուրվել:
Կոլին (նաև՝ փորեն) տակը քորել—փաղաքշել, հաճոյանալ:
Կոլին տակն անել—երբ աղան մի խումբ աղջիկների հետ պարում է, փոխ. իրեն ենթարկեցնել:
Կոլ-կոլ անել—սիրել, հաճույքով ուտել:
Կոխկեն ըղնել—համառել, տե՛ս մաշկեն չըղնել:
Կոխքը հտըցնել—համառել, իր կարծիքին մնալ:
Կոծեզ անել—կոտրած ամանը կոծիկով կպցնել, կոծկել, փոխ. խակությունը ծածկել, սվաղել:
Կող տալ—խմորագունդը կպցնել թոնրակողին:
Կոռնը տալ—ա. աջ ձեռքերը միացնելով՝ ծանրությունը (հակը) բարձրացնել, բ. օգնել, գործը միասնական ջանքերով կատարել:

Կոտր ընկնել—ա. վաճառականության մեջ ձախողվել, սնանկանալ, բ. կոտրվել, կոտրված տրամադրության մեջ լինել:

Կոտր քցիլ—վիրավորել, տրամադրությունը գցել:

Կորեկ անել—վախենալ, սոսկալ:

Կործեն նեստա կենալ—եռանդով գործել, գործը ավյունով ըսկըսել, գործը սիրել:

Կործը աշ քյընիլ—հաջողել:

Կործը ծեխվիլ—գործը ձախողվել:

Կշոր անել—կուշ գալ, վախենալ:

Կոնդեկավ ընկնել—ա. խեղդվել, բ. վիզը սեղմվել (եզան):

Կոքնեն հմբարել—թուլությունները իմանալ:

Կոքնեն ղլավ տալ—սոված լինել, լավ ախորժակ ունենալ:

Կոքնեն ուռուռ թխել—մրսել:

Կսամորթ անել—տանջահար անել:

Կըլմասուլ անել—տրոհել, բազում մասերի բաժանել:

Կըկյընու անել—ապրանքը իր գնով չվաճառել, էժան տալ, փըչացնել:

Կվկվոնը եր ընիլ—ավյունով, խանդավառությամբ լի երիտասարդ լինել:

Կտոր (կտուր) անել—մեկի տունը հաճախակի հյուր գնալ:

Կտվլվա (թթըլվա) անել—երեսը լվանալու փոխարեն՝ թրջել:

Կրակեն եղ ածել—կրքերը բորբոքել:

Կրակը քցիլ—դժվարության մեջ գցել:

Կրակ ընկնել—դժվար կացության մեջ լինել:

Կրակը թիժ պահել—կարևոր հարցը օրակարգից չհանել, մոռացության չտալ, հետևողական լինել:

Կրակու կյալ—շտապել, արագ հետ դառնալ:

Կրըկուփ կյալ—ա. փակվել, բ. լռել, գ. չանձրևել, երաշտ լինել:

Կրկոռ տեռնալ—ծերանալ, կորանալ:

Կրնունք անել—ա. խոտը, հարդը ուտելուց թերմացք անել (անասունները), բ. ճաշասեղանին մնացորդ թողնելը, գ. կերակրի ընտիր մասն ուտելը, մնացածը փչացնելը:

Կցան անել, կցան տալ—կցել, կապելով երկարացնել:

Կցան տեռնալ—առևտրական գործի կցվել:

Կութըհան անել—կոթը պոկել (գործիքի):

Կուլ անել—կուլ տալ:

Կուլիհե անել—խմել, հարբել:

Կուկուվածեն ածել—զուր կանչել:

Կուպար անել—ճանախակի գնալ-գալ:
Կուռները պեն չփռնել—անհանգիստ լինել, մեծ վիշտ, մեծ հոգս ունենալ:
Կուռնրփռնե անել—ա. թևանցուկ անել, բ. սիրով ապրել:
Կուրկուտ անել—ա. երկանով հանարը աղալ, ձավար անել, բ. արագ-արագ խոսել, գ. երկյուղել, վախենալ:
Հնազ անել—սիրել, դուր գալ:
Հալա կյալ—ա. խաղից առաջ զույգեր կազմելով բաժանվել երկու խմբի, բ. իրար հետ գործակցել:
Հալաս անել—ա. մի գործ կատարելու ձգտել, բ. կազդուրվելու նշաններ ցույց տալ, գ. սեռական ցանկություն ունենալ, փոխ. ուժերը լարել, ճիգեր գործադրել:
Հալավը հանել—հին (հորեց) սովորություններից, կարգից հրաժարվել՝ նոր ընտանիքի կարգին հարմարվելու համար (նորահարսին):
Հալիլ, անգուճն ածել—մատչելիորեն բացատրել, հասկացնել:
Հալ-հալա ընգել—ուժասպառ լինել:
Հալմեխ անել—ամրացնել, պնդացնել:
Հակեն կենալ—օգնել, օժանդակել:
Հակ ըղնել—ծռել, մի կողմի վրա թեքվել (էշի, ձիու բեռը):
Հակու տալ—կաղալ:
Համա հանել—տհան բան անել, ծանծրացնել:
Համ եր ընիլ, համ՝ վեր—լրիվությամբ բավարարել:
Համը պրանումը մնալ—հանույքով՝ մի անգամ կերած բանից վերստին ուտելու ցանկություն ունենալ:
Հայ տալ, քյըքիլ—մեծ դժվարություններ հաղթահարելով, տեղ հասնել:
Հային տեղը քցիլ—դժվար վիճակի մեջ դնել:
Հայհույ անել—ա. հսկել, բ. փախցնել:
Հանգեր անել—նմանակել, ուրիշի դեր կատարել:
Հանուրն օնել—որսի հետքը գտնել և նրան հետապնդել (որսի շան մասին):
Հաշիր-դյամաք անել—հարայհրոց, աղմուկ-աղաղակ բարձրացնել:
Հաշևը խաշիլ անել—ա. պատժել, բ. հաշիվները խառնել:
Հասը (մաշը) տնիլ—թխվածքի միջուկը դնել բացված խմորագնդի մեջ:
Հավան օնել—խեղճացնել, ենթարկեցնել:

Հավսարի-քյավսարի խոսել—անկապ, տակից-գլխից խոսել:
Հավու նման հավաք ընիլ—վաղ քնել:
Հատ վեր ըղնել—գուլպա (և այլ) գործելիս հատը՝ թելօղակը ճաղից ընկնել:
Հարակաշություն անել—ընկերովի, կիսովի դաշտային աշխատանքներ կատարել:
Հարթահուրթ անել—զրախոսել, դատարկ սպառնալիքներ տալ:
Հարու տալ—եղջերահարել (գրբ. հարեալ):
Հարուր ցավու ածել—անհաջող փորձեր անել:
Հացը կուտուր տեռնալ—ընտանիքը կիսվել:
Հացը տանան անել—իր միջոցներով ապրել:
Հափափն ըղնել—շնչասպառ լինել:
Հափռան վետ օնել—գուշակել, գուշակություն անել:
Հափռումը աղ ընիլ—լավության փոխարեն լավություն ստանալ, երախտիք ունենալ:
Հաքյի թխել—կեղծավորել, շողոքորթել:
Հաքյին բլըբուլի անել—պոչը շարժել, փոխ. շողոքորթել, քըծնել:
Հաքյին ծալիլ, տնիլ տակեն—հեռանալ, կողմ քաշվել:
Հաքյին ծառավն օնել—մեկի հանդեպ դատական գործ հարուցել, բռնել, մեղադրել:
Հաքյին չափել—փորձել, ստուգել:
Հաքյին տնզել—սատկել, մահանալ (արհամարհական):
Հաքյին քաշիլ—քաշվել, հեռանալ, առանձնանալ:
Հեղե անել—դեռահաս ցորենի հասկափունջը կրակի վրա խորովել:
Հեղե տեռնալ—հասունանալ:
Հեռ ածել—եռացնել, փոխ. մարմինը կոփել, ֆիզիկապես ամրապնդել:
Հեռե եշիլ—հեռատես լինել:
Հեռե շոռ տալ—շշփվել, շմերձենալ:
Հեռ քաշիլ—ցավ քաշել:
Հետան գյուլլա քցիլ—փնտրել, որոնել:
Հետան ըղնել—սիրահետել:
Հետան թլըթափել—հարգել, սիրել (մեկին):
Հետան կյարմուր խնձոր ղարկել—ա. հրավիրել, բ. որպես հավանելու երաշխիք՝ սկզբնապես աղջկան կարմիր խնձոր են ուղարկում, եթե հետ չի տալիս, ուրեմն համաձայն է:

Հետան կուտան ծեծ տալ—խայտառակել, անվանարկել:
Հետան քարով տալ—քշել, ծաղրել:
Հետու անել—հետու չէ միայն թռնիր վառողը և առաջին թխողը, մյուսները թխում են հետու:
Հըեթա տալ—սպառնալ, անարգել:
Հի-հի անել—ա. ծիծաղել, բ. ծիծաղը նմանակել, ծաղրել:
Հիդդին ծակեն հալ ածել—հետապնդելով՝ անել վիճակի մեջ գըցել:
Հիծիլ կապել—ձիախաղի պատրաստվել:
Հկըլնակայն ըղնել—գործը վերջացնելու վրա լինել:
Հղե կյալ—ուղղվել:
Հղե կտրել—երբ գնում են աղջկա տուն՝ հարսանիքի օրվա համար պայմանավորվելու:
Հղե պահել—աչքը ճանապարհին պահել, սպասել:
Հղեն փոնել—ճանապարհից դուրս չգալ, ուղիղ գնալ:
Հղեն օնել—ճանապարհը փակել:
Հղեն ոտել—ճանապարհով հեշտ ու արագ գնալ (ձիուն):
Հնդուպուճախ անել—տուն ու դուռ մաքրել, սրբել:
Հոլ կենալ—կռվել, խաղալ (անասունները):
Հոլմուր անել—ծեծել, տրորել:
Հոպ անել—ծափ տալ, ծափահարել:
Հոռ-հոռ անել—կոխի ժամանակ իրար գցելու փորձեր անել:
Հորքշատեղ տեռնալ—խայտառակվել, անիծվել:
Հօքմ անել—ստիպել, պարտադրել:
Հպուն-հապունն ըղնել—հնազանդ լինել:
Հռաքաշ տալ—քարշ գալով հեռանալ, առանձնանալ (վիրավոր թռչունը):
Հվերա խոսել—անտեղի հանդիմանել, զրախոսել:
Հվըքտեղակ անել—թռչունները, անասունները ժողովել:
Հտրը-հատրա խոսել—դատարկաբանել, անհամ, անմիտ խոսել:
Հրեհին հսնել—օգնության հասնել:
Հրթնըսկեսուր անել—ա. հարսի և կեսրոջ դերերը կատարել, նըմանակել (փորձերը), բ. փոխ. վինել:
Հուլ կենալ—ետևի ոտքերի վրա կանգնել, ծառս լինել (ձին):
Հունձակապ անել—գործը արագ ու մաքուր կատարել:
Հուշը կուրցնել—հիշողությունը թուլանալ, կորցնել:
Հուշտ անել—խրտնեցնել, փախցնել:
Հուշումնը քաշիլ—սպառնալ:

Հուսս անել—մի ուսպով խմել:
Հոռ սահմ, հոռ թողիմ—վիճակ, երբ դժվար է կողմնորոշվելը:
Հուքյիս ծերքեն ունիլ—մեկից կախում ունենալ, մշտապես կախվածության մեջ լինել:
Հուքյին երավ լցնել—հոգին փառավորվել, չափազանց գոհ լինել:
Հուքյին պերանը հվաքել—տանջել, չարչարել:
Հուքյին տոռս կյալ—ա. տանջահար լինել, մի կերպ դիմանալ, բ. մահանալ:
Ղաթը խըրթ ըղնել—խանգարվել:
Ղալմաշ անել—շրջապատել, շրջափակել:
Ղարազ անել—ա. ծաղրել, բ. դիտողություն անել:
Ղըբըր-ղաբար ընիլ—կտոր-կտոր լինել, հաքնքել (վերքը):
Ղեյնը ծաղկել—ձյունանմանն ներմակ կետեր հայտնվել եղունգների վրա:
Ղեյնը ծծել—երեխայություն անել:
Ղեյնը մսան տոռս օնել—երեխան ծնողից բաժանել:
Ղի անել—քշել, փախցնել (գայլերին):
Ղոհիշ ածել—չարչարել:
Ղրարն ըղնել—հանդարտվել, խաղաղվել:
Ղրմըցուքի տեռնել—մահանալ:
Ճռշը իփիլ—պատժել, ուշժի ենթարկել (երեխային):
Ճռշքոն տալ—ա. հաշից հետո քնել, բ. երկար քնել:
Ճատոփ տալ—չարչարվել:
Ճար-ճուր անել—հիվանդին բուժելու միջոցներ գտնել:
Ճաք-ճաք ընիլ—երդվել-պաղատել՝ մեղադրանքն իրենից վանելու համար:
Ճըռզ-ճըռզ անել—ա. թառ նվագել սովորել, բ. ահազանգել:
Ճիլը ծամել—չարախոսել, բամբասել, թշնամություն անել:
Ճիլը կտրել—վնասել, տուժել:
Ճինչեխ ածել—պարանով ճոճվել, մասնակցել խաղին:
Ճինչեխ քցիլ—ճոճի պարանը կապել ծառին, պատրաստել՝ խաղի համար:
Ճիտ անել—գրկել, գրկախառնվել:
Ճկում-ճոկում անել—կողմնապահություն անել, կողմնակալ լինել:
Ճղըրկուտուռ տեռնալ—ա. ծառի ճյուղերը կոտրատվել, բ. որդեկորույս լինել, հարազատներին կորցնել:

Ճղճրճեղճը վազիլ—աննույս՝ օգնություն փնտրել:
Ճմբըպոմբի անել—երերալ, հարբած լինել:
Ճոխտ-ճոխտ անել—համրել, չուխտերով:
Ճոթ անել—բաժանել, կիսել:
Ճոխտ-ճոխտ խոսել—հարբած լինել:
Ճուրը ծավլումը թողել—հետամնաց, պահպանողական լինել:
Ճորմզի անել—ա. գինու համար ոչ պիտանի խաղողը ճմռել՝ քացախի համար, բ. գինի պատրաստել:
Ճռան չոր տռւս կյալ—փորձանքից անվնաս ազատվել:
Ճրընգ-ճրընգ ճերմել—ա. մրսել, բ. վախենալ:
Ճրպրտող անել—ա. կերակուրը ջրալի դարձնել, բ. գինուն ջուր խառնել:
Ճուր անել—անգիր անել, սերտել:
Ճուրը լղղել—գործը խառնել:
Ճուր թող անել—միզել:
Ճուր կյուղանալ—վերքը լվանալուց՝ բորբոքվել, ջուր գողանալ:
Ճուր պրտողել—խառը իրադրություն ստեղծել, խառնել:
Ճուր տեռնալ—քրտնել:
Մա անել—կարոտել, աղաչել:
Մազյալ տալ—մակաղել:
Մազին նի չկյալ—չվնասել:
Մազմունք անել—կոծկել, ամրացնել, միացնել:
Մաթ մնալ—ա. զարմանալ, ապշել, բ. մտատանջ, մտասույզ վիճակում մնալ:
Մալուվ անել—խոսք տալ:
Մախաորը տալ—սայլի երկու կողերն իրար միացնող ուղղահայաց փայտիկը մտցնել:
Մախծ վեր ածել (դարձուցանել զմաղձ)—ա. փսխել, մաղձ թափել, բ. ասելիքն ասել թեթևանալ:
Մակ տալ—մակարդում կպցնել, պոչ դնել:
Մաղեն ծակավն անց կենալ—ճիհարել:
Մաղը կռեչանը քցիլ—զրկել, ունեցածը քամուն տալ:
Մաղ ընիլ—թռչել, ճախրել, սուրալ:
Մամա լցընցնել—մեկին դժբախտություն բերել:
Մանզիլ չընիլ—ա. երկար վազել չկարողանալ, բ. հետևողական չլինել:
Մաննան փթաթան շինիլ—մեկի թերությունը չարունակ հիշատակել:

Մատները քեծ տալ—մատների եղունգամոտ մասերը քերծվել:
Մատը թփրհարել—զգուշացնել, սպառնալ:
Մատը լöւզիլ—օգտվել, օգուտ քաղել:
Մատը կծել—խորհել, մտորել:
Մատնուք նհաշ տալ—ա. մատնացույց անել, բ. լավի օրինակ ծառայել:
Մաշկավը քար քաշիլ—ծանրատանջ գործով զբաղվել:
Մաշկեն քցիլ—ա. պարտության մատնել, բ. համոզել:
Մաշկը տեմ անել—սատար լինել:
Մաշկը տափը չտալ—դժվար գործից խուսափել:
Մաշկը քորել—փաղաքշել:
Մաշկեն չըղնել—համառել, չհամաձայնել:
Մաշ անել—ընկույզի միջուկը հանել:
Մառաղ կենալ—ա. թաքնվել՝ մուկ բռնելու համար (կատուն), բ. թաքուն հետևել մեկին:
Մասլահաթու կյալ—համաձայնվել, միակարծիք լինել:
Մասսանուրի անել—ասեկոսել, տարածել:
Մաստ կենալ—ա. դիմացկուն լինել, բ. չափավոր կյանքով ապրել (հին քարոզը չափավորությունը համարում էր ուժի աղբյուր):
Մաստ պահել—ամուր, առողջ, կուշտ պահել (խոսքը լիարժեք կերակրի մասին է):
Մատտաբը թմամել—գործը քմահաճորեն կատարել:
Մատտաբը կորկու տնիլ—իր քմայքով, ցանկությամբ առաջնորդվել:
Մար անել—հագուստի կոճակների համար անցքեր բանալ:
Մարա տնիլ—սահման դնել, սահմանաձող տնկել:
Մար տալ—ա. կթել (կովը), բ. կոճկել, գ. կպցնել:
Մեխավ ըղնել—ա. անասունի պայտի մեխը հարել, բ. կաղալ:
Մեխկեն տակավն ընիլ—մեկի նկատմամբ մեղք գործել:
Մեղա կյալ—զղջալ, ապաշխարել:
Մեսք վեր թփրցնել—զզվեցնել, հիասթափեցնել:
Մեսը պուք տալ—գործը խանդավառությամբ կատարել:
Մեսք կծել, պուք տալ—մեկի նկատմամբ սաստիկ ոխ ունենալ:
Մզմծհան անել—ջոկել, ընտրել:
Մին աշկավ եշիլ—բոլորին հավասար ընդունել, արդարացի լինել:
Մինը էրկու տեռնալ—շատանալ, բազմանալ:

Մին ըմանա օտել—սիրով միասին ապրել:
Մին թիքան օտել, մինը մատաղ տալ—փորձությունից հաջողությամբ դուրս գալ:
Մին լուս լուսանալ, մին լուս կաթել—փորձանքից ազատվել:
Մին ծենու ծվվալ—աղերագին լաց լինել:
Մին-մին անել—քրքրել, փնտրել:
Մին պեն բրեսեն օնել քյընիլ—դատարկաձեռն չգնալ:
Մին պենու կյումակ չընիլ—ոչինչ չիմանալ:
Մին պենու պետք կյալ—(գալ ի պետս), մի բանի հարկավոր լինել:
Մին պերան խոսել—քիչ խոսել:
Մին տեղավը տուս յոր օնել—միաբարձ առնել:
Մին տեղ թիքա կտրել—բարեկամ լինել:
Մրըթորու անել—հայհոյել, դժգոհել:
Մրըմար անել—կովը կթելուց առաջ հորթին ծծեցնել, որ կովը կաթը բաց թողնի (նման կովերը կոչվում են՝ պնդակեր):
Մրոքը ծաղկել—ներմակել:
Մուկնեն ծակեն հարիւր մանեթ տալ—փրկվելու տեղ փնտրել:
Մունթուշ անել—մռութը կախել, մռայլվել:
Մուրախաս անել—բաց թողնել, ազատ արձակել:
Յարա տեղեն նի կյալ—ա. զգայուն տեղին դիպչել, բ. վիրավորել:
Յարի տալ—հրահրել, խորհուրդ տալ:
Յզնըհավաք անել—ա. արձակված եզները ժողովել, բ. ունեցածն ի մի գումարել, ժողովել:
Յոր օնել—ա. վերցնել, սեփականացնել, բ. պտուղ տալ (ծառը, այգին):
Յորթ-յորթ անել—դանդաղ վազքով գնալ (ձիու մասին):
Յվըյավա խոսել—լեզվին կապ չդնել, շատախոսել:
Յրա անել—ա. շպրտել, դուրս նետել, բ. կրակել:
Յրա թռչիլ—հարձակվել, բարկանալ:
Յրա կենալ—վերահասու լինել, հսկել, հետևել:
Յրա հվաքվել—շուրջը բոլորել:
Յրան ծերք պցրցնել—սպառնալ, ծեծել հանդգնել:
Յրան տալ—խմբովին կրակել:
Յրա տեռնալ (ի վերայ դառնալ)—խմբով հարձակվել մեկի վրա:
Յրա տնիլ (ի վերայ դնել)—ա. ավելացնել, կպցնել, բ. մեկի մեղքը մի ուրիշին վերագրել:

Յրա օնել—ա. թեքել, թեքվել ներքև, լանջն ի վայր, բ. հրացանը վրան ուղղել:
Յրգինքին աստղերը համբարել—դատարկ գործով զբաղվել:
Յուրվերտի անել—ա. վեր ու վար անել, բ. անկայուն լինել:
Յուրղանենն քացի տալ—հիվանդ լինել:
Նաղ ընգնել—ոգևորվել:
Նամուսը վննատակ քցիլ—ա. պատվազրկվել, բ. պատվասեր չլինել:
Նգյրնատեղ ընիլ—ցավ ունենալ, անհանգիստ լինել:
Նեղութունը տեղ տալ—լավությանը լավությամբ պատասխանել:
Նեստա կենալ—կպչել, մոտենալ, մերձենալ:
Նեստա տալ—կպցնել:
Նի անել—ցավը, վիշտը անմոռունչ տանել:
Նի կապել—ա. խփել, զարկել, բ. ջուրը (առուն) բանջարանոց մտցնել:
Նի կենալ—ա. հրդեհվել, վառվել, բ. նյարդայնանալ, գ. վարասկզբին խոփը հողի մեջ մտնելը (կյութանը նի յա կացալ):
Նի կյալ—ա. դիպչել, քսվել, բ. հանդիպել, տեսակցել:
Նի կոթել—ազահաբար ուտել:
Նի կուտրատել—խոսքի կարկուտ տեղացնել, խոսակցին հերթ չտալ խոսելու:
Նի հնցնել—ա. խորապես վիրավորվել, բ. մինչև ոսկորը թրջվել:
Նի հվաքել—ներս մտցնել:
Նի մաշիլ—համարձակ, աներկյուղ լինել:
Նի մնալ—կարոտել, ցանկանալ:
Նի մննել—ներս մտնել:
Նի շարել—բոլոր կովաններրը մեջ տեղ բերել, հերթով ասել:
Նի շլալվել—ա. փաթաթվել, բ. ներս մտնել:
Նի շղլղորել—ձեռնահարել, տրորել:
Նի պրանել—խփել, հարվածներ տեղացնել:
Նի պռւթիլ—հախուռն ուտել:
Նի տալ—ա. ներս տանել, բ. ասել՝ թեթևանալ:
Նի փլալել—բրդել, խառնել, հացը կերակրի մեջ փշրել:
Նի քաշիլ—ա. ներս քաշել, ներս մտցնել, բ. հազնել:
Նի օնել—ա. անձրևել, ձյուն գալ, բ. փոքր ամանով մեծ ամանից ջուր վերցնել:
Նլըմեխը վեր թափել—ա. անասունը պայտահան լինել, պայ-

տերը թափվել, բ. կարիքավոր լինել, պակասություն շատ ունենալ:

Նհետը ծեր չծրել—հարաբերություն, կապ չունենալ (մեկի հետ):

Նհետը օր ու քշեր անել—միասին ապրել:

Նհետ կյալ—կազդուրվել, լավանալ:

Նհետն բղնել—կենակցել:

Նշանը կուրցնել—ա. շփոթվել, տեղը կորցնել, բ. նախկին շուքից զրկվել:

Շալ տալ—մտրակել, ճիպոտով խփել:

Շալը տալ—վազը ծերատել՝ այգեկութից առաջ:

Շալքը եր ընիլ—ա. գոլորշի բարձրանալ, բ. քռանել, շոգել, գ. թարմ լինել:

Շաղենքը կոլ տալ—համբերել:

Շան օր քցիլ—տանջել, չարչարել:

Շաչին թխել, խնձղկոթեն օտել—գործը ձեռաց վերջացնել:

Շառավ տալ—անտեղի մեղադրվել, անտեղի մեղադրել:

Շեխ տալ—ա. ճյուղավորվել, փարթամանալ, բ. գերդաստանը մեծանալ:

Շենքաշեն ետ ասել—գովաբանել, օրհներգել:

Շենավը մին անել—ասեկոսել, խոսք տարածել:

Շիլափլավ անել—իրար խառնել:

Շլըքյութ տեռնալ—իրար գլխի թափվել:

Շղլըմենեն տեռնալ—խառնվել-խճճվել:

Շները կպուտեցեք, ինձ պեց թողեցեք—ասվում է անարդարացի արարքից կատաղած, փրփրած ժամանակ:

Շնոթուն անել—ա. խորամանկել, խաբել, բ. անբարոյականություն անել:

Շնորքդ էլ շտանա—ասվում է ծաղրով, երբ մեկն անշնորհքություն է անում:

Շուրերավը մին տեռնալ—չաղանալ:

Շոքը քցիլ—գողանալ:

Շտա̈հը քլըքոլա անել—լավ ախորժակ ունենալ:

Շտա̈հը քոռ անել—անժամանակ որևէ բան ուտել, ախորժակը փչացնել:

Շունչ փչիլ—կենդանացնել, կյանքի կոչել:

Շունչը փչիլ—մահանալ:

Շքուհան ընիլ—հանգստանալ:

Չախկա-չուխկ անել—ա. կովել, կոփել, երկաթագործությամբ զբաղվել, բ. զբաղմունք ունենալ:
Չանան չարխու օնել—շատախոսել:
Չարազ անել—ուտել՝ զբաղվելու համար:
Չափարը ճմոռել—չափն անց կացնել, կարգը խանգարել:
Չափ ըղնել—վազել, մրցել:
Չըմշըմե տալ—առատության մեջ լինել:
Չինը քամե ըղնել—ալարել, ծուլանալ:
Չիշըհան անել—ա. շիշը հանել հյութը քամել, բ. չարչարել, քրտնեցնել (ձիուն):
Չլինգ-չլինգ անել—մաս-մաս, կտոր-կտոր անել:
Չլինգ տեռնալ—կոտրվել:
Չխկլի տալ—ա. կաղալ, բ. «Չխկլի» խաղը խաղալ:
Չոմփ-չոմփ անել—լողանալ, լվացվել (երեխան):
Չովի անել—չեղյալ անել:
Չոր արուն վեր անել—հին թշնամությունը վերացնել:
Չոր ծառը արուն քսել—անմեղ մարդուն արատավորել, մեղադրել:
Չրթըփրթի խոսել—անիմաստ բարբաջել:
Չուրաքանը պլըթիլ—առանց հաշվի առնելու իրավիճակը՝ իր գործով զբաղվել:
Պահ տալ—ա. պահել, բ. ուղարկել, գ. հենարան ծառայեցնել:
Պանը քամուն տալ—պանը քամել, ցորենը պանից ջոկել:
Պուշիլ, խաշ հանել—երկրպագել:
Պատեն տեմ անել—ստիպել, հարկադրել:
Պարան անել—ա. բանջարանոցը կրկնակի ջրել՝ վերից վար, վարից՝ վեր, բ. օղին կրկնակի թորել:
Պարլո̈ւսը տեղը պահել—համբերաշխ ապրել:
Պեն-պենավ ածել—դասավորել, կարգավորել:
Պեռնը փռնել—անելիք գործը վաղօրոք նախապատրաստել:
Պետոեգ-պետոեգ խոսել—անամոթ խոսքեր ասել:
Պեր ածել—զուգավորել (կովը):
Պերակ մանել—նիհարել, հյուծվել:
Պերանդ օտիմ—ասում են քաղցր խոսողին, արդար խոսողին:
Պերանը ճո̈ւր օնել—լռել, չխոսել:
Պերանը պեց մնալ—ապշել, զարմանալ, հիանալ:
Պեր կյալ—զուգավորվելու, պտղելու ցանկություն ունենալ (անասունը):

Պզըպտոկ անել—պոզահարել, պոզերով բարձրացնել:
Պլըպելե տալ—տաքությունից այրվել:
Պժժոնը եր ընիլ—թըվել:
Պինը տալ—վազի ավելորդ շիվերը հատել:
Պլկանը հնւր ըղնել—հասունացման մեջ (հասակում) լինել:
Պլըպեճուկն ածել—սարքել, շինել, գործը դրստել:
Պլկան տնիլ (անել), պլկան քցիլ—բողբոջապատվաստ անել:
Պլոթուն անել—չարություն անել:
Պլպլոնը եր ընիլ—տաքությունից այրվել:
Պխկաթաղ անել—մեռելը իմիջիայլոց թաղել:
Պկան անել—կապել, կապվել, մշտական հոգս ունենալ:
Պկան փոնել—ա. աղաչել, բ. սպառնալ:
Պկեն մնալ—ա. ուտելիս՝ կոկորդում մնալ, բ. չմարսել, յուրացրածի համար պատժվել:
Պկեն չոքել—հարկադրել, ստիպել:
Պկեն տակեն պոկ փսնել—չաղանալ, գիրանալ:
Պհավ տալ—բահով հողը փխրեցնել:
Պղնձահեռ անել—պղինձը հալելով զոդել:
Պնրխափան տեռնալ—գործը խափանվել:
Պնրկլխու տնիլ—սովորեցնել, հասկացնել:
Պնչրաթակ անել—մարմինը եղինչով ծեծել (բուժելու նպատակով):
Պոզ-պոզ անել—թշնամաբար ընդունել:
Պոկը թրչիլ—փոքր-ինչ խմել:
Պոկը հվաքել—ստիպել:
Պոկը ճըղոտել—շատ կանչել, բղավել:
Պոկն օնել—նեղել, տանջել:
Պոչը սիպտակել—ծերանալ:
Պռւրթակ անել—լիքը լցնել:
Պորտը ըստեղ (ընդեղ) կտրել—մանկությունն այստեղ (այնտեղ) անցկացնել:
Պըրպապե անել—պապին նմանակել, պապի դերը խաղալ:
Պըրպապե խոսել—մեծավարի խոսել (երեխային):
Պըլկանչի անել—ա. հարսանքի ժամանակ պարի հրավիրել, բ. սիրտ գաղտնիքը հրապարակել, գ. բոլորին հայտնի դարձնել (մի բան):
Պռուշ անել, պռըշ-պռուշ անել—լաց լինել (երեխային):
Պռուշը հաքել—կարոտել, անձկալ:

Պռուշնեն ուրուր անա կենալ—ա. շրթունքները քաղցրանալ, բ. սիրո ուժեղ զգացում ունենալ:
Պռուշտի անել—համբուրվել:
Պտըպատ ըղնել—անել վիճակում լինել:
Պտոկ անել—ա. վերքը հասունանալ, բ. գործը ավարտին հասնել:
Պտոկն օնել—թութը թափելիս՝ կտավը (շալը) թափվող ճյուղի տակը քաշել:
Պտռեր ուտել—գդալի փոխարեն՝ հացի պատառով կերակուրն ուտել:
Պտուղ տալ—պտղել, սերունդ ունենալ:
Պրանավը մնանա չքյընիլ—սոված, անոթի լինել:
Պրընհրենքյան ըղնել—բերանի քորքոքումով հիվանդանալ:
Պրընպարան անել—շուռումուռ տալ, շրջել:
Պրտըեր ըղնել—մեջքի վրա պառկել:
Պրտոլի հնցնել—փորի վրա պառկել:
Պուզուտակերը քցիլ—ա. ծուլություն անել, բ. չլսել:
Պöւթն անել—նոր տնկած վազը կարճ կտրել, որ ի զորու լինի ամրանալու հողում:
Պöլերը կոխ տալ—կարգազանցել, չափն անց կացնել:
Պöւնակ անել—ա. բնատեղ գտնելու թռչնային ուրախությունը, բ. շատախոսել, աղմուկ, աղաղակ բարձրացնել:
Պուպու անել—ընկույզը կեղևից մաքրել, փոխ. գործը շիտակ վերջացնել:
Պուտ անել—ա. պուտ ուտելիքը պատրաստել, բ. գրտին մատների ծայրերն իրար միացնել (մրսած մատներով չի ստացվում):
Պուք կյալ—պոկվել, փախչել:
Ջանա կյալ—չարչարվել:
Ջանը զրöւհարիլ—զարզանդել, վախենալ:
Ջանը լխլխալ—շաղ լինել:
Ջանը կյալ—կազդուրվել, շաղանալ:
Ջանը հեռ ըղնել—կռվելու ցանկությամբ համակվել:
Ջանը տուս կյալ—ա. չարչարվել, բ. մեռնել:
Ջլավ կյործել—ժամանակը զուր անց կացնել:
Ջմբարակը կտրել—անգործ մնալ:
Ջռիմը հանել—շատ բանեցնել, չարչարել:
Ռանգը փախնիլ—ա. գունատվել, բ. հիվանդ լինել:

Ռանգ ճնաշ տալ—ընդդիմանալ, վախեցնել:
Ռանգ-ռանգ փոխ տալ—վախենալ, երկյուղել:
Ռանգու անել—կողմնակալ լինել:
Ռեխը կախ անել—ոչինչ չանել:
Ռեխը շոռ ածել—ստամոքսի հոգսը քաշել:
Ռենը քաշիլ—վերքը մաքրել:
Ռըխռեխ ըղնել—ա. ձեռքից ձեռք անցնել, բ. քրքրվել:
Ռխավը ետ ասել—մեղքը վիզ առնել, ճիշտն ասել:
Ռխեն եշիլ—ա. լավ կերակրել, բ. ուշադրություն դարձնել, խոսքը լսել:
Ռխեն թեթ ասել—լռել, լռեցնել:
Ռխեն տալ—հոխորտալ:
Ռհելը քաշիլ—հեռանալ, քաշվել:
Սաբի տո̈ւս կյալ—արդարանալ:
Սաղանեն վեննը կոտրել—ա. գործի բնույթը փոխել (որ սատանան էլ հետը գնա), բ. բնական պահանջմունքները բավարարել՝ չնայած անպատեհ պահին:
Սաղն ըղնել—իսկությունն իմանալ, ճշմարտությանն ապավինել:
Սամթա̈վն անց չկենալ—չմոտենալ, մեկի հետ գործ չունենալ:
Սառնեն կյրիլ, ըրևեն տեմ անել—միամիտ գործ բռնել:
Սափն ըղնել—իսկությունն իմանալ:
Սերը Սահակավն ըղնել—մեծ տարիքում սիրահարվել, փոխ. ծիծաղելի ընտրություն կատարել:
Սերտը եղել (յուղել)—ուրախացնել:
Սերտը ըղնել փորը—խիստ վախենալ:
Սերտը թափել—ա. փսխել, բ. հանգստանալ գ. ասելիքն ասել՝ թեթևանալ:
Սերտը թեթևացնել—ցավը պատմել ուրիշի:
Սերտը կտրել—սրտահատվել, նախկին սերն ու համակրանքը մեկի նկատմամբ չունենալ:
Սերտը հեռալ—մեկի համար սիրտը ցավել, մեկին սրտակցել:
Սերտը հուվանալ—հանգստանալ:
Սերտը մա̈ստ պահել—հոգեկան ամրություն ունենալ, չվախենալ, չթուլանալ:
Սերտը փոլ կյալ—լացել, հեկեկալ:
Սերտը փոշ ընիլ—սիրտը ցավել:
Սերտը քանդիլ—բամբասելով՝ մտափոխել:

Սերտը քյրքիլ—սովածանալ:
Սերտը օտել—հոգեպես չարչարել, տանջել (մեկին):
Սիմ թխել—թառ նվագել:
Սիրի-սիրի անել—կողմնապահություն անել:
Սիրի-սիրի խաղ անել—ա. սիրի-սիրի բույսի տերևներով սեր գուշակել, բ. նույնը՝ «Ախնիգ-տղա» խաղ անել. խաղով՝ առաջին սիրո զգացումներն արտահայտել:
Սմախխտ տեռնալ—սովել, ուտելու կարոտ զգալ:
Սնդերքան վեր ածել—տեղի տալ, զիջումներ անել:
Սորաղ անել—հարցնել, փնտրել:
Սորփ-սորփ անել—աչքի լույսի պես պահպանել (մի բան, մի հիշատակ):
Սոնացիլ անել—աշնանը կատարվող ցելը՝ գարնանացանի համար:
Սվեխնը տնիլ—սառցի բարակ շերտով ծառերն ու դաշտերը պատելը, նաև՝ փողոցներն ու պատուհանները՝ ուշ աշնանն ու *ձմռանը:*
Սրտավն ընիլ—իր կամքով, ցանկությամբ լինել:
Սրտեն յրա յոր օնել—անմիջապես սրտին մոտ ընդունել, զգայուն լինել:
Սրտեն քյեփին նի կյալ—սրտի ցանկությունները չկատարել:
Սրտըպարան ընիլ—սրտակից, հոգատար լինել:
Սրտմնա ընիլ—զզվել, նողկալ:
Սրտումը դաղ մնալ—կարոտ, վիշտ ունենալ:
Սրտումը տպել—կանխազգալ:
Սութութ տալ—սահել, սղալ:
Սուսավ անել—լռեցնել (լացող երեխային):
Սուրգյ անել—շրջափակելով՝ կոտրել, ոչնչացնել (կենդանիներին):
Սուփրան հվաքել—մահանալ, վերջանալ, ավարտել:
Սևը փակել—օրը թխպել, ամպել:
Վախը եր քաղել—սնոտի միջոցներով վախն անցկացնել:
Վայ-վայ, հայ-հայ անել—անցած լավ ու վատը հիշել:
Վարթը ճլորել—տրամադրությունն ընկնել, տխրել:
Վարթը պենվալ—տրամադրությունը բարձրանալ:
Վարն ըղնել—գործը լավանալ:
Վարքար անել—կենդանացնել, շենացնել:
Վեթ-վեթ անել—կրքոտվել:

Վեղեն հվըurցնել—ստորացնել, խայտառակել:
Վենն անել—կանգնեցնել, ընդհատել:
Վեննա fցիլ—սպառել, վերջացնել:
Վեննա-ծերfա ըղնել—ծերանալ:
Վեննանը յrա վեննը փսնել—թռվռալ, ուրախանալ, ջահելանալ:
Վեննանը տական մին կյեղ հալիլ—սաստիկ ամաչել:
Վեննանը տակը fանղիլ—դավել, ննեգել:
Վեննանը տեղ անել—տեղավորվել, տեղ վերցնել:
Վենները հöւr մաղել—վախենալ:
Վենները մտակել—մահանալ:
Վենները fոr կյալ—ճանապարհ գնալու ցանկություն ունենալ:
Վեններն օնվել—վախից փախչել չկարողանալ:
Վեննը կախ անել—ա. դանդաղել, բ. անվճռական լինել:
Վեննը կենալ—կանգնել:
Վեննը կտrցնել—գալ-գնալն արգելել:
Վեննը չլինգ տեռնալ—ոտfը կոտրել:
Վեննը պաչիլ—աղաչել:
Վեննը տեմ անել—դիմադրել:
Վեննը տուս պրծնել—անհաջողության մատնվել, ձախողվել:
Վեննը փոշ ընիլ—ցավ, վիշտ կրել:
Վեռան կտrել, ոխեն տեմ օնել—ստորացնել, անարգել:
Վեռան urընուցու fաr կախ ըրած—դանդաղաշարժ:
Վեռեն բխշնղի անել—շռայլել, մսխել:
Վեռեն-կլխեն եշիլ—զննել, թերություններ փնտրել:
Վեռը թող անել—աշխուժություն անել:
Վեռը պեց ընիլ—ծայր աղfատանալ:
Վեռը վեr թողել—հիմնավորվել:
Վեռը ցեց տնիլ—մահանալ:
Վեռուfը տալ—հակառակ սպասածի կատարվել, շարդարանալ:
Վեռը փռնել—մեկի հետ գործակցել, հույս կապել, օգնություն հուսալ:
Վեսկեռն ըղնել—ա. պարեղանակը դուր գալ, բ. ոգևորվել:
Վետ-վետ անել—հոտոտել:
Վետեն ըղնել—կռահել, կանխազգալ:
Վեr թափել—ննխել, փտել:
Վեr կտrել—դավ նյութել:
Վեr պիրիլ—ա. հրացանի լեզվակը ձգել, կրակել, բ. պաշտոնից հանել:

Վեցուց անել—ա. վեց զույգ եզ լծել, բ. օգնել, օժանդակել, գործը հեշտացնել:
Վեր տալ—ծառի ճյուղերը (տալերը) բնածայրից հավասարաչափ կտրել ծառը ջահելացնելու նպատակով:
Վերցակ կտրել—պարծենալ, ափլորանալ:
Վեր օնել—իջեցնել, բեռնաթափել:
Վըզ ֆյրնիլ—զուր կորչել:
Վի-հա անել—ֆշել, փախցնել գիշատիչ թռչուններին:
Վինի-վինի անել—զռուցել (ակնարկվում է կանանց շատախոսությունը):
Վիսյաթ անել—պատգամել, վերջին խոսքն ասել:
Վլեյ-վլեյ անել—գլորվել:
Վնավսին ֆցիլ—լաց-կոծ անել, սգալ բարձրաղաղակ:
Վնենատակ ըղնել—ոտքի կոխան դառնալ, պատվազրկվել:
Վնենատակ տալ—ոչնչացնել, պատվազրկել:
Վնըրծերքն ըղնել—աղաչել, խնդրել:
Վնըրծուց ֆոն նիլ—ֆնել անկողնում՝ գլուխները հակառակ կողմի վրա դրած (ոտն ընդ ծոց):
Վեր աստված յրգինքան վեր կյա, ամա՜լ կյալի չի:
Վեր ասում ըմ Ղարաբաղ, պոռուշներս ուրուր անա յա կենում, կարում չըմ, թա պուֆ տամ:
Վերա՞վ ա թա՝ ծուռավ:
Վեր եր ընիս երգինքը, վեր կյաս... Տնա՜լի չի:
Վեր եշում ըս, մռնում ըս—զուճատ մարդուն:
Վերթն ա տեռալ, ջանս օտում ա (չար երեխային):
Վեր լուզուղ չընի, ֆաշ-ֆշեղակ յրա կտա, տանե:
Վեր տան մնըցածա ըմ պակաս, վեր մարթու ֆեցածա ըմ իվիլ (ասվում է հանաքի կարգով):
Վնըրծերֆա ընգած—ծեր, անաշխատունակ:
Վորկլխան կտրած զկեռ—կոլոտ ու շաղ մարդ:
Վսկոֆնեն այլեր անել—սաստիկ ծեծել:
Վրխկայիս կյետեն յրա ֆյընի, կցմաֆե—ճախորդ մարդ, անբախտ, անաջողակ:
Վրցըասա՜ն սկընալու—մաֆուր, անարատ:
Տախտեղ տեռնամ՝ պրա՜նաղ կծիմ, հալավ տեռնամ՝ դըվաղ կենամ, լուս տեռնամ՝ ծլլամ ծուցդ—սիրածից անբաժան լինելու ցանկությունը:
Տակե ֆարը կտրած ա—հիմքը խախտում է:

Տակը լիզյը, կլոխը լիզյը—աղքատության մեջ:
Տանավր էվող ածիս, պեն չը ըղնել ոչխը—աղքատ տուն:
Տափերը քանդիլ—արբունքի մեջ լինել:
Տաքութուն տալ—ա. հիվանդանալ, բ. բարկանալ, նյարդայնանալ:
Տաքութունումը խոսել—կցկտուր, անկապ խոսել:
Տեգ տուս քցիլ—տիկ հանել:
Տեղեն արթակ յոր օնել—գործը մաքուր կատարել:
Տեղը ծավ-ծավ անել—(երեխային) անկողնում միզել:
Տեղ-տիտիկ չընիլ—ա. կանգնելու, նստելու տեղ չլինել, բ. շատ մարդ հավաքվել:
Տերտակ բրուրուց բրորել—պարապ լինել, աննպատակ գործ բռնել:
Տեփեն տնիլ, պատան տալ—գործը կարգով, ճիշտ կատարել:
Տինիլ լցնել—շատանալ, բազմանալ:
Տիկրտնճկեն կյալ—հակառակվել:
Տկըպարան անել—խուզարկել, փնտրել:
Տկտկոնը եր անել—ա. ցավեցնել, բ. լացացնել:
Տ'եր-ավեր անել—ա. իջնել—բարձրանալ, բ. անհանգիստ լինել:
Տշտըմաղը վեր տնիլ—ա. հարսանքի ալյուրը մաղել, բ. հարսանիքը սկսել:
Տոշերը պլըթիլ—հասունացման շրջան ապրել (աղջիկը):
Տոշը թակել—ա. սեփական կամքով դուրս գալ մրցասպարեզ, բ. հասարակական մի պարտականություն իր վրա վերցնել:
Տոն տեռնալ—ընտանիք կազմել, տուն դնել:
Տոն-տոռն անել—մաքրել, սրբել:
Տպըկտապակը կյալ—ցավից գալարվել:
Տոնըպեցուկ անել—դուռը բացուխուփ անել, դռնովը խաղալ (երեխային):
Տրվըտար անել—տեղավորել, յուրաքանչյուր անասուն իր տիրոջը տալ:
Տուզի անել, տուզի անել, եշիլ—խեղճ ու կրակ հայացքով նայել, խղճուկ տեսք ունենալ:
Տումար տալ, եշիլ—անթարթ նայել:
Տքըհավ անել—ա. մեկ տաք, մեկ՝ պաղ օգտագործել, բ. դեսից-դենից սեղան պատրաստել, տաքն ու պաղը իրար մոտ դնել:
Ցաքում-կրակում տնիլ, էրիլ—մեղադրել, հանցանքի համար խիստ պատժել:

Ցեխը կոխել, տո̈ւս օնել—խայտառակել:

Ցիլ անել—հողը ցիլել, նախապատրաստել ցանքին:

Ցիրթերը ճղե անել
Ցիրթերը շաղ տալ } լացել:
Ցիրքերը կախ անել

Ցկըռ-մկըռ անել—ա. ցկըռ-մկըռ խաղը խաղալ, փոխ. լուրջ գործին խաղի բնույթ տալ:

Ցմըքհատ ընիլ—ապշել, զարմանալ:

Ցորտ կոլ տալ—մրսել:

Ցորտ յոր օնել—մրսել, (արևմտ. «պաղ առնել»):

Ուտա անել—ա. «ուտա» բացականչել, բ. փոխ. առանց մտածելու, կշռադատելու, տարերայնորեն գործ բռնել:

Ուսերումը եր քցիլ—չիմանալ ինչ պատասխանել, տարակուսել:

Ուրան անավ անել—տնեցիներին իր շուրջը համախմբել, տունը գլխավորել:

Ուրանան քյընիլ—ուշաթափվել:

Ուրան եղումը տպակվել—ա. ինքը իրենով բավարարվել, բ. ունևորության մեջ՝ տանջվել, տառապել:

Ուրան բռնեն մաշին պարանց ըղնել—յուրայինների դժբախտության պատճառ դառնալ:

Ուրան թափ տալ—իրեն հավաքել:

Ուրան թուփումը-ծուպումը նստել—յուրայինների հետ լինել, սիրել իր օջախն ու գերդաստանը:

Ուրան խոսքը առաչ տանել—համառել, իր ասածն անց կացնել:

Ուրան կլոխն օտել—ինքն իր մահվան (դժբախտության) պատճառ դառնալ:

Ուրան կուրցնել—գլուխը կորցնել, շփոթվել, մոլորվել:

Ուրան նհաշ տալ—իրեն ցուցադրել:

Ուրան չխարակը մանել—զբաղվել իր գործով, ուրիշների գործին չխառնվել, փոխ. հասարակական գործերին մասնակից չլինել:

Ուրգյունաշի տալ—ձմռանը արևկողի տալ, արևի տակ տաքանալ:

Ուրթումնանաք ընիլ—բազում անգամ երդվել:

Ուրթումնը ետ օտել—երդմնազանց լինել:

Ուրթումն օտել—երդվել:

Ուրո̈ւն անել—փնտրել, տեր կանգնել:

Ուրուշու աշկավ եշիլ—անտարբեր լինել, իրենը չհամարել:
Ուրուշու թերմացքավ կենալ—մուրալ, ապրելու այլ միջոցներ չունենալ:
Ուրուշու փարչավ ճո̈ւր խմել—համարձակ, աներես լինել:
Ուրո̈ւր անավ ածել—հաշտ պահել, խաղաղեցնել:
Ուրո̈ւր անավ ընգել—իրար հրմշտել:
Ուրո̈ւր անավ քցիլ—զանցանքը, մեղքը իրար վրա բարդել:
Ուրո̈ւր անել—մի կերպ կցել, կցմցել:
Ուրո̈ւր ըղնել—իրար հասկանալ, հաշտ ապրել:
Ուրո̈ւր ղյնամաշը եր ընիլ—իրար վիրավորել:
Ուրո̈ւր մես օտել—կռվել, իրարից ետ չմնալ:
Ուրո̈ւր նի կյալ—իրար վիշտ պատճառել, վինել:
Ուրո̈ւր պրա̈նում թքել—հավատարիմ լինել, համակարծիք լինել:
Ուրո̈ւր ռեխ կրծկործել—կոպտորեն վինել:
Ուրո̈ւր տշտշորել—վինել, իրար վիրավորել:
Ուրո̈ւր քցիլ—սարքել, շինել, գործը դրստել:
Ուրո̈ւր օնել—իրար բռնել (ով՝ ում):
Ուրո̈ւրոցավ ածել—կարգավորել, կարգի բերել:
Ուրո̈ւրոցավ տալ—իրար խառնել:
Փալանը փոխել—ա. նոր զգեստ հագնել, բ. պաշտոնավորվել:
Փայը պրծնել—էս աշխարհից գնալ, մահանալ:
Փա̈սա-փո̈ւսան քաշիլ—քաշվել, առմիշտ հեռանալ:
Փասին տալ—ծեծել, ծաղրել:
Փարշ անել—տունը, ճանապարհը գորգապատել:
Փարվանի տալ—ուրախությունից ցատկոտել, պարել:
Փափաղը պեցիր պահել—պարզերես լինել:
Փափաղը տափեն կյալ—հրաժարվել, հեռանալ:
Փեշխուրթը քցիլ—ա. առաջին արդյունքը երևալ, բ. սկսվել, սկզբնավորվել:
Փեշկան կտրել, ծույնանը քցիլ—աղքատիկ կյանքով ապրել:
Փթութ-փութութ կյալ—փութալ, ջանալ:
Փլստրատե տալ—փայլել, փայլատակել:
Փխրտորս անել—հարևանություն անել, փոխհարաբերության մեջ լինել:
Փշուր-փշուր կյալ—սիրտը փշուր-փշուր լինել, զգացվել:
Փորեն խափիլ—քիչ ուտել:
Փորը ծափ տալ—սոված լինել:
Փորը կտորել—որովայնը ցավել:

Փորը հացում ընկնել—ապրուստը լավանալ:
Փորը հլոր-հլոր անել—ցավել:
Փորը մաշկան կենալ—սովածությունից կուշ գալ:
Փորը պնդցնել—լավ ուտել:
Փորը վեց-վեց անել—սոված լինել, ուտել ցանկանալ:
Փորս անել—զոռոզանալ, անպարկեշտ ձևեր անել:
Փորումը արյուն կաթել—վախենալ:
Փոփ տեռնալ—ա. պտուղը գերհասունանալ, բ. զառամել:
Փոք տալ—զուռնա նվագելիս՝ թուշերն ուռեցնել՝ օդ կուտակելու և անընդմեջ նվագելու համար:
Փսնզյու անել—նույնը՝ քամե անել, քամե ներս տալ:
Փրշըփարա անել—պատառոտել:
Փրսըվեր ըղնել—ա. փորի վրա պառկել, բ. խռովել, գ. հիվանդ լինել:
Փուշերեն-թվերեն անել—հակառակվել, դիմադրել, չենթարկվել:
Փուշի հվաքել—մուրացկանություն անել:
Փուշերը պեց անել—թերությունները, թուլությունները բացահայտել:
Փուտին եր անել—ոչնչացնել:
Փուրացավ ընկնել—խնդիրք, պահանջ ունենալ:
Քաթ անել—պատմել, զրուցել:
Քաղ անել—քաղել, պտուղը ծառից, թփից կտրել:
Քաղ կյալ—ա. անասունների զուգավորվելը (կով, գոմշակով), բ. սեռական ցանկություններ ունենալը (աղջկա):
Քամակը կտրել—հետևել, սիրահետել:
Քամակը ներս չկյալ—սկսած գործը վերջացնել չկարողանալ:
Քամակը քշել—վախենալ:
Քամակը քշեղակ կոխել—պատժել:
Քամքաշ ընկնել—թերություն, պակասություն ունենալ:
Քանդ-քանդ անել (քնդըքանդի անել)—ա. համարյա ոչինչ չանել, իրեն զբաղված ձևացնել, բ. քրքրել, ինչ-որ բան փրնտրել:
Քան-քան անել—ստեղծել, ստեղծագործել, հնարել:
Քարեն քացի տալավ ապրել—դժվար ապրել:
Քարերը փեշկան վեր ածել—խաղաղվել, համաձայնել, հաշտվել:
Քարը գյոլեն կյալ—գործը խանգարել, փչացնել:

Քարը գյուրգյան վեր ածել—խաղաղվել, համաձայնվել, հաշտվել:

Քարը կապեն տեմ ըղնել—գործը դժվարանալ:

Քարը քարեն օտել—ա. ջրաղացը անաղուն մնալ, բ. սովածանալ:

Քարնից չընիլ—ա. գաղտնապահ չլինել, բ. փոխ. առնականություն չունենալ:

Քառոզ կարթիլ—խրատել:

Քեթը եր քաշիլ—չհավանել, գոռոզամտել:

Քեթը ըռնել—թեթևակի, աննշան տուժել:

Քեթը կախ անել—վիրավորված, նեղացած լինել, տխրել:

Քեթը կոտրել—ծեծել, խեղճացնել:

Քեթկալը վեր քաշիլ—նախապատրաստվել գործ սկսելու, զրուցելու համար:

Քեթ-քեթ անել—չհավանել, չմահավան լինել:

Քեթ-քթու տնիլ—մտերիմ զրուցել:

Քեմքերը պտռել—ա. կարծիքն իմանալ, բ. գաղտնիքներ կորզել:

Քըխկ անել—քաջությունը փորձել, վախեցնել:

Քըս-քըս անել (քըս տալ)—դրդել, գրգռել (շանը), փոխ. լարել մեկը մյուսի դեմ:

Քթան փռնիս, ջանը տուս կկյա—տկար, անուժ, վտիտ է:

Քթեն թխել—կանգնեցնել, հետ դարձնել, խանգարել:

Քթեն կյարի քցիլ—ա. զբաղեցնել, բ. կաշառել:

Քթև անել—զննել, բան փնտրել:

Քթըծկերավը վեր ածել—լավ կյանքից հետո՝ վատ կյանքով ապրել, չվայելել:

Քթոթ անել—ա. քջուջ անել (թռչունը), բ. զննել, փնտրել:

Քմական վեղրա կապել—ծաղրել, անպատիվ անել:

Քմական վետ օնել—մերձենալ, մոտենալ:

Քյաման տալ, քյաման քցիլ—կախաղան հանել, պատժել:

Քյանդիրը ծմակավն օնել—ա. ուժից, կարողությունից դուրս գործ բռնել, բ. դժվարին գործ ձեռնարկել:

Քյոթուն անել—չարաճճիություն անել (երեխային):

Քյոքը կտրցնել—ցեղը ոչնչացնել, իսպառ վերացնել:

Քյուլքյուղ անել—լիքը լցնել:

Քշկոռը ետ ընիլ—մեծանալ, բացվել:
Քոռ տնակավ մորթել—տանջել, չարչարել:
Քշրված ծառ եր հանել—չարչարել, տանջել:
Քռանգունը տնիլ—չլսելուն տալ:
Քռավ կյալ—այծի, ոչխարի զուգավորվելու ցանկությունը:
Քոըքռե անել—հրել-հրմշտել, չարաճճիություն անել:
Քսի-փսի անել—բամբասել:
Քստակեր տեռնալ—անասունների բերանները քիստահարվել:
Քրըպրանուկ անել—քարկոծել:
Քրըքար ըղնել—պանդխտել, թափառել:
Քրթեղեն ռեխն ըղնել—վնասվել, խեղվել:
Քրծըեր անել—խրտնեցնել, փախցնել:
Քուլուլ կենալ—ա. շների կռիվը, բ. երեխաների խաղը, կոխը:
Քուղումը կենալ—միշտ շիտակ, արդարամիտ լինել, չապականվել:
Քունա ըղնել—քնի ժամին այլ բանով զբաղվել:
Օթը բեշ անել—ա. հարկահավաքին խաբել, բ. գործը հաջող կատարել:
Օխծը պուճան տöս օնել—ճարպիկ, հնարագետ լինել:
Օխտը կաշի մաշկել—շահագործել:
Օխտը հետ թղըթաղե անել—զրախոսել, հայհոյել:
Օխտը ռանգ փոխ տալ—ամաչել, անհարմար զգալ:
Օղտեն քթöլավ ճöւր տալ—գործը կատարել՝ նկատի չունենալով դժվարությունը, գործը ըստ պահանջի չկատարել:
Օնգատն ըղնել—հաջողվել:
Օնքերը ետ մաշիլ—տխրությունը թոթափել:
Օնքերը չաթել—մռայլվել, ունքերն իրար բերել:
Օնքերն öւրöւր տալ—մռայլվել:
Օշը տեն անել—երես թեքել, արհամարհել:
Օռնավ կլխեն թխած—գիժ, հիմար:
Օսփոխ անել—օգնել, գործը թեթևացնել:
Օտել, կլխեն ճöւր խմել—ա. վերջացնել, բ. հետքերը ծածկել:
Օրան անել—փչացնել, ավերակել:
Օրը տժեր տեղ մթնել—անել վիճակի մեջ ընկնել:
Օրն իրիգյուն անել—օրը մթնեցնել:
Օքտան կյալ—պատժել:

Ախրդ խեր ընի, վերջդ պարի:
Անջեն ըք՝ ջնանաք, անտոն ըք՝ տնանաք:
Աշխարքս քզանավ լիանա:
— Աշկդ լո̈ւսի (ուրախության պահերին):
— Աշկդ լո̈ւսավ լիգյը կենա, փոխն էլ քեզ ընի:
Աստված ամբարդ լիգյը պահե:
Աստված էլ քու պերանդ հմղցընե:
Աստված հակեդ կենա:
Աստված մին հափուռ վեղու մեզ արժան անե:
Աստված շատ չի համարե...
Աստված պերանդ համեղ պահե:
Աստուծ ամեն մարթու բրած ո̈ւրան առաչը պիրի:
Աստուծ, աշունքս վեսկե չինիս:
Աստուծ խեր տա. փիս ա՝ լա̈վ ընի, լա̈վ ա՝ լա̈վ ընի (նորահար-սին):
Աստուծ արազդ պարին զադարե:
Աստուծ արթառեն յրգինքումը պահե:
Աստուծ արժանեն հակեն կենա. արժանեն անարժան չի համա-րե:
Աստուծ բախտեդ քար չքըցի:
Աստուծ, յոր չօնիս...
Աստուծ, ղաչանք ըմ անում. թակած տեղը թակիս ուչ, էրած տեղը էրիս ուչ:
Աստուծ շառը-փորցանքը մեր կլխան հեռե տանե:
Աստուծ պահե ժոնզեդ:
Աստուծ վերը յա̈վ ա, յավն անե:
Աստուծ ումբուրդ ըրկնցընե:
Աստուծ «ուտան» ժղըվուրթան անպակաս անե:
Աստուծ էնքան կյանք տա, էնքան ջնորք տա, ծնողնեն անփեշ-ման ընին, թևեր անին թռչին: Աստված վեչ փշմընոթո̈ւն տա (նորապսակներին):
Աստուծ քեզ թևեր տա, թռչցընե:
Աստուծ քեզ հզեր եղներ անե:
Բալադ տռն կյա:
Գյուրզյըդ լիգյը կենա:
Գյուրզյրնեդ շատ ըրչի:

Դուռը, պարիկանը սրտով ընին, դժուշմանու սրտով չընին (նորապսակներին)։
Էս տանան վեչ քուշտանաս, ներակ տանամ ծեր տոնը էս տանան կտրե վուշ (նորահարսին)։
Էրկան ումբրով ըլնի քար նախշողը, կարպետ կյործողը։
Էրկու շղարն ըք՝ մին տեռնաք, մնանաք. մնանաք, մին պերցու ծռանաք։
Էրկուսն ըք, ներվածք ըք՝ լնանաք։
Ընումավ ընի (նորածնին)։
Ըստուծանա մին լուս ծըլա քզ էտե (դժբախտ պահերին)։
Ըստուծանա մխքարիս (հանգուցյալի հարազատներին)։
Ըստուծեն խեր խըքըրը քեզ (ուրախ լուր բերողին)։
Իրեքվիս, նոաքվիս, եր հմբարցվիս։
Լավս տեսնաս, փիսս տեսնաս ուշ։
Լուսը ծըլա կյրըզմանեն (հանգուցյալին)։
Լուսը ծըլա քզ սրտ։
Լուս տեռնաս, լուսըվերվիս։
Խուխենավ ննուփվիք, մեխկ ա էս վեղը։
Ծառդ ծաղկե, սստխեր յոր օնե։
Ծառ-ծռանի տեռնաս։
Ծեծաղը ըրեսդ անպակաս ընի։
Ծեծաղը միշտ պրանեդ կենա։
Ծերքդ էրկան ընի։
Ծերքդ մրքավդ անց կցընիս, չոռս անգյունդ ծաղեզ տեսնաս, պմբըկու նման փափուկ ընիս։
Ծեր-ծռանա, ծերքը մրքավն անց կցընե, վերշը պարի ընի։
Ծնունդը պարի ընի, կնունքը տարի ընի։
Կապն էրկան ընի (նորահարսին)։
Կլխավդ պտըպտա անին։
Կյարունք ընի, խելունք ընի, ըշկընեյունք ընի։
Կնանչիս, կանանչ կենաս,
ժղըվուրքանց ճանանչ կենաս։
Կպարու նման ճղնըճանիս, կպարու նման ճղնըվերվիս, կպարու նման վղըվերվիս։
Հար-հավիդենական նոխտ մնաք (նորապսակներին)։
Հացեն՝ ըժընորըն, ցավեն՝ քնզորըն, մահեն՝ թողություն։
Հիշտեղ վեր է, ըստուծանա մին կար կարթե,
Հիշտեղ վեր է, ըստուծանա ծըլա քզ էտե։

Հիշտեղ քյընիք, պարավ քյընիք,
Հիբը կյաք, պարավ կյաք,
Ուջաղան վեշ պուք կյաք,
Միշտ նոխտ կենաք:
Հղըցավդ կնչկյարմուրը կապե:
Հու վեր եկալ ա, պարավ ա եկալ, մունք էլ ո̈ւրան տոնը պարավ քյընինք:
Հու վեր մարթու հրեյի հսնում ա, աստուծ էլ ո̈ւրան հրեյին հըսնե, հու վեր մարթու եշում ա, աստուծ էլ ո̈ւրան եշի, քյոմագ ընողեն աստուծ քյոմագ անե:
Գորթը նռաքվի, սոտը նղըվերվե, մեր ըշխարքան փախնի:
Գորմի կապ ու կամուրջ շնո̈ւղներեն:
Գորմի պարուն, պարութո̈ւնին,
Քրիստոսա հարութո̈ւնին:
Ճանապարը պարի ընի, արքայութո̈ւնան փայ-պեժին ընի (հանգուցյալին):
Ճանապարը պարի ընի, ետ չի եշի, նգյընատեղ չընի (հանգուցյալին):
Ճղպորու նման կանանչ ընիք,
Շոք տաք, շուքավեր ընիք,
Վեշ թափվիք, բար տաք, բրաքվիք:
Ճրո̈ւ նման էրկան ընիս, նրո̈ւ նման պարզ, նրո̈ւ նման սերտ հվըցնող:
Մաղարդ հարո̈ւր նեղնը տեռնա:
Մինդ էրկու տեռնա:
Մինը Քյուռն ընի, մինը՝ Արախսը. բրարին, վրարին,
Բարու կյան, բրանան, մին պերցու ծրանան:
Մին ծլիս, հազար ծաղկիս:
Մին կուտուր հացը մզանա անպակաս ընի, մեր սղանեն միշտ քթենվա:
Միշտ փնջված ընիք:
Ներակ էնդուր կընի, ժառանգը պարի կընի:
Ներակ էն յրգինքին, ներակ էն սրտեն, վեր սև չըն ընիլ:
Ներակ նա, հու վեր նրակեն կտեսնա:
Ներակ տեսնամ, աստուծ հար-հավիդենական կյանք տա քեզ:
Ներակ տեսնամ, աստուծ տա:
Շեն կենա մեզ ուտըցնող, կեց տվողը:
Շեն կենաս. օջաղդ շեն կենա:

Շուքավեր ընիս:
Ողորմա, աստված, ողորմա քաղցրերին (ավողներին):
Ողորմա մոնողանց, ապրին ողջերը,
Աստված ուղուրմը տընի մարթին սրտումը, մարթին ճանապարը էրկան ընի, չորս անգյունը կանանչ, ծաղկու նման պենվա, բար տա, կլխեն ծածկոցը կնճկյարմուր ընի:
Չար աչկը քչկովե:
Չարը խփանվե:
Չարը պրանա. թա պրանա վուչ, չար ցավու տրանա:
Պարավ ըս եկալ, պարավ էլ քյընիս:
Պարի սաթխեն, պարի սհաթեն ընի:
Պարի սաթխու տակե ընի (հարսանիքը), բախտավեր ընին (ամուսնացողները):
Պարին պարավ ա եկալ (բարի մարդուն):
Պերանդ քախծր կենա, չաղենքդ համեղ:
Սերունդավ մծանաք:
Սուրփ Պառակ, Նահատակ,
Ովտըրանուց, Սորփանուց,
Վըսկախաչ, Ըրծթախաչ, Պղնձախաչ...
Ուրուր անա խաչվին, մխթարվին,
Լիանան, ծովանան, վեչ քուչտանան:
Ուրուր անա միշտ տուզնը մնան,
Լուզ տան, լպզտին, կնճկյարմուր կենան:
Սուփրադ առանց լաքյա մնա:
Վեղ փոնիս, վեսկե տեռնա,
Օխծը փոնիս, կաքավ տեռնա:
Վետավ ընիք, փնչավ ընիք, բարու հսնիք:
Վետավ ընիք սզնու ծաղկու նման,
Հիշտըրդավ քյընիք, հետավ ընիք:
Վննը կյալիքդ պարի ընի:
Տանդ կնճկյարմուր կապե:
Տանդ հղեն վեչ կնանչի:
Տանդ օխտը բրուրուց զնգա:
Տանդ օխտը լայ-լայ զնգա:
Տեռնաք ճնուփած խնձորե:
Տոնդ ավադ կենա:
Տոնդ պրնձավ լցվե:

Տուֆ մեր տանը տխրության ըֆ եկալ, մուճֆ ծեր տեներր ուրախության կյանֆ:
Ուրանֆ ճւրանց սրտալն ընին, ուշուրնեն ճւրուր անա տեն չանին:
Քյոմագ ընողեն աստուծ ֆյոմագ անե,
Հակս փոնողեն ճակեն կենա,
Դայաղ ընողեն դայաղ կենա,
Հու վեր մին տա, ճազար յոր օնե:
Քու ճւր ապրե:
Օխտը խուփավ ճացու ճտխս:
Օխտը ճուֆյավ սուփրա պենաս:
Օխտը պորտղ լուս տեռնա:
Օխտը վերթավ ճռաֆխս:

## ԿԵՆԱՑՆԵՐ, ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ, ԾԻՍԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աստված ողորմա Քրիստոսա ճավատացյալ բոլոր ննջեցյալների ճոգուն: Աստված ողորմա Հայր Աբրաճամին, Գրիգոր Լուսավորիչին, 318 վարդապետանց, Մեյիֆսեթ ֆաճանային և թող նրանց բարի ու անարատ օրճնությունը լինի ժողովրդաց վերա:

Աստված ողորմի կամուրջ կառուցողանց, ախպյուր ու ակն շնողանց, մարդկանց ծռված ճակեն տեմ կնողանց, ըրփըվերի կնանուցը դալու կնողանց, եթիմ պճողանց...

Աստված ողորմի Կյեշանի ճոգուն և թող ճամբերության մաղթենք բարեկամաց:

Ժողովուրթ, ճաց կերեֆ, Կյեշանը ճաց օտող մարթ ա ըլալ:

Ա ժողովուրթ, էս մին կտոր ճացը լուխնին տանն էլ նարվում ա, փառք բստծու, սոր սա կարոտ մարթ չկա: Մունֆ կարող ինֆ էս մին թիֆա ճացը ամեզը մեր տներումն ուտինֆ, պայց վեր ճվաֆվալ ըֆ բստեղ, մեր տանը ճացը միճտեղ ըֆ ստում, սա սերության նշան ա: Խմինֆ սերության կենացը և պարեմաղթինֆ, վեր աստված մեր թմաճան կտրե սերության յրա ադրնի: Եր կալիֆ խմեցեֆ:

Ներակ տաճամ, ամեն ճինչ ճւրան տեղն ընի, ամեն ճինչը ճւրան տեղավը ֆյընի: Տանը լուխնին պառը, տառը, սիմը, սա–

զը բդի փռնե: Հու վեր կարում ա փռնըցնե, նա կենացը: Ա ժղովուրթ, տոնը սորփ ա, օջաղը սորփ ա, հու վեր սորփին աշկը փսոր չի քցիլ՝ նա կենացը:

Օտող-խմողեն կենացը, ուտըցնող-խմըցնող տղըմարթին կենացը: Հու վեր համ օտում ա, համ ուտըցընում ա, համ էլ կերածը պահում ա, նա կենացը: Հրփողեն, բոըխեն չափը չնըն-նըշողեն, մարթին հալալ հացը վեր ըծողեն վեչ կենացը:

Լավ ընինք, զա̈ռավ ընինք, ողջ ընինք, առողջ ընինք, սաղ ընինք, սլմաթ ընինք, միշտ ընինք, հիշտ ընինք, մարթ ընինք, վարթ ընինք:

Սաղ ընինք, օրախ, վեչ կոնդ ընինք, վեչ չոլախ: Պարզիրես ընինք, սվիրես չընինք, ո̈ւրուր դո̈ւզ աշուք եշինք, ո̈ւրուր անա *ուշուրնես* տեն չանինք, մեր պարըլուսը հալալ պարըլո̈ւս ընի: Եր կալիք, խմինք մեր հալալ պարըլո̈ւսին կենացը:

Հու վեր էս կործավը ուրխացալ ա, նա շատ կենացը. հու վեր ուրխացալ չի, նա էլ կենացը, բա̈լի խելքը կտրում չի, աստված կարողություն տա, էն էլ ուրխանա: Իսկ հու վեր էս ուշաղեն փիսն ա օզո̈ւմ, նա վեչ կենացը, ընդինը թող քյընի տկլոր ցաք շլա̈կե, քերծավը թուլ ըղնե:

Պարի կործ փռնողեն, պարի կործավը ուրխընողեն, պարի կործեն թա̈րիփ ընողեն կենացը:

Հու վեր նեղ տեղ ա, նա կենացը, եռնայինը նա տեղը հրզկըցնե: Հու վեր ղարիբթունում ա, վեղեն, ուշաղեն, խուփեն, օղլուշաղեն հետե հո̈ւրու պռուշ նաքում ա, հնար չի քթենում կյա, նահանց շատ կենացը:

Հո̈ւրու աշկ հղըցու վա, հո̈ւրու փոր հացու կարոտ ա, թող հավք տեռնան թռչին, հրիշտակեն թվերավը կյան, ո̈ւրանց մին հափուռ վեղեն արժան ընին:

## ԱՆԵԾՔՆԵՐ

Ազարը նի օնե ծեզ:
Ազարը տանե ծեզ:
Ախծավ հնցընիք (անաստւնին):
Աղու օտիս:

Աղու-ղդե օտիս:
Աղու տեռնա կերածդ, քեզ սպանե:
Անդար անիմ քեզ (անասունին):
Անդար մնաս (անատունին):
Անիծյալ ընիս (անիծվածի):
Անխեղնը տկլոր ցաք շլակե, ուրըսար շոռ կյա:
Անտակ ծովն ըղնիս:
Անումդ քարեն կյըրիմ:
Աշկդ խվարե:
Աշկդ ճեռա:
Աշկդ ճեռա, վեր թափե:
Աշկդ պլթա, վեր տեռնա:
Աշկեդ բաքագը կոխած:
Աշկումդ մազ փսնե:
Աստված ընեծի քեզ:
Աստված քեզ քոր տա, ղեյնը չտ
Աստուծ կլխեդ քարեր վեր ածե:
Աստուծ կտրե շան խասյաթդ:
Աստուծ կտրե քեզ:
Աստուծ տանե-պտանե:
Արեդ խվարե:
Արքանդդ կրըկուփ կյա:
Բողմա օնե քեզ:
Բոյդ տափումը տնիմ:
Գյավուր մնաս:
Գյուլլաթակ տեռնաս:
Գյուլլան սրտադ կենա:
Գյուլլըխարավ ընիս:
Դալուդ տափան կենա:
Եթիմ մնաս:
Եռնայինը քեզ մին թա̈ճրու տընի:
Եսիր ըղնիս:
Եր ճմքարցվիս:
Եր քաղվիս:
Էրվիս-փթոթվիս:
Ըլա̈ծդ կտրե:
Ըլա̈ծդ պերցու տակե օտիս:
Ըշկաճեռ:

Ըշկըճեռան ըղնիս:
Ըշկըճեռեն ցավան ըղնիս:
Ըռնըթաթալի ընիս:
Ըռնում կենաս:
Ըռնում ճմրթիմ քեզ:
Ըռնըփրթո̈ւշ տեռնաս:
Ըրածս աշկերդ օնե:
Ըրևու զարուր մնաս:
Թա ծնողքդ ուրանաս,
    էրկու աշկավ քոռանաս,
    էրկու վեննավ չուլխանաս:
Թեգունքդ տափան կենա:
Թորը եշիս՝ ինձ տեսնաս,
    Թորը շոռ կյաս՝ ինձ   քթենաս,
    Միանտերան ըմ օզա̈լ:
Թունբաթուն ընիս:
Թուրունն ըղնիս:
Թուրունն ըղնիս, խրավվիս:
Թուփավ-ծուպավ,
    Ակավ-տակավ,
    Հունավ-տունավ,
    Տեղավ-ցեղավ ննջըվիք:
Ժմաժենքը քեզ տանե:
Ժմըժենքավը քյըննիս:
Իրեսդ կարիմ:
Իրեսդ կտրվե (շան իրեսդ):
Իրեսդ սվանա:
Լլկըվիս, լլկըցավան ըղնիս:
Լղե օտիս:
Լոբիդ օտիմ (ասվում է կատակով):
Խափան մնաս:
Խզըխուր մնաս:
Խոր խուրանա տոհմածառդ:
Խոռկը պկադ կենա (անասունին):
Խոռկ օնե քեզ (անասունին):
Խվարվիս տու:
Խորախանդակ ըղնին մեծամեծերդ:
Ծառդ պտուղ չտա:

Ծերքդ մեկնիս, վեչ եր կենաս:
Ծհանվիս տու:
Ծծամեռ (ընիս):
Ծպուտդ կտրվե:
Կալ-մարաքդ կրակ ըղնե:
Կապավ հնցընիք (անասունին):
Կլխավս մատաղ քյընիս (կլխես մատաղ ընիս):
Կլխըվեր քյընիս:
Կլխեդ քար ըղնե (ղայա տրաքե):
Կլոլվիս տու (տու կլոլվիս):
Կլոխդ մոշիմ:
Կլոխդ վեղավ անիմ:
Կյիժավ ըղնիս:
Կծըքամ տեռնաս (ընիս):
Կոնդդ թաղիմ:
Կտորվիք տուք (անասուններին):
Կուռներդ վեր տեռնա:
Կուտանա ընիս (տեռնաս):
Հավատդ ճաքե:
Հավատ նստե:
Հափուռդ կոչ կյա (ժլատին):
Հինչու ինձ ասում ըս, ըրեսադ կենա:
Հիշտեղ եշիս, ինձ տեսնաս:
Հղեդ ցաքիմ:
Հրսանեքդ փռնած մնա:
Ճակատդ շռն հսնե:
Ճոթերդ ցրև կյա:
Ճռավ հնցընիք (կտորվեք):
Մազերդ տխտակեն սանդրիմ:
Մահավ ըղնիք՝ մաքրվիք,
Տանավ-տեղավ թմզվիք:
Մահը ըղնե մշրնեդ (անասունին):
Մաշկեդ սեռը կոտրե:
Մեսդ վեր թափե:
Միլլիմիրի մնաք (թռչուններին):
Մինդ էրկու չտեռնա:
Մին մաննը մոխեր քեզ ծածկե (հանաքով ասված):
Մին ծկիս, օխտը փքիս:

Մին չալ օխծը փոռաղ կենա:
Մին շմուշկավ օխտը մղակավ նի մննիս:
Մին ֆաշալ խաթա ֆեզ պշպշոռե:
Մշկանոռ տեռնաս:
Մոխեռս կլխեղ (վեռեղ):
Մսըպոտիս, մեսղ օտիս:
Մռմնջավ ըղնիս:
Յաղին տանե ֆեզ:
Յոխ ընիս տու:
Նի փըթածղ տուս տաս:
Նոթան ածիմ ֆզ առա:
Նոթը ծլլա ջանեղ:
Նոթուտ տեռնաս:
Նստիս՝ էռի, եռ կենաս՝ էռի:
Շան-կյուլու փայ տեռնաս:
Շան միլլաթ:
Շան փայ տեռնաս:
Շեմբաշեն ըղնիս (փուշի ճվաֆիս):
Շնըկոտեզ (շան կոտեզ):
Շեռֆղ կտռվե (աստուծ կտռե):
Ձառռ օնե ֆեզ (անասունին):
Պառղ աստուծ կտռե:
Պառղ կտռվե:
Պեժինֆղ կապած մնա:
Պլանաս, շոլեռն ըղնիս:
Պլռեն մառը պկաղ կենա:
Պլռս պկաղ կենա:
Պլռը ֆեզ յոռ օնե:
Պոշեռղ պկավղ տամ:
Պոշեռղ վեշ սպտակե:
Պոշեռղ տխտակեն սանդռիմ:
Պոշեռղ ֆանղիմ:
Պռանեղ վեռ ընգածը գյուռգյըղ ըղնե:
Ջանղ մռմնջա:
Ջանղ մռմռնջ օնե:
Ջնանեռ նստիս տու (ջնանե՛ռ):
Ռամուզղ կտռվե (ֆու):
Սեռմղ կտռվե:

Սերմդ փուշ տöւս կյա:
Սրտամեռ-կլխամեռ (սրտամեռ):
Սրտըխարավ ընիս:
Սրտըմնա-սրտըկուտուր տեռնաս:
Սրտումդ տխկըռտենակ տեռնա (կերածդ):
Սև անիմ խելքեդ կցանը:
Սև անիմ խելքդ:
Սև առակը քյընիս, վեր քյընողը կյամ չի:
Սև խվարեն տակը քյընիս:
Սև խավարը քյընիս, ընդեղ քյընիս, վեր քյընողը ետ չի նում:
Վայիդ նստիմ, փայիդ նստիմ:
Վարամ օնե քեզ:
Վեշ ընիս, փոշ ընիս:
Վեշ բրարիս, վեշ դլäրիս,
Հանց շուրանաս՝ վեշ վրարիս:
Վեշ մծանաս:
Վեշ պտղվիս:
Վեշ օր տեսնաս, վրշանաս-փուշանաս:
Վեսկեոդ ծկըթոտե (ծկըթե):
Վեր թափիս տու:
Վզäհոռ-մշկահոռ տեռնաս:
Վիրքուտուրքդ կրակ ըղնե (էրի):
Վններավդ քյընիս, մաշկեդ յրա կյաս:
Տափան կենաս, վեշ եր կենաս:
Տափերը շնգոռտիս:
Տափերը տփտփիս:
Տափը թումբ անիս:
Տեղդ տերտակ մնա:
Տերտակ նստիմ քզäնավ:
Տերտակ նստիս:
Տխկըռտենակ տեռնա, պոկդ օնե (կերածդ):
Տխկըռնակեն-տխկըցավեն կյաս:
Ծխկըռնակեն ցավեն կյաս:
Ծնածակ:
Ծնաքանդ:

Տոնդ ըրիքնակը քանդի:
Տոնդ խվարէ:
Տոնդ ծակվէ:
Տոնդ կրակ ըղնէ:
Տոնդ պած ըղնէ:
Տոնդ վայվրուդ ըղնէ:
Տոնդ վարիմ, բոստան անիմ:
Տոնդ փրսըվեր ըղնէ:
Տոնդ քանդուքարա տեռնա:
Տոնդ քանդվի:
Տոտոնդ պած ըղնէ:
Ցավս պկեդ վեր կյա:
Ցավու-ցցու կյաս:
*Ցաքավս ցաքվիս:*
Փսոկդ կտրվէ:
Փրթըվիք տուք:
Փուշի ճվաքիս:
Քա մոր արքանդը չուրանա:
Քաշկավ ըղնիս:
Քաչալ խթավ ըղնիս:
Քացախ օտիս:
Քացախ օտիս՝ քցախիս:
Քյընիլդ ընի, կյալդ չընի:
Քյուղվիս տու:
Քյումադ նի կենա:
Քնըծմըռու հայ:
Քռանաս, քուտանաս,
    Տափան կենաս, վեչ եր կենաս:
Քրքրվիս տու:
Քու եղավդ եղվիս,
    Քու դաղավդ դաղվիս:
Քու լա̈վը մեռնէ:
Օնքերդ կտրվէ (մռայլ մարդուն):
Օնքերդ քեզ կտըրէ:
Օխտը պորտդ չուրանա:
Օջաղդ բուստընատեղ տեռնա:

## ՍՈՒԳ

Հանգուցյալի ծնողներն ապրում էին Բաքվում՝ միշտ էլ անբաժան հայրենի Եմիշճան գյուղից: Նրանք երկու տղա ունեին: Նրանցից փոքրը, պարտադիր զինվորական ծառայությունը կատարելու ժամանակ զոհվում է Սև ծովում՝ խեղդվող ընկերոջը փրկելիս: Հայրենական պատերազմի տարիներին այնտեղ էր զոհվել նաև նրա մորեց պապը: Հայրը զոհվածի դին ամփոփում է պապենական գերեզմանոցում: Վաղամեռիկը օժտված էր նկարչի բնատուր շնորհքով և ամենայն ջերմությամբ կապված էր գյուղին:

**ՄԱՅՐԸ.**— Ախ, աստուծ, թակած տեղը հի՞նչ ըս թակում, էրած, մոխեր տեռած տեղը նորը հի՞նչ ըս էրում:

**ՍԳՎՈՐ ԿԱՆԱՆՑԻՑ ՄԵԿԸ.**— Ղաշանք ըրա ըստծու խոխադ ետ պիրի, ախնի:

— Ես միննաթ չըմ անում ըստծու, ինքն էլ ա գիդում, պա նա աստուծ չի՞: Հու վեր տեսալ ա էս ցավը, ես նրան մատաղ, հու վեր տեսալ չի, էլ տեսնա վուչ: Սա դöրդ չի, էրած թուրուն ա, ռեխը կապած, ես էլ մաշին, էլ պրծումնը չկա:

Շուքերը թանձր ար քզ էտե, նի կենան էդ շուքերը, ներերը գորտ-գորտ ար քզ էտե, նի կենան էդ ներերը: Ախնի, մինը կա վուչ ասե՝ խե՞ տի յըս ասում, պա բալադ էդ շուքերումը շոռ ա եկալ, պա բալադ էդ ներերան խմալ ա: Էն շոքը թող թանձր կենա, պա էն շուքումը օրիշ բալենե չըն շո՞ռ կյլական, պա էն ներերան նոր-նոր բլենե՞ չըն խմըլական: Աստուծ, թող նöւրը գորտ-գորտ կենա:

Էրկու շևին մինը տակռավը պուք տվեն, մինն էլ ծռալ ա մին ընգյունին յրա, աղերս ըմ անում, թողիս ուչ խոխաս կռանա, աստուծ:

Միշտ տղտöղալ ըմ, վեր իմ ախպեր մադար ա, համ մադար ա, համ եթիմ: Աստուծ սկացալ ա, ասալ ա՝ մդարա հöզ ըս անում, նոխտդ մդարե: Ես մարդու փսոթուն չըմ ըրալ, իմ մարթս ըրալ չի, հո՞ւ վա ասալ, թա՝ տանդ նզամը ծռե: Մամա, գիդում ըս խե՞ Ռոդիկը պերալ ըմ կոշտդ, տու սվեր ըս, աստուծ հինչ դöրդ տամ ա, տմöնում ըս: Ախ, մամա, քզանա նեղ ըմ, վեր ինձ մծըցրալ ըս, դöւզ չըն ասալ, վեր ասալ ըն եթիմը ապրել չի: Ըպրեցե, վեր էս օրս տեսնամ:

Մատաղ անիմ քեզ, վեր ասալ ըմ առանց քեզ կարել չըմ կենամ, քյընում'էր շենը, պա տի՞ յըն քյընում շենը, պա տի՞ յըն կյամ շենը: Էդ նո՞ւնց ըս եկալ շենը: Պա շենը կյվողը տխտա-

կումը կկյա՞: Պա չենը կյվողը տերտակ կկյա՞ տատուն կոշտը: Ս սերտը լիգյը բալա, ա խելֆավ լիգյը բալա, ա շենֆյավ լիգյը բալա:

Բանակ ճանապարհիս ֆեզ ասալ ըմ՝ խելուճֆ կկենաս, պլոթուն շանիս, չաճիլ ըս, չճըլոթուն շանիս, ֆշտեղ կյող կըճի, տու կյըղոթուն շանիս, պրանեղ թիֆան ճնգերեղ ճճետ կես կանիս: Հինչու ասալ ըմ, ըրալ ըս, պա ես ֆեզ ասալ ըմ կյանֆդ էլ կես կանիս ճնգերեղ ճճե՞տ: Ս ճամռող, պա կյանֆը կես կանի՞ճ:

Ես Սև ծովը էն տական չըմ սիրալ, սև մնա ծովը, իմ ճոռ էլ ա ծովեն մթնումը մնացալ: Վիշապու նման ճորս կոլ տվեր, պա վերթուս խե՞ կոլ տվեր:

Մամա, մճե մտֆումդ ասում ըս՝ ես ֆեզ տի չըմ խրատալ, խե՞ լուզուդ պեցվալ ա իմ ֆշտես, էս ժղըվուրթեն ֆշտեն: էս լոխ Ռոդիկն ա ինձ տվալ, էս լուզուն Ռոդիկն ա պերալ պտանեն ճճետ: Մամա, ֆու պատերազմդ 41 թվին ա ըլալ, իմ պատերազմս էլ մճենգ ա: Հայը ճիրի՞ յա կովա տուս եկալ, վեր մուճֆ տուս կյանֆ:

ՏԱՏԸ.— Գիդում չըմ թա երգինֆն ա մեղավեր, թա օրենֆը...

— Մամա, սահմանան տուս չկյաս: Վեր խաբոր տվեն, թա ճորը կյա, ըսեցե՝ իմ խուխես ճորը չըիդի ծեն տան, ամեն ճինչ մտֆավս անց ա կացալ, էս օրը մեննս չի եկալ:

Մայր ճող, խոխաս ֆեզ ճավերժական ճվեր ըմ պերալ: Վեր էրկու ճետե պեցիր խոսալ ըմ, ծենս կտրալ ա, մճենգ ամբողջ ծենավ ֆեզ ղաշանֆ ըմ անում, խուխես տեղը փափուկ կպանիս:

Շնուրճակալ ըմ, աստուծ, ղորթ ըն ասում՝ առանց ճար դոռղ չըճիլ, շնուրճակալ ըմ, աստուծ, վեղը մեր սերտը կյըմրցենլի ճետե ըս ստեղծալ:

Բալան ֆսան տրեկան չըճիլ, բալան էրկու ըմսական կըճի, ըլեն ըշկըտրածը օրիշ տանել չի, ըլեն ճշանածը մճիլում չըճիլ:

Վեր ճստալ ա, թա ճկար ֆաշի, տարվալ ա յրգիճֆավը, տարվալ ա խոտ ու ճավֆավը, ճեռե ըճֆ կացալ, ուզեցալ չըճֆ խըճզարիճֆ, խոխաս սիրալ ա սյաֆ–սյաֆ կործը. ժղովուրթ, յրան սյաֆ–սյաֆ լաց ըլիֆ: Ուրթումճ ըմ կերալ՝ տղամարթ կենամ, ստես կրակը թուճդ ա, կարում չըմ սուս անիմ, ժղովուրթ, ճեռող ըճիֆ:

Վերջին ճմակումճ ասալ ըս՝ մամ, ճոյեմբերին կյլական ըմ: Հալա ճոյեմբերը եկալ չի, սպասում ըմ, ճուսս կտրալ չըմ, շատամ

կկյաս, շտամ մե հետ էլ կտեսնա՞մ: Հինչ անմիտ ըմ ես, չէ՞ որ աստվածանից իմ պաժինս էս ա:

ԿԱՆԱՆՑԻՑ ՄԵԿԸ.— Ախնի, էսքանը վեր ածում ըս քու մոր տո̈շը, նա հունց ա տննական: Ախնի, էսքան ծլըցեն քու մար հո՞ւնց ա տմննա̈կան:

— Մամա, ես միշտ ասալ ըմ, Ռոդիկը իմ պապու նման ա, էլ հի՞նչ ախնիգ ըմ, վեր իմ պապու փայ չըմ տլական: Ռոդիկը փայ ըմ տամ պապուն, պապան աշկը թուններու յրան ա քյե-ցալ:

— Կրիքոր (ամուսնուն), ծովն ընգողեն պրծումնը չկա, գի-դացալ ըմ, թա կրլական չըս| քթենաս պիրիս: Շնուրհակալ ըմ քզանա, տու միշտ էլ ընձ էտե պարի ըս ըլալ:

Տոռնը թխկա՝ սերտս էլ ննետն ա թխկըլական, սալդաթ տեսնամ, սերտս տղըհան ա ընկական, ծով տեսնամ՝ սերտս պըր-տուղլական ա, այ իմ խուխես հնգերունք, նլլընելլի տուք կըր-վաք իմ աշկես, տուք ընձանա անպակաս ընիք: Աստուծ, սա-հանց ճանապարը պարի անիս:

Ասում ըն՝ քյնողն ա քյընում, մնողն ապրում ա, հինչ նա-մա̈րդ խոսք ա, պա էս ապրե՞լ ա, վեր ես ապրում ըմ: Քյընողը քյընում ա, ծնողն էլ մեռնում, վեննանը յրա փսաշոր ա տեռնում, քյընող խուխեն ննետ ծնողն ա մեռնում:

Դե, վեր լսեցեր ուշ իմ ղաշանք-պղատանքս, այ իմ բալա, քյընում ըս, էլ դըետ եշիս ուշ, ինձ կեշիս, իմ հետաս կկյաս, տու ինձ ըս ըլալ սիրիիս: Պոատած կյանքդ էլ կբախշիս Եղիշին (եղբայրն է), կբախշիս Ռազմիկին (տղան է): Աստուծ, տու էլ սկաց: Հանց ըրեք Եղիշան լաց ընիիս տեսնամ ուշ: Ասալ ա, ա քուր, մունք պապա չընք ասալ, բայց ինձ պապա ասող կա՞, ես բախտավեր ը՞մ:

ՍԳՎՈՐԻ ՔՈՒՅՐԸ.— Ռոդիկ, նամա̈րդ ընիս տու, պա իմ ջա-հիլ քվերս հնգիստին հղեն խե՞ նելլի ննաշ տվեր: Հո՞ւնց կպե-ցեր նրան հնգիստին վեղեն: Քույրիկ, լաց իլ, լա̈ցը դնջոթուն ա, լաց իլ, լաց ընինք, թթվանանք, բայց հանց ըրա, աստուծ մեզ միշտ լա̈ցին հղցեն չտեսնա, կգիդա թա լացը սիրում ընք:

— Էնքան դա̈րդս մեծ ա, լուխնին բոլ-բոլ ա, աստուծ, ես հո̈՞ւր ըմ հինչ ըրալ, հո՞ւ վա ինձ ընեծալ, հո՞ւ վա ասալ՝ հե-ռավ ըղնիս: Ես հո̈՞ւր ըմ հինչ ըրալ, հո՞ւ վա ինձ ասալ՝ թու-րունն ըղնիս, հո՞ւ վա ինձ ասալ՝ նոխտդ կնդե, հո՞ւ վա ինձ ա-սալ՝ խըրվխարավ կյաս: Ասալ ըմ՝ էրկու տղա ըն, ո̈ւրուր դա-

յաղ կընին, պիծինը մեծեն մնակալ կընի: Մնակու տարե չի, մղարու տարե չի, մինակը ցավեն ումանալ չի, fարեն ումանալ չի, չառեն ումանալ չի, պա հո՞ւնց կանիմ, աստուծ: Մեծ դարդ, տու ինձ թա̈հրերը կսրվրցնիս, մեծ դա̈րդ, տու ինձ փա̈նդերը կսրվրցնիս, մեծ դա̈րդ, թաfուն բա̈նդերը կսրվրցնիս:

Մեծ սար, թվավուր սար, մարաfավուր սար, ջրգյավուր սար, (դիմում է Ջարգյամարագ սարին), հնարավուր սար, հանդ, ծառ, ախպյուր, ծաղեգ, լաց ըլիf:

Ծառան ճեղնը վեր կըղնե, լոխ էրկու ճեղն ա, վեր մինը վեր ըղնե, տակեն ծառ կմնա՞: Պա ծառը ճեղնը չի՞ տալ, ետնան վեր ըղնել:

Լա̈ցին սուրը կտրվե: Սերտս յարա յա, անդար ըմ, անբար ըմ, անfոն ըմ, անտոն ըմ, Ջարգյամարագ, ինձ էլ եր կալ խու-խես նհետ, ներակ խուխես կոխfե մոլներեն: Ներակ տեսնամ մինչև պիծինս խուխես հանած էս չորերը կյենալը, ես կենամ ուչ:

ՍԳՎՈՐ ԿԻՆ.— Պա առանց մամա բալան հի՞նչ կանին,
Պա առանց թալա լալան հի՞նչ կանին,
Պա առանց բալա մաման հի՞նչ կանին...
Բալա-բալա, դաշա̈նգ բալա, սերուն բալա,
Բալա-բալա, թերհար բալա, կեսհար բալա,
Բալա-բալա, հիշտեղ fյընիս ինձ տար,
բալա:

ԱՅԼ ՍԳՎՈՐ.— Պա fոլերն ի վեր fարշ չըմ ըլա՛լ,
Պա fարերն ի վար թուլ չըմ ընգա՛լ,
Պա երգինfն ի եր պրպառա՞լ չըմ,
Պա fշեր-ցիրեկ լաց չը՞մ ըլա̈լ,
Հու fար չըմ ըլա̈լ,
Քար տեռնա մարը:

ՄԱՅՐԸ.— Ծանդր fար ար, տրին սրտես, մեծ կրակ ար, ըծեցեն ծուցս:

ՍԳՎՈՐՆԵՐԻՑ ՄԵԿԸ.— էդ թուրունը ես էլ ըմ ընգալ,
էդ կրակեն մաշին ես էլ ըմ էրվալ,
էդ ցևfան ես էլ ըմ վեր ընգալ,
Այ բալա, վայ, կորած բալա վայ...

ՏԱՏԸ.—Ամեն ուռքունա եր ըմ կացալ, Նհըտակեն եշալ, ասալ՝ ա Նհատակ, խոցս հակեն կենաս: Վեր ըրիfնակը տո̈ւս ա եկալ, ասալ ըմ՝ ա ըրիfնակ, խոցս հակեն կենաս: Ամեն ո̈ւրուգ-

յուն վեr լուսննգյան տուս ա եկալ, ասալ ըմ՝ ա լուսննգյա, խխոցս հակեն կենաս: Լոխ սոտ տուս եկեն, աշխաrfս ընձ էտե սուտից, էլ հավատ չմնաց, մհենզանց տենը մին պենու էլ կնըվատա՞մ: Էս օrանց տենը ընձ էտե Նհատակ չկա, ըrիfնակ չըկա, ուրթանա չկա, լուսննգյա չկա: Իմ փայս կrակ ըղնին լոխ, հունցու կrակ ընգեն, փթոթվին լոխ, հունցու փթութվեցեն...

Ժղովուrթ, նrաfվիf տուf:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Ավ-ավ, Բաքաղուշի, Գյուղլկանե, Դլլըfփոսե, Դնգլե, Եrնեկ *տեսնեմ ով պիտի գա*, Ջոփի (*կոխի մի տեսակ. հակառակորդները հrում են իrաr կrծfով և ուսեrով, մինչև մեկն ու մեկի պաrտվելը*), Ըշկըրնպովան, Ըrկըrնցուփե, Թոփե (գնդակախաղ), Թուխկըլաշի, Թուխկակոխ, Թուշ օնել fցիլ, Լուfտանե (եrկաrությամբ և բաrձrությամբ ցատկելը. ցատկում են եrկու ձևով՝ վազելով և եrկու ոտfեrն իrաr միացrած), Խզըցուփե, Կլըկոնձի, Կլըպնդrեզի, Կլոխը տնիլ կուռնըտակեն, Կմբլեշի, Կյrթնուկ-Կյrթնուկե, Կնդըթամբի, Կոև-կոև, Կոխ (իr տաrատեսակնեrով. մհակ թխել, զոփի, fյանդիr ծիf տալ, լուfտանե, նշընfաrե, վազ տալ և այլն):

Հաքի, Ճուխտըթամբի, Ճուխտըկնդե, Մծըfաrե (նշանfաrե), Մհակ թխել, Մննըfաrե (մոլլաբrի), Մշկըհոռե, Մուղանգախ, Ցխըկոև (եխա, Ցըխըղ անե), Չլնգի, Չխկլի, Չոփենքսե, Պլլըպաշի, Ջջըլախտե, Սպոլիշխանե, Վազ տալ, Տնըկտնակե, Տնըտրնե, «Ցկըտ-մկըտ», Ցուփե, Քսկrենfի:

Վերջում մայրերը (խաղի գլխավորները) հաշվում են ու որոշում հաղթողներին:

Վաղօրոք առանձնացնում են երկու մեծ քար (սորփ) («Աչի քարը իմն ա, ծախե քարը քունը»): Յուրաքանչյուր հաղթանակից հետո «սուրբ» քարի մոտ ավելացնում են փոքրաչափ քարեր՝ հաբեր: Շատ հաճախ հաբերը հաշվում են հանդիսատեսները և նրանցից արդարամիտ մարդիկ «դատ են անում»: Մայրերը խաղը վեր են լուծում, թե որ խումբը խաղի որ ձևից է տարվել և ինչու: Հաղթողները տարեց մարդկանցից նվերներ են ստանում:

Մհըկկոև.— Այս խաղի վեrջնական նպատակը հակառակորդի մահակը խլելն է, ոչ թե ձեռfով, այլ՝ մահակով: Պաrտություն է, եթե ձեռfից ընկնում է մահակը, հաrվածից կոտըrվում է, հաrվածից շպrտվում է: Եթե հակառակորդը իrեն պաrտ-

ված է ճանաչում, մանակը դնում է ճաղրողի ոտքերի առաջ: Նա այլևս իրավունք չունի այդ մանակին տեր կանգնելու: Մանակը չինում էին քանդի, սզնի, ճնւնի և ուրիշ պինդ ու գեղեցիկ ծառերի մատաղ շիվերից: Կային այնպիսի «Մնակ թխողներ», որոնք միաժամանակ կովում էին չորս–հինգ մանակավորների հետ: Լավ «թխողը» իր վրա հարվածը չպետք է ընդունի:

Թուխկակոխ, թուխկըկոև.— Գոտեմարտ: Կոխի ձև: Հակառակորդները բռնում են իրար գոտուց և ջանում գետնակոխ անել: Խաղի կանոնների համաձայն հակառակորդներին մարմնի ուրիշ մասերից բռնելու իրավունք չէր վերապահվում: Գոտին կտրվելու դեպքում խաղը դադարեցվում էր, և գոտին փոխարինվում էր նորով:

Խաղի գլխավորը կոչվում էր մար (մայր), մյուս խաղացողները՝ ճոտեր: Ճոտերի քանակը պայմանավորված է խաղացողների թվով: Մոռացված մի սովորությամբ մայրը «թուխս» էր նստում և «ծրտում» (ածում) էր ձվեր: «Ձվերը» բուան մեջ թաքցրած քարահարեր էին, որ կռացած ժամանակ (ձու ածելիս) մեկ–մեկ գցում էր: Իբր ածած ձվերից դուրս են եկել ճոտերը: Սովորաբար մայրն ածում էր այնքան «ձու», որքան խաղացող ճոտեր ուներ: Խաղի ժամանակ, երբ ճոտերից մեկը մարմնական վնասվածք էր ստանում, մայրը նրան նստեցնում էր հատուկ նախանշված տեղում (ծառի տակ) և կարգում էր խնամակալ:

***

Գոյություն ունեին նաև մտային բազմաթիվ հետաքրքրաշարժ վարժանքներ, որոնցից մի քանիսը ներկայացնում ենք ստորև.

ա. — Մին խոսք ասե:

— Խնձոր:

— Խնձորը խնձորեն օտե, տու էլ իմ խնձորս ուտիս, վեր խնձորս կյա ծեր տոնը, հի՞նչ կտաս:

— Նռոնը:

— Նռոնը նռռնեն օտե, տու էլ իմ նռռնս ուտիս, վեր նռռնս կյա ծեր տոնը, հի՞նչ կտաս:

Պետք է խաղացողն այնպիսի պատասխան ընտրի, որ հարցնողը պարտվի: Օրինակ, ասենք՝ պատարագ (բաղարաք):

— Բաղարաքը բաղարաքին օտե, տու էլ իմ բաղարաքս ուտիս...

Հակառակորդը պարտվում է:

բ. Կարո՞ղ ես նախադասություններ կազմել, որի բոլոր բառերը սկսվեն միևնույն հնչյունով: Օրինակներ. «Թäմբալ Թöւնին թեն թողից Թրöսանց թուրնեն», «Տիքոշեն տատր տավարը տարավ տվավ տվրածեն» և այլն:

գ. Խաղամերը ցուցամատը դնում է իր ծնկանը, նրան հետեվում են մյուս խաղացողները: Պայմանն այսպ[illegible] է. Ինքը թռչուն է դարձնում բոլոր ծանոթ առարկաները, բայց խաղացողները պետք է անմիջապես ընկալեն, որ, ասենք, ուղտը թռչուն չէ, և չբարձրացնեն մատները: Այսպես.

— Թըռ, թըռ, ճնճղուկը թըռ:

Բոլորը բարձրացնում են ցուցամատերը և իսկույն իջեցնում՝ կրկին բարձրացնելու համար: Իսկ նա շարունակում է որքան հնարավոր է արագ.

— Թըռ, թըռ, ծիտը թըռ,

— Թըռ, թըռ, կաքավը թըռ, թըռ, թըռ, սոխակը թըռ,... և հանկարծ՝

— Թըռ, թըռ, կյումաշը թըռ...

Բարձրացնողը պարտվում է և իր վրա «պոզ» է գրանցում: Խաղը այս ձևով շարունակվում է:

դ. Երեխան դժգոհում է.

— Փորս ցավում ա:

— Հինչա՞ յա ցավում:

Հետո հարցնողը սկսում է դանդաղ թվարկել, այնքան դանդաղ, որ «հիվանդը» հնարավորություն ունենա ընտրություն կատարել:

— Խնձոր ուտե՝ ցավե վուշ, տանձ ուտե՝ ցավե վուշ, չամեչ ուտե՝ ցավե վուշ...

Թվարկումը վերջանում է, երբ երեխան կատարում է իր ընտրությունը:

ե. — Էշին տաք նöւր կտաս, թա՝ ցո՞րտ:

— Ցորտ:

— Դա մրսից, մրսից, խեղն էշը մրսից (ականջը ձգում է):

Պատժից փրկվելու հույսով՝ երեխան ասում է.

— Տաք:

— Դա էրից, էրից (էլի ականջը ձգում է):

Սա հնարավորություն է տալիս, որ երեխան մտորի այնպիսի

պատասխան գտնելու, որ խնդն էշը ոչ մոսի, ոչ էլ շոգի: Ջուրը լինի թռուչի:

## ՊԱՏԱՍԽԱՆԻՐ ԱՐԱԳ

1. Ծունկունկեսը կպկկես ա, օխտը ծունկունը քանե՞ կապեկ կընի:

2. Մին կիլո պեմբակն ա ծա՞նըր, թա մին կիլո արկա՞թը:

3. Ծառեն իրեք քաշ կա, մինը վեր թվանգավ վեր քցիմ, տակեն քանե՞սը կմնա:

4. Էշին նաքյին վեր կարած ընի, վեր ցեխումը վեր ըղնե, նի՞շ տղա կփռնիս պցրցնի՞ս:

5. Էս մարթին կնգանը ախպերը իմ դայի յա, էս մարթը իմ նի՞նչ ըս ա:

6. Էրկու նör, էրկու վերթի կյամ ըն ղռնաղ, տնատեռնը նըռյաթումը իրեք ծառ ա ընում, ծինենը նունց կապին, վեր ամեն ծառու մին ծի ըղնե: (Ես, իմ տղան, իմ աղես տղան):

7. Մի գերեզմանանքարի վրա գրված էր. «Ստա նանգչի նայր, մայր, քույր, եղբայր, մարդ ու կին»: Քանի՞ նոգի են թաղված:

## ՏՎՐԱԾԵՆ ՄԻՆ ՕՐՈՒՄԸ ՕԽՏԸ ՀԵՏ ՓՈՐՑԻԼԸ

1. Փորեղ օխտը շոփ տնիմ՝ կարում ըս եր կաց:

2. Էրկու քար եր կալ. մինը փեշկանդ տակեն տիր, մինը՝ կըլ-խես, վեր վեր թակիս, շոնը բուրաշաղ ա վեր քցլնկան:

3. Վեր կարիս նացը մեր շանը ճկատան տաս, շոնը աշկեղ բռաշին ըլքաստրակ ա տռնլական:

4. Էն ա մին թղաղվուց օնիմ, կարո՞ւմ ըս քթիր, տնու տռ:

5. Կկարի՞ս փիփաղեղ տակեն խոտ նարիս:

6. Կկարի՞ս էս ժենգալը պուք տաս:

7. Հանց ա ծեն տվող ընի, նեյ ըրա:

## ՀԻԾԻԼ ԿԱՊԵԼ

Ձիախաղը գարնան-աշնանային հանդիսությունների անբա-ժանելի մասն էր: Խաղակզբում հեծյալները հավաքվում են «ա-

խոռի» մոտ, նախապատրաստում ձիերը, «թմարում, թամբում», ջրում և դուրս գալիս ազատ ասպարեզ։ Երբ բոլորը վերջացնում են, հեծնում են ձիերը և ջոկում, ընտրում «մայրերը» («խղամարը»)։

«Մայրերը» այն երիտասարդներն են, որոնց ուժային և խաղային առավելությունները ակնհայտ են և ընդունում են բոլոր խաղացողները։ «Մայրերը» աջ ու ձախ թևերով իրար հանգուցված (որպես եղբայրության և համաձայնության նշան) կանգնում են ասպարեզի կենտրոնում։ Մնացած խաղացողները «նուտերն» են, որոնք բաժանվում են զույգերի։ Զուգընկերները ունենում են մոտավորապես հավասար կարողություններ ու ֆիզիկական կոփվածք։ Զույգերից յուրաքանչյուրը իր համար պայմանական նշան է ընտրում։ Օրինակներ. «Ես հիլին ըմ, տու՝ ծիլին», «Ես հորն ըմ, տու՝ ծöրը», «Ես եղն ըմ, տու՝ մեղրը», «Ես տանձն ըմ, տու՝ խնձորը» և այլն։

Զույգը մոտենում է մայրերին։ Մայրերից մեկի և մոտեցող զույգի միջև տեղի է ունենում այս կարճ ասուլիսը։ Առաջինը խոսում է զույգը։

— Հալա, հալա։

— Բեգիս հալա։

— Հիլին ը՞ս, թա ծիլին։

— Ծիլին։

Ծիլին անցնում է «ծիլի» ասող մոր կողմը։

Այսպես նաև հաջորդ զույգը, երրորդը, հինգերորդը, վերջինը։

Մայրերը պատասխանում են հերթով և տանում հավասար քանակությամբ «նուտեր»։ Այս արարողությունը վերջացնելուց հետո «մայրերը» գնում են իրենց խմբերի (նուտերի) մոտ*։ Խորհուրդներ են տալիս, խորհուրդներ լսում, ծանրութեթև անում իրենց կարողությունները, պայմանավորվում, թե 'ով ինչ

* Բայց ո՞ր խումբը պետք է սկսի խաղը։ Այս նպատակին է ծառայում «քյաս կյալը» («տակելը»)։

Երկու մայրերից մեկը մի մանրաքար է թաքցնում ափերից մեկի մեջ և բռունցքված ձեռքերը մեկնում մյուս՝ գուշակող մորը։ «Տակողը»՝ գտնողը սկսում է խաղը։ Գտնելու համար գուշակող մայրը հոտոտում է բռունցքները, ծանր ու թեթև է անում, ականջին է դնում՝ «լսում» դեպի երկինք պահելով նայում է բռունցքին, մասամբ՝ գուշակելու, մասամբ էլ դիմացինին շփոթության մեջ գցելու և թաքույցը գտնելու համար։

ձևերով կարող է ավելի լավ դրսևորել իրեն, արդյունավետ մասնակցել խաղ-մրցությանը: Մռտ մեկ ժամ կողմերը վարժվում են, ապա՝ մայրերը հանդիպում են իրար, շտկում մրցության ծրագիրը: Իսկ խմբերից յուրաքանչյուրը մի գծի վրա «հիծիլ է կապում» և սպասում, թե «մայրերը» ինչից կսկսեն խաղը:

Այս նախանիմք արարողությունը կրկնվում է շատ ու շատ խաղեր սկսելուց առաջ:

Մրցությունը բաղկացած է լինում մոտավորապես հետևյալ խաղաձևերից:

Հիծիլ կապել մի գծի վրա, ուղիղ շարքի կանգնել՝ ձիերի գլուխները բարձր:

Ձին խաղացնել՝ ծի պար ածել: Սա լինում է անհատական և խմբովին:

Երկու կողմերի «յորղա» ձիերն առանձնացնում են և մրցում իրար հետ՝ ով շուտ կհասնի նպատակակետին:

«Յորթ-յորթ քշիլ». ծանրաքայլ վարգի տեսակ:

Ծասս անել. քմակե վզներեն յրա վեները կցնել:

Ծին քշիլիս փորեն տակավը անց կենալ, նորը նստել:

Ձլավը պեց թողած ծին քշիլ:

Ծին առանց զանգու քշիլ:

Ծին քշիլ՝ թամքեն յրա մին վզնանե նստած:

Թամքեն ծլպատակ նստել՝ քշիլ:

Թամքեն՝ փորեն յրա պարանց ընգած քշիլ:

Ծին քշիլիս թամքեն յրա վենը կենալ նստել:

Ծին նուխտըլափակ քշիլ:

Ծիյավ փռրվազ անել, սեյր անել:

Իրար ձեռքից քաշկինակ խլել և շուտ նպատակակետին հասնել:

Մենամարտել փայտե թրերով, մահակներով:

Արագ թամքել կամ արձակել թամբերը:

Ձիարշավի ժամանակ նաև արգելքներ են հաղթահարել.

Պնդաղեն կլխավը լոք տալ:

Քյնդիրին կլխավը լոք տալ (բարձրությամբ):

Քացի տալ (հեծյալի ցանկությամբ ձին պետք է աքացի տա մատնանշած ուղղությամբ) և այլն:

«Հիշտեղ ծի յըն խղըցրալ, ընդըղեն սաալ ըն հծըլատեղ, դոփան, տաշտակ, թափա (տափ)»: Ձին խաղին նախապատրաստելու, չրելու, հանգստացնելու վայրը կոչվել է ախոռ (ախուռ):

Հծըլատեղ ա ըլալ Մուղանա տափերումը, Սարեն քմակեն, Ավգուստա տոշտակումը, Կյումեն քմակեն, Տասնակումը, Կղարծվա յալումը: Ախուռը Աշանա ցաքոտումն ա ըլյալ, մնել Ըրշըքարա կարեն:

## ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

1. Ալ եզնը,
Չալ եզնը,
Հինչքան պեռնին՝
Տար եզնը: *(Գդալ)*

2. Ալալը–բալալը,
Տար խաղ ըրա,
Պեր կախ ըրա: *(Թառ, երաժշտ. գործիքը)*

3. — Ալ չաքու, չալ չաքու,
Հի՞նչ տեղա յըս կյամ:
— Ծովան ըմ կյամ:
Պա խե՞ թրշված չըս:
— Մաշան ըմ կյամ: *(Թուխպ, մառախուղ)*

4. Աննöւր նեղաց
Անկրակ պեղարն: *(Մեղրահաց)*

5. Առաշդ կտրում ա, քամակդ արուն անում: *(Մկրատ)*

6. Ասում ըմ՝ եկ, եկ, կյամ չի,
Ասում ըմ՝ կյամ'էր, կյամ'էր, կյամ ա: *(Շրթունքներ)*

7. Ես կերե, իմ կերածս էլ տու կերեր,
Հöլա փան–փան էլ ըրեր: *(Մեղր)*

8. Ես քյընիմ, ինքը մնա: *(Անուն)*

9. Ես քու տակեղ,
Տու իմ տակես,
Տուտուշդ իմ ծակես: *(Երկանք)*

10. Էն ինչն ա՝ ծիք տամ կրնանա: *(Ծխախոտ)*

11. Էն ինչն ա՝ կտրիմ ըրկնանա: *(Հոր)*

12. Էն ինչ պտուղ ա՝ ինչքան խակ ա, էնքան քախծր ա: (Երեխա)

13. Էրկան աղեգ
Պոռկը ծաղեգ: (Հյուս, ծամ)

14. Էրկան շմալ՝ չոխկը չօնե: (Ջայն)

15. Էրկու ախպեր՝ öւրöւր տեսնում չըրն: (Աչքեր)

16. Էրկու խոխա,
Մին չոխա: (Հաճար-հացահատիկ)

17. Էրկու կլöխ, օթ վենըր,
Տ՛եր տախտակ, ավեր քար,
Ինքը քեցավ քաշաքաշ: (Կամներ և եզներ)

18. Ընգուճադ փոնիմ՝ պլըգի:
Տրբ.
Անգուճդ ճլöրիմ՝ խլըշիս: (Լամպ)

19. Ըշխարքես ծաքյան մինչև մնենգ՝ երեսուն օրը թամամ չօնե: (Լուսնյակ)

20. Ըռաշիդ չոքիմ, ծակդ պենամ: (Սնդուկ)

21. Ըստեղ պուպուզ, ընդեղ պուպուզ,
Շան տղա, պա ճիշտե՞ղ պուպուզ: (Ավել)
Տրբ.
Ըստեղ պուպուզ, ընդեղ պուպուզ,
Տանը քմակեն պուպուզ:

22. Թուրուն օճիմ կույ-կրակ,
Մաշը լիգյը կրակ: (Նուռ)
Տրբ.
Թուրուն օճիմ պողավ լիգյը:

23. Իմն ա՝ օրիշ ա օտում: (Ծառ-պտուղ)

24. Ինքը գյոլումը,
Հա̈քյին չոլումը: (Շերեփ)
Տրբ.
Կլոխը գյոլումը, ճաքյին չոլումը:

25. Ինքը սև, ճղեն սիպտակ: *(Օձ)*

26. Լպզտիմ՝ ծակդ կոխիմ: *(Ասեղ-թել)*

27. Ծին քյըռնից, թամքը մնաց: *(Գետ-կամուրջ)*

28. Ծմեռն ա՝ կյարունքը պատեն,
Ամեռն ա՝ կյարունքը պատեն: *(Գորգ)*

29. Կանանչ ճինիմ, կյարմուր կյործիմ, սև կտրիմ: *(Մոշ)*

30. Կլխըվեր ըմ օնում լցնում ա, կլխըեր ըմ օնում՝ տրտա̈-կում ա:

Տրբ.

Փրսըվեր ըս տնո̈ւմ՝ լցնում ա, պրտըեր ըս տնո̈ւմ՝ տըր-տակում ա: *(Փափաղ)*

31. Կծե–քրտննքե: *(Բիբար)*

32. Կյարմուր օտխիմ, սիպտակ ծրտիմ: *(Ցորեն-ջրաղաց)*

33. Կտրե–լա̈ց իլ: *(Սոխ)*

34. Հա̈րը՝ դիք, մարը՝ կեռ, խոխան՝ պել: *(Խաղողի վազը)*

35. Հենգ ախպեր մին ծո̈րու կլխե պատ ըն տնում:
*Տրբ.*

36. Հենգ քուր ըն՝ մին ճվավ պար ըն կյամ:
*(Գուլպայի ճաղերը)*

37. Հողված չի,
Աղված չի,
Դաղված չի,
Կոխած չի,
Թխած չի,
Էն ճի՞նչն ա: *(Մեղր)*

38. Հակներր փադ, մաշմուրթը մես: *(Օրորոց)*

39. Մին տափ ա՝ քրերավ լիգյը: *(Երկինք և աստղեր)*

40. Մին պտրճան օնիմ՝ պրնձավ լիգյը: *(Բերան)*

41. Ցոր ըս օնում՝ լա̈ց ա ըննո̈ւմ, վեր ըս տնում՝ սուս ա ա-ճում: *(Թառ)*

42. Շոշ տա շմալ, կոշ կյա կծեզ: (*Դդում*)

43. Շունչ օնե, արո̈ւն չօնե: (*Քամի*)

44. Չաթուն ճո̈ւր տամ, դանան օռչի: (*Ջմերուկ, դդում*)

45. Չորս ախպեր՝ մին փիփաղու տակե: (*Սեղան*)

46. Չորս խոխա մին գյոլու ֆարավ ըն տամ: (*Կովի կուրծքը՝ կթելիս*)

47. Պապը սարեն,
Կյեվաթը կտարեն,
Կյլվազանը վեռեն,
Ճոտերը փորեն: (*Խաշխաշ*)

48. Սաղ աշխարֆը շոռ ա կյամ, կյամ մղակումը պպզում: (*Ջեռնափայտ*)

49. Սեղ օնիմ, ասեղ օնիմ,
Իսկ տու լաշեդ ղաշև օնի՞ս: (*Եղինջ*)

50. Սև ճավը ծկլթաց,
Ծո̈ւն վեռումը պլթաց: (*Հրացան*)

51. Վեղե լո̈ւլա,
Մսե գյո̈ւլլա: (*Մուկը և իրա բույնը*)

52. Վեռեղ ճարիմ՝ արուն անիս: (*Մկրատ*)

53. Տասը եզնը, տասեն ճակատն էլ թա̈փալ: (*Մատները*)

54. Տու ինձ պահե տնըմաշի,
Ես ֆեզ պահիմ մրթըմաշի: (*Կինը՝ տղամարդուն*)

55. Ուռթանան՝ չորս վննանե, կեսօրեն՝ էրկու վննանե,
Րուգյունը՝ իրեֆ վննանե: (*Մարդը*)

56. Ուռթանա ֆշերավ լոֆ տամ, եր ընիմ ֆա մոր օսերը: (*Կուժ*)

57. Փաղի ֆոռշ, մսե մֆոռշ,
Քացի տամ ֆոռշեն,
Քոնը տանե մֆոռշեն: (*Օրորոց, երեխա*)

58. Փեշկաղ փոնիմ,

Քշտապ պքիմ,
Օխտը փքիմ: *(Եղինջ)*

59. Քյընում ա կյալիս,
Տատիկի փորին
Բարև ա տալիս: *(Խնոցի)*

60. Քշերը վեր փռիմ,
Ցիրեկը ճվաքիմ: *(Աստղեր)*

61. Քոլա-քյեթուկ՝ շենու իշխան: *(Գյուղամիջի գերան)*

## ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ

1. Ակուփ ապեր,
Տու ընձ էտե
Մին խուփ կապե,
Մին տեփ կապե,
Մին կեփ կապե,
Անումդ ընեիմ
Խուփըկապե,
Տփըկապե,
Կյփըկապե
Ակուփ ապեր:

2. Բախտդ սիրիմ Բաղդասար,
Բախտդ մնաց Բախտասար:

3. Դերին ծոռումը դերին նոռուն նույը ծոռ:

4. Իքտան, քաքտան, քոքուլաղ ծիք տան:

5. Ծտեն նստեն նիտը ծոռ:

6. Մուկունը քցիմ, ծուկունն ստիմ,
Ծուկունը քցիմ, ծուկունն ստիմ:

7. Սեռուն ա, սեռում ըմ:

8. Վերն օզում ըս՝ շարդը քու,
Ձարդն ըս օզում, շարդը քու,
Ձարդը լավ ա՝ շարդը քու:

9. Տնձըծառեն էրկու ծանդր-ծանդր տանձ,
Ծըրծառեն էրկու մանդր-մանդր տանձ:

## ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՌԱՇԱՐՔ (1—1,5 տարեկաններ)

Ա, ա-ա—կեղտ, կղկղանք
Աճիկ—աչիկ, աչք
Անիկ—աղջիկ
Ամա—կեր
Ամ—կեր, ուտում եմ, ուտելի է
Ամ-ամ, ըմ—շուն
Ատո—ինձ տուր
Բա՛—այծ, ոչխար
Բաբայ-քնել, քնում եմ
Բաբու, բաբուլ—ոտնաման
Բիժի—հորթ
Բո, բոլ, բոլ ա—բավական է
Բու, բուա—ջուր
Բուբու—թշնամի է, վտանգավոր է
Դա, դա-դա—ձի, էշ
Դադա—ծանոթ, անծանոթ քեռիներին
Դը, դը-դը—մեքենա
Զզա, զիզա—գեղեցիկ, ուշագրավ առարկա
Ի—ինձ տուր
Լո, լոլո—խնձոր
Ծածառ—կանգնել է, կանգնում եմ և այլն
Ծիծի—կուրծք, ծիծ
Ծիպա—հավ, թռչուն
Ծուկ—ես քեզ տեսա, գտա
Կա (տա)—առ, վերցրու
Կակա—շաքար, կոնֆետ
Կակու (տատու)—կատու
Կիծի—կծիր, կեր
Կիտի—կտրիր, պոկիր
Կոլալալա—կորել է, չկա
Կուկու—երեխա, տիկնիկ
Հա—այո
Հե—ա. ձայնարկություն, բ. այծ, ոչխար
Հո—կով, անասուն
Հիտի—ինձ գրկիր
Հոլ՞ ա—ո՞ւր է, որտե՞ղ է

Հոպ, հոպա—ա. արդեն, վերջացրինք, բ. գրկիր ինձ
Ճունու, ծպա—հավ, հատ
Մամա—ա. մայրիկ, բ. խմիր, կեր
Ման, մանք—մատ
Մեն, մենք—ուտք
Միմի—խմիր
Նա-նա-նա—հայհոյում է, բռունցքը խփելով մյուս բռունցքին
Նե, նե—այ, տեսնում ես, նա է (մատով ցույց է տալիս)
Նենի կուկու—քնիր փոքրիկ
Նոն, նոնք—նուռ
Չուշու—հագուստ
Պապա—հայրիկ
Պիթի—թխվածք, գաթա
Պիծի—փոքր, փոքրիկ
Պտա (պծա-պծա)—վերջացավ
Պու—ընկույզ, պոպոք
Տատա—հաց
Տե—դա է, այ դա է
Տիզա—լույս, արև, լուսնյակ
Տիտի—նստիր
Տիտիկ—աքլոր
Տոտո—տոտոն, օրորոց
Ցուցու (շուշու)—հագուստ
Փափա—կերակուր
Փինի—քնիր, պառկիր
Փու—այրում է, վառում է, վտանգավոր է
Քխա—վատ է, ուտելի չէ
Արտասանում է նաև գրեթե բոլոր բնաձայները.
բա—կով, ոչխար, մա—գառ, հորթ, միաու—կատու և այլն:

## ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբալ, Ազնել, Ալուբան (Արուբան, Արաբանի), Ակազի, Անանի (աշագեղ), Առան, Առուշ, Ասպի, Ասֆանազ, Արանխեն, Աստի, Ափար, Բաղաս, Բալի, Բաղանի, Բաղի, Բաշանի, Բոզի, Բոլի, Բուբան, Բուղդի, Գաղի, Գափան, Գորդի, Դադի, Դողի, Դոխի, Եզնամ, Եթար, Երզի, Ձանդի, Ջոնթի, Էրմի, Թանդալ, Լաքի,

Լոլի, Խալդի, Խաշար, Խաչանի, Խարի, Խեչում, Խլդան, Ծալապան, Ծմկան, Կածակի, Կայանա, Կանդով, Կապան, Կյակյուշ, Կեռան, Կեկան, Կուտուշ, Հայասի, Հնազանդ, Հորդի, Ղայամ, Ղոնշա, Ղուղա, Ճամանի, Ճիվի, Մաքաղաք, Մարեզ, Մակու, Մոլի, Մոավ, Մուխրի, Մանթաշ, Յանդի, Նանա, Նանար, Նանիկ, Նանուշ, Նադանա, Նադի, Նալդի, Նաշուն, Նափախտոր, Նամի, Նինդի, Նուդի, Նեզի, Չափանի, Պուտի, Ջոլի, Սանթի, Սայի*, Սանամ, Սավեզ (Սյավեկ), Սարում, Սողամեր, Սորի, Սորփի, Սուպուր, Վանդի, Վառի, Վարսեն, Տոպի, Տոտալ, Փարի, Փթուլ, Քաթան, Քանթի, Քթուլ, Կավարտ, Նազենի, Նախշուն, Նասապան, Օշափի, Օսի, Ճունուփ:

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ՀՆՉՅՈՒՆԱԴԱՐՁՈՒՄՆԵՐ

Աբրահամ—Աֆի
Ալեքսան—Ալի, Հասան
Անդրանիկ—Անդուն, Անդո
Անթառամ—Թառի
Աշոտ—Տոթա, Տոդա, Տոտի
Աստղիկ—Ասթխի
Աստվածատուր—Ծատոր
Ավետիս—Վիտիս
Արիստակես—Գեցի
Արշավիր—Աշո
Արտավազդ—Արտո
Բագրատ—Բազի
Բաղասան—Բալի
Բաղդասար—Բադի, Բաղի
Գաբրիել—Կյափի, Գափան
Գևորգ—Կյեվի
Գուրգեն—Գոզի
Դանիել—Տանի
Դավութ—Դավի

Եղիշե**—Եղի, Եղո
Եփրեմ—Փիրի, Եփրի
Թանկազին—Թանզի
Թևան—Թևի
Խաչատուր—Խաչի
Խոսրով—Խոսի
Կարապետ—Կաքի
Կիրակոս—Կիկո, Կիկոս
Կրիքոր—Կուքի, Կուքան
Հակոբ—Ակու
Հմայակ—Հումի
Համբարձում—Փագի
Հայկանուշ—Հայկի
Հայրապետ—Հարի
Հարություն—Արթուն, Թունի
Հեղինե—Հեղի
Հերսիկ—Հեցո
Հովակիմ—Ակի
Հովհաննես—Վանի, Վանես

---

* Եսայի անվան կրճատ ձևն է (Ծ. Խ.)։
** Եղիշե անունը բարբառում արտասանվում է Եղիշա (Ծ. Խ.)։

Հոփսիմե—Սիմա
Հուռում—Հուռի
Մաքեոս—Մաքի
Մարտիրոս—Մատի
Մարկոս—Մակի
Միքայել—Մուքի, Մուքան
Մնացական—Ցական
Մովսես—Մոսի
Մուսայել—Մուսա
Ներսես—Նեսի
Շափախտոր—Շափի
Պատվական—Պատի
Պետրոս—Պետի
Պողոս—Պուղի
Ջավահիր—Ջավի
Ջամշուդ—Ջումի
Սաքենիկ—Սաքի
Սամսոն—Սամոււ
Սանչան—Սեչան
Սարգիս—Սաքի
Սողոմոն—Սուղի
Սոնա—Սոնի
Ստեփան—Սեփո
Ցևոռդի—Ցևի
Վարդանուշ—Վարթի
Վարսենիկ—Վարսի
Վազգեն—Վազի
Տիգրան—Տիկո
Ջառնիշան—Ջառի
Նազենի—Նազի

## ԲՈՒՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

### ՊՏՂԱՏՈՒ ԲՈՒՅՍԵՐ

*Թթենի (Թութե).*— Ունի ենտևյալ տեսակները. բաղանի, խարբութե, ճաղար թութե, նրնչենե, սիպտակ թութե, սև թութե:

*Բուրմա թոթ.*— Մեծանատ թութ, որ լինում է երիտասարդ շիվերի վրա:

*Դերու շոն.*— Հոծ ճյուղերով ու տերևներով տալ՝ թթի ծառի վրա:

*Խնձոր.*— Խնձորենու տեսակները.— Բզլգյենե, բմոնենե, խուռովենե, ծմոնենե, կթենեն (իր տարատեսակներով), կենչենե, կոտենե, կրկձենե, նմրղենե, մնըսրե, շորվանի, քլըխնձոր, քշըծվենե:

*Թուզի (Թզնի).*— Ըշունքենե (ըրկովենե), սև պլըթենե, սև կոտենե, սիպտակ մծըպլիթ, սիպտակ կոտենե, քրըթուզի (իր տարատեսակներով), շնըթուզի (վայրի—անօգտագործելի) և այլն:

*Խաղողենու տեսակները.*— Բզլգյենե (սև, սպիտակ, կարմիր), բնղղենե, ըծենե (սև ըծենե, սիպտակ ըծենե, կյարմուր ըծենե), բմրոնենե, բշենե, թավրիզենե, լկենե,

լկոռ, խուճգեճ, ծծեճ. ըծեճու ճմաճակը՝ սև, սպիտակ, կարմիր, խճղողճը (իր տասճյակ տեսակճերով), կմբրեճ, կճճչեճ, կռովեճ (սև, սպիտակ, կարմիր), կավեճ, մծրգյուղեճ (սև, սպիտակ), մղրխաղու, յայլաղեճ, չրեճ (մծրգյուղա, պծրգյուղա), չմճչեճ, որճգեճ, սիպտկեճ (մծրգյուլա, պծրգյուլա), վրճդեճ, ուղտաշկ և այլճ:

*Կծոխուր*

*Հլոճի*

*Խոռճիգ*

*Նուռճե* (ճաղար, մալաս, շաճ, վայրի)

*Ճմթլուկե* (իր տարատեսակճերով), ճույճը՝ *չթաղուկ*

*Տաճձեճու տեսակճերը.*— աղամեճ, ըղովեճ, ըմոճեճ, ըշուճքեճ, լոճեճ, խլեճ, խրխճչեճ, ծմոճեճ, կյրմրեճ, կտեճ, կուլեճ, ղուլաճի, մալաճչեճ, մղրակեճ, մղրտաճձի, մուղաճա, մուխրտաճձի, շքրեճ, չիրատաճձի, պմրկեճ, սայի (Եսայի), քրըտաճձի, քրըփեճ, քուլըտաճձի և այլճ:

## ՀԱՑԱԲՈՒՅՍԵՐ

Առաճի, գիրգաճի, զäրդա, ըշուճքկյարի, կյոճըկյարի, սվըկյäրի, սվաքեստ (ցորեճ), ճաճար, կոrեկ, կտավատ, սիսեռճը (վխճըր սիսեռճը՝ տափլակ սիսեռճը, պöլör սիսեռճը և այլճ):

## ՎԱՅՐԻ ԾԱՌԱՏԵՍԱԿՆԵՐ ՈՒ ԹՓԵՐ

Բäճդի, բցըխաճձի, գկոե, թեղե, թղուշե, թքեոճե, լկրթճե, խճղըղճածառ, ծփեճ, կաղճե, կեճե, ճացե (բղըճացե, ռուսու ճացե), ճճարկե, ճոռե (ճվրճճոռե, ճրըճոռե, քաղու ճոռե), ճվըկտըկոտե, ճöւճե, ղրմխե, ճապկե, ճրըճապկե, ճխեվլի, ճոըճաքյի, մճըսrե, շլորե, շմշոե, չճարի, պեխե, պոշճե, ջղաճե, սզճե, սղուզե, տճչրե, տտպեճ, տրքչաճի, ցրդճի, ուլուճե, ուճապե, օխտըքլվաճե և այլճ:

## ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐ

Անմոռուկ, բäնգի (խափպուկ), բմբուլ, գխտոր, գուզլազ (աղվեսագի), երիցուկ, էշու կաթնուկ, էշու կածöւկ, էվուլ, ըլ-բըստրըկախոտ, ըլըկյեզ, ըղվըսաfոլ, ըղվըսհաfյի, ըվուլöւկ, ըր-կընատոր, թալ, իշափլավ, լաշտրակ, խազäզ, խինդեղնը, խըն-ձաղա, խնձործաղեզ, խնչլոզ, խրարու խոտ (վայրի գարի), ծը-ծոկ, ծղկեվուլ, ծմըկթափան, ծնեփակ, ծնըվեռեզ, ծռավարթ (մոլոշապարդ), ծտըճինչեխ, ծտըվէննը, ղաձöւկ, ղապար, ղառ-նը, կծեծ, կծöւզնը (կռատուկ), կյզըղոկ, կյրթնուկաfաf, կյնա-զոխ, կյոնոկ, կյրթնուկկոռնը, կյուլու թեն, կյումաշու պուլուլ, կնդըմնեշակ (նարգիզ), կոռթնը, կուզնախոտ, կուկանե, կըր-մըզուկ, հանարախոտ, հոռթնը (ղոռթնը), ղլղան, ճամման, ճըռ-ճըռոկ, ճըրկուտեմնը, մայասոլի, մամուռ, մարդըվանխոտ, մը-զամուղ, մղրավարթ, մշհանուկ (մշըհանու-զըըզարդար, մշըհա-նուկ-լոբի), անթառամ, մոռե, մուխազ, նանա, շարու խոտ, շի-րախոտ, շնըխյար, շնըկուտեմնը, շնըպուfյի, շշըխինդեղնը, շը-րիշ, շըմըշուղ, շուշան, չլնգբուռն, չխարակ, կնձմնձöւկ, յզնը-նակատ, յղըծöւ, պենչար (անփոշ), պենչար (փշփոշուտ), պլա-նուկ, չչմանգյուլ, պլըփուրփուտ, պովապըրտ, պռութող, պուf-յի, սամեթ, սիբեղնը, սիրի-սիրի, սիսեռնը (պլըսիսեռնը), սըխ-տոր, սմնդուկ, սմսմոկ, սոյնը (իր մի շարf տեսակներով), վուզ-նախոտ, վզըկտոց, սվախոտ, սնդրիկ, սպանաղ, տանդöռնը, տեսնը, տղնըծաղեզ, տոմբալան, տփաթոթ (մորու մի տեսա-կը), փթրաղ, փնչեվուլ, փշփշիկ խոտ, փշփոշուտ փöւրփուտ, fաշու սխտոր, fրըմամուռ, տուռուն, fալուշ:

## ՄԻՋԱՏՆԵՐ

Այլերմաղե, բլբլո, բլդըբուղի, բով, բրբթö, դզզան, դռռան, ըլըկանև, ընգունմտե, թթրմաղե, թիթեոբուչի, թիթեռմուկուն, լողուկ, լպրտոկ, լöւ, խբրատու, խրխնչանուկ, ծկուտի, կետ, կոըհäfյի, կուռնըշափե, հզրվննանե, մլմլո, մղմող, մոռեխ, մո-ռեխածի, մուշըթսե, չխարակ, պեռնը, սլöւկնը, վեթես (թրfըկը-լոլե, ցխըկլոլե, ffըկլոլե), վոընեո, fշրպղոն, սև մոռեխ (ծըղ-րիդ):

## ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Աղվես, արջ, դալա, եղնը (մարալ), ըլբաստրակ, ըռնատ, լիսեմնը, խոզուկ, կյեզան, կյերթնուկ, կյուլ, կոզնի, կորե, մկըծեռնը, վրի կատու, տփըքշերե, ուղտակյուլ, քշերե:

*Սողուններ.—* Լոկ, խլեզնը, քրըթանթուշ, օխծ:

*Օձի տեսակները.—* գյուրզա, երմար, թալխա, մուխրօխծը, նետօխծը, սև օխծը, քառ գյուրզա:

## ՎԱՅՐԻ ԹՌՉՈՒՆՆԵՐ

Արագիլ, ըլոր, ժեռ մոշահավ, լծե, ծիծեռնակ, կաքավ, կիվ-կիվ, կոկոռ, կովարար, կռունկ, հրթննքան փախած ախնիկ (սոխակի տեսակ, որ այս կանչով է փնտրում իր սիրածին), ձկնըկուլի, ղուզղուն, ղիրղի, ճըրթ-ճըրթ, ճրäծետ, ճրäհավ, մոշահավ, մորեխածետ, յղըլիտր (ասում են նաև մեղվաքաղ՝ հենց թռչելու ժամանակ մեղուներ որսալու համար. նման է գուրգուր թռչունին, նրանից փոքրավուն), յուպույ, յփլաղ ծառու, յփլաղ ծմակու (խոշոր), ներկարար, չքունխափի, չոլու կաքավ, չփրծակե, պապանըզտ, պրտական (երգող թռչուն, որ իբր ամբողջ օրը հայհոյում է պարտք ունեցող մարդուն. «Տոնդ քանդվի, պրտական...»), ռանահավ (հավ, որ ապրում է Առանի դաշտում), սալամնը, սարու կաքավ, սոխակ, սվաքաշ, վելել, վի, վույ-վույ, տեղեն ծետ (դեղնափորիկ. այս գեղեցկագույն թռչունին ասում են նաև «Տեղեն ճտանուց»), տետրակ, տոռոն, տփածետ, տփըդռան, քաշ, քշրմուկուն (շղջիկ, ըլըկուշկուշ, թևը մաշկեն տակեն), քշեղակ:

## ՈՒՏԵԼԻՍ

Ղարաբաղում կերակուրները կոչում են սննդամթերքի և բանջարի անուններով: Օրինակ, Ավելուկ նաև նշանակում էր ավելուկով նաշ:

**Ավելուկ** (ըվուլüկ)

**Բուղլամա** — գոլորշու՝ շալքի մեջ եփած միս

**Բուտնավ** լոբի (երկուսն էլ կանաչ)

**Բուռնի** (նաշ)



22—777

Բուռնի (շոր)—կաթնով, մեղրով եփած
Բուռնի (խորոված)
Դեղի լոբի
Դոլմա
Եղածու
Եղապատառ
Զկռթթո
Թաթարյախնի
Թալ (եփած՝ համեմունքով, տապակած), մզուկ
Թանավ (թնըխաշու)
Թթո—խառ թութավ, թրթնջուկավ, սզնավ, քոլախնձորավ
Թթուվավ լոբի
Լոբի (լուբանաշ)
Լուբըխաշու
Խաշ
Խաշած ձու (սոխով, պղպեղով և այլ համեմունքով)
Խաշլամա (խաշած միս)
Խաշիլ
Խաշու
Խավեծ
Խնջլոզ
Խորոված— տավարի, ոչխարի, այծի, խոզի մսից, վայրի, ընտանի թռչունների, վայրի կենդանիների մսից, ձկան, կարտոֆիլի, պոմիդորի, սըն-կի, ձնեբեկի և այլն:
Խորոված թոք
Ծնեփակ (խաշու, տապակած, ձվով), լշտրակավ (լոշտակ)
Ծտրխաշու
Ծուկուն (խաշած, խորոված, տապակած)
Կաթնավ ճաշ (կաթնավ)
Կանապ
Կարտոֆիլ (խաշած՝ համեմունքով, տապակած, խորոված և այլն)
Կթնըփրթուշ
Կլոլակ
Կնեխաշ (կնունախաշ)
Կոտորեն
Կրկուտավ շորվա (մսով, անմիս)
Կրկուտավ ճաշ
Կուրկուտ
Հալվա
Հավ—փորը շինած
Հեռածած
Հունըթթո
Ճլմբոր
Ճմոռ
Ճուտանուր
Մածուն
Մզնիրես
Մզնըփրթուշ (փրթուշ)
Մհասուրթթո (մհասուրթթո, բուռնուն մաշին)
Մոշաթթո
Մոշանմոռ (մոշափրթուշ)
Շախկամ
Շիլա
Շփոթ
Ողորմա
Պոմիդորով լոբի
Պոմիդորով եղածու
Պուտ
Սիսեռնավ ճաշ
Սիսեռնավ շորվա
Սպանաղ
Սովուզ
Տապակած կանանչ լոբի

Տապակած չոր լոբի
Տհալ
Ոստեմտիտեմ
Փրոկ
Փլավ
Փուրփուտ
Քաշովի (պրնձավ նաչ)
Քաշալ խաշու
Քյլնգյոշ

*Տհալ*— Կենդանական յուղը (տավարի, խոզի) հալեցնում են, ածում կավե ամանի մեջ (կարաս, տոն, խիծի և այլն) և կիսաեփ միսը մտցնում մեջը այնպես, որ երեսապատվի դեռևս տաք յուղով: Զափավոր աղ են ցանում և՛ յուղի, և՛ մսի վրա: Բերանը փակում են և պահում ձմեռվա համար: Ցուրտ եղանակին սառած յուղը իր մեջ անվնաս պահում է կիսաեփ միսը: Ձմռանը հանում և նրանից կերակուր են պատրաստում ըստ ցանկության:

*Կճեխաշ*— Լինում է մսով և անմիս: Հնում այն եփում էին կր-նուճների մեջ, դրանից էլ անունը՝ կճեխաշ-կճուճախաշ: Կճեխաշով կճուճները թաղում էին վառած թոնրի մոխրի մեջ, եփում էին նաև մեծ կաթսաներում, վառարանի վրա, ձմռան երկար գիշերներին: Կճեխաշն ուտում են վաղ առավոտյան, ինչպես խաշը:

Անմիս կճեխաշի բաղադրության մեջ մտնում են սիսեռը, ցորենը (հաճարը), հատիկ լոբին, ֆիշ ֆանակությամբ էլ եգիպտացորեն (ըստ ճաշակի): Կրակի վրա պահվում է մինչև հալ եփվելը: Երբ թանձր է, նոսրացնում են և հանած լցնեն օգտագործում առանձին, չոր վիճակում: Իսկ հեղուկային մասը ուտում են որպես ջրալի կերակուր (խաշու): Անմիս կճեխաշը անյուղ կերակուրներից է:

Կճեխաշ մսով.— Պահպանվում է նույն բաղադրությունը, ավելանում է միսը՝ ոչ շատ մեծ ամբողջական կտորներով: Ոսկորը չի կտրտվում: Կճեխաշի համար հարմար է ոչխարի յուղոտ միսը (նաև ոչ մատղաշ տավարի), երբ յուղալի չէ, նրա մեջ գցում են դմակի կտորներ:

Վայելում են տաք վիճակում:

**ԹԽՎԱԾՔՆԵՐ**

Տարածված են հետևյալ թխվածքները.

Բկշի (ֆյարթա), թերթերուկ, ժնգյալով հաց, կրնանուճ (կրր-

նահունց-մղրահունց), յղըլավաշ և զանազան բլիթներ (պլիթ):

*Թերթերուկ.*— Թխում են սովորաբար եկած խմորով: Խմորազանգվածը բաժանում են խնձորաչափ գնդերի, գրտնակով քիչ բացում, խմորին քսում հäսը (խորիզ) և ոլորում՝ բռնելով երկու ծայրերից, ապա նորից դարձնում գունդ: Այնուհետև բարակ բացում գրտնակով (նրբության աստիճանի) և դնում կրակի վրա գտնվող շաջին (տապակ): Մի կողմը թխելուց շրջում են մյուս երեսի վրա:

*Հäսի պատրաստումը.*— Ձեթը լցնում են ամանի մեջ, ավելացնում շաքարավազ և քիչ ալյուր. խառնելով ստացվում է ոչ պինդ, ձիթալի զանգված: Շաքարավազի տեղ գործածում են նաև թանձր մեղրաջուր:

*Ժնգäլավ հաց.*— Թխում են հիմնականում գարնանն ու աշնանը: Որակի առաջին հատկանիշը պատրաստուկի բազմատեսակությունն է: Միջուկի բաղադրության մեջ մտնում են կանաչեղենի բոլոր ուտելի տեսակները՝ բանջարանոցային թե վայրի. ճռճռոկ, պռվապորտ, սմսմոկ, եղինջ, մանուշակ, գինձ, սամիթ, շաղգամի, բողկի տերևներ, պտուտկուն, փüրփուռ, կնձմնձüկ, ռեհան, քավար, գառնականջ, խազäզ, սոխ, թրթնջüկ և այլն:

Այս բոլորը լվանում են, ընտրում փափուկ մատղաշ մասերը, հատուկ տախտակի վրա սուր դանակով մանր կըտրտում: Որպես համեմ օգտագործում են աղած պղպեղ, սմախ, վայրի մանրահատ նուռ (վերջիններին կարող է փոխարինել մանր կտրտած լավաշան) և խառնում պատրաստուկին: Կտավատի ձեթը ցողում են պատրաստուկի վրա, մի քանի անգամ խառնում են երկու ձեռքով: Խմորի զանգվածը բաժանում են միջին մեծության գնդերի: Գունդը գրտնակով բացում են ու կանաչ մասսայից նրա վրա դնում 1—2 բուռ և եզրերը միացնում իրար: Նորից գրտնակով նրան տալիս են էլիպսի ձև և դնում կրակին խարկված շաջի վրա, հաճախակի շրջում մինչև թխելը: Ճաշակում են տաք վիճակում, խմում են գինի:

*Աղանձ.*— Բառը բաղկացած է աղ և խանձ բաղադրիչներից: Ցորենը, սիսեռը (երկու տեսակն էլ), շաքանը, դդումի սերմը (գերադասելի է կեղևահանված) ընտրում են, մաքրում, լվանում և բովում շաջի վրա: Բոված սերմերը [illegible]

փաշում են ամանի մեջ և խառնում չորացրած թութ ու ընկույզ:

Աղանձն անում են կիրակի օրերին, առանձնապես ձմռանը, որպես հանեցի ժամանց-ուտեստ: Խմբային աշխատանքների ժամանակ աղանձն անպակաս է լինում:

*Թաժա հաց.*— Թոնրահաց, հրամցվում էր բոլոր պատահողներին՝ ծանոթ թե անծանոթ: Հաց չկտրելը վիրավորական էր հացատիրոջ համար: Թխողը մեկական թաժա հաց էր ուղարկում մոտ հարևաններին, բարեկամներին, այն տներին, որտեղ հիվանդ կա: Թաժա հաց էր ուղարկվում թաղի ծերերին, անկարողներին, հիվանդներին, հղի կանանց...: Հացը թխում էին մեծ թոնիրներում, ուր միանգամից թխվում էր 25—32 հաց: Մի թոնիրը 30 հաց է, մի պատը՝ 8—10 հաց: Թոնիրը բաղկացած է լինում երեք պատ հացից:

Թոնրահացի տեսակներն են. կլորահաց, լավաշ, բաղարճ, ճաթ (կորկահաց), խշխաշավ հաց, կրճահունց, մրղրահունց, բիշի, գաթա (թխվածքներ են), բլիթ:

*Ըղըճըմավ բրած հաց.*— Սոխը աղի մեջ թաթախում են, փռում հացի երկու երեսը, տափացնում, նորից թեթևակի փռում: Հետո վառարանի վրա, բուխարու կրակին կամ թոնրի մեջ, բուռ ճաշակի չորացնում և ուտում: «Սոխ ու հաց, սիրտը բաց», «Ըղըճըմավ հաց—կուշտըպնդի կաց»:

Սոխ էին փռում մազաղաթը, աշ տված կաշին, գրքի շապիկը: Ոտնամանի կաշին փայլեցնելու և ամրացնելու համար օգտագործում էին սոխաջուրը և կտավատի ձեթը:

*Կուրկուտ.*— Ղարաբաղցու սիրած կերակրատեսակներից մեկը: Ընտիր հաճարը (ցորենի տեսակներից մեկը) ջրում թրջում են, թեփահան անում, չորացնում, երկանքով աղում: Եփված միսը կտրտում են և ձավարի հետ շերտ-ընդփոխ դարսում պղնձի մեջ, 1—3—4 հարաբերությամբ ջուր են լցնում կաթսան և դնում մարմանդ կրակի վրա: Սովորաբար կուրկուտը եփում են գիշերը, կաված-մարմանդած թոնրի մեջ: Հարսանիքի նախորդ գիշերը դնում են թոնրում, կաթսաները դարսում են իրար վրա, թոնրի երեսը փակում: Ըստ սովորության մեկը գիշերում է թոնրատանը և ուտեստը պաշտպանում հնարավոր պատահարներից:

*Խաշ ուտել.*— Տարածված սովորություններից մեկը: Խաշի նրկատմամբ ղարաբաղցին կայուն սկզբունքներ է մշակել:

ա. Խաշն ուտում են ընկերների, հարևանների, բարեկամների հետ միասին: («Տնցտոն խաշ չըն օտել»):

բ. Խաշն ուտում են վաղ առավոտյան («մթընմթեն»):

գ. Խաշի սեղանին պետք է լինեն հաց (լավաշ), մի ափսե՝ ոսկորների համար, աղ, սխտոր, քացախ, կամ սրանց պատրաստուկը և խաշը լայնկեկ կավամանների մեջ: Այսքանը միայն: Ոչ ավել, ոչ պակաս:

դ. Խաշ ուտելիս խմում են երկու բաժակ օղի. 1) խաշ եփողի՝ պատրաստողի կենացը և 2) խաշ ուտողի կենացը: Վերջ:

*Աղ դնել, թթու դնել.*— Ղարաբաղցիները կավից պատրաստում էին տարբեր գործածության ամաններ՝ սափորներ, խիծի (խեցի), պուլիկ, փարչ սուրըհե, տոն, գավաթ, ճոռնիկ (ջուրնիկ), կուժ, կուլա, ծաղկաման, թուխտուրաման (թըրխմորի աման), կարաս և այլն:

Աղ կամ թթու էին դնում տաքդեղ, կաղամբ, վարունգ, դդում (հիմնականում՝ դեռահասը), ճակնդեղը, սոխը (և՛ գլուխը, և՛ ցողունը), սխտորը, պոմիդորը (կանաչ և կարմիր), կանաչ լոբին, կապարը, տոպը, կրմզոսկը, սիբեղնը, պուքի (պեքի), շուշանը, ձներբեկը, տանձի, խնձորի մի շարք տեսակներ և այլն: Աղ դրածի վրա դնում են տարբեր համեմունքի բույսեր. անանուխ, սամիթ, խոռնը, դափնետերև, և այլն: Աղաջրին խառնում էին քիչ քացախ, թթաջուր և այլն:

Թթու էին դնում մեծ կարասներում ու տոներում:

Նման խոշոր կավե ամաններում էին պահվում նաև պանիրը, յուղը, տհալ միսը, մեղրը, գինին, օղին և այլն:

Մեղրը պահում էին նաև պնդուկի (տկողին) կամ ընկույզի միջուկի հետ խառը:

*Մեղրը սուղանալ կոտին.*— Թաղավարդ, Ջարդանաշեն, Սարգըսաշեն և այլ լեռնային գյուղերում պահպանվել է հին սովորությունը: Երբ մեղրը կտրում են, կանչում են բարեկամներին, հարևաններին՝ մեղրուտեքի: Մեղրը հրամցնում են ափսեներում կամ գավաթներում դրված՝ մեծ սինու մեջ: Սինու մեջ դնում էին մի քանի տասնյակ գլուխ մաքրած սոխ: Սոխով կարելի է ցանկացածի չափ մեղր ուտել՝ առանց վնաս տալուց վախենալու: Ղարաբաղում ընդունված

խոսք է. «Մեղրեն կլխեն ցորտ նոր չըն խմել, մեղրեն կըլխեն տաք նոր կխըմին»:

*Խաշիլ*.— Ընտիր ցորենը աղանձում են (շատ գյուղերում աղանձելուց առաջ ցորենը կլպում են) շաղի վրա և երկանքով աղում (փոխինձ)։ Փոխինձը մաղում են և կուրկուտն առանձնացնում՝ խաշիլի համար։ Փոշին խաշիլ եփելու ընթացքում (ավարտին) շաղում են խաշիլին։

Խաշիլի բաղադրամասերն են՝ կուրկուտանաշը, թանը և դաղ արած յուղը՝ սոխով։ Նախ՝ ամանն են լցնում նաշը, ապա՝ 2—3 գդալ յուղ են ածում նաշի միջնամասում բացած փոսիկի մեջ։ Իսկ թանը լցնում են ամանի եզրակոսը։ Ուտելու ժամանակ շարունակ յուղ ու թան են ավելացնում։ Ընդունված չէ յուղն ու թանը խառնել իրար։ Դրանք ուտելու ընթացքում տարբեր կողմերից պետք է ներծծվեն նաշի մեջ։ Ով չի կարողանում պահպանել խաշիլ ուտելու կարգը, նրա ամանը չէին երկրորդում։

Ահա մի զրույց խաշիլի մասին։

Երկու ընկերներ մի ամանից խաշիլ էին ուտում։

Մեկն ասում է.—Ըս տարե հալա մին ծեր չըմ ծրալ։

Ասելու հետ՝ գդալով ակոսում է խաշիլը և յուղով լի փոսիկը քաշում իր կողմի վրա։

Ընկերը տեսնելով, որ յուղից իրեն բաժին չի հասնելու, գըդալը վերցնում է խառնում. — Վեշինչ, տարեն խոնըխառնե յա։

*Խաշիլի թան*.— Պատրաստում են չորաթանից, ջրում հարելու միջոցով։ Այդ թանից պատրաստում են «Քյլնգյոշ» կերակրատեսակը։

*Պուռ*.— Պատրաստում են մանրափոշի փոխինձից. հունցում են մեղրաջրի կամ բահմազի մեջ։ Անփոխարինելի միջոց է փորլուծության դեմ։

*Լոբի*.— Լոբին տարածված բույս է Ղարաբաղում և նրա բնակչի սիրած սննդամթերքներից է։ Այն ունի բազմաթիվ տեսակներ, հաճախ էլ միևնույն տեսակին տարբեր գյուղերում տրվել են տարբեր անուններ։ Լոբին անում է անջրդի պայմաններում (աճրի, փյադա) և ջրարբի հողերում (նրովի լոբի)։ Հայտնի են այս տեսակները. չըրպեղեզ, շուրեի, շալ, շալտիկ, վխնրաշկ, դաշխա, սև (սև պիծի, սև լղար, սև մեծ, սև պուլուր, սև էրկան), կյարմնոր, սիպտակ, լառի,

կոռկ, նխշավուր, թլավուր (ծլավուր), շլմոտիզ, ըշըղաշկ, կյոժռոճխ, ճաղար, շախմուր, տռոճան և այլն:

*Լոբի ստող Ղարաբաղցե.*— Լոբին ամենասիրված սննդամթերքներից մեկն է եղել ղարաբաղցու համար: Հայտնի են այսպիսի արտահայտություններ. «Օխտը շիրեփ լոբի քցի», «Ղարաբաղեն էն չալ լոբան օխտը ամա ն թումփըցրե», «Կուրկուտը մին, լոբին՝ իրեք», «Հացեն կլխեն մին ամա ն կեր, փորդ պնդի»: Լոբուց պատրաստել են բազմաթիվ կերակուրներ: Առանձնապես սիրված են եղել (հատիկ) լոբուց պատրաստված կերակուրները: Լոբին եղել է հարսանիքների, պատարագների երկրորդ կերակուրը:



Բանասաց Սոփան Հովսեփյան, Բերդաշեն



Բանասաց Սոնի Առստամյան, Բերդաշեն

Ղարաբաղցին լոբուն հավասար սիրում էր նաև թթու, կծու ուտեստները:

Մի անգամ ղարաբաղցին հյուրընկալվում է թիֆլիսեցուն: Նայում է սեղանին, սակայն տաքտեղ չի տեսնում, հարցնում է.

— Տուք տաքտեղ չը՞ք ուտում:

— Վիչ:

— Պեխպ էլ չըք ուտում:

— Վիչ:

— Խեղճ, պա հինչ ը՞ք ուտում:

Հնում Քյաթուկ գյուղը հայտնի է եղել իր կծու տաքտեղով:
«Լոխ ուրանց ապրանքներ թարիփ ըրեն, քյաթուկեցեն էլ ա-
սից. այ իմ քաղցր տաքտեղ»:

*Կթնեղան-մզնեղան.—* Ե՞րբ է առաջին անգամ կաթը մածուն,
յուղ ու պանիր դարձել. ոչ ոք չի կարող իմանալ: Մի բան պարզ
է. կաթը միշտ էլ հայի հետ է եղել տարվա բոլոր եղանակներին՝
տանը թե դրսում: Առանձնապես ամռանը՝ մածնեքսակը կախ-
ված է եղել երկրագործ հայի ձիու թամբից: Շատ հանախ հընձ-
վորը կեսօրին, փայտե մեծ կյուշերի մեջ (գուշ), տարած մած-
նից գդալով հարել ու թարմ յղըպատառ է կերել, զովացուցիչ
թան խմել: Տանը, գեղջկուհին՝ տներում ու կարասների մեջ,
կուտակել է կաթի ու մածնի սերուցքը, մածնի թթված մնացուկ-
ները և շաքարվա գլխին խնոցի է հարել.

Խնեցե, խնեցե,
Սոր հարվածքը հրեցե...
Եղը թանան նուկեցե...

Հարվածքը օգտագործվում էր նաև որպես պխորժաբեր դեղ՝
հիվանդների համար: Թթու մածունը կոչվում էր պժեն (պժան),
որը մերանի դեր էր կատարում: Կաթնամթերքները և կաթից
պատրաստված կերակրատեսակները կոչվում էր կաթեղ կամ
կաթեղեն, դրանք են. հեռածած կաթնը (տաք կաթնը), կաթ-
նավ շորվա, կաթնավ հաշ, կաթնահունց (թխվածքի տեսակ),
կթնըկորեկ (կաթով կորկանաշ), կաթնով, կաթնավ չայ, կթնը-
մեղր, կթնաշոռ, շորաքյաթ (շորակաթ), շոր, կթնըփրթուշ և
այլն:

Մազնեղ-մազնեղեն (մզնեղան)—մածուն, մզնաշոռ, քամած
մածուն, կարագ եղ, հալած եղ, թան, թանավ, հռածած, մզնը-
փըրթուշ, կթնըմածուն, պզտաթան, շորաթան, քյլնգյոշ, խաշիլ,
թնըխաշու, յղորթի և այլն:

Ասում են առաջին անգամ հայ հնձվորը յուղ է պատրաս-
տել հնձի գնալիս:

Հնձվորը էշը նեծած գնում էր հանդը: Նա փոքրիկ կճուճի
մեջ կաթ էր տանում՝ հանգստին խմելու համար: Մինչև կհասներ
արտին՝ մի ժամ ճանապարհ է կտրում: Ու երբ իջնում է էշից,
արձակում սիրեկը ու բաց անում կճուճի բերանը, տեսնում է
կաթը փոխված այլագույն հեղուկի, որի երեսին լողում են յուղի
գնդիկներ: Հնձվորն այստեղ է ճաշակում առաջին յղըպատա-
ռը:



Բանասաց Սոփան Սնիկյան,
Աշան



Բանասաց Ռոստամ Սարգսյան,
Աշան

Նույնանման մի զրույց էլ մեզ է հասել մածնի մասին:

Կեսօրադեմին ծարավում է հնձվորը: Հեռու է աղբյուրը, իսկ կուլայի ջուրը արևը վաղուց է տաքացրել:

— Մեղավոր արև, ի՞նչ խմեմ հիմա ես, որ հնձվորիս ծարավը կոտրի:

Հիշում է, որ կեսօրվա համար կաթ է բերել, գուցե նա կոտրի ծարավը: Տեսնում է կաթի կճուճում կաթի փոխարեն թանձր մածուկ է, ոչ միայն հանելի, և կոռվաքեր, այլև հիանալի դարման շոգի դեմ: Արևը խնայել է հնձվորին, կաթը մածնի փոխարկել, որ նա չտապի գործն արարելիս:

Խուխեն՝ կաթնը,
Հնձողեն՝ մածունը:

Կաթը, շորը, մածունը, հարվածքը, թանը, շմաթը, իրեսը (սերը), յուղը տարբեր հիվանդությունների բուժման միջոցներ են եղել՝ մարդու թե անասունների համար:

*Մոշ.*— Մոշը ամենասիրված պտուղներից է: Հին սովորությամբ, երիտասարդ թե ծեր, խմբերով գնում էին սարը՝ մոշ ուտելու: Մոշի տերևներից կլորավուն աման էին պատրաստում և մեջը մոշ լցրած բերում հիվանդներին և անկարողներին: Նախ-

րապանները, հովիվները, բոլոր հանդվորները գյուղապատկան տերիտորիայի տարբեր մասերում տեղադրում էին հատուկ քարեր, որ կոչվում էր մուշըկյեվաթ, մոշեփրթուշ էին ուտում: Տափակ ու ափաձև քարերի վրա հացի հետ հունցում էին մոշը, մեջը դնում էին «դովլաթ»՝ 1—2 չհաս կարմիր մոշ և ուտում էին ձեռքով՝ մատները պուտ անելով: Չորացնում էին հասած և կիսահաս մոշը և ձմեռը պատրաստում էին մուշըթթու՝ ուտում ծեծած սխտորով: Մուշըթթուն մրսածության ամենալավ դեղերից է: Չորացրած մոշը աղանձի բաղադրամասերից է, նաշակում էին նաև առանձին՝ ընկույզով (մաշ բրած ճղպորավ-ճղպուրամաշ): Մոշից պատրաստում էին մուրաբա, հյութեր և ընտիր գինի (մուշըկյինի): Քաղում էին լավ հասած մոշը, լցնում կավե ամանների մեջ, դնում արևի տակ, պահում 7—10 օր և եփելուց հետո (արևաեփ) քամում են մի քանի անգամ, (գերադասելի է քսակով) և գինին պատրաստ է: Յուրաքանչյուր տուն ուներ իրենց աղաց, որով աղում էին չորացրած կարմիր մոշը, դարձնում սմախ, *որ օգտագործում էին կերակուրների մեջ (հաճախ* աղած տաքտեղի հետ) առանձնապես ձկնեղեն ուտեստներ պատրաստելու ժամանակ:

Ուշ աշնանը, չհաս կարմիր մոշը դնում էին թթու դրած կաղամբի, վարունգի, պոմիդորի, բանջարեղենի վրա, ուր հանելի թթվահամ տալուց բացի, մնում է թարմ վիճակում և ձմեռը օգտագործվում:

Ժողովրդական բժշկության մեջ օգտագործվում է մոշենու տերևները՝ թարմ վերքեր բուժելու համար:

*Թթապտուղ.*— Հնագույն ժամանակներից հայերը թթից օղի էին քաշում, որը համարվում էր ամենաընտիրը օղիների մեջ: Լինում էին երկքաշ, եռաքաշ օղիներ: Եռաքաշ և քառաքաշ օղիները օգտագործում էին որպես դեղ ռևմատիկ հիվանդություններ, վերքեր բուժելու համար: Բազմաքաշ օղին անփոխարինելի դեղ է նաև աղեստամոքսային խոցերի համար: Ըստ վաղընջական սովորության օղին խմում էին միայն վաղ առավոտյան, նաշից անմիջապես առաջ, ոչ ավելի, քան 15—20 գրամ: Օղու բաժակը ուներ այդքան տարողություն: Կեսօրին կամ երեկոյան օղի խմելու սովորություն չի եղել: «Արաղը մինը կխըմին, էն էլ մին կոլտում»:

Մինչև օղի թորելը թութը նախապատրաստում էին մեծ կարասներում կամ տակառներում, պահում էին 15—20 օր մինչև

հասնում էր: Օղին թորում էին հատուկ կառուցված օջախում (օ-ղետուն, օղեգործարան):

Օջախի մի մասում քուրան էր, որի վրա դրված էր կափարիչով ամուր փակված թթակաթսան: Վերջինս խողովակով միա-



Բանասաց Խոսրով Սողոմոնյան, Բերդաշեն



Բանասաց Գևորգ Ղայամյան, Աշան

նում էր մշտահոս և մշտապաղ ջրով լի տակառի մեջ տեղադրված բազմածալ (բազմածունկ) խողովակին՝ սառնարանին: Կաթսայից գոլորշին անցնում էր սառնարանին, վերածվում հեղուկի և ծորակով թափվում օղամանի մեջ: Մեկ ուրիշ խողովակով կաթսան միանում էր դրսի հետ, որով օղեզուրկ թթազանգվածը հոսում էր թեք առվակով և լցվում փոսի մեջ: Թթազանգվածը խառնում էին և աղյուսաձև կտորներով չորացնում՝ ձմեռանը որպես անասնակեր օգտագործելու համար:

*Թթաթափ.*— Թթենին թափում էին 6—7 անգամ: Բարձրորակ օղին համարվում էր 1-ին, 2-րդ թափերից թորված օղին: Յուրաքանչյուր թափ պահվում էր առանձին ամանում: Վերջին թափը (6-րդ կամ 7-րդ) կոչվում էր չամչաթափ: Կիսաչոր թութը հարմար էր չորացնելու համար, որը և առանձնանում էր իր բարձր շաքարայնությամբ: Թթահավաքը տևում էր շուրջ երկու ամիս՝ մայիսի վերջերից մինչև հուլիսի վերջը:

Թուրը թափում էին կտավե մեծ շալերի վրա։

Մի շղլ. թթահալաfն իրացնող մեկ խումբ։ Յուրաfանչյուր շալ բաղկանում է հինգ հոգուց՝ չորս հոգի շալի չորս տուտը բռնող և մեկ թափող։ Թափողն ունենում է հատուկ շինված ատրինանակ, որով բարձրանում է ծառը։ Թրաքափը կատարվում է փայտե բակի միջոցով, որ կաշվե թոկակալով (թոկոդակ) ամրացվում է թափողի ձեռfին։ Թափած թութը լցնում էին ուշատների մեջ (փայտե ականջավոր աման) և սայլերով տանում գործարան (հնձան)։

*Թթաչամիչ.*— Հասած թութը փռում էին ուղտափշի լայն տերևների վրա և չորացնում։ Վաղնջական այս սովորությունը պահպանվում էր մինչև վերջերս։ Չորացրած թութը պահում էին պղնձե ամաններում (օշնակներում կամ կժերում), ձմռանը ուտում էին ընկույզով։ Այն աղանձի բաղկացուցիչ մասերից մեկն էր։

Համվագյուռ երևույթ չէր ձմեռը չոր թթից և բանմազից օղի թորելը։

*Բանմազ* (դոշաբ) *եփելը.*— Բանմազ եփում են վերջին թափերից, երբ fաղցրանում է թութը։ Թափած թութը մաfրում են տերևներից ու ճյուղակտորներից և լցնում պղնձե թեշտերի (տաշտ) մեջ, եփում, fամելով թթաշուրն անջատում թեփից (չիչ) և կրկին եփում այնfան ժամանակ, մինչև բանձրանում է, երևան գալիս «պլոզ պըլըը»։

Աrարողությունը վերջանալուց հետո, բանմազը լցնում էին ամանների մեջ, fախր fաշում (վերին շերտը) և բաժանում հարևաններին։

Թթից պատրաստում էին հյութեր, մուրաբա և թուրմ։ Խաղողի և թթապտղի թուրմը մուրաբաներ եփելու ժամանակ փոխարինում էր շաfարին։

Որպեսզի թթու դրած բանջարեղենը հոտավետ ու անուշահամ լինի, աղաջրին ավելացնում էին fիչ թուրմ թթաշուր։

Թրով լվանում էին մետաղե, փայտե, կավե ամանները։ Թութը ոչ միայն մաfրում էր, այլև ախտահանում։

*Թութ նստել.* — Ռևմատիկ հիվանդություններ և հողացավ ունեցողները թութ էին նստում։ Ոտfերի կամ ձեռfերի ցավոտ մասը մտցնում էին արևի տակ եփվող թթի մեջ և մնում 10—30

ռոպե: Թրով լի ցածրադիր կարասների և տակառների մոտ այդ նպատակով պատրաստում էին առանձին հարմարանք:

*Թթածաղիկ*.— Թթի նորահաս պտուղը, որ օգտագործում են ստամոքսաաղիքային ուղիները մաքրելու համար: Ստամոքսը բարձր թթվայնությունից ձերբազատելու ամենալավ միջոցն է:

*Թթատեսակները*.— Ղարաբաղում տարածված է շահ ու վայրի մի շարք թթատեսակներ. սպիտակ, բաղանի, սև, հաղար և այլն: Սակայն սպիտակ թթից հետո ամենագործածականն ու սիրվածը խարթութն է: Ղարաբաղցիները սպիտակ, բաղանի և խար թթատեսակները համարում են բնիկ արցախյան. «Թոթը հային ջանան պտկըված ա»:

*Խարթութ*.— Հանելի է իր քաղցրաթթվաշ համով: Արանից պատրաստում էին գինի, քացախ, մուրաբա: Նրա հյութը կոչվում էր արքայական, որ մրսածության դեմ հանախակի գործածվող միջոցներից է: Ինչպես խաղողի, այնպես էլ խարթթի թանձրավուն հյութի մեջ թաթախում էին ընկույզամեջը և կախում չորանալու համար (չրանուկ): Խարթութը չորացնում էին սպիտակ թթի նման և ձմեռը կերակուրների մեջ օգտագործում որպես համեմունք, նրանից թթվաշ էին պատրաստում՝ մրսածների համար: Ամենալավ սմախը ստացվում է խարթթից:

*Ծեղել*.— Հին սովորությամբ թութը չորացնում էին հանդին՝ արևերես վայրերում, ուղտափշի լայնկեկ տերևների վրա: Նույն տերևներից պատրաստում էին փաթթոցներ (ծեղաման) և նրանցով թութ բերում տան մեծի ու փոքրի, հիվանդի ու անկարողի և նրանց համար, ովքեր թթաստաններից հեռու էին աշխատում: Դեռատի աղջիկները, հարսները տերևափաթեթներում թութ էին տանում հնձվորների, կալվորների համար՝ աշխատատեղ: Թութը ճաշակում էին և՛ առավոտյան (անոթի վիճակում), և՛ կեսօրին, և՛ երեկոյան («Թոթը հիրը օտխ՝ փեյդա յա»): Թութ էին քաղում նաև կավե կամ մետաղյա (պղնձյա) ամանների մեջ և որպեսզի այն թարմ ու մաքուր մնա և գեղաքով լինի, ծեղում էին (շինում էին երեսածածկան): Ծեղելը կատարվում էր թթաշմալի (մատաղ ճյուղի) լայնալին տերևներով և ամրացնում տերևակոթուններով: Վերջում էտված տերևներով զարդարում էին ծեղը:

*Ընկույզ (ճղոպուր)*.— Ընկուզենու հետ կապված են մի շարք հավատալիքներ: Այսպես, վնասակար է ընկուզենու տակ հոգնած, քրտնած նստել, քնել չի կարելի: Ընկուզենի տնկողը կմա-



Մի խումբ բանասացներ, Բերդաշեն

հանա մինչև լիարժեք բերքի հասնելը. «Վեր ճղպորե տնգեցեր, բարեն հսնել չըս»: Երազում ընկույզ տեսնողը կընկնի կովի մեջ: Սակայն կենցաղում ընկույզն ունեցել է իր գործնական մեծ նշանակությունը: Ընկուզենու, ուտենու տերևների եփուկով բուժում էին մաշկային հիվանդություններ: Ընկուզենու թարմ տերևները միջոց էին լվերը վերացնելու համար: Ընկույզի միջուկը չորացնում էին, ողողում խաղողի մածուկով և դարձնում կախան (կատարում էին նաև մինչև չորացնելը): Ընկույզը «պուպու» էին դարձնում, չորացնում և պահում ձմեռվա համար: Ընկույզի ամբողջական միջուկը կոչվում է ծուղրուղու: Ընկույզով «նուխտրկնդե» են խաղում: Հաղթողը յուրաքանչյուր երրորդ հաղթանակից հետո ստանում էր մի ծուղրուղու: Չորացրած ընկույզները դարձնում էին շրանուկ (անց էին կացնում թելով) և որպես խաղալիք կախում օրորոցից: Ընկույզի թարմ կեղևից (կաղաղ) ստացած գույնով լվանում էին մազերը, երանգավորում թարթիչներն ու ունքերը (կանայք): Կաղաղից ստանում էին Ղարաբաղում հայտնի «ճղպորի» գույնը, ներկում էին կտավ ու թել, օգտագործում գորգագործության մեջ: Չորացած ընկույզի միջնորմը ծեծում էին, խառնում մեղրին՝ վերքեր դար-

մանելու համար։ Նայն միջնորմը լուծում էին եռաֆաշ թթողու մեջ և սառացված լուծույթով բուժում սառամոխսապղիխային խոցերը (հաշիկց առաջ պետք է խմել 15—20 գրամից ոչ ավելի)։ Ընկույզով պատրաստում էին տարբեր թխվածքներ։

ՊԱՏՎԻՐԱՆ ՀԱՑԻ ՆՍՏՈՂԻՆ.— Ուտեիս բայդի չրղնիս։ Մանդրը թիքա, ծանըր ծամե։ Ծռնչը կեռքանը տակեն կրնի։ Ծռնչհավ կեր՝ մաադ կենա։ Հետաղ պրծնող չկա։ Փորեդ ղարազ չանիս։ Փորդ լցնիս ու՝ շինիս փյնընկարան, նըրտեղա թերհատ եր կաց։ Հանց եր կաց, վեր աշկդ էն ընի հացեն սուփրեն։ Լփշիգ օտիս ուչ։ Լավ ա ասին՝ խրեզ ա կերալ, հինչ ասին՝ շատ ա կերալ։ Հացեդ թիքան թողել մեր սուփրեն, իվիլ թիքան փոր չի ծակել։ Հաց ուտեիս խրեզ կխոսին։ Ուտեիս՝ աշկդ ուրիշի ամանու չի պահիս։ Ուտեիս ուրիշի աշկու եշիլ չըն։ Ամելու կող չի տաս։ Հաց ուտեիս լավ թիքեքը թողե ղունաղեն հետե։ Հաց ուտեիս տնատարը ոլուն սեռուն կպահե։ Հաց ուտեիս տնատարը նեղլի կսկսե, եռե պրծընե։ Հաց ուտեիս փիս պենա խոսել չըն, ոււրնշու անա կյենգատ չըն անել։ Հաց ուտեիս վեշ համոթ պենա կխոսին, վեշ հարամ պենա։ Հացեն վախտը կռև չըն անել։ Կովապենը հացա եռ կանին։ Հացեն վախտը նկատողութուն չըն անել։ Հացեն վախտը խոռազը փիսլամիշ չըն անել։ Հացեն վախտը ըմանեն մազը թաքուն տոա կօնին։ Հացը գյափավգյուփավ կօտին։ Հաց ուտեիս վեր պառավ ընի, ամեն հինչին լավն ու փափուկը կտնին ըռաշին։ Հացը առաջ խուխեն կտան։ Առաչ խուխեն քուշտուցըռու, եռնան փորեդ դարդը քաշի։ Խոխան հունչու ծերքը մեկնե, կտան ոււրան։ Պիծինը կերած, մեծը մարսած։

«ՀՈՒՐ ԸՄ ՄԻՆ ԹԻՔԱ ՀԱՑ ՏՎԱԼ»։— Ասում են բարեքախտության դեպքերում։ «Հու վեր քյոխբին հաց տա, նեղ օրա կըպրծընե»։ Հայերն այն կարծիքին էին, որ աղքատից, տնանկից, հյուրից հաց չխնայողը միշտ հաջողության մեջ կլինի և վախճանն էլ՝ բարի։

«ՔԱՇՈՒ-ՔՁԸԴԱԿՈՒ ՓԱՅ»։— Ասում էին ճաշը վերջացնելուց հետո։

Հայ գեղջուկը կեսօրին ճաշում էր հանդին։ Ճաշելուց հետո սփռոցի վրա մնացած կերակրի և հացի մնացորդները շպրտում էր և ասում. «Այս էլ թռչունների բաժին». «Էս էլ մեր անզոր բարեկամների»։

# ԲԱՌԱՐԱՆ

Ադա — այ տղա (դիմելաձև)

Ախպածակուռ — անասնագոմի՝ աղբը դուրս հանելու փոքրիկ պատուհան

Ախպահար — ախպատեղ. ուր աղբը ժողովում են՝ այնտեղից դաշտ տեղափոխելու համար

Ալամաթ — լավ, չնաշխարհիկ, գեղեցիկ

Ախուս — անխոս, լուռ, չխոսկան

Աճեգ — կերակուր. ծլեցրած ցորենը ծեծում են սանդի մեջ և ստացված մածուկը եփում, օգտագործում որպես ուտելիք:

Ակեն — ակնահաճո, գեղեցիկ

Ակնահավաք — հիվանդ թռչունների մի տեղ հավաքվելը, որ կոտորվելու նախանշան է

Ակնավառեշ — բոնցկելիք. դյուրավառ չորուկ բուսակտորներ, որոնցով վառում են կրակը

Աղատ — սեր, ցանկություն, գորով

Աղնաղազ — աղունն աղալը

Անի — այ աղջիկ (դիմելաձև)

Ամա̈լ կյալ — ա. մեծանալ, աճել, բ. կազդուրվել

Ամլիկ — մինչև մի տարեկան գառ, ուլ, հորթ. փոխ.՝ անմեղունակ, անզոր, պարզամիտ

Այանե — սկզբնապես՝ այ նանե (դիմելաձև)

Անարխա — անթագավոր, անտեր (երկիր). փոխ.՝ տեր, հենարան, պաշտպան չունեցող

Անգի— անկեալ, հիվանդ. փխբ.՝ լղար, տկար, վտիտ

Անդոհ (անդոխտ) — սրտնեղություն, մտատանջության հիվանդություն, վիշտ

Անի — շեն, բարեշեն, կերտվածք, բարեկարգ, հարուստ

Անկեզ — չգզած (բուրդ, բամբակ)

Անկուտուր — անկոտոր, անկոտրում, հաստատակող

Աշնա (պարսկ.) — բարեկամ, ծանոթ

Աշունքանոտ — թռչունների, կենդանիների աշնանային ճագը. փոխ.՝ տկար, նվազ (նույնն՝ աշունքածեք)

Աչառ (պնա̈լի) — բացող, բանալի

Ապելա — խեղճ, ողորմելի, պարզամիտ (աստվածաշնչային Աբելից)

Ապեր — եղբայր (այսպես դիմում են մեծ եղբորը)

Առես (առես, առեղ, առեն) — առիս, ինձ մոտ

Առք (արք) — առնելիք, նկ. տալիք. փոխ.՝ երաշխիք, վստահության իրավունք

Ասըլ — ազնվացեղ. փոխ.՝ հասկացող, խելոք

Ասլը — արմատ, ցեղ, ազգատոհմ

Ասմա — կախան խաղող, խաղողի մի շարք տեսակներ, որ պահում են ձմեռվա համար

Ասման (պարսկ.) — երկինք. փոխ.՝ հեռու վայր, հեռավոր անկյուն

Ասպ — ազբ, ազբն, շարժուն թելաշրջանակը, որով պատված է լինում ասպափայտը (ոստայնագործության մեջ)

Ավադ — ա. շեն, բարեկարգ, կենդանի (տուն, օջախ, բնակավայր), բ. փարթամ — նյութաշատ, ոստառատ, բերրի (ծառ, այգի, բանջարանոց), գ. ուժեղ, մարմնեղ, հսկա

Ավար — ծառանյութերի, խոտաբույսերի չորուկ մնացորդներ (կտորտանք)

Ավրաղ — ավրակ բառի աղավաղված ձևն է

Ատրա — հացաբույսերի փայտով ծեծելը (հատիկը հանելու համար). փոխ.՝ ոտքի տակ տալը, ոտքով տրորելը, ծեծելը

Արա — առն բառի ղարաբաղյան տարբերակը, գործածվում էր որպես դիմելաձև. փոխ.՝ հայ (այլազգիներից ոմանք հայերին կոչում են «արա», պատճառը բառի հաճախադեպ գործածությունն է հայերի կողմից)

Արակ — ա. երակ, բ. տրամադրություն

Արդու — գնդայլյուր. օգտագործում են որպես անասնակեր (հիմնականում գարին են արդու անում)

Արիշ (Արեշ) — քաղաք Կուր գետի ձախ ափին: Մի ժամանակ հայաբնակ քաղաք, մտնում էր Աղվանքի մեջ:

Արխ — առու

Արշա — լույս, առավոտյան լույս

Արց — կողովի հիմնամասը. փոխ.՝ հիմք
Ափաթ — գեղեցիկ, շնորհալի, սիրուն
Աքա (աքեր) — (դիմելաձև) քույր բառն է, այ քույր կամ քույրիկ

Բաբագ — բիբ, աչքի բիբը
Բաբա կամ բաբավարդ — դեղին ծաղկող շրեշանման բույս. աճում է հին գերեզմանոցներում
Բադյան — գոտկատեղ, մեջքի ստորին մասի պտույտը
Բանդ — բանդի ծառի կեղևից հանած կեղևակապ, որով զարդարում են երաժշտական գործիքները, գավազանը (ցուպ) և այլն
Բաղրյար տեռնալ — վախենալ, երկյուղել
Բանդաղ — կախան պտուղ (խաղող, նուռ, սերկևիլ և այլն):
Բանդան — մարդ, էակ, աներևույթ գոյություն: Ժողովրդական ըմբռնումով անձնավորված էակ, որ տիրություն է անում մարդկանց ճակատագրին և կարող է աստծու տվածից էլ զրկել մարդուն: Գոյություն ունի ներքևում, մարդկանց մեջ:
Բանդի — կարմրա-դեղնավուն կեղևով ծառ, որի կեղևից բանդեր (կապեր) են հանում
Բարա — բերան բառից. բանչարանոցի դուռ, բերան
Բարսուղ — պարսատիկ
Բեդըմ ա — պիտո է, պարտավոր է, պետք է
Բեհ — ա. գրավական. երբ առնելիք ապրանքի արժեքի մի մասը տրվում է վաղօրոք, բ. ապահովանք, առհավատչյա
Բիժի (բիժո) — կովի հորթը
Բլակ — բազուկ (մարմնի մաս)
Բլբուլ — պետք է լինի՝ բմբուլ. փոխ.՝ թեթև քաշ ունեցող իր, վտիտ մարդ
Բլըբանդի — հին պարանուն
Բխո — ձիու ոտքերը կապելու հարմարանք (երկաթե)
Բհո — զարմանքի բացականչություն. նույնը, ինչ պահո՞
Բողումնը — եղեգն բույսի յուրաքանչյուր երկու հանգուցամասը, երկու ծնկների արանքը: Եղեգան մի բողմնից շվի (փող) են պատրաստում:
Բոհ — ա. կոպիտ, վայրենի, բ. անտաշ, անողորկ քար

Բրբթո — ա. դյուրաշարժ միջատ, ասում են նաև՝ նադինջ պը-
դոն, բ. անհանգիստ մարդ
Բունա — հիմք, սկիզբ
Բուրմա — ա. մեծ, խոշոր (բուրմա թոթ), բ. խիտ, հոծ (բուր-
մա թուփ)

Գյաբա — կապա բառի բարբառային ձևը, գորգ
Գյադակ — գոմշաձագ
Գյահ — գահ
Գյավռակ — գավառական բառից. փոխ.՝ կոպիտ, անգեղ
Գյմփուլ — մեծ մուրճ. փոխ.՝ դանդաղաշարժ, գեր մարդ
Գյոզակ — գոզակ, անկ, ծոպավոր եռեսկապան
Գյոկ (գեոկ) — անհայտ քաղաքանուն
Գյռավա — ոռսին խփելու համմար պահը, ընդհանրապես՝ հար-
մար պահ
Գյուռ — ա. պարծենկոտ, ինքնահավան, անգործունյա (Նա-
դաշ Հովնաթանն օգտագործում է քոտ ձևով), բ. հորդ, հոր-
դուն, առատ, աղմկալից (հարսանիք)
Գոդալ — կարճահասակ
Գուման (նաև՝ գյուման) — հույս
Գյունե — ա. լեռնալանջ, բ. արևահայաց, արեգունի վայր

Դաբան — ոտքի հետին մասը, կրունկ
Դազարլու — շատ
Դալու — ա. մեջք, թիկունք, բ. հենարան, ապավեն
Դանհնա — աղբրի հուն, ակունք
Դայաղ — հենարան, հենակ
Դամար — երակ
Դանա — հորթ
Դանգ — դրնգ բնաձայնային բառը, ձայն, աղմուկ նշանակու-
թյամբ
Դանդան — համդարտ, դանդաղ, անշտապ
Դառհովսմալա — անհամբեր, տաքարյուն
Դաստի (դաստինա) — խսկույն, անմիջապես
Դաղրահոյ — հոռովել, հոտաղի երգը վար ու ցանքի ժամանակ
Դարգի — դերձակ
Դբառաշ — դեպի առաջ
Դբետ — դեպի ետ

Դգանակ (դազանակ) — ա. մահակ, գավազան. փոխ.՝ անբե-ֆելի, անկոռելի, կոպիտ, կոշտ բնավորությամբ մարդ
Դինգ — գործիք, որով հացահատիկը թեփհան էին անում, դո-փան
Դիֆ — զառիվայր
Դնատոն — անասունների արգանդը
Դնգըլ — ա. դափ, ամբլա, բ. Թաքվի մոտ գտնվող սարերի ա-նունը. փոխ.՝ մերկ, դատարկ
Դնգլե — մահակախաղի մի տեսակ
Դոզում — համբերություն, դոզում անել — համբերել
Դոնդիզ — տակառի վերևի և ներքևի տախտակամած մասերը
Դուզամ — մանրաքար, խիճ, որ լցնում են շարվող պատի մեջ
Դույուղ անել — կանչել, իմաց անել, տեղեկացնել

Եզնահավաք — արձակված եզները ժողովելը. փոխ.՝ ունեցա-ծի հաշիվ-հաշվառք կատարելը
Եխա — օձիք
Եխնել — հաղթել
Եխտ — կեղտ
Եխտոտ — կեղտոտ (Ն. Հովնաթանի մոտ՝ եղտոտ)
Եղ — յուղ (Հ. Երզնկացին էլ է օգտագործում եղ ձևը)
Եղամնը (եղըմնը) — եղյամ
Եշիլ — նայել, աչել, աշել
Եշնը — բորբոս, մգլածություն
Եշնիլ — բորբոսնել, մգլել
Եռնային — ա. երկնային, բ. աստված
Եսիր — գերի
Ետվակեն — մարդու երկրորդ կինը, ոչ առաջինը
Ետվատոր — թոնիրը մի անգամ վառելուց թխում են 20—25 հաց: Երբ քիչ խմորագնդեր են մնում, թխում են հացը հանելուց անմիջապես հետո՝ առանց թոնիրը կրկին վառե-լու: Դա կոչվում է ետվատոր
Երզի — ա. երեք, երեքը լինելը, եռականություն, բ. տեղանուն: Այն վայրը, որտեղ գտնվում է Եռաբլուր (Եռամասունք) սրբավայրը Մուղանի դաշտավայրի ժդանով քաղաքի մոտ (Ուչթփփըլար): Կառուցվել է սրբերի մասունքների հիշա-տակին: Բլուրներից այժմ կանգուն են երկուսը: Մեկը վեր-ջերս քանդել են հայկական հին սրբավայրերում գանձ

փնտրողները, գ. քաղաքանում. Երգա, Հարգա. բանաստեղծ Տրիկի հայրենի քաղաքը, դ. զավառանում, ե. անձնանուն
Եր — վեր
Երե — բարձր
Երնային — երկնային, արարիչ, աստված

Զամբուղ — զամբյուղ
Զանման — սանման
Զանգու — ասպանդակ
Զառդա — ա. դեղին, ոսկեգույն, բ. ցորենի տեսակ. փոխ.՝ գեղեցիկ
Զոզակ — միջուկ, ծուծ
Զում — սանմանանքար, սանմանանշան
Զոավար — նախշավար (նխշավար), վարք լրելը, գեղեցկացնելը. փոխ.՝ արած գործը գեղեցիկ, հմայիչ դարձնելը
Զոքզարդար — կրոնական արարողություն, ծառզարդար

Էյնը — միտք, հիշողություն
Էյսը (էքսը) — հաջորդ օրը

Ըլոռնեզ — հիվանդություն
Ըխպրակեն — եղբոր կին
Ըղովել — դառնանալ
Ըյլաշոն — ուրիշի շուն. իր ոտքով մեկի դուռը եկած շուն. փոխ.՝ սեփականի, հարազատ ընտանիքի նկատմամբ անտարբեր մարդ
Ըյրհատ — այրահատ, այյուրը հատած
Ընգունբիբև — հնազանդ, լուռ
Ընըմատիր — հականե-անվանե
Ըշկըհանիչ — գեղեցիկ, հմայիչ, մարդկանց հայացքը իրեն քաշող
Ըշկընպե — ակնբարբ
Ըշկյունա — բառացի՝ ուշագնացություն. փոխ.՝ լիաքով, լիահունչ ծիծաղելը
Ըշկօնքավ — աչքունքը գեղեցիկ, հմայիչ, սիրուն
Ըպրկլոխ — ապրելու ունակ, կազդուրվող
Ըռավալ — առավել. վարելահողի երկու ծայրերը, որոնք չեն

վարվում. վարասկզբի ու վարավերջի խոպանը. փոխ.՝ վերջ, ծայր, ավարտ
Ըռըխկալի — կափարիչ
Ըռըկյոնի — առօրյա, ցերեկով
Ըռըշկետան — առաջակապ. արտահագուստ, որով ծածկում են հագուստի առաջնամասը, գոգնոց
Ըռըշկտրովան — ա. վազքի մրցաձև (ով ավելի շուտ), բ. ամենից շուտ, ամենաառաջինը
Ըսպափաղ — հինած ոստայնի հորիզոնական հաստ փայտը, որին փաթաթված է ասպը (ազբ)
Ըրաշտել — կարոտել, անձկալ
Ըրեփել — ա. եփել վերջացնել, բ. գործը վերջին հասցնել
Ըրըսկալի — երեսակալ, երեխայի երեսի ծածկոցը
Ըրըսկհատ — երես, դեմք, դեմքի կառուցվածքը
Ըրըսկման ընիլ — հեռանալ, թաքնվել
Ըրըսհան — վերերեսյա, մակերեսորեն
Ըրկընուքյիլ — երկոքվել, հղիանալ
Ըրշեկապ (ըռշեկապ) — առաջակապ, արտահագուստ, որ կապում են հունձ անելու ժամանակ
Ըրփըվերի — որբևայրի
Ըրևազուկ — արևանցուկ. արևը անցնելու ժամանակը. փոխ.՝ հով, զովասուն

Թաթման — թաթպան, ձեռնոց
Թամբի — խաղ. ունի երկու տարատեսակ՝ կնդըթամբի, նուխտըթամբի
Թայդի — ա. շտապ, արագ, բ. վռազել, շտապել
Թարթափ — հայացք, թարթ, հայացքի ուժը, թափը, որից մարդ ընկրկել կարող է
Թափից տալ — ձին խթանել
Թաքար — տակառ
Թեշտ — փայտե կամ պղնձե լայնանիստ շրջանաձև աման՝ լողանալու համար
Թեփուկ — եղջերաթաղանթ, որով պատված է լինում ձկան մաշկը
Թթո — կերակրատեսակ (թութ բառից)
Թլատու — գորգագործական գործիք
Թլըթափել — թևաթափ լինել

Թխովել — հասունանալ, կարոտը վերջնագծին հասնել, փափագել

Թյղբերիշ — արագընթաց, արագավազ

Թնդուլ — ա. թոնդիր, թոնրաշեն (հմմ. որմնադիր), բ. անձնանուն

Թնրխարավ — կիսաեփ ձու

Թշնած — թոշնած, դեղին

Թշնածակ — շվիի վերին անցքը

Թոռնըսքյընում — խելապակաս, հիմար

Թոթխար — կիսատ, կիսատ գործ

Թոր — ձուկ բռնելու ցանց

Թորքա — ուսապարկ, ճտապարկ

Թո՞րը — դեպի ո՞ւր

Թոքի — չար, աներես, պնդաճակատ

Թրմոշկել — մաշկը թառամել, կնճռոտվել

Թուխել (թուխոտել) — չրարքի դառնալ, հողը չրով հագեծալուց փլվել. փոխ.՝ լացել, հեկեկալ, զգացմունքով լցվել

Թռույին — անձրևային

Թրա (թերա) — բանջարանոցի, մարգի մասերից մեկը (երեք թրա, չորս թրա)

Թրթամնել — թերթ՝ լեզու. վազելիս շան նման լեզուն հանել. փոխ.՝ հոգնել, շնչակտուր լինել

Թրթերիլ — դադարել, հանգստանալ

Թուխկըկոռ — գոտեմարտ, կոխի տեսակ

Թուխված — կարոտակեզ, կարոտաքաղձ

Թունքաթուն ընիլ — կորչել, չքվել, անէանալ

Թուտանու՛ր — թռաչուր, անձրևաջուր

Թուտարև — անկայուն եղանակ, անկայուն բնավորությամբ մարդ, հեղհեղուկ

Թուրնըխառնե — երկար փայտ՝ վառած թոնիրը խառնելու համար. փոխ.՝ երկարահասակ մարդ

Թուքման — թուքմեն

Թքուճառ — թաքուն փախցնող, գող (գայլը)

Թքուշի — գաղշ, գող

Ժախռ — վայրի, կոպիտ, կոշտ խոտատեսակներ

Ժենգալ — կանաչեղեն

Ժեռ — վայրի. ծառի, պտղի ոչ տնային տեսակը

ժժըպապա — ճին պարատեսակ, երբ պարում են նմանակելով, ճանգեր անելով, ծամածռություններով (ծիծաղ ճարուցելու ճամար)

ժեմ — ժամանակ, ժամ

Իլխա — ա. զինվորական խառնամբոխ, բ. ընդճանրապես խառնամբոխ

Ի — ինձ տուր

Իծըմորե (յոխա) — անթթխմոր, լավաշանման ճաց

Իմ...յf (ճկ.՝ անիմացf) — իմացողություն, ճասկացողություն, շնորճf

Լաղլաղի — խառնակիչ, fnու

Լաղումնը — ակումf, ճուն

Լայ — ճաստություն

Լանգստ — լարախաղացի ձեռfի փայտե ձողը. փոխ.՝ բարակ, երկար մարդ

Լաշ — մաշկ

Լաշտրակ — լոշտակ

Լաստ — ա. շերտ, բ. խոտ ճավաfելիս՝ խոտի առաջին կույտակը

Լավաշա — սալորի պաստեղ

Լեմ — լինդ, լեմեր — լնդերf

Լենուբոլ — ա. առատ, փարթամ, բ. ազատ, արձակ

Լխտաճաշ — վայրաճաշ

Լկերթնը — լկրթնե ծառի պտուղը

Լղարակ — շվարած ճողաշերտ

Լմլամել — լնդերով ծամել (անատամ մարդը)

Լոլակ — որորոցի մեջ դրվող փայտե խողովակ, որով երեխայի մեզը ճոսում է միզամանը

Լոլի — նիճար, երկարաճասակ մարդ

Լոլո (լոլոկ) — խնձոր՝ երեխայական թոթովանfով

Լոխ — բոլորը

Լոխտա — երեսակալ (ձիու, էշի)

Լոf — ցատկ

Լոf տալ — ցատկել

Լպատել — ա. ծեփել, լեպով ծածկել, բ. կեղտոտել

Լպուտիկ — գզրար, արհեստավոր՝ բուրդ, բամբակ գզելու վարպետ
Լո̈ւթ — մենակ, մերկ, տկլոր
Լո̈ւսնավեղ — շիկահող: Օգտագործում էին շինարարական, կավագործական աշխատանքների համար:

Խազա̈զ — սոխուկավոր անտառային ուտելի բույս՝ սոխազգի և սոխահամ
Խայան — կալի կիսամեծ կույտը (առաջին կալսից հետո)
Խանանդա — ժողովրդական երգիչ
Խանձող (խանձողներ) — խանձված, կիսայրված փայտակտորը
Խաշար — ծակոտկեն
Խարտ — խայթ
Խարտել — խայթել
Խափպուկ — բա̈նգի բույսը
Խեժնը — կովի դալը եփած
Խեն — յուղ, սեր
Խզակոթ — վիզ
Խզո̈ւկ — վարունգի, ձմերուկի և այլ դեռահաս պտուղը
Խլըպուլթնը — խորդուբորդ, անողորկ
Խծպ (Խծբ)—հապավում. խնամի, ծանոթ, բարեկամ
Խմանակ — նշան, հայտարար
Խնձոնահամ — խանձահոտ՝ խառնված ուտելիքին
Խնչլուզանե — խնչլոզ գետնից հանելու գործիք (ծայրը սուր փայտիկ)
Խշփաշիլ — կիսախորով անել, կիսաթխել
Խոզան — ա. հնձած արտ, բ. հացաբույսերի (և խոտի) վերգետնյա կտրվածք
Խոնգ — խունկ
Խոնչան — լայն գոտի, որ կապում էին ծանր աշխատանքների ժամանակ
Խոշակ — խորշակ. փուչ, դատարկ, լղար ցորեն
Խոռնը — ա. խմբված, փունջ, խուռն, բ. բուսատեսակ, ուրց
Խորթնը — խուրձ
Խշըմելիկ — խաչհանգույց, խաչմերիկ
Խոնակ — նապաստակի ձագ
Խոքնչխառանչ — վնասատու և թունախայթ միջատ

Խուտուրու — ա. խուտոր, ծուռ, շեղ, բ. անարդարացի, անիրավ
Խուզնավար — խոզանավար. հնձից հետո անմիջապես կատարվող վարը (ցելը)

Ծեղել — ա. հաղած թթով, մոշով լցված ամանի երեսը տերևներով ծածկել-ամրացնել, բ. ծածկել
Ծեղ — ծածկոց
Ծիվիշ — գութանի հողակտրիչ մասը
Ծլոլ (ծուղուղ) — լորձունք
Ծծազիզ — ա. երբ երեխան մայրական կաթ չուտելու պատճառով չի աճում, բ. տկար հորթ, երեխա, գ. անժամանակ ծաղկած բողբոջ
Ծկըթել — ա. կոտրել (ծկթցնել), բ. նարպկորեն գողանալ
Ծկուտի — կայծոռիկ
Ծհան — երկաթե ձող՝ երկու ծայրերով. մեկը՝ թոնրապատին հացը ամրացնելու, մյուսը՝ թխած հացը և հացածեղը (ծեղը) հանելու համար: Այժմ էլ գործածական է արցախյան գյուղերում:
Ծմակ — անտառ
Ծմթկան — նոր ծննդաբերած մայր
Ծմըթկյեվաթ — նորածնի հետ կապված ուրախ արարողությունը՝ քառասունքը լրանալուց հետո
Ծնըկլորակ — ձնագնդակ
Ծնըվեոզ — խոտաբույս
Ծոյնը — ծունկ
Ծպուտ — թույլ, նվաղ ձայն (հիվանդի ձայնը)
Ծռաշաչ (շաչ) — գարնանամուտի քամի
Ծոըկատլի — դեղնավուն թռչուն, որ նույն դերն է կատարում, ինչ փայտփորիկը
Ծոըկուտկուտ — փայտփորիկ
Ծտըվեննեն — վաղ առավոտյան
Ծրտըվեոած — հիվանդ, մերձիմահ
Ծրքանօւր — սատկածային, բնատուր շնորհք
Ծուծուն — շոր մոշացախ. ա. օգտագործվում էր որպես ակնավառեչ, բ. որպես մոմ՝ բրծելով ձեթի մեջ:
Ծուկան — ձկնորս
Ծփածեն — ծափի ձայնը

Կաթնուկ — կաթնահյութ ունեցող խոտաբույսերի ընդհանուր անունը:
Կարուկ — ծառի հասած պտուղը, որ ընկնում է գետնին:
Կաժի — վտիտ, լղար
Կածուկ — փշաբույսերի ընդհանուր անունը
Կաղաղակ — առոքի մաս
Կամքուռ — կարմիր
Կանան — թշվառություն, ողբերգություն
«Կանչ» — «Սանարի» պարեղանակի նայկական հին անունը: Ցայգալույսի նվագ:
Կապառ (կապար) — բուսանուն
Կասf (կասկ) — գոտկատեղ
Կափսը — մարդու մարմնամասը
Կեմ — կապ. խուրձը կապելու խոտաբուսային հյուսվածf
Կենազոխ — գինազոխ բույսը
Կեռան — հասունացող ցորեն (ցորենի արտ). փոխ.՝ հասուն, գեղեցիկ (աղջիկ)
Կեռfել — երկանfը, շաղացաfարը, ուանուցի fարը տաշելով, փորելով ելուստներ, ատամներ գոյացնել
Կեփ — երկնյուղ փոքրիկ փայտ, որի մի ծայրին ամրացնում են պարանը. ծառայում է պարանը հանգուցելու համար՝ էշը կամ ձին բարձելիս
Կզնվել (կեզ արմատից) — բարկանալ, տաքանալ
Կըխպել — շատ ուտել
Կթնըկոռեկ — ա. կաթնով կոռեկանաշ. փոխ.՝ համեռաշխ, սիրով (ընտանիf)
Կիրկամոտ — շաբաթ օրը
Կիցf — ձեռfի երկու ափերի միակցումը
Կլախի (գլուխ բառից) — մեծագլուխ. փոխ.՝ էշ, ավանակ, հիմար
Կլըկասան — կալ և կասան բառերից
Կլլան — կուլ առնող, բերան
Կլխել — գլխին հասնել, վերջանալ
Կլխիեր — գլուխը վեր
Կլխըպահե — իրեն, իր գլուխը պահող, իր հոգսը fաշող
Կլխըպժեն — թթու մածուն, որ գլուխը լվանալիս fսում են մազերին
Կլխըվեր — գլուխը դեպի վար

Կլխըլվա — ամուսնանալուց մեկ շաբաթ հետո ծնողների աղջըկատես գալու սովորությունը
Կծծավետ — միզահոտ: Արմատը՝ կծիծ, որ նշանակում է մեզ
Կծուզնը — կպչուն բույս
Կկզիլ — կրկնավոր բարդություն. արմատն է՝ կուզ
Կնալ — (արաբ.) ծույլ, դանդաղաշարժ
Կնոլ — ոչխարանոց, գետնափոր խրճիթ, գնուկ
Կնեպ — ձվի կեղևը
Կմատել — կեմը (կապը) կտրել
Կմբրոկ — կարմրուկ. փոխ.՝ կարմրերես
Կյակյուշ — կննռապատ, լղարերես
Կյնազոխ — տե՛ս կենազոխ
Կյշըկյրող — այլանդակ, տգեղ
Կյոտե — գոտի
Կյրահարփ — լավ պահած, գարեկեր ձի
Կյրաղենք — կույր աղիք
Կյրայլեր — գարու ալյուր
Կյրունքըոտեխ — գարնանամուտ
Կյուզ — մեզ
Կյուզաման — միզաման
Կյուզել — միզել
Կյուպառնը — գայլի բերանից խլած անասունի միսը
Կյումակ — տեղյակ, տեղյակություն, իմացություն
Կյուշ — ա. գավաթ, բ. չրակնը, գ. կիցք (երկու ափերի միացումը)
Կյուտակ — կուտակ, խոտի խուրձ (ավելի մեծ, քան լաստը)
Կյուրծավար — երեք փայտե գամերն են (մախաթ), որ գըտնըվում են մեկը լծի, երկուսը համնի և մասանի (արորի մասերը) միացման տեղում
Կնդատոր — նոր, ոչ խիտ
Կնդըկաթուկ — մեկ-մեկ, ոչ միասին
Կնչեմնը — պտղունց, նշույլ
Կոխտանչ — ոտնահար, ոտնակոխ եղած (տեղ)
Կոմբալ — գլխիկավոր, գնդավոր մահակ
Կոտեզ — շան ձագը (շնըկոտեզ)
Կորե — ա. կրիա, բ. հողի կորացած, ընկած, անկյունային մասը
Կշոր — կուշուր. թռչունների կուշ գալը

Կոզնոտ — գանգուր, խուճուճ (մազերը)
Կոճղեկ — բարակ փայտից պատրաստված շրջանակ, որ անց են կացնում տավարի վիզը և կապում ախոռին. փոխ.՝ ծեր, կորացած մարդ
Կոտրպրտանք — վերջին երեխան
Կոքրվեննած — պատրաստ հարսանիք գնալու (ուտելու և պարելու)
Կսնակել — կեսը կտրել, կիսել
Կտուրթակե — գլորան, տան կտուրի հողը ծեծելու-ամրացնելու գործիք
Կրնունք — ա. խոտի մնացորդը (անասունի ուտելուց հետո), բ. կերակրի մնացուկ
Կուլըկապ — արոտի բաց թողած ձիու՝ գլխի (վզի) և ոտքի կապելը
Կուպար — ձյան վրայի կոխտանշ ճանապարհը (ընդհանրապես՝ ոտքի կոխան դարձած չորացած ճանապարհը)
Կույրում — ոչխարի, այծի, հորթի մորթուց պատրաստած, ներսից կուպրապատ աման՝ օղի պահելու համար
Կուռներ — սայլի առեղներ
Կուռնըփոռնուկ — իրար ձեռք բռնած, թևանցուկ. փոխ.՝ միասին, համերաշխ
Կուտան — շան չափահաս թուլա

Հալավ — կարմիր կամ ներմակ կտորից կարված ներքնաշոր
Համբուլ — գութանի առաջին լուծը, խուրիկ
Համին — նույն, միևնույն
Համոթք — եզ անասունի սեռական օրգանը
Հայ — միամիտ, հավատավոր
Հայանալ — մի քիչ, չափավոր խմել (եկ հյանանք)
Հայավարի — համեստ, պարկեշտ
Հայու ռանգավ — ցորնագույն, հայերանգ, հայագույն
Հանդավար — ա. հանդ ու հանդաստան (իրեն պատկանող), բ. տունը՝ շրջակայքով
Հանե — այ, այն է
Հաշմաթ — ա. գործիք, բ. անհրաժեշտ, պետքական
Հաս — ա. հասուն, հասած, ամուսնահասակ, բ. թխվածքի միջուկը
Հասե — այ, այս է

Հա՛սի (ազի) — հարսիկ (ասում են ազգի հարսներին)
Հատե — այ, այդ է (դա է)
Հա՛տրա — շատախոս, անիմաստ խոսող
Հարակաշ — ա. միասին քաշող երկու եզները, բ. կիսովի վարուցանքի ընկեր
Հարթահո՛ւրթ — պարծենկոտությունը, զրախոսությունը
Հափուռ — ափ և բուռ
Հաքյի — պոչ, ագի
Հաքու — հորաքույր
Հբրեցե — Հաբրի՝ տեղանուն
Հեղե — ցորենը կիսահասուն, կաթնային վիճակում
Հեռալ — ցավել, մրմնջալ
Հի — ծիծաղ, ուրախություն (հիանալ բառի արմատը)
Հի՞բ (հիբի՞) — ե՞րբ
Հիդդա, հիդդի — միջատ, որ բույն է դնում հողի մեջ
Հիծիլ — հեծյալ, հեծելազոր, հեծյալ շարք
Հնդվեր — *հանդվոր*
Հո — տավարին քշելու ձայնարկությունը
Հովուր — հավուր, օր, պահ
Հորենք — հորելու գործիք
Հոշնիլ — կարմրել՝ շոգից, տապից, ամոթից, հիվանդագին ջերմությունից
Հստրկուպետ — ամրակազմ
Հվուր — ջերմություն
Հրթննքար — հարսանքավոր
Հուպեռնը — կլորավուն (պուլուր) սիսեռ, ոլոռ
Հուս — խորոված միս, պոմիդորի, պղպեղի, բադրիջանի, անխորով խառը հյութը
Հո՛ւրթ — երդ, ծխնելույզ
Հուքյակալ — հոգեառ
Հօթք — օդ, շունչ
Հև — հիվանդություն

Ղաշխա — աշխետ, աստղանակատ, լուսանակատ
Ղաշև — անասուններին մաքրելու, քորելու գործիք
Ղասնըղ (ղասնեղ) — գնդասեղ, քորոց
Ղեղան — շեղաշք, աղեղաշք. փոխ.՝ թեք, ծուռ, ոչ ուղիղ
Ղլավ — կտրող գործիքների՝ սրելուց (հեսանելուց) հետո ա-

ռաշացած բարակ, նուրբ ծայրը: Գործիքը (դանակ, կացին և այլն) լավ սրելով՝ այն չեզոքանում է
Գլդան — աստղափուշ
Գնչուր — փշուր
Գշրնայքա — նախշազարդ նայքա (ոչ ամենօրյա գործածական)
Գոքի — ձորանովիտ, ձորակ, ձորատափ
Գոթմա — բարդոց: Ձոռս-նինգ դոթմա խոտը մի սայլաբաժին է
Գողել — ողողել, թրջել
Գորթ — նշմարիտ, իրական
Գոփեր — նորեղբայր
Գոռթնը — կոռթնը. խոտաբույս, որով ծածկում են ննձանի հատակը՝ խաղողահյութը մաքրելու համար
Գրմբցուքի — ողորմած հոգի, մահացած
Գուլաշ — գրկաչափ
Գուլփի — պարանի ոչ մեծ իրար հանգուցված կտոր, որով էշի վրա ամրացնում են երկու տակառների ունկերը (բարձելիս)
Գուփիրակեն — նորեղբոր կին

Ճատտի (ճաթտի) — հին պարանուն. երգիծական պար: Պարում էին այլակերպված, ցնցոտիներով, նմանակելով ուրիշներին (պարողի ինքնությունը հայտնի չպետք է լինի): Պարում էին նաև խմբով, որը վերանում էր ներկայացման՝ մարդկանց աշխուժացնելու նպատակով:
Ճելլի — շուտ, արագ, անմիջապես
Ճիլ — շիղ, երակ
Ճիտ — ա. վիզ, բ. գիրկ
Ճխլած — կերակուրը բրդելուց թանձրացած (ճխլած փրթուշ, լոքի)
Ճխտել — ջուխտ-ջուխտ ուտել. փոխ.՝ անհագորեն ուտել
Ճղապան — սայլի երկու կողմի ճաղերը իրար միացնող զուգահեռ փայտերը
Ճմփել — կուշտ ուտել
Ճնգլըմ — թառ, չոնգուր (վերջինս բառի օտարանունչ ձևն է)
Ճոնդ — ծայր (թելի, պարանի և այլ)
Ճոռի, ճոռնիգ — ջուրնիկ, ջրաման. փոխ.՝ կարճահասակ, բըզուկ

Ծպոտ (ճեպոտ, ըշկըճեպոտ) — աչքի (նաև լամպի) կեղտը
Ծռավանդ — փերանամեջ մասը. տանիքի երկու փերանի արանքը
Ծըրթաթախ — թրջված, ջրողող
Ծըրկոտեմնը — ջրկոտեմ, առվակոտեմ
Ծուխտել — ամուսնանալ

Մաղար — մինուճար
Մաթ — զարմանք, ապշություն, զմայլվելը
Մա̈թ — պտղահյութ, պտղածոր
Մաթռաք — քմահաճույք, ցանկություն
Մալաս — ա. սկզբնական նշանակությամբ թթու, տհաս, դեռահաս պտուղ, բ. նռան տեսակ, թթվաշ ու քաղցրահամ
Մախառ — սայլի լծակները միացնող փայտե գամ
Մախմուր — ա. թավիշ, թավշյա, բ. փափուկ, նուրբ
Մակառ — հարսանիքի ժամանակ փեսայի հետ հարսնացուին բերելու գնացող երիտասարդների խմբի անդամ
Մամային — դատարկաձեռն, ձեռնունայն
Մայա — պանրի մակարդ. փոխ.՝ խորամանկ, ճարպիկ, խառնակիչ
Մանի — ա. բարեկամություն, բարեկամական կապ, բ. մանվածք, գ. հյուսվածք, երգ, տաղ
Մաշառ — սղոց (տե՛ս մշրել)
Մասան — արորի մասերից մեկը («Ամեն փադա մասան չընիլ, ամեն մարթ էլ Հասան չընիլ»)
Մաստ — ա. կուշտ պահող, բ. դժվարամարս, դժվարածամ կերակուր, որն ուտելուց հետո մարդը երկար ժամանակ ուտելու ախորժակ չի ունենում:
Մաստ (լայմաստ) — պինդ, ուժեղ, առողջ, դիմացկուն
Մաստակ — ա. չնչին բաժին, որից մարդ խռովում է, բ. ծամոն
Մաստան — ա. տուն պահող, կշտացնող (կով), բ. կովանուն
Մարա — մայր բառից. սահմանային քար
Մարաք — ա. հատուկ ձևի շինություն, բ. հարդանոց (շինված կալի մոտ)
Մարդիմազար — ա. չարաճճի, բ. չար, խառնակիչ, անհանգիստ
Մարյաթ — արժեք, գին

Մղղար — ա. երախտիք, լավություն, բ. գին, արժեք
Մելիք — բուսանուն
Մետակ — մեկտակ, միահատ (շոր). փոխ.՝ միայնակ, անօգնական (տղա)
Մժղալ — բարակ անձրև մաղել
Միլ — ա. տարածություն, ընդարձակ, երկար, բ. գերան
Միլլիմիրի — թափառական. փոխ.՝ անտեր, անտիրական
Միկա — մի կաթ, մի քիչ
Մին փարա — ոմանք
Մլաք — մլուկ, փայտոջիլ
Մլլալ — տարածվել
Մլնչկլոլե — գործիք, որով ոլորում են մալանչը
Մծրհան — մեծավարի, մեծավայել, մեծի հարգով, մեծի նըման
Մկլավետ — խանձահոտ, խնձոնահոտ
Մհասիլ — (պարսկ.) հարկահավաք. փոխ.՝ խստապահանջ, դաժան
Մհենզ — հիմիկ, հիմա, այժմ
Մենե — խնճված բան, թնչուկ
Մնանա — փշրանք, կտորտանք, մնացուկ
Միննանուց — մատնոց
Մշրել — նշմարել, մաշառով հետք անել, նշմարելի դարձնել
Մոլ — խիտ, թանձր ծուխ («Ամեն ըրիլիք մոլ չանում»)
Մոլի — սոստասան
Մորեխածետ — տարմահավ
Մորեխածի — մորեխի տեսակ (պցրվեններ մորեխ), զարեխցիկ
Մոքուր — մորաքույր
Մչի — մի գործ ընկերովի կատարելը
Մռամոչ — մոչի տեսակ
Մռոզ — մռայլ
Մսացուկ — զոհ, մորթելու անասուն, տավար
Մսմառ — մայր մեխ, մեծ մեխ
Մտկհապալ — ներքնաշոր
Մտոկ — ուշեղ, ուշադիր, մտապահող, խելոք
Մրմնչոն — մրմնչյուն, ցավ
Մրոքուր — մորաքոր, կարմիր քոր
Մուխազ — մեխակ
Մուհ-մուհ — դժգոհ, անշնորհակալ, դժկամ

Մուղան — ա. գյուղատնտեսական գործիք, դարմանմղիչ, բ. լեռների արանքը մտած տարածություն, գ. Մուղանա դաշտը
Մունովկյզի — աչքի հիվանդություն
Մուշքնպատ — հողագործի ճիպոտ

Յաքա — փայտե երկճյուղ եղան
Յաղ — օտար, անհարազատ
Յալ — ա. լեռնապարի ալիքվող մասը, ալիքաձև գծագրությունը, բ. ձիու, էշի վզի ալիքվող մազերը, գ. ալիք, ալիքում
«Յալի» — հայտնի պարախմբի ընդհանուր անունը, որ կոչվում է նաև «սովորության պար», այսինքն՝ հայկական ազգային պար. փոխ.՝ խմբային պար
Յաղի — առասպելական կենդանի, մարդագող
Յասար — ա. ծույլ, անգործունյա, բ. թույլ, անզոր
Յաստան — մարգ, հովիտ
Յավա — ա. դյուրաշարժ, արագավազ (անասուն), բ. անկշիռ, անարժեք (խոսք)
Յդըքամակ — անմարդամոտ, հարազատներին մերժող
Յօն (ի օն) — ճանապարհ, ելք
Յորթ — վազք (երթ բառի արցախյան ձևն է)
Յրա — ի վերայ, վրա
Յփլաղ — բու

Նանե — տատ, տատիկ, հոր մայրը
Նաշար — մեղավոր
Նափոաշ — գորգատիպ գործվածք, որով ծածկում-փաթաթում են աղջկա բաժինք-օժիտը՝ չար աչքից և ընդհանրապես արտաքին պատահարներից պաշտպանելու համար
Ներխ — ա. ներք հնագույն բառի աղավաղված ձևն է, բ. խաշիլով լցված ամանի միջնափոսը՝ յուղը առանձնացնելու համար
Ներխաորեց — արգելված տեղը, վայրը ոտք դնելը. փոխ.՝ անկարգություն, անկարգ, անվայել
Նի — ներս
Նիշընգյար — նախշանկար, գեղեցիկ (գորգ)
Նոթե — անճաշ, անոտի

Նռնեգ — ա. նռան գույնի, կարմիր, բ. անուն
Նութրկոլա — նավթահրագ. փոխ.՝ մռայլ, անհրապույր

Շալք — գոլորշի
Շախկա — բույսերի հիվանդություն, արևատապ
Շահնի (շահենի, շահական) — խաղողի տեսակ
Շահ — ա. փարթամ, բ. ոչ վայրի, մշակովի ընտիր տեսակ (ծառ, պտուղ, օրինակ՝ խոսրովենի)
Շաղհարել — ծառերի առավոտյան շաղը թափել՝ ճյուղերը շարժելով. փոխ.՝ մարդուն նույն կարգի թափահարել-սպառնալ, կովել-անպատվել
Շառավ տալ — զրպարտել
Շարանուկ — կախան պտղի շարքը, լյուս, գնգեղ
Շաքի — թերություն, պակաս կողմ
Շեղուն — շեղ, ոչ ուղիղ, զառիվայր
Շենքաշեն — գյուղեգյուղ
Շեշմա — ընտիր
Շերան — ջրահարս. փոխ.՝ գեղեցկուհի
Շիթ — հյութ, պտղաջուրը
Շիրա — խաղողահյութ
Շիրախոտ — վայրի հացաբույս
Շլոր — սալորի վայրի տեսակը
Շղամքուր — շաղամ, քաղցրախոս
Շմալ — շիվ, ճիպոտ
Շմբել (շմբշմբորել) — կարել, կոպիտ կարել, կապկպորել
Շնըպուքյի — խոտաբույս
Շողոլ — ա. ուղիղ, հարթ, բ. շինարարական գործիք
Շչաքար — հրաբխային քարը
Շռութկան — ջրորդան
Շրենե — գինեխաղող. խաղողի հայտնի տեսակ Արցախում
Շրնթու — նույնը, ինչ՝ շիթ, շիրա, հյութ

Ջաթան — աստղածաղկի սերմը
Ջաթել — կապել, իրար միացնել
Ջալ — աշխետ, չալպուտուրիկ
Ջալիգ — նախշած ճիպոտ, վերևից՝ բռնակով, ձեռնափայտ
Ջանգ — բոտ (ճանկ)
Ջանի — անշեն, անբարեկարգ, ավերակ

Չարեք — քառորդ
Չափար — ցանկապատած տեղ, ցախով պատած հողամաս (բանջարանոց, այգի)։ Չափարը լինում է երկու տեսակ՝ հյուսկեն, շիվահյուս և փշաբույսերով
Չդրհադի — նախապես՝ առանց շադրա. փոխ.՝ մերկ, տկլոր
Չին — մանգաղ, հնձի գործիք
Չլըպեղեզ — խատուտիկ, չալ, նախշուն
Չլըվեններ — չալպուտուրիկ ոտքերով (անասուն, թռչուն)
Չլինգ — փայտի կտոր՝ «չլնգի» խաղալու համար
Չլնգի — մահակով խաղ
Չլնգիլ — կտրել
Չկամ — ա. ժլատ, բ. ուրիշի լավը չկամեցող
Չորքկուս — չորս կողմը
Չոփ — ծառաշիվերի կտորտանք
Չվստան — չորս սյուների վրա կանգնեցրած տուն
Չմխել — ա. մորթած անասունի կաշին ձգել՝ չորացնելու համար, բ. կովի կուրծքը կաթով լցվելուց լարվելը, գ. բեռնաքարշ անասունը ծանր բեռան տակ պրկվելը
Չովլի — չեղյալ
Չումհակ — ա. ոչ դյուրաթեք, ոչ շարժուն, բ. անկարող, անբան
Չփրամար — մայր չափար, շիվերով հյուսկեն ցանկապատ
Չփրծակե — ա. փոքրիկ թռչնակ, բ. թզուկ մարդ

Պառակ — ա. պառկած, բ. սարանուն
Պել — խենթ, խելառ, ծուռ
Պետռ (պետռեզ) — անամոթ, անպատկառ
Պզկաթան — սխալ բառ է. պետք է լինի՝ պզտաթան
Պզտաթան — քամած խտացրած թան, որը գնդիկներով փռում են չորացնելու համար։ Հարելով՝ նրանից պատրաստում են քյլնգոշ և խաշիլ կերակուրները։
Պժեն — ա. մածնեմակարդ, բ. տե՛ս կլխըպժեն
Պին — հողը փխրեցնելու, խոր վարելու գործիք, ունկավոր թի
Պին — վազի ելուկ, ավելորդ շիվ, որը գարնանը հեռացնում են
Պլանուկ — խոտաբույս, գժախոտ։ Այսպես է կոչվում խենթացնելու հատկություն ունենալու պատճառով։ Տուշանազգի բույս է. գազրուկ։
Պըխելունք — դեռահաս, անչափահաս, դեռևս չհասունացած

Պլկան, պլկան քցիլ — բողբոջ բառից. պոըկան
Պլորվել — բոլորվել. շան նստելաձևը՝ գլուխ-ոտք միացումով
Պկոռուց — կոկորդի հիվանդություն
Պղոսից (պողոսիկ) — ձիթհան գործարանի (սրանոց) հսկա գերանը, որի շնորհիվ ապահովվում է քարերի անշեղ դիրքը
Պնըխափան — պարապ, անգործ
Պնջրփսոկ — մանրակարկուտ, լվակարկուտ
Պոչ — ականջամասերի՝ դեպի այտերն իջած մազերը. փոխ.՝ մազ, ծամ
Պորթակ — ամանը լիքը լցված, տարողությունից էլ ավել
Պորվենե — իրականում չանել, բայց պառավի տեսքով
Պոկշոռոտել — ա. հանախակի հորանջել, բ. ներքուստ հոգնած լինել, տաղտկանալ
Պողնոտել — աղաչել, պաղատել
Պոռկ — բողբոջ
Պտոկ — ծայր
Պտըոեր — հացի պատառներով մածունն ուտելը
Պտուտկուն — կանաչ, պուտ (կաթնուկաբույս)
Պրանալ — բարիանալ, բարի դառնալ
Պրզըճրիլ — ա. լվացքը վերջնաջրել՝ պարզ ջրով լվանալ, բ. նաշից հետո մի համով բան ուտել
Պրընհարեեք — հիվանդություն (լեզվաբորբ)
Պութընըհարել — բութ մասով մորթած անասունի կաշին քերթել (մաշկել)
Պուճպուճատել — հավի բույն փնտրելը, ձու ածելու համար
Պուպու — կանաչ կեղևից մաքրված ընկույզ. փոխ.՝ մերկ
Պուտի — ա. մի պուտ, բ. կարճահասակ, թզուկ, գ. մականուն
Պուրթընպատ — բուրդը թակելու ձիպոտ
Պուքյի (պուքի) — բոխի, ձիասամիթ

Ջամբուր ընիլ — բաժանվել, մի կերպ կտրվել (մեկից)
Ջեջա — խաղողահատի թեփուկ՝ հյութը քամելուց հետո, որից օղի են քաշում (չիչ բառից. չիչ-չիր-չոր)
Ջեջիմ — կարպետի ավելի նուրբ տեսակ
Ջհիլ — պատահել, հանդիպել
Ջվար (ջավար) — ա. ջրաբաշխ, բ. ազնիվ, արդարացի մարդ

Ռամուզ — հայացք, տեսք, դեմքի արտահայտությունը
Ռավալ — առավել բանից
Ռեն — բարախ
Ռխավեր (ռխեվեր) — ոտկրամոլ, անկշտում
Ռոք — տաշած անկյունաքար, կապքար

Սալակնը — մեծ սալաքար, որ օգտագործում էին որպես փական՝ բարա (տե՛ս). փոխ.՝ դուռ, փական
Սալամնը — կաքավանման թռչուն
Սանիլիզ — թեթևսոլիկ
Սանդ — մեծ քար, որի վրա ծեծում էին ցորենահասակը
Սավ — սով
Սավա — ուշ, ժամանակավրեպ
Սաս — ձայն
Սար — գլուխ (աղերս ունի սար բառի հետ)
Սափ — առողջ, ամուր, անվնաս
Սաքուլ — ողորկ, սահուն
Սեկ (արևմտ. սիկ) — ա. պինդ, չրապակաս ցեխ, բ. խմոր հաց
Սեյրազ — ոչ խիտ, նոսր (արտ)
Սետ — տեղյակ, իրազեկություն
Սթուն — սյուն
Սիրեկ — սեր և եկ բառերի միացությունից
Սիրեմնը — ծառի զարնանային կեղևը, որ օգտագործում են որպես կապ (թել, քող)
Սլէթա — լկտի, անամոթ
Սլնգե — լպրծուն, սահուն
Սլուկն — տզրուկ
Սմախեխտ — ծոմախեղդ բառի աղավաղված ձևը
Սմկել — սմքել, բառամել (սմկած նաթ)
Սմնդուկ — խոտաբույս
Սոյ — ազգ, ցեղ, արմատ, տունկ
Սոյնը — ա. արմատ, բուն, բ. սունկ
Սորան — սոր-սուր արմատից. սահուղի, լեռնային անտառի մեջ փայտը սահեցնելու տեղ, ձգվում էր վերից վար
Սպար — վերին շերտ
Սպարել — քսել, ծածկույթ առաջացնել
Սվաքաշ — զայլազոտավ

Սվսվենե — սևորակ, թուխ
Ստակել — սատկել
Սրանուց — կտավատից ձեթ քաշելու գործարան
Սուկի — տավարի ողնաշարի երկկողմ փափուկ միսը
Սունի — անհամ, ոչ քաղցրախառն
Սուր — արցունք
Սուրավ — արցունքոտ, լացկան, վսվսող
Սո̈ւրու — հոտ, շատ
Սփրթնիլ — գունատվել

Վա̈յ — գեղեցկություն (հկ.՝ անվա̈յ)
Վայվրուդ — վայնասուն
Վարաղ — փայլ, գեղեցկություն
Վարջիլ — վարժվել
Վելա — փաթաթուկ (բուրդ, բամբակ)
Վեռէջ — կյանքի հատակում գտնվող մարդ
Վեստ — ոստ, թելի կուտակը
Վեստան — ոստայն, գործագործական սարք
Վետեց — ա. ոտի վրա, կանգուն, բ. շարժունակ, առույգ (ծերերին)
Վեր — հոր (վայր բառն է՝ էջ իմաստով)
Վերթնուր — որդնած
Վերցակ — որձ բառը ակ ածանցով. աքլոր
Վժժոկ — ա. արագ հոսող, բ. ջրվեժ
Վի — բազե
Վիրի — վայրի
Վխնրաշկ — խաժ աչքերով
Վխնրսիսեոնը — սիսեռի տեսակ (տափակ, կանաչավուն-գորշավուն)
Վնավսի — վայնասուն
Վննըկապեչ — ոտնակապ. փոխ.՝ փոքր երեխա կամ ծերացած հարազատ, որոնք կաշկանդում են տանտիրուհուն
Վռակալ — վերջինը, եզրափակողը (վոըկալին՝ վերջում)
Վսկըներիլ — ոսկեզօծել
Վրթվրթալ — գրտահարվելու պատճառով լաց լինել

Տալ — ա. նյութ, բ. ամուսնու քույրը
Տակռե — արմատ. փոխ.՝ տան մեծավորը, ազգի մեծ

Տանգ — անկ, անկյունչ (չվալի)
Տաշտ — ամբողջական փայտից պատրաստված երկարավուն աման՝ խմորագունդը բացելու երկկողմ հարմարությամբ՝ ալյուրը մաղելու և խմորը հունցելու համար
Տաշտակ — տախտակե լայնդիր շրջանաձև աման՝ լողանալու և լվացքի համար
«Տարա–տարա» (տարան–տարան) — պարեղանակ. կատարվում էր հարսը տանելու ժամանակ («Տարան հա՞»)
Տարբեր — տարբերություն. տար–բեր՝ եր ու վար, կշեռքի անհավասարակշիռ նժարներ. նժարների պարունակության տարբերությունը
Տեպեզ — մերկոտն, բոբիկ
Տեռնը — դառը, ոչ քաղցր. սկզբնապես՝ չհաս պտղի համը
Տի — այդպես
Տետ — տե՛ս Տոտող
Տզափաղ — դեզափայտ. խոտադեզի կենտրոնում ամրակի դեր կատարող երկար փայտ. փոխ.՝ *բարձրահասակ, երկար* մարդ
Տինիլ — ձագ հանել, բազմանալ
Տիտակ — նստելու տեղ
Տիտիկ — փոքրիկ աթոռ (երեխայի համար)
Տհանալ — հևալ, մի կերպ շնչել
Տղապետ, դեղապետ — ամեն ինչի լավը (հիմնականում պըտուղ, քաղցրավենիք), որ պահում են հիվանդների համար
Տղնրկոթել — դեղնել, հիվանդանալ
Տմբզել — ծեծել
Տմկել — կակղել (տամուկ բառից)
Տմկըցնել — մատաղ շիվը (փայտը) կրակի վրա խանձելով կակղացնելը՝ կորացնելու և ցանկացած ձևը տալու համար
Տմտեմուկ — լնդերք, լինդ
Տնդեզին — տանտիկին
Տնդրդել — ուշադիր նայել, զննել
Տշտըծհան — երկաթե կամ փայտե գործիք՝ տաշտի կողերը խմորից մաքրելու (քերելու) համար
Տոխ — դոխ. հավի հասուն մայրացու հավ. փոխ.՝ հասած աղջիկ (նաև անձնանուն՝ Դոխի ձևով)
Տոմբալան — գետնասունկ
Տոտոն — ornrag

Տպապորիկ — պուտպուտուրիկ
Տոնրպեցուկ — դռան բաց ու խուփ անելը
Տոռոռոտել — տոզել
Տվրվեններ — երեկոյան. անասունները գալու ժամը
Տվոլի — բնատուր, աստվածատուր (շնորհք)
Տվրըծաքար — մեծ քար, որի վրա՝ ա. տավարածը նստում հանգստանում է, բ. վրան մոշաբրթուշ է ուտում
Տրմնանոց — հարդանոց, ծղոտը պատսպարելու տուն՝ մարագ
Տուզնը — սոված, անկեր
Տումար — անքթիթ. բուք հայացքով նայվածք
Տուտուլ — երկանքի ցիցը
Տփածետ — ճնճղուկազգի թռչուն՝ մարդ տեսնելուց հպվում է գետնին
Տփրքշերե — կարճահասակ

Ցակատ (ցախհատ) — ցախ կտրելու գործիք
Ցավքուն — ջրի ցայտը
Ցիրթ — արցունք, լաց
Ցիփլի — ծառաշիվի վրայի ելուկները. փոխ.՝ փոքր և վտիտ
Ցմաքվել — ապշել, զարմանքից քար կտրել
Ցմքաման — աման, որի մեջ անջուր՝ ցամաք մթերքներ են պահում
Ցրթնի — ցրդնի, գինի
Ցուրնայլեր — ցորենի ալյուր
Ցևք — տանիքի, տան կտուրի ծայրամասերը

Ուզունդարա — «ուզին տարան» ժողովրդական բառակապակցության օտարահունչ ձևը: Պարեղանակ. տե՛ս «Տարա-տարա»
Ուլախ — էշ, ավանակ, էշազգի անասուն
Ուլամ — ծույլ
Ուխար — կրակի զանգված, կրակի կույտ (ռուսերենում բառը պահպանվել է ուզար ձևով)
Ուխարել — խարկել կրակի մեջ
Ուղուրմ — խիղճ, ողորմածություն
Ունապ — ունաբի բույսի պտուղը
Ունապի — ա. ունաբենի ծառաբույսը. գտնվում է անձեռացման եզրին: Նրանցից մեկը գտնվում է Բերդաշենի բուժկե-

տի այգում: Ունի կարմիր, գեղեցիկ քաղցրահամ պտուղներ՝ հոնի նման, բ. հին պարանուն. պարում էին աղջիկները՝ կարմիր հագուստով (հալավ)

Ուռթանա — առավոտյան

Ուրթումնակեր — երդված, որ հաց չուտի («ուրթումնակեր ը՞ս», երդվե՞լ ես, որ հաց չես ուտելու)

Ուրուզյուն — երեկո (ըրզյոնվա-երեկոյան)

Ուրուն (անել) — փնտրել, հետաքրքրվել, տիրություն անել

Փաթա — հարսանեկան պսակ

Փածեղնը — փայծաղ

Փաղաղ — ա. անթթխմոր հունց, խմոր, բ. նրանից թխած հաց (ծոխա)

Փանջաք — բարդակ, բարդ: Մի փանջաքը տասը խուրձ է

Փա՛ս — փես, թուրքական գլխարկ

Փարթուկ — ծոպավոր կտոր, որ կանայք հանգուցում են գոտկատեղում՝ աշխատելիս զգեստը չկեղտոտելու համար. առաջկապան

Փարվանի — հին պարանուն

Փարսանգ — քարի կտոր կամ այլ իր, որով ուղղում են կշեռքի նժարները՝ կշռելուց առաջ, վերնալիր

Փիլ — փիղ

Փխըտորս — առևտուր, ապրանքների փոխանակում. փոխ.՝ մըտերիմ հարաբերություն

Փշփշիկ — ա. փշավոր, բ. խոտատեսակ

Փոխմուրթ — փոխարինելու շոր, հագուստ

Փսաշոր — գետնաշոր, շորաբուս (բնականոն կերպով շորացած ծառ)

Փսնգյու — փոթորիկ, բուք, ձնաբուք

Փսոկ — ծիլ

Փսոր — փշուր

Փսուրքցի — կեղտը շպրտելու աման

Փրտակել — պարտակել, տեղավորել. փոխ.՝ գողությունը թաքցրնել

Փուրըհարենք — փորլուծ, փորացավ

Քամքաշ — օդանցք, սողանցք, անցք, որով օդը մտնում է ներս

Քաշ — ա. ագռավ թռչունը, բ. ցած, ցածրադիր

Քաշու սաղունձ — բույսերից (որոշ) հոսող թանձր խեժ, որից ներկ էին պատրաստում. գխտոր

Քաշու սխտոր — վայրի սխտոր, սակորդիոն: Ընդունված էր թթու դնել

Քափ — ա. կերակուրը եփելու ժամանակ առաջացած փրփուր, որը շարունակաբար վերցնում են, բ. շերտ, որ փակում է նոր եփած բանմազի (դոշաբի) երեսը: Քափին առանձին fա-շում են և ուտում:

Քեթուկ — ա. կոճղ, գնդարմատ, բ. փոխ.՝ տան նահապետ, գ. կտրված ծառաբուն, որն օգտագործում էին որպես աթոռ, սեղան, դ. արմատական բան, արքություն (հին գիրf, մատ-յան, արքատաշ fար, հին կարաս և այլն)

Քեռ — այծի, ոչխարի արուն

Քթավուր — կոթավոր կաթսա, պղինձ

Քթӧւյհարել — գդալով ուտել

Քլլան — դռան ներսի փական, սողնակ, եռնափակ

Քլև — կեղև

Քծըծել — բամբակի կորիզը հանել, թափթփուկներից մաfրել, նախապատրաստել մանելու համար

Քխծրպերան — fաղցրախոս. փոխ.՝ արդարախոս, ճշտախոս

Քխծրվաշի — fաղցրավուն

Քյավկիր — պետf է լինի՝ fափկիր. կերակուրների fափը fա-շելու ծակոտկեն շերեփ

Քյլըդիլ — կողպել

Քյլիդ — կողպեf

Քյուզ — փարախ, ոչխարների գիշերելու տեղ

Քյումբաթ — ա. գմբեթ, բ. գմբեթավոր եկեղեցի

Քյուռ — չարաճճի, անհանգիստ, աշխույժ

Քմալի — fամիներով առատ

Քենեf — խոհ, fնին

Քշերե — կզաfիս

Քշկող — հանգույց

Քշկռել — հանգուցել

Քշրփախուց — գիշերային փախուստ. փոխ.՝ աղետ, արհավիրf

Քոլ — թուփ

Քոլա (հոգնակի՝ fոլf) — մի բարդակ (կուտակ) բուրդ կամ բամբակ

Քչեղակ — կաշաղակ. փոխ.՝ շատախոս, զրախոս

Քռքռալ — կոպիտ ծիծաղել
Քցո̈ղ — խմող, խմիչքասեր (ողեսեր, քցա̈ծ — խմած)
Քունափ — քնահարբ, քնկոտ, քնասեր

Օթի — սգվոր, տխուր
Օխ — ա. սայլի երկու անիվները միացնող հաստ փայտը, որի վրա ամրացված է տախտակամածը, բ. աղբրահունը
Օնչ — ժանգ (ունչանո̈ւր — ժանգը լվացող ջուրը)
Օչը տեն — հայացքը դեպի գերեզմանոց, ծերացող, հիվանդ
Օչը տես — տես՝ ըպրկլոխ
Օնը — մեծ մուրճ, որով կոռում են մետաղները
Օսի — ուսեղ, ամրաթիկունք, ուսահաստ (նկատի ունի եզ ա-նասունը). փոխ.՝ անհասկացող, հիմար
Օրաղ — ուրագ
Օրան — ավեր, փլեկ
Օրիգ — ձիու ոտնակապ, ոտնակողպեք, բխո

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

## ՀԵՔԻԱԹՆԵՐ

1. **Միլկանը**.— Պատմել է Պավլի Սարգսյանը, Մարտունու շրջանի Հացի գյուղի բնակիչ, բավարար գրագիտությամբ, ծնված 1905 թ.: Հեքիաթը լսել է իր տատից: Գրի է առնվել 1977 թ.:
2. **Պինն ապերը**.— Պատմել է բանասաց Սերգեյ Աղաբեկյանը, ծնված 1901 թ., Հացի գյուղում: Գրի է առնվել 1976 թ.:
3. **Լվ«թունը կորչիլ չի**.— Պատմել է Միքայել Ղայամյանը, ծնված 1906 թ., Աշան գյուղում: Հեքիաթը լսել է իր մորից՝ Մարգարիտ Ղայամյանից: Գրի է առնվել 1978 թ.:
4. **Սումբաթն ու Թափեղը**.— Հեքիաթը բանահավաքի կողմից առաջին անգամ գրի է առնվել 1957 թ. Ստեփանակերտում, գիշվարբնակ Գրիգոր Բաղրյանից (ծնվ. 1870 թ.): Երկրորդ անգամ գրի է առնվել Երևանում, Թալինի շրջանի Մաստարա գյուղի բնակիչ Ալեքսան Սմբատի Բարսեղյանից (ծնվ. 1918 թ.), 1972 թվականին: Վերջինս շնորհալի բանասաց է և հեքիաթը հրապարակվում է հիմնականում նրա պատմածի հիման վրա: Երկու տեքստերի էական տարբերությունը կապված է գլխավոր հերոսի անվանը (առաջին տեքստում՝ Թափեղ, երկրորդում՝ Թափոտղ):
5. **Խորթը**.— Պատմել է Հերիքնազ Օհանյանը, ծնված 1867 թ.: Ծուրջ հարյուրամյա շնորհաշատ կինը հեքիաթի չափածո տեղերը հրամցրել է երգով: Հերիքնազ Օհանյանը հեքիաթը լսել է իր հորեղբորորդի Մովսես Սաիկյանից (Աշան գյուղից), գրի է առնվել 1968 թ. Սպիտակաշեն գյուղում:
6. **Անմաղը**.— Պատմել է Սողոմոն Սարգսյանը 1949 թ., Աշան գյուղում:
7. **Մրթընկեզ՝ ճոխտն էլ մին խելքու**.— Գրի է առնվել Հացի գյուղում, ասացող Ալեքսան Բարսեղյանից, 1978 թ.:
8. **Ղազը**.— Պատմել է Նախշուն Մուսայելյանը, ծնված 1907 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1978 թ.:

---

* Բանահյուսական ստեղծագործությունների և ազգագրական նյութերի մի մասը չի ծանոթագրված (ուստի այդ համարները դուրս են մնում): Ժողովածուն կազմողը այն գրի է առել հիշողությամբ, իբրև ունկնդիր, ականատես ու մասնակից (ծ. խ.):

9. **Հու վեր մին տա՝ օխտը կստանա.**— Պատմել է Հացի գյուղացի Գրիգոր Ջիվանշիրյանը, ծնված 1905 թ.: Գրի է առնվել 1982 թվականին:
10. **Փանմավ վարթարեղը.**— Պատմել է Սարգիս Ավագյանը, ծնված 1886 թ., Աշան գյուղում:
11. **Հփուռկեւ.**— Պատմել է Դադա Խաչատրյանը, ծնված Աշան գյուղում, 1906 թ.: Հեքիաթը լսել է մանկության տարիներին: Գրի է առնվել 1984 թ.:
12. **Մարը.**— Պատմել է Բենիկ Գասպարյանը, ծնված 1917 թ., Ասկերանի շրջանի Բադարա գյուղում: Գրի է առնված 1981 թվականին:
13. **Պոզը.**— Պատմել է Մարգարիտ Սարգսյանը, ծնված 1904 թ., Հացի գյուղում: Գրի է առել իր թոռ Նելսոն Սարգսյանը 1976 թ.:
14. **Վեղը շատ չրչարե.**— Պատմել է բանասաց Թավադ Շինդյանը, կիսագրագետ, ծնված 1886 թվականին, Աշան գյուղում: Թավադ Շինդյանը օժտված էր բնատուր շնորհքով, ճորինում էր չափածո ստեղտագործություններ: Գրի է առնվել 1984 թ.:
15. **Առաչ վեննանդ տակե տափը ննանչի.**— Պատմել է Յուրիկ Առստամյանը 1959 թ.: Լսել է իր ճորից՝ խոսքաշեն Իվան Առստամյանից:
16. **Ըստեղ շեն չի տեռնալ.**— Գրի է առնվել 1967 թ. Բադարա գյուղի բընակիչ, սայլագործ-արճեստավոր Մուխան Ավանեսյանից:
17. **Մարթն ու վագրը.**— Գրի է առնվել աշանցի Լենրիկ Հովսեփյանից 1970 թ.:
18. **Ամեն պաչու կճըվատա՞ն.**— Պատմել է Հմայակ Մկրտչյանը, ծնված 1923 թ., Աշան գյուղում:
19. **Մին պիծի ճափատ.**— Պատմել է Պավլի Սարգսյանը: Գրի է առնվել 1977 թ., (տե՛ս № 1 ծան.):
20. **Լուծը.**— Պատմել է Անդուն Ղազյանը 1960 թ., Աշան գյուղում:
21. **Եզնը.**— Պատմել է Աթանես Ավագյանը: Գրի է առնվել 1964 թ.:
22. **Կաքավը.**— Պատմել է Հերիքնազ Օհանյանը (տե՛ս № 5 ծանոթագըրությունը):
23. **Կծաքարը.**— Պատմել է Թավադ Շինդյանը (տե՛ս № 14 ծանոթագըրությունը):
24. **Վե՞ր Արտավազ.**— Պատմել է Աշոտ Առստամյանը 1971 թ., Բերդաշեն գյուղում (նախկինում՝ Ղզղալա):
25. **Հի՞նչ ճվատու վըս.**— Պատմել է բանասաց Սամսոն Ստեփանյանը, ծնված 1906 թ., Աշան գյուղում: Լսել է իր ճորից՝ աշուղ Աթանես Ստեփանյանից: Գրի է առնված 1982 թ.:
26. **Հու վեր անե՝ տու օտիս.**— Պատմել է Եփրասեն Տեր-Մկրտչյանը, ծնված 1904 թ., Աշան գյուղում: Անգրագետ: Լսել է իր ճայր Դավուդ Գրիգորյանից: Գրի է առնվել 1979 թ.:
27. **Մարթին աշկը մինակ վեղը կքուշտըցնե.**— Պատմել է Թավադ Շինդյանը 1975 թ., Աշան գյուղում:
28. **Քրիստոսը ըստի ասից.**— Պատմել է Աթանես Ավագյանը 1959 թ.:
29. **Կատուն.**— Պատմել է Աշոտ Առստամյանը: Գրի է առնվել 1959 թ., Բերդաշենում (նախկինում՝ Ղզղալա):

30. **Մարթը՝ բխուված.**— Պատմել է Թավադ Ծինդյանը: Գրի է առնվել 1975 թ.:
31. **Աստծու կործը.**— Պատմել է բանասաց Թավադ Ծինդյանը 1984 թ.:
32. **Քյսիբին աշկավը եշի.**— Գրի է առնված Թավադ Ծինդյանից 1975 թ.:
33. **Հուրու խնձոր ըմ տվալ, ինʹ անե.**— Պատմել է Թեմիր Օհանյանը, ծընված 1897 թ., Սպիտակաշեն գյուղում: Գրի է առնվել 1970 թ.:
34. **Առաչ ըրա, ետնան ասե.**— Պատմել է Եփրասեն Տեր-Մկրտչյանը, 1977 թ.:
35. **Փիսը լավին, լավը՝ փիսին.**— Պատմել է Քույրիկ Գրիգորյանը, ծնված 1887 թ., Աշան գյուղում, անգրագետ: Գրի է առնվել 1960 թ.:
37. **Վերջն ընի պարի.**— Պատմել է Աթանես Ավագյանը, ծնված 1879 թ., Աշան գյուղում: Նախկին տիրացու: Գրի է առնվել 1965 թ.:
38. **Ամեգը ուրանցին ըն ծիք տամ.**— Պատմել է Վասիլ Ասրյանը, ծնված 1887 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1965 թ.:
39. **Տմերուկը.**— Պատմել է Վասիլ Ասրյանը 1965 թ.:
40. **Լուսնգյան.**— Պատմել է Անուշ Հարությունյանը, ծնված 1889 թ., Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղում: Անգրագետ: Գրի է առնըվել 1964 թ.:
41. **Տոնդ քանդվի, պրտքատար.**— Բանահավաքն առաջին անգամ լսել է իր հորից՝ Համբարձում Սնիկյանից, 1937 թ.:
42. **Էշին աստուծ չօնե.**— Գրի է առնված Աթանես Ավագյանից 1959 թ., Աշան գյուղում:
43. **Լծեն.**— Պատմել է Արկադյա Ղայամյանը 1978 թ., Աշանում. արհեստավոր: Ջրույցը լսել է իր հորից՝ Գրիգոր Ղայամյանից:
45. **Մարը.**— Պատմել է Սոփան Սնիկյանը, ծնված 1882 թ., Աշան գյուղում, անգրագետ: Գրի է առնված 1947 թ.:
46. **Ավդուռ.**— Պատմել է Լևոն Մկրտումյանը: Գրի է առնված 1948 թ., Ավդուռ գյուղում:
47. **Անթառամեն զրույցը.**— Պատմել է Մարգարիտ Տեր-Մկրտչյանը: Գրի է առնված 1946 թ.:
48. **Հլեվուրը.**— Պատմել է Հանես Ղազարյանը 1962 թ., Բերդաշեն (նախկինում Ղզղալա) գյուղում:
49. **Ջկեռ.**— Պատմել է Սոփան Սնիկյանը, ծնված 1882 թ., Աշան գյուղում, անգրագետ: Լսել է իր մորից՝ Անուշ Ղայամյանից: Գրի է առնըված 1979 թվականին:
50. **Արևքուրիկ.**— Պատմել է Սաթենիկ (Սաթի) Առստամյանը, նշանավոր գրագետ, Բերդաշենի գյուղական քահանա Սուրեն Իսրայելյանի դուստրը:
51. **Պիծի ամեռնը.**— Պատմել է Սաթենիկ Առստամյանը: Գրի է առնված 1961 թ.:
52. **Ծծմարա քար.**— Պատմել է Լևոն Մկրտումյանը, ծնված 1890 թ., Ավդուռ գյուղում: Գրի է առնվել 1957 թ.:
53. **Ծլլուվեն տիզերը.**— Պատմել է Թևատրոս Մեժլումյանը, ծնված 1881 թ., Մարտունու շրջանի Մյուրիշեն գյուղում: Գրի է առնված 1949 թ.:

54. **Ջզմօջախ.**— Պատմել է Գևորգ Ղայամյանը, ծնված 1908 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1975 թ.:

55. **«Ըրանա ճարթնը» (կապար).**— Պատմել է Սիրան Սողոմոնյանը, ծընված 1908 թ., Բերդաշեն գյուղում, կիսագրագետ: Գրի է առնվել 1974 թ.:

57. **Եսայի տանձ.**— Պատմել և գրի է առնվել 1946 թ.: Հետագայում նույն ավանդությունները բանահավաքը լսել է Եմիշճանում (Համբարձում Բաղրամյանից), Բերդաշենում (Գրիգոր Առստամյանից, Հանես Ղազարյանից, Մակի Միրզաջանյանից), Աշանում (Մարիամ Վարդանյանից, Հովսեփ Բալասանյանից և ուրիշներից):

58. **Խոսրովենե խնձոր.**— Տե՛ս № 57 ծանոթ.:

62. **Հո՛ւր ծուց նի մննիմ.**— Պատմել է Ռուբեն Ազարյանը, ծնված 1924 թ., Բերդաշենում: Ավանդությունը լսել է իր մորից՝ Աստղիկ Չիլինգարյանից: Գրի է առնվել 1958 թ.:

63. **Հունին.**— Պատմել է Առստամ Սարգսյանը, ծնված 1887 թ., Բերդաշենում: Գրի է առնվել 1974 թ.:

64. **Ըլբստըրկախոտ.**— Պատմել է Սաթենիկ Առստամյանը: Գրի է առնված 1961 թվականին, Բերդաշենում:

65. **Դաղի.**— Պատմել է Հովսեփ Հարությունյանը 1968 թ., Աշան գյուղում: Հետագայում նույն ավանդությունը 1982 թվականին պատմել է բանասաց Սարգիս Ավագյանը (Դաղունց): «Դաղին Հայկա ախպերն ա ըլո՛ւ, ախպորցը ճակեն կուփե չի տվալ, դարդին անգուն չի կալալ, ուրան վեղան յայմիշ ա ըլո՛ւ, գյանըը քեփերում անցկացրալ: Բայց ախպերը Դաղուն մննրներան քցալ չըն, վեր նըվերվալ ըն, ծեն ըն տվալ՝ ճի՛շ տեղ ըս, այ Դաղի, այ Դաղի «բիդադ»:

66. **Անահիտ.**— Պատմել է Արուսյակ Ղազյանը, ծնված 1907 թ., կիսագըրագետ: Գրի է առնվել 1958 թ., Հացի գյուղում:

67. **Թաքավերեն պալատը.**— Պատմել է Խորեն Բաղդասարյանը, ծնված 1934 թ., ուսուցիչ-բանասեր: Գրի է առնված 1980 թ., Տումում:

68. **Ղալքար.**— Տե՛ս № 67 ծանոթ.:

69. **Քեփանձոր.**— Տե՛ս № 67 ծանոթ.:

70. **Իրեք ծառ (Նույրախպյուր).**— Գրի է առնվել Ասկերանի շրջանի Խաչմաչ գյուղում, 1971 թ.: Բանահավաքը չի հիշում ասացողի անունը:

71. **Քուչակավ լցված.**— Ինչպես այս, այնպես էլ քուչակյան մյուս ավանդությունները պատմել է բանասաց Գրիշա (Գրիգոր) Առստամյանը: Գրի է առնված 1959 թվականին, Բերդաշեն գյուղում:

72. **Փլեկ.**— Պատմել է Լուսիկ Հովսեփյանը, ծնված 1894 թ., Բերդաշենում, անգրագետ: Գրի է առնվել 1958 թ.:

73. **Վեր եկած (Քըքատեղ).**— Պատմել է Մարիամ Վարդանյանը, կիսագրագետ, ծնված 1880 թ.: Գրի է առնվել 1947 թ., Աշանում:

74. **Մեծ Նահատակ, Պիծի Նահատակ.**— Պատմել է Խոսրով Սողոմոնյանը, ծնված 1878 թ., Բերդաշենում: Անգրագետ: Գրի է առնվել 1961 թ.: Նույնը պատմել է նաև Գրիշա Սողոմոնյանը, ծնված 1880 թ., Բերդաշենում: Երկրորդ անգամ գրի է առնվել 1968 թ.:

75. **Թութին ախպյուր.**— Պատմել է Խորով Սողոմոնյանը: Գրի է առնվել 1961 թ.:

76. **Աղջաբեղի.**— Պատմել է Ծուքուր Խաչատրյանը: Գրի է առնվել 1958 թ.:

77. **Քարախպյուր (Աղբուլաղ).**—Պատմել է Համբարձում Բաղրամյանը, ծնված 1869 թ. Եմիշճան գյուղում: Անգրագետ: Գրի է առնված 1955 թ.:

78. **Ղայամ.**— Պատմել է Աթանես Ավագյանը 1955 թ.: Նույնը 1975-ին պատմել է նաև Գևորգ Ղայամյանը, Աշան գյուղում:

79. **Մոավա կխլեն.**— Պատմել է Սմբատ Մեժլումյանը, ծնված 1897 թ., Մյուրիշեն գյուղում, գրագետ: Գրի է առնվել 1957 թ.:

80. **Բլակեն ծորը.**— Պատմել է Մարգարիտ Տեր-Մկրտչյանը, ծնված 1859 թ., Աշան գյուղում, գրագետ: Գրի է առնված 1946 թ.:

81. **Ոսկտարան.**— Պատմել է Սալբի Բալասանյանը, ծնված 1867 թ., Աշան գյուղում, անգրագետ: Գրի է առնված 1946 թ.:

83. **Քարե դազաղներ.**— Բանահավաքը լսել ու տեսել է 1965 թվականին:

84. **Ամարաս-քաղաք.**— Պատմել է Գրիգոր Բաղրյանը, Գիշի գյուղում:

85. **Ամարաս-վանք.**— Տե՛ս № 83 ծանոթ.:

86. **Հերշեն.**— Պատմել է Աթանես Ավագյանը, հայտնի բանասաց, գրագետ: Գրի է առնվել 1957 թ.:

87. **Աշան.**— Տե՛ս № 86 ծանոթ.:

88. **Սլ՚ակնածավ.**— Պատմել է Սուրեն Հովակիմյանը, ծնված 1907 թ., Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղում, մասնագիտությամբ ուսուցիչ: Գրի է առնվել 1964 թ.:

89. **Ավերակ պ՚որթ.**— Պատմել է Արսեն Աբրահամյանը, ծնված 1887 թ., Բերդաշենում: Կիսագրագետ: Գրի է առնված 1970 թ.:

90. **Հովդեն տակը.**— Պատմել է Արսեն Աբրահամյանը: Գրի է առնված 1970 թ.:

91. **Ծեգյանց ազգ.**— Գրի է առնված Մարդակերտ ավանում 1971 թ.: Պատմել է Ծեկյան ազգանունով մի վարորդ, որը լսել է իր տատից:

92. **Դրղանց Աստառտեն քյգներան մինը.**— Պատմել է Դրղանց Աստառտի այրին՝ Սաթենիկ Աստառամյանը: Գրի է առնված 1970 թ. Բերդաշեն գյուղում:

93. **Հենց հնգեր.**— Բանահավաքը լսել է հորից՝ Համբարձում Սնիկյանից, ծնված 1878 թ., գրագետ: Գրի է առնված հիշողությամբ, հետագայում:

94. **Քու դ՚արդդ ըս քաշում.**— Դեպքը տեղի է ունեցել Աշան գյուղում: Բանասացները վերագրում են տարբեր մարդկանց:

95. **Էս հըրցավը չի կյաս.**— Պատմել է Էմմա Թովմասյանը, ծնված 1920 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1977 թ.:

96. **Մոատանը.**— Պատմել է Նիկոլայ Հովակիմյանը Գիշի գյուղում: Այժմ ապրում է Ստեփանակերտում: Գրի է առնված 1970 թ.:

97. **Մեն պառնխական ա՞.**— Պատմել է Նորայր Ավետիսյանը, ծնված 1933 թ., Մարտունու շրջանի Հաղորտի գյուղում: Բարձրագույն կրթու-

թյամբ, բանասեր: Այժմ գյուղի միջնակարգ դպրոցի դիրեկտորն է: Գրի է առնված 1974 թ.:

98. **Էն միճն էլ՝ մրթըվարի.**— Պատմել է Պողոս Միրզոյանը, ծնված 1878 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1961 թ.:

99. **Դա ես կյրափար գյուղո՞ւմ ըմ.**— Պատմել է Սուրեն Սարգսյանը, ծընված 1927 թ., Աշան գյուղում, բարձրագույն կրթությամբ, ուսուցիչ: Այժմ ապրում է Երևան քաղաքում:

100. **Խոզը ճի՞նչ կանե.**—Պատմել է Արտյուշա Խաչատրյանը: Գրի է առնըված 1956 թ., Աշան գյուղում:

101. **Հթըյաթավ ա.**— Պատմել է Գրետա Գրիգորյանը, ծնված 1932 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1948 թ.:

102. **Դա քու ըրազո՞ւմդ.**— Պատմել է Գրիշա Բաղասանյանը, ծնված 1928 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1961 թ.:

103. **Խմած-ճարփածը.**— Պատմել է Հմայակ Տեր-Մկրտչյանը: Գրի է առնըվել Աշանում 1976 թ.:

104. **Տեսնաս ճի՞նչ դ**<sub></sub>**րդ օնե.**— Պատմել է Գրիգոր Սարգսյանը, ծնված 1920 թ., Բերդաշեն գյուղում: Գրի է առնվել 1968 թ.:

105. **Տու պըըշխս տիր.**— Պատմել է զվարճախոսի տղան՝ Ջավոր Ղայամյանը, ծնված 1948 թ. Աշան գյուղում: Գրի է առնվել 1985 թ.:

106. **Էրկու քառ.**— Պատմել է Արել Սնիկյանը, ծնված 1915 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1947 թ.:

107. **Մին տեղ կկանչի.**— Պատմել է Հանես Ղազարյանը, 1958 թ., Բերդաշեն գյուղում:

108. **Մուտանալդ ճի՞նչ ա.**— Պատմել է Հմայակ Տեր-Մկրտչյանը 1959 թ., Աշանում:

109. **Հշտղա՞ քթենամ.**— Պատմել է բանասեր Սոկրատ Խանյանը Ստեփանակերտ քաղաքում, 1973 թ.: Լսել է Մարդակերտ քաղաքում:

110. **Ետ չի մնամ.**— Բանահավաքը լսել է 1957 թ., Ստեփանակերտի շըրջանի Կարմիր գյուղում:

111. **Խոսկեն տակեն չի մնամ.**— Գրի է առնված Կարմիր գյուղում:

112. **Ես կգյիդամ.**— Պատմել է Հակոբ Ասրյանը: Գրի է առնվել 1970 թ., Բերդաշեն գյուղում:

113. **Ծրաքը մեխկ չօնե.**—Պատմել է Հանես Ղազարյանը 1964 թ., Բերդաշենում:

114. **Մին օրումը կննջիմ.**— Պատմել է Մակիչ Ղազյանը, ծնված 19[illegible] թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1967 թ., Աշանում:

115. **Դա կասի՞ն.**— Պատմել է Մակիչ Ղազյանը 1967 թ.:

116. **Տի ապրանքը կծախի՞ն.**— Պատմել է Կադլեն Ղազյանը: Գրի է առնըված 1964 թ., Աշանում:

117. **Աստուծ քյոմ**<sub></sub>**գ չանել.**— Պատմել է Մուքան Վարդանյանը, ծնված 1877 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1955 թ.:

118. **Ետնան կտաս.**— Պատմել է Մուքան Վարդանյանը 1955 թ.:

119. **Մկրատավ.**— Պատմել է Հակոբ Ասրյանը, ծնված 1920 թ., Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղում, բարձրագույն կրթությամբ տնտեսագետ: Գրի է առնվել 1971 թ.:

120. **Հսցըննական ըմ Շուշի.**— Գրի է առնված Խաչմաչ գյուղում, 1972 թ.:
121. **Տես ընք կննական.**— Պատմել է Հանես Ղազարյանը, ծնված 1878 թ., Բերդաշեն գյուղում, անգրագետ: Գրի է առնված 1967 թ.:
122. **Տաքությունումը խոսում ա.**— Պատմել է Ալբերտ Օհանյանը, ծնված 1933 թ., Նորշեն գյուղում: Գրի է առնվել 1967 թ.:
123. **Ծին քրտնքած ա.**— Պատմել է Երգինա Դանիելյանը, ծնված 1900 թ., Բերդաշեն գյուղում: Գրի է առնվել 1974 թ.:
124. **Անումս Ցական ա.**— Պատմել է Իշխան Բալասանյանը, ծնված 1879 թ., Աշան գյուղում, անգրագետ: Գրի է առնվել 1960 թ.:
125. **Մին ա.**—Պատմել Ի. Բալասանյանը: Գրի է առնվել 1960 թ.:
126. **Քու ըսածավ ա ընն**ակ**ան.**— Պատմել է Աշոտ Առստամյանը, լսել է Մարտունու շրջանի Խերխան գյուղում: Գրի է առնվել 1959 թ.:
127. **Կճուվանա-կշատանա.**— Պատմել է Հանես Ղազարյանը, 1967 թ.:
128. **Անց կաց.**— Պատմել է Բենիամին Գրիգորյանը, ծնված 1934 թ., Խերխան գյուղում: Այժմ ապրում է Կարմիր Շուկա ավանում: Գրի է առնվել 1957 թ.:
129. **Իսկի ճինչ.**— Պատմել է Բենիամին Գրիգորյանը: Գրի է առնվել 1957 թ.:
130. **Հանեսը փալանդուզ ա՞.**— Պատմել է Երվանդ Հակոբյանը՝ Հանես Ղազարյանի որդին, ծնված 1917 թ., ապրում է Երևան քաղաքում: Գրի է առնվել 1971 թ.:
131. **Քոն իլ.**— Պատմել է Բ. Գրիգորյանը 1957 թ., Խերխան գյուղում:
132. **Հի՞նչ ըմ օզ**ալ**.**— Գրի է առնված Տումի գյուղում, 1972 թ.:
133. **Մինը՝ սօր, մինը՝ էքուծ.**— Պատմել է Մարիամ Վարդանյանը, ծնված 1872 թ., Աշան գյուղում: Գրի է առնված 1950 թ.:
134. **Քյընում ըմ ֆուտբոլ խաղ անիմ.**— Պատմել է Բենիամին Գրիգորյանը Խերխան գյուղում, 1957 թ.:
135. **Ես ծեր խուզան տուս չըմ կյալ.**— Պատմել է Հանես Ղազարյանը: Գրի է առնված 1973 թ.:
136. **Էշ ինք օնողեն քյալագը.**— Պատմել է Արտաշես Բարսեղյանը, ծնված 1914 թ., Հացի գյուղում, մասնագիտությամբ անասնաբույժ: Գրի է առնվել 1956 թ., Աշան գյուղում:
137. **Ինձ թողալ ա, դերին եր կըցրալ.**— Պատմել է Բենիամին Գրիգորյանը: Գրի է առնվել 1957 թ., Խերխանում:
138. **Կթընկորեկ.**— Պատմել է Հանես Ղազարյանը: Գրի է առնվել 1966 թ.:
139. **Պռատավը քաղծր ա.**— Պատմել է Սուրեն Սարգսյանը, Աշան գյուղում: Գրի է առնված 1968 թ.:
140. **Ըստ**ա**րե ճի՞նչ ըս ըսլական.**— Պատմել է Մաթևոս Շինդյանը, ծնված 1902 թվականին, Աշանում: Գրի է առնվել 1949 թ.:
141. **Նստընննական ա.**— Պատմել է Մաթևոս Շինդյանը 1949 թ.:
142. **Մերը պեր.**— Պատմել է Մաթևոս Շինդյանը: Գրի է առնվել 1949 թ.:
143. **Պա տու տոն կտեռնա՞ս.**— Պատմել է զվարճախոսության ճերոսը՝ Խաչատուր Պետրոսյանը, ծնված 1922 թ., Հաղորտի գյուղում: Այժմ մարտունաքնակ: Գրի է առնվել 1980 թ.:

144. **Զարալն ու տաշալ.**— Պատմել է Արշավիր Միրզոյանը: Գրի է առնվել 1946 թ., Աշանում:
145. **Ինքն էլ չի կլոխ ընգլակալն.**— Պատմել է Ցաշա Հայրապետյանը: Գրի է առնված 1976 թ.:
146. **Վեչ կոռա, վեչ նոռա.**— Պատմել է Թեւան Սիմոնյանը, ծնված 1879 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1960 թ.:
147. **Ռուսերեն խոսելը.**— Բանահավաքը լսել է մանկության տարիներին իր եղբորից՝ Սուրեն Հարությունյանից:
148. **Սա էծ չի.**— Պատմել է Նորայր Ավետիսյանը Հաղորտի գյուղում: Գրի է առնվել 1962 թ.:
149. **Արտս առաչինն ա.**— Պատմել է Թեւան Սիմոնյանը: Գրի է առնված 1961 թ.:
150. **Ժողով ա՞, թա՝ թատրոն.**— Բանահավաքը լսել է մանկության տարիներին իր եղբորից՝ Սուրեն Հարությունյանից:
151. **Հարուստն ու աղքատը.**— Պատմել է Իվան Առստամյանը, ծնված 1887 թ., Բերդաշեն գյուղում: Գրի է առնվել 1958 թ.:
152. **Հերիքնազ հասին.**— Պատմել է Գրիգոր Սարգսյանը: Գրի է առնվել 1974 թ., Բերդաշենում:
153. **Ջանի ալան.**— Պատմել է Արշակ Ավանեսյանը, ծնված 1924 թ., Բերդաշենում: Գրի է առնվել 1974 թ.:
154. **Թա մեռնողը տու վըս, խոսե.**— Պատմել է Բենիկուռ Հովհաննիսյանը, ծնված 1925 թ., Նորշենում: Գրի է առնվել 1978 թ.:
155. **Թաք մաչին չընիս.**— Պատմել է Գրիգոր Ղալամյանը: Գրի է առնվել 1960 թ., Աշանում:
156. **Կատակում է ղզլեցե խլդանանց կուքին.**— Պատմել է նրա (Կուքու) թոռ Ռոզա Հարությունյանը, ծնված 1930 թ., Բերդաշենում: Գրի է առնվել 1980 թ., Աշանում:
160. **Ճլատը.**— Պատմել է Մանյա Մկրտումյանը, ծնված 1909 թ.: Գրի է առնվել 1969 թ., Մյուրիշենում:
161. **Գյուղում չըմ.**— Պատմել է Արշավիր Միրզոյանը: Գրի է անվել 1961 թ.:
162. **Հոխ մին ա.**— Պատմել է Արշավիր Միրզոյանը 1961 թ.:
163. **Ցանա իվիլ ընիլ չի.**— Պատմել է Բագրատ Սողոմոնյանը, ծնված 1894 թ., Բերդաշենում: Գրի է առնվել 1970 թ.:
164. **Գայուն անում չօնե՞.**— Պատմել է Արշավիր Միրզոյանը 1961 թ.:
165. **Պա կատուն նո՞ր ա.**— Պատմել է Սամսոն Ղալամյանը, ծնված 1906 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1981 թ.:
166. **Մեծ-մեծ նի կալ.**— Պատմել է Քրիստափոր Սարգսյանը 1973 թ.:
167. **Խե՞ լաց ըս ընում.**— Պատմել է Քալանթար Ղազյանը: Գրի է առնվել 1964 թ., Հացի գյուղում:
168. **Հանց ա համը փուխեիս.**— Պատմել է Արմենակ Սարգսյանը, ծնված 1908 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1965 թ.:
169. **Էշս նասազ ա.**— Պատմել է Հմայակ Մկրտչյանը: Գրի է առնվել Աշանում, 1961 թ.:

170. **Մին իփիլի էլ...**— Պատմել է Կարլեն Ղազյանը Հացի գյուղում: Գրի է առնված 1967 թ.:
171. **Բոստանս ճրիմ.**— Պատմել է Հմայակ Մկրտչյանը: Գրի է առնվել 1971 թ.:
172. **Խե՞ ջողուքս տամ չըս.**— Պատմել է Հակոբ Ասրյանը: Գրի է առնվել 1979 թ.:
173. **Թ՚քե, նորը փոնե.**— Պատմել է Զաքարա քեռին, Մարդակերտի շըրջանի Կճողոտ գյուղից: Գրի է առնվել 1979 թ.:
174—184. **«Անճամ խոսք»... «Մա՞րթն ա շատ, կնեգը».**— Պատմել են աշանեցի Հակոբ Հովսեփյանը (ծնված 1912 թ.) և Գրիշա Խաչատրըյանը (ծնված 1945 թ.): Գրի է առնվել 1985 թ.:
185. **Պուղու օխտը պեռնը ցորենը.**— Պատմել է Սուրեն Սարգսյանը Աշան գյուղում: Գրի է առնվել 1943 թ.:
186. **Քթեղ ճալը ճալ չի.**— Տե՛ս № 185 ծանոթ.:
187. **Ղզղանը.**— Տե՛ս № 185 ծանոթ.:
188. **Տու Քյուռն ընգեր, ես՝ Արախսը.**— Պատմել է Հակոբ Ասրյանը: Գրի է առնվել 1972 թ., Բերդաշենում:
189. **Ափսոս ա Քյուռեն ծուկունը.**— Պատմել է Հակոբ Ասրյանը: Գրի է առնվել 1964 թ., Բերդաշենում:
190. **Մեճտիշենում.**— Գրի է առնված 1959 թ., Բերդաշենում:
191. **Վեչ շնացե յա, վեչ քաղաքացե.**— Պատմել է Սամսոն Ստեփանյանը: Գրի է առնված 1986 թ.:
192. **Գրզանց Աշոտեն քյալագը.**— Պատմել է Աշոտ Առստամյանը: Գրի է առնված 1971 թ., Բերդաշենում:
195. **Գարդս օղտը չի.**— Պատմել է Ծուշի Բալասանյանը, ծնված Աշան գյուղում, 1908 թ.: Գրի է առնվել 1971 թ.:
196. **Կյուլիր, մին օղտը շինիր.**— Գրի է առնվել 1949 թ., ճեղինակից՝ բանասաց Անդուն Ղազյանից (ծնված 1876 թ., Աշան գյուղում):
198. **Պատմողը սուս ա անում.**— Պատմել է Արտյուշա Խաչատրյանը: Գրի է առնվել 1957 թ., Բաքու քաղաքում:
199. **Ղզղեցե Ղզարանց Հանեսը.**— Պատմել է Երվանդ Հակոբյանը: Գրի է առնված 1959 թ.:
200. **Մեռքդ խային ա.**— Գրի է առնվել 1959 թ., Աշանում:
202. **Անումդ ճի՞նչ ա.**— Պատմել է Արտյուշա Խաչատրյանը 1944 թ., Աշանում:
203. **Տախտեղ չըք օտո՞ւմ.**— Տե՛ս № 202 ծանոթ.:
204. **Փալանդուզ Կուքանը.**— Պատմել է Իշխան Հարությունյանը, ծնված 1900 թ., Բերդաշենում: Գրի է առնվել 1970 թ.:
205. **Ծուշվա ճանապարհին.**— Պատմել է Վարդան Բալայանը, ծնված 1918 թ., Աշանում: Գրի է առնվել 1945 թ.:
206. **Վեններդ տեմ չտաս.**— Պատմել է Սուրեն Սարգսյանը: Գրի է առնվել 1947 թ.:
207. **Քու մոր տրխնեն կյուղանողն ա.**— Պատմել է Ռուբեն Պողոսյանը, ծնված 1930 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1975 թ., Աշանում:

## ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Սահարի (Կանչ).**— Պատմել են Ծուքուր Խաչատրյանը (ծնված 1873 թ.), Աթանես Ավագյանը և ուրիշներ: Նույնը հաստատել է բերդաշենցի (ղզղալեցի) բանասաց Գրիգոր (Գրիշա) Առստամյանը:
2. **Մեռյը սողանալ կտրին.**— Այս մասին ասել են Թաղավարդ գյուղում: Այս սովորությունը դեռևս կենդանի է այդ և շրջակա գյուղերի բնակչության մեջ:
3. **«Գանչով».**— Պատմել է Ծուքուր Խաչատրյանը: Նվագում էր ժողովրդական մի շարք գործիքներով (առանձնապես դուդուկ և շվի):
4. **Նոր տարի.**— Պատմել է Հերիքնազ Օհանյանը: Գրի է առնված 1950-ական թվականների վերջին:
5. **Կալա ետ.**— Պատմել է Արևհատ Գրիգորյանը, գրի է առնվել 1981 թ.:

## ՏԱՂԻԿՆԵՐ, ԽԱՂԻԿՆԵՐ

1. ***Աշան, Աշան...*** *1—2.— Առաջին մասը (բաժանումը պայմանական է):* Գրի է առնված Ավդուռ գյուղի բնակիչ Լևոն Մկրտումյանից, 1956 թ.: Երկու տարի անց՝ 1958 թ., երկու մասերը միասին գրի է առնըվել բանասաց Աթանես Ավագյանից, Աշան գյուղում:
2. **Հմայագիր նմուշներ.**— Ասել է Ծաղիկ Գրիգորյանը, ծնված 1902 թ., Աշան գյուղում: Գրի է առնվել 1980 թ.:
3. **Խնեցե.**— Ասել է Անուշ Փաթալյանը 1956 թ., Բաքու քաղաքում: Անուշը ծնունդով աշանեցի է, Բաքու է տեղափոխվել 19-րդ դարի վերջին:
4. **Կալին խոտը հարալ ըմ...**— Ասել է Գրիգոր Առստամյանը: Գրի է առնվել 1958 թ., Բերդաշենում:
5. ***Փայանդուզ*** **Կուքանեն երքը.**— *Հորինել է աշանեցի Ալիշ Բադալյանը,* ծնված 1856 թ.: Գրի է առնվել 1948 թ.:
6. **Աղե, արկանք...**— Ասել է Գրիգոր *Առստամյանը:* Գրի է առնվել 1959 թ., Բերդաշենում:
7. **Նախշալ ըմ սարեր...**— Ասել է Հանես Ղազարյանը: Հանեսը անգիր գիտեր աշուղ Սարգսի բոլոր հորինվածքները, կատարելապես տիրապետում էր նաև ադրբեջաներեն լեզվին: 1940-ական թթ. վերջին նրանից բավականին չափածո քերթվածներ են գրի առել Ադր. ԽՍՀ Կիրովաբադ քաղաքի ժողովրդական ստեղծագործության տան բանահավաքները:
8. **Այան մատաղ քու ջանեղ...**— Ասել է Մարգարիտ Մկրտչյանը: Նա գիտեր Արցախ աշխարհի շեն ու անշեն բոլոր բնակավայրերի անունները ու մականունները, նշանավոր տեղանունները: Գրի է առնվել 1947 թ.:

9. **«Պապար» շարքը.**— Ասել է Սատրիկ Պետրոսյանը: Գրի է առնվել 1983 թ., Աշան գյուղում:
10. **Կուկուն մամե...**— Ասել է Համմիկ Պետրոսյանը, ծնված 1912 թ., Աշանում: Գրի է առնվել 1950 թ., Կաղարծի գյուղում (Մարտունու շրջան):
11. **Այիր բեն...**— Ասել է Համմիկ Պետրոսյանը: Գրի է առնվել 1950 թ.:
12. **Յորեն ճաց...**— Ասել է Հռիփսիմե Սնիկյանը: Գրի է առնվել 1949 թ., Աշանում:
13. **Ըլալ ա չըլալ մին պել մոզի...**— Ասել է Ծաղիկ Գրիգորյանը: Գրի է առնվել 1980 թ.:
14. **Քեցե Ճաքի...**— Ասել է Թավաղ Ծինդյանը և ներկայացրել է որպես իր ստեղծագործություն: Գրի է առնվել 1980 թ., Աշանում:
15. **«Յալի» պար կյան, դնջանան...**— Ասել է Աշոտ Առստամյանը: Գրի է առնվել 1973 թ., Բերդաշենում:
16. **Դնգըլ, դնգըլ ման արի...**— Ասել է Ավանես Հովսեփյանը, ծնված 1927 թ., Բաքվում: Գրի է առնվել 1954 թ., Բաքվում:
17. **Յարըս ճանդին քաղ կանե...**— Ասել է Վարսենիկ Հայրապետյանը, ծնված 1880 թ., Բաքու քաղաքում: Գրի է առնվել 1955 թ., Եմիշճան գյուղում (Մարտունու շրջան):
18. **Յարին ասից...**— Ասել է Թավաղ Ծինդյանը: Գրի է առնվել 1979 թ. Աշան գյուղում:
19. **Վարթըս էրալ ըն, տեղը փոշ ցանալ...**— Ասել է Գրիգոր Սնիկյանը, որը լսել է իր հորեղբայր Հանես Սնիկյանից: Գրի է առնվել 1949 թ., Աշան գյուղում:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . . 3


### Ա Ր Ձ Ա Կ

ՀԵՔԻԱԹՆԵՐ . . . . . . . . . 24
1. Ծիլկանը . . . . . . . . 24
2. Պիճ ապերը . . . . . . 28
3. Լվոթունը կորչիլ չի . . . . . . 34
4. Սումբաթն ու Թափեղը . . . . . 37
5. Խորթը . . . . . . . . 50
6. Անմաղը . . . . . . 53
7. Մրթըկնեգ՝ ճոխտն էլ մին խելքու . . . . . 55
8. Ղազը . . . . . . . . . . 56
9. Հու վեր մին տա՝ օխտը կստանա . . . . . 58
10. Փանմավ վարթաբեղը . . . . . 60
11. Հփուռկես . . . . . . . . 62
12. Մարը . . . . . . . . 64
13. Պոզը . . . . . . . . 65
14. Վեղը շատ չրչարե . . . . . . . . 67
ՋՐՈՒՑՑՆԵՐ, ԱՌԱԿՆԵՐ, ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . 69
15. Առաչ վեննանդ տակե տափը ճնաճչի . . . . . 69
16. Ըստեղ շեն չի տեռնալ . . . . . . 69
17. Մարթն ու վագրը . . . . . 70
18. Ամեն պաչուլ կհըվատա՞ն . . . . . . 70
19. Մին պիծի ճափոտ . . . . . . 71
20. Լուծը . . . . . . 71
21. Եզնը . . . . . . . . . . . 72
22. Կաքավը . . . . . . . . 73
23. Կծաքարը . . . . . . . 73
24. Վե՞ր Արտավազ . . . . . . 73
25. Հի՞նչ ճվատու վըս . . . . . . . 74
26. Հու վեր անե՝ տու օտիս . . . . . 74
27. Մարթին աշկը մինակ վեղը կքուշտըցնե . . . . 74
28. Քրիստոսը ըստի անից . . . . . . 75

29. Կատուն . . . . . . . . 75
30. Մարթը՝ բխուված . . . . . . 75
31. Աստծու կործը . . . . . 76
32. Քյահբին աշկավը էշի . . . . . 76
33. Հուրու խնձոր ըմ տվալ հո՛ անե . . . . . 76
34. Առաչ ըրա, ետնան աստ . . . . . 77
35. Փիսը՝ լավին, լավը՝ փիսին . . . . . 77
36. Բաղարաքումը . . . . . . 77
37. Վերչն ըն պարի . . . . . . 77
38. Ամեզը ուրանցին ըն ծիք տամ . . . . . 78
39. Ծմերուկը . . . . . . 78
40. Լուսննգյան . . . . . . 78
41. Տոնդ քանդվի, պրտքատար . . . . . 78
42. Էշին աստուծ չօնե . . . . . 79
43. Լծեն . . . . . . . 79
44. Ծետ փոնածեն ցավը . . . . . 80
45. Մարը . . . . . . . 80
46. Ակդուռ . . . . . . 80
47. Անթառամեն ջրուցը . . . . . . 81
48. Հլևուրը . . . . . 81
49. Ջկեռ . . . . . . . 82
50. Արնքուրիկ . . . . . . . 82
51. Պիծի ամեռնը . . . . . . . 82
52. Ծծմարա քար . . . . . 83
53. Ծլլուվեն տիզերը . . . . . 84
54. Ջջմօջախ . . . . . . 84
55. «Ըրանա հարթնը» (կապար) . . . . . 84
56. Ծունդունց քաշկը . . . . . . . 85
57. Եսայի տանձ . . . . . 85
58. Խոսրովենե խնձոր . . . . . 86
59. Մեղրանանջը . . . . . . 86
60. Ծառը՝ շտատերնը . . . . . 87
61. Գյոլում ղարղու տնգող . . . . . . 87
62. Հո՞ւր ծուց նի մննիմ . . . . . 87
63. Հունին . . . . . . 87
64. Ըլքստրըկախոտ . . . . . 88
65. Դադի . . . . . . . 88
ԱՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ՄԵԶ ՀԱՍԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . 89
66. Անահիտ . . . . . . . 89
67. Թաքավերեն պալատը . . . . . 89
68. Ղալքար . . . . . . . . 89
69. Քեֆաձոր . . . . . . 90
70. Իրեք ծառ (Կույրախպյուր) . . . . 90
71. Քուչակավ լցված . . . . . . 91
72. Փլեկ . . . . . . . 91

73. Վեր եկած (Քրքատեղ) . . . . . . 91
74. Մեծ Նահատակ, Պիծի Նահատակ . . . . . 91
75. Թուրքին ախպյուր . . . . . . 92
76. Աղջաբերդի . . . . . . . 92
77. Քարախպյուր (Աղբուլաղ) . . . . . 93
78. Ղայամ . . . . . . . 93
79. Մոավա կլխեն . . . . . 93
80. Բլակեն ծոռը . . . . . . 94
81. Ուվտարան . . . . . . 94
82. Անահիտակ . . . . . . 95
83. Քարե դագաղներ . . . . . . 95
84. Ամարաս-քաղաք . . . . . 95
85. Ամարաս-վանք . . . . . . . 95
86. Հերշեն . . . . . 96
87. Աշան . . . . . 96
88. Սլուկնածավ . . . . . . . 96
89. Ավերակ պորթ . . . . . . 97
90. Հովդեն տակը . . . . . . 97
91. Ծեզյանց ազգ . . . . . . 97
ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . 99
92. Դրղանց Առստամեն քլգներան մինը . . . . 99
93. Հենգ հնգեր . . . . . . 101
94. Քու դարդդ ըս քաշում . . . . . . 101
95. Էս հըըցավը չի կյաս . . . . . . 102
96. Մոստանը . . . . . . . . 102
97. Մհե պտըհլական ա՞ . . . . . . . 103
98. Էն միճն էլ՝ մրթըվարի . . . . . . 103
99. Պա ես կյրափ․ար գյուղո՞ւմ ըմ . . . . . 103
100. Խոզը հի՞նչ կանե . . . . . . 103
101. Հթըյաթավ ա . . . . . . 104
102. Պա քու ըրազո՞ւմդ . . . . . 104
103. Խմած-հարփածը . . . . . 104
104. Տեսնաս հի՞նչ դարդ օնե . . . . . . 104
105. Տու պորշիս տիր . . . . . . 105
106. Էրկու քար . . . . . . . 105
107. Մին տեղ կկանչի . . . . . 105
108. Մոտանալդ հի՞նչ ա . . . . . . . 105
109. Հշտղա՞ քթենամ . . . . . . 106
110. Ետ չի մնամ . . . . . . . 106
111. Խոսկեն տակեն չի մնամ . . . . . . 106
112. Ես կգյիդամ . . . . . . 106
113. Ճրաքը մեխկ չօնե . . . . . . 107
114. Մին օրումը կճնջիմ . . . . . . 107
115. Պա կաահ՞ն . . . . . . . 107
116. Տի ապրանքը կծախի՞ն . . . . . . 107

117. Աստուծ քյոմագ չանել . . . . . 108
118. Եռնան կտաս . . . . . . . 108
119. Մկրատավ . . . . . . . 108
120. Հացբննական ըմ Ծուշի . . . . . . 109
121. Տես ընք կննական . . . . . . . 109
122. Տաքությունումը խոսում ա . . . . . . 110
123. Ծին քրտննքած ա . . . . . . . 110
124. Անումս Ցական ա . . . . . . . 110
125. Մին ա . . . . . 111
126. Քու ըսածավ ա ըննական . . . . . . 111
127. Կճուվանա-կշատանա . . . . . . . 111
128. Անց կաց . . . . . . . 111
129. Իսկի ճինչ . . . . . . 112
130. Հանեսը փալանդո՞ւզ ա . . . . . . 112
131. Քոն իլ . . . . . . . 112
132. Հի՞նչ ըմ օզալ . . . . . . . 113
133. Մինը՝ սօր, մինը՝ էքուծ . . . . . . . 113
134. Քյընում ըմ փուտքոլ խաղ անիմ . . . . . . 113
135. Ես ծեր խոսքան տոււ չըմ կյալ . . . . . . 114
136. Էշ ինք օնողեն քյալագը . . . . . . . 114
137. Ինձ թողալ ա, դերին եր կըցրալ . . . . . 116
138. Կթնըկորեկ . . . . . . 116
139. Պոատավը քախծր ա . . . . . . 116
140. Ըստարե ճի՞նչ ըս ըսլական . . . . . 117
141. Նստըցննական ա . . . . . . . 117
142. Մերը պեր . . . . . . 117
143. Պա ո՛ու տոն կտեռնա՞ս . . . . . . 118
144. Ջարայն ա տաշալ . . . . . . 118
145. Ինքն էլ չի կլոխ ընգլական . . . . . 118
146. Վեչ կոոա, վեչ ճոոա . . . . . . . 119
147. Ռուսերեն խոսելը . . . . . . . 119
148. Սա էծ չի . . . . . . . 119
149. Արտս առաչինն ա . . . . . . . 120
150. Ժողով ա՞, թա՝ թատրոն . . . . . 120
151. Հարուստն ու ախքաղը . . . . . . 120
152. Հերիքնազ ճասին . . . . . . . 121
153. Ջանի այան . . . . . . 121
154. Թա մեռնողը տու վըս, խոսե . . . . . . . 122
155. Թաք մաչին չընիս . . . . . 122
156. Կատակում է ղզլեցե Խլղանանց Նուքին . . 122
157. Մաման ըմ օզում . . . . . . . . 123
158. Անումեդ ճի՞նչ ալիք տրիր . . . . . . 123
159. Պա ճետան ճաս՞լ ըն . . . . . . 123
160. Ժկատը . . . . . . . . . 124
161. Գյուղում չեմ . . . . . . 124

162. Լոխ մին ա . . . . . . . . 124
163. Տանա իվիլ ընիլ չի . . . . . . . 124
164. Դայուն անում չօնե՞ . . . . . . . 125
165. Պա կատուն հո՞ր ա . . . . . . . 125
166. Մեծ-մեծ նի կալ . . . . . . . 126
167. Խե՞ լաց ըս ընում . . . . . . . 126
168. Հանց ա համը փուխեիս . . . . . . 126
169. Էշս նասազ ա . . . . . . . . 127
170. Մին իփիլի էլ... . . . . . . . 127
171. Բոստանս ճրիմ . . . . . . 128
172. Խե՞ ջողուքս տամ չըս . . . . . . . 128
173. Թքե, նորը փոնե. . . . . . . 129
174. Անհամ խոսք . . . . . . . . 129
175. Ես էլ ըմ տա հետե ծծաղում . . . . . 129
176. Աստվածավարի՞, թա՞ մարթավարի . . . . 130
177. Տեղ-տեղ շնորհավուր ընի . . . . . . 130
178. Տու խելք ունի՞ր . . . . . . 131
179. Ըստծու ճնանչում ըմ . . . . . . 131
180. Ցուցակեն առաչինը . . . . . . . 131
181. Պուղուն ճաթը . . . . . . . . 132
182. Ես էլ քյընիմ . . . . . . 132
183. Եռնան տլական չըս . . . . . 132
184. Մա՞րթն ա շատ, կնեգը . . . . . . 133
185. Պուղուն օխտը պեռնը ցորենը . . . . . 133
186. Քթեղ հալը հալ չի . . . . . . . 134
187. Ղզղանը . . . . . . 134
188. Տու Քյուռն ընգեր, ես՝ Արախսը . . . . . 135
189. Ափսոս ա Քյուռեն ծուկունը . . . . . 135
190. Մեհտիշենում . . . . . . . . 135
191. Վեչ շնացե յա, վեչ քաղաքացե . . . . . 136
192. Դրղանց Աշոտեն քյալագը . . . . . . 136
193. Մեղք ա կնեգ ասելը . . . . . . . 137
194. Հի՞նչ կընի . . . . . . . . 137
195. Դարդս օղտդ չի . . . . . . . . 137
196. Կլուլիր, մին օղտը շինիր . . . . . 138
197. Իրեք պեն . . . . . . . 138
198. Պատմողը սուս ա անում . . . . . . 138
199. Ղզըլեցե Ղզարանց Հանեսը . . . . . 139
200. Մեռքդ խային ա . . . . . . . . 139
201. Վերցակը հինչու հետե յա կանչում . . . . . 139
202. Անումդ հի՞նչ ա . . . . . . . . 139
203. Տախտեղ չըք ստո՞ւմ . . . . . . . 140
204. Փալանղուզ Կուքանը . . . . . . . 140
205. Ծուշվա ճանապարհին . . . . . . 140
206. Վեններդ տեմ չտաս . . . . . . . . 141

207. Քու մոր տրխնեն կյուղանողն ա . . . . . 141
208. Անց ա կննական քյրնի . . . . . . 141
209. Էս էլ ա շատ . . . . . . . 142
210. Գործը հո՞ւնց ա քյրնում . . . . . 142
211. Տոնը պարան ա կյամ . . . . . . 142
212. Վենձավ քյրնիմ . . . . . . . 143
ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . . . . 144
ՀԱՆԳԱԽԱՂԵՐ . . . . . . . 163

## ՉԱՓԱԾՈ

Տաղիկներ, խաղիկներ . . . . . . 166

ԲԱՆԱՁԵՎԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ասացվածքներ . . . . . . . . . 176
Պատկերավոր արտահայտություններ . . . . . 219
Մահանալու իմաստ բովանդակող արտահայտություններ . . . 257
Խրատ, ապառնալիք, երդում, ցանկություն և այլն . . . . 258
Դարձվածքներ . . . . . . . 262
Օրհնանքներ, բարեմաղթություններ . . . . . 304
Կենացներ, սպառնալիքներ, ծիսական արտահայտություններ . 308
Անեծքներ . . . . . . . 309
Սուգ . . . . . . . . 316
Ժողովրդական խաղեր . . . . . . 320
Պատասխանիր արագ . . . . . 323
Տվրածեն մին օրումը օխտը հետ փորցիլը . . . . . 323
Հիծիլ կապել . . . . . . . . 323
Հանելուկներ . . . . . . . 326
Ծոտասելուկներ . . . . . . . 330
Մանկական բառաշարք . . . . . 331
Արցախյան հին անձնանուններ . . . . . . 332
Անձնանունների համառոտություններ և հնչյունադարձումներ . 333
Բուսական և կենդանական աշխարհ . . . . . 334
Ուտեստ . . . . . . . 337
ԲԱՌԱՐԱՆ . . . . . . . . . 353
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ . . . . 382

# ՆՇԽԱՐՆԵՐ ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ


Հրատարակչության խմբագիր՝
**Ա. Մ. Գաբրիելյան**
Գեղարվեստական խմբագիր՝
**Ն. Ա. Թովմասյան**
Տեխնիկական խմբագիր՝
**Գ. Վ. Նալբանդյան**
Վերստուգող սրբագրիչ՝
**Ս. Ա. Ղալթախչյան**

ԻԲ 966

Հանձնված է շարվածքի 25. 01. 1990 թ.: Ստորագրված է տպագրության 10. 01. 1991 թ.: Չափսը $84 \times 108^1/_{32}$: Թուղթ № 2: Տառատեսակը՝ «Սովորական»: Տպագրության եղանակը՝ «Բարձր»: Հրատարակչական 18,2 մամուլ: Տպագրական 12,5 մամուլ=21,0 պայմանական մամուլի: Տպաքանակ 25 000: Պատվեր 777: Գինը՝ 4 ռ.:

Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան փ. № 1:
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна № 1.

---

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. № 52:
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна № 52.